384

# ՀՐԱՀԱՆԳ
## ԳՈՐԾՆԱԿԱՆ

ԱՌ ԲԱՐԻՈՔ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԽՈՐՀՐԴՈՅ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ.

ՅՕՐԻՆԵԱԼ 'Ի ՏԷՐ ՆԻԿՈՂԱՅՈՍԷ ՏԵՐԾԱԳԵԱՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍԷՆ ՆԱՌՆԻՈՅ,
'Ի ՆԱՀԱՆԳԻՆ ՀՌՈՎՄԱՅ.

*Եւ Թարգմանեալ 'ի Հայր Ղուկաս վար-*
*դապետէ օղուլլուգեան տրապիզոնցւոյ,*
*'ի միաբանութենէ մեծին Մխի-*
*թարայ Աբբայհօր.*

*Տպագրեալ հրամանաւ Տեառն Ստեփաննոսի Ագոնց՝*
*Ընդհանրական Աբբայի և Արքեպիսկոպոսի.*

10215
Ա/996
ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

*Յամի տն 1821. և 'ի Թուին հայոց. ռմհ։*

'Ի ՎԵՆԵՏԻԿ

'Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ։

ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-та Истории
2786

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ԹԱՐԳՄԱՆՉԻՆ։

Եթէ 'ի ստուերական օրէնսն՝ ա̄ծահրաման հնչէր պատգամ 'ի ձեռն հրեշտականուն տեսանողին Մաղաքեայ (Բ. 7.) * զի շրթունք քահանային զգուշասցին գիտութե̄, եւ օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա, զի հրեշտակ տ̄ն ամենակալի է ||. քանիօն արդեօք պահանջէ 'ի քրիստոսադիր օրէնս ճշմարիտ քահանայութե̄՝ խելամտութե̄ կատարեալ գիտութե̄ 'ի հրեշտակացեալ քահանայս, որք ո՛չ միայն յահաւոր խորհուրդ տ̄ն պատարագի պաշտին մատչին՝ հրեշտակային, չասացից թէ ք̄սական՝ մաքրութե̄, եւ մեղսաքաւիչ հաշտարարութե̄ լեալ միջնորդ ընդ ա̄ծ եւ ընդ մարդիկ յետ ք̄սի եւ ըստ ք̄սի, այլ եւ իշխանութե̄ ա̄ծատուր կապանաց հանդերձեալ են բանալ եւ կապել զդրունս երկնից. եւ դատաւորաբար 'ի խղճմտանս տ̄ն կապել եւ արձակել զմեղս 'ի խորհուրդ ապաշխարութե̄։ Եւ ահա առ այս պահանջէ ծայրագոյն գիտութե̄ օրինաց ըստ տէրունական հրամանաց կրկնին, եւ ըստ սահմանադրութեց կաթողիկէ եւ առաքելական եկեղեցւոյ։ Ապա թէ ո՛չ որ միանգամ անտեղեակ գոլով իմութե̄ իրաց, կամ անփոյթ զանձն ցուցանելով ուսանել եւ ուսուցանել զկարեւորս 'ի խոստովանութե̄, անյիշամտաց եւ ձեռներէց լեալ 'ի պաշտօն խոստովանահայրութե̄, այնպիսին՝ անգէտ կորստեան անձին եւ այլոց գտանի պատճառ, եթէ եւ կոյր՝ կուրաց առաջնորդ. եւ սաստկապահանջ համարս ունի տալ ա̄յ վասն իւր, եւ հոգւոց բազմաց. վասն զի կամաւոր վրիպագործ եւ յանցաւոր լինի 'ի ծանր պաշտօն դատաւորական եւ հովուական, որպէս դատաւոր անգէտ կարգի օրինաց եւ իրաւանց՝ պարտաւորիչ անմեղաց, եւ ազատ կացուցիչ ծանրագործաց. եւ

որպէս հովիւ անձանաչօղ և անընտրօղ խաշանց, և ա-
րօտի նոցա, մինչև ժամ գայլոց մտանել ըզխարս ջոր,
ժամ վառնել ընդ վայրս հորոտեան, և ժամ ձարակս զամ-
բել մահացութս. և որո՞մ պատճառ չէցէ արժանի այն-
պիսին։ Որպէս և ընդհանրականն՝ խոստովանահայր հը-
բեղշտակնման՝ գերթառոր և արթուն, ելաբապահէ
վարժոց լինել արժանի 'ի եկեղեցեաց տեէն. Թող զի
և երաամէք վայելէ 'ի եպիսկոպոս հարկաւոր պիտոյից ըստ
ծեր մշակի հաստատութեան աշխատողէ յայգւոջ տն, որ
է եկեղեցի այ։

Արդ՝ փորձիւ գտեալ եմ 'ի եպիսկոպոսաց քարոզութէ,
զի պէտս յոյժ ունին նորընծայ քահանայք Աբրահամեայք
հարկաւոր գործոյ 'ի յետին ա 'ի գնել զպարտս ծանր
պաշտաման խոստովանահայրութէ, փոյթ յանձին կալայ
մատուցանել 'ի նոցանէ նոցա զայս հրահանգ գործնական՝
եկեղեցին նոր Թարգմանութէ, և 'ի լոյս ընծայել տպա-
գրութէ, (այն՝ որ պատճառ Թարգմանութէ եւեթ գրչա-
գիր գտանիւր երբեմն 'ի յետս ոմանց,) առանց խնայե-
լոյ յիմ ծերութէ յօժարութեան և ուժ ամաց հասակի.
մնայն Թէ վերծանողք օգտեսցին դէ, այսինքն եկեղեցա-
կանք՝ որք պարտին հոգալ և խնդրել զօգուտ հոգւոց
եղացնոց զոյգ ընդ հոգւոյ իւրեանց։ Եւ այս իմ երկ-
րորդ աշխատասիրութէ գրաւոր յարեալ յառաջին,
այսինքն՝ յառաջաբանութէ նառաչղալէ՝ (որ 'ի պէտս
աշխահանական՝ 'ի լոյս ածեալ երկուանն ամօք յառաջ,)
խորհրդաւոր իմն համեմատութէ. զի Թէ այն առաջնոր-
դէր յանձրեալ ձեռնադրութեան ընդ ծով նորութ-
եան, աս առաջնորդէ հանել անցանել ղծով կենցաղոյս
անվտանգ ընթացիւք մինչև 'ի նաւահանգիստ կենացն յա-
ւիտենից։ Օ այս քաղ իմանալ՝ որ քաղ միտ դնէ եանեց
գրոցս այսոցիկ. ուր գտանէ հարկաւորութէ դմ զգու-
շաւորութէ 'ի հոգևոր նաւարկութէ ընդ ուղղաշաւիղ
և ընդ ուղղագիծ ուղիղ 'ի յետն թծեղէն պատգա-

մաց, և եկեղեցական կանոնաց, ժողովական վճռոց, քահանայապետական կոնդակաց, վարդապետական հրահանգաց, և աստուածաբանական զանազանութեանց, ո՛չ խոտորելով ՚ի միջասահման գծէ․ ո՛չ յաջ և ո՛չ յահեակ, որք միօրինակ հերքեն ՚ի ձեռն դատապարտեալ նախադասութեանց։ Քաջ մեր դնել առեմ, զի որ ընթեռնուն առ ՚ի օգտել և օգտեցուցանել (որպէս էն՝ որք հանդերձեալ իցեն լինել խոստովանահայր), դիւրին ամբարել ՚ի միտս զամենայն սահմանս և զբաժանմունս և զդիպուածս լուծեալս, և լուծանելիս ըստ անվրէպ կանոնի․ որպէս զի մարթասցեն արդիւնացուցանել զստացեալն․ ապա եթէ վեր ՚ի վերոյ տեսութեամբ ոք անցանիցէ, ոչինչ շահի, այլ գուցէ և վնասի և վնասէ․ որպէս տեղատարափ յեղակարծ և հարևանցի՝ ո՛չ այնչափ արբուցանէ զերկիր ծարաւուտ, կամ զուարճացուցանէ զբոյսս, որչափ քոշի ցնդեցուցանէ յերկրէ, և եթեցուցանէ զզուարթութիւն բուսոց և տնկոց․ ուր անձրև հանդարտիկ յօղեալ՝ գեղեցիկ ոռոգանէ, և արդիւնաբեր առնէ զամենայն բազում շահեկանութեամբ։ Նոյնչափ ինչ ՚ի կոչմանէ նուաստ աշխատասիրողիս ՚ի թարգմանութեան շատ լինի, որ փոխարէն այլ լինորդեմ յառաջինն ընթերցանելեաց, բայց դադարեր առնել զիմ դոյզն երկասիրութեան ՚ի փառս Աստուծոյ և ՚ի փրկութիւն հոգւոց։

Ծանիցեն և զայս՝ իմ ընթերցասէրք, զի յընթացս գործոյ բուն մատենագրիս տերծագոս եպիսկոպոսի՝ յաւելեալ է ինչ ինչ բացատրութիւնս կամ կարևոր հատուածս՝ այլ ոչ աստուածաբան ՚ի կարգէ միւսոյն․ և մեք զնոյն թարգմանեցաք առ ՚ի դիւրութիւն խոստովանահարց․ վասն որոյ մի՛ զարմասցի ընթերցողն՝ եթէ ուրեք ուրեք նոյն բանք կրկնին այլով ևս օրինակաւ․ այլ քոյթ կալցի ընթերցասէր լինել և դեգերել յայլ ևս մատեանս սրբոց հարց և վարդապետաց, որք զնոյն վարդապետութիւն բազմօրինակ յարակութ դարձեն յօգուտ հոգեւորաց։

# ՆԱԽԱԴՐՈՒՆՔ ԲԱՆԻՑ

## ՀԵՂԻՆԱԿԻՆ։

ԶԻ՞ սահմանայն յանդիման եղեալ յառաջեան ժողովական
ատենի ժննչի՝ խօսել սկսանի եբրա-
յայս օրէնաւ։

ժհ. Յանկնարկութէ առաջնորդին իմոյ գամ յանդիման լինել արդոյ տէրութեդ՝ քննել զիս և տեսանել, եթէ կայցէ՞ յիս բաւականութի լսելոյ զխոստովանութի. զի թէպէտև բազում անգամ յորդորէր զիս առաջնորդն յանձն առնուլ զայս բեռն, այլ ընդդէմ կայի՝ յուշ ածելով, թէ քանի՞ ծրից պէտս ունի քաջ խոստովանահայրն առ 'ի չծանրաբեռնել զխիղճ մտաց՝ զիւրն ասեմ, և զապաշխարողաց. 'ի վարել անդ զայսպիսի պաշտօն մը, միանգամայն և վըտանգաւոր. բայց երբև կարի հարկեցոյց զիս հրաման վեհիս՝ լաւ վարկայ նուիրել զիս ածային կամաց։

ժնն. Գովեմ յոյժ զգեղեցիկ նախանձ պատուականիդ 'ի փրկութե հոգւոց, զոյգ ընդ յօժարամիտ հպատակութե առ առաջնորդդ։ Վասն զի այդ իսկ է նշան ածային կոչման յանձին պատուականիդ՝ առ այդպիսի մեծ և ծանր պաշտօն. ուր ողբոց արժանի է տեսանել զբազումս 'ի քահանայից ոգէտս, դատարկակեացս, և անպիտանս. որք առ նուազութե նախանձաւորութե փրկութե հոգւոց, և առ 'ի խոյս տալոյ յաշխատասիրութէ ուսմանց՝ չառնուն յանձն լսել զխոստովանութի ընդ պատճառանօք վտանգի ծանրաբեռնելոյ զխիղճ մտաց իւրեանց. որով և անցուցանեն զկեանս իւրեանց 'ի խեղկատակութիս, և 'ի ժամավաճառութիս. եւս և 'ի կենակցութիս անվայելս քահանայական վիճակի իւրեանց։ Յորում վայրի. * Մանկունք խնդրեն զհաց, և չէ ոք որ բեկանիցէ նոցա ||. կամ ըստ մեզ. * աղքատք հաց խնդրեցին, և ոչ ոք էր՝ որ բրդէր նոցա ||. ողբ. դ. 4։ Մինչև խիթալ ինձ յոյժ, թէ իցեն ոմանք ոմանք 'ի քահանայից, որք ահագին դատաստանս

կրեսցեն 'ի տնէ մերմէ ծոյ փրկչէն: Ջի որովհետեւ 'ի ծբ ձեռնադրութե անդ իւրեանց ընկալան միանգամայն զեր-կուս մեծամեծ տաղանդս, զմին 'ի վերայ իրական մարմնոյ տն յնի. այս է՝ մատուցանել զահաւոր խորհուրդ նը պա-տարագին. եւ զմիւսն 'ի վերայ խորհրդական մարմնոյ նո-րա, որ է եկեղեցի, այս է՝ արձակել 'ի մեղաց, այնպիսեացն շատ համարին յարգել զառաջին եւ եթ քանքարն. եւ զայն ած գիտէ, թէ որպէս. իսկ զերկրորդ քանքարն չէ ինչ փոյթ նց յարգել. այլ պահեն զայն անգործ զոմ աւուրս կենաց իւրենց, առ 'ի փախչելոյ յաշխատանաց՝ եւ յուս-մանէ, որ խնդրի առ բարւոք տնտեսութն նորին:

Ոչինչ նուազ է ողբալի եւ յանդգնութիւն այլոց, որք դուզնաքեայ հմամբ գիտութե գուն գործեն կորզել 'ի ձեռաց քննչաց զվկայութն բաւական հմուե առ 'ի լսե-լոյ զխոստովանութն. որով մարթասցին ընդունել զիրա-ւասութն յեպիսկոպոսէ. զոր թէ չընդունիցին՝ տրտնջեն զնմանէ իբրեւ զկարի խստագունէ: Որոց արժան է աչաց առաջի դնել՝ զոր գրեացն հայրն կամիլոս քննիչ ժառան-գաւորաց 'ի հռոմ՝ 'ի խրատաբանութե սնդ իւրում յա-ղագս խոստովանահարց. հատ. ա. գլ. ա. հմ. 22. ունելով բանին այսպէս:

* Արդ՝ գիտասցէ քահանայն՝ որ փափաքէ լսել զխոս-տովանութի, զառաջիկայ բանդ: ա. Եթէ որպէս վախ-ճան սկզբնական գիտեսցէ զթոշակ, մեղանչէ կարի ծանր մեղօք սիմոնականութե մատուցի, քանիցս անգամ եւ նո-րոգէ զայդ ներգործութն: բ. Եթէ գիտասցէ կամ պար-տական իցէ ճանաչել զանձն ամիւ անընդունակ 'ի լսել զխոստովանութն, մեղանչէ՝ յորժամ 'ի քննութն առաջար-կէ զանձն, եւ յորժամ խնդրէ կամ առնու զհրամանագիր եպիսկոպոսի, կամ այլով օրինակաւ զբռամբ ածէ զիրա-ւասութն: գ. Միշտ մեղանչէ՝ ցորչափ լսէ զխոստովանու-թն, այնչափ սեղանակապտութիս գործելով՝ որչափ խոս-տովանորդիք մատչիցին առ նա: դ. Մեղապարտ գտանի ամենայն խորհրդոյ, զորս անվաւերաբար մատակարարէ. զորօրինակ՝ եթէ արձակէ 'ի վերապահելոց ևն: ե. Մե-ղապարտ գտանի ամենայն անիրաւութեց, զորս գործէ խոստովանորդին. զորօրինակ ոչ առնելով զհատուցումն՝

Ը՟

Երբ պարտական իցէ հատուցանել. իբր զի խոստովանահայրն առ կարի մեղադրելի տգիտութե՟ իւրոյ ազատ կացուցանէ զնա. և յայս դիպուած պարտաւորութիւն հատուցանելոյ բարդի 'ի վերայ խոստովանահօր՝ հանդերձ ամենայն հանգամանօք՝ որք կից իցեն ընդ հատուցման. իբր զի իսկ և իսկ պարտաւորի առ ամենայն վնասս. և այլն. Դ. Դարձեալ պարտական գտանի մեղաց, յորոց 'ի վտանգ գործելոյ դնէ զանձն իւր, թէ և ներգործութ՟ն պատահման ոչ գործեսցէ արդեամբք: Ե. Թէ և չլսիցէ զխոստովանութի՟ն ուրուք. եթէ ինքն դիւրապատրաստ կայ լսել զմի՝ որ ունիցի գալ առ նա, պարտական է այնչափ սեղանակապտութե՟ց, որչափ ինչ պատրաստ էր 'ի գործել: Զ. Մինչ մեղանչէ, ցորչափ 'ի միտս եկեալ՝ թէ զմիւ, անբաւական է ինքն, չառնու 'ի մէջ զփոյթ պարտուպատշաճ՝ առ 'ի բաւական գտանիլ 'ի ձեռն կարևոր ուսման, ևն ||:



Որ մինչ՝ ի մահ գործէ զբա րի
այսպէս լինիլ արժանաս ցի :

# ՀՐԱՀԱՆԳ ԳՈՐԾՆԱԿԱՆ

## ԱՌ ԲԱՐԻՈՔ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՑ ՁԽՈՐՀՈՒՐԴ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ

---

### Յաղագս պաշտօնէի խորհրդոյ ապաշխարութեան ։

Հց. Սկիզբն կամեցեալ մեր առնել հարցաքննութեան՝ ասա ինձ, թէ խորհուրդ ապաշխարութեան յումմէ՞ կամ յի՞նչ փոխման սահմանեցաւ ։

Պտ. Պատասխանեմ ըս̃ վարդապետութեան հռովմէական մաշտոցի, թէ Տր̃ * խորհուրդն ապաշխարութեան սահմանեցաւ 'ի քս̃է վս̃ նոցա՝ որք սահեցան 'ի մեղս զկնի մկրտութեան, առ 'ի վերստին դարձուցանել զնոսա 'ի շնորհս այ̃ || ։

Հց. Զի՞նչ նշանակեն այն բանք ծիսարանին՝ որք յարին զկնի. * բաղում ինչ խնդրի առ ուղիղ և ըստ արժանւոյն վարումն և ընդունելութիւն նորին || ։

Պտ. Նշանակեն, թէ առ վաւերաբար և օրինաւորապէս մատակարարելոյ և ընդունելոյ զխորհուրդն՝ բաղում թէութիւնք պահանջին թէ 'ի պաշտօնէայն և թէ յապաշխարողն ։

Հց. Բանի՞ և զի՞նչ թէութիւնք պահանջին 'ի

պաշտօնէայն առ վաւեր մատակարարելոյ զխոր-
հուրդն ։

Պտս. Խնդրին հինգ թէութիւնք ։ Ա. Իշխանու-
թիւն կարգի ։ Բ. Իշխանութիւն իրաւաբանութեան ։
Գ. Դիտաւորութիւն ։ Դ. Գիտել և արտասա-
նել զբանս արձակման ։ Ե. Օր մի լսել խոր-
շելի բանադրեալ, կամ յայտնապէս կախեալ,
և կամ գրով անկանոնական ։

Հց. Մեկնեա զպատճառս իւրաքանչիւր նախ-
ասացեալ թէութեանց ։

Պտս. Ի պաշտօնէայն՝ Ա. խնդրի իշխանութիւն
քահանայական կարգի ըստ սահմանադրութեան
տրիդենտեան ժողովոյն. գլուխ. 14. յղ. խոր.
ապաշ. կան. Թ. ընդդէմ հերետիկոսաց ոմանց,
որք պնդէին թէ ամենայն հաւատացելոցն՝ որք
մկրտեալ իցեն կարեն արձակել 'ի մեղաց ։

Իշխանութիւն կարգի ոչ բնաւ և ոչ իւիք
պատշաճի կանանց. որոյ պատճառն է, զի
կինն է 'ի վիճակի յաւէտ հպատակ կալոյ եկե-
ղեցական իշխանութեան. զի ասէ առաքեալն.
Ա. կորն. Գլ. ԺԴ. * Կանայք յամենայն եկեղե-
ցիս լուռ լիցին. զի ոչ հրամայի նոցա խօսել ‖։
Եւ Իննովկենտիոս Գ. Ծաղորդ. յղ. ապաշխ. և
թող. Գլ. Նոր. զայսօրինակ գրեաց ։ * Նոր
ինչ իրք 'ի լսելիս մեր հնչեցին, զի Աբբաու-
հիք միանձնուհեաց զիւրեանս օրհնեն. և լսեն
զնոցա խոստովանութիւս յանցանաց. և ընթեր-
ցեալ զաւետարան՝ իշխեն հրապարակաւ քարո-
զել ։ Եւ զի այդ միօրինակ անհեթեթ է և ան-
տեղի, առ 'ի չլինել այժմ յայսմ հետէ և անդր,
գուն գործեսջիք պնդապէս արգելուլ ։ Սան
զի ամենայնը կոյսն Մարիամ թէպէտև առա-
ւել արժանաւոր և գերագոյն էր քան զառա-

քեալս համօրէն, ոչ նմին, այլ սոցա յանձն արար Տէրն զփականս արքայութեան երկնից ||: Եւ թէ յոլովք 'ի հին աբբասուհեաց անյատկապէս խոստովանեցուցեալ իցեն զմիանձնուհիս իւրեանց, նշանակէ Ն. Մարտենէս 'ի ճառս իւր յաղագս եկեղեցական ծիսից:

Ե. Խնդրի իրաւաբանութիւն. զոր նոյնպէս բացայայտեաց սասցեալ ժողովն. անդ 'ի գլ. Է: Քանզի որ և իցէ քահանայ 'ի ձեռնադրութեան անդ իւրում թէպէտև ընդունի զիշխանութիւն արձակելոյ 'ի մեղաց, սակայն ոչ կարէ վաւերաբար վարիլ նովաւ. բայց եթէ 'ի վերայ հաւատացելոց՝ յորոց վերայ ունիցի զկարգաւորեալ կամ զյանձնեալ իշխանութիւն իրաւաբանութեան: Եւ առ պակասութեան իրաւաբանութեան ոչ կարէ քահանայն արձակել ոչ 'ի ներելեաց և ոչ 'ի մահուչափ մեղաց յայլ նուագս խոստովանելոյ անգամ: Որպէս Մաստրիոն ընդ սկովտականս առ հասարակ: Զի թէպէտ նիւթն ազատ է, բայց վճիռն ոչինչ: * Քանզի ներգործութիւն դատաստանական՝ յոչն ներքոյ անկեալս է ոչինչ ||: Ֆէրրարիս: Կայ և նախադասութիւն դատապարտեալ յԻննովկենտիոսէ ԺԱ:

Զ. Խնդրի ներգործական կամ գէթ զօրութենական գիտաւորութիւն արձակելոյ. ըստ որում նոյնպէս բացայայտեաց ժողովն անդ. 'ի գլ. Զ. 'ի վերջն:

Պատասխանի՝ որով հաստատի այս վարդապետութիւն հաւատոյ մերոյ՝ այս է, թէ Քս Տէրն մեր որ եղև հեղինակ և սահմանադիր խորհրդոց նոր օրինաց՝ կամեցաւ, զի մատակարարութիւն խորհրդոց լինիցի ներգործութիւն ինչ մարդ-

կային․ և ո՛չ ասի ներգործութի՛ւն մարդկային՝ եթէ չիցէ ազատ․ և չէ ազատ՝ եթէ ո՛չ կատարեսցի դատմամբ մտաց, և գիտաւորութեամբ կամաց։ Բենեդիկտոս ԺԴ․ ՚ի Թեմ․ Ժող․ Գր․ Է․ Գլ․ Դ․ Հմ․ 3։

Յորմէ հետևի, թէ խորհուրդն եղեալ ընդ խաղս, կամ ընդ կատակս առանց դիտելոյ առնել զոր դիտէ կաթողիկէ եկեղեցին՝ ոչինչ է և անվաւեր։ Ընդ այլ նախադասութիւնս Լուտերոսի՝ Լևոն Ժ դատապարտեաց և զայս․ յամի 1520․ * Եթէ անկարելի դիպուածով խոստովանողն չիցէ զղջացեալ, կամ քահանայն ոչ աչալուրջ մտօք, այլ ընդ խաղս արձակեսցէ, և սակայն հաւատասցէ թէ արձակեալ իցէ, ստուգիւ արձակեալ է ‖։ Այլ այս մոլորութիւն դատապարտեալ է և ՚ի ժողովոյն տրիդ․ ՚ի նիստ․ 7․ և 14․ Գլ․ Զ․ կան․ 9․ յղ․ խորհ․ ապաշ։ Կարծիք Կատարինոսի և այլոց՝ որ յաղագս յետս նահանջելոյ զդիտաւորութիւնն՝ մոլա՛ր իցէ արդեօք՝ չև ևս է սահմանեալ յառաքելական եկեղեցւոյ․ բայց ՚ի գործ ածել պարտ է ՚ի կիր առնուլ զհասարակաց կարծիս․ որ պահանջէ զդիտաւորութիւն ներգործական կամ զօրութենական։ Իսկ եթէ պատահեսցի ումեք մկրտել, կամ պաշտել զայն խորհուրդս՝ որք ո՛չ կարիցեն կրկնիլ, եթէ հարկ տարակուսական իցէ ՚ի նոսա՝ պարտ է թէուքէ մկրտել զնոսա․ և եթէ ներեսցէ ժամանակն, պարտ է ունել մատուցանել վճռոյ ՍԲ Աթոռոյն։

Դ․ Պարտ է գիտել և արտասանել զբանս՝ որք էական են առ արձակումն․ որպէս ազդ առնէ ժողովն․ Գլ․ Գ։

Ե․ Ո՞ւր լիցի խորշելի բանադրեալ․ այսինքն՝

որ հրապարակաւ հարեալ իցէ զկղերիկոս ոք․ կամ թէ հրատարակեալ իցէ յեպիսկոպոսէ իւրմէ բանադրեալ․ և զնոյն պարտ է ասել զկախեալ կամ զանկանոնական քահանայէ՝ որ իցէ նոյնպէս հրատարակեալ։ Վասնզի սոյնպիսիք զրկեալ են 'ի հոգևորական իրաւաբանութենէ՝ թէ 'ի կարգաւորելոյ և թէ 'ի յանձնելոյ ըստ բանից Կոստանդեան ժողովոյն․ 'ի Գլ․ Ա․ — Խոր֊ շէլոյ ։

Սակայն 'ի բաց առեալ լինի կէտ մահուն․ ըստ սահմանելոյ Տրիդենտեան ժողովոյն․ Գլ․ Է․ Նիստ․ 4․ * թէ 'ի կէտ մահու ո՛չ լիցի վերապահութիւն ինչ․ ուստի և ամենայն քահանայք զո՛ր և իցէ ապաշխարօղս՝ յո՛ր և է յանցանաց կամ 'ի բանադրանաց կարեն արձակել ‖ ։ Յաղագս սոյին իրաց՝ պատմէ կարդինալ Ալուիզի ՏՂ․ անհատապատութէ 'ի հատուածս․ Գլ․ ԺԷ․ ՀՏ․ 39․ թէ եղև հակառակութիւն ։ * Արդեօք կարո՞ղ իցէ քահանայն յանուանէ բանադրեալ և հրատարակեալ՝ արձակել զեղեալն 'ի կէտ մահուան։ 'Ի գրել իմում զայսոսիկ՝ յարեաւ հակառակութիւն մեծ 'ի քննութէ ուրումն եպիսկոպոսի յանդիման սրբայիշատակ Աղեքսանդրի Է․ քանզի իբրև հարցաւ 'ի Հայր Պիանայէ կամ յայլմէ քննչէ․ արդեօք քահանայն յանուանէ բանադրեալ՝ կարո՞ղ իցէ արձակել զեղեալն 'ի կէտ մահուան․ և եպիսկոպոսն արար պատասխանի՝ այո՛․ Տէր կարդինալն Պալլավիկինիոս ասաց, թէ բարեյիշատակն Փաղնանոս 'ի վերծանութիւնս իւր վկայէ, թէ 'ի սրբազան ժողովն Սինհօդոսաց հակառակն որոշեցաւ․ և վ՟ս այնորիկ աղմուկ մեծ ծագեաց․ քանզի երևէր կարծիք հակառակ ամենայն վարդապե֊

տաց, որք զկնի ժողովոյն գրեցին: Այլ արդա-
րև Փագնանոս 'ի կրկնութե. Գլ. Ճ՟ չէ յաղագս
անհնարութեանց, յառաջ բերէ՝ թէ սեռական
ժողովն Մօռոնի, Ագկիատայ, Սեռոնեանն,
Մոնտալտոյ, Ալեանու, և սրբոյն Սիքստոսի,
համարեցաւ, թէ ոչ է մարթ՝ ըստ վարդապե-
տութե վարդապետի միոյ, սրբոյն Թովմայի,
Դորանդոսի, Տուրրէկրէմատայ, սրբոյն Ան-
տոնինոսի, Բակկոնի, և այլոց ածաբանից ու
'ի նմանէ նշանակելոց: Ալեքանդրի՝ որպէս ա-
սացի, աղմուկ մեծ եղև, և Հ. Դիանայ, և
գուցէ այլ ոք գրեաց 'ի կողմն ստորասական
կարծեաց, նա ինքն Մ. Հ. Փագնանոս աշխա-
տաւոր եղեալ վերստին 'ի մէջ եառ զխնդիրն
'ի Գլ. Ճ՟Ն է յէր յաղագս նշանակութեանց. և ջա-
նացաւ պատասխանի առնել ամենայն ձեռնար-
կութեանց 'ի հակառակ կողմն յառաջ բերելոց:
Այլ թէպէտ բազում խուզարկութեամբ խնդրե-
ցան մատեանք և յիշատակարանք միոյ սրբա-
զան ժողովոյն՝ որ վասն Տրիդենտեան ժողո-
վոյ, չեղև մարթ գտանել զասացեալդ որոշու-
ղութի: Ապա ասելի է, թէ այդ որոշումն ոչ
եղեալ. և կամ եթէ եղեալ իցէ, 'ի նախագրեալ
մատենից 'ի բաց ջնջեալ իցէ իբրև հակառակ
հասարակ կարծեաց ածաբանից գրողաց զկնի
ժողովոյն: Իմացայ և ես, զի յամի 1682. 'ի
ժամանակս քահանայապետութե տն մերոյ Ին-
նովկենտիոսի ԺԱ. եղեալ է 'ի սրբազան ժողովն
սրբաքննութե վիճաբանութի 'ի վերայ այդր
կարծեաց. և զի ոմանք 'ի կարդինալաց զհետ
երթային կարծեաց սրբոյն Թովմայի, բանն ար-
կաւ ընդ քննութեամբ: Այլ իբրև հանին զիրսն
յատեան Սրբազանին, նա իւրով խոհականութեամբ

պատուէր ետ, զի մի լիցի վիճել 'ի վերայ այդր կարծեաց. և մի ևս այլ յերկբայս արկանիցի. որպէս վկայեաց ինձ. Մ. Հ. Մ արդարապետն Բրիձձա ընթերակաց սրբաքննութեան լա ||:

Հց. Քանի՞ ինչ խնդրին 'ի պաշտօնեայն առօրինօք արձակելոյ զապաշխարօղն 'ի մեղաց:

Պխ. Խնդրին հինգ թէութիւնք. ա. զի իցէ 'ի շնորհս. բ. գիտել զկարևոր գիտելիս առ 'ի մատակարարել զայս խորհուրդ. գ. 'ի կիր առնուլ զձև և զնիւթ ապահովագոյն, 'ի բաց թողեալ զմիայն հաւանականս. դ. մի ունիցի զեկեղեցական զարգելումն ինչ, կամ զգաղտնի անկանոնութիւն. ե. պահել անվրէպ զարարողութիւնս սահմանեալս յեկեղեցւոյ:

Հց. Մեկնեա զմի թէութիւնդ զայդոսիկ:

Պխ. Հարկաւոր է պաշտօնէին լինել 'ի շնորհս ա̃յ. որպէս յայտ առնէ հռովմէական ծիսարանն.

յղ. Մատակարարութեան խորհրդոց 'ի յօդ. Հ̃ն այսորէն:

* Մն այսօրինակ այդմ փոյթ կալցի յաւէժաբար՝ անթերի, ողջախոհ, և բարեպաշտ կենօք քաղաքավարիլ (քահանայն.) զի թէպէտև չէ մարթ խորհրդոց պղծիլ յանօրէնս, կամ խափանիլ գործոց նոցին յանարժան պաշտօնէից. բայց ինքեանք 'ի մատակարարել անդ զնոսին անմաքրապէս և անարժանութբ̃՝ դատապարտ կացուցանեն զանձինս յաւիտենական մահու. լա ||:

Իսկ թէ խնդրի բարութի 'ի պաշտօնեայն՝ իմաստասիրի այդ 'ի ձեռնադրութէ անտի իւրմէ. որով տուեալ լինի նմա շնորհ հոգւոյն ս̃բյ ըստ արժանեաց և ըստ պատշաճի 'ի կիր առնուլ զայնպիսի խորհուրդ՝ յասել եպիսկոպոսին բանիւ յ̃նի ք̃ի. * առէք զհոգին ս̃բ. եթէ ումեք թողուցուք զմեղս ||, լա. յոհ. ի. 23:

Բազում ինչ պարտի գիտել պաշտօնէայն․ որպէս ազգ առնել ծխարանն․ յղ․ խորհ․ աղաչ․ և մասնաւորապէս գիտել՝ զանազանել զմահուչափ մեղս 'ի ներելեաց․ գիտել ևս զպարագայս՝ որք փոփոխեն զտեսակս մեղաց․ և զայնոսիկ՝ որք ծանրացուցանեն միայն զմեղս 'ի նմին տեսակի։ Բայց այսոքիկ բացատրեսցին և ևս ինչ ինչ դիպուածովք, զորոց լինիցին բանք։ Այնպէս պարտի գիտել ևս, թէ ուստի առեալ լինի թուական տարբերութիւն մեղաց։ Նաև ևս զայն ամենայն՝ որք հային 'ի մերձաւոր և 'ի հեռաւոր նիւթ և 'ի ձև այսր խորհրդոյ։ Գիտել պարտի ևս և զդիպուածս և զբանադրանս՝ որք պահին պապին, և իւրում եպիսկոպոսի․ զդատապարտեալ նախադասութիւս, որովք ոչ ևս է մարթ վարիլ 'ի նիւթ բարոյական․ որպէս և զհրովարտակ սրբազննութե․ որպէս զի կարող լիցի ստիպել զապաշխարողս առ 'ի առնել զեկուցումն ատենի, յորժամ պարտական են։

Պարտի 'ի կիր առնուլ զապահովագոյն նիւթ և զձև, 'ի բաց մերժեալ զմիայն հաւանականն ըստ առաջին նախադասութեն դատապարտելոյ յԻննովկ․ ժա․ * Ոչ է ապօրինաւոր 'ի մատակարարութե խորհրդոց զհետ երթալ հաւանական կարծեաց 'ի վերայ վաւերականութե խորհրդոյն, թողլով զապահովագոյնն ‖․ իա։

Պարտի չունել բանադրանս և անկանոնականութիւս, թէ և իցեն գաղտնիք․ թէպէտև այսոքիկ չառնիցեն անվաւեր զմատակարարութին այսր խորհրդոյ, երբ չիցեն հրատարակեալք․ սակայն քահանայն մեղանչէ մահուչափ մեղօք, որ 'ի նմին վիճակի գիտութե պաշտ-

զխորհուրդն. որպէս 'ի Գլ. ԺԸ. ճառընտրեալ ենէ-ընծայական պաշտօնի:

'Ի վախճանի, պարտի 'ի գործ դնել զամենայն արարողութիւնս՝ որ հրամայեալ է յեկեղեցւոյ. նմին իրի Ժողովն տրիդենտեան յայտնի արար 'ի Նիստ. 7. Գլ. ԺԳ. ասելով. * Եթէ ոք ասասցէ, թէ զառ 'ի կաթուղիկէ եկեղեցւոյ ընկալեալ արարողութիւնս, զորս սովորութիւն է վարել 'ի հանդիսական մատակարարութեան խորհրդոց, կարող է պաշտօնեայն կամ արհամարհել, և կամ առանց մեղաց զանց առնել ըստ հաճոյս, նզովեալ եղիցի ||:

Հց. Իսկ զի ասացեր, թէ առ 'ի պաշտել ըզխորհուրդ ապաշխարութեան առանց նոր մեղս մեղանչելոյ՝ քահանայն պարտի լինել 'ի շնորհս այ, կամ է ինձ գիտել, արդեօք 'ի կամիլ քահանային լսել զխոստովանութիւն՝ եթէ գտանիցի 'ի մահուչափ մեղս, պարտ իցէ նմա նախ խոստովանիլ՝ երբ խոստովանահայր կայ 'ի պատրաստի, թէ շատ իցէ առնել զներգործութիւն զղջման:

Պտ. Նախասացեալ ժողովն պատասխանի առնէ կարծեացդ. 'ի ԺԳ. Է. նիստին. այսպէս: * Որդ՝ եթէ քահանայն ունիցի զանձնէ ըզխիղճ մահուչափ մեղաց, (որ քաւ լիցի) մի իշխեսցէ մատչիլ 'ի մատակարարութիւն խորհրդոց, մինչև է 'ի սրտի կանխաւ զղջացեալ. այլ եթէ ունիցի զդիւրութիւն խոստովանահօր և ժամանակի, և տեղւոյ, 'ի դէպ է խոստովանել ||: Որդ՝ քանզի լոկ, 'ի ԴԷՊ է ասէ, և ոչ թէ պարտի խոստովանիլ, չէ մարթ դատապարտել իբրև սրբապիղծ զայն քահանայ որ յառաջագոյն զղջումն և եթ արարեալ՝ պաշտէ զայս

խորհուրդ առանց խոստովանելոյ, թէպէտև 'ի պատրաստի ունիցի զխոստովանահայր։ Նաև քանզի առնել ճշմարտիւ զկատարեալ զղջումն՝ դժուարութիւն մեծ ունի, նմին իրի ապահովագոյն է խոստովանելն. որպէս ազդ առնէ հռովմէական հրահանգն. յղ. խոր. ապաշ. հմ. 45։

Հց. Ասացեր թէ առ օրինաւոր մատակարարութիւն այսր խորհրդոյ հարկաւոր է պաշտօնէին 'ի գործ արկանել զապահովագոյն նիւթ և զձև, 'ի բաց թողեալ զմիայն հաւանականն. զոր և դատապարտեալ է Իննովկ. ժա. յառաջին նախադասութեան. արդ՝ ցանկամ զի ցուցցես ինձ գործադիր օրինակ ինչ յայս խորհուրդ։

Պտս. Որովհետև կարծիք է հաւանական, թէ էական ձև այսր խորհրդոյ են երեքին բառքս միայն. Ես արձակեմ զքեզ. առանց յաւելուածոյ 'ի մեղաց քոց. և թէ վաւեր է արձակումն՝ տուեալ այդօքիւք երիւք և եթ բառիւք, բայց զի կայ դատապարտեալ նախադասութիւն, միանգամայն և հեղինակութիւն մեծամեծ վարդապետաց, որք առ էական ձև այսր խորհրդոյ պահանջեն ամբողջ զայս ամենայն բան, Ես արձակեմ զքեզ յամենայն մեղաց քոց. ապա ուրեմն չէ մարթ ուրանալ, թէ ուր սա է ապահովագոյն, պարտ է զհետ երթալ սմին ըստ բանի նախասացեալ դատապարտութեան. վասն զի որ գնայ զհետ առաջին կարծեաց՝ զխորհուրդն դնէ 'ի վտանգ անվաւերութեան. որ ոչն պատահեսցի 'ի գնալ զհետ երկրորդին։ Նոյնպէս հաւանական է և այն կարծիք, թէ առ մերձաւոր նիւթ այսր խորհրդոյ շատ իցէ զղջումն բեկման յղացեալ առ երկիւղի ժամանակաւոր պատժոց, զոր ա-

ռաքէ Ա.Ծ վասն յանցանաց մեղաւորաց. և թէ այս անկատար զղջումն՝ է գերբնական: Այլ քանզի ներհական կարծիքն որ պահանջէ ըղ-բեկման զղջումն գերբնական զյղացեալն յեր-կիւղէ պատժոց գեհենին 'ի հանդերձեալն, սա է առաւել ապահով. վասն որոյ թէպէտև հակառակն իցէ հաւանական, սմա 'ի կիրա-ռութե՟ պարտ է զհետ երթալ՝ և թողուլ ըղ-հաւանականն ըստ նախասացեալ դատապար-տութե՟:

Վասն ձայնիս բեկումն, իբր անկատար զղջ-ջումն, ասեն գիտնաւորք առ հասարակ ընդ-Սորինոսի. յղ. տպագ. գր. 8. գլ. Է. կՏ. ծդ. թէ չէր 'ի հնումն. այլ 'ի դպրոցս սկիզբն եղև հանդիսանալ զկնի ամին 1220:

---

Յաղագս ընդունակ ենթակայի խորհրդոյ ապաշ-խարութեան:

Հց. Ապաքէն ցուցեր թէ քանի՞ ինչ խնդրին 'ի պաշտօնեայն առ վաւեր և օրինաւոր մա-տակարարութի՟ խորհրդոյ ապաշխարութե՟. արդ՝ ասա ինձ, թէ քանի՞ ինչ խնդրին և յենթա-կայն առ վաւեր և օրինաւոր ընդունելութի՟ խորհրդոյն:

Պտս. Խնդրին վեց թեութի՟ք. ա. զի իցէ մկր-տեալ. բ. զի ունիցի զներգործական մեղս ինչ. գ. զի ցաւ գերբնական ունիցի 'ի վերայ մեղացն գործեցելոց հանդերձ յառաջադրութե՟մբ ևս գործելոյ. դ. զի ունիցի գէթ զունա-կական դիտաւորութի՟ ընդունելոյ զխորհուրդն.

Ե. զի ասասցէ զամենայն մահուչափ մեղս՝ զորս յիշէ յետ զգուշաւոր քննութեան. Զ. զի չթաքուցէ զանձն անկեալ 'ի նզովս ինչ:

Հց. Մեկնեա ինձ մի առ մի զթէութիւնս զոր ասացեր:

Պտ. Հարկ է թէ իցէ մկրտեալ. քանզի Քրիստոս սահմանեաց զայդ խորհուրդ 'ի թողուլ ըզմեղս՝ զորս յետ մկրտութեան ոք գործեաց. զի գրեալ է 'ի ծիսարանի անդ. * Թէ ոք խորհուրդն ապաշխարութեան կացուցաւ 'ի Տեառնէ Յիսուսէ՝ առ 'ի վերստին դարձուցանել 'ի շնորհս որոյ զանկեալսն ('ի մեղս) զկնի մկրտութեան ||:

Հարկ է թէ ունիցի զներգործական յանցանս ինչ. զի մեղքն է հեռաւոր նիւթ այսր խորհրդոյ. որպէս յաւելու անդանօր ծիսարանն. * հեռաւոր նիւթք նորա են մեղքն ||:

Հարկ է թէ ունիցի գերբնական ցաւս վասն մեղացն զոր գործեաց. զի սա է նիւթ մերձաւոր, ըստ ծիսարանին որ ասէ անդ. * իսկ մերձաւոր նիւթ են ներգործութիւնք ապաշխարողին, այս է՝ զղջումն ||:

Հարկաւոր է գէթ ունել զունակական դիտաւորութիւն ընդունելոյ զայս խորհուրդ. և ոչ պահանջի յապաշխարողէն ունել հանապազ ըզներգործական կամ զօրութենական դիտաւորութիւն, որպէս հարկաւոր է 'ի պաշտօնեայն. քանզի սա գործէ յանուն Յիսուսի Քրիստոսի. նմին իրի խնդրի 'ի նմա իբրև 'ի գործօղ՝ դիտաւորութիւն ներգործական կամ զօրութենական. իսկ ընդունօղն՝ է միայն կրօղ. որոյ վասն շատ է 'ի նմա դիտաւորութիւն ունակական: Աստի եթէ ոչ զկնի ցուցանելոյ նշան ինչ ցաւոյ, և կամ խոստովանելոյ, դիպուածով լինի ուշաթափ

լիցի և անկարօղ տալ զայլ նշան, կարէ և պարտի արձակել։

Չարկաւոր է ասել զոմն մահուչափ մեղս, զորս յետ զգուշաւոր քննութեան 'ի միտս բերէ. վասն զի պարտական եմք խոստովանել զամենայն մահուչափ մեղս չև խոստովանեալս երբէք, զորս յիշեմք. մինչ զի եթէ կամաւ թողցի մեղք ինչ մահուչափ, կամ զանց առնիցի վասն անփոյթ առնելոյ զզգուշաւոր քննութիւն, այն խոստովանութիւն չէ վաւեր։ Վասն որոյ յայտ արար ժողովն Տրիդենտեան նիստ. 14. գլ. Ե. յղ. խորհ. ապաշ. ասելով. * Պարտ է ապաշխարողաց զամենայն մահուչափ մեղս, զորոց ունին զխիղճ յետ զգուշութեան քննելոյ զանձինս, 'ի համար բերել 'ի խոստովանութեան ‖։

Չպարտի գտանիլ ապաշխարօղն անկեալ 'ի նզովիւք. զի ոչ կարէ արձակիլ 'ի մեղաց՝ եթէ ոչ նախ արձակեսցի 'ի նզովից. որպէս է տեսանել 'ի գլ. Պուէրալանձ տայր. յղ. բանադ. 'ի 6. և ծանուցմս մեղանչէ, որ գիտելով զանձն իւր լինել նզովեալ՝ ընդունիցի զխորհուրդն ապաշխարութեան յառաջ քան զարձակիլն 'ի նզովից. որով զխորհուրդն գլխովին ունայնացուցանէ։ Սմին իրի սրբն Թովմաս 'ի Դ. Հձռ. չան. 4. պր. Ա. ար Ե. գրէ. * Որովհետև նզովեալն ոչ է մասնակից խորհրդոց եկեղեցւոյ, չկարէ քահանայն արձակել 'ի մեղաց զնզովեալն, եթէ ոչ կանխաւ արձակեալ իցէ 'ի նզովից ‖։ Զնոյն պարտ է ասել և զնոցանէ՝ որք զաւխթ տուեալ իցեն անկանիլ յեկեղեցական ինչ արգելս. զի և սոքա չկարեն ընդունել զարձակումն, եթէ ոչ արձակեսցին նախ յեկեղեցական արգելանաց. որպ' հաստատի 'ի նշանակելն գլ. Գէրալանձ տայր։

Ապա եթէ ապաշխարող ոք անկեալ իցէ 'ի նզովս, և ինքն ոչ գիտիցէ, և խոստովանեսցի բարի հաւատով, են վարդապետք որք ասեն թէ ոչ արձակի 'ի մեղաց՝ գոլով նորա անկեալ ընդ նզովիւք՝ որ զրկէ 'ի կրաւորական ընդունելութե խորհրդոց. թեպէտ այլք ուրանան զայդ՝ յորժամ տգիտութին իցէ անմեղադրելի։

հց. Արդ՝ ցո՛յց ինձ՝ զոր խնդրի յապաշխարողն. որպէս զի օրինաւորապէս և պտղաւէտաբար ընդունիցի զսբ խորհուրդն ապաշխարութե։

պտ. Խնդրի նախ՝ ունել զտրամադրութիւնս կարևորս առ 'ի արդարանալ. որք են հաւատ, յոյս, և ցաւ գերբնական. ըստ որում ուսուցանէ ժողովն Տրիդ. նիստ. 6. գլ. ՟Է. և հրահանգ հռովմէական. յղ. խոր. ապաշ. հն. 5. և 7.

Երկրորդ՝ չէ պարտ ընդունել զայս խորհուրդ գիտութե 'ի պաշտօնէէ, որ իցէ անարժան կամ նզովեալ կամ կախեալ, թէ և իցէ տանելի։ Այս զի անարժան պաշտօնեայն, կամ նզովեալ, կամ կախեալ, ևս և տանելին՝ ոչ կարէ պաշտել զխորհուրդն առանց մեղաց. որպէս ասի 'ի վերջին գլ. յղ. բանադր. կէտ։ Այս որոյ երբ ապաշխարողն գիտէ զանարժանութի պաշտօնէին, թէ և պատրաստ իցէ նա 'ի պաշտել զխորհուրդս, մանաւանդ թէ պարտական իսկ իցէ մատակարարել 'ի պաշտամանէ խնամարկութե հոգւոյ՝ զոր վարէ, այսու ամենայնիւ առանց ստիպող հարկի ապաշխարողն ոչ կարէ խնդրել կամ ընդունել զխորհուրդս 'ի նմանէ. ապա թէ ոչ՝ գործակից լինէր մեղաց նորա. որով և ինքն մեղանչէր. որպէս քաղի 'ի բանից Տեառն Թովմայի. Բ. 2. խնդ. 78. յօդ. 4։

Սակայն անբասիր առնէ զնա ստիպողական

հարկն ։ Նոյնպէս և եթէ ոք կամաւ և գիտութեամբ խոստովանեսցի տխմար քահանայի, որ ոչ գիտիցէ զանազանել զմահուչափ մեղս 'ի ներելեաց, մեղանչէ մահուչափ մեղօք. և ինքն ոչ արձակի ։ Սուարէզ. հա. 4. Հիձ. 28 ։ Ռնէգին. և այլք ։ Վն զի գործակից լինի գործոյ՝ որ ըստ ինքեան է չար ։

Արդ կարի կարևորագոյն է ունիլ խոստովանահայր ընտիր. որովհետև զբարութիւն կամ զչարութիւն խոստովանահօր հնար է կախիլ յաւիտենական փրկութիւն կամ դատապարտութիւն անձին ։ Որոյ վասն խիթալի է յոյժ, գուցէ բազումք 'ի մեղաւորաց վն այն դատապարտին, զի ոչ խնամով գուն գործեն գտանել զխոստովանահայր, որ ազատ կացուսցէ զնոսա 'ի պատրանաց. և ծանուսցէ նոցա զվտանգն՝ յորում ունին կորնչիլ ։ Իսկ եթէ խնդրեսցէ զխոստովանահայր՝ որ դիւրահեշտ լիցի 'ի ներել զյանցանս իւր, այնու ցուցանէ՝ թէ չէ ինչ նմա փոյթ զփրկութիւն անձին. և ոչ ունի զայն խորշումն 'ի մեղաց, զոր պարտ էր ունիլ. և իրաւամբք լինի երկնչել, մի արդեօք ճշմարտեսցի զնմանէ բանն Քի՝ զոր ասէ 'ի Մատթ. * կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ, և երկոքին 'ի խորխորատ անկանին ‖ ։ Արդ զհետ դայ թէ ապաշխարօղն պարտի յիւրմէ կողմանէ փութաջան լինել գտանել զխոստովանահայր լի սիրով, գիտութեամբ, և խոհական իմաստութեամբ. և յանձն առնել զանձն նմա, զի տացէ նմա լոյս, առ 'ի կարօղ լինելոյ առնել զայդ ընտրութիւն. որ է ամենահարկաւոր՝ միանգամայն և դժուարագիւտ ։

### Յաղագս պարտաւորութեան ընդունելոյ զխորհուրդ ապաշխարութեան. և յորժամ։

Հց. Ասա ինձ, միթէ պարտաւո՞ր իցեն քրիստոնեայք ընդունել զխորհուրդն ապաշխարութեան։

Պտ. Քրիստոնեայք յորբունս հասեալք՝ որոց զկնի մկրտութեան մեղուցեալ իցէ մահուչափ մեղօք, 'ի պատուիրանէ Այ և եկեղեցւոյ պարտաւորին ընդունել զայդ խորհուրդ. մինչ զի չէ հնար նոցա դառնալ 'ի վիճակ շնորհաց, եթէ ներգործութեամբ կամ գոնէ առաջադրութեամբ խոստովանելոյ ո՛չ զղջասցին 'ի մեղաց իւրեանց։

Հց. Մեկնեա ինձ, թէ երբ պարտաւորէ Աստուածային պատուիրանն, և երբ եկեղեցւոյ առ 'ի խոստովանիլ։

Պտ. Աստուածային պատուիրանն գլխաւորաբար պարտաւոր առնէ 'ի կէտ և 'ի վտանգ մահու. և երբեմն երբեմն յընթացս կենաց. 'ի հրահ. հա. հՏ. 45։ Ըստ որոյ ժողովն Լատերանու դ. 'ի գլ. Ամենայն այր և կին. յղ. ապաշ. և Բող. սահմանեաց, զի քրիստոնեայք կատարեսցեն զպատուիրանս զայս յամին միանգամ։ Իսկ այս ըստ գովանի սովորութեան՝ զոր եմուծ եկեղեցին. որպէս ասէ ժող. տրիդ. նիստ. 14. գլ. Է. սովոր է կատարիլ 'ի ժամանակի զատկի. յորում ըստ նախասացեալ կանոնի չափահաս քրիստոնեայք անվրէպ պարտաւորեալ են ընդունիլ և զսուրբ խորհուրդն հաղորդութեան. զոր չէ մարթ ընդունիլ ումեք՝ որ ունիցի զմահուչափ մեղս, թէ և իցէ կատարեալ զղջմամբ զղջացեալ, եթէ նախ ո՛չ խոստովանեսցի ներգործութեամբ։

Ըստ այնմ զոր բացայայտեաց նոյն ժողովն. 'ի նիստ. 13. յղ. հաղ. գլ. Է:

Հց. Իսկ արդ՝ եթէ քրիստոնեայ ոք, որ չունիցի զմահուչափ մեղս՝ ոչ պարտաւորի խոստովանիլ 'ի ժամանակի զատկին, և ոչ իսկ 'ի լրանալ տարւոյն. որովհետև պատուիրան եկեղեցւոյ խոստովանիլ յամին միանգամ՝ չէ նոր ինչ հրաման զոր դնէ ժողովն Լատերանու. այլ որոշումն ինչ պահպանութեան ածային պատուիրանին, որ զի ոչ պարտաւորէ՝ բայց խոստովանիլ զմահուչափ մեղս, զհետ գայ, զի եթէ ոք յամի ուղղոյն չիցէ մեղուցեալ մահուչափ մեղօք՝ ոչ պարտաւորի խոստովանիլ և ոչ 'ի ժամանակի զատկին:

Պտս. Սրբ. Թովմաս 'ի 4. դատ. 17. խն. գ. յօդ. 1. ընդ այլ մեծամեծ հեղինակաց յայս միտս է, զի եթէ ոք զամն ուղղոյն չիցէ մեղուցեալ մահուչափ մեղօք, այսու ամենայնիւ 'ի պատուիրանէ եկեղեցւոյ պարտաւորի խոստովանիլ գոնէ յամին միանգամ, և այն 'ի ժամանակի զատկին: Նախ՝ զի ծանիցէ զանձնէ թէ մեղաւոր է: Երկրորդ՝ զի առաւելագոյն յարգութեամբ ընդունիցի զտէր խորհրդն հաղորդութեան 'ի զատկին: Եւ երրորդ՝ զի ծանիցէ ժողովրդապետն զոչխար իւր: Բայց այլք յայս միտս են, թէ 'ի դիպուած այդպիսի՝ շատ է նմա յանդիման լինել հովուին իւրում, և յայտնել զանձնէ՝ թէ չունի ինչ ծանր մեղս. և չէ իսկ պարտական ներգործական խոստովանութեան:

Այլ քանզի գործադրութիւն եկեղեցւոյ պահէ զներհակն՝ ապա պարտ է զհետ գնալ կարծեաց նոյն Թովմայի:

Հց. Որովհետև ամենայն քրիստոնեայք, որք

մեղանչէն մահուչափ մեղք , պարտաւոր են խոստովանիլ 'ի պատուիրանէն այ . վասն որոյ ասեմ ինձ , այս պատուիրան պարտաւորէ՞ զհաւատացեալն՝ որ գործէ զմահուչափ մեղս՝ իսկ և իսկ խոստովանիլ :

պտ . Ըստ սրբոյն Թովմայի . յաւել . խն . 6 . յօդ . 5 . չէ՛ պարտաւոր իսկ և իսկ խոստովանիլ . և ո՛չ իսկ յորժամ դիպօղ ժամ առընթեր ունիցի : Մն զի ածային պատուիրանն խոստովանելոյ զմեղս՝ է պատուիրան ստորասական . որ ո՛չ առնէ պարտաւոր յամենայն ժամանակի , և ոչ իսկ յամենայն դիպօղ ժամու . այլ միայն 'ի կէտ մահու . և անգամ անգամ 'ի կեանս մեր : ՝Նմին իրի ըստ վերագոյնդ ասացելոյ՝ սահմանեաց եկեղեցին կատարել զայն գէթ յամին միանգամ :

Այլ յայսր ամենայնի վերայ պատշաճ է ասէ սբն Պօնավէնթուրա . 'ի 4 . դան . 17 . խն . 2 . թէ խոստովանեսցի վաղ ընդ փոյթ որչափ հնար իցէ . քանզի գրէ . * Նա սակայն ողջամիտ խորհուրդ այս է , զի ամենեքին որ միանգամ 'ի մահուչափ մեղս անկեալ իցեն՝ վաղվաղոյն որչափ ձեռնհաս իցեն խոստովանեսցին . զի ո՛չ երբէք ճշմարտապէս զղջացեալ այն՝ որ ընդ երկար ժամանակ զվէրս մեղացն յանձին պահէ 'ի ծածուկ || . գանձար . լծ . ծող . սիւնհոդ . հտ . 4 . էջ . 10 : Յորում փակին և քահանայք պարտաւորեալք 'ի մատուցանել զսբ պատարագն . զի չէ՛ թոյլ տուեալ նոցա այլազգ պատարագել , բայց եթէ առնելով կանխաւ զխորհրդաւոր խոստովանութիւն , եթէ ունիցին միջոց խոստովանելոյ : Այսպէս հաստատեաց ժողովն տրիդ . 'ի նիստ . 13 . յղ . հաղ . գլ . է . * Միայն թէ չպա-

կասեսցի (ասէ) Նոցա խոստովանահայր ։ Ապա եթէ 'ի ստիպել հարկին քահանայն առանց Նախընթաց խոստովանութէ պատարագեսցէ, որչափ հնար է՝ փութով խոստովանեսցի զկնի ||։ Ոմանք ուսուցին, թէ բանք ժողովոյն չունին զզօրութիւն պատուիրանի, այլ խորհրդոյ։ Իսկ այլք համարեցան թէ զբառդ՝ որչափ հնար է փութով, կամ առժամայն, պարտ է իմանալ զառաջին խոստովանութէ, զոր 'ի դիպօղ ժամանակի, զոր ինքն 'ի դէպ համարի՝ արասցէ քահանայն ։ Այլ այսպիսի դրութիւք դատապարտեցան 'ի վճռոյ Աղեքսանդրի Է. 18. Մարտ. 1666. 'ի Նախ. ԼԸ. ԼԹ ։ Իսկ սակայն ո՛չ բարձան այսու ամենայն վէճք ։ Հասարակօրէն 'ի կարծիս են ուսուցիչք բարոյականի, թէ առ 'ի լնուլ զպատուիրան ժողովոյն՝ շատ է եթէ քահանայն խոստովանեսցի 'ի միջոցի երից աւուրց ։ Հայրն Սիւա 'ի Նախասացեալ լթ. Նախադասութէ ։ Ոիլանդոս կրթ. 33. 'ի Նմին Նախադասութէ ։ Լաւագոյն խորհուրդ՝ ասէ Բենեդիկտոս ԺԴ. 'Ի Բեն. Ժող. Գր. ԺԷ. Գլ. Ը. Հա. 11. է գնալ ընդ միջին շաւիղ 'ի մէջ խիստ և թոյլ կարծեաց ։ Կուսանայ ըստ որիդ". ժողովոյն՝ պարտ է խոստովանիլ գէթ զամիսն միանգամ. և մատչիլ 'ի ս̃բ խորհուրդ հաղորդութէ ։ Սակայն և այս խրատ է ըստ հասարակ կարծեաց վարդապետաց ։ Հուեգինալդ. ԺԸ. 73 ։ Պոնտ. Է. 13. 1 ։

Հջ. Ապա ուրեմն քրիստոնեայն, որ գտանիցի 'ի մահուչափ մեղս, և անցուցանէ զամն առանց խոստովանելոյ, գործէ՞ արդեօք զերկին մահուչափ մեղս. զմի՝ ընդդէմ պատուիրանին ա̃յ, և զմիւս ընդդէմ պատուիրանին եկեղեցւոյ ։

Պտխ. Գործէ զմի միայն մահուչափ մեղս. վն զի յորժամ զուգընթանայ ա̃ծային և մարդկային պատուիրան 'ի պատուիրել զմի և ըղնոյն ինչ 'ի միում առթի՝ գործէ զմի միայն մեղս՝ զանց առնելով զմիով և զմիւսով։ Սոյնպէս և մարդասպանութիւն՝ թէպէտ և արգելեալ է յա̃ծային և 'ի մարդկային օրինաց, բայց որ զայն առնէ՝ գործէ զմի միայն մահուչափ մեղս 'ի սակս նախասացեալ պատճառին։

Հց. Իսկ թէ հաւատացեալ ոք որ զանց արար խոստովան լինել յանցեալ ամի՝ ունելով զմահուչափ մեղս, մինթէ պարտաւորեա̃լ իցէ երկիցս խոստովանիլ 'ի յաջորդ ամին. մի՝ վասն զանցառութե̃ խոստովանութե̃ նախընթաց տարւոյն, և միւս՝ 'ի լնուլ զհրամանն առաջիկայ տարւոյն։

Պտխ. Որ ոք չիցէ խոստովանեալ յանցելում ամի՝ ունելով զմահուչափ մեղս՝ պարտ է խոստովանիլ յառաջիկայ ամին անյապաղ. վասն զի պատուիրանն տարեկան խոստովանութե̃ է բացարձակ, և չէ կապեալ ընդ նախընթաց ամին. որպէս ժամերգութիւն որոշեալ է ասել 'ի սերկեան աւուրս. այնպէս զի ոչ պարտաւորի վիճակաւորն առ վաղիւն ասել երկիցս. բայց սակայն որ զանց արար խոստովան լինել 'ի նախընթաց ամին՝ պարտաւոր է յառաջիկայ ամին խոստովանիլ փութով ըստ կարի. և այս վերստին 'ի ժամանակի զատկին եթէ գտանիցի 'ի մահուչափ մեղս։ Իսկ եթէ զանց արասցէ և զայսու խոստովանութե̃ գործէ զնոր մեղս. ուստի և կրկնակի մեղանչէ. այսինքն՝ 'ի սակս չկատարելոյ զպատուիրան խոստովանութե̃ նախընթաց և առաջիկայ տարւոյն։

Հց. Ապա հաւատացեալն՝ որոյ կացեալ իցէ զամս հինգ կամ վեց առանց խոստովանութ՟ե, միթէ իցէ՞ պարտական յառաջիկայ ամին խոստովանիլ հնգիցս կամ վեցիցս. և դարձեալ նաև 'ի ժամանակի զատկին վ՟ն նոյն տարւոյն:

Պտ. Սստ է թէ 'ի սմին ամի յանձնել նորա ժամ բարեպատեհ՝ անյապաղ խոստովան լիցի միանգամ և եթ. միանգամայն ամբաստան լինելով զանցելոց ամաց՝ յորս զանց արար զխոստովանութ՟ին. և ապա պարտաւորի խոստովանիլ և յառաջիկայ ամին 'ի ժամանակի զատկին: Թո՛ղ զի՝ եթէ խոստովան լիցի 'ի սմին տարւոջ 'ի ժամանակի զատկին, վճար առնէ ամենայն խոստովանութ՟եց, զորովք զանց արար յամն յառաջինս. միանգամայն ազատ լինի 'ի պարտաւորութ՟է զոր ունէր խոստովանիլ յայնմ ամի:

Հց. Ապա և նա՝ որ գտաւ 'ի վտանգի կամ 'ի կէտ մահու, և ոչ եղև խոստովան, թէպէտ և ունէր զդիւրութ՟ի խոստովանելոյ. և պարտաւոր իսկ էր առ այն աստուածային պատուիրանէ, միթէ պարտաւորի՞ խոստովանիլ փութով ըստ կարի յանցանել վտանգին:

Պտ. Գործել գործեաց զմահուչափ մեղս. բայց ոչ պարտաւորի իսկ և իսկ անյապաղ խոստովանիլ. վ՟ն զի յորժամ պատուիրան ինչ պարտ դնէ առնել ինչ ընդ պարագայիւ սահմանեալ ժամանակի, յանցանել ժամանակին թէպէտև մեղանչէ վ՟ն ոչ կատարելոյ զպատուիրանն, սակայն ոչ պարտաւորի կատարել զայն յայլում ժամանակի. զի այնպիսի պատուիրան ոչ պարտաւորէր, բայց եթէ որոշմամբ յայն ինչ սահմանեալ ժամանակի: Օրօրինակ՝ որ յաւուրս

կիւրակէից ոչ լոկ զպատարագ, ոչ պարտաւորի լսել առ վաղիւն. և որ այսօր զանց արար զպատուիրանաւն ծոմապահելոյ՝ ոչ պարտաւորի առ վաղիւն պահելոյ։ Այլ չէ պարտ զնոյն ասել վ̃ն տարեկան խոստովանութ̃ե. քանզի այն պատուիրան է բացարձակ. և չէ մասնաւորեալ ընդ այսմ տարւոյ. այլ զի մի յապաղեսցի կատարումն նոյն պատուիրանի անդր քան զառաջիկայս ամ, վ̃ն որոյ ոչ ամփոփի 'ի պարագայ կամ 'ի թէութ̃ի ժամանակի. որպէս պատուիրանն խոստովանութ̃ե, որ 'ի կէտ կամ 'ի վտանգ մահու։

հց. Եթէ ապաշխարող ոք խոստովանեալ իցէ յայսմ ամի 'ի զատկին միայն զներելի մեղս իւր՝ զոր ունէր. և յառաջ քան զկատարած տարւոյն սահեսցի 'ի մահուչափ մեղս ինչ, միթէ պարտաւո՞ր իցէ միւսանգամ խոստովանիլ. մինչ զի եթէ ոչ խոստովանեսցի՝ նովին իսկ նոր մեղս գործեսցէ։

պտ. Ասեմ այո՝ քանզի տարեկան խոստովանութիւն է պատուիրան եկեղեցւոյ միանգամայն և ա̃ծային. և զի սա պարտաւորէ խոստովանիլ զմեղս մահուչափս, և եկեղեցին սահմանեաց զտարեկան խոստովանութ̃ին, ապա զհետ գայ թէ որ մեղաւ մահուչափ մեղօք յետ զատկական խոստովանութ̃ե՝ որ էր միայն վասն ներելեաց՝ կայ մնայ պարտաւորեալ 'ի պատուիրանէն ա̃յ խոստովանել և զմահուչափ մեղսն՝ յառաջ քան զլրանալ տարւոյն. քանզի առաջին խոստովանութ̃ին լնու միայն զպատուիրանն եկեղեցւոյ, մնալով պարտաւոր լնուլ և զա̃ծային պատուիրանն. որոյ վ̃ն մեղանչէ մահուչափ մեղօք նա՝ որ անցուցանէ զամն ողջոյն

առանց խոստովանութեան ։

Հց. Որովհետև ժողովն Լատերանու 'ի կանխասաց կանոնի պարտաւոր առնէ տարեկան խոստովանութե զամենայն հաւատացեալս. * յետ ժամանելոյ յամս ընտրութե‖, ասա ինձ, երբ պարտաւորի հաւատացեալն 'ի գործ դնել զայն պատուիրան ըստ տուեալ կանոնին ։

Պտ. Պարտաւորութիւս այս 'ի վերայ գայ, յորժամ հաւատացեալն սկսանի զկատարեալ կիրառութի բանի. և գիտէ ընտրութի առնել 'ի մէջ չարի և բարւոյ. որ առ առաւելն հանդիպի զեօթնամեայ հասակաւ. եթէ չարութին երբեմն ոչ լինուցու զպակասութի հասակին. Գւ. յղ. փոքրէն. անչափահասից Է. վասն զի յայնմ հասակի ընդունակ է մարդն մահուչափ մեղանչել. Գւ. Սանչուանոս յղ. յանցանաց փոխայից. հրահանգ. հա. համար. 44 ։ Բենեդիկտոս ԺԴ. հտ. 2. տետր. 28. որ սկսանի. Յամսեանն յետինում. յօդ. 32 ։ Սուտի ոչ է ընդունելի կարծիք Նաթթայի և Պուռաթայ որք խնդրեն զհասակ երկոտասան ամաց. մանաւանդ թէ՝ բազում անգամ դէպ լինի ունել ոմանց զբանաւորութի յառաջ քան զեօթն ամս. և գիտել որոշել 'ի մէջ չարի և բարւոյ ։

Հց. 'Ի նախայիշատակեալ կանոնի սահմանեալ է, թէ տարեկան խոստովանութիւն պարտի լինել սեփական քահանայի. արդ՝ զո՞ պարտ է իմանալ սեփական քահանայ ։

Պտ. Նախ զառաջինն պարտ է իմանալ զյատուկ եպիսկոպոսն և զյատուկ ժողովրդապետն. ապա և զնոսա որք 'ի թեմական եպիսկոպոսէն ընկալեալ են զյանձնեալ իշխանութի խոստովանութե. և թէպէտ կանոնաւոր կրօնաւ-

ւորք ունին զառաքելական արտօնութիւն լսել զխոստովանութիւն . սակայն այսու ամենայնիւ ոչ կարեն վաւերաբար 'ի գործ դնել զայդ իշխանութիւն՝ մինչեւ իցեն ընկալեալ զհաւանութիւն 'ի Թեմական եպիսկոպոսէն ըստ հրամանի տրիդենտեան ժող . 'ի նիստ . 23 . յղ . վերանորոգեալ կրօնաւորաց . գլ . ԺԵ : Սոյն այսորիկ հաւատացեալք , որք խոստովանին 'ի զատկական ժամանակի ըստ ասացելոյս ում եւ իցէ 'ի յիշատակեալ անձանց հաւանելոց՝ ընուն զպատուիրանն եկեղեցւոյ խոստովանելոյ միանգամ 'ի տարւոջ սեփական քահանայի : Իսկ այս հաւանութիւն այնչափ հարկաւոր է 'ի կրօնաւորս , մինչ զի եթէ երբէք եպիսկոպոսն անիրաւութեամբ անգամ զլացցի կրօնաւորի ումեք՝ սա ոչ վաւերաբար եւ ոչ օրինաւորապէս կարող է լսել զխոստովանութիւն . ուստի եթէ հաւատացեալք խոստովանեսցին այնպիսումն , ոչ լծարեն եկեղեցական պատուիրանին խոստովան լինելոյ միանգամ 'ի տարին սեփական քահանայի . որպէս յայտ է 'ի դատապարտելոյ՝ Աղեք . Է . զնախադասութիւն ԺԴ . * Նու զպատուիրանն տարեկան խոստովանութեան , որ խոստովան լինի կրօնաւորին այնմիկ , որոյ յանդիման եղեալ եպիսկոպոսին՝ յանիրաւի մերժեալ իցէ 'ի նմանէ || :

Աստանօր արժան է 'ի միտ առնուլ , զի Աբբայ ոք , կամ մեծաւոր կրօնաւորաց , ոչ կարէ արձակել զհպատակ կրօնաւորս իւր 'ի մեղաց հարկանելոյ զկղերիկոս ոք աշխարհիկ . ըստ որում բացայայտ պատասխանի առնէ սբ ժողովն Սիւնհոդոսաց . 'ի վերայ ժողովոյն Սեդիւն . Է . Հանդէր . Վճռ . 1719 . առ փարանգոյն Է :

Հր. Զի՞նչ հաստատի տիրապէս այդ հաւանութ՟ի եպիսկոպոսին՝ որ պահանջի վասն կրօնաւոր և աշխարհական քահանայից առ 'ի լսել զխոստովանութ՟իւն վաւերաբար:

Պտ. Հաստատի 'ի ներգործութ՟ն ճանաչման, որով եպիսկոպոսն դատէ, թէ այն ինչ քահանայ ընդունակ է լսել զխոստովանութ՟ի. և 'ի ներգործութ՟ն կամաց, որով շնորհէ նմա զիշխանութ՟ի և զիրաւաբանութ՟ի առ 'ի կարող լինել լսել զխոստովանութ՟ի, որպէս բացածանոյց Ժողովն Տրիւնհոդոսայ. 'ի Գլ. ԺԴ. 'ի Նիստ. 23. ՅՂ. Նորոգելոց.

Հր. Եթէ հաւատացեալ ոք խոստովանեսցի 'ի զատկական ժամանակի անվաւեր խոստովանութ՟ե յիւրմէ կողմանէ. զորօրինակ՝ առանց ցաւոց զղջման, յառաջադրութ՟ե, կամ առանց ամբողջութ՟ե խոստովանութ՟ե ևն. վճարեսցէ՞ արդեօք զատկական պատուիրանն:

Պտ. Ո՛չ վճարէ. վասն զի դատապարտեալ է յԱղէքսանդրէ Է. նախադասութ՟իս այս ԺԴ. * Որ առնէ զխոստովանութ՟ի կամաւորապէս նանիր, լնու զպատուիրան եկեղեցւոյ ||: Պատճառն է, զի խոստովանութ՟իւն ոչինչ և անվաւեր՝ չէ իրօք ճշմարիտ խոստովանութ՟ի. ապա ո՛չ կարէ վճար լինել նովաւ պատուիրանին եկեղեցւոյ. որ 'ի հաւատացելոց պահանջէ զիսկական և զանկեղծ խոստովանութ՟ի: Մանաւանդ զի՝ որ առնէ զխոստովանութ՟ի այնպիսի կամովին նանիր՝ կրկնակի մեղանչէ մահուչափ մեղօք. մի՝ մեղօք զանցառութ՟ե ընդդէմ հրամանին եկեղեցւոյ տարեկան խոստովանութ՟ե: Երկրորդ՝ մեղօք յանձնառութ՟ե և սրբապղծութ՟ե առնելով զխոստովանութ՟իւն կամաւո-

բաւէս ոչինչ ։ Ապա եթէ ոք յակամայ կամս առնիցէ խոստովանութիւն ոչինչ՝ 'ի յիշատակեալ ժամանակին ․ զորօրինակ՝ կարծելով զանձնէ ունել զճշմարիտ զզղջումն գերբնական, զոր ոչն ունի ․ կամ 'ի սակս այլ ինչ ակամայ պակասութեան, մեղանչել ոչ մեղանչէ մեղօք սրբապղծութեան, բայց և ոչ իսկ լնու զպատուիրանն եկեղեցւոյ ․ նմին իրի յորժամ յանձին զգայ զպակասութիւն՝ պարտի առնել խոստովանութիւն նոր, ճշմարիտ, և բարի, 'ի լնուլ զայն պատուիրան ։

հր․ Յի՞նչ պատիժ անկանի հաւատացեալն՝ որ ոչ լնու զպատուիրանն տարեկան խոստովանութեան ։

պտ․ 'Ի կենդանութեան անդ իւրում անկանի ընդ պատժով չկարելոյ մտանել յեկեղեցին ․ ոչ լսել զա͞ծային պաշտամունս ․ և ոչ տեսանել զպատարագ ։ Իսկ 'ի մահուն զրկեսցի և յեկեղեցական թաղմանէ ։ Որպէս սահմանեալ կայ 'ի Նախայիշատակեալ Լատերանեան կանոնի ․ բայց սակայն ասացեալ պատիժքդ չեն 'ի կարգի տուեալ, (այլ՝ տալի) վճռոյ ․ վ͞ն որոյ չանկանին ընդ պատժովքդ, եթէ 'ի թեմական եպիսկոպոսէ ոչ իցեն հրատարակեալ ։

---

### Յաղագս հեռաւոր նիւթոյ խորհրդոյ ապաշխարութեան ։

հր․ Ըստ կարգի բանից ծիսարանին ․ որ ասէ ․ * Արդ՝ որովհետև 'ի բաղկացուցանել զայն՝ երեք ինչ զուգընթաց լինին, նիւթ, ձև, և

պաշտօնէայ. հեռաւոր նիւթ նորա են մեղք||. ա՞ղէ ասա զի՞նչ և քանիպատի՞կ իցէ հեռաւոր նիւթ խորհրդոյ ապաշխարութեան:

պտ. Միայն մեղք գործեալք զկնի մկրտութեան են հեռաւոր նիւթ ապաշխարութեան. և այս երեքպատիկ գտանի: Առաջինն է հարկաւոր և բաւական. այն են մեղք մահուչափք հաւաստիք՝ գործեալք զկնի մկրտութեան և վերջին խոստովանութեան, և ոչ երբէք բարւոք խոստովանեալք: Հարկաւոր ասի. քանզի զմահուչափ մեղս պարտաւորիմք խոստովան լինել. մինչ զի առանց խոստովանելոյ կամ իրօք և կամ ուխտիւ՝ ոչ կարեն թողեալ լինել մեզ: Երկրորդն՝ կոչի հարկաւոր և ոչ բաւական. և են երկբայական մահուչափք. զայսոսիկ ևս պարտ է մեզ խոստովանիլ. բայց արձակումն ոչ կարէ անկանիլ սոսկ 'ի վերայ սոցա առանձինն, մինչև ոչ յաւելցի 'ի սոսա ներգործական մեղք ինչ հաւաստի. թէ և կանխաւ խոստովանեալ յանցեալ կեանս. կամ ներելի ինչ մեղք հաւաստի՝ յետ վերջին խոստովանութեան գործեալ. որոյ վա՞ կոչի սա նիւթ հարկաւոր, այլ ոչ բաւական: Իսկ երրորդն՝ ասի բաւական և ոչ հարկաւոր. այն են մեղք ներելիք, և մահուչափք յայլում նուագի բարւոք խոստովանեալք. վա՞ զի գովելի է զներելիս խոստովանիլ. և զնոյն պարտ է ասել զմահուչափ մեղաց, ես և զներելեաց անգամ յայլում նուագի խոստովանելոց. միայն թէ չեմք առ այդ պարտաւորեալ ըստ ասելոյ ժողովոյն. 'Տնիտ. 15. յղ. խոր. ապաշ. գլ. ե. Նմին իրի կոչի սա նիւթ բաւական և ոչ հարկաւոր:

հշ. Ասա ինձ. միթէ պա՞րտ իցէ մեզ խոստովան լինել զմեղս մահուչափս, զորս յետ զգու-

շաւոր քննութեան՝ առանց ինչ մեր յանցանաց մոռացեալ իցեմք. որպէս և զնոսա՝ զորս միայն բնական կամ բարոյական բանաւոր ինչ պատճառի՝ (զորոց ասասցուք 'ի մօտոյ,) առանց մեղաց զանց արարեալ իցէ մեր խոստովանիլ:

պխ. Պատասխանեմ այո՝ յորժամ յուշ ածեմք. կամ երբ դադարին բնական կամ բարոյական պատճառք՝ որոց սակս զանց արարաք 'ի խոստովանիլ. որովհետև ընդդէմ դատապարտեալ է յԱղեքսանդրէ Է. 'ի ժա նախադասութեանս յայսմիկ: * Զ'ի խոստովանութեան զանց արարեալ զմեղս, կամ զմոռացեալս յաղագս առաջիկայ վտանգի կենաց կամ այլոյ պատճառի, ոչ պարտաւորիմք բացատրել 'ի յաջորդ խոստովանութեան ||: Այսքան առ այս: Ժամ է արդ՝ խօսիլ զմերձաւոր նիւթոյն, և զմասանց նորա:

---

## Յաղագս մերձաւոր նիւթոյ ապաշխարութեան. և նախ՝ յաղագս զղջման և յառաջադրութեան:

հց. 'Ի վերայ բերէ ծխարանն. * Իսկ մերձաւոր նիւթ՝ են ներգործութիւնք ապաշխարողին. զղջումն, խոստովանութիւն, և վճարումն ||: Արդ՝ մեկնեա ինձ, զի՞նչ իցէ զղջումն, և քանիպատիկ: Այլ որ իցէ հարկաւոր կամ բաւական առ խոստովանութիւն. և որն չիցէ հարկաւոր առ ասացեալդ գործ:

պխ. Զղջումն ընդհանրապէս մտածեալ՝ կրկին ներգործութիւս 'ի մէջ բերէ: Առաջինն է, որով ցաւիմք 'ի վերայ մեղաց գործեցելոց. և երկրորդն՝ որով յառաջադրեմք ոչ երբէք

այլ գործել զայնոսիկ. ժող. տրէդ. 'ի նիստ. 14. յղ. խոր. ապաշ. գլ. Է: Հրահ. հա. անդ. կնր. 13. ուստի սահմանի անդ Տրիդենտեան բանիւ. * Զղջումն է ցաւ սրտի, և զզուումն 'ի վերայ մեղաց գործելոց՝ հանդերձ առաջադրութեամբ ոչ ևս մեղանչելոյ ||:

Երկոքին իսկ ներգործութիւնքդ այդոքիկ պարտին լինել 'ի վեր քան զամ. այս է՝ առաւել զիղջ լինիցի սրտի մերում յաղագս մեղաց, քան յաղագս որ և է այլոյ չարի. և յառաջադրեսցուք փախչել առաւել 'ի մեղաց՝ քան յամ չարէ: Եւ այս ներգործութիւնք պարտին ասեմ լինել 'ի վեր քան զամ, ոչ ըստ զգալութե, այլ ըստ յարգի. այսինքն՝ այնպէս տրամադրեալ պարտի գտանիլ ապաշխարողն, զի թէ պէտք լինիցի նմա ընտրել կամ զայրացուցանել զամ՝ և կամ ըզմահ ճաշակել, յաւէտ ընտրեսցէ զմահ՝ քան յամ մեղանչել. բայց չէ հարկ այդմ լինել առաւել ըստ զգալութե, որպէս թէ ապաշխարողն յանձին կրեսցէ զմեծագոյն ցաւ զգալի վասն մեղաց՝ քան զոր ունէր զգալ 'ի կորուստ կենաց անձին իւրոյ. կամ 'ի կորուստ անձկալի և սիրելի ազգակցին իւրոյ: Հրահ. հառմ. 28:

Եւ ևս՝ որպէս զի զղջումնդ եղիցի մերձաւոր նիւթ այսր ապաշխարութե՝ պարտ է զի լինիցի զգալի. որովհետև խորհուրդն է նշան ինչ զգալի՝ նկատմամբ նիւթոյ և ձևոյ: Զգալի ասի՝ (թէպէտ և հաստատեալ է 'ի ներգործութե կամաց) վն զի պարտի ունել ընդ իւր յորակից և գործ ինչ արտաքին 'ի նշան ներքին ապաշխարութե. որպիսի են հառաչանք, արտասուք, բաղխումն կրծոց, ևն:

Նմանապէս այդ զղջումն նկատեալ առ մա-

հուչափ մեղս՝ պարտի լինել ընդհանրական. հըրահ. հատուծ. 31։ Եւ յայնժամ լինի ընդհան-րական՝ յորժամ տեսական շարժառիթն զղջման իցէ ընդհանրական. այսինքն՝ փախեսցէ ընդ-իւրև զոր և իցէ մահուչափ մեղս. զորօրինակ՝ ցաւելով 'ի վ՟ր նոցա. վ՟ն զի նովիմբք արհա-մարհեաց զա՟ծ զգերագոյն տէր իւր. կամ զի նովիմբք արժանի գտաւ գեհենի, և զրկեցաւ յարքայութ՟է. որ ձգի անխտիր առ ա՟մ մա-հուչափ մեղս։

Նոյնօրինակ այդ ցաւ պարտի լինել գերբնա-կան. և լինի յայնժամ՝ յորժամ կանոնաւորի 'ի հաւատոյ. զորօրինակ՝ ցաւելով 'ի վ՟ր մեղաց. զի նոքօք բարկացոյց զա՟ծ, զայն՝ որ գերագոյն բարին է. նմ՟ն իրի և չէր արժան դառնացու-ցանել զնա. և եւ՝ զի մեղքն է ծայրագոյն չար, զոր պատժէ ա՟ծ յաւիտենական պատժովք դժոխոց. և մշտնջենաւոր զրկմամբ 'ի փառաց. ոյր աղագաւ պարտ է և մեզ մեծապէս ցաւիլ՝ զի գործեցաք զայն չարիս։ Եւ ահա զայս ա՟մ ուսուցանէ մեզ հաւատն գերբնական լուսով. որոյ վ՟ն իրաւամբք դատապարտեցաւ յԻննովկ. ժ՟ա. Նախադ. ծէ. այն թէ * հաւանական է՝ թէ բաւական իցէ զղջումն բնական, միայն թէ հա-մեստ ‖։

Վ՟ն զի անձն մրտեալ՝ ունի զբնական լոյս բանի, և զգերբնական լոյս հաւատոյ։ 'Ի ձեռն առաջնոյն ճանաչէ թէ մեղքն է գործ ինչ ան-վայել բանական բնութ՟ե և ուղիղ բանի։

Իսկ 'ի ձեռն երկրորդին՝ հաստ լինի թէ մեղքն է գործ ինչ՝ զոր մեծապէս ատէ ա՟ծ. և պատժէ իսկ տանջանօք գեհենոյն, և զրկմամբ 'ի փառաց արքայութ՟ե։ Արդ՝ առ խոստովա-

նութի՟ չէ բաւական առաջին զղջումն. զի է բնական. այլ հարկաւոր է զի լինիցի գերբնական, այսինքն՝ կանոնաւորեալ 'ի հաւատոյ:

Ու խոստովանութի՟ չէ՛ բաւական զղջումն առաջին՝ որ է բնական. վ՟ զի այդպիսի ապաշխարութի՟ բերէ զնմանութի՟ ապաշխարութե՟ Անտիոքոսի, որ աշխարհէր զմեղս՝ ո՛չ զի նովին արհամարհութի՟ եղև այ՟, այլ վ՟ չարաչար ցաւոց իւրոց՝ որովք տանջէր. վ՟ այսորիկ և ո՛չ եգիտ ողորմութի՟ 'ի այ՟:

Աստանօր 'ի միտ առ, թէ չէ՛ պարտ խառնել զշարժառիթն ապաշխարութե՟ ը՟ առթի՝ որով շարժի ոք յապաշխարութի՟: Ո՟ զի բազումք ընկճեալ յերեսաց չարեաց և 'ի պատժոց ժամանակաւորաց, որոճեն մտօք զապիրատ գընացս իւրեանց, և գերբնական նպաստաւորիչ շնորհօքն այ՟ ստուգապէս դարձին 'ի չարեացն՝ զոր գործեցին. որպէս եղև Նինուէացւոց: Ոմանք 'ի վաղեմի դպրոցականաց տային բնական զղջմանդ այդմիկ զզօրութի՟ հաշտեցուցանելոյ զմարդ ընդ այ՟: Այլ այդ կարծիք դատապարտեալ է. որպէս յայտ է 'ի ծէ՟. նախադասութե՟:

Իսկ և՛ս՝ որպէս զի զղջումն լինիցի մերձաւոր նիւթ ապաշխարութե՟՝ պարտի լինել կից ընդ այլ մասունս խորհրդոյն. ուստի եթէ ապաշխարող ոք յետ առնելոյ զներգործութի՟ զղջման, 'ի խոստովանութե՟ անդ իւրում դիցէ 'ի մտի կամօք պահել զմահուչափ մեղս ինչ. այլ յետ ազդ առնելոյ նմա խոստովանահօրն խոստովանեսցի զայն՝ պարտի նորոգ զղջանալ. քանզի զղջումն այն առաջին՝ որ ընդհատեցաւ սրբապղծութե՟, 'ի լռել անդ կամովին զմեղս ինչ

մահուչափ, ոչ ևս է մերձաւոր նիւթ նոյն խոստովանութե. վասն որոյ պարտ է նորոգել ըղղջումն։

'Ի վախճան ամի՝ զղջումն բաժանի 'ի կատարեալ և յանկատար. ծող. գրէգ. անդ։ Կատարեալ զղջումն ծնանի 'ի շարժառիթէն՝ զի մահուչափ մեղքն է արհամարհութի այ, որ է ծայրագոյնս բարի. նմին իրի ոչ է մեզ օրէն արհամարհել զնա, այլ յաւէտ սիրել, և հպատակ կալ հրամանաց նորա։ Հրահ. հա. անդրանոր. կՏ. 27։ Այս զղջումն իսկ և իսկ արդարացուցանէ զապաշխարողն՝ եթէ կից ունիցի ընդ իւր զյառաջադրութի խոստովան լինելոյ 'ի դէպ ժամանակի. որպէս ուսուցանէ ժողովն 'ի նշանակեալ տեղիդ։ Իսկ անկատար զղջումն, որ և կոչի զղջումն բերկման՝ յղացեալ լինի 'ի շարժառիթէ զազրութե մեղաց առ յայ յայտնեցելոյ, կամ յերկիւղէ տանջանաց գեհենոյն, զոր պատրաստեալ է այծ՝ որոց յանցանեն մահուչափ մեղօք։ Որ թէպէտև ինքնին ոչ արդարացուցանէ զմեղաւորն, սակայն տրամադրէ առ արդարացուցումն. և առ ընդունել զայն խորհրդով ապաշխարութե. ըստ բանի ժողովոյն 'ի նախայիշատակեալ տեղին. և 'ի հրահ. հառաջն. 'ի Ռէս. 37։

կթ. Եթէ ապաշխարող ոք զղջասցի 'ի մեղաց իւրոց՝ վն այսորիկ և եթ, իբր զի են ընդդէմ լուսոյ բանին, և վասն տգեղութե նոցա, արդեօք վաւեր լինէր արձակումն, և միթէ մեղիցէ ապաշխարողն։

Լ. Եթէ դիցէ 'ի մտի անյաղթելի տգիտութբ՝ թէ զայդօրինակ զղջումն իցէ բարի՝ ոչ մեղանչէ. զի հակառակն դատապարտեալ է

Աղեքսանդրէ Ը. 'ի նախադասութեան Թ. որ ունի այսպէս. * Անշուշտ մեղանչէ՝ որ ատեայ զմեղս սոսկապէս վասն յոռութեան և անպատեհութեան նոցին, կամ օտար գոլոյն 'ի բանական բնութենէ, առանց երբէք հայեցուածոյ առ դառնացուցանել նոցին զԱծ ||: Այլ յայսր տեղի վերն՝ արձակութիւն լինէր ոչինչ. զի որովհետև այդ զղջումն չէ գերբնական, և ոչ կանոնաւորեալ 'ի հաւատոյ, ոչ լինէր մերձաւոր նիւթ խորհրդոյ ապաշխարութեան։

Հց. Եթէ այլ ոք զղջասցի 'ի վերայ մեղաց իւրոց առ ահին դժոխոց, բայց այնու օգտիւ՝ զի թէ չէր դժոխք՝ 'ի գործ արկանէր զմեղանչելն, և ոչ իսկ զղջանայր ընդ այն. մեղանչէր արդեօք, և լինէր անվաւեր խոստովանութիւն նր։

Պտ. Զղջումն այդ թէ և իցէ կանոնաւորեալ 'ի լուսոյ հաւատոյ՝ տակաւին չէ բարի, և ոչ գերբնական. քանզի ոչ արտաքսէ զկամս մեղանչելոյ, որպէս պահանջէ ժողովն. 'ի գլ. Ե. որ և կոչէ զղջումն գեհենական ծառայական։ Ամին իրի որպէս զի զղջումն իցէ բաւական առ խոստովանութիւն՝ պարտի ունել Ը իր յարակից և զյառաջադրութիւն ոչ ևս մեղանչելոյ. վասն որոյ ապաշխարող այդպիսի մեղս գործէր, և զխոստովանութիւն առնէր անվաւեր։

Իսկ եթէ ասիցէ. Ինչպէս է իմ փիլիսոփայութիւն՝ թընչը ճանաչել ինչ պահանջն իմ դատարան 'ի մեղս՝ երբ չեմ ամենակալին ոչ սանձահարեցէ զիս երկնաւոր գեհենոյն. յայնժամ ոչինչ մեղանչէ։ Որպէս և ոչ իսկ մեղանչէ՝ յորժամ ասիցէ. Ոչ կամիմ մեղանչել՝ զի գոյ գեհեան. կամ զի մի պատժեցայց։ Նա զի հեռացուցանէ յանձնէ զմեղս՝ վասն բանաւոր ինչ պատճառի։ Սպաքէն և Աստուծոյ սիրոյ առանց ըզ-

տանջանս դժոխոց առ 'ի չմեղանչել մարդոյ ։
Իսկ թէ պարտ իցէ զղջման 'ի ներքս փակել զսէրն ա̃յ՝ գէթ զսկզբնաւորականն՝ առընդունելոյ զշնորհ արդարացուցման. կամ թէ չիցէ հարկ 'ի ներքս փակել, ցարդ ևս չէ ինչ սահմանեալ եկեղեցին ։ Իսկ յերևելի ա̃ծաբանից բազումք ստորասեն, այլք բացասեն ։ Բայց եպիսկոպոսունք պարտին ազդ առնել խոստովանահարց, զի յորդոր լիցին ապաշխարողաց առնել զճշմարիտ և զկատարեալ զղջումն ։ 'Ի սոյն միտս են Սուարէզ, Գամաքիոս, Կոմիտոլոս ։ Այսպէս համարեցաւ և ծիսարանն Հռովմայ ։ Ո՛չ այլազգ խօսի և ծիսարանն Արգենտինեան արարեալ 'ի կարդինալ Սօհանայ ։ Սոյնպէս և բենեդիկտոս ԺԴ. 'ի ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՆ ԳԻՐՔ Ե. ԳԼՈՒԽ ԺԵ ։

---

## Յաղագս ամբողջութե̃, և այլոց հանգամանաց խոստովանութեան ։

հդ. Մեկնեա՛ ինձ զերկրորդ մասն մերձաւոր նիւթոյ խորհրդոյ ապաշխարութե̃, այսինքն՝ զխոստովանութիւն. թէ զի՞նչ իցէ խորհրդական խոստովանութի̃ն. և քանի՞ թէութի̃ս ունիցի առ 'ի լինել մերձաւոր նիւթ այսր խորհրդոյ ։

հե. Խորհրդական խոստովանութի̃ն ը̄ բանի հռովմէական հրահանգին. Իբ. 38. է կամաւոր ամբաստանութի̃՝ զոր առնէ քրիստոնեայն՝ ճանաչելով զանձն մեղաւոր՝ վ̄ մեղացն գործեցելոց զկնի մկրտութե̃, կամ յետ վերջին

խոստովանութ՟ե, առաջի պաշտօնէին յսի քսի՝ առ 'ի ընդունել 'ի նմանէ զարձակումն նոցին ։ Այլ առ բարւոք առնելոյ զայդ խոստովանութ՟ի՝ խնդրին բազում թէութ՟իք՝ որք պարունակին յայս ոտանաւոր ·

* Ընկեղծ, խոնարհ՝ լեր խոստովան,
հաւատարիմ՝ յըստակ 'ի բան ‖ ։

զոր մեկնաբանէ և ընծայէ մեզ Կարոլոս յազգարարութ՟ե իւրում առ խոստովանահարս ։ Իսկ մեք վերածեմք զայն 'ի չորս կարեւոր թէութ՟իս · որպէս զի ոչ միայն վաւեր լիցի խոստովանութ՟ին, այլեւ զի իցէ օրինաւոր և առանց մեղաց ։ Այս է՝ զի լինիցի · ա · ամբողջ ։ բ · ներկայ ։ գ · յայտնաւոր ։ դ · հլու ։ Զառաջինն՝ հարկաւոր է, զի իցէ ամբողջ · այս է՝ զա՟մ մեղս մահուչափս զգործեալս զկնի մկրտութ՟ե, կամ յետին խոստովանութ՟ե ը՟ս թուոյն, ը՟ս տեսակին, և ը՟ս պարագայից բացատրել հարկաւ · որպէս ասացի 'ի մօտոյ ։ Յորմէ յառաջ գայ պարտաւորութ՟ի ինչ զգուշաւորն քննութ՟ե յառաջ քան զխոստովանութ՟ին · որպէս ուսուցանէ ժողովն 'ի նախասացեալ տեղին · գլ · Է ։ Ուստի եթէ ապաշխարող ոք առանց ինչ այդպիսի քննութ՟ե խոստովանեսցի ամբողջ զա՟մ մեղս իւր մահուչափս ը՟ս թուոյն, ը՟ս տեսակին, և ըստ պարագայիցն, տակաւին մեղանչէ · և անվաւեր և ապօրինաւոր առնէ զխոստովանութ՟ին · վ՟ն զի դնէ զինքն 'ի վտանգի չառնելոյ զխոստովանութ՟ին ամբողջ · թէպէտեւ ը՟ս դիպուածոյ ասասցէ զա՟մ մեղս իւր ։

Իսկ ամբողջութ՟ի խոստովանութ՟ե է կրկին · է որ տեսական, և է որ նիւթական ։ Նիւթականն է՝ յորժամ ապաշխարողն ամբաստան լի-

նի զա՟մ մեղաց իւրոց ը՟ս թուոյն, ը՟ս տեսակին, և ը՟ս պարագայից: Իսկ տեսականն է՝ յորժամ զկնի զգուշաւոր քննութե՟ ամբաստան լինի զա՟մ մեղս իւր մահուչափս՝ զորս կարէ՝ և պարտի ասել առանց բնական կամ բարոյական արգելանաց՝ ճշմարիտ և ընդհանրական զղջմամբ և առաջադրութ՟բ, և յօժարական դիտաւորութ՟բ յիւրում ժամանակի ամբաստան լինելոյ և զայնոցիկ՝ զորս այժմ չկարէ, կամ չպարտի ասել:

Խոստովանութի՟ն նիւթապէս ամբողջ՝ մարթի անվաւեր լինել առ պակասութե՟ քննութե՟, կամ զղջման, և կամ առաջադրութե՟. այլ ո՛չ խոստովանութի՟ն ամբողջ տեսականապէս: Վ՟ն զի 'ի թէութ՟ն յայնոսիկ փակին այն ա՟մ՝ որք խնդրին առ բարւոք խոստովանութի՟ն: Բնական արգելք՝ ազատ կացուցին 'ի նիւթական ամբողջութ՟է՝ մարթի լինել, եթէ 'ի խոստովանութե՟ անդ պակասեսցի ձայն ապաշխարողին յանակնկալ արկածից. կամ յետ զգուշաւոր քննութե՟՝ ո՛չ եկեսցէ յուշն մտաց մեղք ինչ մահուչափ: Բարոյական արգելումն հանդիպի, եթէ ապաշխարողն հիմնաբար և խոհեմութ՟բ խիթայցէ՝ թէ գուցէ խոստովանահայր նորա ո՛չ պահիցէ 'ի ծածուկ զմեղս ինչ. և կամ 'ի պատճառս խոստովան լինելոյ նմա զյանցանս ինչ՝ խոհեմութ՟բ խիթայցէ, թէ խոստովանահայրն հրապուրեսցէ զնա 'ի մեղս. ևն: Սակայն ո՛չ ինչ արգելումն բարոյական համարի երկիւղն վատահամբաւութե՟՝ յոր անկանի ապաշխարողն առաջի խոստովանահօր իւրոյ վ՟ն մեղացն գործեցելոց. վասն զի խոստովանութի՟ն սահմանեցաւ 'ի յ՟սէ ք՟սէ՝ զի յայտնի արասցուք մեք զմեզ մեղաւորս լինել. և այն՝ նաև ծանր

ծանր յանցանօք առաջի իւրոյ պաշտօնէի , առ-ընդունելոյ զարձակումն 'ի նմանէ ։ Որպէս ոչ լինի բարոյական արգելումն՝ ազատ կացու-ցիչ յամբողջութէ՝ երկիւղն վատահամբաւ առ-նելոյ զմեղսակիցն ։

Այլ վ՛ պարտ է 'ի միտ առնուլ նախ՝ զվար-դապետութի՛ սրբյն Թովմայի . պերառն . ծէ . խնդ . ը ․
* Եթէ ապաշխարողն չկարիցէ բացատրել զը-տեսակ մեղացն՝ առանց յայտնելոյ զմեղսակից իւր , զօրօրինակ՝ եթէ ընդ քեռ իւրում ան-կաւ , յայնժամ հարկ է առ'ի բացատրելոյ զմե-ղացն տեսակ՝ բացատրել զմեղսակիցն ։ Բայց եթէ հնար ինչ իցէ , պարտի խնդրել զայնպի-սի խոստովանահայր , որ բնաւին անգիտանայ-ցէ զանձն քեռ իւրոյ || ։

Զսոյն զայս ուսուցանեն սրբն Ալփոնսոս . գիրք . գ . յօդ . 24 ։ Սբն Բօնավէնթուրա . 'ի դ . ձմռոց . ղան . իտ . խ . գ . հ . ա . յօդ . 1 ։ Սբն Ան-տոնինոս . գ . հ . պերող . ծզ . գլ . ծբ . յօդ . 2 ։ Փագնանոս . 'ի գլ . Բ . յղ . ապաշխ . և Բող . ճհ . 28 . ևա ։ Յոր յաւելուլ արժան է և զկար-գաւորութիւն տրիդենտեան ժողովոյն . նիստ . 14 . գլ . է . կան . 7 ։ Բայց եթէ 'ի տեսակարար յայտարարութէ մեղսակցին՝ մարթասցի գալ համանականաբար վնաս մեծ հոգւոյ կամ մարմ-նոյ , կամ համբաւոյ , եթէ ապաշխարողին , և եթէ խոստովանահօրն , կամ նմին իսկ մեղսակ-ցին , և կամ այլոց , յայնպիսում դիպուածի պար-տի ապաշխարողն գուն գործել խոստովանիլ այլում , ուր չգուցէ այնպիսի վտանգ ։ Իսկ եթէ անկարասցի ապաշխարողն զայդ առնել՝ պարտի լռել զտեսակարար պարագայն մեղսակ-ցին՝ հանդերձ յառաջադրութ̃ խոստովանելոյ

զկնի 'ի դէպ ժամու առանց սպանանելոյ անձին նորա: Որպէս ուսուցանէ նա ինքն նոյն Թով-մաս. 'ի Բ. Հձառյ. ղան. 17. խնդ. Գ. յօդ. 3. հց. Բ. առ. Է:

Երկրորդ՝ արժանէ 'ի միտ առնուլ զդատա-պարտութիւն արարեալ յայժմու Հայրապետէս մերմէ՝ ընդդէմ սովորութեան խոստովանահարց ոմանց. որոց 'ի գտանելն զապաշխարօղ ոք՝ որ ունիցի զմեղսակից, ոչ կամին տալ նմա զարձա-կումն, եթէ չյայտնէ նոցա զանուն և զտեղի բնակութեան մեղսակցին, ընդ պատրուակաւ խը-նամ տանելոյ ուղղութեան նորա, կամ վն այլոյ համեստ փախճանի: Գործ այդպիսի դատա-պարտեալ է իբր գայթակղական, վնասակար, և անիրաւօղ՝ ընդդէմ համբաւոյ ընկերին՝ և խորհրդոյ ապաշխարութեան, և սատար 'ի քակ-տումն կնքոյ, միանգամայն և խորշեցուցիչ 'ի կիրառութենէ խորհրդոյս, 'ի տնէ մերմէ 'ի ժդ. Բենեդիկտոսէ. 'ի կոնդակն՝ որոյ սկիզբն է. Ուբի պրիմում. գրեալ 'ի 2. յունիսի. 1746. վն թագաւորութեան Փորթուգալու. և ապա տարա-ծեալ և հրատարակեալ 'ի պէտս ամ սահմա-նաց երկրին քրիստոնէից այլով իմն կոնդակաւ, որոյ սկիզբն է. Ադ էռադիկանդում. 'ի 18. սեպտ. 'ի նմին ամի: 'Ի սահմանադրութեանդ յայ-դոսիկ հրամայէ և ես. զի թէ ոք ուսուցէ օրինաւոր լինել զայդ դատապարտեալ գործ, կամ դիմադրաւ գտցի դատապարտութեան նորա, կամ գրեսցէ կամ խօսեսցի 'ի պաշտպանութի այնր դատապարտեալ գործոյ՝ նովին իսկ գործով անկցի 'ի բանադրանս վերապահեալս պապին: Իսկ այն խոստովանահարք որք 'ի գործ դնի-ցեն զայն սովորութի, անկցին ընդ մահուչափ

մեղօք. և կախեցին 'ի պաշտամանէ խոստո-
վանահայրութե՟: Աստանօր պարտ է յոյժ առ-
նել. Թէ պապն ո՛չ դատապարտէ զպարտաւո-
րութի՟ն՝ զոր ունին խոստովանահարք վ՟ն հար-
ցանելոյ զապաշխարօղն զանձնէ մեղսակցին,
յորժամ հարկաւոր իցէ բացատրել զայդ 'ի
սակս նիւթական ամբողջութե՟ խոստովանութե՟.
և յո՛չ կամին նորա բացատրել՝ չտալ նմա զար-
ձակումն, այլ զայն ևեթ խոստովանահարս դա-
տապարտէ՝ ոյք պարտս դնեն 'ի վ՟ր ապաշխա-
րողաց յայտնի առնել նոցա զմեղսակիցն՝ պատ-
ճառանօք ուղղելոյ զնա եղբայրական խրատուք,
կամ վասն այլոյ իրիք բարի վախճանի, որ ո՛չն
հայի յամբողջութի՟ խոստովանութե՟:
Ապա 'ի բաց առեալ զքննական կամ զբարոյա-
կան արգելս՝ պարտաւորիմք առ նիւթական
ամբողջութի՟ խոստովանութե՟, ը՟ սահմանելոյ
տրիդենտեան ժողովյն. նիստ. 14. կան. 7:
Ուստի իրաւամբք Իննովկ. ժա՟. 'ի մէջ այլ
նախադասութեց դատապարտեաց և զծ՟ եր-
րորդն, յորում ասիւր. * Օրէն է խորհրդա-
կան արձակումն տալ կիսամասնաբար ևեթ խոս-
տովանեալ մեղաց՝ 'ի պատճառս խուռն ընթա-
ցից ապաշխարողաց. որպէս լինի դիպիլ 'ի մե-
ծի աւուր իրիք տօնախմբութե՟ կամ ներողութե՟ ||:
Ա՟ զի այդ բարոյական արգելքդ՝ չէ՛ բաւական
առ ազատ կացուցանելոյ 'ի նիւթական ամբող-
ջութէ. որպէս և ո՛չ այն բաւական լինի, զի
ոք ունիցի պէտս խոստովանելոյ, և գտանիցի
'ի մեղս վերապահեալս և ո՛չ վերապահեալս,
և չունիցի զառատութի՟ խոստովանահօր՝ որ
կարիցէ ուղղապէս արձակել զնա 'ի վերապա-
հելոց անտի. վ՟ն զի 'ի դիպուած յայսպիսի՝ ո՛չ

տնօրինի 'ի նիւթական արգելմանէ, զի է յաժ-
ույժն երբառանց:

Սմին իրի պարտի խոստովան լինել զնմ մեղս իւր յիշատակեալք քահանայի. որպէս ազդ-առնէ կարդինալ Պրանդալթն. յղ. տպագ. Հռմ. 19. յօդ. 11. հմ. 404: Իսկ թէ արդեօք 'ի գիտուած յայդպիսի կարօ՞ղ իցէ, և պարտա-կա՞ն իցէ կարգաւորեալ խոստովանահայրն ար-ձակել զնա յամ յիշատակեալ մեղաց վերապա-հելոց իբր յո՞չ վերապահելոց՝ ասասցի յիւրում տեղւոջ:

Երկրորդ պայմանն կարեւոր առ բարւոք և վաւեր խոստովանութեան՝ այն է, զի լինիցի ներ-կայ. այս է՝ զի ապաշխարողն զխոստովանութիւն իւր անձամբ առաջի արասցէ խոստովանահօր. Հրամ. հռոմ. հմ. 52: Սմին իրի ասաց Տէրն առ բորոտն, որ օրինակ էր մեղաւորի. * Երթ ցո՛յց զանձն քո քահանային||. Մատթ. Ը. հմ. 4: Եւ 'ի ձեռն սահմանեալ առ խորհրդական արձա-կումն՝ ասէ. * Ես արձակեմ զքեզ 'ի մեղաց քոց||ն. որ իբր մատամբ ցուցանէ զառաջի-կայ մեղաւորն: Վասն որոյ Կղեմէս Ը. 'ի 22. յունիսի. 1622. դատապարտեաց զայս նախա-դասութիւն. * Օրէն է 'ի ձեռն թղթոյ կամ պատգամաւորի խոստովանել զմեղս խորհրդա-բար, քահանայի բացական եղելոյ, և 'ի բացա-կանէ անտի ընդունել զարձակումն||: Եւ զայս արգելումս պարտ է իմանալ եթէ բաժանա-բար՝ և եթէ հաւաքապէս. իբր զի դատապար-տեալ է խոստովանութիւն եղեալ առ բացական քահանայ, եթէ թղթով և եթէ 'ի ձեռն փո-խանորդի. թէ և յետոյ ընդունիցի զարձակումն 'ի ներկայ խոստովանահօրէ. մի՛ և պարզ ար-

ձակումն տուեալ 'ի բացակայութե (դատապարտեալ է.) Թէպէտև յառաջագոյն խոստովանութիւն եղեալ իցէ ներկայ խոստովանահօր։ Նա պարզաբար երկաքանչիւրն իսկ դատապարտեալ է. (այսինքն՝ խոստովանութիւն և արձակումն) արարեալ և ընկալեալ 'ի բացակայութե. որպէս յայտնի առար Պօղոս Ը. 'ի 14. յուլիսի. 1605։

Երրորդ պայմանն հարկաւոր առ խոստովանութիւն՝ այն է, զի պարտի լինել ձայնաւոր. այսինքն՝ եղեալ ձայնիւ ապաշխարողին, որ առաջի խոստովանահօրն ամբաստան լիցի զմեղաց իւրոց ինքնին բերանով իւրով. և չէ բաւական զոր պնդեն ոմանք, որպէս թէ նորահաս ոք օրինորդ, որ առ մեծի ամօթխածութե չկարիցէ ամբաստանել զմեղս իւր՝ կարող իցէ ընդ գրով արկանել զնմ, և մատուցանել խոստովանահօրն ընթեռնուլ զգիրն՝ 'ի հասարակի ամբաստան լինելով զամենայն զամենայն 'ի նմա գրեալսն։ Նա զի խոստովանութիւն պարտի լինել բերանով ապաշխարողին. նմին իրի 'ի հրահանգն հայոց տուեալ յԵւգինէոսէ Դ. 'ի ժողովն փլորենտիոյ՝ յայտնաբանի օրինակ զայս. * Երկրորդ մասն խորհրդոյ ապաշխարութե՝ է խոստովանութի բերանոյ ||։ Որպէս և 'ի 'ի գլ. Ար Դոնեգամ շղջոյ. յշ. տողաշխ. շան. ա. այսպէս ընթեռնումք. * Պատուիրեաց տր որոց հանդերձեալ էին սրբել, երթալ ցուցանել քահանայից զբերանս, յայտ արարեալ՝ թէ մարմնաւոր առաջիկայութե պարտ է խոստովան լինել զմեղս, և ոչ 'ի ձեռն պատգամաւորի կամ գրուածով յայտնել. քանզի ասաց՝ ցուցէք ըզբերանս. որք բերանով մեղայք՝ բերանով ամա-

չեսջիք. վն զի նոյն իսկ ամօթն ունի զմասն բաժնի թողութեն յողորմութենէն (տյ.) քանզի դովին՝ զի անձամբ ասէ քահանայի, և յաղթէ ամօթոյ՝ լինի ներումն յանցուածոյ ||: Նաև բենեդիկտոս ժդ. յարտածաւալ կոնդակն իւր ասելով. 'ի ԴԷՋ ամենայնի յաղագս արտօնութենց ասէ: * Նթէ ոչ կէտ հարկի հանդիպեսցի, պարտ է առնել առաջի քահանայի զխոստովանութիւն բերանոյ. որպէս և գրեալ է. Սրտիւ հաւատայք յարդարութիւն, և բերանով խոստովանիք 'ի փրկութիւն ||:

Այլն իւր եթէ ապաշխարող ոք՝ առանց ինչ ստիպողագոյն հարկի, հրաժարեսցի խոստովանել զյանցանս իւր ինքնին բերանով իւրով, այլ խնդրեսցէ գրով ևեթ խոստովանել՝ մեղանչէ մահուչափ մեղօք. վն զի գործէր ընդդէմ կիրառութեն և սովորութեն եկեղեցւոյ, յորում 'ի սկզբանէ անտի խոստովանութիւն եղև բուն բերանով մեղուցելոյն. ուստի և ըղխորհուրդն ապաշխարութե ունայնացուցանէր: Տես զՍբն Թովմաս. յղ. ումպէտ. Գ. պր. 10. 'ի վերջն:

Իսկ ստիպողական հարկ՝ իմա կամ զընական արգելս, որպէս համրութիւն յապաշխարողն. կամ զբարոյական արգելս, որպէս դժուարալուրն լինել խոստովանահօր. ուր հարկ 'ի վերայ կայր ապաշխարողին մեծաձայն բարբառել զմեղս իւր՝ հանդերձ վտանգիւ լսելի լինելոյ այլոց:

Բայց ամօթխածութիւն ոչ է գրելի 'ի համար ստիպողական հարկի. ապա թէ ոչ՝ որպէս բարւոք ազդ առնէ կարդինալ Պրանդաթի. Վէճ. Ժ. յօդ. Հ. ՀՏ. 65. 'ի սուղ ինչ ժամանա-

կի սպրդեալ մտանէր այդ սովորութիւն յեկեղեցին. զի մեծագոյն մասն մանկամարդաց և երիտասարդաց՝ ոչ ևս առնէին զխոստովանութիւն բերանոյ. վասն զի իւրաքանչիւրոք 'ի նոցանէ կարէր պատճառել զայնպիսի մեծ ամօթխածութիւն, որով մարթացի ազատ լինել 'ի խոստովանելոյ ինքնին բերանով իւրով զմեղս իւր. իբրու շատ համարեալ 'ի գիր անցուցանել, և զայն ներկայացուցանել խոստովանահօր. և այսպէս առ սակաւ սակաւ 'ի բաց բարձեալ լինէր՝ մերձաւոր նիւթ խորհրդոյս ընդդէմ յայտնի բացատրութեան Փլորենտեան ժողովոյն, որ ասաց՝ * խոստովանութիւն բերանոյ ||։

Չորրորդ պայմանն հարկաւոր առ խոստովանութիւն՝ այն է զի իցէ նշ—. իբր զի ապաշխարողն իցէ յօժար և պատրաստ ընդունել զապաշխարանս՝ զոր դնէ նմա խոստովանահայրն. և կատարել ըստ իւրում ժամանակի։ Արդ պարտ է գիտել, զի ապաշխարանքն է էական՝ միանգամայն և ամբողջական մասն այսր խորհրդոյ. վասն զի ըստ բանի ընդունելութեան և յօժար կամաց կատարելոյ զայն՝ է էական մասն. ուստի եթէ ապաշխարող ոք՝ 'ի դնել անդ խոստովանահօր զապաշխարանս՝ չունիցի կամս կատարելոյ զայն, թէպէտև բերանով խոստասցի կատարել՝ նանրացուցանէ և պիղծ առնէ զխոստովանութիւն. մինչզի թէ և զկնի կատարեսցէ՝ տակաւին ոչ վաւերացուցանէր զխորհուրդն։ Իսկ ըստ ներգործական կատարման՝ է մասն ամբողջացուցիչ։ Լմին իրի եթէ ապաշխարողն յօժարակամ ընդունիցի զապաշխարութիւնն գիտաւորութեամբ կատարելոյ, այլ վասն դժուարութեան ինչ զոր գտանէ 'ի կատա-

րելն , կամ այլ ինչ առթիւ չկատարեսցէ՝ թէ-պէտեւ մեղանչել մեղանչէ , վ՟ զի լինի պատ-ճառ թերակատարութե՟ խորհրդոյ, բայց չդնէ զխորհուրդն յոչինչ ։

Իսկ ծանր յանցանք լինի , եթէ ՚ի բաց թո-ղեալ լիցի ապաշխարանք ինչ՝ թէպէտեւ փոքր եւ թեթեւ՝ բայց վ՟ մահուչափ մեղաց եդեալ։ Ընդ հակառակն՝ եթէ թողցի ապաշխարանք ինչ՝ թէպէտ եւ ծանր՝ եդեալ վ՟ ներելի մե-ղաց , լինի յանցանք ներելի ։ *

---

Յաղագս ապաշխարանաց զոր դնէ խոս-տովանահայրն ։

կթ. Որպէս մեկնեցան երկոքին մասունք մերձաւոր նիւթոյ խորհրդոյ ապաշխարութե՟, որ ըստ բանի ծիսարանին են * զղջումն , եւ խոս-տովանութի՟ն ‖ . մնայ եւ երրորդն՝ որ կոչի հա-տուցումն կամ վճարումն ։ Որդ՝ զի՞նչ իցէ սա , եւ յի՞նչ հաստատեալ իցէ ։

Հ. Հատուցումն ըստ ասելոյ հրահանգին հռովմ. Եր. 64. * է մաքրութ՟, որով ՚ի բաց սրբի՝ որ ինչ աղտեղութի՟ կայցէ յոգւոջ յերե-սաց աղտոյ մեղաց . միանգամայն եւ արձակիմք ՚ի պատժոց ժամանակաւ սահմանելոց , որոց էաք պարտական ‖ ։ Ո՟ զի ՚ի ձեռն խորհրդոյ

* Այլ բարոյաբանք բազումք համարին ընդ հակառակն . թէ զանցառութի՟ ապաշխարանաց թէ եւ վ՟ ներելի մեղաց եդեալ՝ է միշտ ծանր յանցանք՝ վասն թերի կացուցանելոյն զխոստովանութի՟ն . եւ սոյն կարծիք յապահովագոյն է ՚ի կի-րառութեան ։

ապաշխարութե թէպէտ և ներէ մեզ ած զպա-
տիժն յաւիտենական, յոր դատապարտեալ էաք
վասն մահուչափ մեղաց, և զպատժապարտութի
նոցա, բայց ոչ միշտ բառնայ զամ պատիժն
գլխովին. այլ փոխարկէ 'ի պատիժ ժամանա-
կաւոր, որում պարտաւորիմք վճար առնել 'ի
ձեռն ապաշխարութե՝ զոր դնէ մեզ խոստովա-
նահայրն. որպէս ուսուցանէ ժողովն Տրիդ.
ԺԴ. Է։ Նոյն ևս պարտաւորիմք հատուցումն առ-
նել և այլ ևս պատժական գործովք՝ կամակար
առ 'ի մէնջ ընտրելովք առ այդ վախճան։

Աւրանոր պարտ է յուշ ածել զզանազանու-
թիւն՝ որ 'ի մէջ խորհրդոյ մկրտութե և ապաշ-
խարութե։ 'Ի մկրտութե թողու մեզ ած ընդ
պատժապարտութե մեղաց զամ պատիժս յորս
անկեալ գնէաք վն շաղախելոյ 'ի սկզբնական
մեղս, որպէս և վն ներգործական մեղաց գոր-
ծելոյ 'ի մէնջ յառաջ քան զմկրտութիւն, ա-
ռանց պարտաւոր առնելոյ զմեզ առ այլ ինչ
պատիժ ժամանակաւոր. որոյ վն ոչինչ պատիժ
հատուցման 'ի վերայ դնի յարբունս հասելոց՝
յորժամ մկրտին. բայց 'ի խորհուրդն ապաշ-
խարութե փոխէ ած զպատիժն յաւիտենական
'ի պատիժ ժամանակաւոր, 'ի սակս պատճառին
զոր յառաջ բերէ անդ ժողովն առ վճար առ-
նել ապաշխարանօք՝ զոր դնէ մեզ խոստովանա-
հայրն. ևս և կամաւ կրելով ինչ ինչ առ 'ի
մէնջ սահմանեալ առ այն վախճան. որպէս և
յօժարակամ տանելով զամ ժամանակաւոր վշ-
տաց՝ զոր առաքէ մեզ ած. ժողովն Տրիդ. ան-
դէն. ԺԴ. Ը։ Այն որոյ 'ի չորս տեսակս որոշեալ
է հատուցումն, զոր մարթ է մեզ առնել ոյ վն
մեղացն գործելոց, ըստ բանի վարդապետութե.

որպէս ուսուցանէ սրն Թոմմաս. 'ի Հրմ. խն. ծէ: Առաջինն է՝ մտադիւր տանելով զամ ձախողութեց՝ որք գան մեզ առ յոյ: Երկրորդն՝ պահօք, յորում բովանդակին ամենայն մարմնաւոր ճնշմունք, զոր կամաւ ընտրեմք առ ասացեալդ-վախճան: Երրորդն՝ աղօթիւք, որ յինքն փակէ զամ զկերացումն մտաց առ ած: Չորրորդն՝ ողորմութիք, որովք խմացեալ լինին չորեքտասան գործք հոգևոր և մարմնաւոր ողորմութեան: Նմին իրի ասէ ժողովն Փլորենտեան. * Երրորդ մասն ապաշխարութեան է հատուցումն վն մեղաց ըստ կարգաւորութեան քահանային. որ և առաւելապէս լինի աղօթիւք, պահօք, և ողորմութեամբ ||:

Հց. Կամիմ գիտել, թէ արդեօք ապաշխարանքն զոր դնէ խոստովանահայրն, պա՞րտ իցէ կատարել յառաջ քան զընդունելութիւն արձակման:

Պտխ. Ոմանք ստութիւն եդին, թէ չէ մարթ արձակել զապաշխարողն՝ եթէ ոչ կատարեսցէ նախ զապաշխարանս կամ ըստ մասին, և կամ ըստ բոլորին. մինչև ոչինչ լինել արձակմանն՝ որ յառաջեսցէ քան զապաշխարանս. և այս ըստ սահմանադրութեան յոի քնի: Ուստի իրաւամբք դատապարտեաց Աղեքսանդր Ը. յամին 1690. զնախադասութիւն խզ. զայն, թէ * Օ կարգ կանխելոյ զհատուցումն յառաջ քան զարձակումն ոչ եթէ քաղաքականութիւն եմոյծ, կամ կարգաւորութիւն եկեղեցւոյ, այլ բուն իսկ օրէնքն քնի, և իրաւունք բնութեան նոցին իսկ իրաց՝ որք զոյգ թելադրեն ըստ իմիք ||: Եւ 'ի Նորոգելն Պասքաղեայ Կուխնէլի զդոյն մոլորութիւն՝ Կղեմէս ԺԱ. 'ի վճիռն (Մածին) դա-

տապարտեաց զայն 'ի նախադասութենէ։ Որոյ պատճառն է, զի 'ի ձեռն ապաշխարանաց՝ զոր դնէ մեզ խոստովանահայրն, պարտիմք հատուցանել աստուածային արդարութեան սակս պատժոյն՝ որ կայ մնայ մեզ 'ի կրել վասն մեղաց գործելոց և արձակելոց ընդ բանի քահանայապետութեան յանցանաց՝ որպէս ասացաւ 'ի վերոյ։ Իսկ եթէ 'ի ձեռն արձակման չիցէ մեր դարձեալ անդրէն 'ի շնորհս Աստուծոյ՝ անկարանամք մեք բարի գործովք մերովք վճար առնել ըստ արժանւոյն աստուածային արդարութեան։ Նմին իրի 'ի դէպ իսկ է, զի արձակումն մեղաց կանխեսցէ յառաջ քան զապաշխարանս։ Բայց սակայն 'ի գլխաւորս ինչ մարթ է պարտաւոր առնել զապաշխարողն կատարել զապաշխարութիւն ըստ մասին յառաջ քան զարձակումն. և այս յայնժամ լինի՝ յորժամ ապաշխարողն չիցէ սովոր կատարել զայն։

հդ. Ապա ուրեմն եթէ ապաշխարող ոք յետ արձակման անկեալ 'ի մահուչափ մեղս, 'ի նմին վիճակի կատարեսցէ զապաշխարանս, միթէ չիցէ՞ այն բարի. և կամ միթէ անբաւակա՞ն իցէ առ ամբողջութիւն խորհրդոյ ապաշխարութեան. և կարօտի՞ արդեօք կատարել զայն վերստին՝ յորժամ դառնայ 'ի շնորհս։ Եւ ես միթէ չա՞ր գործեն խոստովանահարք, եթէ գտանելով զապաշխարող ոք դիւրապատրաստ կամ ունակացեալ 'ի մեղս՝ 'ի կախ թողուն զարձակումն, բայց այսու ամենայնիւ պարտս 'ի վերայ դնեն նմա կատարել ապաշխարանս ինչ։

հե. Պատասխանեմ առ առաջինն. թէ ապաշխարութիւն որ կատարի 'ի մահուչափ մեղս՝ հատուցանէ դաշնակցութեան եղելոյ ընդ խոստովանահօրն 'ի խոստման անդ՝ զոր արար առ 'ի

կատարել. բայց ոչ հատուցանէ ածային արդարութե՛ վն պատժոյն՝ որ անկ է մեղաց արդէն գործեցելոց ըստ պատժապարտութեանն. վն որոյ ապաշխարողն ոչ լինի պատժապարտ իբրև զանցառու ապաշխարանաց, և ոչ մեղանչէ մահու-չափ. բայց պէտք են զի այլովք բարի գործովք 'ի վիճակի շնորհաց, կամ շահելով զներողութիւն՝ հատուսցէ ածային արդարութե. Տե՛ս Թովմաս 'ի լոմն. խն. ժէ. յօդ. 4. եթէ ընկալի 'ի քաւարանի հատուցանել զպատիժս՝ որ անկ են մեղաց իւրոց։

Պատասխանեմ առ երկրորդն. Թէ այլ է ապաշխարանքն բժշկական, և այլ է վճարողական. Ժող. տրիդ. գլ. է։ Բժշկականն ծառայէ առ 'ի ճանաչել, թէ արդեօք ապաշխարողն իցէ՞ ճշմարտապէս զղջացեալ, և ունիցի՞ կամս ուղղելոյ զանձն. Նոյն իրի մարթ է և պարտ իսկ է դնել զայն անտրամադրեալ ապաշխարողաց, կամ ունակացելոց 'ի մեղս, առ 'ի կատարել յառաջ քան զարձակումն։ Իսկ վճարողականք թէպէտ և դնին նախ քան զարձակումն, բայց մարթին կատարիլ, և հասարակ օրինօք պատշաճ է զի կատարեսցին զկնի։ Մինչ զի զընդդէմն ասել՝ լինէր մոլորութի դատապարտեալ, որպէս 'ի վեր անդր։

Հց. Ապա ուրեմն կարէ՞ արդեօք ապաշխարողն զանց առնել զկատարմամբ վճարողական ապաշխարանաց առանց ինչ յանցանաց՝ զհետ լինելով միայն ներողութեանց, կամ պատրաստ լինելով վճարել զայն 'ի քաւարանի։

Պտխ. Պատասխանեմ ոչ. վասն զի խոստովանահայրն արձակելով զնա 'ի պատժապարտութենէ յանցաւորութե, միանգամայն պարտաւոր առ-

նէ զնա առ պատիժն հանդերձ վճարողական ապաշխարանօք. վ՟ որոյ մեղանչէ՝ որ ոչն կատարէ զայն։ Եւ ևս քանզի կատարումն ապաշխարանաց՝ է ամբողջացուցիչ մասն խոստովանութեան, ոչ կարէ ապաշխարողն առանց մեղաց զանց առնել զկատարումն նորա, և այնպէս զխորհուրդն առնել կիսամասնեայ և թերի։

Հց. Մի՞թէ կարէ՞ ոք յանձն առնուլ զապաշխարանս, և ապա տալ կատարել զայն 'ի ձեռն այլոյ ուրուք անձին։

Պտ. Ո՛չ կարէ. նմին իրի 'ի մէջ նախադասութեանց դատապարտելոց յԱղէքսանդրէ է. կայ 'ի թիւ ԺԵ. և այս. * Ապաշխարողն իւրով իշխանութեամբ կարող է փոխանակ իւր կացուցանել զայլ ոք, որ 'ի տեղի նորա լրացուսցէ զապաշխարանսն ||։ Վ՟ զի պարտաւորութիւն կատարելոյ զապաշխարանսն՝ է բեռն ինչ անձնական. զորօրինակ են և պարտաւորութիւն լսելոյ զպատարագ, պահպանութիւն տօնից և ժամասացութիւն. վասն որոյ ոչ է մարթ յայլմէ կատարել։

---

Յաղագս ձեւոյ խորհրդոյ ապաշխարութեան։

Հց. Ի վերայ բերէ ծիսարանն. * Իսկ ձև են այն բանք արձակման, Ես արձակեմ զքեզ ևն ||։ Արդ՝ ասա ինձ ա. Ո՞ր այն իցեն էական բառք խորհրդական արձակման։ բ. Մի՞թէ մա՞րթ իցէ տալ զարձակումն թէապէս։ գ. Արդեօք 'ի ստիպօղ առթի մա՞րթ իցէ կեղծել. որպէս թէ տայ ոք զարձակումն ապաշխարողին՝ ար-

տաբերելով զձև բանին՝ առանց դիտելոյ արձակել զնա ։

ղբ. Պատասխանեմ առ առաջինն. Թէպէտ և ծխարանն ասէ, թէ ձևն հաստատի յայդոսիկ բանս արձակման. * Ես արձակեմ զքեզ ևն ։. բայց արժան է գիտել. զի ձայնդ և այլն՝ ցուցանէ թէ կան և այլ բառք՝ որք հայէին առ ասացեալ ձևդ ։ Ո՞ որոյ ասելի է, թէ էական են այս ամենայն բառք ողջոյն. * Ես արձակեմ զքեզ յամ մեղաց քոց ։ Իսկ զերկուսին զայս վերջին բառս, (որովհետև առաջին նախադասութիւն դատապարտեալ է յԻննովկենտիոսէ ժա.) չէ մարթ 'ի բաց թողուլ, առ 'ի չգնել զխորհուրդն 'ի վտանգ ոչնչութեան. որպէս ասացաւ 'ի վեր անդր ։ Իսկ այլ բանք, որք յառաջեն, կամ զկնի յարին յէական ձևն. այսինքն՝ * Ողորմեսցի քեզ մարդասէրն ած, ևն ։ * Զարչարանք տն մերոյ յի քի, ևն ։. կամ. * Իսկ դարձեալ տամ քեզ, ևն, չեն յէութենէ. և սակայն միշտ ասել պարտ է զամ, բաց 'ի յաձախս և 'ի համառօտագոյն խոստովանութենէ. յորս շատ է սկսանիլ զարձակումն 'ի բանից աստի. * Տէրն մեր յս քս արձակեսցէ զքեզ ։. կամ * Իսկ ես 'ի կարգէս քահանայութե, ևն ։. որպէս յայտ առնէ նախագրեալ ծխարանն 'ի վերջն. յորմէ յայտնի լինի, թէ ամ խոստովանահարք և պատժովք մեղաց պարտական են գիտել զայն սերտողութիւն, և արտաբերել միտադրութեամբ ։

Առ երկրորդն ասեմ, թէ թէութիւնք՝ զորս մարթ է յաւելուլ 'ի բանս արձակման, կամ են զանցեալ ժամանակէ, զորօրինակ՝ * Ես արձակեմ զքեզ՝ եթէ յետս դարձուցեր զքար-

ձեւաւ իրն ‖ . կամ զներկայէ, զորօրինակ՝ * Ես
արձակեմ զքեզ, եթէ ստուգապէս զղջացեալ
ես ‖ . և կամ զապառնւոյ, զորօրինակ՝ * Ես
արձակեմ զքեզ, եթէ վաղիւ 'ի բաց արձակես-
ցես զհարճն ‖ : Արդ՝ թէութ̃ին զապառնւոյ՝
ոչ միայն ապօրինաւոր է միշտ, այլ և զխոր-
հուրդն անգամ ունայնացուցանէ . որոյ գործն
ոչ մարթի 'ի կախ թողեալ լինել այնպիսի թէ-
ութե̃ : Իսկ թէութի̃ք զանցելոյ և զներկայէ
եթէ 'ի գործ դնիցին առանց ինչ հարկի՝ միշտ
են յանցանք ծանր . քանզի այլայլի 'ի նիւթ ծանր
արարողութ̃ին հաստատեալ յեկեղեցւոյ վասն
արձակման . այլ ոչ նանրացուցանեն զխոր-
հուրդն 'ի ճշմարտիլ թէութ̃են : Ապա եթէ
հարկ 'ի վերայ կայցէ, յայնպիսում դիպուածի՝
կարեն յաւելեալ լինել առանց ինչ յանցանաց .
զորօրինակ՝ եթէ ապաշխարող ոք ասէ ցխոստո-
վանահայրն, թէ արդէն յետս դարձուցեալ է
իմ զինչս այլոյ . այլ խոստովանահայրն ունիցի
ինչ հիմն յերկբայս լինելոյ, և այլով մասամբ՝
ապաշխարողն պէտս ունիցի խոստովանելոյ .
յայս դիպուած կարէ արձակել զնա բացարձակ
կամ լռելեայն թէութ̃բ՝ զանցելոյ ժամանակէ :
Այնպէս և հոգեվար ոք՝ որ ոչ ևս կարող է
խօսել, բայց տայ նշան մեծի ցաւոյ, միայն թէ
երկդիմի, արդեօք 'ի ցաւո՞յ ախտին իցէ յա-
ռաջ եկեալ՝ եթէ 'ի զղջմանէ, յայնժամ կա-
րէ և պարտի արձակել զնա ը̃ թէութ̃բ զներ-
կայ ժամանակէ . զորօրինակ՝ * Ես արձակեմ
զքեզ, եթէ զղջացեալ ես ‖ . վ̃ զի խորհուրդն
սահմանեցաւ վ̃ փրկութ̃ե հոգւոյ : Նմին իրի
յորժամ զուգընթանան 'ի միասին վտանգ ոչ-
ընչութ̃ե խորհրդոյն, և վտանգ կորստեան

հոգւոյ՝ պարտ և արժան է զվտանգ հոգւոյն նախամեծար առնել քան զվտանգ ողջութե՟ խորհրդոյն. և այնչափ առաւել՝ որչափ զի յորժամ թէութին զանցելոյ կամ զներկայէ ոչ կայցէ, առնէ զի խորհուրդն ոչ արտադրեսցի:

Ըստ վ͞ճ երրորդին՝ գոյ նախադասութի դատապարտեալ յիննովկեն. ժ͞ա. Ըխ. Ի͞Ը. այսինքն է. * Հարկեցուցիչ երկիւղ ծանր՝ է իրաւացի պատճառ կեղծելոյ զմատակարարութ͞ե խորհրդոյն ||: Ս͞ա որոյ ոչ 'ի պատճառս չխորշեցուցանելոյ զպաշխարօղն, և ոչ առ խորշելոյ 'ի վատահամբաւութ͞է նորա, կամ 'ի գայթակղութ͞է առաջիկայից, մարթ է կեղծել զարձակումն, կամ արտաբերել զձևն առանց ինչ դիտաւորութ͞ե. միայն մարթ է օրհնել զպաշխարօղն նշանաւ խաչի առ զգուշանալոյ 'ի վատահամբաւ առնելոյ զնա առաջի մերձակայից, կամ 'ի գայթակղութ͞է նոցա. որք թէպէտև կարծիս առնուցուն՝ թէ այնու նշանաւ պաշխարօղն արձակեցաւ, բայց ոչ է կեղծել առ նոսա, որոց ոչ մատակարարի խորհուրդն.

հ͞ց. Որդեօք մարթ է տալ զարձակումն հեռաւորի ումեք, որ խոստովան լինի թղթով կամ 'ի ձեռն հրեշտակի:

ղ͞ե. Ասելի է ընդ հասարակաց ա͞ծաբանիցն դասուց՝ թէ ոչ. որպէս մեկն յայտնաբանեաց կղեմէս Ը. 'ի վճռին իւր հրատարակեալ 'ի 16. յունիսի. 1602. յորում դատապարտեաց զկարծիս այնոցիկ, որք ասէինն օրինաւոր լինել արձակել գրով կամ միջնորդաւ: Միայն 'ի միտ առ, զի լինի արձակել զհեռաւոր ոք 'ի բանադրանաց՝ գրով կամ միջնորդաւ, որպէս է իմաստասիրել 'ի բազում գրուածոց և 'ի կոնդակաց

քահանայապետաց ։ Պատճառն յառաջ բերեալ 'ի Պուարտայ այս է. զի բանադրանքն գոլով պատիժ եկեղեցական՝ որպէս մարթի անկանիլ 'ի վերայ հեռաւորին, նոյնպէս և մարթի լուծանիլ ։

'Ի վախճանի ասի, թէ արձակելն կամ յերկարել զարձակումն՝ թողեալ լինի 'ի խոհեմութիւն խոստովանահօր ըստ այլևայլ պարագայից, որք կարեն հանդիպիլ ։ Բայց խորհեսցին խոստովանահարք, և 'ի միտ առցեն. զի արձակելն զոմանս յապաշխարողաց այնպէս հեշտեաւ, ոչ՛ինչ ընդհատ է 'ի տածելոյ զնոսա 'ի մեղս իւրեանց. վ̃ որոյ և ունին սաստկապահանջ համարս տալ ա̃յ ։ Այլ զայսմանէ և այլուր լեցի բան ։

---

## Յաղագս իշխանութե̄ կամ իրաւասութե̄ խոստովանահօր ։

Հց. 'Ի վերայ բերէ ծիսարանն. * Իսկ պաշտօնեայն է քահանայ ունող զիշխանութիւն արձակելոյ՝ կամ զկարգաւորեալ, և կամ զյանձնեալ‖ ։ Արդ՝ ասա՛ ինձ, հարկաւո՞ր իցէ արդեօք առ 'ի արձակել 'ի մեղաց՝ ունել զկարգաւորեալ կամ զյանձնեալ իշխանութիւն իրաւասութե̄. և զի՞նչ տարբեր կայցէ 'ի մէջ երկոցունց իշխանութե̄ցս. և թէ յումմէ՞ լինի ընդունել զմին և զմիւսն ։

Պխ. Առ վաւեր արձակումն 'ի մեղաց չէ՛ բաւական իշխանութիւն կարգին զոր ընդունի ոք 'ի ս̃րբ ձեռնադրութե̄ անդ՝ բանիւքս այսոքիւք.

* Առէք զհոգին սր. որոց թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա ‖. այլ կարեւոր է եւս ունել զիշխանութիւն իրաւասութեան. ուստի ժողովն տրիդ. 'ի նիստ. 14. գլ. Է. յայտնաբանէ օրինակ զայս. * Յոչինչ համարել պարտ է զայն արձակումն, զոր բարբառի քահանայ ոք 'ի վերայ նորա՝ առ որ չունի զիրաւասութիւն կարգաւորեալ կամ յանձն եղեալ ‖: Նոյ տայ զպատճառն ասելով. * վն զի բնութիւն եւ խակութիւն դատաստանի զայդ պահանջէ, իբր զի դատակնիքն [illegible]երցի 'ի հպատակս եւեթ ‖: Նմին իրի կարի խորհրդով ասէ ծիսարանն, թէ պաշտօնեայ այսր խորհրդոյ քահանայն է՝ որ ունի զիշխանութիւն արձակելոյ կարգաւորեալ կամ զյանձնեալ, յայտ առնելով բանիւքս զկարեւորութիւն որ գոյ 'ի պաշտօնեայն, ունել ոչ միայն զիշխանութիւն կարգի՝ այլ եւ զիշխանութիւն իրաւասութեան. եւ սա է կրկին. այսինքն՝ կամ իշխանութիւն կարգաւորեալ, որ նոցա է անկ՝ որք բանիւ թօշակառութեան ունին զհպատակս, որպիսի են եպիսկոպոսք, եւ ծխատէր երիցունք. եւ կամ իշխանութիւն յանձնեալ, որ առ ժամանակ մի շնորհեալ լինի յեպիսկոպոսէ 'ի վերայ հպատակաց իւրոց՝ աշխարհիկ քահանայից կամ կանոնաւոր կրօնաւորաց, որք չունին զթօշակ համանգերձ հոգաբարձութեան հոգւոց:

Արդ՝ զանազանութիւն մեծ է 'ի մէջ երկուց իշխանութեանցդ: Նախ՝ կարգաւորեալ իշխանութիւն տեւէ 'ի կեանս, այսինքն՝ մինչեւ ցմահ. այլ է՝ թէ ոք հրաժարեսցի յեպիսկոպոսական թեմէ, կամ 'ի ժողովրդապետութենէ, եւ կամ ըստ իրաւանց իցէ զրկեալ: Իսկ յանձնեալն տեւէ առ ժամանակ մի սահմանեալ, որ վասն

շնորհեցաւ , զորօրինակ՝ Համբոս Վեց. և 'ի լրանալ այնր ժամանակին՝ առանց յետս իսկ կոչելոյ դադարի իշխանութիւն ։ Երկրորդ՝ կարգաւորեալ իշխանութիւն ոչ պարագրի ընդ սահմանաւ թեմի կամ սեպհական ծխոյ. որոյ վասն եպիսկոպոսն և ժողովրդապետն արտաքոյ թեմի իւրեանց կարող են արձակել 'ի մեղաց զհպատակս իւրեանց , յորոց վերայ ունին զիրաւասութիւն կարգաւորեալ. ըստ որում բացածանոյց ժողովն Սինոդոսաց 'ի կարգի խնդրոյ իրիք. 'ի 19. Նոյեմբ. 1707 ։ Բայց ոչ այսպէս է յանձնեալն , որ պարագրի ընդ սահմանաւ թեմի. ուստի արտաքոյ նորին չէ կարող խոստովանահայր ոք արձակել զհպատակս եպիսկոպոսին՝ յորմէ եառ զիրաւասութիւն. որպէս յայտ առնէ Կղեմէս Ժ. 'ի սահմանադրութեան իւրում. Վերջնագոյն. յօդ. 4. 3 ։ Յանձնեալ իրաւասութեան ընդունակ են քահանայք՝ եթէ աշխարհականք, և եթէ կրօնաւորք. բայց կարգաւորեալ ժողովրդապետական իրաւասութեան՝ ոչ են ընդունակ կրօնաւորք առանց մասնաւոր հրամանի առաքելական աթոռոյ. զի չէ մարթ նոցա ունել զտիտղոս ժողովրդապետական թոշակի. Գլ. Երէկէ-շէան տոյ Վց Վիճակէ Փանջանց ։ Սա թէպէտ երբեմն վարեն զհոգաբարձութիւն հոգւոց, ըստ որում միացեալ իցէ այն ընդ եկեղեցիս՝ կամ ընդ մենաստանս իւրեանց , սակայն և յայն դիպուած ունին յեպիսկոպոսէն զյանձնեալ և եթ իրաւասութիւն 'ի վարել զայդ հոգաբարձութիւն. որոյ վասն արտաքոյ թեմին ոչ կարեն արձակել զեղեալսն ընդ վիճակաւ հոգաբարձութեան իւրեանց ։

Երրորդ՝ զկարգաւորեալ իրաւասութիւն լինի

ընդունել 'ի Պապէն առ եպիսկոպոսութիւն, եւս և ը̃ հոգաբարձական վիճակաց, յորժամ են այսուքիկ յառաքելական տուչութ̃է: Ապա եթէ իցեն յեպիսկոպոսական տուչութ̃է՝ լինի ընդունել յեպիսկոպոսէ: Յանձնեալն միշտ և միայն առեալ լինի 'ի Թեմական եպիսկոպոսէ, բայց 'ի դիպուածոց ինչ՝ զորոց ունիմք ասել 'ի մօտոյ:

Ա̃մ այսորիկ ժողովրդապետք յետ Տրիդենտեան ժողովոյ՝ ոչ ևս կարեն, (որպէս յառաջն կարող էին զօրութ̃բ կանոնին. Ա̃ այր համ հէն.) տալ զիշխանութ̃ի այլում քահանայի լսել զխոստովանութ̃իւս ժողովրդոց, եթէ նոյն քահանայ չունիցի զայն 'ի Թեմական եպսկոպոսէ: Ուստի Աղէքս. Է. 'ի կարգի այլոց նախադասութ̃եց դատապարտեաց և զԺ̃Գ, որ ունի այսպէս. * Որք ունին զԹօշակ ծխատիրական, կարող են ընտրել ինքեանց 'ի խոստովանահայր զպարզ քահանայ զոք, որ ոչն է փորձեալ և ընտրեալ յեպիսկոպոսէ տեղւոյն||: Արդ՝ եթէ մ̃ անձին իւրոյ ոչ կարէ ընտրել 'ի պէտս խոստովանութ̃ զպարզ քահանայ զոք, որ չիցէ ընտրեալ յեպիսկոպոսէ, ևս առաւել չկարէ ընտրել մ̃ լսելոյ զխոստովանութ̃ի ժողովրդեան իւրոյ:

Աստանօր արժան է 'ի միտ առնուլ. զի ընտրութ̃ին այն յեպիսկոպոսէ, զոր պահանջէ ժողովն տրիդ. 'ի Նիստ. 23. գլ. ԺԵ. յղ. վերանորոգ. լինել 'ի քահանայս առ 'ի կարող լինելոյ նոցա վաւերաբար արձակել, իմացեալ լինի զիշխանութ̃է և զիրաւասութ̃է, զոր պարտ է ընդունել 'ի Թեմական եպսկոպոսէ. իմա զայնմանէ՝ որ կոչի յանձնեալ. որպէս յայտ առնէ կարդինալ Պետրա. 'ի հա. Է. առ վճիռն Դ̃. Սպաշխ-

տոսի. Գ. 'ի հարուած. 2. հՏ. 52. ուր յառաջ բերէ զյայտարարութիւն ժողովոյն Սիւնհոդոսաց ։

Ապա սուտ է դրութիւն ուրումն յարդեաց, թէ քահանայ ընտիր և փորձ դատեալ յեպիսկոպոսէ՝ ըստ գիտութեն, կարող իցէ առնուլ հաւանութիւն 'ի ժողովրդապետէն մն ժողովրդոց նորա՝ 'ի նմանէ ընդունելով և զիշխանութիւն և զիրաւասութիւն լսելոյ զխոստովանութիւն ։ Եւ թէպէտ կրօնաւորք՝ յառաջ քան զժողովն տրիդենտեան ունել ունէին զյանձնեալ իրաւասութիւն 'ի պապէն մն լսելոյ զխոստովանութիւն աշխարհականաց, առանց ընդունելոյ զհաւանութիւն 'ի թեմական եպիսկոպոսէ, այլ սակայն բարձաւ այն 'ի նոցանէ 'ի նախասացեալ ժողովն 'ի յիշատակեալ տեղի. որպէս յայտ արար սրբազան ժողովն նորին սիւնհոդոսի՝ առ Փագնանոսի. 'ի գլխ. Ընդհանր յաղագս ապաշխ. և Բող. հՏ. 61. և 66 ։ Որոյ աղագաւ առ վաւերաբար խոստովանեցուցանելոյ զաշխարհականսն՝ կարեւոր է և նոցա ընդունիլ զհաւանութիւն 'ի թեմական եպիսկոպոսէ ։

հդ. Հնա՞ր իցէ արդեօք լինել դիպուածոյ իրիք, յորում քահանայ ոք կարիցէ վաւերաբար լսել զխոստովանութի առանց ընդունելոյ ըզկարգաւորեալ կամ զյանձնեալ իրաւասութի յեպիսկոպոսէ ։

հե. Հնար է լինել, նախ՝ 'ի կէտ կամ 'ի վըտանգ մահու. յորում ամ քահանայ կարող է արձակել, թէ և չիցէ ժողովրդապետ, և ոչ ընտրեալ 'ի պաշտօն խոստովանահայրութե, որպէս ասասցի 'ի մօտոյ. քանզի յայդպիսի դիպուած ունին զյանձնեալ իրաւասութի յեկե-

ղեյլոյ՝ ըստ վճռոյ տրիդ. ժողովոյն. 'ի նիստ. 14. գլ. է:

Է. Յորժամ կայցէ համարակաց սխալումն հանդերձ պատրուակեալ տխտղոսիւ. զի թէպէտեւ չունիցի քահանայն զկարգաւորեալ կամ զյանձնեալ իրաւասութիւն, տակաւին առաջի նոյ վաւեր է արձակումն նորա, երբ գոյ և բարի հաւատք ապաշխարողին. որպէս թուեցաւ սրբազան ժողովոյն Սինհոդոսաց 'ի Պատաւեան խնդիր, որ եղև 'ի 11. դեկ. 1683. զորօրինակ՝ գիտեմք թէ գոլով ուրուք բանադրեալ գաղտնի՝ ստացեալ իցէ զժողովրդապետութիւն ինչ. որոյ առումն է նանիր, զի ունի արգել բանադրանաց. և սակայն առ ամենեսին համարեալ է իբրև Ճշմարիտ ժողովրդապետ. որպէս և կանոնական կրօնաւոր ոք ընկալեալ զիշխանութիւն յանձնեալ յամ մի, յեղերիլ տարւոյն տակաւին շարունակեսցէ զխոստովանութիւն՝ կարծելով ժողովրդեան թէ տակաւին ունիցի զիշխանութիւն խոստովանահայրութեան: Յայնպիսում դիպուածի ժողովուրդք առաջի նոյ կաննեան արձակեալք. վս զի զթերին իրաւասութ-ն ու եկեղեցին: Իսկ եթէ յետոյ ծանիցեն ապաշխարողք զպակասութիւն իրաւասութեան նորա, կամ գէթ յերկբայս լինիցին զվաւերութեան խոստովանութեան, պարտաւորին խոստովանիլ վերստին. որպէս յայտ արար ասացեալ սրբազան ժողովդ 'ի յիշատակեալ խնդիր պատաւեան. —. 2:

Ը. Յորժամ հաւանեալ խոստովանահայրն ունիցի զներհական կարծիս ստուգիւ հաւանական, մինաւանդ թէ հաւանականագոյն քան զհակառակն՝ վասն ունելոյ զիրաւասութիւն ար-

ձակելոյ զապաշխարող ոք, կամ զդիպուած ինչ, կարող է վաւերաբար և օրինաւորապէս արձակել ըստ հասարակ կարծեաց վարդապետաց. Բէն. Լամբէրդ. Գլ. Ղ. Յօ. 1. հմ. 117. և Փագնանոս 'ի գլ՝ Օ՛ ուտրուսքուէ. յղ. խոստովանահարց. հմ. 38: Վասն զի յայդ դիպուած թէպէտև 'ի կողմանէ իրեն չունէր խոստովանահայրն զիրաւասութիւն՝ զթերին լնոյր եկեղեցին, եդեալ թէ նա գործեալ իցէ խոհեմութեամբ գնալով ըզհետ հաւանականագոյն կարծեաց. և կայցէ տիտղոս պատրուակեալ, համարեալ ինքն որպէս խոստովանահայր հաւանեալ՝ հասարակաց սխալանօք. զի միաբան այսպէս ուսուցանեն վարդապետք: Նաև չէ պարտ 'ի դէմս ածել զդատապարտութիւն առաջին նախադասութեան յԻննովկ. ժա. ուրանօր հերքի վարիլն 'ի մատակարարութեան խորհրդոց հաւանականագոյն իսկ կարծեօք՝ թողեալ զապահովագոյնն. վն զի 'ի մերս դիպուած ոչ լինի զհետ գնալ լոկ հաւանականագոյն՝ այլ բարոյապէս ստոյգ կարծեաց, (որպէս յայտ առնեն վարդապետք,) որ 'ի մատակարարութիւն խորհրդոյ է օրինաւոր. մինչ զի ոչինչ սանանէ նշանակեալ դատապարտութիւնն. որպէս յայտ է 'ի նմա՝ որ արձակէ զապաշխարող ոք, որոյ իցէ զղջումն բեկման, և ոչ խորտակման:

Դ. 'Ի ժամանակս յոբելինի յորում շնորհէ պապն զիրաւասութիւն խոստովանահարց ընտրելոց յեպիսկոպոսէ տեղւոյն արձակել յամ դիպուածոց պահելոց ինքեան կամ եպիսկոպոսաց:

Հց. Յո՞ր և 'ի քանի՞ դիպուածս կորնչի կարգաւորեալ կամ յանձնեալ իրաւասութիւն խոստովանահօր:

պե. Երկոքին իսկ իրաւասութիւնքդ կորնչին, նախ՝ յորժամ ժողովրդապետն, կամ խոստովանահայրն անկանի 'ի բանադրանս վասն հրապարակաւ հարկանելոյ զկղերիկոս ոք. կամ յորժամ գրով հրատարակի յառաջնորդէ իւրմէ լինել նզովեալ, կախեալ, կամ անկանոնական: Երկրորդ՝ կարգաւորեալ իրաւասութիւն կորնչի. յորժամ ժողովրդապետ ոք ինքնին հրաժարի, և կամ ատենական իրաւամբք զրկի 'ի ժողովըրդապետութենէ իւրմէ: Երրորդ՝ յանձնեալ իրաւասութիւն կորնչի 'ի լրանալ պայմանեալ ժամանակին, որ վասն շնորհեցաւ նմա. կամ յառաջքան զլրումն ժամանակին, մինչ յետս կոչեսցի վասն կանոնական ինչ պատճառի:

պզ. 'Ի վերայ բերէ ծիսարանն. * Իսկ եթէ վտանգ մահու կայցէ 'ի վերայ, և չգուցէ խոստովանահայր հաւանեալ յեպիսկոպոսէ, որ և է քահանայ կարօղ է արձակել յոր և է բանադրանաց և 'ի մեղաց ||: Արդ՝ ասա ինձ, ո՞ր իցէ վտանգ մահու. կամ թէ նոյն իցէ ընդ կիտի մահուան: Եւ ևս թէ արդեօք ոմանք քահանայք՝ որք չիցեն ընտրեալ 'ի լսել զխոստովանութիւն, կարօ՞ղ իցեն յայնպիսում դիպուածի վաւերաբար արձակել:

պէ. Վտանգ մահուան ասի՝ յորժամ մահն բարոյապէս է հաւաստի, և գրեթէ անխուսափելի առ ծանր տկարութեան ապաշխարողին: Իսկ վտանգ մահու այն է՝ յորժամ յառիթս ինչ կամ 'ի պարագայս՝ խոհական մտօք կամ հաւանականաբար երկիւղ մահուն 'ի վերայ կայցէ. մինչ զի եթէ յայնժամ ոչ խոստովանեսցի ապաշխարողն՝ այլ ոչ ևս ունի կարօղ լինել խոստովանիլ. կամ զբաղմութիւն խոստովանահարց

գտանել, որպէս դէպ լինի զինուորաց 'ի մօտալուտ պատերազմի, կանանց յանդրանկածինս, և ճանապարհորդաց յերկար և 'ի վտանգաւոր նաւագնացութեան՝ յորում ոչ գտանի խոստովանահայր. սոյնպէս և որ աքսորի յանցանօք գըլխապարտութեան 'ի տեղի ինչ՝ ուր անպատիժ կարէ լինել սպանութիւն, ևլն: յայսպիսի դիպուածս որ և իցէ պարզ քահանայ կարող է արձակել, երբ չգուցէ ժամանակ գտանել զայլ քահանայ հաւանեալ: Օ այս ամենայն բազում առաւելութիւն իմն ինձ 'ի կէտ մահուան:

Ու երկրորդն ասեմ. որպէս զի կարող լիցի չհաւանեալ քահանայն վաւերաբար արձակել 'ի կէտի կամ 'ի վտանգի մահու յամ վերապահեալ դիպուածոց և 'ի բանադրանաց, պահանջի նախ՝ զի ապաշխարողն չկարիցէ գտանել զայլ քահանայ հաւանեալ. որպէս յուշ առնէ ծիսարանն, յասելն. * և չգուցէ խոստովանահայր հաւանեալ‖. սոյնպէս ևս՝ երբ կայցէ հաւանեալ քահանայ, բայց չունիցի հրաման արձակելոյ 'ի դիպուածոց և 'ի բանադրանաց վերապահելոց. և 'ի միւս կողմանէ կայցէ, կամ մարթ իցէ գտանել այլ խոստովանահայր, որ ունիցի զայդ իշխանութիւն. յայնժամ սա՝ և ոչ առաջինն կարող է վաւերաբար արձակել. վասն զի եկեղեցին տայ սոյնպիսեաց զիշխանութիւն արձակելոյ՝ ըստ որում չգուցէ անտանօր հաւանեալ և բաւական քահանայ վասն արձակելոյ զհօգեվարն:

Երկրորդ՝ զի քահանայն չիցէ մեղսակից ընդ ապաշխարողին 'ի մարմնական մեղս, և գտանիցի անդ գոնէ այլ քահանայ՝ (թէպէտև չիցէ հաւանեալ 'ի պէտս խոստովանութեան,) որ

կարող իցէ արձակել զհոգեւորն առանց ինչ գայթակղութ՟ե եւ վտահամբաւութ՟ե եթէ խոստովանահօր եւ եթէ ապաշխարողին ։ Ապա թէ ոչ՝ թէպէտեւ յայն վտանգ մահու խոստովանութ՟ին արարեալ ՚ի մեղսակցի՝ իցէ վաւեր՝ եթէ ապաշխարողն իցէ պատրաստական, սակայն խոստովանահայրն եթէ յօժարեսցի յայդպիսի գայթակղութ՟ի՝ լսելով զայնպիսի խոստովանութ՟ի, անկանի ՚ի բանադրանս վերապահեալս առ Պապն, որպէս նշանակեալ կայ ՚ի կոնդակն բենեդիկ. ԺԴ. Առաքելական պաշտաման. որ է պարզաբանիչ միւսոյ կոնդակի սկսելոյ՝ Խորհուրդն ապաշխարութ՟ե ։

Իսկ թէ խոստովանահարք կարօղ իցեն արդեօք արձակել զմեղսակիցս իւրեանց յորոց եւ իցէ այլոց մահուչափ մեղաց, պարտ է զհետ երթալ մասնաւոր սահմանադրութ՟եց թեմին եւ գաւառին ։ Չէ՛ օրէն խնդրել զանուն ապաշխարողին, եւ ոչ զընակութ՟ի նորա, եւ զայլ հանգամանս եւ զպարագայս՝ առանց բանաւոր պատճառի ։ Բաջ պատասխանի արար կին ոմն, թէ իմ անուն ոչ է մեղք ։ Եւ ոչ յայլ ապաշխարողս օրէն է յայտնել զանուն մեղսակցին, այլ միայն պա՛րտ է ասել զիւրոյ անձին զսեփհական մեղս ։

Երրորդ՝ զի խոստովանահայրն, որ գտանիցէ զհոգեւոր ոք ՚ի վերապահեալ մեղս կոնդակի ընթրեաց, պա՛րտի պարտաւորել զնա երդմնական պարտաւորութ՟բ գոնէ * վասն հաստատուն կալոյ ՚ի հրամանս եկեղեցւոյ, եւ հատուցումն առնելոյ եղելոյ վնասուն ‖. ապա թէ ոչ՝ ոչ միայն մեղանչել մեղանչէ մահուչափ մեղօք՝ այլ եւ անկանի ՚ի բանադրանս վերապա-

Հեալս, զի արձակեաց 'ի դիպուածոց կանգակի ընթրեաց առանց օրինաւոր իշխանութեան. վասն զի թէպէտ և քահանայապետն շնորհէ իշխանութիւն արձակելոյ 'ի դիպուածոց կանգակի ընթրեաց՝ 'ի կէտ կամ 'ի վտանգ մահու ում և է քահանայի, բայց շնորհէ զայն այսու պայմանաւ. զի պահանջեսցէ նախ 'ի հոգեվարէն զերդմնական պարտաւորութիւն * վասն հաստատուն կալոյ 'ի հրամանս եկեղեցւոյ, և հատուցումն առնելոյ եղելոյ վնասուն ‖ :

Այսպէս բացայայտանի ընթեռնումք 'ի վախճան կոնդակին ասացելոյ. առ յօդ. Երրդ. * Բայց արդ 'ի նախաձայնեալ դատակնքոյ՝ ոչ ոք 'ի ձեռն այլոյ, բայց միայն 'ի ձեռն հռոմայ Քահանայապետին, եթէ ոչ 'ի կէտ մահուան դնեալ, և ոչ իսկ յայնժամ, բայց եթէ երդումն զգուշութեան տալով՝ վասն հաստատուն կալոյ 'ի հրամանս եկեղեցւոյ, և հատուցումն առնելոյ՝ մարթասցի արձակիլ ‖ : Տես 'ի շգօշլութէ խոստովանահօր. գերք. ա. գլ. գ. հն. 26 : Եւ զայս յայնժամ պարտ է իմանալ՝ երբ ապաշխարողն կարող իցէ ձայնիւ, կամ այլով նշանաւ իմանալ և առնել զխոստումն այդպիսի : Ասացի 'ի կէտ մահու, յորժամ հոգեվար ապաշխարողն արձակի 'ի դիպուածոց վերապահելոց Պապին հանդերձ Բանադրանօք, կամ Եպիսկոպոսին հանդերձ Բանադրանօք, պարտի խոստանալ երդմնական խոստմամբ գէթ * յանդիման լինելոյ օրինաւոր առաջնորդին ‖ . այլ ոչ՝ յորժամ դիպուածն վերապահեալ Պապին կամ Եպիսկոպոսին՝ չիցէ կից ընդ բանադրանս ինչ. վասն զի յայնժամ պարտ է արձակել զնա առանց ինչ յառաջընթաց պարտաւորութեան յանդիման

լինելոյ. որովհետեւ ամ վերապահութիւք դա-
դարին 'ի կէտ մահուն :

---

### Յաղագս բարելաւութեան վարուց, և գիտութեան, և խոհեմութեան խոստովանահօր :

հդ. 'Ի վերայ բերէ ծիսարանն. * 'ի պաշտօնէի նորին պահանջի և բարելաւութի վարուց, գիտութի, և խոհեմութի, հա ||: Իբր զի 'ի խոստովանահայրն կարեւոր է ոչ միայն իշխանութի կարգի և իրաւասութե, այլ և բարի վարք, գիտութի, և խոհեմութի: Այլ արդ՝ մեկնեա ինձ նախ՝ որպիսի վարք բարի խնդրի առ բարւոք մատակարարութի խորհրդոյս. և կամ թէ արդեօք առանց այդորիկ լինիցի անվաւեր, կամ գէթ ապօրինաւոր մատակարարութիւդ: Երկրորդ՝ որպիսի գիտութի իցէ հարկաւոր առ վաւերութի. և որ առ օրինաւոր մատակարարութի: Եւ երրորդ՝ որպիսի և երբ իցէ կարեւոր խոհեմութի նորա:

ղե. Պատասխանեմ առ առաջինն, հարկաւոր է խոստովանահօր լինել 'ի շնորհս տյ: Ամին իրի եթէ 'ի պահու լսելոյ զխոստովանութի գտանիցի 'ի մահուչափ մեղս՝ զայնչափ մեղս սեղանակապտութե գործէ՝ զորչափ անձինս արձակէ. բայց այդու արձակումն ոչ լինի անվաւեր, որովհետեւ անարժանութի պաշտօնէին ոչ առնէ զխորհուրդն անվաւեր, ըստ որում սահմանեաց Ըղեմ հերեսիովտայց ժող. տրիդ. 'ի նիստ. 14. յղ. խոր. ապաշ. 'ի կան. ծ. * Եթէ ոք ասիցէ, թէ քահանայք՝ որ 'ի մեղս են, չու-

նին իշխանութեն կապելոյ և արձակելոյ՝ նզովեալ լիցի ։ Նա և ես առ պատշաճ մատակարարել զխորհուրդ, խնդրի 'ի խոստովանահայրն՝ ճշմարտութիւն ուշ ունել 'ի կրթութիւն առաքինութեան, և սեփական կատարելութեան. որպէս սրբութիւն գրէ Տէրն Կարոլոս յազգարարութիւս իւր առ խոստովանահայրս. յօդ. 5 ։ Ո՞զի զիա՞րդ մարթի կշտամբել և յարմարոյ քանցել զմոլութիւս յանձանց աշխարհողաց, և հաւանելի ընծայել նոցա զկրթութիւն քրիստոնէական առաքինութեան՝ ուր նա ինքն իցէ ախտաւոր և ցոփակեաց ։ Վասն այսորիկ Կղեմէս Ժերորդ 'ի կոնդակի իւրում Վէրնական. յօդ. 6. յայտ առնէ, թէ կարող է եպիսկոպոսն ժխտել կամ բառնալ զիշխանութիւն 'ի խոստովանահարց արտունացելոց անգամ՝ եթէ երբէք կեցցեն ցոփութեամբ ։ * Քանզի գլխաւոր հանգամանք պաշտօնէի խորհրդոյ ապաշխարութեան է անարատութիւն վարուց, և համեստ գնացք. անշուշտ վասն այսր պատճառի կարող է եպիսկոպոսն կախել կամ 'ի բաց հանել 'ի խոստովանահայրութեան զկանոնաւորս զառ 'ի յիւրմէ ընտրութիւն կարգեալս ։

'Ի վախճանի պարտ և արժան է քահանային ստէպ ուշ ունել կրթութեան աղօթից, եթէ առ ընդունելոյ յոյժ զլոյս առ որոշումն դիպուածոց, և եթէ առ չարատաւորելոյ զոգի իւր 'ի լսել անդ զբազմապատիկ անմաքրութիւս այլոց. Տե՛ս ազդու խրատաբանութեան՝ որով ազդ առնէ խոստովանահարց Տէրն Կարոլոս. յօդ. 10 ։ Քանզի ասէ հոգին Տէր 'ի գիրս սիրաքայ. ժգ. ա. * Որ ոք մերձենայ 'ի ձիւթ, շաղախի ։ Ապա վտանգ մեծ է խոստովանահօր յետնելոյ 'ի կըր-

թուլթէ մտաւոր աղօթից, որ է դեղ կարի զօրաւոր վասն չանկանելոյ 'ի մեղս, ըստ այնմ. * Յիշեա՛ զվախճանս քո՝ և յաւիտեան ոչ մեղիցես ||. Սիրաք. Է. 40. վասնզի մեծ է ասեմ շաղախեալ լինելոյ յաղտեղութեց. և 'ի հոգալ իւրում բուժել զվէրս ապաշխարողաց՝ ձգելոյ յանձն իւր զգարշելի հիւանդութիւս նոցա:

Ըստ երկրորդին՝ ապաքէն վերագոյնդ նշանակեալ է մեր զկարևոր կարևոր պայմանս յաղագս գիտութե խոստովանահօր, թէ ո՞ր իցէ հարկաւոր առ վաւերութի խորհրդոյն, և ո՞ր այն՝ որ խնդրի առ օրինաւոր մատակարարու նորին. ապա չէք այլ ասել մեզ մասնաւոր ինչ զսմանէ՝ բայց 'ի մէջ բերել զբանս ծիսարանին առ 'ի կշռել արթուն մտօք. * Գուն գործեսցէ յանձին ստանալ զևս մեծագոյնն ըստ կարի զգիտութի յայսմ կարգի, և զխոհեմութի, եթէ՛ անդադար աղօթիւք առ ած, և եթէ յընթերց հեղինակաց, մանաւանդ 'ի հռովմէական հրահանգէ, և 'ի խոհական խորհրդոյ փորձ եղելոց ||, ևա: Իցէ՛ թէ 'ի խոր տպաւորէին այս բանք 'ի սիրտս իմ խոստովանահարց, որք ցանկան յայսմ կրթութե չծանրաբեռնել երբէք զխիղճս մտաց ոչ զանձին՝ և ոչ զայլոց. զի՞ զի 'ի բանից ստոյ յայտնի լինի, թէ չէ՛ բաւական խոստովանահօր ումեք առ բարւոք կատարելոյ զպաշտօն իւր՝ գիտութի միջասահման, որպէս ոմանք առդնեն. այլ պահանջի գիտութի մեծ յոյժ՝ առ պէսպիսութե նիւթոյ՝ զորս պարտի գիտել: Եւ դարձեալ 'ի բանից անտի ծիսարանին լինի իմաստասիրել զեղանակն ստանալոյ զմեծ զայն գիտութի, իմա՛ նախ՝ 'ի ձեռն ստէպ ստէպ աղօթից: Որոյ վասն այսպէս գրէ

նըն Գաւրիլոս. յօդ. 10։ * Իսկ քանզի բազում են վտանգք 'ի մատակարարութեան այսր խորհրդոյ, այս է՝ կամ սխալել յորոշումն դիպուածոց և պարագայութեանց զհետ եկելոց. կամ յառաջատանել զարձակումն այնոցիկ՝ որք չենն արժանի. ապա անմարթ է քահանայի երթալ 'ի լուծել զխոստովանութիւն, մինչև խընդրեալ իցէ յիւր լոյս՝ միանգամայն և շնորհս առ 'ի չգործել վրիպակս ինչ. Իա ||։

Երկրորդ՝ յուշ առնէ խոստովանահարց ծիսարանն յաճախ դեգերիլ յուսումն ընտիր ընտիր հեղինակաց. և յաւէտ հրահանգին հռովմայ։ Սմին իրի որպէս պարտ է նոցա խորշիլ 'ի հեղինակաց, որք ընդ խիստ շաւիղ ընթանան, նոյնպէս և յորոց յընդարձակն հակամիտեն։ Իսկ առ 'ի զայդ առնել՝ հարկ 'ի վերայ կայ գիտել քաջ զդատապարտեալ նախադասութիւնս, որ վասն երկաքանչիւր ծայրայեղ զանցաւութեանց։ Իսկ զայն ևս գիտել պարտ է՝ թէ չէ բաւական խոստովանահօր ումեք՝ եթէ ուսեալ իցէ, և ընտրեալ և կարգեալ միանգամ 'ի խոստովանահայրութիւն, թէ ոչ հանապազորդէ յանդադար ուսումն. վասն զի * որ լքանէ զգիրս և զուսումն, յետնի 'ի գիտութենէ ||. 'Ի Գլ. ոչ Երբէդ. յաղագս յեանդարութեն. գլխ. 3։ Վասն այսորինակ Ուրբանոս Ը. 'ի կոնդակն. Յաւլ նուագ առ 'ի Դնջ. գրեալ 'ի 30. յունվարի. 1629. Թողու 'ի կամս եպիսկոպոսաց կարող լինել քննել միանգամ ևս և զկանոնաւոր խոստովանահարս՝ որոց ընկալեալ իցէ զիշխանութիւն խոստովանահայրութեան ընդ սահմանեալ ժամանակաւ, ոչ և տարւոյ միոյ. և 'ի խնդրել նոցա զհաստատութիւն՝ քննել վերստին զնոսա, թէ արդեօք

այն գիտութիւն զոր ցուցին յառաջնումն քննութեան անդ իւրեանց, կայցէ՞ անթերի 'ի նոսա հանապազորդեայ կրթութեամբ ուսման:

Յուսկ յետոյ յուշ առնէ ծիսարանն 'ի գլխուածս դժուարինս խորհուրդ հարցանել յեկեղեցական անձանց գիտնականաց, խոհականաց և փորձ եղելոց. զոր պարտ է իմանալ առաւելապէս զսեփական եպիսկոպոսէ, ըստ որում յայտնաբանէ Տրն Պաւղոս. յօգ. 11. յասել անդ իւրում. * Դիմեսցեն առ արքեպիսկոպոսն, եթէ պէտք լինիցին, առ որոշումն դժուարին խնդրոց ինչ անկելոց ընդ հակառակութեամբ. զի զնոսա եդ հոգին Սբ. տեսուչս՝ հովուել զեկեղեցի Այ. Գործ. Ի. 28:

Առ երրորդին ասեմ, կարի կարևոր է խոհեմութիւն 'ի խոստովանահայրն. և մասնաւորապէս նախ՝ 'ի հարցաքննել անդ զերիտասարդս, և զմանկամարդս, և ընդհանրապէս զկանայս առ հասարակ 'ի նիւթ վեցերորդ պատուիրանին: Երկրորդ՝ 'ի դնել զապաշխարանս թէ ըստ քանակութեան, և թէ ըստ որակութեան մեղաց, և ըստ հանգամանաց վիճակի ապաշխարողաց: Երրորդ՝ 'ի լուսաւորելն կամ 'ի քօղարկելն զտգիտութիւն ինչ՝ յորում գտանիցի ապաշխարօղն. և զի կարի ծանրակշիռ է բանս, ճառեսցուք զայդմանէ 'ի բացատրել մեր անդ զպաշտօն վարդապետի, զոր ունի վարել խոստովանահայրն: Չորրորդ՝ 'ի յապաղելն առ սակաւ կամ յերկար ժամանակ զարձակումն ապաշխարողաց, երբ զայդ պահանջէ վիճակ նոցա. որ և ես պարզեսցի 'ի տեղւոջ իւրում:

## Յաղագս խորհրդական նիւթոյ ։

Հց. Ի վերայ բերէ ծխարանն. * Հանդերձ կնքով գաղտնեաց խոստովանութ՟ե՝ ընդ ճիշդ և յաւէժական լռութ՟բ ‖ ։ Արդ՝ ասա ինձ , նախ՝ թէ յորո՞ց իրաւանց պարտաւորի խոստովանահայրն առ այդ կնիք ։ Երկրորդ՝ քանի՞ մեղս գործիցէ՝ որ զայդ լուծանէ ։ Երրորդ՝ քանիպատի՞կ մարթ է լուծանիլ ։ Չորրորդ՝ արդեօք բաց 'ի խոստովանահօրէ պարտաւորեա՞լ իցեն առ այս կնիք և այլք ։ Հինգերորդ՝ զի՞նչ ինչ իրք անկանին ընդ կնքով ։ Եւ վեցերորդ՝ յո՞ր պատիժ անկանի՝ որ քակէ զկնիքդ ։

Պտս. Պատասխանեմ առ առաջինն. թէ խոստովանահայրն պարտաւորի առ կնիք խորհրդական 'ի բնական օրինաց , 'ի դրական ա՟ծային օրինաց , և յեկեղեցական օրինաց ։ Վ՟ն որոյ 'ի գլ. Ամենայն անձն՝ եթէ այր և եթէ կին. յաղագս ապաշխ. և Թող. այսպէս կարգեալ կայ. * Ամենայնիւ զգո՛յշ լիցի քահանայն՝ ո՛չ բանիւ , ո՛չ նշանաւ , և ո՛չ այլով իւիք օրինակաւ մատնիչ լինել բնաւ մեղաւորին. այլ եթէ կարօտ գտցի խոհականագոյն խորհրդոյ , զայդ առանց իրիք յայտարարութ՟ե անձին՝ զգուշութ՟բ խնդրեսցէ ‖. Ի՟ա ։ Նմին իրի խոստովանահայրն ո՛չ երբէք և ոչինչ իւիք կարող է 'ի յայտ բերել զյանցաւորն , այլ միայն՝ եթէ հարկ 'ի վերայ կայցէ խորհրդակցիլ ընդ ումեք՝ մարթի ըզգուշութ՟բ խորհուրդ հարցանել առանց 'ի վեր հանելոյ զանձն ապաշխարողին ։

Առ երկ՟դն ասեմ. թէ խոստովանահայրն քակելով զկնիքն խորհրդական՝ միով և եթ ներ-

գործութե̄ գործել զերիս մահուչափ մեղս ։ Նախ՝ անհաւատարմութե̄ ընդդէմ բնական գաղափարեաց զոր լուծանէ ։ Երկրորդ՝ սեղանակապտութե̄ մ̄ն անիրաւելոյ ընդդէմ խորհրդոյն ։ Երրորդ՝ բամբասանաց 'ի յայտ ածելով զծածկեալ մեղս ապաշխարողին ։

Բ.ռ. Երրդն՝ ասեմ. թէ քակել զկնիքն լինի ձայնիւ և նշանօք ․ Ը̄ նշանակելոյ նախագրեալ կանոնին ։ Ձայնիւ՝ ուղղակի կամ անուղղակի յայտնի առնելով զանձն ապաշխարողին հանդերձ յանցանօք նորա ։ Ուղղակի , զորօրինակ՝ Պետրոս խոստովանեցաւ ինձ զմեղս շնութե̄ ։ Չեղէ կարող արձակել զգայլոս , զի չունէի զիշխանութի̄ ։ Իսկ անուղղակի՝ եթէ ասասցէ. 'ի մէջ ա̄մ ապաշխարողաց՝ զորոց այսօր լուայ զխոստովանութի̄ս՝ 'ի նախկինն և եթ չգտի զնիւթ ծանր ։ Կամ թէ այսօր լուայ զխոստովանութի̄ երկուց քահանայից զպետրոսի և պօղոսի ․ որդարև պետրոսն է արժանաւոր քահանայ ․ յոր հաղիւ հազ գտի զնիւթ բաւական առ 'ի տալ նմա զարձակումն ․ զայլ ոչինչ ասելով զանձնէ պօղոսին ։ Նշանաւ՝ եթէ խոստովանահայրն ժխտեսցէ զվկայութի̄ խոստովանութե̄ ապաշխարողին , զոր ոչն կարաց արձակել ։ Եթէ զլասցի զհաղորդութի̄ անընդունակ ապաշխարողի , թէպէտև մեկուսի խնդրեսցէ ։ Եթէ 'ի յանդիմանել անդ զապաշխարողն՝ բարձրացուսցէ զձայնն , մինչև լսելի լինել ։ Եթէ 'ի լսելն զմեղս՝ բախեսցէ ձեռօք կամ ոտիւք , կամ 'ի խորոց սրտէ յոգւոց հանիցէ ։ Եթէ յեղանել իւրում 'ի խոստովանարանէ անտի՝ խոժոռ դէմս ցուցցէ առ ապաշխարողն ․ Եւ̄ ։

Առ չորրորդն ասեմ. թէ բաց 'ի խոստովանահօրէ՝ (որ և ոչ ընդ ապաշխարողին արտաքոյ խոստովանութեան կարէ խօսիլ զմեղաց նորա խոստովանելոյ՝ առանց մասնաւոր հրամանի հաճութեան նորա. ապա թէ ոչ՝ և յայտ իսկ դիպուած լուծիչ գտանի կնքոյն,) պարտաւորին առ կնիքն, նախ նոքա՝ որոց խոստովանահայրն սեղանակապտութեամբ իւր յայտնեսցէ զմեղս, և կամ որոց 'ի սակս խորհուրդ հարցանելոյ յանզգոյշս 'ի յայտ բերցէ խոստովանահայրն զյանցանս և զյանցաւորն միանգամայն։ Երկրորդ նոքա՝ որք կամ առ չարութեան, և կամ դիպուածով իմն լուեալ իցեն զմեղս ապաշխարողին 'ի խոստովանիլ նորա։ Երրորդ թարգմանն՝ զոր 'ի խոստովանութեան 'ի կիր առեալ իցէ ապաշխարողն ոչ գիտելով զբարբառ երկրին։ Չորրորդ նա՝ որ անզգամութեամբ ձևացեալ իցէ իբր խոստովանահայր, եթէ աշխարհական ոք իցէ, և եթէ եկեղեցական, և կամ քահանայ՝ որ չունի զիրաւասութիւն, և է այսպիսի կեղծեօք լուեալ իցէ զմեղս ապաշխարողին։ Հինգերորդ նա՝ որոյ ընթերցեալ իցէ զմեղս գրեալս յապաշխարողէն՝ առ 'ի խոստովանել զնոսա, ևն։

Առ հինգերորդն ասեմ. թէ այն ամենայն բան՝ որ ասի յապաշխարողէն առ խոստովանահայրն 'ի կարգի խոստովանութեան, թէ և յինքեան չիցէ մեղք, բովանդակն անկանի ընդ կնքով խոստովանութեան. զորօրինակ՝ թէ ոք իցէ քահանայ, կամ աստիճանաւոր. ամուսնացեալ, կամ ազատ. ընչաւէտ, կամ աղքատ. առողջ, կամ հիւանդ, ևն. զի այս ամենայն մարթի լինել հարկաւոր առ 'ի լսել՝ 'ի պէտս նիւթական ամբողջութեան խոստովանութեան, կամ 'ի պէտս գիտելոյ

խոստովանահօր առնել զարժանն վն պարտաւորելոյ զոք 'ի հատուցումն, կամ յապաշխարանս ։

Առ վերջինդն պատասխանեմ. թէ 'ի յիշատակեալ գլուխն, * Ամենայն ոք՝ եթէ այր և եթէ կին ||. 'ի վերայ պատժոց՝ ընդ որովք անկանի որ միանգամ քակէ զխորհրդական կնիքն՝ զայս ինչ ընթեռնումք. * Որ ոք իշխէ յերևան ածել զ'ի յատենի խոստովանութե յայտնեալ ինքեան մեղս, զայնպիսին ոչ միայն 'ի քահանայական պաշտամանէ պարտ է ընկենուլ, այլ և փակել յանձուկ մենաստանի ուրեք առ առնել զապաշխարութի մշտնջենաւոր ||։

Բայց սակայն տարակոյս ծագի աստանօր. վասն զի ասէ կանոնն. * Որ ոք իշխէ յերևան ածել զ'ի յատենի խոստովանութե յայտնեալ ինքեան զմեղս ||. և ոչ ասէ զմեղաւորն։ Աստի երևի կանոնն զընդդէմն ասել իւրոյն նախասացեալ բանից, երբ հրաման տայր՝ զի * եթէ կարօտ գտցի խոհականագոյն խորհրդոյ, զայդ առանց իրիք յայտարարութե անձին՝ զգուշութե խնդրեսցէ ||. զոր չէ հնար առնել առանց 'ի յայտ բերելոյ զմեղս լուեալս 'ի խոստովանութե ։

Պատասխանի առնէ գիտնականն Փագնանոս. 'ի 4Լ. Պաշտամն. յդ. տպագ. և Ռող. 45. 23. ան. թէ այն խոստովանահայր, որ առանց ինչ պատճառի յայտնեսցէ զմեղս և եթ լուեալս 'ի խոստովանութե՝ առանց բնաւ 'ի յայտ բերելոյ զանձն ապաշխարողին, թէպէտ և չէ քակիչ խորհրդական կնքոյ՝ տակաւին ինքն մեղանչէ, զի գործէ ընդդէմ արգելմանն եկեղեցւոյ. սակայն ոչ է պատժելի պատժովք՝ որ

եղեալ կան 'ի նախասաց կանոնի. յորս անկանի միայն այն խոստովանահայր՝ որ յայտնէ ըզմեղս լուեալս 'ի խոստովանութե՟ յարաբերու՟ առ ապաշխարողն. այսինքն՝ յորժամ մարթի 'ի յայտ գալ անձն նորա։

Ո՛չ միայն դիպուած կարէ լինել՝ յորում դատաւորեսցի պարտաւորութիւն խորհրդական կնիքոյ. զորօրինակ՝ եթէ խոստովանորդին տացէ խոստովանահօր հրաման խօսելոյ. վ՟ զի օրէ՟ն է իւրաքանչիւր ումեք հրաժարիլ յիրաւանց իւրոց։ Որպէս խօսի Տ՟րն Թովմաս, և այլք։ Իսկ Սկոտ, Ալէյին, Դուրանդոս, Տ՟րն Բոնավէնդուրա, և այլ սկովտեանք, բաց 'ի Պոնկիոսէ, ասնդէն՝ թէ որպէս զի օրէ՟ն լիցի այդ խոստովանահօր, պարտի լսել զայն մեղս արտաքոյ խոստովանութե՟. վ՟ զի պարտաւորու՟ կնքոյ ոչ է լոկ 'ի նպաստ ապաշխարողին, այլ և առ 'ի յարգութե՟ խորհրդոյ խոստովանութե՟՝ առ չառնելոյ զայն ատելի։ Եւ ես՝ պարտաւորութիւս այս չունի տեղի 'ի ծածկական և 'ի կեղծ խոստովանութե՟. միայն թէ յայդ դիպուած ես պարտ է լսել վ՟ խոհեմութե՟։

Եթէ ոք հարցեալ լիցի վասն մեղաց՝ զորս լուաւ 'ի խոստովանութե՟, կարող է երդմամբ չափ ասել՝ չգիտել զայն. վ՟ զի ոչ գիտէ զայնս որպէս մարդ, այլ որպէս պաշտօնեայ Ա՟յ։ Եթէ դատաւորն հարցանիցէ, թէ խոստովանեցուցե՞ր զպետրոս. կարէ առնել պատասխանի, այո. ապա եթէ երկրորդիցէ զհարցուածն, թէ ե՞տուր նմա արձակումն, ունի ասել՝ ես զիմ պաշտօն արարի։

հշ. Են եպիսկոպոսունք, որք չկամին տալ զիշխանութի՟ արձակելոյ 'ի դիպուածոց՝ զորս իւ-

քեանց ունին պահեալ, մինչև խոստովանահայրն՝ որ խնդրէ զայն իշխանութի՝ ո՛չ յայտնի արասցէ նոցա զմասնաւոր դիպուածն. արդ՝ ասա ինձ, արդեօք կարէ՞ և պարտի խոստովանահայրն յայտնել զդիպուածն առանց քակելոյ զխորհրդական կնիքն, եթէ գործել ընդդէմ արգելմանն եկեղեցւոյ ըստ վերագոյնդ ասացելոց:

Պտ. Որդարև իրաւամբք ոմանք յեպիսկոպոսաց խելամուտք տգիտութե խոստովանահարց՝ կամին հասու լինել վերապահեալ դիպուածոցն՝ զորմէ խնդրի իշխանութի արձակելոյ, առ՚ի կարօղ լինել կամ ժխտել զայնպիսի իշխանութի, և կամ հրահանգել՚ի շնորհելն, թէ զիա՞րդ վարիլ ունի խոստովանահայրն յարձակելն՚ի խնդրեալ դիպուածոյն: Այլ իբր որպէս խոստովանահայրն՝ երբ պէտս ունի խորհուրդ հարցանելոյ յայլմէ, կարօղ է առանց 'ի յայտ բերելոյ զապաշխարողն՝ զգուշութբ պատմել ընդմէջս լուեալս 'ի խոստովանութե, նոյն օրինակ կարօղ է վն նոցին պատճառաց յայտնի առնել եպիսկոպոսին զդիպուածն նովին զգուշութբ 'ի ստիպել հարկին. որպէս իմաստութբ ուսուցանէ Փագնանոս 'ի յիշատակեալ տեղին. Ըէ. 44:

Հց. Մի՞թէ կարօ՞ղ է խոստովանահայրն վարիլ գիտութբ, զոր ստացաւ 'ի խոստովանութե անդ, առ'ի խափանել զչար ինչ զհոգևոր կամ զմարմնաւոր:

Պտ. Ո՛չ երբէք, յորժամ'ի կիրառութէ այդր գիտութե կարէ ծագել վնաս ինչ ապաշխարողին, թէ և այդ վնաս՝ առ բաղդատութբ վնասուն՝ որ խափանի կիրառութբ այնր գիտութե

փոքրիկ իցէ յոյժ՝ նաև յարաբերութիւնք առ անձն ապաշխարողին . զորօրինակ՝ ժողովրդապետի ուրուք կամելով հրաժարել 'ի պաշտամանէ իւրմէ 'ի շնորհս տիտղոսի՝ զոր ժանտաժուտ ոք լինել գիտէ 'ի խոստովանութենէ անտի նորա , ոչ կարէ լոկով առթիւ այսր ծանօթութեան յետս կալ 'ի գործադրութենէ հրաժեշտ տալոյ . որպէս յայտ է 'ի դատապարտութենէ , զոր արար ժողովն սրբազննութեան 'ի Նոյ. 8. 1682. * Մարթ է վարիլ գիտութեամբ՝ զոր ստանայ ոք 'ի խոստովանութենէ , միայն թէ լինիցի առանց ուղղակի կամ անուղղակի յայտնութեան և ծանրութեան ապաշխարողին , եթէ ոչ այլ ինչ ծանրագոյն յառաջ գայցէ յոչն վարելոյ , առ որոյ համեմատութեամբ՝ առաջինն իրաւամբք յոչինչ գրելի իցէ : Յոր յաւելեալ լինի զկնի բացատրութիւն կամ կոպարաւորութիւն , թէ պարտ է իմանալ զվարելոյ գիտութեամբ ստացելով 'ի խոստովանութենէ՝ հանդերձ ծանրութեամբ ապաշխարողին , 'ի բաց առեալ զնմ յայտնութիւն , և 'ի դիպուածի՝ յորում բազմօք ծանրագոյն ծանրութիւն նմին ապաշխարողի յառաջ գայ յոչն վարելոյ ‖ . որ այն իսկ է նախակարգեալ դիպուածն :

Կղեմէս Ը. և Ուրբանոս Ը. արգելին կանոնաւորաց՝ չվարել զայնպիսի տեղեկութիւնս առեալս 'ի խոստովանութենէ՝ 'ի պէտս արտաքին տնտեսութեան իւրեք : Ուստի ոչ է արժան խոստովանահօր լռիկ պատժել, և զանխուլ ընդոտնել զխոստովանորդին : Տէնա ծխարանն Տուղեան թեմի՝ յուշ առնէ ժողովրդապետի չժխտել իւրում խոստովանորդւոյ զվկայական գիր՝ յաղագս բարի վարուց նորա , զոր 'ի խոստովանութենէ գիտէ չարագործ ոք լինել : Իո-

վանդակ պատճառ կնքոյն այն է, զի խոստովանութիւն մի՛ լինիցի առաւել դժուարին, ծանր, և տաղտուկ, և մի՛ ատելի լինիցի ։ Յաղագս այսորիկ եկեղեցին սահմանեաց ծանր ծանր պատիժս ընդդէմ կնքալուծից ։

---

### Պաշտօն խոստովանահօր ըստ որում դատաւոր, բժիշկ, և վարդապետ ։

Հջ. Ընթեռնումք 'ի ծիսարանն զառաջիկայ բանս՝ մեծապէս ուշադրելոյ արժանիս. * Նախ քան զա՟մ յիշեսցէ խոստովանահայրն, թէ բարձեալ բերէ յանձին իւրում զդէմս դատաւորի և բժշկի միանգամայն. և թէ՝ կարգեալ է յա՟յ պաշտօնեայ ա՟ծային արդարութ՟ե միանգամայն և ողորմութ՟ե. որպէս զի իբրև միջնորդ ընդ ա՟ծ և ընդ մարդիկ՝ խնամ կալցի պատուոյն ա՟յ, և փրկութ՟ե հոգւոց ‖. Նա ։ Ուր ահա ասէ. թէ պաշտօնեայն խորհրդոյ ապաշխարութ՟ե պարտի վարել զպաշտօն դատաւորի, բժշկի, և վարդապետի. և թէպէտև զվարդապետականն պաշտօն ոչինչ յայտնի նշանակէ ծիսարանն, բայց լուելեայն պահանջէ զայն ստորև 'ի Ըէ-ն 17. երբ պարտաւորէ զխոստովանահայրն ուսուցանել ապաշխարողին՝ զորս պարտ է նմա գիտել. և լուսաւորել զմեղադրելի տգիտութ՟ե նորա, յորում գտանիցի ։ Յոր սակս վարդապետք համօրէն ուսուցանեն, թէ պաշտօն խոստովանահօր է լինել դատաւոր, բժիշկ, և վարդապետ ։ Արդ՝ մեկնեա՛ ինձ նախ՝ զպաշտօն խոստովանահօր ըստ որում է դատաւոր ։

պէտ. Նախ զառաջինն՝ պաշտօն խոստովանա-
հօր ըստ որում դատաւոր՝ է հարցաքննել զա-
պաշխարողն իւիք իւիք հարցմամբք որք անկ
են ամենեցուն առ հասարակ. զորօրինակ՝ են
այնք՝ զորս նշանակէ յիշատակեալդ ծիսարան.
'ի հճ. 15. * Իսկ և իսկ խոյզ և խնդիր արաս-
ցէ խոստովանահայրն զվիճակէ նորա. և թէ
քանի՛ ժամանակք են՝ յորմէ հետէ խոստովա-
նեալ իցէ ||, ևն. որպէս ունիմք բացատրել յիւ-
րումտեղւոջ: Այլ ևս մասնաւոր հարցուածովք՝
ըստ պահանջելոյ յանցանացն. որպէս ազդ առ-
նէ ծիսարանն 'ի Եէ. 19. անդ. առէլ. * Եթէ
խոստովանորդին զթիւս (մեղաց անգիտանայ)
ևն, քահանայն հարցցէ զնա խոհեմութբ ||:
Բայց սակայն բաց 'ի հանրական և 'ի մասնա-
ւոր հարցուածոցդ, որք լինելոց են առ իւրա-
քանչիւր ապաշխարողս, յաւէտ պարտաւորի
խոստովանահայրն հարցանել զապաշխարողն 'ի
քառեակ դիպուածս: Նախ՝ յորժամ իմանայ,
թէ ապաշխարողն առ իւրոյ պակասութե չասէ
զայն իմ՝ զոր պարտ էր ասել. և այս կամ առ
պակասութե կարևոր քննութե, և կամ յայլ
ինչ իրաց սակս: Երկդ՝ յորժամ ապաշխարողն
առ տգիտութե իւրոյ չգիտաց գտանել զյան-
ցանս իւր, և եկեալ է 'ի խոստովանութի այ-
նու յուսով, թէ խոստովանահայրն օժանդա-
կեսցէ նմա հարցաքննութբ իւիք. որ և ստէպ
պատահէ ընդ գեղջուկ և ընդ տխմար անձինս:
Երրորդ՝ յորժամ ապաշխարողն թէպէտև 'ի
քնին մատուցեալ իցէ ըճ կարի, սակայն յայսր
ամի վերայ, կամ վն երկարութե ժամանակին
անցելոյ, կամ վն բազմութե իրացն չեղև բա-
ւական ճանաչել զամ մեղս իւր. կամ յետ ճա-

նաչելոյն՝ չունի սերտեալ 'ի յուշի, կամ անբաւական է յիշողութե՟ 'ի միտ բերել զնոսին : Զիդ՝ յորժամ խոստովանահայրն ստուգիւ գիտասցէ, թէ ապաշխարողն ունի ինչ մեղս՝ զորմէ նա լռէ. և ինքն ոչ կարէ գտանել, կամ խոհական մտօք գտանել, թէ արդեօք խոստովանեալ իցէ զայն. կամ թէ գիտէ հաւաստեաւ թէ նա կեայ ընդ հարճի, կամ կայ 'ի հրապարակեալ թշնամութե՟, և 'ի սոյին նմանս : Եւ այս պարտաւորութի՟ ծնանի 'ի յատուկ պաշտամանէ խոստովանահօր՝ ըստ որում է դատաւոր : Վ՟ն որոյ պարտի գուն գործել՝ զի դատաստանն իցէ կատարեալ, և խորհուրդն պաշտեսցի ըստ օրինակին՝ որով է սահմանեալ : Նմին իրի որպէս ինքն քահանայացեալ է առ 'ի թողուլ զա՟մ մեղս մահուչափս, սոյնպէս և յատենի նորա պարտին ամենայնն ամբաստանիլ ոչ տեսականապէս և եթ՝ այլ և նիւթապէս ը՟ կարի :

Երկրորդ պաշտօն խոստովանահօր ը՟ որում դատաւոր՝ է ժխտել, յապաղել, կամ տալ զարձակումն. զորմէ լիցի մեկն ես բան յերրում տեղւոջ :

Երրորդ պաշտօն դատաւորին է դնել զպատիժս, կամ պարտաւորել առ առնել զապաշխարանս. զորոյ զորպէսն և զորքանն բացատրեցից նոյնպէս այլուր :

Չորրորդ 'ի կատարած ա՟մի՝ պաշտօն խոստովանահօր ըստ որում դատաւոր՝ հաստատի 'ի դատապարտել, և 'ի պարտաւորել զապաշխարողն, յետս դարձուցանել զխորհեալ համբաւն, կամ զինչս, և խրամակարկատ առնել զպատիւն, կամ զվնասն՝ զոր ետ անձին ումեք.

զօրօրինակ՝ թշնամանօք, կամ սպանումք. նոյնպէս դարման տանիլ և տուեալ գայթակղութեան, խրատել և ուղղել զընկերն, յորժամ պարտաւորեալ իցէ ապաշխարողն առ այս, կամ 'ի սիրոյ՝ և կամ յարդարութենէ. առնել զողորմութիւն, երբ պարտաւորիչ է 'ի պատուիրանէ. զյանցանս այլոց զեկուցանել՝ որում արժան իցէ, 'ի սախպել հարկին. յանդիման առնել զանձն օրինաւոր մեծաւորի՝ առ ընդունելոյ 'ի նմանէ զարձակումն 'ի դիպուածոց կամ 'ի բանադրանաց՝ յորոց խոստովանահայրն չկարէ արձակել. զորմէ լիցի բան յիւրում տեղ։

հդ. Զի՞նչ հաստատի պաշտօն խոստովանահօր իբրև բժշկի։

պտ. Հաստատի յերիս. նախ՝ 'ի վերայ դնել ապաշխարողին զդիպող միջոցս առ 'ի խորշելոյ 'ի վերստին անկմանէ 'ի մեղս։ Երկրորդ՝ կարգել նմա ապաշխարանս բժշկարարս, որք անընդհատ պահեսցեն զնա 'ի վերստին անկմանէ։ Երրորդ՝ պարտաւորել զնա խոյս տալ 'ի վըտանգաց և յառիթից մեղանչելոյ։

Ըստ առաջնոյն պարտի խոստովանահայրն 'ի հաւան ածել զապաշխարողն ընտրել իւր խոստովանահայր զոք հաստատուն, նախանձայոյզ, և գիտնական. առնել զամենայն աւուրս զքննութիւն խղճի մտաց. և եթէ գթեսցէ 'ի մահուչափ ինչ մեղս՝ փութասցի առնել զներգործութիւն զղջման, և զկամաւոր ապաշխարանս ինչ, և խոստովանիլ ըստ կարի փութով։ Եւ ես պատուէր դնել նմա յաճախել 'ի խոստովանութիւն և 'ի հաղորդութիւն. և եթէ ընդունակ իցէ՝ առնել յամենայն աւուր ցկէս ժամ զմտաւոր աղօթս՝ առաւելապէս 'ի վերայ չորից վերջնոց. որ է

դարման ազդողագոյն առ՚ի չանկանիլ վերստին,
ըստ անսուտ բանի հոգւոյն սբյ. * Յիշեա՛ ըզ-
վախճանս քո՝ և յաւիտեան ոչ մեղիցես ‖ ։ Իսկ
յոչն յաջողիլ տալ կատարել զայս ապաշխարու-
դին, պատուիրել նմա ընտրել զօր մի գէթ յա-
միսն, յորում մեկուսացեալ առանձինն խորհես-
ցի զյաւիտենական սկզբունս. նոյնպէս յորդոր
լինել նմա զօր ամ ընթեռնուլ, կամ լսել ըզ-
հոգևոր գիրս ինչ ։

Ըստ երկրորդին, հրամայել ապաշխարողին
կալ՝ երբեմն անսուաղ, ձաղկել զանձն, լինել
խարազնազգեաց, գետնախշտի ննջել. այլ այս
ամ լիցի պատկանեալ ը վիճակի, ը պայմանի,
և ըստ ուժոյ ապաշխարողին ։

Ըստ երրորդին, 'ի մասնաւորի այնմ որ գը-
տանի 'ի մերձաւոր յականմայ առիթս, պատ-
ուիրել չգտանիլ երբէք միայն ընդ միայնում ։
Իսկ առ այլս՝ որք իցեն 'ի վտանգի վերստին
անկանելոյ 'ի զգայական մեղս՝ դնել պարտա-
ւորութիւն 'ի բաց կալոյ 'ի կենակցութենէ ընդ
կանայս, թէ և իցեն համեստք, չհայիլ երբէք
կամաւ յերեսս նոցա. խնամով պահել զհնդե-
սին զգայարանս մարմնոյ. հրաժարիլ 'ի համա-
դամ և 'ի սննդարար կերակրոց, 'ի զօրեղ և
ոգելից գինւոյ. հեռանալ 'ի գինետանց՝ որ
միանգամ սովոր իցէ արբենալ, 'ի բաց կալ 'ի
խաղուց՝ որ միանգամ սովոր իցէ երդնուլ և
յիշոցնատու լինել. փախչել յընկերութենէ դա-
տարկասիրաց, որ միանգամ սովորեալ իցէ բամ-
բասել ։ Նա քանզի դժուարագոյն է դարման
գտանել ապաշխարողին ունակացելոյ 'ի ցոփու-
թիս, լաւ համարիմ առաջի առնել աստանօր
'ի պէտս խոստովանահարց զարժանի լսելոյ ըզ-

վարդապետութիւն կարդինալ Տոլետոսի 'ի բռ-
վանդակումն իւրում. Գիրք. Է. Գլ. ԾԳ. * Մեղք
ցոփութեան (կամ թուլամորթ մարմնասիրութեան)
կարի դժուարաքննելի է. վն՟ զի պատճառն
միշտ կից է ընդ մարդոյ. և միանգամայն է
այնչափ հանրական մեղք, մինչև որպէս ինձ
թուի՝ մեծ մասն դատապարտելոց յայս ախտ է
վարակեալ: Ո՛չ կարծեմ զայլ դեղ գործունեայ
լինել այժմ, բայց զի ստէպ ստէպ խոստովա-
նեսցի ոք մի և նոյն խոստովանահօր. որպէս
երիցս յեօթնեկի խոստովանելով, եթէ հնար
ինչ իցէ: Քանզի խորհուրդս այս է սանձ մեծ
յոյժ. և որ ոչն 'ի կիր արկանէ զայս, մի՛ ակն-
կալցի յուղղումն գալ, եթէ ո՛չ ա՟ծագործ սքան-
չելեօք՝ որ է առանձնաշնորհութիւն դուն ուրեք
գտանելի‖. Նռ: Ուր արժան է 'ի միտ առնուլ,
թէ 'ի խոստովանութիւնս՝ զորս ոք պարտաւորէ
զապաշխարողն առնել երիցս 'ի շաբաթու՝ չէ
պարտ յամ՟ նուագի արձակումն տալ, ցորչափ
չերևի 'ի նմա երևելի նշան ուղղութեան, և ա-
պաշխարողն չառնէ յիւրմէ կողմանէ՝ զոր կարէ
առնել՝ առ 'ի չանկանիլ. բայց տակաւին միշտ
է օգտակար ստէպ խոստովանիլն՝ թէ և չընդու-
նիցի զարձակումն, առ 'ի զօրացուցանել որ քան
զօր զապաշխարողն յորդոր խրատուք և գոր-
ծունեայ ազդարարութեամբք:

Հր. Ո՞ր իցէ պաշտօն խոստովանահօր իբրև
վարդապետ կամ ուսուցիչ:

Պտ. Հաստատել գլխաւորաբար յայն՝ զի յոր-
ժամ խոստովանահայրն յընթացս խոստովանու-
թեան 'ի միտ առնու թէ ապաշխարողն անկեալ
կայ ընդ ծանր պարտաւորութեամբ առնելոյ, կամ
չառնելոյ ինչ յօր և իցէ նիւթ բնական, կամ

ա՟ծային, դրական կամ մարդկային օրինաց՝ որ անկ է հասարակաց, կամ սեպհական է վիճակի ապաշխարողին, պարտի ազդ առնել նմա և լուսաւորել զնա. վ՟ն զի որպէս խոստովանահայրն ըստ որում դատաւոր պարտաւորի տալ կամ ժխտել ապաշխարողին զարձակումն, որ՟պս և զի մարդ տեսանէ զնա արժանի կամ անարժան գոլ. և ը՟ որում բժիշկ պարտի սահմանել զապեղանիս, և զկարևոր զգուշութիւս, որպէս զի մի՛ գթեսցէ վէրստին 'ի մեղս, սոյնպէս և ը՟ որում վարդապետ՝ պարտի հրահանգել զնա՝ յորժամ ճանաչէ զնա պարտաւորեալ առ առնել կամ չառնել զայս ինչ. Թէ և ապաշխարողն գտանիցի յանմեղադրելի և յանյաղթելի տգիտութե՟, կամ 'ի միամտութե՟ խղճի. որպէս ասացի 'ի մօտոյ: Ա. առաւել պարզել զիրողդ՝ մա՛րթ է յերիս դիպուածս վերածել: Նախ՝ յորժամ ապաշխարողն խնդրեսցէ հրահանգիլ: Երկ՟դ՝ յորժամ ո՛չ խնդրեսցէ, բայց երևեսցի 'ի նմա յօժարամտութ՟ի առ'ի լուսաւորիլ: Եր՟դ՝ յորժամ ո՛չ խնդրեսցէ, և ո՛չ ևս յայտ իցէ՝ թէ ունի օգտիլ, մանաւանդ թէ երկբայելի իցէ, և կամ յայտնի ևս երևի թէ պտուղ ինչ ո՛չ քաղիցի անտի, այլ առաւել խիթալի, կամ յայտնի իցէ թէ ունի վնաս ծագել:

'Ի դիպուածն առաջին, յորժամ ապաշխարողն խնդրեսցէ հրահանգիլ, ո՛չ երբէք կարող է խոստովանահայրն անհոգ լինել առնել զա՟մ՝ որ կարևոր իցէ առ ուղղելոյ զնա 'ի ճանապարհ փրկութե՟. ապա թէ ո՛չ՝ պակասելով պակասի ծանուցս 'ի պաշտօն վարդապետութե՟:

'Ի դիպուածն երկ՟դ՝ ուր ապաշխարողն թէ-

պէտև ոչ խնդրէ զխրատ , բայց յայտնի երևի , թէ պատրաստ է ունկն մատուցանել խրատուց , դարձեալ պարտաւորի խոստովանահայրն 'ի սիրոյ և յարդարութէ հրահանգել զնա :

'Ի դիպուածն երդ՝ ուր տարակոյս 'ի միջի կայ , պարտ է զանազանել . վ̄ս զի կամ յերկբայս լինի խոստովանահայրն՝ թէ արդեօք այն խրատ նորա լինիցի՞ պտղաւէտ , բայց ոչինչ նոր վնաս ունի ծագիլ յազդարարութէ անտի , և ահա յայնժամ պիտոյ է մորզել զնա . քանզի 'ի վախճանի գործի ինչ բարի , և չար և ոչ մի ունի զհետ գալ , և ինքն խոստովանահայրն լիուլի կատարէ զպաշտօն վարդապետի : Իսկ կամ յերկբայս անկանի գուցէ մարթի հետևիլ չար ինչ . և յայն դիպուած պա՛րտի վարիլ այնու օրինակաւ , զոր ունիմք նշանակել 'ի մօտոյ 'ի դիպուածն անվաւեր պսակին :

Իսկ կամ հուսկ յետոյ՝ գիտէ ստուգիւ թէ 'ի խրատուէ անտի իւրմէ ոչինչ պտուղ ունի ծագել , այլ յաւէտ վնաս նոր . զորօրինակ՝ յազդ առնելն և 'ի փարատելն զտգիտութին զոր յառաջն ունէր առանց մեղաց , յետ այնորիկ գիտելով չափ և յանցաւորութբ գործէ : Օրինակի աղագաւ . ապաշխարող ոք միամիտ խըղճիւ ժառանգեալ ունի զկալուած ինչ կամ ըղժառանգութի՝ որ չէ նորա . կամ նոյնպիսի միամտութբ 'ի կիր արկանէ զսակարկութի ինչ վաշխական . բայց յայնմ խորհրդի է , մինչև խոստովանահօրն գիտել անշուշտ՝ թէ ոչինչ պտուղ շահեսցի յազդարարութէ անտի իւրմէ , այլ ապաշխարողն ունի պինդ պահել զկալուածն զայն , կամ զժառանգութին՝ որ չէ իւր , և ոչ յետս կալ յանիրաւ սակարկութէն . ուստի որ

յաւաջն նիւթապէս եւեթ մեղանչէր՝ յետ ազդարարութեն մեղիցէ տեսականապէս մի հանգամանաց և տրամադրութե անձինն ։

Բայց առաւել քան յայլ իմ նիւթս՝ պարտ է քաջ խորհել ՚ի դիպուածի անդ ամուսնութե․ յորժամ ամուսնացեալ ոք, գուցէ երկաքանչիւր իսկ կողմն՝ գտանի արարեալ զամուսնութի անվաւեր ՚ի պատճառս քակտիչ արգելման ինչ, զոր նա ոչ գիտէր, և ոչ խորհեցաւ երբէք, և ոչ կարաց խորհել անգամ՝ կամ գիտել, և զարգիս իսկ չճանաչէ ։ Իսկ խոստովանահայրն խոհեմ դատմամբ վարկանի, զի թէ ազդ արասցէ նմա զոչնչութե ամուսնութե, մարթին ծագիլ անտի բազում անտեղութիք և անկարգութիք․ որպէս յորժամ ամուսինք կեան ընդ միմեանս երկպառակութբ և սորջանօք ընդպակիլ իւրեանց, և եթէ մին ՚ի նոցանէ կարող լինէր լուծանել զպսակն՝ առնելով առնէր զայն վաղվաղակի մեծագոյն խռովութբ՝ հանդերձ թեւարկութբ իմ ազգատոհմին․ յոյր սակս ծագէր ՚ի մէջ նոցա վէճ և կագ, և թերևս գործք յետին թշնամութե՝ հանդերձ վատահամբաւութբ կնոջն և զաւակաց, և կամ հրապարակական գայթակղութբ համօրէն երկրին․ և կամ մի այլ ինչ համանման պատճառի, որոյ սկիզբն լինէր յայտնութի արգելմանդ այդորիկ, թէպէտ մարթ էր դարման տանիլ այդմ ընդունելով զտնօրինութին՝ այլ ոչ առանց յարակից անտեղութեց․ յայսպիսի դիպուած խոստովանահայրն կարէ և պարտի թողուլ ըզնոսա ՚ի բարի հաւատս միամտութե, որպէս նշանակեալ կայ․ ՚ե 4ւ․ Լիանշէ շուրջ․ յզ․ արենականութե և խնամութե․ ուր Պապն այսպէս կար-

գաւորէ. * Մա՛րթ է քեզ անգէտ ձեւանալ, զի կացցէ մնասցէ յայդպիսում լծակցութեան, երբ 'ի բաժանմանէն՝ (որպէս ասեաք՝) տեսանես, զի ունի ծագել գայթակղութիւն ծանր ||: Սուր յուշ առնէ գիտնաւորն Փագնանոս. 'ի համարն. 3. թէ * Նոյն բանք, մարթ է քեզ անգէտ ձեւանալ. ունին զզօրութիւն քահանայապետական տնօրինման ||:

Իսկ եթէ խոստովանահայրն գտանիցէ զապաշխարօղն յայն վիճակ՝ որում եթէ յայտնեսցէ զպարտեն, թէպէտ և կարէ դժուարութեամբ իւիք ստանալ զկարեւոր տնօրինումն, 'ի յորդորել անդ առ ժամն հրաժարիլ յամուսնական գործոյ, և մեկնիլ ըստ անկողնոյ 'ի կնոջէ կարծեցելոյ իւր ամուսնին, նա զայդ ոչ արասցէ, այլ հանապազորդեսցէ վարիլ ընդ նմա որպէս առաջին գնացիւք, և ոչ հոգ կալցի ընդունիլ զտնօրինումն՝ մինչ իրիք իրիք դժուարութեան, որ մարթի գիտել. յայնժամ թէ և յայտնի գիտասցէ գոլ յապաշխարօղն զանյաղթելի տգիտութիւն, յայսր ամենայնի վերայ պարտի խոստովանահայրն ամենայն իրօք ազդ առնել ապաշխարօղին, երբ ոչ այլ ինչ վնաս մարթի յառաջ գալ, բայց եթէ մեղացն լինել տեսական, որ յառաջն էր միայն նիւթական:

Այնպէս իմն և յամենայն դիպուածս եղեալս 'ի վեր անդր, յորս հեռի կայ 'ի նիւթական մեղաց, որ անբասիր առնի միամտութեամբ՝ կախի զկամաց եւեթ ապաշխարօղին, որ եթէ կամեսցի՝ կարօղ է դարման տանիլ. զորօրինակ՝ 'ի բաց կալ 'ի վաշխառական սակարկութենէ, յետս դարձուցանել զանիրաւութեամբ ժառանգեալն կալուած, վաւերացուցանել զամուսնութիւն առանց

ինչ գայթակղութեան՝ ընդունելով զկարեւոր անօրինութիւն, եւ զայնու ժամանակաւ պահել զանձն յամուսնական գործոյ: Եւ ընդհանրապէս յայն ամենայն դիպուածս՝ յորս երբեք կամի ապաշխարողն՝ կարող է ուղղել զչարն, եւ պահել զօրէնս, թէպէտեւ այս լիցի դժկամակութեամբ իւրով. եւ 'ի դժկամակութեան անդ իւրում տեսանի՝ զի տիրապէս չառնէ զայն, վասն զի ոչ կամի առնել. թէպէտեւ բնապէս եւ բարոյապէս խօսելով՝ կարող է առնել, մանաւանդ եթէ օրէնքն իցէ բնական կամ աստուածային. յայսպիսի ենթադրութեան ասեմ՝ խոստովանահայրն պարտական է ազդ առնել ապաշխարողին: Տես ըզհայրն Լամպիոն. Տո. 1. Գլ. ԺԵ. Ընթ. 17. եւ Գլ. ԻԳ. համար. 19:

Իսկ հիմնական պատասխանն այն է, զի որում անկ է խրատել եւ ուսուցանել 'ի հարկէ պաշտաման իւրոյ՝ պարտաւորեալ է առնել զայն, թէպէտեւ չունիցի ակնկալութիւն պտղոյ ինչ 'ի խրատուէ անտի իւրմէ. որով եւ զանազանի իսկ յայնմանէ՝ որ խրատէ 'ի սիրոյ եղբ. զի սա չէ պարտաւորեալ 'ի խրատել, եթէ չգուցէ ինչ յոյս պտղոյ:

Երկրորդ պատասխանն է, զի ապաշխարող ոք եթէ կամիցի, ոչ միայն բնապէս խօսելով՝ այլ եւ բարոյապէս, եւ այնու. եւ եթ դիւրութեամբ կամ դժուարութեամբ, զոր ընդ իւր տանի կրթութիւն ամենայն բարի գործոյ, իբր զի թէ եւ իցէ մեծ կամ փոքր դժուարութեամբ՝ ըստ զանազան առարկայից եւ ենթակայից, այլ ոչ երբեք անկարելի. եթէ կամիցի (ասեմ,) կարող է անշուշտ յառնել 'ի վիճակէ նիւթական մեղաց. ապա եթէ ազդեալ՝ չկամի յառնել, անմարթ է համարել զնա

տրամադրեալ, կամ ունակ յօժարութ՟ե մանաւանդ մեռանելոյ, քան ծանրապէս մեղանչելոյ. իսկ առանց այդպիսի յօժարութ՟ե ոչ ոք 'ի մեղաւորաց կարէ արդարանալ:

Երրորդ պատճառն է. զի եթէ ընդունելի լինէր այդ վարդապետութի՟ւն' (որ ուսուցանէ թողուլ զապաշխարողն 'ի բարի հաւատս առանց ինչ խրատելոյ զնա' երբ գտանի նա 'ի վիճակի նիւթական մեղաց, իբրու զի նա յայն կամս գտանի, մինչ զի եթէ խրատեսցի' ունի յաւելուլ 'ի մեղանչել, ո՛չ ևս նիւթապէս' այլ և տեսականապէս) զհետ գային չարաչար անտեղութի՟ւնք. զորօրինակ' դիցուք թէ խոստովանահայր ոք գիտաց 'ի խոստովանութ՟ե' թէ ապաշխարողն անվաւերաբար է ձեռնադրեալ 'ի քահանայ, և կայ 'ի բարի հաւատս. բայց հասու եղև միանգամայն, զի եթէ ազդ արասցէ նմա' նա ունի հանապազորդել 'ի պատարագել որպէս յառաջին. և որ երբեմն մեղանչէր նիւթապէս' յայնմ հետէ ունի մեղանչել սեղանակապտութ՟ե, միթէ պա՞րտի թողուլ զնա 'ի նմին տգիտութ՟ե: Եւ ո՞ կարողն իցէ երբէք ընդունել զայդպիսի վարդապետութի՟ս' որ ինքնաբերաբար և հարկաւ ծնանին 'ի հակառակ կարծեաց վարդապետաց ոմանց:

Հց. Ասա ինձ, եթէ խոստովանահայր ոք վստահացեալ յասացեալդ կարծիս, յորժամ իմասցի թէ ապաշխարողն ունի առ իւր զինչս այլոց' զորս պարտաւորի հատուցանել, բայց զի կայ նա 'ի բարի հաւատս' անփոյթ լինի խոստովանահայրն ազդ առնել նմա զայս պարտաւորութի՟, միթէ արդեօք ինքն պարտաւոր 'ի հատուցանել փոխան ապաշխարողին:

ղէս . Եթէ խոստովանահայրն չազդէ նմա զայդ պարտաւորութի՟՝ կամ առ մեղադրելի տգիտութե՟, և կամ առ խեղաթիւր կարծեաց, զոր ինքն իսկ վարկանի նուազ հաւանական, պարտաւորի ինքն առ հատուցումն՝ ոչինչ ընդ-հատ յապաշխարողէն ։ Ս՟ն զի պարտաւոր են հատուցանել ամենեքին նոքա՝ որք գործակից լինին վնասու ընկերին՝ եթէ առնելութ՟բ՝ և եթէ զանցառութ՟բ ։ Այլ յետինքս այս յայնժամ ևեթ պարտաւորին հատուցանել՝ յորժամ ՚ի հարկէ պաշտաման իւրեանց պարտական են արգելուլ զվնասն . իսկ այս ա՟մ բովանդակի յառաջիկայդ ոտանաւոր ։

Պատուէր, խորհուրդ, հաւանութի՟ .
Ձեռօք, ոտիւք, գործակցութիւն .
և մասնակից, և լուռ համբուն .
անդիմակաց, անզեկուցումն ։

Ուրանօր լուսոյն և անուշէհոյն, տայ իմանալ և զխոստովանահայրն՝ որ ՚ի հարկէ պաշտաման իւրոյ պարտական է պարտաւորել զապաշխարողն ՚ի յետս դարձուցանել՝ յորժամ պարտք են հատուցանել, և սակայն լուռ ևեթ կայ և ոչ ազդառնէ նմա սակս վերոյիշատակեալ պատճառաց այնպիսի պարտաւորութե՟ ։ Տես զհայրն Լամպիոն . Հ . Է . Գլ . ԺԳ . ՀՏ . 5 ։

Թէ զիա՞րդ ճանաչէ զանազանութիւն մեղաց։

Հց. Ի վերայ բերէ ծիսարանն. * Արդ՝ ոչ զի ուղիղ մարթասցի դատել, և որոշել ը՟ այս և ընդ այն բորոտութի||, Ղե. ԺԳ։ Ա՛ղէ ասա ինձ, զի՞նչ նշանակեն բառքդ՝ որոշել ընդ այս և ընդ այն բորոտութիւն։

Պտ. Նշանակեն՝ թէ խոստովանահօր ա՛նկ է գիտել զանազանել՝ թէ ո՞ր իցէ 'ի բնութէ իւրմէ մեղք մահուչափ, և ո՞ր սոսկ ներելի։

Հց. Իսկ զիա՞րդ լինի ճանաչել, թէ այս ինչ մեղք 'ի բնութէ իւրմէ իցէ մահուչափ, և այն ներելի։

Պտ. Ճանաչի մահուչափն լինել, երբ 'ի բնութէ իւրմէ ընդդէմ է սիրոյն Ա՟յ՝ կամ ընկերին, կամ ընդդէմ է միջոցաց՝ որք կարգեալ են 'ի պահել զսէր այնպիսի. որովհետև * գըլուխ, կամ վախճան պատուիրանին սէր է||. Ա. Տիմ։ Իսկ մեղքն 'ի բնութէ իւրմէ ներելի՝ այն է, որ չէ ընդդէմ սիրոյն Ա՟յ, կամ ընկերին. որպէս և ո՛չ միջոցաց կարգելոց 'ի պահել զԱ՟ծսիրութի և զեղբայրսիրութի։

Ս՟բն Օգոստինոս 'ի գիրսն ԻԱ. քաղաքին Ա՟յ. Գլ. ԻԷ. ասէ, թէ կարի դժուարին և վտանգաւոր իմն է սահմանել և ճանաչել, եթէ մեղք ինչ մահուչա՞փ իցէ՝ կամ ներելի։ Այլ յայսր ա՟մի վերայ՝ սովորական կանոնն որոշելոյ զմահուչափն 'ի ներելւոյն՝ այս է։ Ուր ուրեք ասի 'ի ս՟բ գիրս, թէ մեղք ինչ արտաքսէ զոք յարքայութենէն Ա՟յ, և զմեղուցեալն առնէ թշնամի Ա՟յ, և արժանի մահու և դժոխոց, յայնժամ

աներկբայ պարտ է համարել զայն մահուչափ։ Ապա եթէ չիցէ մարթ ճանաչել զայդ 'ի ս̃ր գրոց, արժան է տեսանել՝ թէ զիա՛րդ համարին զայն ս̃ր հարք և վարդապետք եկեղեցւոյ։ Եւ ես պարտիմք հայել և յայն՝ թէ զինչ վըկայէ մեզ խիղճ մտաց մերոց. զի եթէ ասասցէ ցմեզ, թէ սովին մեղօք ծանուցս դառնացուցանեմք զԱ̃ծ, կամ զընկերն՝ յայտ է թէ մահուչափ է. իսկ եթէ թեթևագոյնս ևեթ, յայտ է թէ ներելի է ևեթ։

Հրց. Կամիմ լսել գործնական ինչ օրինակ առ 'ի ճանաչելոյ զ'ի բնէ մահուչափ մեղս։

Պտխ. Ս̃ն թովմաս 'ի Բ̃. Բ̃. յուշ առնէ չորեքտասան առաքինութիւնս, որք պարտաւորեն Ը̃ ծանր մեղօք. և ըստ նմին մոլութի̃ք՝ որք ընդդէմ ելանեն այդց առաքինութեանց, 'ի բնութ̃է իւրեանց գտանին լինել մեղք մահուչափ։ Առաքինութի̃քն այն՝ սոքա են. Հաւատ. Յոյս. Սէր. Արդարութի̃ փոխարինական. Արդարութի̃ տրամաբաշխական. Արդարութի̃ օրինական. Արդարութի̃ վրէժխնդրական. Կրօն. Գթութի̃. Հնազանդութի̃. Յարգութի̃. Զգաստութի̃. Ողջախոհութի̃. և Խոնարհութի̃։

Հրց. Ասա ինձ և զմոլութիւնս դիմամարտս միոյ միոյ յայդց առաքինութեանց. և թէ ո՞յք 'ի նոցանէ 'ի բնութ̃է իւրեանց իցեն մահուչափ։

Պտխ. Մինչև է իմ նշանակեալ զիւրաքանչիւր մոլութի̃ս կամ զմեղս ներհակեալս միոյ միոյ առաքինութեանց այտի, ունիմ յուշ առնել քեզ. թէ ոմանք 'ի մեղաց աստի հակառակ ելանեն առաքինութեանցդ այդոցիկ՝ ըստ առաւելութե̃, և այլք ըստ նուազութե̃. են՝ որք ըստ յանցնաւորութե̃. և են՝ որ ըստ զանցառութե̃։ Եւ զի կարի կա-

րեւոր է 'ի միտ առնուլ զայսոսիկ, մեկնեցից՝ յորժամ առաջի պարզեցից զտեսակս մեղաց։ Օ այս ենթադրեալ ասեմ։

Ընդդէմ եւթնեան հաւատոյ՝ ուրացութիւն, հերետիկոսութիւն, դրական երկբայութիւն զհաւատոյ, մեղադրելի տգիտութիւն զխորհրդոց հաւատոյ, յաղթելի մոլորութիւն 'ի վերայ հաւատոյ, հայհոյութիւն հերետիկոսական, նպաստաւորութիւն հերեսիովտաց, ընթերցումն գրոց նոցա՝ յորս ճառեն զկրօնից, չզեկուցանել (յատեան եկեղեցւոյ) զհերետիկոսս, չառնել ըզներգործութիւնս հաւատոյ 'ի պարտուպատշաճ պահու։

Ընդդէմ յուսոյ՝ են յուսահատութիւն, յանդուգն վստահութիւն 'ի վերայ փրկութեան առանց ինչ արդեանց, զանցառութիւն ներգործութեան յուսոյ՝ յորժամ պարտ իցէ առնել։

Ընդդէմ սիրոյն այ՝ են ատելութիւն ընդ այ, ծուլութիւն, զանցառութիւն ներգործութեան սիրոյն այ 'ի լինել հարկին։

Ընդդէմ սիրոյ ընկերին՝ են ատելութիւն ընդդէմ նորին, նախանձ, գայթակղութիւն, զանցառութիւն եղբայրական յանդիմանութեան, և ողորմութեան՝ երբ պարտական եմք առնել։

Ընդդէմ փոխարինական արդարութեան են մեղք եղծիչք երրակի բարեաց, որոց վայելք լինին յաստի կեանս. որպիսի ճանաչին բարիք մարմնոյ, բարիք համբաւոյ, և բարիք ընչից։ Սամ որոյ ընդդէմ առաջնոյն՝ են սպանութիւն, խեղութիւն, գանհարութիւն, բանտարկութիւն։ Ընդդէմ երկրորդին՝ են թշնամանք, բամբասանք, չարախօսութիւն կամ անէծք, յանդուգն դատողութիւն։ Ընդդէմ երրորդին՝ են գողութիւն,

յափշտակութիւն, չդարձուցանել զկրօն առ տեարս, յորժամ պարտական գտանիմք 'ի բուն խոկ սկզբանց հատուցման՝ որ են, Նախ՝ յերեւելւոյ. երկրորդ՝ յաներեւոյթ առանձնէ, կամ 'ի ճշմարտութենէ. և երրորդ՝ 'ի դաշնադրութենէ:

Ընդդէմ տրամաբաշխական արդարութեան, որ միօրինակ պարտաւորէ զմեծաւորս. զոր օրինակ՝ զեկեղեցականս՝ 'ի բաշխել զթոշակս և զպաշտամունս եկեղեցւոյ, և զաշխարհականս՝ 'ի բաշխել զբարի և զպատիւ, և զգործակալութիւնս ծրութեան, ըստ արժանաւորութեան, և ըստ յարմարութեան անձանց, է մեղքն այն՝ որ կոչի՝ ակնառութիւն, կամ աչառանք:

Ընդդէմ օրինական արդարութեան, որ պարտաւորէ եթէ զեկեղեցական, և եթէ զաշխարհական մեծաւորս 'ի կառավարել զհպատակս իւրեանց ըստ եկեղեցական կամ ըստ քաղաքական օրինաց՝ է մեղքն անուանեալ Անիրաւութիւն, որ և ասի՝ անիրաւութիւն օրինական:

Ընդդէմ վրէժխնդիր արդարութեան՝ որ նոյնօրինակ պարտաւորէ զնոյն մեծաւորս 'ի պատուհասել զյանցաւորս ըստ սահմանադրութեան օրինաց, է մեղքն նոյնպէս Անիրաւութիւն՝ կոչեցեալ անիրաւութիւն վրէժխնդրական:

Ընդդէմ կրօնի՝ է սնապաշտութիւն, որ բաժանի 'ի բազում տեսակս. փորձել զԱստուած, սեղանակապտութիւն, որ և սա զանազանի 'ի բազում տեսակս. պարզ հայհոյութիւն, ստերդմնութիւն, սիմոնականութիւն, ուխտազանցութիւն:

Ընդդէմ գթութեան՝ են անկարգ սէր ազգականաց, և անգթութիւն:

Ընդդէմ հնազանդութեան՝ է անհնազանդութիւն:

Ընդդէմ յարգութեան՝ է անարգութիւն մեծաւորաց:

Ընդդէմ զգաստութեան՝ է արբեցութիւն։

Ընդդէմ ողջախոհութեան՝ են պարզ պոռնկութիւն, կուսապղծութիւն, շնութիւն, ազգապղծութիւն (որ և մծղնէութիւն,) յափշտակութիւն (որ և հափափումն, կամ առևանգութիւն,) սրբապղծութիւն, մեղք ընդդէմ բնութեան, որոյ են երեք տեսակք, այսինքն՝ պարզ գիջութիւն, սոդոմականութիւն, և անասնագիտութիւն։

Ընդդէմ խոնարհութեան՝ է հպարտութիւն։

Եւ ՚ի վերայ այսց առաքինութեանց և ներհակեալ մեղացն՝ ճոխագոյն ասացի յիւրում տեղւոջ, որպէս զի առաւել ևս դիւրիմաց լիցի չարութիւն և թիւ մեղացն։

---

Արդեօք մահուչափ մեղքն կարէ՞ դառնալ լինել մեղք ներելի, և որպէս։

հց. Ասա՛ ցիս, միթէ ամ մեղք որ ՚ի բնութեան իւրեանց են մահուչափք, կարե՞ն երբէք լինել ներելի և յո՞յր սակս։

պխ. Այո՛ կարեն փոխիլ ՚ի ներելի, մանաւանդ թէ երբեմն և ոչ ՚ի մեղս անգամ համարիլ. և այս՝ ՚ի կողմանէ մտաց, կամաց, և նուազութեան նիւթոյ։

՚Ի կողմանէ մտաց՝ վն տգիտութեան, վասն անմտադրութեան, և վն սխալմանց։

Տգիտութիւն այն է՝ յորժամ չունի ոք զունակութիւն գիտութեան, զոր անկ էր ունել։

Անմտադրութիւն է՝ յորժամ ունել ունի ոք զունակութիւն գիտութեան, բայց ներգործութե՟ ոչ միտ դնէ գործոյն՝ զոր առնէ։

Սխալանք է՝ յորժամ ունի ոք զունակութիւն ներհակ գիտութեան, զոր պիտէր ունել. զորօրինակ՝ այսօր է պահք, և ոմն ուտէ զմիս, զի ոչ գիտէ զլինել պահոց, ահա՛ տգիտութիւն։ Իսկ միւս այլ՝ ուտէ զմիս, զի ոչինչ զմտաւ ածէ, թէ այսօր իցէ օր պահոց, ահա՛ անմտադրութիւն։ Իսկ այլ ոք ուտէ զմիս, քանզի համարի թէ ա՛յն պահք չունիցի պարտս ծոմապահութեան, որպէս է հսկումն յայտնութեան տօնի, ահաւասիկ սխալանք։

Իսկ տգիտութիւն է կրկին. է՝ որ իրաւանց, և է՝ որ գործոյ։

Տգիտութիւն իրաւանց այն է, երբ չգիտէ ոք, թէ ՚ի հարկանելն զկղերիկոս՝ կայցէ բանադրանք. և թէ տալ ումեք կաշառս առ ստացումն թոշակաւորութեան՝ իցէ սիմոնականութիւն։

Տգիտութիւն գործոյ այն է, յորժամ գիտէ ոք, թէ ՚ի հարկանելն զկղերիկոս ոք՝ անկանի ՚ի բանադրանս. բայց զոր ինքն հարկանէ ՚ի ժամուս՝ ո՛չ գիտէ, և ո՛չ երբէք գիտէր թէ կղերիկոս իցէ։ Այնպէս թէև գիտիցէ թէ տալ կաշառս առ՚ի ստանալ զթոշակ ինչ՝ իցէ սիմոնականութիւն. սակայն ո՛չ գիտէ, և ո՛չ բնաւ գիտաց, թէ կալ անվարձ առ ոտս եպիսկոպոսի, և ձրի ծառայել նմա սակս ընդունելոյ առ՚ի նմանէ զթոշակ ինչ՝ իցէ սիմոնականութիւն։

Այնպէս և տգիտութիւն բաժանի ՚ի յաղթելի և յանյաղթելի. կամ ՚ի մեղադրելի և յանմեղադրելի, եթէ իցէ տգիտութիւն իրաւանց՝ և եթէ գործոյ։

Տգիտութիւն անմեղադրելի այն է՝ յորժամ ոք չգիտէ՝ զոր չէր պարտաւորեալ ՚ի գիտել, ո՛չ ՚ի վիճակէ իւրմէ, և ո՛չ ՚ի պաշտամանէն.

և կամ թէպէտև պարտական էր գիտել՝ բայց չէր կարող հեշտեաւ գիտել. զորօրինակ՝ չինական ոմն ոչ գիտէ՝ թէ այս ինչ դաշն զոր կռէ՝ իցէ անիրաւ և ապօրինաւոր. կամ թէ խորհուրդ իսկ հարցեալ ՚ի քահանայէ տեղւոյն, լուաւ՝ թէ կարես առնել զայդ: Սակայն ոչ այդպէս են իրքդ, եթէ այրն այն անգէտ իցէ խորհրդոց հաւատոյ՝ զորս պարտական է գիտել, և դիւրաւ մարթ էր ուսանիլ՝ եթէ յաճախեալ էր առ քրիստոնէական վարդապետութ̃ի:

Անյաղթելի տգիտութ̃ի իրաւանց կամ օրինաց զլխովին անբասիր առնէ ՚ի մեղաց՝ յորժամ ոք (ըստ որում ասացաւ) ոչ գիտէ՝ զոր չէ՛ պարտական գիտել, կամ ոչ իսկ կարող է գիտել:

Տգիտութ̃ի գործոյ նոյնպէս անբասիր կացուցանէ զմ̃իւ ՚ի մեղաց՝ յորժամ է անյաղթելի. և յայնժամ լինի չքմեղութ̃ի բոլորական, յորժամ բոլորովին է պատճառ գործոյն, որ ոչն լինէր՝ եթէ չկայր այնպիսի տգիտութ̃ի: Եւ ըստ այսմ շինականն այն որ արար զամուսնութ̃ի հանդերձ քակտիչ արգելմամբ, զորմէ ինչ ոչ գիտէր, և ոչ երբէք գիտաց. մինչ զի եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեօք ամուսնանայր, ունի զանյաղթելի տգիտութ̃ի գործոյ:

Մարթի գտանել անյաղթելի տգիտութ̃ի ՚ի վերայ խորհրդոց հաւատոյ, (օրինակի աղագաւ) ՚ի մարդն՝ որ ծնեալ իցէ և սնեալ ՚ի հեռաւոր վայրս աշխարհի, ուր ոչ ոք ՚ի քարոզչաց երթեալ իցէ երբէք, վ̃ն այսորիկ իրաւամբք ՚ի մէջ նախադասութ̃եցն Բայոսի դատապարտեցաւ կ̃ը. որ ունի այսպէս. * Անհաւատութ̃ին

պարզապէս բացասական, 'ի նոսա՝ որոց քս̃ չէ քարոզեալ, է մեղք ‖:

Բայց սակայն առ'ի գիտել թէ տգիտութիւն օրինաց՝ երբ իցէ յաղթելի կամ անյաղթելի, հարկ է 'ի զնին մատչիլ թէ զի՛նչ ինչ, և ո՛րչափ ինչ պարտական իցէ գիտել իւրաքանչիւրոք:

Սբ̃ն Թովմաս. ա̃. բ̃. խն. հզ̃. յդ. բ̃. գրէ այսպէս. * Ամենեքին պարտաւորին գիտել ընդհանրապէս զայն ինչ իրս, որ են 'ի հաւատոց, և հանրական պատուէրք իրաւանց. իսկ իւրաքանչիւրոք, զայն ինչ իրս՝ որ 'ի վիճակ կամ 'ի պաշտօն իւր հային ‖: Այն իրի ամ̃ և իւրաքանչիւր քրիստոնեայք պարտական են գիտել զգլխաւոր խորհուրդս ս̃բ հաւատոյ, յորոց երեք ինչ հարկաւոր են 'ի գիտել հարկաւորութե̃ միջնորդի. այսինքն՝ են. ա̃. Միութի̃ և երրորդութի̃ ա̃յ: բ̃. Մարդեղութի̃, մահն և յարութի̃ն յս̃ի քս̃ի: գ̃. Թէ ա̃ծ է վարձահատոյց բարեաց, և պատժօղ չարաց: Իսկ հարկաւորութե̃ պատուիրանի, այլ ամ̃ մասունք հանգանակի առաքելոց: Իսկ և իւրաքանչիւրոք ը̃ս վիճակի, ը̃ս պարտաւորութե̃, և ը̃ս հանգամանաց իւրոց՝ պարտի գիտել և զայլ ճշմարտութի̃ս հաւատոյ մերոյ, զորոց ասասցի 'ի մօտոյ:

Այնպէս կարևոր է ամ̃ քրիստոնէից գիտել և զտէրունական աղօթս, զոր տէրն մեր քս̃ ուսոյց և պատուիրեաց մեզ ասել. Մտ. զ̃. 9. յորոյ վերայ չկարէ լինել անյաղթելի տգիտութի̃ 'ի քրիստոնեայս: Վասն եթէ երբէք անգիտանայցեն զխորհուրդս զայսոսիկ և զտ̃րունական աղօթս, նախ՝ մեղանչեն ընդդէմ պատուիրանին՝ որ պարտաւորէ զնոսա ուսանիլ,

յո՛յր սակս պարտ է նոցա երթալ 'ի լուր քրիստոնէական վարդապետութե՟, կամ առ այլս՝ որ կարող իցեն ուսուցանել նոցա։ Երկ՟ր՝ մեղանչեն յիւրաքանչիւր նուագի՝ յորս պարտական էին 'ի կիր արկանել զներգործութի՟ Հաւատոյ, կամ ասել զՏ՟րունական աղօթս։ Ապա յուշ արասցէ խոստովանահայրն, թէ քանի՛ քանի՛ մեղս գործեալ իցէ նա՝ որ 'ի բազում ամաց հետէ անգիտացաւ զայնպիսի խորհուրդս Հաւատոյ, միանգամայն և զՏ՟րունական աղօթս․ և գուն գործեսցէ հարցաքննել զապաշխարողս, ապա թէ ոչ՝ ծանունս յանցանէ 'ի պաշտաման իւրում։

Այլ և ս պարտ է ամենայն քրիստոնէից գիտել զընդհանրական պատուէրս Օրինաց, որ են երեքկին։ Ոմանք 'ի Բնական օրինաց, որք բովանդակին 'ի տասնաբանեայ պատուիրանս Ա՟յ։ Ոմանք 'ի Դրական Աստուածային Օրինաց, որք հային առ բարոյական պատուիրան խորհրդոց, և առ ներգործութի՟ս Հաւատոյ, յուսոյ և սիրոյ։ Այլք՝ յեկեղեցական Օրինաց․ այն իսկ են հինգ պատուիրանք եկեղեցւոյ։ 'Ի կարգի տասնաբանեայ պատուիրանաց, են՝ որ ըստ ինքեան բացայայտ են, և են՝ որք 'ի նոցանէ իմաստասիրին հեշտեաւ․ այսինքն է՝ ըստ ասելոյ ս՟բյն Թովմայի․ ա․ բ․ խն․ ճ․ յօդ․ գ․ * Իսկ և իսկ յառաջնոց ընդհանուր սկզբանց մարթին ճանաչիլ դոյզն մտածութբ՟ ‖։ Այն և ս՝ որպէս 'ի վերայ բերի անդանօր, ո՛չ * զգուշաւոր հետազօտութբ՟ իմաստնոց գտանին անմիաբան լինել ը՟ բնական բանի ‖․ զորօրինակ՝ թէպէտև վաշխն չէ՛ արգելեալ որոշակի 'ի տասնաբանեայ օրէնս, բայց դոյզն մտածութբ՟ մարթի ճանաչել, թէ

է ընդդէմ եօթներորդ պատուիրանին, մի՛ գողանար: Բայց ոչ այդպէս է յայլ դաշինս, որք ընդգուշաւոր հետազօտութեամբ իմաստնոց, յետոյ ուրեմն 'ի յայտ եկին լինել վաշխառականք, և իբր այնպիսի արգելան յառաքելական աթոռոյ, որպէս յայտ է 'ի Խ. ԽԱ. ԽԲ. Նախադասութեանց դատապարտելոց Յիննովկենտիոսէ ԺԱ: Այնպէս և գիջութիւն, թէպէտև չէ յայտնապէս արգելեալ 'ի տասնաբանեայ օրէնս, այլ սակայն դոյզն մտածութեամբ մարթի ճանաչել, թէ է ընդդէմ վեցերորդ պատուիրանին: Նմին իրի իրաւամբք դատապարտեաց Իննովկենտիոս զառաջիկայս նախադասութիւն ԸԽ. ԽԸ. * Գիջութիւն չէ՛ արգելեալ իրաւամբք բնութեան. ուստի եթէ չէր Այ արգելեալ զայն, բազում անգամ բարի իսկ լինէր, և երբեմն պարտաւորիչ անգամ ընդ մահուչափ մեղօք‖:

Այլ ոչ այնպէս իմանալ պարտ է զախորժմանէ՝ զոր զգայ ոք 'ի համբուրից առանց ինչ վըտանգի գիջութեան. որ ընդգուշաւոր հետազօտութեամբ իմաստնոց 'ի յայտ եկն լինել ընդդէմ վեցերորդ պատուիրանի: Յայն սակս Աղեքսանդր Է. դատապարտեաց զնախադասութիւն Ի. * Հաւանական է կարծիքն այն՝ որ ասէ, թէ ներելի և եթէ համբոյրն եղեալ վն մարմնական և ըզգայական հեշտութեան ծագելոյ 'ի համբուրից անտի, 'ի բաց առեալ զվտանգ անդրագոյն հաւանութեան և գիջութեան‖:

Ա̄ որոյ չէ՛ հնար գտանել անյաղթելի տգիտութեան զպատուիրանօք տասնաբանեայ օրինաց, կամ զայնոքիւք՝ որք դոյզն մտածութեամբ մարթին ճանաչել, թէ պատշաճին առ պատուիրանսն: Այլ ոչ այդպէս է յաղագս այն պատուիրանաց՝ որք

ուղղափառ քննութեան էմմանուէլ ծանուցեալ եղեն վերաբերիլ 'ի պատուիրանս անդր. վասն զի զայսպիսեաց մարթի լինել տգիտութիւն անյաղթելի, մինչև իցեն մեկնաբանեալ և դատապարտեալ յառաքելական աթոռոյ: Այլին իբր 'ի լինել այդպիսի անյաղթելի տգիտութեան զպատուիրանաց ը բացատրեալ օրինակիդ՝ յայնժամ ազատ կացուցանէ 'ի մեղաց: Ըստ որոյ Աղէքսանդր է. իրաւամբք դատապարտեաց զնախադասութիւնն ը. * Թէ և կայցէ անյաղթելի տգիտութիւն իրաւանց բնութեան, այդ 'ի վիճակի անկեալ բնութեան, չառնէ անբասիր 'ի տեսական մեղաց զգործօղն այնպիսի տգիտութեան ||:

Իսկ 'ի կարգի պատուիրանաց դրական աստուածային օրինաց, են՝ որ բարոյականք են, որպէս է տեսանել 'ի Մատթ. գլ. Ե. համար. 21. եւն. զորօրինակ՝ պատուիրանն ներելոյ զորկանաց, սիրելոյ զթշնամին, և ևս չերդնլոյ ընդ վայր առանց ինչ հարկի, չլուծանելոյ զամուսնութիւն զկատարեալ, և յանդուգն չդատելոյ զընկերն. Մատթ. գլ. Է: Այլ են՝ որք խորհրդականք են, որպէս է տեսանել 'ի յովհ. Գ. հմ. 5. զպարտաւորութիւն մկրտութեան. և 'ի գլ. Զ. 54. զպարտաւորութիւն ընդունելոյ զհաղորդութիւն. և 'ի գլ. Ե. 23. զպարտաւորութիւն խոստովանութեան: 'Ի վախճանի են և այլք 'ի պէտս ներգործութեան հաւատոյ, յուսոյ, և սիրոյ, որպէս 'ի Մար. ԺԵ. և ԺԶ: 'ի Մատթ. Զ. հմ. 10. 13: և 'ի գլ. ԻԷ. 37: Վասնզի ամենայն քրիստոնեայք պարտին գիտել զպատուիրանս զայսոսիկ, և մարթ է նոցա դիւրաւ գիտակ լինել՝ գնալով 'ի լուր քրիստոնէական վարդապետութեան. մինչ զի չունի 'ի նոսա տեղի անյաղթելի տգիտութիւն,

զնոյն իմն և զպատուիրանաց եկեղեցւոյ։ Տես զսուրբն Կարոլոս յաղագս արարութեանս իւր առ խոստովանահարս. յօդ. 17։

Յուսկ ուրեմն պարտ է գիտել իւրաքանչիւր ումեք՝ * զոր ինչ անկ է իւրում վիճակի կամ պաշտաման ||. Ը. բանից ՚ի սրբոյն Թովմայի։ ՚Նմին իրի շատ աւելի պարտի գիտել եպիսկոպոս ոք՝ քան թէ ժողովրդապետ, կամ խոստովանահայր ոք. և սա քան զպարզ քահանայն. և սա քան զաշխարհականն. և իւրաքանչիւրոք ՚ի սոցանէ գիտել պարտի՝ զոր ինչ անկ է սեփական վիճակի և պաշտաման իւրում։ Նոյնպէս և դատաւորն, բժիշկն, ամուսնացեալն, վաճառականն, ևայլն։ Ըստ այսորիկ քաջիկ յուշ առնէ հռովմէական հրահանգն Եկ. 15. Թէ նախ զառաջինն պարտ է հարցանել զապաշխարողն զվիճակէ և զհանգամանաց անձին նորա. վասն զի մասնաւոր օրինակաւ ՚ի կարգի այդր գիտութեան, որ հայի ՚ի պարտաւորութիւն սեփական վիճակի, ոչ երբէք լինել մարթի անմեղադրելի տգիտութիւն։

Երկրորդ իրն՝ որ ՚ի կողմանէ մտաց կարէ անբասիր առնել զներգործութիւն ինչ, որ ՚ի բնութէն իւրմէ է մեղք մահուչափ, և տալ նմին՝ զի չհամարեսցի ՚ի մեղս՝ կամ զի լինիցի լոկ ներելի մեղք՝ է անմտադրութիւն. զի սա է թերութիւն մտաց, որ կատարեալ օրինակաւ չածէ յուշ զչարութիւն ներգործութեան։ Սմին իրի դատիչն փիլիսոփայական մեղաց իշխեաց զանազանել զայդ յաստուածաբանական մեղաց՝ բանիւ տգիտութեան, կամ անմտադրութեան զայդ. ուստի եդ այսպէս. * Մեղքն փիլիսոփայական կամ բարոյական, է մարդկային ներգործութիւն անվայել

բանական բնութեան և ուղիղ բանի. իսկ ա՟ծաբանականն և բարոյականն՝ է ազատ պատուիրանազանցութի՟ ա՟ծային օրինաց: Փիլիսոփայականն որչափ և ծանր իցէ, 'ի նմա՝ որ անգիտանայ զա՟ծ, կամ ոչ խորհի ներգործութե՟ զա՟յ, թէպէտև է մեղք ծանր, այլ չէ՛ անարգանք ա՟յ, և ոչ մահուչափ մեղք քակտիչ բարեկամութեն ա՟յ, և ոչ արժանի յաւիտենական պատժոյ‖. այն է նախադասութի՟ իրաւամբք դատապարտեալ յԱ՟. ղէքս. Ը. 'ի 24. օգոստոսի 1690. մ՟ն զի ոչինչ բնաւ զանազանութի՟ դնէր 'ի մէջ յաղթելի կա՟մ անյաղթելի տգիտութե՟ և անմտադրութե՟: Այն իբր ասացաք թէ տգիտութիւն անյաղթելի՝ նոյնպէս և անյաղթելի անմտադրութիւն 'ի կողմանէ մտաց կարեն անբասիր առնել զնա յոր և է մեղաց, եթէ մարթասցի լինել այնպիսի զգօյութեն ա՟յ, զոր մեք չառնումք յանձն, թող թէ յաղթելի տգիտութիւն, և անմտադրութիւն յաղթելի, որք ոչ երբէք առնեն անբասիր:

Դարձեալ դնէր մոլորեալն այն, թէ մեղքն փիլիսոփայական, թէ և իցէ մեղք ծանր, տակաւին ոչ է անարգանք ա՟յ, և չէ՛ յանցանք մահուչափ՝ բարձող բարեկամութեն ա՟յ, և ոչ իսկ արժանի յաւիտենից պատժոյ, որ գլխովին է սուտ. վասն զի միշտ է անարգանք ա՟յ՝ գէթ նիւթապէս, բայց է և տեսականապէս. մ՟ն զի է ընդդէմ բանի, որ է լոյս իմն շնորհեալ մեզ առ յա՟յ. * Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց‖. և հետևաբար ընդդէմ բնական և յաւիտենական օրինացն ա՟յ: Ո՟ այսօրիկ հարկաեկաւորիմք 'ի ծանօթութի՟ ինչ ա՟յ, որոյ լուսոյն հակառակ գործեմք, որով և դառնացու-

ցանեմք զա̃ծ տեսական և մահուչափ մեղօք, որ արժանի է յաւիտենական մահու, միանգամայն և է զրկիչ 'ի բարեկամութենէն ա̃յ։

Երրորդ իրն՝ որ 'ի կողմանէ մտաց մարթի անբասիր առնել զմարդն 'ի մեղաց՝ որ 'ի բնութենէ իւրմէ իցէ մահուչափ՝ է սխալանքն. զորմէ պէտք են իմաստասիրել ըստ օրինակին՝ որ ասացաւ զտգիտութենէ. այսինքն՝ եթէ սխալանքն իցէ անյաղթելի, իբր զի չէր ոք պարտական, կամ թէ չկարէր ունել զունակութիւն գիտութեան՝ հակառակ ներգործութեան զոր ունի, գլխովին անբասիր կացուցանէ զմեղանչական գործ նորա։ Ոչ այնպէս՝ եթէ սխալանքն իցէ յաղթելի. վ̃ն զի յայդ դիպուած չառնէր անբասիր, թէպէտև 'ի նիւթս հաւատոյ զներգործութիւն ոչ կացուցանէ հերետիկոսական, որպէս ասացի յիւրում տեղւոջ։

Իսկ 'ի կողմանէ կամաց՝ պակասութիւն կատարեալ հաւանութեան նորին՝ անբասիր առնէ կամ իսպառ, կամ մասամբ իւիք զներգործութիւն ինչ ծանրապէս մեղանչական։ Վասն որոյ 'ի կիսարթունս, կամ 'ի կիսարբեալս, միայն թէ չիցէ նոցա մեղուցեալ 'ի պատճառն, մեղանչական ներգործութիւն ինչ 'ի բնէ մահուչափ, կամ ոչ բնաւ լինի մեղք, և կամ ներելի միայն։ Սմին իրի շարժմունք նախատաշէնք, որք կանխեն քան զա̃մ հաւանութիւն կամաց, ոչ համարին 'ի մեղս։ Իսկ շարժմունք երկրատաշէնք, որք չունին զկատարեալ մտադրութիւն, և զկատարեալ հաւանութիւն՝ լինին միայն մեղք ներելի։

Ի վախճանի՝ թեթևութիւն կամ փոքրկութիւն նիւթոյ մարթի փոխել զներգործութիւն ինչ,

որ 'ի սեռէ խորմէ իցէ ծանրապէս մեղանչական, և փոխարկել 'ի ներելի միայն ։ Ուղղիտի 'ի միտ առնուլ յայսմ վայրի, թէ 'ի նախայիշատակեալ չորեքտասան առաքինութեանց, են՝ որք ընդունին զթեթևութիւն նիւթոյ. որոց վասն և յանցանք՝ որք հակառակք նոցա, կարեն լինել ներելիք 'ի սակս այնպիսի փոքրկութեան ։ Այլ են՝ որք ոչ ընդունին զայդպիսի փոքրկութիւն, ուստի և հետևաբար ամենայն մոլութիւնք և մեղք որք դիմամարտք են նոցա՝ լինին մեղք մահուչափ, թէպէտ և հանդերձ թեթևութեամբ նիւթոյ. և այսպիսի են՝ հաւատ, յոյս, սէր, և ողջախոհութիւն. որոց վասն այն ամենայն վերոյիշատակեալդ մեղք, որք հակառակին առաքինութեանցս այսոցիկ՝ ոչ ընդունին զթեթևութիւն նիւթոյ, այլ միշտ լինին մահուչափ ։

Իսկ վասն օրինական արդարութեանց, եթէ իցեն տրամաբաշխական և վրէժխնդրական, յայտ է թէ ուր ուրեմն ընդունին սոքա ըզթեթևութիւն նիւթոյ, որպէս և զկնի ասասցի ։

Այլ 'ի կարգի փոխարինական արդարութեան չընդունին զթեթևութիւն նիւթոյ՝ սպանութիւն և խեղութիւն. մնացեալ հինգ այլ առաքինութիւնք, այսինքն՝ հնազանդութիւն, յարգութիւն, գթութիւն, խոնարհութիւն, և զգաստութիւն առ հասարակ ընդունին զթեթևութիւն նիւթոյ. յոյր սակս և մոլութիւնք և յանցանք դիմադրեալք սոցին կարեն լինել ներելիք առ թեթևութեան նիւթոյն, որպէս ասասցի յիւրում տեղւոջ ։

## Յաղագս մեղաց՝ որ են ընդդէմ հաւատոյ.

Ղդ. Ապաքէն յառաջ մատուցեր զժդ առաքինութիւս՝ միանգամայն և զմոլութիւս նոցին հակառակս. և թէ ո՞յք իցեն, որք ՚ի սակս թեթևութեան նիւթոյն՝ թէև ՚ի բնութէ իւրեանց մահուչափք՝ փոխին ՚ի ներելիս. ևս և զայնոսիկ՝ որք ոչն ընդունին զթեթևութիւն նիւթոյ, այլ կան և մնան միշտ մահուչափք: Արդ՝ համառօտիւ մեկնեա ինձ զմի մի ՚ի նախասացեալ մոլութեանց, և ՚ի մեղաց որք ընդդիմամարտին վերոյիշատակեալ չորեքտասան առաքինութեանց, հանդերձ դատապարտեալ նախադասութեամբք վասն նոցին իրաց:

Ղե. Սկիզբն առնելով ՚ի հաւատոյ՝ դիմամարտի նմին ըստ առանձնաշնորհութեան, ուրացութիւն հաւատոյ, որ նշանակէ զխսպառ հրաժեշտ ՚ի քրիստոնէական հաւատոյ, զանազանեալ ՚ի հերետիկոսութենէ, որ է խոտորումն մասնաւոր ՚ի մասանց ինչ հաւատոյ. յոյր սակս ոչ բերէ ընդ իւր զուրացութիւն. և վասն այսորիկ հերետիկոսք ոչ թողուն ՚ի դուրս զանունս քրիստոնեայ: Ո՛չ այսպէս է ուրացութիւն, որ ցուցանելով զխսպառ նուաղութիւն հաւատոյ, զհետ գայ՝ զի ուրացօղք ոչ են, և ոչ մարթին կոչիլ քրիստոնեայ: Այսպիսի են՝ որք միանգամ պաշտեն զհրէութիւն, զհեթանոսութիւն, զանաստուածութիւն, և զայլազգութիւն, (որ են ազգ ազգ ուրացութեան հաւատոյ.) յանձն առնլով զաղանդս և զսովորութիւս հրէից, կամ հեթանոսաց, կամ անաստուածից և կամ այլազգեաց:

Ուր պարտ է 'ի միտ առնուլ նախ՝ թէ հարկաւոր է յայտնել 'ի խոստովանութե՟ (դարձելոյն յուրացութե՟՝) թէ զորմէ 'ի սոցանէ բուռն հարեալ իցէ. որովհետեւ սոքին տեսակաւ տարբեր են յիրերաց. վս՟ զի իւրաքանչիւր 'ի սոցանէ ունի զայլեայլ դիմամարտութիս ընդդէմ ոբ. հաւատոյս մերոյ. իբր զի հերձութին ընդունել ընդունի զգոյութին ա՟յ, բայց ուրանայ զերրորդութի՟ երից անձանց, զմարդեղութի՟, զմահն, և զյարութի՟ մեսիայի փրկչին մերոյ. Այլազգութինս եւս՝ թէպէտև ընդունի զգոյութին միոյ միայնոյն ա՟յ, բայց նոյնպէս և սա ուրանայ զերրորդութի՟ անձանց. որպէս և զա՟ծութին ք՟սի և զմահ նորա, և զփրկագործութին: Հեթանոսութին իսպառ ուրանայ և զգոյութի՟ միոյն ա՟յ, ընդունելով զբազում ա՟ծս: Իսկ անա՟ծն՝ ոչինչ ա՟ծութի՟ ընդունի:

Ուր կամք են ինձ նշանակել, թէ չկան յաշխարհի անա՟ծք, եթէ ոչ գործնականք. զի ունիմ վկայ զսաղմոսերգուն՝ որ ասէ. * Նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց տէր ||. միայն գործով կան անա՟ծք բազումք (ը՟ս ասացելումն՝ * Ասաց անզգամն 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ա՟ծ ||.) որք և յիմարական ձեռնարկս յեղյեղեն ընդդէմ գոյութեն ա՟յ. մինչև յառակս եղև առ ռամիկս անա՟ծ կոչել զայն ոք, զոր տեսանեն մոլի վարուք. վս՟ զի այնպիսի կեանս վարէ, որպէս եթէ չհաւատայր՝ թէ գուցէ ա՟ծ:

Երկրորդ՝ պարտ է յուշ ածել, թէ առ 'ի լինել ուրացութեն հաւատոյ տեսական, մինչև անկանիլ 'ի վերապահեալ բանադրանս առաջին կանոնի կոնդակին ընթրեաց՝ պիտի ունել յարակից ընդ իւր զչարահաւատութի՟, և զիսպառ

զներքին պակասութ՟ի ու՟ղ. հաւատոյ. ուստի եթէ ոք առ երկիւղի մահու, կամ վ՟ս այլոյ բանի անկցի յուրացութ՟ի՝ պահելով 'ի ներքուստ զճշմարիտ հաւատն, թէպէտ և մեղանչէ մեղանչէ ծանուանս ընդդէմ խոստովանութ՟ե ճշմարիտ հաւատոյ, բայց ո՛չ անկանի 'ի վերապահեալ նզովս նախաճառեալդ կոնդակի, որ շանթահարէ միայն զիսկապէս և զտեսական ուրացողս հաւատոյ։

Միայն թէ այնպիսին պարտապան է կանոնական պատժոյ. որպէս յայտ է 'ի կ՟ն. առաքելական կանոնէ։ Ապա եթէ 'ի բոլոր սրտէ զղջացեալ դարձցի 'ի ու՟ղ. հաւատս, դիւրաւ ընդունի զթողութ՟ի ըստ որում սահմանեալ է 'ի կ՟ն. կանոնի ժողովոյն Անկիւրիոյ։

Երրորդ՝ պարտ է 'ի միտ առնուլ՝ թէ ներգործութ՟ին արտաքին ուրացութ՟ե թէպէտ և չունիցի յարակից ընդ իւր զներքին չարահաւատութ՟ի, այսու ն՟մի հանապազ է մեղք ծանր. և չտանի երբէք զթեթևութ՟ի նիւթոյ, եթէ ոչ՝ դուցէ իցէ գործ ինչ գլխովին բռնական. որպէս յորժամ ոք բռնութ՟բ ստիպեալ իցէ երկիր պագանել կռոց, կամ յարգել զսուտ մարգարէն։

Եւ ո՛չ իսկ կապ ամուսնութ՟են քակի ուրացութ՟բ հաւատոյ, ըստ որում պատասխանի արար Իննովկենտիոս Գ. առ եպիսկոպոսն փերրարայու, բաց յայլոց պատճառաց 'ի մէջ բերեալ և զայս. թէ * Սովին անքակութ՟բ զառաջս լինի առնուլ և չարութ՟ե ոմանց, որք առ ատելութ՟ե լծակցաց ընդ միմեանս, կամ վ՟ս անհաւան լինելոյ իրերաց, կեղծաւորէին զհերետիկոսութիւն, եթէ 'ի պատճառս նորին

կարող լինէին արձակել զկապն ||։

Բաց յուրացութենէ հաւատոյ, կայ և ուրացութիւն (կամ ուխտադրժութիւն) 'ի կղերիկոսական վիճակէ, և 'ի կրօնաւորական կարգէ. որոց վ(ասն) կան սահմանեալ պատիժք։ Ո՛ւ այսորիկ իսկ կրօնաւորք ուխտադրուժ ճանաչին, և թէ ապախտ համարեալ զիւրեանց ուխտ՝ նորին աղագաւ մերկանան զձև կրօնաւորութեան, և մեկնին 'ի փակարանէ վանաց. և ո՛չ երբէք ցուցանեն զապախտ լինել ուխտին՝ զոր արարին. ժող. տրիդ. նիստ. իե. գլ. ժԹ. յղ. կրօնաւ։ ժող. Բենեդ. գերմ. ժԳ. գլ. ժԾ։ Բենեդիկտոս ժԴ. 'ի սահմանադրութեան իւրում, որ սկսանի՝ Եթէ տուեալն մարդկան, պատուիրէ միտ դնել արթնութեամբ տրիդենտեան վճռոյ՝ որ յաղագս ունայն ցուցանելոյ զուխտ կրօնաւորացն, և ահա 'ի վճռի անդ արգելեալ լինի ունկն մատուցանել այնոցիկ, որք չիցեն բողոքեալ 'ի միջոյ հնգից ամաց. և հաստատէ զայլևայլ վճիռս ժողովոյն Ալենհոզոսաց։

Որք միանգամ 'ի բաց հերքեն զուրացութիւն, և դարձ առնեն 'ի ս(ուր)բ հաւատս, չեն պարտաւորեալ նզովել և մերժել զմոլորութիւնս անհաւատից կամ այլազգեաց ևս, յանդիման նոցա, և հրապարակել առաջի նոցա զդարձ իւրեանց առ ճշմարիտ հաւատս. որպէս քաղի 'ի վճռոյ ժողովոյն սրբաքննութեան. 'ի 18. յուլիսի. 1630.

* Սրբազան ժողովս 'ի դէպ համարեցաւ, զի ուրացօղք հաւատոյ երբ դառնան յապաշխարութիւն, ամենայն պարտական են 'ի բաց հերքել զուրացութիւն իւրեանց՝ յանդիման դերեաց քրիստոնէից, որոց ետուն զգայթակղութիւն, 'ի բանտի անդ իւրեանց հրապարակաւ և բացա-

յայտակի։ Այլ առաջի անհաւատից զայդ առնել չերևի հարկաւոր. այլ բաւական է՝ զի առաջի նոցա հրաժարեսցին 'ի գործոց անհաւատութեան, և 'ի բաց դիցեն յանձանց զձև սուտ կրօնի։ Եւ փոյթ կալցին, զի առ փոքր փոքր յետ ժամանակի ծանիցեն անհաւատք անդամ՝ կամ 'ի նոցունց, և կամ յայլոց՝ զնոցա ըզդարձն, թէ և 'ի վերայ կայցէ վտանգ կենաց‖։ Ուր յաւելուած բառիցդ. Եւ փոյթ կալցին, զի յետ ժամանակի ԼԲ. են յածաբանից պատուաստեալ, և ոչ գտանին 'ի բուն վճռի, որ պահի 'ի դիւանի սրբաքննութեան. և առ այն հարազատ վճիռ առաքեմք զընթերցողն. որպէս և առ թեմական ժողովն Բենեդիկտոսի ԺԴ. Գիրք. ԺԳ. Գլ. Է. 'ի վերջ նոյն։

'Ի վերայ հերետիկոսութեան, որ է մեղք նոյն օրինակ դիմամարտ հաւատոյ ըստ աստուածաբանողանցուբէ, ասելի է. թէ սա է մոլորութիւն մտաց՝ համդերձ յամառութեամբ կամաց։ Մոլորութիւն մտաց ասելով, 'ի դուրս ձգի տգիտութիւն՝ թէպէտև իցէ մեղադրելի, բայց ոչ ախորժեալ՝ 'ի վերայ խորհրդոյ հաւատոյ։ Յամառութեամբ կամաց 'ի բաց ձգի մոլորութիւն, թէպէտև իցէ մեղադրելի 'ի նիւթ հաւատոյ։ Քանզի յամ մոլորութիւնս 'ի նիւթ հաւատոյ՝ եթէ չգտանիցի ինչ յամառութիւն կամ խստութիւն 'ի կամս՝ չլինի հերետիկոս։ Յամառութիւն ասի, յորժամ այն՝ որ ունի զմոլորութիւն ինչ մտաց 'ի նիւթ հաւատոյ, կամի հաստատուն և պինդ ունել զնոյն, թէպէտ և գիտել գիտիցէ թէ եկեղեցին ուսուցանէ զներհակն՝ իբրև առ յոյ նմա յայտնեալ։

Հերետիկոսութիւն փակէ ընդ իւրև զչափա-

զան տեսակս ստորինս, զորս 'ի խոստովանութեանդ պարտ է բացատրել, ըստ զանազան մասանց և ճշմարտութեանց հաւատոյ, զոր ուրանայ և հակառակի իւրաքանչիւր հերետիկոս. ըստ որում այլ է հերետիկոսութիւն Լուտերական, Կալվինականն, Յանսենեանն, և Անգղիականն։

Կայ հերետիկոսութիւն պարզապէս ներքին, և կայ արտաքին. որպէս և այլ՝ ներքին և արտաքին միանգամայն։

Հերետիկոսութիւն պարզապէս ներքին է այն՝ յորժամ քրիստոնեայ ոք 'ի ներքուստ 'ի սրտէ ոչ հաւատայ միում մասին հաւատոյ. բայց ոչ արտածայնէ զայն, կամ չտայ ինչ նշան արտաքին, որով լիցի իմանալ թէ նա 'ի ներքուստ ունի զնոյնպիսի յամառ մոլորութիւն։

Հերետիկոսութիւն պարզ արտաքին է այն՝ յորժամ ոք կամ 'ի տգիտութենէ, և կամ 'ի մոլորութենէ, թէպէտ և իցէ մեղադրելի, բայց անյամառ կամ յանզգոյշս արտաբերէ զհերետիկոսութիւն ինչ, կամ առնէ զարտաքին գործ ինչ հերետիկոսական։

Իսկ հերետիկոսութիւն ներքին միանգամայն և արտաքին այն է, յորժամ ոք առ 'ի ներքս ոչ հաւատայ զխորհուրդ ինչ որ հաւատոյ, և առ արտաքս խօսի, գրէ, կամ տայ արտաքին նշան այնպիսի, զոր թէ ոք տեսանիցէ՝ քաջ 'ի միտ առնու, թէ ունի նա զայն մոլորութիւն. միայն թէ արտաքին այն ցուցակ չարահաւատութեան՝ չիցէ եղեալ առ բարի ինչ վախճանի. այսինքն՝ կամ վասն խոստովան լինելոյ, և կամ առ զխորհուրդ հարցանելոյ, և հրահանգ ընդունելոյ առ 'ի բաց դնել զհերետիկոսութիւն իւր։

Հերետիկոսութիւնս այս ներքին միանգամայն և արտաքին՝ կա՛մ է գաղտնի՝ և կամ յայտնի։ Գաղտնին է, յորժամ ոք ունի զչարահաւատութիւն 'ի ներքուստ, և արտաձայնէ զհերետիկոսութիւն իւր. կամ տայ արտաքին նշան ինչ նորուն, թէպէտ և չիցէ ոք անդանօր ներկայ։ Իսկ յայտնին այն է՝ յորժամ գտցի ոք անտանօր տեսող կամ լսող զնշանն՝ նշանակիչ հերետիկոսութեան նորա։

Պարզապէս ներքին հերետիկոսութիւն, թէպէտև է ծանր յանցանք ընդդէմ սուրբ հաւատոյ, սակայն մարթի արձակել յորո՛ց և իցէ խոստովանահարց. վասն զի պարզապէս ներքին հերետիկոսն ո՛չ անկանի ընդ վերապահեալ բանադրանօք զօրութեամբ առաջին կանոնի կոնդակին ընթրեաց, յոր ո՛չ լինի անկանիլ, եթէ չարահաւատութիւն ո՛չ 'ի յայտ եկեսցէ իւիք արտաքին և զգալի նշանաւ։ Պարզապէս արտաքինն եթէ յառաջ եկեսցէ 'ի տգիտութենէ, կամ 'ի մեղադրելի մոլորութենէ՝ է միշտ մեղք մահուչափ. իսկ եթէ ըստ բոլորին կամ ըստ մասին յառաջ եկեսցէ յանմտադրութենէ, յայնժամ կամ ո՛չ համարի ինչ 'ի մեղս, և կամ ներելի և եթ ըստ պարագային, որպէս 'ի վեր անդր ասացաւ. և ո՛չ լինի հերետիկոսութիւն տեսական, այլ նիւթական միայն. որոյ վասն և ո՛չ անգամ անկանի 'ի բանադրանս՝ որ 'ի Կոնդակի ընթրեաց։

Իսկ հերետիկոսութիւն ներքին միանգամայն և արտաքին թէև իցէ գաղտնի, է՛ մեղք ծանր յոյժ. և անկանի 'ի նզովս վերապահեալ պապին. որոյ աղագաւ յո՛չ ումեքէ մարթի արձակել, և ո՛չ իսկ 'ի ժամանակս յոբելինի աւանց

մասնաւոր քահանայապետական իշխանութե. բայց եթէ ինքնին հերետիկոսն ինքնայօժար յանդիման լիցի եպիսկոպոսին, կամ քննչին սրբազննութե, և յօժարակամ ամբաստան լիցի զհերետիկոսութենէ իւրմէ. քանզի յայտդիպուած արձակի 'ի բանադրանաց փրկարար ապաշխարանօք ևեթ. իսկ զմեղս հերետիկոսութե, յորմէ ոչ քաւեսցի արձակմամբն 'ի բանադրանաց, յետոյ պարտի խոստովան լինել. և կարող է արձակիլ յորևիցէ խոստովանահօրէ, որպէս ասասցի յիւրում տեղւոջ:

Եպիսկոպոսն պարտի զգոյշ լինել չտալ խոստովանահարց զիշխանութի արձակելոյ յարտաքին հերետիկոսութէ՝ թէպէտև 'ի գաղտնոյ: Վասն զի ոչ միայն զօրութբ տրիդենտեան ժողովոյ չկարէ տալ այլում զայնպիսի իշխանութի, այլև յաւուր յայսմիկ 'ի ձեռն կոնդակին՝ որ սովոր է վերծանիլ յընթրիս տն, իշխանութին արձակելոյ 'ի հերետիկոսութենէ բարձեալ է և յեպիսկոպոսէ գլխովին. զո որում յայտ արարին սբն Պիոս Ե. Գրիգոր ԺԳ. և Կղեմես Ը. ում վկայեն Տոլետոս. Գուներէգ. Սուգօղինոս. և այլք առ Սանքեզի. գլ. Է. յղ. դատն պատուիրանաց. գլ. ժա. հմ. 6. և առ Սուարեզի. յղ. բանադրանաց. ՃԻԶ. եա. հատուած. Գ. հմր. 5: Զնոյնն է իմաստասիրել և յերրորդ նախադասութե դատապարտելոյ յաղեքսանդրե Է. ուր գոնէ անուղղակի դատապարտի կարծիքն՝ որ տայ իշխանութի արձակելոյ 'ի գաղտնի հերետիկոսութէ. որպս նշանակէ անդանօր Դոմինիկոս վիվա:

Եպիսկոպոսունք ունէին երբեմն զայնպիսի իշխանութի արձակելոյ լոկ անձամբ. բայց այ-

սոր բարձեալ է և այն ։ Եւ ոչ իսկ արժան է հաւատալ, թէ այդ իշխանութիւն տուեալ իցէ եպիսկոպոսաց գաղղիոյ, թէպէտև յոլովք յե-պիսկոպոսաց անտի յանդգնէին վարել զայդ. որպէս բազում փաստիւք ցուցեալ լինի 'ի թե-մական ժողովյն. կր. է. կն. լգ ։ Եւ որ ժխ-տեալ լինի եպիսկոպոսաց, պարտ է ժխտել և վս քննչաց սրբաքննութեան սպանիոյ, և փոր-թուգալու. որք եթէ ունէին ևս երբեմն իշ-խանութիւն ինչ յայդմ մասին արձակելոյ յար-տաքին հերետիկոսութենէ զաղտնոյ՝ չև ելելոյ յատեան եպիսկոպոսին, Լա. սակայն այժմ կոնդակաւ ընթրեաց բարձեալ է 'ի նոցանէ այնպիսի իշխանութիւն ։ Տես և զհամառօտութիւն բարոյական և կանոնական վարդապետութեան գերապայծառ արքեպիսկոպոսին Յովհաննու դոմինիկոսի մանսեայ. տպ. Գ ։

Երկբայութիւնն զհաւատոյ՝ որ նոյնպէս է մեղք ընդդէմ հաւատոյ ըստ [illegible] կամ է դրական, և կամ բացասական ։

Դրականն է, յորժամ ոք 'ի միտս իւր դա-տաստան առնէ, թէ մասն կամ խորհուրդ ինչ 'ոք հաւատոյս մերոյ չիցէ ստոյգ, այլ տա-րակուսական. և յայս դիպուած երկբայօղն համարի տեսական հերետիկոս. քանզի * Երկ-միտն 'ի հաւատս՝ է անհաւատ ‖. ըստ նշանա-կելոյ 'ի կն. ա. յղ. հերետիկոսաց. և միանգամայն անկանի 'ի նզովս վերապահեալս պապին, եթէ 'ի դուրս ելցէ երկբայութիւն. զորօրինակ ա-սացաւ 'ի վեր անդր յաղագս ներքին և արտա-քին հերետիկոսութեան ։

Իսկ բացասական երկբայութիւն է՝ յորժամ ոք զդատումն իւր 'ի կախ ունի 'ի վերայ այն-

պիսի տարակուսանաց, լոկ բացասաբար ունելով զանձն, որպէս ասէպ պատահէ 'ի յոլով տարակուսանս, զոր առաջի մեր արկանէ այսն չար 'ի վերայ սբ հաւատոյս մերոյ. ընդ որ ոչ հաւան պտանիմք, և ոչ անհաւան. այլ վաղվաղեալ դեգերիմք 'ի խորհել զայլ ինչ իրս. և յայս դիպուած ոչինչ մեղք գործի: Սանչեզ 'ի տասնաբանեայ օրէնս. գր. Է. գլ. Է. հտ. 11. 'ի վերջն: Սուրամնոր ազգ. առնէ, թէ զայս պարտ է այսպէս իմանալ, միայն թէ միտքն յանդրադառնալ իւրում յիւր տարակուսանս՝ ոչ համարեսցի զայն խորհուրդ լինել երկբայական. ապա թէ ոչ՝ բաց'ի բացասական կարծեաց՝ գտանիւր և դրական դատաստան մտաց, որ դատէր զայն խորհուրդ չլինել ստոյգ. ուստի լինէր երկբայումն դրական և հերետիկոսական:

Այլ վ՟ս բանի նպաստաւորութե՟ն, պաշտպանութե՟ն, և ասպնջականութե՟ն հերետիկոսաց՝ ասելի է, թէ են մեղք ընդդէմ հաւատոյ ըստ աստուածպաշտութե՟ն, յորժամ բանիւ աղանդոյն, այսինքն՝ առ'ի սատար հերետիկոսութե՟ն, կամ 'ի շնորհս նորուն լինիցի նպաստել, պաշտպանել, և ասպնջական լինել հերետիկոսաց:

Իսկ յայնժամ լինի անկանիլ 'ի բանադրանս վերապահեալս կոնդակին ընթրեաց, թէպէտ և 'ի ներքուստ չլինիցին ինքեանք հերետիկոս. ըստ որում Սանչեզ 'ի յիշատակեալ տեղին. գլ. Ծ. հտ. 7. ասէ՝ թէ մարթի այդմ լինել: Իւր իմաստութե՟բ յաւելու և զայս. զի թէ երբեք նպաստիցէք այդ իցեն արդեն հերետիկոսք՝ յայն դիպուած 'ի կրկին նզովս անկանին. մի՝ վ՟ս հերետիկոսութե՟ն, և միւս ևս՝ վ՟ս նպաստաւորութե՟ն:

Աստանօր պիտի յուշ առնել զտարբերութիւն որ 'ի մէջ ուրացողաց նոք հաւատոյս մերոյ, և 'ի մէջ նպաստաւորաց հերետիկոսաց: Ուրացողք ոչ անկանին ընդ նզովիւք վասն բանի սոսկապէս արտաքին ուրացութեան, եթէ 'ի ներքուստ չունիցին զուգընթաց զչարահաւատութիւն. որպէս ասացաւ 'ի վեր անդր: Բայց ոչ այսպէս և նպաստաւորք, որք սակս ձեռնտուութեան ևեթ սահին 'ի յիշատակեալ նզով, թէև 'ի ներքուստ չիցեն երբէք հերետիկոսք: Կարենոս. հատ. Է. տետրակս. Դ. հծ. 97: Վասնզի նպաստաւորութիւն հերետիկոսութեան կատարի լինել 'ի ձեռն լոկ արտաքին գործողութեան օժանդակելոյ, պաշտպանելոյ, կամ հիւրընկալելոյ ընդ հերետիկոսս. այլ ոչ այդպէս ուրացութիւն հաւատոյ եղեալ արտաքին ներգործութեամբ միայն:

Ժամ է արդ՝ բուռն հարկանել զհերետիկոսական հայհոյութենէ, որ հակառակի հաւատոյ ըստ աստուածաբանութեան: Այս է թշնամանք, կամ ընդդէմ Աստուծոյ, կամ ընդդէմ Սրբոց, որ փակէ ընդ իւրև և զմոլորութիւն ընդդէմ հաւատոյ. զոր օրինակ՝ եթէ ոք առ զայրոյթ սրտին ասասցէ. Ո՜հ Աստուած անիրաւ, Ո՜հ Աստուած անողորմ, այդ է մեղք ծայրագոյն ընդդէմ հաւատոյ, և կրօնի: Ընդդէմ հաւատոյ՝ վասն բարբառելոյ մոլորութեան: Իսկ ընդդէմ կրօնի՝ վասն եղանակին՝ որով բարբառի. այսինքն՝ թշնամանելով զԱստուած:

Հերետիկոսական հայհոյութիւն երբեմն յարակից իւր ունի զհերետիկոսութիւն. իսկ յայնժամ, յորժամ որ ասէ զայն հայհոյութիւն, հաւատայ ևս այնմ՝ զոր ասէ, թէպէտև առ վայրկեան մի ևեթ. և ահա յայս դիպուած բաց 'ի ծայրագոյն մեղաց՝ որ ընդդէմ հաւատոյ և կրօ-

նի՝ անկանի և 'ի նզովս իբրու տեսական հերետիկոս ։ Ապա եթէ չհաւատայ ասացելոցն, այլ 'ի թափոյ բարկութեան, առանց մտադրութեան և առանց չարահաւատութեան, տինա և հանդերձ մտադրութեամբ, բայց առանց ինչ ներքին չարահաւատութեան արտաքերիցէ զհերետիկոսական հայհոյութիւն, յայտ դիպուած լինի հերետիկոս նիւթապէս միայն, և չանկանի ընդ նզովիւք ։

Հերետիկոսական հայհոյութիւն է երրեակ․ սրտի, բերանոյ, և գործոյ ։ Հերետիկոսական հայհոյութիւն ներքին, կամ որ նոյն է սրտի, է այն՝ յորժամ ոք ինքնին 'ի սրտի խորհիմ առանց 'ի վեր հանելոյ հայհոյէ հերետիկոսական հայհոյանօք ։ Հայհոյութիւն բերանոյ, է՝ յորժամ ոք արտաձայնէ բերանով ։ Իսկ հայհոյութիւն գործոյ, է՝ յորժամ ոք բարկութեամբ իմն (օրինակի վն) առ ոտն կոխեսցէ զխաչելութիւն, ևն ։ Հայհոյութիւն սրտի, պարզապէս ներքին՝ ոչ արկանէ ընդ նզովիւք․ թէպէտև է կարի ծանր յանցանք ընդդէմ հաւատոյ և կրօնի ։ Հայհոյութիւն բերանոյ, եթէ իցէ կից ընդ չարահաւատութեան՝ արկանէ ընդ նզովիւք․ և առնէ զնա տեսական հերետիկոս․ այլ ոչ եթէ արտաքերիցէ առանց չարահաւատութեան․ քանզի յայտ դիպուած լինի նիւթապէս հերետիկոս ։ Նոյն 'ի դէպ է ասել և զհայհոյութենէ գործոյ․ զի թէ ոք չարահաւատութեամբ առաթուր կոխեսցէ ըզխաչելութիւն ինչ՝ անկանի ընդ նզովիւք, և է տեսական հերետիկոս․ իսկ եթէ առանց ինչ այդպիսի չարահաւատութեան, լոկ 'ի բարկութենէ և 'ի ցասմանէ ընդդէմ յի քի արասցէ զայդ գործ եղեռնաւոր, թէպէտև չանկանի 'ի նզովս, բայց ծանունս յոյժ մեղանչէ ընդդէմ կրօնին ։

Մեղադրելին տգիտութիւն 'ի նիւթ հաւատոյ՝ **ըստ նուաղութեան**, դիմամարտեալն հաւատոյ, է մեղք մահուչափ ընդդէմ բացասական պատուիրանին՝ որ պարտաւորէ զմարդ **մեղք եւ ոչ-մեղք**, ոչ տգիտանալ զխորհուրդս հաւատոյ. բայց չկացուցանէ զտգէտն հերետիկոս. քանզի ոչ մոլորութիւն ունի 'ի միտս, եւ ոչ յամառութիւն 'ի կամս. վասն որոյ եւ ոչ իսկ անկանի 'ի նզովս վերապահեալս ընդդէմ հերետիկոսաց, թէպէտ եւ երեւեցուսցէ առ արտաքս զտգիտութիւն իւր: Սանքէզ 'ի յիշատակեալ տեղին. գլ. Է. հՏ. 20: Այլ պարտ է 'ի միտ առնուլ, թէ որ մեղադրելի տգիտութեամբ անգիտացելի զխորհուրդս որ հաւատոյ, գործէ զմի եւեթ մահուչափ մեղս ընդ ամենայն ժամանակս՝ յորս գտանի 'ի նմին տգիտութեան. իսկ զյանցանս ծանրացուցանէ պարագայն եւեթ ժամանակին, միայն թէ չնորոգեսցէ զայն ներգործութիւն ինքնակամ տգիտանալոյ զայնպիսի խորհուրդս. վասն զի յայն դիպուած զայնքան թուով մեղս գործէ՝ զորչափ ներգործութիւնս նորոգէ. Նոյնպէս եւ զնոյնաթիւ մեղս գործէ՝ քանիցս անգամ լըջմտութեամբ ապախտ արասցէ զաւխթսն՝ զորս ընդառաջ եղանեն նմա ուսանիլ. քանզի եւ պատուիրան կայ ստորասական՝ որ պարտաւորէ զնա յայնպիսում դիպուածի: Նա եւս մեղանչէ առ իւրաքանչիւր նուագս յորս զանց արասցէ 'ի կիր արկանել զներգործութիւն հաւատոյ այնպիսի խորհրդոց, ըստ որում պարտական գտանի ամենայն քրիստոնեայ:

'Ի վախճանի պարտ է 'ի միտ առնուլ, թէ որ ունի զտգիտութիւն խորհրդոց հաւատալեաց **հարկաւորութեամբ միջնորդի**՝ չէ ընդունակ արձակման.

թէ և երբէք անմեղադրելի իցէ տգիտութի նորա: Նմին իրի Իննովկենտիոս ԺԱ. ընդ այլ նախադասութիս իւր դատապարտեաց և զկդ: * Արձակման ընդունակ է մարդն, թէ և վարակեալ իցէ տգիտութբ խորհրդոց հաւատոյ, եւս և եթէ մեղադրելի անհոգութբ անգամ անգիտանայցէ զխորհուրդ ամենասուրբ երրորդութե, և զմարդեղութե տն մերոյ յսի քսի ||: Որպէս և զերկրորդն զայն. * Մի միայն հաւատք միոյն այ հարկաւոր երևի հարկաւորութբ միջնորդի, և ոչ եթէ բացայայտ հաւատք՝ թէ ած է պարգևատու ||:

Իսկ մեղադրելին մոլորութի 'ի նիւթ հաւատոյ՝ բաց ——————————, դիմամարտեալն հաւատոյ՝ զանազանի 'ի տգիտութե: Վասն զի տգիտութին չունի զունակութի գիտութե ըղ-խորհրդով հաւատոյ. իսկ մոլորութին ունի զունակութի գիտութե հակառակ վարդապետութե իմիք հաւատոյ. զորօրինակ՝ եթէ ոք հաւատայցէ յածային. * թէ հայր երիցագոյն իցէ կամ ծերագոյն քան զորդի. իբր զի որդի ծնեալ է 'ի հօրէ ||: Արդ մոլորութին 'ի նիւթ հաւատոյ՝ եթէ մեղադրելի իցէ՝ է մեղք ծանր ընդդէմ հաւատոյ. իսկ եթէ չունիցի ընդ իւր զյամառութի՝ մոլորեալն ոչ լինի հերետիկոս, և ոչ իսկ անկանի ընդ նզովիւք՝ երբ զմոլորութին 'ի դուրս երևեցուցանիցէ:

Յայսմ վայրի կամ եղև ասել ոմանց, թէ 'ի մոլորութե զմասամբ իմիք հաւատոյ՝ որ բացայայտ իցէ և քաջածանօթ ամ քրիստոնէից՝ չէ հնար ումեք անգիտանալ զմիտս եկեղեցւոյ. յոր սակս պարտ է ասեն ենթադրել զյամառութի և զհերետիկոսութի 'ի մոլորեալն. և

թէ յորժամ 'ի դուրս երեւեցուցանէ զայն մոլորութիւն՝ անկանի 'ի նզովս վերապահեալս ընդդէմ հերետիկոսաց ։ Այլ սակայն յորժամ խնկապէս բաց 'ի մոլորութ՟է վարդապետութ՟ե՝ կայցէ և ոգխտութ՟ի վնասոյ եկեղեցւոյ , թէպէտ և մեղադրելի , յուլական , և թանձր՝ մոլորեալն ոչ լինի հերետիկոս ․ և յերեւեցուցանելոյն խսկ առ արտաքս զայնպիսի մոլորութ՟ի՝ չանկանի 'ի նզովս ։ Տես զՍանքեզ ․ գլ ․ է ․ 2 ․ 20 ։

'Ի վ՟ր ընթերցման հերետիկոսական գրեանց, որ է մեղք գխմամարտ հաւատոյ ըստ առաւելաղանցութ՟է , յոչ լիցի , զի երեք ազգք են գրեանց՝ զորս արգել եկեղեցին ընթեռնուլ կամ պահել ։

ա ․ Այն գիրք հերետիկոսաց՝ որք ձառեն զկրօնից , կամ պարունակեն զհերետիկոսութիւն ։ բ ․ Գիրք հերեսիովտայց ընդհանրապէս , թէպէտ և չլիցեն 'ի նոսա բանք զկրօնից , կամ չկայցեն հերետիկոսութիք ․ ոչ՟ և գիրք ուղղափառաց դատապարտեալք յեկեղեցւոյ առ կասկածանաց սուտ վարդապետութ՟ե ։ գ ․ Այն գիրք՝ որք խօսին զպագշոտութ՟եց , և են ընդդէմ բարի վարուց ։

Որ միանգամ ընթեռնու կ՟մ պահէ զգրեանս հերետիկոսաց՝ որք ձառեն զկրօնից , կ՟մ պարունակեն զհերետիկոսութիս , ծանր յոյժ մեղանչէ ընդդէմ հաւատոյ , և ընդդէմ հնազանդութ՟ե՝ զոր պարտ է ունիլ առ եկեղեցին ․ Նա և անկանի 'ի նզովս վերապահեալս պապին, ա առաջին կանոնի կոնդակին ընթրեաց ։

Որ ընթեռնու զայլ գրեանս հերետիկոսաց 'ի վ՟ր զինչ և իցէ նիւթոյ , կամ նաև զգիրս ուղղափառաց զդատապարտեալս սակս կար-

ծեաց սուտ վարդապետութե՟ն նոյն օրինակ մեղանչէ ընդդէմ հաւատոյ և հպատակութե՟ն․ և միանգամայն անկանի 'ի նզովս եդեալս 'ի տասներորդ կանոնի ցուցակին, և 'ի կոնդակի Պիոսի Դ․ որ սկսանի Տէրունեան հօտին․ այլ այս չէ՛ վերապահեալ․ վ՟ն որոյ և մարթ է արձակել ա՟մ խոստովանահարց ։

Իսկ որ ընթեռնու զայլ գրեանս արգելեալս վասն անհամեստութե՟ն, և վասն լինելոյ ընդդէմ բարի վարուց՝ մեղանչէ ընդդէմ հպատակութե՟ն եկեղեցւոյ, և ընդդէմ ողջախոհութե՟ն 'ի պատճառս վտանգին՝ յորում դնէ ըզ զանձն իւր արատաւորել զառաքինութի՟ն ողջախոհութե՟ն․ վ՟ն որոյ յընթեռնուլն՝ միշտ գործի մեղք մահուչափ․ եթէ ոչ՝ թերևս կայցէ թեթևութի՟ն նիւթոյ նշանակեալ 'ի վարդապետաց․ զորօրինակ՝ է ընթեռնուլ տողս երկուս կամ երիս ։ Բայց սակայն պարտ է յոյժ ածել, թէ նաև 'ի դոյզն իսկ տողս՝ մարթի գտանել թոյն հերետիկոսութե՟ն կամ մոլորութեան․ ուստի յայն դիպուած լինի մեղանչել ծանրապէս, և անկանել 'ի վերոյիշատակեալ պատիժն ։ Եւ քանզի գտանի գիրք ինչ արգելեալ ընդ պայմանաւս Քննչի օրէնագրեացն, ոմանք 'ի կարծիս եղեն թէ մարթ իցէ ընթեռնուլ և պահել զայնոսիկ․ այլ զայս դատապարտեաց Աղեքս՟․ Է․ 'ի խն՟․ նախադասութե՟ն ։* Զգիրսն արգելեալս, մինչև ուղղագրեսցին, մարթ է առ իւր պահել՝ մինչև զգուշագոյնս սրբագրեացին ‖ ։

Բայց յաղագս ընթեռնլոյ զա՟ծաշունչ 'ի լեզու աշխարհաբառ՝ պարտ է ուշ ունել չորրորդ կանոնի ցուցակին կարգելոյ 'ի ժողովն տրի-

դենտեան , և 'ի հրամանի Պիոսի Է . * որով-հետև փորձիւ յայտ է , զի թէ ոք գիրք ռամկական բարբառով անխտիր թոյլ տացին ստէպ վերծանել , առաւել ծագէ անտի վնաս՝ քան օգուտ՝ առ յանդգնութեն մարդկան . յայսմ մասին լիցի զհետ երթալ դատման եպիսկոպոսին կամ քննչին սրբաքննութեն . զի հանդերձ խորհրդով ժողովրդապետին կամ խոստովանահօր՝ ընթերցումն ածաշնչի թարգմանելոյ յուղղափառ մատենագրաց աշխարհաբառ՝ մարթասցի շնորհել այնոցիկ , զորս գիտասցեն՝ թէ յայնպիսի ընթերցմանէ ոչ վնաս , այլ զաճումն հաւատոյ և ածպաշտութեն կարող են քաղել . և զայս իշխանութի առնուցուն գրով : Իսկ որ առանց այսպիսի իշխանութե իշխեսցէ ընթեռնուլ կամ առ իւր պահել , ոչ կարասցէ առնուլ զարձակումն մեղաց , մինչև է յանձնեալ ըզգիրսն 'ի ձեռս կարգաւորեալ առաջնորդին ‖ :

Ո.ւլ քանզի եպիսկոպոսունք դիւրահաւան գըտանէին 'ի տալ զայսպիսի հրաման , և մեծաւորք կրօնաւորաց ձեռներէց լինէին յայդպիսի իշխանութի , 'ի չորրորդ կանոնն ցուցակի յաւելաւ 'ի հրամանէ Կղեմայ Ը . և առաջիկայս բան . * Պարտ է 'ի միտ առնուլ յաղագս նախասացեալ չորրորդ կանոնի ցուցակին եդելոյ 'ի բարեյիշատակ պապէն պիոսէ Դ . թէ սովին տպագրութե և 'ի լոյս ընծայմամբ՝ ոչինչ նոր իշխանութի տուեալ լինի եպիսկոպոսաց , կամ քննչաց , և կամ մեծաւորաց կրօնաւորաց՝ շնորհելոյ ումեք զիշխանութի գնելոյ , ընթեռնլոյ , կամ առ իւր պահելոյ զոք գիրս աշխարհաբառ 'ի լոյս ընծայեալս . ուր մինչև ցարդ հրամանաւ և գործածութե ընդհանուր

սրբաքննութե՟ն հռովմայ 'ի բաց բարձեալ էր 'ի նոցանէ իշխանութիւն շնորհելոյ զայսպիսի թոյլտուութի՟ս ընթեռնլոյ, կա՟մ պահելոյ զաշխարհաբառ ա՟ծաշունչ. կամ զայլ մասունս ս՟բ գրոց՝ նոր կամ հին կտակարանաց, ռամկական լեզուաւ տպագրեալս. ևս և զքաղուած իսկ և զբովանդակութի՟ս ա՟ծաշնչի զպատմականս՝ յոր և է լեզու աշխարհաբառ գրեալս: Նու զայս անեղծ օրինօք պարտ է պահել ||:

Խնդրի, արդեօք մեղանչէ՞ որ պահէ առ իւր և ընթեռնու զարգելեալ գիրս ձեռագիրս:

Պտ՟խնեմ այո՛. ապա թէ ոչ՝ կարի հեշտեաւ լինէր եղծանել զօրէնս կարգեալ ընդդէմ արգելեալ գրոց, երբ կարօղ էր ա՟մ ոք առնուլ զօրինակ նոցա. Թո՛ղ զի հասարակաց միտք վկայեն թէ նաև ձեռագիր մատեանն է ստուգապէս գիրք: Դուարդ, և այլք:

Գիտնական անձանց ևս ո՛չ է օրէն առանց մասնաւոր հրամանի ընթեռնուլ զարգելեալ գիրս. այլ միայն մարթին լինել բազում դիպուածք՝ որք պահանջեն զգերզգօնութի. զօրօրինակ՝ եթէ ոք կամիցի վարել զընթերցուածս արգելեալ գրեանց՝ առ 'ի կշտամբել զմոլորութի ինչ, և ո՛չ կարասցէ դիւրաւ հրաման առնուլ, և կամ գո՛նէ անագանիլ այնմ դիպեսցի:

'Ի վ՟ր զեկուցման, զոր պարտ է առնել վ՟ր հերետիկոսաց, կամ վ՟ր խիթալի եղելոյ զհերետիկոսութէ՟՝ որ է մեղք դիմամարտ հաւատոյ ըստ Նոտաղուբէ՝ եթէ զանց առնիցի, ասեմք թէ առ այս պարտաւորեալ են ա՟մ և իւրաքանչիւր հաւատացեալք յո՛ր և է աստիճանի, 'ի վիճակի, և 'ի պայմանի՝ զօրութե՟ սրբազան կանոնաց. Գլ. Եռանդբենդ. 'Ե տ. յշ. Հերե-

դենտեայ. յօդ. Յաւելուած. և զօրութե վճռոց
կարդինալաց Հանրական սրբաքննութե, և վճռոց
այլոց եպիսկոպոսաց, և մասնաւոր քննչաց,
որք տեսական պատուիրանաւ ընդ Հնազանդու-
թե, և ընդ պատժով բանադրանաց տուեալ
վճռոյ պարտաւոր առնեն զամենեսին, 'ի միջո-
ցի սահմանեալ ժամանակի ծանուցանել ատե-
նի Սրբաքննութե, կամ եպիսկոպոսաց զհե-
րետիկոսս, կմ զկասկածաւորս զհերետիկոսու-
թէ, որք ամփոփին յերկոտասան գլուխս յի-
շատակեալ վճռոց:

Բայց քանզի 'ի հրովարտակի հանրական
քննիչ կարդինալաց սահմանի ծանուցանել 'ի
միջոցի երեսուն աւուրց. իսկ 'ի հրովարտակն
մերս գերապատիւ եպիսկոպոսի, և հօր քննչի
դնին աւուրք երկոտասան. վս որոյ պարտ է
գիտել զօրութե պատասխանւոյ եղելոյ 'ի վր
այսր առանձինն առ գերապատիւ եպիսկոպոսն
մեր 'ի վերակացուէ անտի սրբաքննութեան
հռովմայ. 'ի կողմանս յայսոսիկ պահելի է ժա-
մանակն սահմանեալ 'ի գերապատիւ եպիսկո-
պոսէն, կամ 'ի քննիչ հօրէն, յորժամ զեկու-
ցանօղն կամիցի զեկուցանել առաջի միոյն 'ի
դոցանէ. զի այս 'ի կամս նորա է ապաստան:
Իսկ սահմանեալ ժամանակն հանրական քննիչ
կարդինալաց՝ պարտի պահիլ 'ի հռովմ և 'ի
սահմանս նր, ուր չկայցեն մասնաւոր քննիչք:
Այլ որ ո՛չ զեկուցանէ 'ի սահմանեալ ժամա-
նակին, ո՛չ միայն մեղանչէ մահուչափ մեղօք
ընդդէմ հնազանդութե՝ զոր պարտի եկեղեց-
ւոյ, այլ անկանի և 'ի նզովս. յորմէ ո՛չ կարէ
արձակիլ երբէք, և ո՛չ իսկ 'ի ժամանակի յոբե-
լինի՝ եթէ ո՛չ յատենէ սրբաքննութե կամ յե-

պիսկոպոսէ զկնի զեկուցանելոյ օրինօք դա-
տաստանի ։

Եւ աստանօր ծագէ տարակոյս. արդեօք ապաշխարողն՝ որ ոչն զեկուցեալ հօր քննչի կմ̃ գերապայծառ եպիսկոպոսի 'ի սահմանեալ միջոց ժամանակի, յայն սակս սահեալ իցէ 'ի բանադրանս, կարօղ իցէ զկնի զեկուցանելոյն արձակիլ 'ի ձեռն ո՛յր և է խոստովանահօր 'ի բանադրանաց այտի, և 'ի յանցանաց անտի գործելոց ընդդէմ հնազանդութ̃ե եկեղեցւոյ ։

Պատասխանի. եթէ 'ի հրովարտակի երկաքանչիւրոց չիցէ վերապահեալ նզովք, (ո՛պ̃ է վերապահեալ 'ի հրովարտակի սրբաքննութ̃ե հռովմայ՝) կարէ արձակիլ յո՛ր և իցէ խոստովանահօրէ, ըստ որում գրեաց հայր վերատեսուչն առ մերս գերապայծառ եպիսկոպոս 'ի վ̃ր այսր տարակուսի. ապա եթէ իցէ վերապահեալ այդ նզովք, (ո՛պ̃ է 'ի հրովարտակի մերոյ եպիսկոպոսի՝) ոչ մարթի արձակիլ ։

Ուր 'ի դէպ է 'ի միտ առնուլ, նախ՝ թէ չի՛ք ումեք պարտք զեկուցանելոյ զանձնէ իւրմէ. վ̃ն որոյ յորժամ ապաշխարողն ամբաստան լինի զհերետիկոսութ̃է իւրմէ, և զայլ ինչ յանցանաց՝ որ բերիցէ կասկածանս հերետիկոսութ̃ե, խոստովանահայրն ոչ կարէ պարտաւորել զնա զեկուցանել զանձն. բայց միայն կարող է յորդորել, ո՛պ̃ զի ինքնակամ յանդիման լինելով սրբաքննութ̃ե ատենի կամ առաջի եպիսկոպոսի, և զեկուցանելով ինքնին զապիրատութ̃է իւրմէ՝ ձողոպրեսցի 'ի պատժոյ անտի՝ յոր ունէր անկանիլ՝ եթէ յայլոց լինէր ամբաստանեալ ։ Իսկ եթէ ապաշխարողն չհաճեսցի ընդ այդ՝ պարտ և արժան է արձակել

զնա. միայն թէ խոստովանահայրն ունիցի զիշխանութի՟ ՚ի վ՟ր այդպիսի դիպուածոյ, և ապաշխարողն իցէ տրամադրեալ. զորօրինակ՝ ՚ի վ՟ր ներգործական հրապուրանաց ՚ի խոստովանութե՟. ՚ի վ՟ր հերետիկոսական հայհոյութե՟ց. միայն թէ չունիցին յարակից զչարահաւատութի՟: Իսկ եթէ ապաշխարողն ունիցի մեղսակից ՚ի յանցանս անդ, թէպէտև ինքն իցէ գլխաւորն՝ պարտաւորի զեկուցանել ըզմեղսակիցս. ապա թէ ոչ՝ անմարթ է արձակել: Բայց լաւ լիցի յորդոր լինել նմա, զի նա ինքն ապաշխարողն նախ զանձնէ իւրմէ ամբաստանեսցէ իբր ինքնայօժար, և ապա ըզմեղսակցաց՝ իբր զեկուցիչ. ապա թէ ոչ՝ ՚ի հակառակ դիպուածի եթէ այլուստ զեկուցեալ մեղսակիցքն վկայեսցեն ՚ի քննութե՟ անդ ընդդէմ ամբաստանողին, որ՟ և արդեամբք իսկ պարտին վկայել, նա ինքն պատժեսցի ը՟ բերելոյ իրաւանց:

Երկրորդ՝ յուշ լիցի, թէ հաւատացեալք պարտաւոր են առնել զայսպիսի զեկուցումն առանց ՚ի գործ արկանելոյ կանխաւ զեղբայրական յանդիմանութի՟. որ՟ յայտ է ՚ի կանդակէն Աղէքսանդր Է. Ընդդէմ այլոց ճառամբք հրատարակելոյ, ՚ի 8. յունիսի. 1660:

Երրորդ՝ պարտաւոր են զեկուցանել զհերետիկոսութիւն, կամ զկասկածն թէ և իցէ գաղտնի և չմարթիցին ցուցանել. յոր սակս Աղէքս". Է. ՚ի Դ՟. նախադասուե՟ դատապարտեաց զհակառակն զայն. * Թէ և քաջայայտ հաւաստի իցէ քեզ հերետիկոսն լինել պետրոսի, ոչ պարտաւորիս զեկուցանել, եթէ ցուցանել չկարես ||:

Չորրորդ՝ նա որ գիտէ ընդ բնական կնքով. եւս և երդմամբ չափ, (միայն թէ չիցէ ընդ կնքով խորհրդոյ՝) թէ պետրոսն իցէ հերետիկոս, կամ խիթալի զհերետիկոսութէ̃, պարտական է զեկուցանել զնա. և ինչ ո՛չ պարտաւորէ յայսմ մասին բնական կնիքն կամ երդումն ։

Հինգերորդ՝ խոստովանահայրք, որք ո՛չ պարտաւորեն զապաշխարօղս ամբաստանել՝ երբ պարտական են առնել, անկանին 'ի ծանր պատիժս դնելիս յեպիսկոպոսաց և 'ի քննչաց սր̃ կոնդակի Գրիգորի ժե̃. Համօրէն տէրունեան հօտին՝ առ յօդ. 9 ։ Իսկ եթէ խոստովանահայրքն կրօնաւորք իցեն, որք այլ և այլ պատճառանօք ո՛չ պարտաւորիցեն զապաշխարօղս առ 'ի զեկուցանել՝ անկանին նաև 'ի բանադրանս վերապահեալս պապին. որ̃ կարգեցաւ 'ի յիշատակեալ սահմանադրութէ̃ Աղեքս". է ։ Իւզի կանայք ո՛չ սակաւ անգամ պարտաւորին զեկուցիչ լինել զխոստովանահայրն՝ որոյ հրապուրեալ իցէ զնոսա առ մեղս 'ի խոստովանութե̃, նմին իրի պիտոյ է յուշ առնել, թէ մ̃ն պարտաւորութե̃դ այդորիկ զան կրկին նախադասութիւնք դատապարտեալք յԱղեքսանդրէ է̃. այսինքն՝ ը̃. և է̃. յորոց առաջինն է. * Խոստովանահայր՝ որ 'ի խորհրդական խոստովանութե̃ տայ ապաշխարողին զթուղթ ինչ առ 'ի յետոյ ընթեռնուլ, յորում սադրէ զնա 'ի մարմնական մեղս, ո՛չ համարի հրապուրիչ լինել 'ի խոստովանութե̃, նմին իրի և չէ՛ զեկուցանելի ‖. քանզի յայտ իսկ է թէ որ զայդ ապիրատութի̃ գործէ, է անշուշտ ոտնհարու խորհրդոյ խոստովանութե̃, և իրաւամբք զե-

կուցանելի յատեան եկեղեցւոյ ։ Եւ եկդն է ·
* Նշանակն խոյս տալոյ 'ի պարտաւորութե՛ն զեկուցանելոյ զհրապուրանս՝ այս է , եթէ հրապուրեալն խոստմամն լինի հրապուրողին , սա կարէ զնա արձակել առանց դնելոյ զբեռն զեկուցման ‖ ։

'Ի միւս սրբաքննութե՛ն յաղագս զեկուցման՝ եթէ՛ ներգործականի և եթէ կրաւորականի փակին կարդինալք , դուքսք , կայսերք · միայն թէ ընդդէմ այսպիսեաց չե՛ք սովորու՛ յառաջ խաղալոյ առանց գիտութե՛ն պապին ։ Որդին պարտաւորեալ է զեկուցանել զհայր իւր հերետիկոս , և հայրն զորդին հերետիկոս , թէ և չինցէ ուսուցեալ զայն վարդապետութի՛ ։ Եւ պարզաբար՝ ո՟վ ասացաւ՝ ամենեքին են պարտական ։ Եւ չարժէ ինչ ասելն , թէ պարտ է անբասիր առնել զորդին 'ի զեկուցանելոյ , իբր զի կարի ծանր ձնաւք ծագին նմա · ո՟վ պատիժ վտանոնութե՛ն , առումն ընչից նորա իբր յարքունիս , ևն ։

Զարժէ ինչ՝ ասեմ · մ՟ւ զի որդին զեկուցանելովն զհօրն իւրմէ հերետիկոսէ , ազատ մնայ յա՟մ պատժոց՝ ընդ որովք անկանին որդիք հերետիկոսաց ։ Նոյպէս խօսին Պեգնաս · Սանտամէլլի · Կարենաս · Փելլիքս պոտեստաս , և այլք ։

Հերետիկոսն , կամ խիթալին զհերետիկոսութե՛ն՝ չէ՛ պարտաւորեալ զեկուցանել անձամբ զանձն , եթէ ո՛չ յորժամ հարցանի ո՟վ պարտաւոր 'ի դատաւորէ ։ Պատճառն՝ զոր յառաջ բերեն վարդապետք այն է , թէ * Ո՛ զի ո՛չ ոք պարտաւորի անձամբ զանձն մատնել , և ո՛չ ոք է պարտական բանալ զխայտառակու-

թն իւր ||: Իսկ այս պատճառ անբասիր առնէ նաև զհերետիկոսն, եթէ ոչ օրինաւոր ատենի հարցէ առ 'ի զեկուցանել զմեղսակիցն : Բայց հակառակ կարծիքն է հաւանական՝ երբ բանն իցէ զտեսական հերետիկոսութէ : Պարտաւորութի զեկուցանելոյ զտեսական հերետիկոսն ոչ դադարէ մահուամբ տեսական հերետիկոսին, այլ տևէ և զկնի մահուանն. այս է կարծիք հասարակ առ վարդապետս : Սոյնպէս կայ մնայ պարտաւորութի զեկուցանելոյ և զնա, որ զղջացեալն է 'ի յանցանաց վերաբերելոց առ սրբաքննութի. վս զի 'ի յանցուածս սոսկալիս մնածի կամք խորհրդածեալ՝ ծառայել 'ի գործ. և ոչ յարատևութի կամաց կն փութով յետս նահանջումն : Ապա եթէ 'ի դիպուածի իմիք 'ի մէջ մտանիցեն այնպիսի պարագայք, յորոց խոհեմութե մարթ իցէ քաղել՝ թէ լոկ անմտադրութե եղև յանկարծ 'ի հայհոյութի բերիլ, կամ առանց կատարեալ հաւանութե կամաց և չփոթեալ ոգւով առ բուռն կրից, յայնժամ ոչ լինէր անբասրելի 'ի յանցանաց՝ նոյնպէս անբասրելի լինէր և 'ի պատժոց. զի ուր չիք յանցանք՝ անդ և ոչ պատիժ. Գւ. ծանուցեալս :

'Ի պարտաւորութէ զեկուցման զհերետիկոսէ կն զխիթալոյ 'ի հերետիկոսութե՝ ոչ անբասիր առնէ զաղտնիքն բնական՝ հանդերձ երդմամբ անգամ առ 'ի չյայտնելոյ. Դիանա. Սուարէզ. Սանտարելլի. Պեգնա. Փառինակիոս. Փելլիքս պոտեստաս : Պատճառն է. վս զի պահել զբնական գաղտնիս՝ է բարի մասնաւոր. իսկ լռելն՝ վնասակար է բոլոյն հասարակաց. արդ հասարակաց բարին պարտի նա-

խադասել քան զմասնաւորն ։ Եւ չէ ինչ երդումն տուեալ վն չյայտնելոյ. վն զի երդումն ոչ է կարգեալ 'ի լինել կապ անօրէնութեան. Գլ. Մ'ըշլոֆ. ծէ. յշ. Երբմնա ։ Գլ. 'Ի ՔՁ այլոց Երկոյ. 22. պարբմնա 22. խն. դ ։

Մխայն ճշմարիտ խոստովանութիւն ազատ կացուցանէ 'ի զեկուցանելոյ. վն զի խոստովանահայրն ոչ իւիք օրինակաւ կարօղ է քակել զկնիքն ։ Նյպէս գրէ Սկոտոս. 'ի դ. գլխ". խ. Է. պխ. առ 2. ջեռնարէ. ուր ասէ, թէ ուստ է այս ձեռնարկ օրինականաց, թէ * Հերետիկոսութիւն է այնպիսի յանցանք, զոր և ոչ խոստովանութիւնն թաքուն պահէ ‖ ։ Ուստի եթէ դէպ լիցի ումեք լսել զայնպիսի խոստովանութի, ոչ պարտաւորի զեկուցանել. վն զի խոստովանահայրն և այլք պարտական են պահել զկնիքն խորհրդական ։ Նսացի ճշմարիտ խոստովանութի. ապա թէ ոչ՝ եթէ ոք մատիցէ առ քահանայն ոչ խոստովանելոյ աղագաւ, այլ առ 'ի ձգել զխոստովանահայրն 'ի հերետիկոսութի, խոստովանահայրն կարօղ է զեկուցանել զնա. վն զի ոչ է այն խոստովանութի խորհրդական, այլ թիւր եղանակ ծածկելոյ զհերետիկոսութի. և գաղտնածածուկ հնարիւք խեղաթիւրել զայլս ։ Զառնէ անքասիր 'ի պարտաւորութէ զեկուցման, եթէ յանցանքն իցէ ծածուկ, և չիցէ հնար ցուցանել զայն. ըստ վճռոյ Նշեքս. Է. 24. սեպտ". 1661. Նախադասութի. Է ։

Յուշ լիցի, զի զպարտաւորութն զեկուցման վն հրապուրանաց ոչ եթէ խոստովանահայրն դնէ 'ի վր հրապուրեալ անձին, այլ յաւէտ եկեղեցին. նմին իրի խոստովանահայրն պար-

տաւոր գտանի ազդել միայն հրապուրելոյն զայսմ պարտաւորութ͞է . մինչ զի թէ և ինքն իսկ իցէ հրապուրողն՝ չկարէ առանց պակասելոյ 'ի վարդապետական պաշտամանէն իւրմէ՝ չազդել զանհրաժեշտ պարտաւորութ͞ին՝ զոր ունի ապաշխարողն ։ Միայն թէ կարող է խոստովանահայրն կանխել քան զապաշխարողն , ինքնակամ յանդիման լինելով առաջի եպիսկոպոսի կամ քննչի՝ զեկուցանել զներգործական հրապոյրս իւր . և սովին օրինակաւ ազատ կացուցանէ զանձն յանկանելոյ ընդ եղեալ պատժովք . բայց տակաւին չէ ազատ ապաշխարողն յիւրոյին պարտաւորութ͞է ։

Յայսմ վայրի տարակոյս ծագի կարի կարևոր յորոշել մ͞ի կիրառութ͞ե խոստովանահարց 'ի գնել անդ զպարտաւորութ͞ին զեկուցանելոյ . զի որովհետև յետ տրիդենտեան ժողովոյն 'ի զանազան քահանայապետաց դատապարտեցան ինչ ինչ նախադասութ͞իք , թէ՛ վարդապետականք , և թէ բարոյականք ընդ պատժով բանադրանաց տուեալ վճռոյ՝ վերապահելոց պապին՝ որ զհակառակն հաստատիցէ , պաշտպանեսցէ , կամ ուսուսցէ . մ͞ի որոյ խնդրի՝ արդեօք ապաշխարող ոք , որոյ լուեալ իցէ , թէ այս ոք զմին կամ զբազումս 'ի նշանակեալ նախադասութ͞եցդ ուսուցանէ կամ պաշտպանէ , պարտակա՞ն իցէ առ 'ի զեկուցանել ։

Յորոյ վերայ պիտո՛յ է նախ զմտաւ ածել . թէ 'ի յիշատակեալդ նախադասութ͞եց յոլովք դատապարտեցան իբր հերետիկոսականք , մոլորականք , և խիթալիք զհերետիկոսութ͞է , եւն . և այլք իբր սոսկ գայթակղականք , ևս և վնասակարք ( 'ի գործադրութ͞է ) . սակս որոյ՝ որ.

որք լուեալ իցէ զհաստատել ուրուք զայս և զայն յասացեալդ դատապարտեալ Նախադասութեց՝ որք են իբր հերետիկոսականք, մոլորականք և երկբայականք, եւն, պարտական է ծանուցանել զհաստատօղն։ Այսպէս են ՀԹ. Նախադասութիք Միքայէլի բայոսի դատապարտեալք 'ի Պիոսէ Ե. յամին 1567։ Հնգեակք Կոռնելիոսի յանսենիոսի եպիսկոպոսին իպրայու դատապարտեալք յԻննովկենտիոսէ Ժ. յամին 1644. սոյնպէս են դատապարտեալքն յԻննովկենտիոսէ ԺԱ. յամին 1687։ ԿԸ. Նախադասութիք Միքայէլի մոլինոսի սպանիացի երիցու. սապէս և Բ. Նախադասութիք դատապարտեալք յաղէքսանդրէ Ը. 'ի 24. օգոստոս. 1690. և այլ ևս ԼԱ 'ի նմին քահանայապետէ 'ի 7. դեկտ". 1690. Նմանապէս ԻԳ. Նախադասութիք Արքեպիսկոպոսին կամբրայ դատապարտեալք յԻննովկենտիոսէ ԺԲ. 'ի 12. մարտ. 1699. ոք և դատապարտեալքն 'ի կղեմէսէ ԺԱ. յամին 1713. ՃԱ. Նախադասութիք Պասքաղեսի կուխնեղեայ գաղղիացի երիցու։

Այլ ո՛չ այսպէս են ԽԵ. Նախադասութիք դատապարտեալք յաղէքս". Է. 'ի 24. սեպտեմ". 1665. 'ի նիւթ բարոյական՝ իբր գայթակղականք. և նոյնպէս ԿԵ. դատապարտեալք յԻննովկ". ԺԱ. 'ի 2. մարտ. 1679. նոյնօրինակ 'ի նիւթ բարոյական իբր գայթակղականք, և վնասակարք 'ի գործածութի։ Սորանոր 'ի դէպ է յուշ ածել. թէ նա՝ որ հաստատէ զմին 'ի յիշատակեալ նախադասութեց՝ անկանի 'ի բանադրանս վերապահեալս պապին. և դարձեալ եթէ ոք 'ի գործ դնիցէ՝ ծանրապէս մեղանչէ ընդդէմ հնազանդութե. որովհետև սրբազան քահա-

նայապետն 'ի դատապարտել անդ զնախադասութիւն՝ հրամայէ ընդ պատուիրանաւ հնազանդութե՛, թէ մի՛ ոք յանդգնեսցի 'ի կիր արկանել երբէք զմին յասացելոց նախադասութեց. սակայն 'ի վ՟ր այսր ա՟մի չի՛ք պարտաւորութ՟ն զեկուցանելոյ զայն՝ որ հաստատեսցէ, պաշտպանեսցէ, և 'ի գործ դնիցէ. վ՟ս զի այնու ո՛չ լինի հերետիկոս, կա՟ խիթալի զհերետիկոսութ՟է, եւ՟ն: Տե՛ս զ՟ս. Կամպիոնն 'ի քննութ՟ե խոստովանահարց հռովմայ. Տ. Ա. Գլ. ԺԲ. ՀՏ. 4. ուր այսպէս ուսուցանէ, թէ յորժամ նախադասութիւք հեղինակի ուրուք դատապարտեալ իցեն միահաղոյն. և 'ի մէջ այլ դատակնքոց գտանիցի և հերետիկոսականն, մոլորականն, եւ՟ն. յայնժամ նա որ լուաւն զհաստատել ուրուք զմին 'ի նոցանէ եթէ ո՛չ գիտելով թէ արդեօք հերետիկոսական, և մոլորակա՞ն իցէ՝ թէ լոկ գայթակղական, պարտի ա՟մ իրօք զեկուցանել. ապա այնուհետև Եպիսկոպոսին կամ Քննչին իմաստասիրել, թէ որո՞վ արդեօք դատակնքոյ արժանի իցէ այն:

'Ի վ՟ր պարտաւորութ՟ե 'ի գործ արկանելոյ զներգործութ՟ի հաւատոյ, արժան է գիտել. զի կան ներգործութիւք ներքին, և կան արտաքին. ըստ գրելոյ առաքելոյն առ հռովմ. * Սրտիւ հաւատայք յարդարութ՟ի. և բերանով խոստովանիք 'ի փրկութ՟ի ‖: Արդ՝ առ կիրառութ՟ի ներքին ներգործութ՟եց հաւատոյ պարտաւորիմք երբեմն ըստ ինքեան, և ուղղակի. և երբեմն անուղղակի և ըստ պատահման:

Պարտաւորիմք ըստ ինքեան և ուղղակի՝ զօրութ՟ե ա՟ծային պատուիրանի, որ առ գործադրութ՟ի այնպիսի պարտաւոր առնէ զմեզ ըստ բե-

րելոյ ժամանակին ։ Նախ՝ յորժամ հասանիմք 'ի բանաւորութիւն . և ուսուցանին մեզ , և յանդիման դնին խորհուրդք հաւատոյ՝ հանդերձ պարտաւորութեամբ , և շարժառիթօք հաւատալոյ ։ Երկրորդ՝ 'ի վտանգի , կամ 'ի կէտ մահու . քանզի յայնժամ պարտական եմք 'ի պատուիրանէն Ա՟յ հաւատալ , յուսալ , և սիրել զԱ՟ծ , և ցաւիլ 'ի վ՟ր մեղաց մերոց ։ Երրորդ՝ յորժամ յարձակին 'ի վ՟ր մեր բուռն փորձութիւնք ընդդէմ հաւատոյ . քանզի յայնժամ պարտ է մեզ 'ի գործ դնել զներգործութիւնս հաւատոյ հակառակ փորձութեանց . ո՟պ յայտ է 'ի դատապարտելոյ Իննովկ". ժ՟ա . զայս լէ . Նախադասութիւն մոլինոսի . * Յառիթս փորձութեանց՝ եւ և բռնագունից՝ ո՛չ է անձն պարտական ելուզանել զգործնական ներգործութիւնս առաքինութեանց հակադրելոց ‖ ։ Չորրորդ՝ 'ի վախճանի՝ յամին բազում անգամ պարտաւորիմք առնել զներգործութիւն հաւատոյ . ըստ որում դատապարտեցաւ յԱղէքսանդրէ Է . Նախադասութիւն Թիւ . ա՟ . որ դնէր . * Ոչ է մարդն յոչ իմիք ժամանակի կենաց իւրոց պարտական գտանի ելուզանել զներգործութիւն հաւատոյ , յուսոյ , և սիրոյ զօրութեամբ ա՟ծային պատուիրանաց , որք հայլին յառաքինութիւնդ յայդոսիկ ‖ . ո՟պ և դատապարտեալն յԻննովկենտիոսէ ժ՟ա . Նախադ . ժ՟զ ։ * Հաւատքն ոչ կարծի անկանիլ ընդ տեսական պատուիրանաւ և ըստ ինքեան ‖ . Նմանապէս և Նախադասութիւն կէ . * Բաւական է թէ ոք միանգամ հաւատացեալ իցէ խորհրդոց հաւատոյ ‖ ։

Իսկ անուղղակի ըստ պատահման պարտաւորիմք 'ի կիր արկանել զդոյնպիսի ներքին ներ-

գործութիս : Նախ՝ յորժամ առաջի կայ մեզ, և պարտ իսկ է մեզ ընդունիլ զնր խորհուրդս : Երկրորդ՝ յորժամ պարտիմք և կամիմք յաւէտ 'ի գործ դնել զներգործութիս ինչ գերբնականս, զորօրինակ՝ յուսոյ, և սիրոյ, և զղջման. վն զի առանց կիրառութե ներգործութե հաւատոյ՝ չլինին այն ներգործութիւնք : Աւր 'ի դէպ է յուշ ածել, թէ նա՝ որ պակասի առնել զներգործութիս հաւատոյ, յորժամ առայս պարտաւորեալ էր ըստ ենթեան և ուղղակի, այնչափ թուով ծանր ծանր զանցառութեան մեղս գործէ ընդդէմ հաւատոյ՝ որչափ անգամ պարտաւոր էր առնել : Իսկ որ զանց առնէ զկիրառութե նոցին՝ երբ պարտաւորեալ էր ըստ պատուիրան, մեղանչէ միայն ընդդէմ այնր առաքինութե՝ զոր պարտական էր 'ի կիր առնուլ, յորմէ սակս պահանջիւր առնել զներգործութի հաւատոյ :

Պարտ և արժան է 'ի միտ առնուլ և աս : Նախ՝ թէ ներքին ներգործութիք հաւատոյ, զորս պա՛րտ է մեզ 'ի կիր արկանել ըստ ենթեան և ուղղակի, գլխաւորաբար պարտին լինել 'ի վն երից խորհրդոց հաւատոյ. զորս հարկ է մեզ հաւատալ հարկաւորութե միջնորդի. այսինքն են՝ միութի այ, և երրորդութի անձանց, մարդեղութիւն, մահն, և յարութիւն փրկչին մերոյ քսի. և թէ ած է պարգևատու կեն վարձահատոյց. ըստ որում քաղէ 'ի դատապարտ". Նախադասութե կդ. յիննովկ. ժա : և մեկն աս՝ 'ի իբ. Նախադասութե հերքելոյ 'ի Նմանէ. ադ տեսեր 'ի վեր անդր :

Երկրորդ՝ թէ ներգործութիւնք հաւատոյ պարտին լինել նաև 'ի վն այլոց մասանց հան-

դանակին առաքելոց. որոց հարկ է մեզ հաւատալ հարկաւորութբ պատուիրանի. վն որոյ որ ոք ասասցէ մտադրութբ զհաւատամքն 'ի ժամանակս նախայիշատակեալս, յորս պարտաւորիմք առնել ըստ ինչեան և ուղղակի զներգործութիս հաւատոյ՝ ըստ զպատուիրանն այ՝ որ պարտաւորէ զմեզ առ այն ներգործութիս:

Երրորդ՝ թէ ներգործութիք հաւատոյ պարտին ունել իւրեանց իբրև տեսական շարժառիթ զյայտնութին այ զառաջարկեալն մեզ յեկեղեցւոյ, որ է անսխալ կանոն և հաստատուն սիւն ճշմարտութե: Այն իրի ներգործութիք հաւատոյ, որք լցեն յառաջագայեալ 'ի վկայութե արարածոց, կա 'ի բնական ինչ շարժառթից՝ ոչ լինին ներգործութիք ածաբանական հաւատոյ, առ որս պարտաւորիմք. և ոչ իսկ բաւական առ արդարացուցանել զըմեզ: Ուստի Իննովկ". ժա. 'ի նախադաս". իգ. դատապարտեաց զայն՝ որ ասիցէ. թէ * Հաւատք լայնաբար առեալ, այս է 'ի վկայութե արարածոց, և կամ 'ի նոյնպիսի շարժառթէ՝ բաւական է առ արդարանալ մեր ||: Ուրանօր պարտ է 'ի միտ առնուլ, թէ այլ է հաւատքն անչքնօրէն առեալ. այն իսկ է՝ որ ունի զածային յայտնութին իբրև զտեսական շարժառիթ, յոր սակս կոչի ածային հաւատք. և այլ է հաւատքն լայնաբար առեալ՝ զոր մարթ է ստանալ 'ի վկայութե արարածոց. ըստ բանի առաքելոյն՝ որ առ հռոմ. գլ. ա. * Զի աներևոյթք նորա 'ի սկզբանէ աշխարհի, արարածովք իմացեալ տեսանին. այսինքն է՝ մշտնջենաւորութի, և զօրութի, և ածութի նորա ||. քանզի արդարև լինի քաղել յարարածոց հաւատս ըզ-

գոյութէն ոչ և զարդարութէ, և զամենակարողութէ նորա, ևն. այլ սակայն այս հաւատք լինէր մարդկային, և լայնաբար առեալ, որ անբաւական գտանիւր առ արդարացուցումն մեր. որպէս յայտ է 'ի նախայիշատակեալ նախադասութէ:

Չորրորդ՝ պէտք են 'ի միտ առնուլ և ես. թէ պարտ է մեզ այնպէս ստոյգ լինել զա͞ծային յայտնութեց 'ի վերայ խորհրդոց հաւատոյ, զորս պարտաւորիմք հաւատալ, մինչև 'ի բաց արտաքսել զամենայն զլոկ հաւանականութի, և զներքին երկիւղ կասկածանաց 'ի վերայ այդպիսի ա͞ծային յայտնութեան: Նմին իրի Իննովկ. ժա. դատապարտեաց զնախադասութին իա. * Հաւանութին հաւատոյ գերբնական և օգտակար առ փրկութի՝ կարէ կալ ընդ լոկ հաւանական ծանօթութէն յայտնութէ, մանաւանդ թէ և ընդ երկիւղի կասկածանաց՝ որով ոք խիթայցէ, թէ գուցէ չիցէ ա͞յ խօսեալ զայն ||: Եւ պատճառն է. զի խորհուրդք ա͞յ հաւատոյս մերոյ ունին զայնպիսի շարժառիթս հաւատալոյ յա͞ծային յայտնութին, մինչ զի հաւատարիմ կացուցանեն մեզ զայդ բացայայտ հաւատալի, և բարոյապէս ստոյգ. և վ͞ն այսորիկ հարկաւ պարտին 'ի բաց առնել զամենայն զլոկ հաւանականութի, և զկասկած հակառակ. ուստի իրաւամբք դատապարտեաց Իննովկ. ժա. և զն͞խդս. դ. զայն՝ թէ * Յանհաւատութէ անբաւիր լինի անհաւատն, որ ոչն հաւատայ՝ համոզեալ 'ի ձեռն նուազ հաւանական կարծեաց ||: Վասն զի ոչ միայն առընտրել զճշմարիտ կրօնն պարտաւորիմք զհետ երթալ առաւել հաւանականին՝ համեմատու-

թէ նուազ հաւանականին, որպէս յուշ առնեն
առ հասարակ մ՟ծ վարդապետք. այլ և առաւե-
լապէս՝ վ՟ս զի չէ հնար լինել ճշմարիտ հաւա-
նականութ՟ի 'ի նպաստ սուտ հաւատոյ՝ 'ի զու-
գընթացութ՟ե անդ բացայայտութ՟ե հաւատա-
լիութ՟ե, զոր ունի ճշմարիտ քրիստոնէական
ուղղափառ հաւատն: Աստի նախայիշատա-
կեալ գ նախադասութ՟ի արժանի էր դատապար-
տութ՟ե՝ թէ և 'ի նմա հաստատեալ լինէր, թէ
անմեղադրելի է անհաւատն՝ եթէ չհաւատաս-
ցէ հանդիպեալ 'ի հաւանականագոյն կարծեաց:

Իսկ առ իմանալոյ զմիտս երկուց նախադա-
սութեց ժթ. և ի. դատապարտելոց յիննովկ.
ժա. յայս նիւթ, յորս ժթերորդն է այս. *Կամքն
չկարէ առնել, զի հաւանութ՟ին հաւատոյ յին-
քեան իցէ առաւել հաստատուն՝ քան զոր ար-
ժանաւորի ծանրութ՟ի փաստից ձգողաց 'ի հա-
ւանութ՟ի ||: և Իերորդն, իբր հետևանք նորին,
այն է. *Աստի կարող է ոք խոհեմութ՟բ մեր-
ժել զհաւանութ՟ին՝ զոր ունէր իբրև գերբնա-
կան ||. պարտ է յուշ առնել. զի թէ երբէք ծան-
րութ՟ի պատճառաց զոր 'ի շարժառթից հաւա-
տալիութ՟ե ունին խորհուրդք ն՟ր հաւատոյս
մերոյ առ'ի լինել անշուշտ հաւատալի, չժամա-
նեսցէ հաւանեցուցանել զմիտս ուրուք, որ չի-
ցէ լեալ քաջ խելամուտ՝ մինչև չմնալ մտաց
նորա գլխովին ստոյգ, և հաւան ընդ ա՟ծային
յայտնութ՟ե՝ այլ տակաւին յերկբայս իցէ խի-
թալի, յայնժամ պարտի որպէս և կարէ իսկ
կամքն նպաստել շնորհաց, որ կոչի բարեպա-
շտական յօժարամտութ՟ին առ հաւատալ՝ պարտաւոր առ-
նել զմիտս հաստատութ՟բ հաւատալ այնց խոր-
հրդոց՝ զորս իբրև առ յ՟յ յայտնեալս առա-

ջորկէ մեզ եկեղեցին. որոյ վճ գրէ առաքեալն
առ Ա. Կոր. գլ. Ճ. հտ. 5. * Գերեմք զամենայն
միտս 'ի հնազանդութիւն քսի ||: Եւ յայն դիպ-
ուած, որպէս քաջայայտ ծանուցանէ մեզ Թով-
մաս. Ա. 2. խն. ՃԲ. յօդ. 4. * Միտքն հաւա-
նի իմիք ոչ զի ա̄ճ բաւականին շարժեալ իցէ 'ի
սեփական առարկայէ, այլ իւիք ընտրութբ
կամաւորապէս հակամիտեալ առաւել 'ի մի
կողմն քան 'ի միւսն ||: Եւ յղ. ճշմարտութե. խն.
ծՔ. առէ. * Որոշի ներգործութիւն մտաց 'ի
ձեռն կամաց, որ ընտրէ հաւանիլ միում կող-
ման որոշակի և առաւելապէս վասն իրիք, որ
բաւականն է 'ի շարժել զկամս, և ոչ եթէ 'ի
շարժել զմիտս ||: Նմին իրի ժողովն տրիդեն-
տեան ստորագրելով զներգործութիւն հաւատոյ.
Նիստ. Զ. գլ. Զ. առէ. * Զհաւատս 'ի լսոյ ա-
ռեալ՝ ազատօրէն շարժիմք յԱծակողմն կոյս,
հաւատալով ճշմարիտ լինել զառ 'ի յԱյ յայտ-
նեալսն և զխոստացեալսն ||:

Ահաւասիկ շարժումն Ածային և բարեպա-
րիշտ իղձ կամաց, որ տայ հաւատալ ազատօ-
րէն և լրջմտութբ. Թէպէտև կայցէ 'ի միջի
մթութիւն յայտնեալ խորհրդոց, և անստուգութի
իմացութե մտաց մերոց, որ երբեմն չթափան-
ցէ 'ի շարժառիթս անդր հաւատալիութե յայտ-
նութեց ասացելոյ. ուստի ոչ քաջ յաղթահարի
և համոզի, սակայն և այնպէս հաւատայ հաս-
տատապէս 'ի ձեռն անձնիշխան կամաց օգնա-
կանութբ Ածային շնորհաց, թէ զոր եկեղե-
ցին առաջի դնէ մեզ՝ առ յԱյ է յայտնեալ:
Ապա աստի յայսմանէ 'ի յայտ գայ ստութի
ԺԹերդ նախադասութե. այն թէ՝ * Զգօրէ
առնել կամքն, զի հաւանութիւն խորհրդոց հա-

ւատոյ իցէ առաւել հաստատուն՝ քան զոր արժանաւորին պատճառք, յորոց յորդորիմք առ այնպիսի հաւանութի ‖ ։ Եւ այս ճանաչի փորձիւ 'ի բազում անձինս բարիս միանգամայն և անուսմունս. որք թէպէտ չեն խելամուտ խորամուխ լինել 'ի շարժառիթս հաւատալիութե հաւատոյ մերոյ, բայց ունին հաւատս անդրդուելի, մինչև տալ երբեմն և զկեանս, և հեղուլ զարիւնս վն ճշմարտութե նորին ։

Յայտ է և ևս, թէ քանի՞ անտեղի իցէ ի՛ երդ նախադասութին հետևորդ ժթ երդին, որպս թէ խոհականութք իմն մարթ իցէ մերժել զգերբնական հաւանութին զոր ունի ոք 'ի վերայ խորհրդոց հաւատոյ ։ Վասն զի եթէ այդ հաւանութի կիր հաճութի յառաջ գայ 'ի շնորհացն այ, և 'ի նախընթաց շարժմանէ, որ կանխէ և յորդոր լինի կամաց առ 'ի հաւատալ խորհրդոց հաւատոյ, զիա՞րդ մարթ իցէ խոհեմութք մերժել զայն առանց անիրաւելոյ ընդդէմ հոգւոյն սբյ՝ հակառակ կալով շարժմանց նորա ։ 'Ի դէպ գայ աստանօր ասացեալն առաքելոյ. առ Թես. ա. գլ. ե. 19. * Զհոգին մի շիջուցանէք ‖ ։ Որ ասէ սբն Թովմաս. * Իսի ոք շիջուցանել զհոգին սբ, երբ արծարծի 'ի նմա բարի ինչ շարժութի, և ինքն խափան լինի ‖ ։ Եւ յայտ է թէ այսպէս լինէր, յորժամ ոք 'ի բաց հերքէր զգերբնական հաւանութին կամաց շարժելոյ 'ի շնորհացն այ 'ի վերայ խորհրդոց սբ հաւատոյս մերոյ ։

Կամելով մեր այժմ բացայայտ կացուցանել. թէ ե՞րբ յաւէտ պարտաւորիմք առ արտաքին ներգործութի հաւատոյ, լուիցուք սբյն Թովմայի. որ 'ի խն. գ. յօդ. 2. ուսուցանէ այս-

պէս. * Խոստովանել զՀաւատս է 'ի Հարկաւորութէ փրկութե, յորժամ զանցառութի այնր խոստովանութե կարծիլ ունէր փառքն՝ որ այ ա՛նկ է, որպէս և օգուտն մատակարարելի մերձաւորաց. զորօրինակ՝ եթէ ոք Հարցեալ զՀաւատոյ՝ լուռ լիցի. և յայսմանէ կարծեսցի՝ թէ նա կամ անՀաւատ է, կամ թէ Հաւատք նորա չիցէ ճշմարիտ, և կամ այլք 'ի սակս լռութե նորա 'ի բաց դարձցին 'ի Հաւատոյ ||: Ուստի երևի թէ քանի իրաւամբք դատապարտեցաւ յԻննովկենտիոսէ ժա. նախադասութին է. * Եթէ 'ի Հրապարականն իշխանութէ Հարցցի ոք՝ խոստովանել տիրապէս զՀաւատս իւր, իբրև առիթ փառացն այ և Հաւատոյ՝ խորՀուրդ տամ խոստովանել. իսկ ըզլռելն իբր մեղանչական ըստ ինքեան՝ ոչ դատապարտեմ: Որ ընդ Հակառակն՝ ամիւ ստոյգ է, թէ յայդպիսի պարագայս պարտաւորեալ եմք առնել զարտաքին ներգործութի Հաւատոյ, մինչ զի՝ որ ուրանայ զայս, նախ՝ կարի ծանր մեղանչէ մեղօք ստութե 'ի նիւթ Հաւատոյ. որ և լինի մեղք յանձնառութե: Երկդ՝ մեղանչէ ծանրապէս մեղօք զանցառութեան՝ չխոստովանելով զՀաւատս, ըստ որում յայդպարագայս պարտաւոր իսկ էր: Երդ՝ մեղանչէ մեղօք գայթակղութե, որ բազմապատիկ ըստ թուոյ գայթակղելոցն՝ որք լուանն զուրացութի նորա: Իսկ եթէ չուրասցի, այլ լռեսցէ միայն՝ չառնելով ինչ պատասխանի, գործէ զերկուս մեղս. նախ՝ զմեղս զանցառութե ընդդէմ խոստովանութե Հաւատոյ, երկդ յանձնառուե՝ ը բանի գայթակղուե:

Այլ քանզի պարտաւորիմք ոչ լոկ խոստովա-

նել զհաւատս յայդպիսի պարագայս ձայնիւ բերանոյ, այլեւ երբեմն գործով իսկ. յոյր սակս եթէ ուղղափառ ոք գտցի 'ի մէջ չարափառաց, որք առ չարութեան իւրեանց բուռն արասցեն նմա սպառնալեօք մահու ուտել միս յաւուրս արգելեալս՝ առ 'ի գիտելոյ թէ ուղղափա՞ռ իցէ նա, պարտաւոր գտանի ժուժկալել 'ի կերակրոյ անտի նաեւ հանդերձ վտանգաւ մահու. ապա թէ ոչ՝ կարի ծանր մեղանչէր ընդդէմ պարտաւորութեան խոստովանութեան հաւատոյ դովին նշանաւ. եւ միանգամայն յանցանէր զպատուիրանաւ եկեղեցւոյ. իսկ եթէ չարափառք առնէին զայդ ոչ վն առ 'ի գիտելոյ զուղղափառութիւն նորա, այլ լոկ առ չարութեան իւրեանց, ոչինչ մեղս գործէր ուտելովն զմիս. քանզի յայդպիսի դիպուածս եկեղեցին չպարտաւորէ զպահեցողութիւն հանդերձ այնպիսի վտանգաւ. բայց թէ չգուցէ վտանգ մահու՝ ուտելովն զմիս յաւուրս արգելեալս մեղանչէ միայն ընդդէմ հրամանին եկեղեցւոյ։

Նա եւ ոմանք 'ի հաւատացելոց պարտաւորին առնել զխոստովանութիւն հաւատոյ 'ի մասնաւոր ինչ պարագայս, յորս ժողովն տրիդենտեան 'ի նիստ. 24. գլ. ժբ. պարտաւոր առնէ զնոյն թոշակաւորս հանդերձ հոգաբարձութեամբ հոգւոց. զոր եւ պարտ է առնել 'ի միջոցի երկուց ամսոց՝ յօրէ անտի մտանելոյ 'ի ժառանգութիւն, առաջի եպիսկոպոսին, կամ ընդհանրական փոխանորդի նորա. սոյնպէս եւ ընտրեալքն 'ի կանոնիկոսութիւն, եւ յարժանապատուութիւն ժողովրդապետական եկեղեցեաց, ունին առնել ոչ միայն առաջի եպիսկոպոսի, կամ փոխանորդի նորա, այլ եւ առաջի ժողո-

վոյն կանոնիկոսաց. այլ թէ ոչ՝ (ասէ ժողովն անտանօր.) * Նախաձեռնեալքդ ամ Թաշակաւորք՝ ոչ կարասցեն քաղել զպտուղս պտաւոյն, և ոչ ինչ օգտեսցէ նոցա մտանելն ՚ի ժառանգութիւն ||: Ուր յոլովք ՚ի հեղինակաց յայն կարծիս են, թէ նախայիշատակեալքդ մեղանչեն մահուչափ մեղօք՝ եթէ զանց արասցեն զայդու դաւանութիւն. որովհետև բանք ժողովոյն հրամայականք են, յասելն պարտական լիցին. և կան ևս առընթեր ծանր պատիժք կորստեան պտղոց՝ և նանրութե ժառանգաւորութե:

Պահանջի է այլափառաց՝ դաւանութիւն հաւատոյ, մինչև կոչել զայն ընդ խաղս՝ հաւատոյ ջեռաւոր: Եւ սակայն այս դաւանութիւն ՚ի կիր արկեալ լինէր և յառաջին դարս եկեղեցւոյ. և ոչ ոք ՚ի չափահասից ընդունելի էր ՚ի մկրտութիւն, եթէ չառնէր զդաւանութիւն հաւատոյ, և չհերքէր զհերձուածս զօրացեալս: Տես ՚ի գիրս նոյն Կիպրիանոսի, Տերտուղիանոսի, Եւսեբիայ, և ՚ի նշանաւոր ժողովն Թեմական Բենեդիկտոսի ԺԴ. գիրք. Է. գլ. Ե. հն. 9. 10:

Ժողովն հռովմէական. ՚ի Է. նիստ. գլ. Է. պարտաւորէ և զայլ բազում անձինս՝ առնել զսոյն դաւանութիւն ի ծանր ծանր պատժովք, զորս մարթ է տեսանել յայտնաբանեալս անդանօր:

## Յաղագս մեղաց ընդդէմ յուսոյ ։

Եկեսցուք արդ առ յոյսն , որ երկրորդ է 'ի կարգի առաքինութեանց նախանշանակելոց յինէն՝ որք պարտաւորեն զմեզ ընդ մահուչափ մեղօք ։ Արդ՝ սա տայ մեզ ապաւինելով յողորմութ՟ի եւ յամենակարողութ՟ին ա՟ծային յուսալ , թէ ա՟ծ տացէ մեզ յաստի կեանս զշնորհս առ 'ի փրկել զմեզ , եւ 'ի հանդերձեալն զփառս՝ եթէ պատրաստեսցուք զանձինս առաջնոյն (այսինքն հաւատով ,) հանդերձ պահպանութ՟բ ա՟ծային օրինաց՝ ըստ որում յառաջագրեմք առնել ։ Տեսական շարժառիթ այսր առաքինութ՟ե՝ է ողորմութ՟ին ա՟յ , որով կամի տ՟ր փրկել զմեզ . եւ ամենակարողութ՟ի նորա՝ որով կարող է փըրկել զմեզ ։ Իսկ առարկայն է շնորհն , եթէ սրբարարն եւ եթէ ներգործականն 'ի կեանս , եւ փառքն զկնի մահու . ը՟ստ այնմ 'ի սաղմոսի . ձգ . հա . 13 .* Զշնորհս եւ զփառս տացէ տ՟ր || ։

Պարտական եմք 'ի գործ դնել զայս առաքինութ՟ի՝ զօրութ՟բ ա՟ծային պատուիրանի , որ՟պս քաղի յառաջին նախադասութ՟է դատապարտելոյ յԱղեքսանդրէ Է , ը՟ստ վերագոյնդ նշանակելոյ մեր ։ Նախ՝ յորժամ հասանեմք 'ի բանականութ՟ի , եւ առաջի դնի մեզ թէ ա՟ծ արար զմեզ վասն փառաց , զոր մարթիմք ստանալ 'ի ձեռն շնորհաց՝ պահելով զօրէնս ա՟յ ։ Երկ՟դ՝ 'ի վտանգի , կ՟մ 'ի կէտ մահու ։ Եր՟րդ՝ 'ի ծանր ծանր փորձութ՟ե յուսահատութ՟ե կամ յանձնապաստանութ՟ե ։

Չորրորդ՝ յաճախ բազում անգամ ասելով զտէրունական աղօթս , յորում բովանդակին

ներգործութիւնք յուսոյ։ Յաղագս որոյ որ պա-
կասի 'ի կէր առնուլ զայդպիսի ներգործութիւն
'ի նախակարգեալ ժամանակս՝ մահուչափ մե-
ղանչէ յԱծ նուագն մեղօք զանցառութեան ընդ-
դէմ ստորասական պատուիրանի, որ պարտա-
ւորէ յայնպիսի գործադրութիւն։

Երկոքին մոլութիւնք ընդ յանձնապաստանութիւն՝ ընդդէմ
դառնան այսմ առաքինութեան։ Առաջինն ընդ
նուաղութեան, որ այն իսկ է՝ յուսահատութիւն.
այսինքն՝ յորժամ վհատեալ մեր յԱծային ողոր-
մութեան առ ծանրութեան մեղաց մերոց՝ դնեմք 'ի
մտի, թէ Ած ոչ թողուցու մեզ։ Սուր 'ի միտ
առ, զի յուսահատութիւն կից ունի ընդ իւր
բազում անգամ զհերետիկոսութիւն. որ յայն-
ժամ լինի՝ երբ անյոյս լեալ ոք զփրկութէ իւր-
մէ, համարելով թէ չիցէ կարող Ած թողուլ
զմեղս իւր առ ծանրութեան նոցին, կամ թէ Ած
չկամիցի թողուլ։ Որդ՝ յայդպիսում դիպ-
ուածի ոչ միայն մեղանչէ ընդդէմ յուսոյ՝ այլ
և ընդդէմ հաւատոյ, մինչև լինել տեսական
հերետիկոս։ Ապա եթէ յերևան իսկ հանցէ
զչարահաւատութիւն իւր՝ անկանի ընդ վերա-
պահեալ բանադրանօք։ Այսպիսի են՝ որք ա-
սեն, օրինակ իմն, անհնար է թէ Ած թողցէ ինձ
զյանցանս իմ. և այնպէս իսկ հաւատան։ Այլ
ոչ այնպէս որք ասեն. Չեմ արժանի թողութեան,
որոյ չունի ներել ինձ Ած. և ես ունիմ զապաշխար-
տել. որ է արդարև ներգործութիւն յուսահա-
տութեան, բայց ոչ հերետիկոսութեան։

Երրորդ՝ մոլորութիւն դիմամարտ յուսոյ ընդ
աստուածայնոյ, է յանդգնութիւն, կամ յանձ-
նապաստանութիւն ժամանելոյ 'ի փրկութիւն ա-
ռանց իւրոց արդեանց. և այս ևս մարթի լինել

կրկնակի․ Նախ՝ եթէ ոք վստահասցի փրկիլ լոկ իւրով սեփական զօրութ՟բ, և մարդկային արդեամբք իւրովք և եթ առանց Նպաստաւորութե՟ շնորհաց․ արդ այնպիսին ոչ միայն մեղանչել մեղանչէր մեղօք յանդգնութե՟, այլ և լինէր Պեղագեան հերետիկոս՝ եթէ այնպէս հաւատայր իրօք․ այսինքն թէ՝ բաւական իցեն սեփական զօրութիւնք իւր առ ստանալ զփառս առանց շնորհաց․ և թէ՝ մարդկային արդիւնք, այսինքն՝ բարոյական գործք բարիք արարեալք առանց շնորհաց՝ բաւական իցեն առ յաւիտենական փրկութի՟։ Նմին իրի իրաւամբք դատապարտեցաւ 'ի ս՟բյն Պիոսէ Ե․ Ճ՟, 'ի մէջ նախադասութեանց Բայոսի․ այն՝ թէ * Որօրինակ՝ գործն 'ի բնէ չար՝ արժանի է յաւիտենական մահու, նոյնպէս և գործն բարի 'ի բընութե՟ իւրմէ՝ արժանի է կենացն յաւիտենից||․ որպէս և կը՟ երդն․ * Այն ևս զանազանութի՟, որով գործն ասի կրկնակի բարի, մի՝ զի ըստ առարկային և ըստ ա՟մ պարագայից ուղիղ է և բարի, որ սովոր է բարոյապէս բարի կոչիլ․ և միւս ևս՝ զի արժանաւոր է կենացն յաւիտենից, ըստ որում լինի 'ի կենդանի անդամոյն ք՟ի հոգւով սիրոյն ա՟յ, հերքելի թուի||։ Երկդ՝ յորժամ ոք իշխեսցէ գնել 'ի մտի, թէ ա՟ծ կամի տալ ինձ զարքայութի՟ առանց իմոց ինչ արդեանց, և առանց պահելոյ իմ զօրէնս օգնականութե՟ շնորհաց՝ լինի մեղք յանդգնութե՟։ Ապա եթէ հաւատասցէ և ևս․ թէ տայ ա՟ծ հաւատացելոց զփառս 'ի ձեռն լոկ հաւատոյ առանց այլոց բարի գործոց՝ լինի հերետիկոս լուտերեան դատապարտեալ 'ի ժողովն տրիդենտեան․ 'ի Նիստ․ 6․ Կան․ Ի։

'Ի վերայ բարոյական բարութե՟ ներգործութեց ա՟ծաբանական յուսոյ՝ դատապարտեցան յԱղեքսանդրէ Ը. նախադասութի՟ք Ժ. և ԺԴ: առաջինն է այս. * Գիտաւորութի՟ն՝ որով ոք գործի 'ի չարէն և զհետ երթայ բարւոյն՝ պարզապէս, որպէս զի հասցէ երկնային փառաց՝ ոչ է ուղիղ, և ոչ ա՟ծահաճոյ ||: և երկ՟դն է այն. * Որ միանգամ նաև յաւիտենական վարձուցն ակնկալութ՟բ ծառայէ ա՟յ, եթէ պակասեսցի 'ի սիրոյ՝ յարատոյ ոչ պակասի, ցորչափ ակնկալութ՟բ երանութե՟ գործէ ||: Ուր ընդհակառակն սահմանեալ էր 'ի ժող. տրէտ. կանոն լա. նիստ. զ. այսպէս. * Եթէ ոք ասասցէ, թէ արդարացեալն մեղանչէ մինչ գործէ զբարին ակնկալութ՟բ յաւիտենական վարձուց, նզովեալ լիցի ||: Եւ կարի իսկ քաջ. վ՟ն զի չիք տարակոյս թէ օրինաւոր է գործել առ'ի ստանալ զայն ինչ՝ զոր ա՟ծ առաջի դնէ մեզ և խոստանայ մեզ: Արդ քանզի տէրն մեր առաջի եդ մեզ, և խոստացաւ տալ զյաւիտենական կեանս իբրև վարձ այնոցիկ, որ բարիս գործիցեն մինչ 'ի վախճան, ը՟ս բանի նախադրեալ ժողովոյդ. գլ. ժզ. ապա ուրեմն առ 'ի ձեռս բերել զայն՝ օրէն է գործել զբարիս, պահելով զպատուիրանս ա՟յ զա՟մ աւուրս կենաց. յոյր սակս ասէր մարգարէն. 'ի սաղմ. ճժը. * Խոնարհեցուցի զսիրտ իմ առնել զարդարութի՟ս քո յաւիտեան վ՟ն հատուցման ||: 'Ի վախճանի պիտոյ է 'ի միտ առնուլ աստանօր, թէ իննովկ. ժբ. 'ի մարտ. 19. 1699. դատապարտեաց զյոլով նախադասութի՟ս Արհիեպիսկոպոսին կամբրայ 'ի գաղղիա. յորս առաքինութի՟ յուսոյ 'ի բաց տարագրեալ լինէր 'ի վիճակէ ս՟բ և կատարեալ հոգ-

ւոյ ։ Առաջինն 'ի նախադասութիւս անդ եր այս ․ * Այս ունակական վիճակ սիրոյն այ ․ որ է հեղական սէր զուտ, և անխառն 'ի շարժառթից անձնասիրութե ․ մինչ զի ոչ երկիւղ պատժոյ, և ոչ ցանկութի վարձուց ունին ինչ այնուհետև տեղի 'ի նմին ։ Այնուհետև ոչ ևս սիրի ած վն արդեանց, ոչ վն կատարելութե, և ոչ վն երջանկութե, զորս լինի գտանել սիրելովն զնա ‖ ։ Ապաքէն՝ չէ՞նչ և աւելորդ, թէև մարթասցի լինել ներգործութի ինչ սիրոյն այ անխառն 'ի յուսոյ, տակաւին ճշմարիտ է, թէ չկարէ լինել ունակութի սիրոյ՝ առանց ունակութե յուսոյ և հաւատոյ, որք են հիմունք սիրոյ ․ ուստի ըքն Թովմաս ․ 1 ․ 2 ․ խն ․ կէ ․ յօդ ․ 4 ․ և 5 ․ իմաստութբ գրեաց ․ * Հաւատք և յոյս կարեն լինել առանց սիրոյ ․ բայց սէր առանց հաւատոյ և յուսոյ ոչ կարէ բնաւ լինել ‖ ։

---

Յաղագս մեղաց՝ ընդամարտ եղելոց ածասիրութե ։

Սէրն հայի առ ած և առ ընկերն ։ Ըստ որում հայի առ ած՝ է ներգործութի ինչ ամենակատար, որով սիրեմք զած 'ի վեր քան զամ, վն լինելոյ նորա մի միայն և ծայրագոյն բարի․ այն իսկ է տեսական շարժառիթ ներգործութե ածաբանական սիրոյ ։ Ի, և սէր ըստ եղանակի ունակութե, որ հիմնի 'ի սրբարար շնորհս, որով լինիմք որդիք այ որդեգրականք, ածահաճոյք, և ժառանգք արքայութե ։ Իւ այս հեղեալ ունակութիւն ածային սիրոյն տայ մեզ կատարելապէս 'ի գործ արկանել զներգործու-

թ՟իս սիրոյ. և լինել այն ներգործութ՟եց ըստ ար-ժանւոյն, արդիւնական աձման շնորհաց և փա-ռաց: Պարտ է մեզ սիրել զԱ՟ծ 'ի վեր քան զա՟մ ըստ յարգին, ընդդէմն ոչ ըստ սաստկութե՟ն. այսինքն՝ թէ սէրն մեր առ Ա՟ծ լիցի այնպէս՝ մինչև պատ-րաստ լինել մեզ կորուսանել զա՟մ ինչս մեր, ևս և զկեանս, քան կորուսանել զԱ՟ծ:

Պատուիրանն սիրելոյ զԱ՟ծ 'ի վեր քան զա՟մ, նշանակեալ բազում ուրեք 'ի ս՟բ գիրս, պար-տաւորէ զմեզ 'ի գործ արկանել զայսպիսի ներ-գործութ՟իս սիրոյ ըստ բնութեան, և ուղղակի: Նախ՝ 'ի ժամանել անդ մեր 'ի բանաւորութ՟ի, երբ առաջադրի մեզ Ա՟ծ՝ իբրև ծայրագոյն և մի միայն բարի: Երկ՟դ՝ 'ի վտանգի կմ՟ 'ի կէտ մահու: Եր՟դ՝ յորժամ յառնէ 'ի վերայ մեր ծանր ինչ փորձութ՟ի ատելութ՟ե ընդդէմ Ա՟յ: Չոր՟դ՝ յամին բազում անգամ, և որպէս հասա-րակաբար ասեն վարդապետք՝ գէթ հնգիցս կամ վեցիցս՝ ըստ որում ասացաւ զներգործու-թ՟եց հաւատոյ, և յուսոյ, ևն: Ուստի յայտնի լինի՝ թէ իրաւամբք դատապարտեցաւ յԱղէք-սանդրէ Է. առաջին նախադասութ՟ին, որ դը-նէր թէ * Մարդն յոչինչ ժամանակի կենաց իւրոց պարտաւորի ելուզանել զներգործութ՟ի հաւատոյ, յուսոյ, և սիրոյ՝ 'ի զօրութ՟է Ա՟ծ-ային պատուիրանաց վերաբերելոց առ այդ ա-ռաքինութ՟իս||: Որպէս և Իննովկենտիոս Ժա՟. յաւել դատապարտել զերիս այլ յա՟մ 1676. զե՟, զզ՟. և զէ՟. յորս Ե՟երորդն ունէր այսպէս. * Ար-դեօք մահուչափ մեղանչիցէ նա, որ զներգոր-ծութ՟ի սիրոյն Ա՟յ միանգամ ևեթ 'ի կեանս իւր ելուզանէ, չիշխեմք դատապարտել||: և զԶերորդն. * Հաւանական է, թէ և ոչ 'ի հնգա-

մեայ միջոցի ճշդիւ միանգամ պարտաւորէ ըստ ինքեան պատուիրանն ա՟ծսիրութե‖ ։ և է երրդն․ * Յայնժամ միայն պարտաւորէ, յորժամ պարտաւորիմք արդարանալ, և չունիմք զայլ ճանապարհ կարող լինելոյ արդարանալ‖ ։ Անտեղութի երկուց առաջին նախադասութեց յայտնի է ՚ի վարդապետութէ, զոր հաստատեն ա՟մ վարդապետք, թէ պարտական եմք յամին բազում անգամ առնել զներգործութի սիրոյ ա՟ռ ա՟ծ ։ Իսկ ստութի երրորդ նախադասութե՝ յայտ իսկ է․ վ՟ն զի թէպէտև ըստ պատահման, և անուղղակի պարտաւորիմք ՚ի կիր արկանել զներգործութի սիրոյն ա՟յ․ զորօրինակ՝ յորժամ գտանիմք ՚ի վիճակ մեղաց, և հարկ ՚ի վերայ կայցէ ընդունել կամ մատակարարել զխորհուրդ ինչ, (՚ի բաց առեալ զմբ հաղորդութիւն) եթէ չգուցէ խոստովանահայր ՚ի պատրաստի առ՚ի խոստովանիլ․ որովհետև յայն դիպուած հարկ է առնել զներգործութի զղջման՝ յորում փակի և ներգործութի սիրոյ առ՚ի արդարանալ ։ Սակայն չէ հնար առանց մոլորութե երբէք ասել ըստ հաստատելոյ յերրորդ նախադասութեն, թէ յայսմ և եթ դիպուածի պարտական իցեմք ՚ի կիր արկանել զներգործութի սիրոյն ա՟յ․ յայնժամ միայն պարտաւորէ, Եւ․ որովհետև անտարակոյս է, թէ ըստ ինքեան, և ուղղակի յամին բազում անգամ պարտական եմք ՚ի կիր արկանել զայն՝ որպէս ասացաւն ։ Ս՟ն որոյ Աղէք". Ը․ յամին 1690․ դատապարտեաց զայս նախադասութի․ * Աուարկական բարութիւն հաստատեալ է ՚ի յարմարութե առարկային ընդ բանական բնութե ։ Իսկ տեսականն ՚ի միաբանութե ներգործութե ընդ

կանոնի բարուց : Առ այս բաւական է, զի բարոյական ներգործութիւն ձգեսցի առ վերջին վախճանն մեկնողաբար : Զսա մարդն ոչ պարտաւորի սիրել՝ ոչ 'ի սկզբան, և ոչ յընթացս բարոյական կենաց իւրոց . ԽԶ || : Ուրանոր Մոլորութիւն՝ տինա հերետիկոսութիւն հաստատեալ կայ 'ի յետին յայն բանս . * Զսա ( այսինքն զվերջին վախճանն ) մարդն ոչ պարտաւորի սիրել՝ ոչ 'ի սկզբան, և ոչ յընթացս բարոյական կենաց իւրոց || : Որ 'ի հաւատոց է, թէ պարտիմք սիրել զա՟ծ, որ է վերջին վախճան մեր, եթէ 'ի սկզբան, և եթէ յընթացս կենաց մերոց :

Արհիեպիսկոպոսն Կամբրայ 'ի վերայ այսր բանի հաստատեաց ըստ առաւելուղղանցութէ, 'ի ԻԴ . նախադասութե անդ իւրում, զոր դատապարտեաց Իննովկենտիոս ԺԲ . թէ * Անապակ սէր ինքնին առանձին կացուցանէ զբոլոր ներքին կեանս . և յայնժամ եղանի միակ սկիզբն, և միակ շարժառիթ ա՟մ ներգործութեց, որք խորհրդածեալ կամօք են, և արդիւնականք || : Որոյ ստութիւն քաջայայտ է . քանզի ոչ եթէ լոկ սէրն ա՟յ, այլ և միանգամայն այլ ևս առաքինութիւք և մանաւանդ ա՟ծաբանականքն՝ հաւատ, յոյս, և սէր կացուցանեն զներքին կեանս . և չէ իսկ մարթ ասել, թէ սէրն ա՟յ իցէ միայնակ սկիզբն և շարժառիթ ա՟մ արդիւնական ներգործութեց, զոր 'ի կիր արկանէ անձն ոք ո՟ք : Ան զի իւրաքանչիւր ա՟ծաբանական առաքինութի ունի զտեսական շարժառիթ սեփական կիրառութե իւրոյ . և սկիզբն ներգործութեց իւրոց՝ է հեղական ունակութիւն այնր առաքինութե :

Մոլութիւնք դիմամարտք սիրոյն այ՝ ըստ յառաջնոյն, կրկին են։ Ատելութիւն այ ըստ առաւելադանցութեան, և ծուլութիւն ըստ նուազութեան։ Ատելութիւնն՝ որ է կամել ումեք չար, պարունակէ ընդ իւրև զերիս յետին ազգս ներգործութեանց տարբերս յիրերաց։ Առաջինն է տրտմիլ ՚ի վերոյ բարեաց՝ զոր ունի ած։ Երկրորդն ցանկալ թէ ունիցի ած զչար ինչ։ Երրորդն՝ զուարճանալ ընդ յուշ ածելն թէ ունիցի ած զայն չարիս. որ են մեղք ծանունք յոյժ յոյժ, մինչև չընդունել զթեթևութիւն նիւթոյ։ Որ եթէ երբեք հանդիպեսցին՝ բարւոք լինի յուշ առնել ապաշխարողին՝ զի բացատրեսցէ, թէ ընդ ո՞րպիսի ստորոգելիս այ տրտմեալ իցէ. զորօրինակ՝ արդեօք ընդ ա՞յն՝ թէ ած իցէ արդար, ամենակարող, ևն։ Այնպէս ևս՝ եթէ չարիս կամեցեալ իցէ այ, պարտի բացատրել թէ զի՞նչ ինչ չար ցանկացեալ իցէ. կամ զո՞ր չարիս ընդ միտ ածելով ունել այ՝ խնդամտեալ իցէ։

Ծուլութիւնն է տրտմիլ ընդ գործելի գործ ինչ բարի, ըստ որում կարգեալ է ՚ի փառս և ՚ի պատիւ այ։ Մարթի ոք տրտմիլ ընդ գործելի գործ ինչ բարի՝ զի աշխատութիւն է նմա, յոյր սակս իսկ ՚ի բաց թողու. զորօրինակ ասել հանապազօր զժամային ժամերգութիւն։ Այսպիսի ծուլութիւնն չէ՛ արգելեալ ըստ ինքեան. այլ ըստ պատահման։ Սն որոյ մեղանչէ ընդդէմ կրօնի՝ որ ՚ի բաց ձգէ ասել զժամային ժամերգութիւնն վասն աշխատանացն զոր կրէ յասել անդ իւրում. բայց ոչ մեղանչէ ընդդէմ սիրոյն այ։ Իսկ եթէ ոք ՚ի բաց թողուցու գործել զբարի ինչ՝ թէև փոքրիկ, ո՛չ զի տաժանելի է, այլ զի վերածի ՚ի փառս և ՚ի պատիւ այ, այդ լի-

նէր ամենամեծ մեղք ծուլութ՟ե. որ յինքն փակէ զատելութ՟ի ընդ ա՟յ. և չյանդգնի երբէք զթեթևութ՟ի նիւթոյ: Ապա եթէ գործն զոր 'ի բաց թողու ոք գործել՝ իցէ 'ի պատուիրանէ, զորօրինակ՝ ասել (եկեղեցականի) զա՟ծային ժամերգութ՟ին, մեղանչէ ընդդէմ սիրոյն ա՟յ՝ միանգամայն և ընդդէմ կրօնի, ցորչափ կայ պատուիրան պարտաւորիչ առ ասել զժամերգութ՟ին:

Մեղանք բազ զանցառութբ 'ի նահապետութբ՝ դիմամարտեալք սիրոյն ա՟յ՝ են զանց առնել 'ի նախասացեալ պարտուպատշաճ ժամանակս ընդ-կրառութ՟բ ներգործութ՟եց սիրոյն ա՟յ:

Այնի 'ի բաց փարատել զծուլութ՟ի՝ ոչ եթէ խուսափելով, այլ պատերազմելով և բուռն հարկանելով արիաբար զգործոց փրկութ՟ե:

---

## Յաղագս մեղաց ընդդէմ սիրոյ ընկերին, կամ եղբայրսիրութեան:

Իսկ 'ի կարգի սիրոյ ընկերին, զոր պարտիմք սիրել իբրև զանձն, բազում են մոլութիք կամ մեղք դիմամարտք այսմ առաքինութ՟ե. այլ ես 'ի վեր անդր յիշատակեցի զյաւէտ յաճախագոյնսն: Որ այն իսկ են առաւելապէս բազ յանձնառութբ՝ ատելութ՟ի ընկերին: Որդ՝ ատելութ՟ին է՟ ասացելոցս՝ է հաւրէ այլոց չորս-որոյ երեք են տարբին ազգք: ա՟. Եթէ տրտմեսցի ոք 'ի վերայ բարեաց ընկերին իբրև է՟ բարի ինչ նմա: բ՟. Եթէ հաճեսցի ընդ չարն՝ զոր կրօք կրէ ընկերն, կա՟մ կարծի կրել: գ՟. Ե.

թէ իղձ լինիցի ունել նմա զչար ինչ՝ զոր ո՛չն ունի։ Նա եւս 'ի խոստովանութեան անդ ապաշխարողն բացատրեսցէ, թէ չարն՝ զոր ցանկացաւ ունել ընկերին, կամ հաճեցաւ ընդ չարն՝ զոր ունի ընկերն, եւ կամ տրտմեցաւ ընդ բարին՝ յոր վայելէր ընկերն, առ մարմինն արդեօք հայէր, թէ առ համբաւն, կամ առ կորուստ ընչից։ Սոյնպէս եւ՝ եթէ տրտմութիւն իցէ ընդ բարիս ընկերին՝ պարտի 'ի յայտ ածել. միթէ տըրտմեա՞լ իցէ՝ զի ստացաւ միւսանգամ զառողջութիւն, կամ զի շինեցաւ անուն եւ համբաւ նորա. կամ զի մեծացաւ 'ի հարստութեան։ Նա եւս պարտի 'ի յայտ բերել՝ միթէ ատեցեալն արեանառու ազգական իւր իցէ. զի յայնժամ ատելութիւն ո՛չ միայն է ընդդէմ սիրոյ՝ այլ միանգամայն եւ ընդդէմ գթութեան։ Սոյնօրինակ՝ եթէ ընդդէմ մեծաւորի իցէ՝ լինի ընդդէմ յարգութեան։ Եղբայրատեցութիւն կարէ ընդունել ըզթեթեւութիւն նիւթոյ. իբր այն՝ եթէ ոք զդոյզն ինչ չար ցանկասցի ումեք, կամ տրտմեսցի 'ի վերայ դուզնաքեայ ինչ բարւոյ նորա, եւն։

Գիտել արժան է՝ զի ո՛չ միայն 'ի պատուիրանէ բացասական օրինաց պարտական եմք չատել զընկերն, որ պարտաւոր առնէ զմեզ [illegible] [illegible], որպէս յայտ է 'ի Ա. Յոհ. Գլ. Գ. ԺԵ. 15. * Ամ որ ատեայ զեղբայր իւր՝ մարդասպան է. եւ գիտէք՝ զի ամենայն մարդասպան ոչ ունի կեանս յաւիտենականս յանձին հաստատեալ. այլ եւ ես պարտական եմք սիրել զնա անկեղծ սըրտիւ, եւ 'ի ներքին ներգործութեամբ. առ որ պարտաւորէ զմեզ Աստուածային պատուիրանն ստորասական. միայն թէ սա ո՛չ պարտաւոր առնէ [illegible] [illegible]. Մատթ. ԻԲ. * Սիրեսցես զընկեր քո՝ իբ-

րև զանձն քո ||. այլ 'ի դիպուածս ինչ և 'ի ժամանակս ժամանակս : Նմին իրի իրաւամբք դատապարտեաց Իննովկ. ժա. զնախադասութիւն Ժ. և ԺԱ : Առաջինն զայն՝ թէ * Ո՛չ պարտաւորիմք սիրել զընկերն՝ ներքին և տեսական ներգործութեամբ ||: և զերկրորդն՝ թէ, * Պատուիրանի եղբայրսիրութեան կարեմք բաւական կատարումն տալ 'ի ձեռն արտաքին ևեթ ներգործութեանց ||: Յորմէ 'ի միտ ածցէ խոստովանահայրն, թէ ոչ երբէք մարթ է արձակել ըզնոսա՝ որք ասենն, Ես չկամիմ նմա չար ինչ, բայց և ոչ կարեմ, և ոչ իսկ կամիմ տեսանել զնա : Իսկ սիրել զնա, և կամել նմա բարիս՝ այդ անհնարին է. զի նա արար ինձ չարիս մեծամեծս և ծանուանս : Այն զի ոչ միայն 'ի վերոյիշատակեալ դատապարտեալ նախադասութեանց, այլ ևս քան զևս 'ի պատուիրանէ անտի յնի քնի. Մատ. Գլ. Ե. հմ. 44. * Բայց ես ասեմ ձեզ. սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց ||. քաջայայտ է, թէ պարտաւորիմք սիրել զընկերն ներքին տեսական ներգործութեամբ. որում ոչ լինի բաւական հատուցումն 'ի ձեռն սովորական և լոկ արտաքին ներգործութեան :

Նախանձն՝ որ երկրորդն է 'ի մոլութիւս ընդդէմ եղբայրսիրութեան, յառաջ գայ՝ յորժամ տրտմի ոք ընդ բարիս ընկերին, ըստ որում է նուաստացուցիչ սեփական գերազանցութեան և արժանապատուութեան իւրոյ. կամ զի ընկերն ունի ինչ առաւելագոյն քան զինքն : Աստի յորժամ ոք գիտիցէ, թէ պետրոսն ստացաւ զթոշակաւորութիւն, կմ զպաշտօն ինչ, և տըրտմեսցի՝ զի ոչ ստացաւ ինքն՝ որպէս ցանկայր. եթէ արդարև ինքն էր այնմ արժանաւոր,

չգործէ ինչ մեղս․ որպէս և ոչ յայնժամ՝ երբ տրտմեսցի՝ գիտելով չափ թէ պետրոսն որ ընկալաւ՝ անարժան է այնմ պաշտաման․ կամ զի ունի լինել զեղծիչ թօշակաւորութե եկեղեցւոյ․ զի այդ լինէր բարի նախանձ յաւէտ։ Իսկ եթէ տրտմեսցի, վասն զի չկամէր ունել պետրոսի զայդ բարիս, յայնժամ լինի ատելութի․ ապա եթէ տրտմեսցի, թէ ընդէ՞ր պետրոսն ստացաւ և ոչ ինքն, զի այնու պետրոսն մեծանայ և առաւելու քան զինքն․ և այդ է տիրապէս նախանձ, որ 'ի սեռէ իւրմէ է մեղք մահուչափ․ բայց վասն նուազութեան նիւթոյ՝ որպէս ասացաւ զատելութէ՝ մարթի երբեմն լինել մեղք ներելի։

Ընդդէմ մոլութե նախանձու և ատելութե երրակի նախադասութիւնք դատապարտեցան յԻննովկ″․ ժա․ այսինքն, ժդ․ ժզ․ և ժե։ Առաջինն այն էր․ * Եթէ պարտուպատշաճ չափաւորութբ արասցես, կարօղ ես առանց մահուչափ մեղաց տրտմիլ ընդ կեանս ուրուք, և խնդալ ընդ բնական մահ նորա․ և խնդրել իսկ զայն, և բաղձալ անգործունեայ բաղձանօք, ոչ վն դժկամակութե ինչ ընդ անձն նորա, այլ վասն ժամանակաւոր շահու իրիք անձինդ ‖։ Երկդն՝ այն․ * Օրէն է բացարձակ բաղձանօք ցանկալ ընդ մահ հօր․ ոչ թէ որում չար ինչ հօրն, այլ ըստ որում բարի ինչ ցանկացողին․ իբր զի հանդերձեալ է անկանիլ նմա ժառանգութիւն պարարակ ‖։ Եւ երդն՝ այն․ * Օրէն է որդւոյ խնդամտիլ ընդ հայրասպանութի գործեալ յիւրմէ յարբեցութե, 'ի սակս մեծահարուստ ընչից հասելոց ինքեան դոյլին 'ի ժառանգութե ‖։ Պատճառ դատա-

պարտութիւն է՝ վասն զի ստոյգ է, թէ պար-
տիմք սիրել զընկերն իբրեւ զանձն. Ը որում
պատուիրէ մեզ տէրն մեր 'ի Մատ. ԻԲ. որ ոչն
լինի՝ յորժամ տրտմի ոք 'ի վերայ կենաց ընկե-
րին, կա՛մ ուրախ լինի ընդ մահ նորա. և կամ
ցանկայ մահուան նորա թէպէտև անգործու-
նեայ բաղձանօք. որ հաստատի 'ի ցանկութեն
և եթ՝ առանց զհետ լինելոյ ընտրութեն միջո-
ցաց առ ստացումն նորա. ապա թէ ոչ՝ յայն-
ժամ լինէր բաղձանք և յօժարութին գործու-
նեայ: Ապա ուրեմն չէ՛ հնար երբէք ցանկալ
մահուան ընկերին, կամ բերկրել ընդ այն. և
ոչ իսկ տրտմիլ 'ի վերայ կենաց նորա 'ի սակս
ժամանակաւոր օգտի մերոյ. քանզի սէր ընկե-
րին պարտաւորէ զմեզ նախամեծար առնել զկ-
կեանս նորա՝ քան զառժամանակեայ բարիս՝
որք ունիցին մեզ հասանել մահուամբ նորա:
Նաև որպէս պարտական եմք սիրել զընկերն իբ-
րև զանձինս մեր, և որպէս կարգաւորեալ սէրն
իսկ պահանջէ վաղ ընդ փոյթ կորուսանել
զժամանակաւոր բարիս մեր քան զսեփական
կեանս, այսօրինակ անմարթ է մեզ առ 'ի ստա-
նալ զժամանակաւոր բարիս ընկերին՝ փափա-
քիլ մահուան նորա. կամ ուրախանալ եթէ
մեռանիցի. և կամ տրտմիլ ընդ կեանս նորա:

Որ ոք վշտանայ ընդ բարիս մերձաւորին՝ խե-
թալով թէ անձին իւրում կամ այլում ունի
պատահել ինչ չար յանիրաւի, վիշտն այն է օրի-
նաւոր: Ապացաւ 'ի վեր անդր, թէ յորժամ
տրտմի ոք ընդ բարին ընկերին՝ իբր զի է ա-
նարժան, այնպիսի տրտմութիւն է մահուչափ՝
եթէ իցէ 'ի վ՛ր գերբնական բարեաց. կամ
եթէ ոք դժկամակ լիցի ընդ նախախնամութեն

նյ՟՝ վ՟ տալոյ նորա մեղաւորաց զժամանակաւոր բարիս՝ և խոշտանգելոյ զչարիս. և յայնժամ հայհոյութիւն իսկ է։ Առ նախանձն վերածի քսութիւն. որ է բանսարկութիւն կամ բան՝ որով առանց իրաւացի պատճառի պատմեալ լինի գործ ինչ առ՚ի քակել զբարեկամութիւն ընդ սա և ընդ նա։ Առ՚ի լինել այսմ մահուչափ՝ շատ է թէ լինիցի առանց արդար պատճառի. և քսուն պարտական է վերանորոգել՝ որչափ և կարող իցէ՝ զքակեալ բարեկամութիւն. որպէս և հատուցանել զն՟մ վնաս յառաջագայեալս, որպէս ունիմք ասել յաղագս բամբասողաց։ * Քսուն և երկլեզուն անիծեալ է. վ՟ զի զյոգունս վրդովէ՝ որք ՚ի խաղաղութեան էին ընդ միմեանս ||։ Սիրաք. իը. 15։

Դեղք ընդդէմ նախանձու են՝ աղօթք, խոնարհութիւն, ուրախ լինել ընդ նախախնամութիւնն ա՟յ, և յուշ ածել՝ թէ նախանձն ոչ օգտէ ինչ, բայց ՚ի չարչարել զնախանձոտն։ Կան և այլ դեղք, զորս ուսուցանեն մեզ հարք և վարդապետք հոգւոց։

Երրորդ մոլութիւն ընդդէմ եղբայրսիրութեան է գայթակղութիւն. և սա յառաջ գայ յանբարի, կամ յոչ այնչափ ուղիղ գործոյ և կամ ՚ի բանէ՝ որ տայ ընկերին զառիթ հոգևորական կործանման։ Ասացաւ՝ [illegible], առ՚ի զանազանելոյ յայնմանէ՝ որ տայ զխորհուրդ, յորդորէ, կամ հրամայէ առնել զչարն. զի այնպիսին լինի պատճառ չարին. որոյ վ՟ պարտի ամբաստան լինել զստորին տեսակէ չարին՝ առ որ եղև խորհրդատու, կամ յորդոր ընկերին։ Ուստի գործէ նախ զմեղս գայթակղութեան ընդդէմ սիրոյ. և երկրորդ մեղանչէ ընդդէմ այնմ

առաքինութիւն՝ զոր ետ ընդոտնել ընկերին։ Որօրինակ՝ եթէ ոք յորդոր կամ խորհրդատու եղև գողութեան, եղև պարտաւոր գողութեան. և ինքն պարտաւորի 'ի հատուցումն։ Եթէ սադրիչ եղև առ մեղս անհամեստութեան՝ նա, պարտաւոր լինի այնմ մեղաց. և միանգամայն պարտաւորի ասել զթիւս սադրելոցն յիւրմէ։ Ապա եթէ ինքնին իւրով և եթ չար օրինակաւ տուեալ իցէ առիթ մեղանչելոյ ընկերին՝ մեղանչէ միայն ընդդէմ սիրոյ. և շատ է ամբաստանել զանձն վասն մեղաց 'ի հասարակի պատճառելոց յընկերն, և վասն թուոյ անձանց զորս գայթակղեցոյց իբրու այսչափ կամ այնչափ թուով ընդհանրապէս։ Այնպէս և կինն՝ որ շրջի մերկալանջ, կամ մերկաբազուկ՝ բաւական է թէ ամբաստան լիցի զանձնէ, եթէ ետու առիթ իբր այսչափ անձանց արատաւորել զողջախոհութիւն. թէպէտև ոմանք 'ի նոցանէ պոռնկեալ իցեն, ոմանք շնացեալք և անկեալք յայլ գործս պղծութեան։ Այնպէս և նա՝ որ իւրով չար օրինակաւ առիթ տուեալ իցէ գողութեան, շատ է թէ ամբաստան լինիցի զանձնէ, եթէ առիթ գողութեան եղէ՝ օրինակ իմն՝ տասն անձանց. թէպէտև ոմանք 'ի սոցանէ արարեալ իցեն զգողութիւն սեղանակապտութիւն, և այլք զյափշտակութիւն։

Եւ ահա այս է տարբերութիւն՝ ընդ նա, որ տայ միայն զգայթակղութիւն, և զառիթ հոգևորական կործանման ընկերին. և ընդ նա՝ որ սադրէ, կամ խորհուրդ տայ, կամ հրամայէ զչարն. որ և պարտի բացատրել զտորին տեսակս մեղաց՝ յորս ձգեացն։ Այլ առաջնոյն շատ է բացատրել զմեղս 'ի հասարակի։ Բայց

կան և երևելի հեղինակք՝ որք կամին, զի և այնպիսին պարտաւոր լիցի 'ի բացատրել զատորին տեսակս մեղաց պատճառելոց ընկերին՝ երբ գիտակ իցէ։

Գայթակղութիւն բաժանի 'ի ներգործական և 'ի կրաւորական։ Ներգործական գայթակղութիւն է՝ յորժամ ոք առնէ զգործ ինչ՝ գիտելով թէ լինի այն 'ի հոգևոր կործանումն ընկերին. թէպէտ ինքն ոչինչ դիտէ զկործանումն զայն։ Յոր սակս Իննովկ. ԺԱ. դատապարտեաց զԺ. Նախադասութիւնն Մոլինոսի. * Եթէ ոք սեպհական պակասութեամբք իւրովք գայթակղեցուսցէ զայլս, չէ ինչ հարկ միտ դնել այնմ առ 'ի զգուշանալ. միայն թէ չկայցէ կամք գայթակղեցուցանելոյ, եւլն ‖։ Ուսանի գրէ Սըն Թովմաս. Բ. Բ. խ. ԽԳ. յր. Ա. առ Գ. * Բան կամ գործ ուրուք կարէ լինել պատճառ այլում մեղանչելոյ ըստ ինքեան, յորժամ ոք չար բանիւ կամ գործով դիտէ 'ի մեղս ձգել զայն ոք. և կամ թէպէտև ինքն չդիտիցէ զայդ, ինքն գործն այնպիսի է, որ ըստ ինքեան է ձգօղ 'ի մեղանչել. զորօրինակ՝ յորժամ ոք հրապարակաւ առնէ զմեղս, կամ զայն ինչ՝ որ զնմանութիւն ունի մեղաց, եւլն ‖։ Այլ յորժամ լինիցի ուղղակի դիտել զհոգևորական կործանումն ընկերին, յայնժամ մեղք գայթակղութեան լինի յոյժ ծանրագոյն. զոր և պարտ է յայտնել 'ի խոստովանութեան։

Կրաւորական գայթակղութիւն է մեղքն՝ զոր գործէ ոք պատճառաւ առեալ 'ի չար օրինակէ անտի՝ զոր ընկալաւ 'ի ներգործական գայթակղութենէ։

Նա և գայթակղութիւն բաժանի 'ի տուեալ

և յառեալ, կամ 'ի գայթակղութիւն փոքրկանց, և փարիսեցւոց : Գայթակղութիւնն առեալ, կամ փոքրկանց՝ է նոյն կրաւորականն գայթակղութիւն, որ՝ յորժամ մեղանչէ ոք 'ի պատճառս չար օրինակին՝ զոր ընկալաւ յընկերէն : Իսկ գայթակղութիւնն առեալ կամ փարիսեցւոց՝ է յորժամ ոք առ սեպհական չարութեան իւրոյ՝ յինչ և իցէ անտարբեր կամ նաև 'ի բարի գործոյ ընկերին առնու զառիթ մեղանչելոյ. որպէս փարիսեցիքն մեղանչէին առ ատելութեան և նախանձու ընդդէմ Յ̃ի մերոյ Ք̃ի՝ պատճառելով ըզբանս և զգործս նորա :

Այլ դարձեալ՝ գայթակղութիւնն փոքրկանց, մարթի տուեալ լինել 'ի գործոյ ինչ որ չիցէ յայտնապէս չար՝ այլ երկդիմի ընդ բարի և ընդ չար : Որպէս խոստովանահայր ոք, որ յաճախէ 'ի տուն մանկամարդ ապաշխարողին իւրոյ 'ի ժամ անսովոր՝ թէպէտև ստուգիւ չըգուցէ ինչ անդ չարութիւն, տակաւին տայ գայթակղութիւն փոքրկանց : Նոյնօրինակ եթէ եկեղեցական ոք պահիցէ 'ի տան զօրիորդ 'ի սպաս իւր՝ հանդերձ իւիք քրթմնջմանց այլոց, տայ գայթակղութիւն փոքրկանց . մանաւանդ զի այդպիսի իրք յայտնապէս արգելեալ են եկեղեցականաց 'ի սրբազան կանոնաց՝ և 'ի թեմական ժողովոց :

Իսկ կանայք, որք դնան ընդ հրապարակական փողոցս, ևս և յեկեղեցիս մերկ լանջօք, և թիկամբ, և բազկաւ՝ ( որ 'ի թեմի յայսմիկ 'ի վերջին աւուրս եղև վերապահեալ յարհիապատիւ յեպիսկոպոսէ աստի . որպէս և Ինովկ". ժ̃ա . կարգեաց նզովս վերապահեալս առ ինքն . որպէս և մ̃ր խոստովանահարց՝ որք արձակենն

զայնպիսիս. զոր և հաստատեաց կղեմէս ժ̃ա.) լինին առաջի ո̃յ պարտաւորք ներգործական դայթակղութե̃ : Որպիսի են և այն կանայք, որք գնալ գնան ծածկեալք, բայց ագանին զզգեստս՝ որք ինքնին հրապուրեն զտեսօղս 'ի տռփանս ցանկութե̃՝ ըստ կարծեաց իմաստնոց և երկիւղածից, կամ ըստ ասելոյ ս̃րյն կարոլոսի. յօդ. 18. Թէ և ըստ ինքեան չիցեն գրգռիչ հրապուրանաց ցանկութե̃, այլ յայսր ո̃մն վերայ իմաստասիրի, կամ հաւանականագոյնս խիթացեալ լինի, թէ 'ի պատճառս այնպիսի նորահնար պաճուճանաց զգեստուց՝ որք ոչն 'ի գործ ածին առ հասարակ 'ի բարեկեցիկ անձանց իւրոյ վիճակի, այս ոք կի̃ այն ոք մարթին գրգռել 'ի սէր անհամեստ, կամ սնանիլ 'ի սոյն մեղս. և սակայն նա՝ չառնէ ինչ փոյթ զայսմանէ. կամ սակաւ ինչ վարկանի զառանձին փրկութ̃ի ընկերին՝ զոր տեսանէ կործանիլ 'ի ձեռն այդց նորաձև զարդուց իւրոց և տակաւին հանապազորդէ 'ի նոյն :

Սապէս տան զներգործական դայթակղութի̃ նաև պատկերահանք, կի̃ անդրիագործք, որք նկարեն կամ քանդակեն զանհամեստ պատկերս. և նոքա՝ որք 'ի դուրս դնեն հրապարակաւ : Սոյնօրինակ մեղանչեն և նոքա ներգործական դայթակղութե̃՝ որք շարադրեն, արտասանեն, կամ ձևացուցանեն թատրոնս անհամեստս. որպէս և որք հանդիսատես լինին :

Աստանոր ծագէ տարակոյս. միթէ օրինաւո՞ր իցէ ձգել զընկերն 'ի գործ ինչ՝ որ ըստ ինքեան իցէ կամ բարի, և կամ անտարբեր. բայց գիցուք թէ առ չարութե̃ նորա իցէ մեղանչական :

Պատասխանի. յորժամ չգուցէ ինչ հարկ կամ հոգևորական և կամ ժամանակաւոր օգուտ մեր մեծագոյն, չէ՛ մարթ ձգել զընկերն 'ի գործ, որ թէպէտ ըստ ինքեան չիցէ չար, բայց ընկերն ո՛չ ունի առնել զայն առանց մեղաց. վ՟ զի այդ լինէր հաղորդակից լինել մեղաց՝ որ չէ օրէն. վ՟ զի ըստ գրոյն՝ * Պատուիրեաց ա՟ծ իւրաքանչիւր ումեք վ՟ մերձաւորին իւրոյ ||: Իսկ եթէ զայն արասցուք կամ առ կարևորութ՟ե, կամ վ՟ հոգևոր, և կա՟մ մարմնաւոր օգտի մերոյ, յայդ դիպուած ո՛չ մեղանչեմք: Ո՟ զի հարեմք երասամբք մերովք, և չարաընկերեն 'ի բարեն մեր: Տե՛ս 'ի հայրն Սամպիոն. հատն. ա՟. գլ. ծէ. հմ. դ: Վասն որոյ եթէ ես պէտս ունիցիմ դրամոյ, և չունիցիմ զոք՝ որ տայցէ ինձ փոխ առանց վաշխու, կարեմ թոյլ տալ վաշխառութ՟ե փոխատուին: Սոյնպէս առ 'ի ձեռս բերել զիմ ինչս՝ եթէ պէտս ունիցիմ բռնադատելոյ յերդումն զտիտիոս, զոր գիտեմ թէ սուտ երդնուցու, մարթ է ինձ առնել զայն. միայն թէ կայցէ յոյս 'ի ձեռս բերելոյ զիմն, ապա թէ ո՛չ՝ ո՛չ կարեմ բռնադատել ըզնա. զի այսպէս ասեն բազումք 'ի վարդապետաց. քանզի յայդ դիպուած չիք ինչ յիմ օգուտ: Սապէս և 'ի ժողովրդենէ ոք՝ որ կա՛մ վ՟ ստիպողական հարկի, կամ վ՟ առանձինն օգտի՝ կամիցի ընդունել զ՟բ խորհուրդ՝ գիտելով քաջ թէ ժողովրդապետ քահանայն իւր չմարթի մատակարարել առանց սրբապղծութ՟ե՝ գոլով գաղտնի նզովեալ կամ հարձաւոր. և չունիցի զայլ քահանայ՝ կարէ օրինաւորապէս տալ նմա մատակարարել ինքեան զխորհուրդս՝ տեղի տալով սեղանակալութ՟ե նորա. Հատն ղէ

Վարի երասանօք իւրովք, և չարաւ տանջանայի 'ի բա-
րէն իւր :

Բայց ո՛չ այնպէս՝ յորժամ գործքն են ըստ ինքեան չար, որք մերձաւորապէս ածեն կամ թեւադրեն 'ի մեղս : Նման իրի Իննովկեն. ժա . դատապարտեաց զնախադասութիւն ծա . * Ծառայն՝ որ շալակելով զտէր իւր օգնէ նմա ելանել ընդ պատուհանն 'ի կուսապղծութի, և բազում անգամ ծառայէ նմա սանդուղս բերելով, զդուռս բանալով, կամ յայլ ինչ այսպիսի գործակցելով, ո՛չ մեղանչէ մահուչափ՝ եթէ զայդ առնիցէ առ ահի վնասու մեծի. զորօրինակ՝ զի մի՛ տէրն իւր չարաչար վարեսցի ընդ նմա, կամ խոժոռ ակամբ նայեսցի, կամ 'ի տանէ արտաքսեսցէ, եւն : Ապա զի այսպիսի գործք մերձաւորապէս գործակից լինին տն 'ի կատարել զմեղս : Նման իրի և ո՛չ իսկ երկիւղ մահուն մարթի օրինաւոր առնել զգիտութեամբ գործեցեալսն յայն պարագայս :

Բայց սատանօր նոյնպէս 'ի մէջ գայ տարակոյս : Զի՞նչ նշանակեն արդեօք այն բանք դատապարտութեան, կամ յայլ ինչ յայսպիսի գործակցելով : Արդ՝ ասեմ. նշանակեն թէ դատապարտեալ են այն ամ գործք՝ որք մերձաւորապէս ածեն և գործակից լինին 'ի կատարումն մեղաց. թէպէտև արտաքոյ պարագայիցդ՝ անտարբերք իցեն : Զորօրինակ արգելեալ լինի ա. Գիտութեամբ ածել զհոմանին 'ի տուն տն 'ի կատարումն մեղաց : բ. Տանիլ զանհամեստ թուղթս տուփականս առ հոմանին, կամ զառ 'ի նմանէն առ տէր իւր : գ. Բերել պարգևս 'ի տնէ առ նա : դ. Սպասել առ դրան սենե-կին՝ առ ազատօրէն մեղանչելոյ տն : ե. Բա-

նել զկատարելութի՟։ Գ. Ի հրամանէ տն՟ հետա-
մուտ լինել գիտել զընակութի՟ կնոջ ուրուք առ կատարումն մեղաց ընդ նմա ։

Ի վախճանի յուշ լիցի, թէ գայթակղութի՟ն թեպէտև 'ի սեռէ իւրմէ է մեղք մահուչափ, սակայն մարթի երբեմն լինել ներելի ևեթ՝ երբ գրգռութի՟ն կամ գայթակղութի՟ն իցէ լոկ վն՟ թեթև մեղաց ։ Յոյր սակս եթէ ոք ձգէ զընկերն 'ի սուտ ինչ կատակական կամ զուարճախօսական. և կամ չար օրինակաւ իւրով ձգէ զնա 'ի գործ ինչ ունայնութե՟. որ ըստ ինքեան իցէ մեղք լոկ ներելի, մեղանչէ միայն ներելի մեղօք ։

Իսկ 'ի կարգի մեղաց՝ որ ըստ ուղղակայութե՟՝ են դիմամարտ սիրոյ ընկերին, զառաջին տեղին ունի պակասութի՟ն յեղբայրական յանդիմանութե՟. որ այն իսկ է՝ ազդ առնել ընկերին առ'ի յետս ձգել զնա 'ի մահուչափ մեղաց. և առ այս՝ պարտական են ամենեքին յա՟ծայրն պատուիրանէ անտի եդելոյ 'ի վերայ ամենեցուն 'ի քսէ՟ յսէ՟ տնէ՟ մերմէ. 'ի Մատ. ԺԸ. * Եթէ մեղիցէ քեզ եղբայր քո՝ երթ յանդիմանեա զնա ║ ։ Ս՟ որոյ որ ոք զանց զայսու արասցէ՝ լինի պարտական ծանր մեղաց ։ Ստոյգ է և այն, զի երբեմն պարտաւոր լինիմք յանդիմանել զեղբայրն վն՟ ներելի մեղաց ևս. և յայնժամ պարտական գտանիմք ներելի մեղաց ևեթ. միայն թէ 'ի պարագայս ինչ՝ զորմէ լիցի բան 'ի մօտոյ, այն յանդիմանութի՟՝ թէև իցէ վն՟ ներելի մեղաց, պարտաւորէ ը՟ մահուչափ մեղօք ։ Իսկ որպէս զի պարտաւոր լիցին ամ՟քին առ եղբայրական յանդիմանութի՟՝ խնդրին այս տմ՟ պայմանք. ա. Զի ստուգիւ յայտնի իցէ

մեզ ծանր յանցանք ընկերին. ապա թէ ոչ՝ խոյզ և խնդիր անկարգութեց նորա հայի առ մեծաւորն, և ո՛չ առ մասնաւոր ոք: Բ. Զի հաւանականագոյն իցէ, թէ նա այնպէս մնալով՝ ո՛չ ունի ուղղիլ, այլ անընդհատ հանապազորդել 'ի նոյն մեղս. վասն զի յայտ դիպուած կայ և գտանի ընկերն 'ի տիրապէս կարօտութե՟ յանդիմանութե՟ առ ուղղութի՟: Գ. Ուր չգիտեմք թէ իցէ՞ ոք արդեօք, որ կարիցէ կամ կամիցի յանդիմանել զնա օգտիւ չափ: Դ. Զի կայցէ յոյս քաղելոյ զարդիւնս 'ի յանդիմանութե՟ անտի. ապա թէ ոչ՝ յանյոյս լինել վախճանին՝ բառնի ա՟մ պարտաւորութի՟. բայց սակայն շատ է հաւանական յոյսն արդիւնաբերութե՟ առ 'ի պարտաւոր առնել զմեզ 'ի յանդիմանել: Ե. Զի ժամանակն, տեղին, և առիթն իցեն բարեպատեհ առ 'ի առնել զյանդիմանութիւն հանդերձ պտղովք. զոր և մեզ մարթ իցէ առնել առանց ինչ մերոյ ծանր վնասու:

Թէպէտև ա՟մ քրիստոնէից հարկ 'ի վ՟ր կայ առնել զխրատն յանդիմանական, այլ սակայն գլխաւորաբար պարտական գտանին մեծաւորք և առաջնորդք. որք ո՛չ միայն 'ի սիրոյ պարտաւորին, որպէս այլք առ հասարակ, այլ յաւէտ ևս յարդարութենէ և 'ի պաշտամանէ իւրեանց: Ուստի 'ի զանց առնել զայնուիկ՝ կրկին մեղս գործեն զանցառութե՟. մի՝ ընդդէմ սիրոյ, և միւս ևս՝ ընդդէմ արդարութե՟, թո՛ղ զի լինին և պարտաւոր հատուցման վնասուն, որք 'ի զանցառութենէ այտի զհետ գան պատահիլ ընկերին: Մանաւանդ զի առաջնորդք երբեմն պարտական գտանին ը՟ ծանր մեղօք՝ խրատել և զարման տանիլ ևս և վ՟ն ներելի մեղաց հպատա-

կաց իւրեանց, երբ յայնցանէ մարթի յառաջ գալ թուլութեան եկեղեցական կամ կրօնաւորական կարգաց։ Նաեւ զսոյն պարտ է ասել ըղ-ճշգագոյն պարտաւորութեան հարց և մարց առ ՚ի առնել զմասնաւոր յանդիմանութիւնս զաւակաց իւրեանց. որք եթէ զանց արասցեն զայսու՝ մեղանչեն ընդդէմ սիրոյ և ընդդէմ գըթութեան. մանաւանդ թէ յոչն դարման տանել վնասուն, զոր որդիք նոցա ետուն ընկերին ՚ի նիւթ արդարութեան՝ ինքեանք իսկ պարտական գտանին հատուցման։

Նաեւ քանզի եօթնպատիկ են գործք հոգևոր ողորմութեան՝ որք բովանդակին յայս բան. * Ուսուցանել զտգէտն. խորհուրդ տալ վարանելոյն. յանդիմանել զմեղուցեալն. մխիթարել զտրտմեալն. ներել չարարարին. տանել ծանրացելոյն մեզ. և աղօթս առնել վասն ամենեցուն ‖։ Առ սոսա ամենեսին պարտի տարածիլ պարտաւորութիւն եղբայրական յանդիմանութեան զոր պարտին առնել նախաճառեալքն, յորժամ զուգընթաց լինին նշանակեալ պայմանքդ։

Այլ վասն մեղաց զանցառութեան զմարմնաւոր գործովք ողորմութեան՝ հաւաստի է ՚ի հաւատոց, թէ պարտական եմք առնել ՚ի դիպուածս ինչ ընդ ծանր մեղօք. որպէս դնի ՚ի մէջն Մատթ. ԻԵ։ * Զի քաղցեայ և ոչ ետուք ինձ ուտել ... երթայք յինէն անիծեալք ՚ի հուրն յաւիտենական ‖։ և քանզի ո՛չ լինի անկանիլ ընդ յաւիտենական պատժովք, եթէ ո՛չ՝ վասն ծանր մեղաց, ապա զհետ գայ ասել, թէ ՚ի դիպուածս ինչ պարտաւորեալ եմք ընդ պատուիրանաւ մահուչափ մեղաց առնել զմարմնաւոր գործս ողորմութեան. որք որոշին յեօթն մարմնաւոր

գործս սիրոյ, բովանդակեալ յայս բան. * Տե-
սանել զհիւանդս. արբուցանել զծարաւեալս. կերակրել զքաղցեալս. ազատել զգերեալս. զգեցուցանել զմերկս. հիւրընկալել զօտարս. և թաղել զմեռեալս ||:

Որդ՝ առ ՚ի գիտել, թէ երբ պարտական իցեմք առնել զողորմութ՟ի, ՚ի դէպ է բաժանել զկարօտեալ ընկերս յերրեակ վիճակս. վ՟ զի են՝ որք գտանին ՚ի յետին կարօտութ՟ե. ո՟ են նոքա՝ որոց պակասին կարևոր պարէնք առ ՚ի կեալ. յոյր սակս եթէ չլինիցի ուստեք նպաստ՝ մեռանիցին յանսուաղութ՟ե: Եւ են՝ որ գտանին ՚ի մեծի կարօտութ՟ե. ո՟ են նոքա՝ որք գտանին (օրինակ ի՟մ) ՚ի վտանգաւոր հիւանդութ՟ե. յորում եթէ չտարցի նց՟ դարման՝ մեռանիցին: Այսպէս և նոքա, որք երբեմն էին բարեկեցիկք, ընչաւէտք, և ապա յերեսաց չար պատահարաց եղեն մուրացիկ: Ո՟ և նոքա՝ որք մատնեալք են ՚ի շղթայս բանտից, և ՚ի գերութի՟՝ մինչև չունիլ հնար ազատելոյ: Իսկ են և այլք՝ որք գնին ՚ի հասարակ կարօտութ՟ե. որպիսի են աղքատք համօրէն՝ մուրօղք դրաց ՚ի դուրս:

Այնպէս և ինչք մեր, յորոց պարտաւորիմք ողորմութ՟իս առնել կարօտելոց ըստ երրեակ վիճակաց նախագրելոց, մարթին բաժանիլ յերիս կարգս: Են՝ որ հարկաւորք են վ՟սն պահպանելոյ զանձինս մեր և զընտանիս մեր: Եւ են՝ որ հարկաւորք են վ՟ պահպանելոյ զանձինս և զընտանիս մեր՝ ըստ սեփհական պայմանի, աստիճանի, և արժանապատուութ՟ե: Եւ են ևս՝ որ չեն հարկաւորք, այլ աւելորդք. եթէ վասն պահպանութ՟ե անձին և

ընտանեաց, և եթէ վ̄ն պահելոյ զսեփհական վիճակս և զպայման ։ Զայս եդեալ,

ա̄. Ասեմ. թէ 'ի գտանիլ ընկերին 'ի յետին կարօտութ̄ե՝ չեմք պարտաւոր օգնել նմա այնու, որ հարկաւոր իցէ մեզ վասն պահելոյ զանձինս և զընտանիս մեր. քանզի պարտական եմք նախ օգնել սեփհական կենաց մերոց և ընտանեաց՝ քան կենաց ընկերին. բայց սակայն պարտիմք օգնել այնու ընչիւք՝ որ հարկաւոր իցեն առ պահպանութ̄ի վիճակի անձին, և աստիճանին, և հանգամանաց. վասն զի ըզկեանս ընկերին պարտ է նախադաս առնել՝ քան զտուգանս անձին, աստիճանի, և հանգամանաց մերոց ։

բ̄. Ասեմ. 'ի գտանիլ ընկերին 'ի ծանր կարօտութ̄ե՝ պարտաւոր եմք օգնել նմա ո՛չ 'ի բարեացն՝ որք աւելորդք են անձանց, և աստիճանի, և հանգամանաց մերոց, այլ և 'ի նոցանէ որք պիտանիք և օգտակարք միայն են մեզ. և ո՛չ գլխովին կարևորք վասն պահելոյ զվիճակ անձին, զաստիճանն, և զարժանապատուութ̄ի ։ Վ̄ն որոյ հանդերձ դոյզն ինչ՝ և ո՛չ իսպառ վնասու աստիճանի և հանգամանաց պարտիմք օգնել ընկերին եղելոյ 'ի մեծի և 'ի վերջին կարօտութ̄ե ։ Զայս քաջ 'ի միտ առնուլ պարտին խոստովանահարք. որովհետև զարդիս ոչինչ խիղճ յանձինս բերեն ապաշխարօղք զպարտաւորութ̄եց զոր ունին ։

գ̄. Ասեմ. 'ի բարեաց աւելորդաց առ պահպանութ̄ի կենաց մերոց, ևս և աստիճանի, և վիճակի պարտական եմք առնել ողորմութիւն աղքատաց 'ի հասարակ կարօտութ̄ե եղելոց ։ Հաւաստի է այն ինչ, թէ առաւել ճշգրիւ

պարտաւորին եկեղեցականք՝ քան աշխարհա-
կանք. մանաւանդ՝ որք թոշակաւորք են, և
վիճակաւորք եկեղեցւոյ հասութիւ։ Այլ չե՛ն
ազատ և աշխարհիկք 'ի պարտաւորութենէ
այտի ը՟ս վիճակի և ը՟ս հանգամանաց իւրեանց
առնել ողորմութ՟ի յաւելորդաց, ևս և 'ի հա-
սարակ կարօտութիւս նոցա. քանզի իննուլկ″.
Ժ՟թ. 'ի մէջ այլ նախադասութ՟եց դատապար-
տեաց և զժ՟ըն զայն. թէ * Գուն ուրեք գտցես
յաշխարհականս՝ և 'ի թագաւորս անդամ՝
զաւելորդ ինչ քան զվիճակ իւրեանց. մ՟յ
գրեթէ և ո՛չ ոք պարտական գտանի առնել
զողորմութ՟ի, յորժամ պարտաւորեալ իցէ լոկ
առնել յաւելորդաց վիճակին իւրոյ, ևն‖։ Այլ
յայտ իսկ է, զի բազումք ունին շատ աւելի
քան զպէտս կարօտութ՟ե պահելոյ զսեփական
վիճակ, և զառաջիկայ հանգամանս իւրեանց.
ուստի չէ հնար ժխտել թէ այսպիսիք պարտա-
կան են ողորմութ՟իս ինչ առնել յաւելորդաց
իւրեանց. ապա թէ ոչ՝ եթէ ընդունելի լինէր
հակառակ կարծիքն դատապարտեալ ըստ Նա-
խագրելոյս, ո՛չ ևս այլ գտանիւր ողորմութ՟ի
աղքատաց. և սոքա աղքատքս 'ի հասարակ
կարօտութ՟է անցանէին 'ի ծանր, և յայնմանէ
նաև 'ի յետին կարօտութիւն. որ լինէր ծայ-
րագոյն մեծ վնաս սիրոյ ընկերին, որ ստէպ
պատուիրեալ է մեզ 'ի ք՟սէ տ՟նէ մերմէ։

Յաղագս մեղաց ընդդէմ փոխարինական արդարութե̃. և նախ՝ ըստ բարեաց մարմնոյ:

Արդ՝ կամեցեալ ճառել զմոլութեց որք դիմամարտ են փոխարինական արդարութեան, զառաջինն խօսեսցուք զմեղաց որք զրկեն ըզմեզ 'ի բարեաց մարմնոյ. որ այն իսկ են սպանութի, խեղութի, հարուած կմ̃ վիրաւորութի և բանտարկութի: Այլ զի յաշխարհի աստ չունիմք ինչ պատուականագոյն քան զսեփհական կեանս, նմին իրի սպանութիւն է յանցանք ծանր յոյժ յոյժ:

Երկին ազգք են մարդասպանութե. կամաւոր՝ և պատահական: Գոյ կամաւոր՝ որ ուղղակի կամեցեալ. այս է՝ յորժամ ոք կատարեալ խորհրդածութբ սպանանէ զընկերն: Այլ է՝ որ անուղղակի կամեցեալ. այն է՝ յորժամ ոք առնէ զգործ ինչ յորմէ պարտ էր և կարէր իսկ նախատես լինել թէ հեշտեաւ զհետ գայ սպանութիւն: Զօրինակ նա, որ արձակէ զգնտակ հրացանին 'ի տեղի, ուր կայ ժողով բազմութե մարդկան, կմ̃ ուժգին հարկանէ զկին մի յղի, լինի պարտաւոր մարդասպանութե՝ եթէ պատահեսցի անտի ումեք մահ: Իսկ պատահականն է՝ երբ սպանութին չիցէ կամեցեալ ոչ ուղղակի՝ և ոչ անուղղակի. այլ 'ի պարզ դիպուածոյ ուստեք պատահէ. որպէս այն՝ որ արձակէ զհրացան առ սպանանել զգազան 'ի մէջ անտառի, սպանցէ յանդէտս զմարդ ոք գտեալ առ եաեղ: Այլ որպէս զի դիպուածական սպանութին չհամարիցի 'ի մեղս՝ խնդրի երկու ինչ. Ա. Զի գործ մարդասպանին իցէ

գործ ըստ ինքեան օրինաւոր, և ո՛չ արգելեալ։ Է. Զի 'ի գործ արկեալ իցէ զամ՟ կարևոր զգուշութ՟ի, զի մի՛ հետևեսցի անտի սպանութ՟ի։ Առ պակասութ՟ե առաջնոյն՝ պարտաւոր լինի սպանութ՟ե կղերիկոս ոք, որ 'ի մեծաշուք և 'ի մեծաձայն որսորդութ՟ե սպանանէ զոք թէպէտ յակամայ կամս, և առանց նախատես լինելոյ սպանութ՟են. քանզի առնել որսորդութ՟ի այդպիսի՝ յայտնապէս արգելեալ է կղերիկոսաց։ Իսկ առ պակասութ՟ե երկրորդին՝ լինի պարտաւոր սպանութ՟ե որմնադիրն, որ փլուցանէ զորմն առանց դնելոյ զնշան յանցս ճանապարհին, կամ առանց ազդ առնելոյ անցաւորաց. և այնպէս սպանանէ զոք։

Կամաւոր սպանութ՟իւն եթէ ուղղակի և եթէ անուղղակի՝ ո՛չ երբէք լինի օրինաւոր, երբ գործի առանձնական իշխանութ՟բ. բայց եթէ լինիցի 'ի պահպանութ՟ի սեպհական կենաց, հանդերձ չափաւորութ՟բ անմեղադրելի պաշտպանութ՟ե. որպէս դնի 'ի կղեմեանն. գլ. հատուածի. յղ. սպանութ՟ե. խն. Է։ Ապա եթէ լինիցի հրապարակական իշխանութ՟բ՝ ո՛չ է մեղք. որպէս եթէ ոք սպանանիցէ զգլխապարտ ապստամբ. միայն թէ միաբանեսցին ամ՟ պայմանք առ առնել զայն օրինաւոր. իբր զի սպանութ՟իւն մի՛ լիցի վասն առանձնական քինախնդրութ՟ե, այլ վ՟ն նախանձու արդարութ՟ե. և մի՛ լիցի արտաքոյ սահմանաց երկրի ապստամբին. և ապստամբն չիցէ մերձաւոր ազգակից սպանողին. հուսկ ուրեմն զի մի՛ լիցի առ 'ի շահել ինչս 'ի սպանութ՟է անտի։ Որդ՝ 'ի զուգընթանալ նախայիշատակեալ պայմանաց՝ սպանողն իբրև պաշտօնեայ իշխանին՝ ո՛չ մեղանչէ։

Մարդասպանութ՟ին՝ որ է դիմամարտ արդարութ՟ե, մարթի լինել ընդդէմ և այլ առաքինու՟ե. ուստի որ սպանանէ զազգական իւր՝ մեղանչէ նաև ընդդէմ գթութ՟ե. որ սպանանէ զկղերիկոս, կամ զաշխարհիկ ոք ՚ի ս՟բ տեղի՝ մեղանչէ ընդդէմ կրօնի. ՚ի վախճանի՝ որ սպանանէ զմեծաւորն՝ մեղանչէ նաև ընդդէմ յարգութ՟ե: Նաև այս մեղք ոչ ընդունի զթեթևութ՟ի նիւթոյ:

Յայսմ վայրի ծագէ տարակոյս, թէ արդեօք՝ առ՚ի պահել կամ ՚ի կարկատել զհամբաւ և զպատիւ մեր մա՞րթ իցէ մեզ օրինաւորապէս սպանանել զընկերն:

Պատասխանի՝ ոչ երբէք. զի դատապարտեալ է յԱղեքսանդրէ Է. նախադասութ՟իս թիւ. ԺԷ. * Օրէն է կրօնաւորի կամ կղերիկոսի զզըրպարտիչն՝ որ սպառնայ տարածանել զհամբաւ ծանր ծանր քրէական յանցանաց ընդդէմ անձին նորա կամ կրօնի նորա՝ սպանանել, երբ չկայցէ առ ձեռն պատրաստ այլ եղանակ պաշտպանելոյ. որպէս երևի թէ չկայցէ՝ եթէ զըրպարտիչն պատրաստ իցէ ՚ի վերայ դնել զայնպիսի կեղտս այնմ կրօնաւորի կամ կրօնի նորա հրապարակաւ, և առաջի երևելի երևելի արանց, եթէ ոչ սպանցի‖, եւն: Որպէս և յԻննովկենտիոսէ ԺԱ. դատապարտեալ է նախադասութ՟ին Գ. որ ունի այսպէս: * Օրէն է պատուաւոր անձին սպանանել զոսոխ իւր՝ որ հնարի ձգել զրպարտութ՟ի ՚ի վ՟ր նորա, եթէ չկարիցէ այլազգ զերծանիլ ՚ի վատահամբաւութ՟է անտի: Նոյն է ասելի և զնմանէ, որ ապտակս հանէ, կամ գաւազանաւ հարկանէ, և յետ ապտակահարութ՟ե կամ գաւազանահա-

րութե՟՝ ՚ի փախուստ անձապարէ||, եւ։ Ո՟չ զի ընդդէմ է բնական լուսոյ եւ կանոնի ուղիղ բանին՝ ընտրել զմեծագոյն չար առ ՚ի զդէմ ունել փոքու չարի. կամ առ ՚ի պահել զբարի ինչ ՚ի ստորին կարգի։ Արդ քանզի հաւաստի իմն է, թէ կորուստ կենաց՝ է մեծագոյն չար առ կորըստեամբ պատուոյ, չէ՛ օրէն առ ՚ի պահել կամ նորոգել զպատիւն՝ առնել զմարդասպանութի՟. եւ այնչափ առաւել՝ որչափ զի սպանութի՟ն յայտնապէս արգելեալ է մեզ ՚ի պատուիրանեն ա՟յ. * մի՛ սպանաներ||։ Իսկ յաղագս կորստեան պատուոյն՝ յայտնապէս խրատեալ եմք ՚ի տ՟նէ մերմէ յ՟սէ չպատկասիլ ՚ի սիրոյ ընկերին. Մատ. Ե. 39. * Այլ ես ասեմ ձեզ. մի՛ կալ հակառակ չարին. այլ եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո՝ դարձո՛ նմա եւ զմիւսն||։

Ո՞ւր դիցուք ապա եւ զք՟. նախադասութի՟ն դատապարտեալ յԱղեքսանդրէ Է. * Այր ասպետ հրաւիրեալ ՚ի մենամարտութի՟ մահառիթ՝ կարող է յանձն առնուլ զայն. զի մի՛ զկեղտ անուն վատասրտութե՟ ձգեսցէ յայլոց յանձն իւր||։ Ո՟չ զի ՚ի վտանգ մահու դնել զանձն կա՟մ զընկերն առ սին սոսկ զըափառութե՟ առանց հիման, կամ ընդդէմ թելադրութե՟ բանին, որպէս լինի՝ յորժամ ոք առ խորշելոյ յարատոյ մեհերոտութե՟ եւ երկչոտութե՟՝ յանձն առնուցու զմենամարտութի՟՝ չլինի երբէք օրինաւոր, այլ հակառակ բանին. յայտ է փոքրագոյնն առաջարկութե՟ս։ Ո՟չ զի եթէ ասպետ ոք հրաժարի ՚ի մենամարտութե՟՝ առ որ յանդգնութե՟ իմն հրաւիրի, առաջի խոհականաց եւ երկիւղածաց ո՛չ միայն չլինի համարեալ երկչոտ կա՟մ մեհերոտ, այլ եւ ընդհակառակն եթէ ընկալ-

ցի՝ Ճանաչի այր յետսամիտ, մինչև կենայ անձին, և անարգու ա͞ծային և մարդկային օրինաց. և միայն սակաւուց ոմանց անհաւատից և անխղճից համարեսցի իբրև այր երկչոտ և վեհերոտ՝ եթէ ո՛չ յանձն առնուցու զմենամարտութի͞ն: Ապա առ'ի խոյս տալ յանհիմն ստգտանաց երկչոտութե͞ առաջի սակաւուց և վատթարաց, չէ՛ երբէք օրինաւոր՝ յանձն առնուլ զմենամարտութի͞՝ դնելով 'ի վտանգի ըզկեանս իւր և զընկերին. և որ չար ևս է՝ վըտանգելով զյաւիտենական փրկութի͞ն:

Այսպէս չէ՛ օրէն սպանանել զընկերն առ'ի պինդ պահել կամ անդրէն 'ի ձեռս բերել ըզժամանակաւոր բարին: Յոյր սակս Իննովկենտիոս Ժ͞Ա. դատապարտեաց ընդ այլ նախադասութի͞ս և զայն Լ͞Ա. * Օրինօք կարող եմ սպանանել զգողն՝ առ'ի պահել և զմի ոսկի դահեկան ||: և զայն Լ͞Բ. * Ո՛չ միայն օրէն է պաշտպանել մարդասպանական պաշտպանութ͞բ զոր ինչ առ ձեռն ժառանգեմք, այլ և առ որս ունիմք զսկսեալ իրաւունս, և զորս ակն ունիմք ժառանգել ||: և զայն Ծ͞Գ. * Օրէն է՝ եթէ ժառանգի, և եթէ կտակաւորի՝ այնպէս պաշտպանել անձին՝ ընդդէմ յանիրաւի արգելողին, զի կամ ժառանգութի͞ն ո՛չ բերցի 'ի ձեռս, և կամ կտակեալ իրքն լուծցին: Նոյն օրինակ օրէ՛ն է և ունողին իրաւունս առ աթոռ ինչ կամ առ ատուչութ͞ի նորին՝ ընդդէմ յանիրաւի արգելողաց զստացուա͞ծ ||: Ա͞ն զի նախ՝ ընդդէմ ելանէ այսմ վարդապետութ͞ի տ͞ն մերոյ յ͞ի ք͞ի՝ որ ասէ 'ի Մատթ. Ե. 40. * Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապիկս քո, թո՛ղ 'ի նա և զբաճկոն քո ||: Երկրորդ՝ զի չէ՛

օրինաւոր սպանութեան առանձնական իշխանութք, բայց միայն 'ի պաշտպանել զսեփհական կեանս անձին. Գլ. Սպառազէն, հանդերձ չափաւորութեամբ անմեղադրելի պաշտպանութեան: Ս՟ որոյ չլինի օրինաւոր սպանանել զընկերն վասն պահպանութեան կամ ստացման ժամանակաւոր բարւոյն: Ս՟ այսորիկ ընդ Օգոստ՟. Գլ. ա. յղ. անձնիշխանութեան, այսպէս գրէ. * Օրէնդ առաջի ածեղէն նախախնամութեան ազատ գտանիցին, որք միանգամ 'ի սակս իրացս այսոցիկ՝ զորս պարտն է արհամարհել, արիւնահեղուք մարդոյ զանձինս շաղախեցին ‖: Իսկ Աղեքսանդր Է. Գլ. ա. յղ. Մարդասպանութեան, այսպէս սահմանէ. * Լաւել պարտ և արժան էր յետ շապկի և զբաճկոնն թողուլ. և կրել զրկանս իրաց իրաց, քան թէ առ 'ի պահել զանարգ և զանցաւոր իրս՝ այդչափ դառն դժնէութեամբ յայլս առատանալ ‖: Տես զՓագնանոս 'ի Գլ. Սպանէր. յղ. Մարդասպանութեան. հմ. 3. և յորս զկնի:

Մեծագոյն դժուարութիւն այն է. թէ օրէն իցէ արդեօք սպանանել զսուտ դատախազն, կամ զսուտ վկայս, եւ և զդատաւորն՝ զոր հաւաստեաւ գիտեմք, թէ յանիրաւի ունի դատապարտել զոք 'ի մահ, երբ չկայցէ անմեղին այլ ճանապարհ ազատելոյ զանձն. որպէս հաստատեն ոմանք: Այլ սակայն ասելի է 'ի պատասխանին՝ թէ ոչ. նմին իրի 'ի մէջ այլ նախադասութեանց Աղեքսանդր Է. դատապարտեաց զժը. * Օրէն է սպանանել զսուտ ամբաստանն, զսուտ վկայս, եւ և զդատաւորն՝ յորմէ մօտալուտ ունի ելանել հաւաստեաւ դատակնիք անիրաւ, եթէ անմեղն այլով ճանապարհաւ չկարէ խուսափել 'ի մահուանէ ‖: Ս՟ զի թէպէտև

օրինաւոր է պաշտպանել զկեանս անձին սպա-
նանելով զանիրաւ յարձակեալն 'ի վերայ. յոր-
ժամ սա զինուք և այնպիսի օրինակաւ դիմեալ
գայ, մինչև անկարանալ մեզ այլազգ խուսա-
փել 'ի մահուանէ, բայց սպանանելով զնա. և
վն այսորիկ իսկ ասի՝ եղեալ չափաւորութբ անմե-
ղադրելի պաշտպանութե. այլ 'ի դիպուածդ մեր
չիք բռնութի զինուց՝ այլ սուտ բարուրանաց
և ելթ. յորմէ օրինական դարմանօք և ոչ եթէ
բռնութբ մահուան պարտ է անձնապահ լի-
նել. ապա թէ ոչ՝ բացեալ էր արձակ ճանա-
պարհ մարդասպանութեց. վն զի ոմն ոք դիւ-
րաւ կարող էր գտանել 'ի մտի, թէ ինքն յանի-
րաւի ամբաստանեալ և 'ի մահ դատապարտեալ
իցէ. ուստի և առ 'ի զերծանիլ 'ի մահուանէ
կարող իցէ օրինապէս սպանանել զդատախազս
իւր՝ և զդատաւորն անգամ։

Աստանօր նոյնպէս մարթի տարակուսս ծա-
գիլ, թէ արդեօք առանց յանցանաց կարօ՞ղ
իցէ այրն սպանանել զկին իւր ըմբռնեալ 'ի
շնութե. որովհետև քաղաքական օրէնք ոչ դա-
տապարտեն զայդ գործ։

Պատասխանի՝ ոչ. զի ոչինչ ակնածելով կար-
դաւորութե քաղաքական օրինաց՝ Աղեքսանդր
Է. դատապարտեաց զնախադասութիւն. ժԹ.
զայն՝ թէ * Ո՛չ մեղանչէ այրն 'ի սպանանել
անդ անձնական իշխանութբ զկինն ըմբռնեալ
'ի շնութե ||։ Վն զի թէպէտև քաղաքական
օրէնք ոչ դատապարտեն, այլ՝ թողացուցանեն
զայդպիսի սպանութի, և սակայն օրէնք կա-
նոնականք յայտնապէս արգելուն. որպէս է
տեսանել 'ի գլ. Աղր տուեալ. լգ. խ. Է. ուստի
ոչ երբէք լինի օրինաւոր ըստ վարդապետութե

դատապարտեալ նախադասութեն ։ Տե՛ս 'ի փադ-նանոս. գլ. ստանէր. յղ. մարդասպանութե. հճր. 6 ։

Պարտ է մեզ յաւելուլ և զայլ կրկին նախադասութիւս. ր՝ լԴ. և լԵ. դատապարտեալս յԻննովկենտիոսէ ԺԱ. որք յայս խնդիր անկարկեն. լԴ. այս իսկ է. *Օրէն է հնարել զվիժումն նախ քան զոգևորել սաղմին. զի մի աղջիկն յանդիմանեալ վն յղութեն՝ սպանցի, կմ վատահամբաւեսցի||. և լԵ. այս է. *Հաւանական երևի, թէ ամ սաղմն՝ ցորչափ յարգանդի է, անմասն է 'ի հոգւոյ բանականէ. և թէ յայնժամ զառաջինն սկսանի ունել զայն, յորժամ ծնեալ լինի. ուստի և ասելի է, թէ և ոչ միով իւիք վիժմամբ մարդասպանութե գործի||։

Ստութն առաջին նախադասութն յայտ յանդիման երևի. քանզի նոյնօրինակ մարդասպան լինի համարեալ այն՝ որ գուն գործէ վիժել զոգևորեալ սաղմն, և այն՝ որ պատճառ լինի վիժելոյ զսաղմն չև ևս հոգևորեալ. ոչ որպէս թէ յերկրորդումս դիպուածի բառնայցէ ըզկեանս անձին ուրուք, այլ զի մերձաւորապէս և անմիջապէս արգելու զկեանս անձին միոյ ։ Ստ որոյ 'ի գլ. Եթէ ոք. յղ. մարդասպանութե, ասի. *Եթէ ոք ու'ի լրումն տռփանաց իւրոց, կամ ատելութե՝ խորհրդով արասցէ ինչ առն՝ կամ կնոջ. և կմ տացէ ըմպել ինչ առ'ի չկարելոյ յղանալ կամ ծնանել զզաւակս, պարտաւոր է մարդասպանութե||։ Իսկ թէպէտ մարթ իցէ տոտիսոսի սպանանել հանդերձ չափաւորութբ անմեղադրելի պաշտպանութե, զանիրաւ յարձակեալն 'ի վերայ իւր, յորժամ պակասին նմա այլ միջոցք 'ի պաշտպանել զսեփական կեանս

իւր , այլ չմարթի երբէք սպանանել զ'ի վերայ յարձակեալն առ այս միայն՝ զի մի՛ մեռցի ինքն տիտիոմն յայլմէ . յոյր սակս Թէպէտեւ սաղմն իցէ անիրաւ յարձակօղ 'ի վերայ կենաց կամ համբաւոյ կնօջ պղծելոյ՝ ըստ ասելոյ ոմանց , չէ՛ հնար նմա վիժել զսաղմն , զի մի՛ սպանցի ինքն 'ի հօրէ , կամ 'ի հարազատաց իւրոց . կամ զի մի՛ անհամբաւ լինիցի :

Յաւել և զայն , զի մերձաւորագոյն ևս զուգընթանայ առ ծնունդ մարդոյ սաղմն Թէ՛ և անհոգի , քան սերմն նորոգեալն . արդ՝ որպէս առ 'ի պահպանել զսեփական կեանս՝ չէ՛ մարթ պատճառել զգիճութի , ևս առաւել անմարթ է 'ի պատճառս ասացելոց՝ պատճառել զմահ սաղմին , Թէպէտև իցէ անհոգի :

Զայս այսպէս պարտ է իմանալ , Թէ՛ և կինն յղացեալ իցէ բռնութբ և առանց յանցանաց . մն զի այդ է 'ի ներքուստ չար : Զնոյն իմանալ պարտ է , Թէ և իցէ օրիորդ նուիրական ոք , կամ 'ի պայծառ տոհմէ . զի ոչ պակասին միջոցք խոհականք առ'ի զերծ լինել 'ի վատահամբաւութէ և 'ի մահուանէ :

Ուր արժան է յուշ առնել և զայն , զի չէ՛ օրէն արգելուլ զյղութի : Ապա եԹէ կինն խոհեմաբար խնԹայցէ ընդ մահ զաւակին , յայնժամ ոչ է պարտական հաղորդանել ամուսնոյ ընդդարձան . և ոչ կարէ այնպիսի ոգւով հաղորդանել ընդդարձան , որպէս ոչ յերկոյ արգելլուցու զյղուԹէ : Այսպէս խօսի Գուարտ 'ի բացատրուԹե նախադասուԹեց դատապարտելոց :

Նոյնպէս յայտնի է և ստուԹի երկդ նախադասուԹե : Ոչ զի անհիմն բարբառին՝ որք ասեն Թէ հոգին բանական հեղանի 'ի սաղմն՝

'ի ծնանիլն և եթ նորա. իբր զի կամ հարկ էր սաղմին, զի իցէ տրամադրեալ առ բանաւորական ներգործութիս, որպէս զի հեղցի 'ի նմա հոգին բանական: Եւ ըստ այսմ հարկ էր ասել, թէ մինչև իբր ցեօթնամսեայ հասակ ոչ հեղանի բանական հոգին. որ է կարի յոյժ անտեղի: Եւ կամ հարկ էր ասել, թէ յառաջ քան զծնանիլն սաղմին, երբ ըստ բաւականին կերպացեալ իցէ և տրամադրեալ առ'ի ընդունիլ զբանական հոգին, հեղանի հոգին մինչչև է ելեալ յարգանդէ մօրն: Եմին իբր ծիսարանն հռովմէական. յղ. խորհրդոյ Մկրտութ. իմաստութ. ազդ առնէ. * Եթէ յղի մայրն մեռեալ իցէ, սաղմն ըստ կարի փութով արտաքս ձգեսցի. և եթէ ողջ իցէ՝ մկրտեսցի ‖: Ապա ուրեմն ենթադրէ ծիսարանն, թէ սաղմն յառաջ քան զծնանիլն ունի գոլ հոգևորեալ բանական հոգւով. յոր սակս և կամի իսկ՝ զի յայն դիպուած մկրտեսցի: Եւ այս յայտնագոյն ևս հաստատի 'ի սբ. գրոց. զի սբն Ղուկաս. ա. 44. վն Յովհաննու մկրտչի ասէ. * Խաղաց մանուկն յորովայնի նորա ‖. զոր արդարև չէր հնար մանուկ անուանել՝ եթէ չունէր հոգի բանական. և ոչ իսկ նշանակէր սբ. գիրն զայն, թէ * Հոգւով սբվ լցցի անդստին յորովայնէ մօր իւրոյ ‖: Վն զի չէր մարթ ընդունիլ զհոգին սբ՝ եթէ չունէր զհոգի բանական: Ո՛ւր թողից զայն, զի որովհետև 'ի հաւատոց է՝ թէ 'ի յղութէ անդ մերում իսկ և իսկ անկանիմք յսկզբնական մեղս. որպէս ունիմք 'ի ծ. սաղմոսի, ըստ եբրայական բնագրին. * Զի ահա անօրէնութ. յղացայ. և 'ի մեղս ծնաւ զիս մայր իմ ‖. չէր մարթ ստուգիլ այդմ՝ ե-

թէ յառաջ քան զծնանիլ սաղմին՝ չէր միանգամայն հոգեւորեալ բանական հոգւով։

Յուշ լիցի. զի որ պատճառ լինի վիժելոյ զհոգեւորեալ սաղմ̃ն՝ անկանի 'ի նզովս եդեալս 'ի գրիգորէ ժդ̃. վերապահեալ եպիսկոպոսաց 'ի սահմանադրութե̃ իւրում. որոյ սկիզբն է Էֆֆրէնադամ աբռօ. և ևս անկանի յանկանոնականութի̃։ Իսկ որ ջանայ տալ վիժել նախքան զհոգեւորիլ սաղմին, ըէ ե գործն ո՛չ շնէր էնէոյէ՝ տակաւին մեղանչէ մահուչափ մեղօք. և անկանի 'ի վերապահեալ դիպուած 'ի թեմի աստ. զորօրինակ՝ անկանի կամաւոր մարդասպանն. եթէ բուն սպանօղ իցէ, և եթէ խորհրդատու, ձեռնտու, կամ հրամանատու՝ թէպէտև ո՛չ արդիւնացի գործն։

Գիտել արժան է աստանօր. զի ժամանակ հոգեւորելոյ սաղմին է անստոյգ։ Են՝ որ սահմանեն վ̄ո արուին զաւուրս 30. կամ 40. իսկ վ̄ո իգին զաւուրս 50. կ̄մ 80. և են՝ որ այլեայլ օրինակաւ խօսին։ Աշերիկոսն վ̄ո միոյ և եթ այդպիսի յանցաւորութե̃ զրկի 'ի կարգէն, և մասնի աշխարհական ատենի. թեմական ժողով բենեդիկտոսի ժդ̃. Գր. Է̄. Գլ. Ը̄։ 'Ի վախճանի՝ որ գտաւ պարտաւոր այդպիսի յանցանաց, եթէ այր իցէ՝ անկանի յանկանոնականութի̃։

Պարտին խոստովանահարք հարցանել ըզբժիշկս. միթէ արբուցեա՞լ ինչ իցեն երբէք յղի կանանց առ 'ի հնարել զվիժումն։ Եթէ պատասխանիցեն այո՝ մեղուցեալ են ծանրապէս՝ զոյգ ը̄ այնոսիկ, որք առինն զայն դեղ։ Իսկ եթէ ասիցեն, թէ զայդ արարաք առ 'ի զերծուցանել զկեանս մօրն. որ կարծիւր մեռանիլ՝ թէ չընդունէր զդեղն՝ տակաւին մե-

զուցեալ են մահուչափ ։ 'Ի սոյն կարծիս են Ռազիոս . Պուգեանն . Սեղուլիոս, և այլք . վ̃ն զի այդ լինէր ուղղակի հնարել զվիժումն, որ միշտ է չար 'ի ներքուստ ։ Այլ եթէ վտանգ վիժման զուգահաւասար իցէ, եթէ ընկալցի մայրն զդեղն, և թէ ոչ, յայնժամ օրինաւոր է մօրն առնուլ զդեղն . որովհետև առանց մեծի վտանգի և փասու սաղմին լինի խնամ տանել կենաց մօրն ։ Նաև չէ իսկ օրէն բանալ զարգանդ մօրն առ 'ի մկրտել զզաւակն . վ̃ն զի ուղղակի սպանանել զանմեղ ոք' է 'ի ներքուստ չար . զի ոչ լինի առնել . * Արասցուք զչարն' զի եկեսցէ բարին ‖ . Հռովմ . Գ . 8 ։

Որ տայ զառիթ վիժելոյ նաև արտաքոյ դիտաման, տակաւին մահուչափ մեղանչէ, զորօրինակ' * Եթէ յղի մայրն սաստիկ սստոստեալ . կամ յոյժ տարապայման աշխատեցաւ . կամ յանկարծ վախաշմնս դեդերեցաւ ‖, ասէ Ս̃բն Անտոնինոս ։ Արդ' յղի կանայք զգուշանալ պարտին յամէ' որ մարթի լինել պատճառ վիժման, զի մի լինիցին որդեսպանք ։

Թէպէտև ը̃ ասացելոյս հնարելն զվիժումն անհոգի սաղմին է մեղք մահուչափ . բայց 'ի վերայ այսր ա̃մի' չէ այդ տիրապէս մարդասպանութի̃ . ըստ Գլ . Ե . յշ . ստորնուբէ̃ . ուր ասի' թէ ոչ անկանի յանկանոնականութի̃ . քանզի անհոգի սաղմն չէ պարզապէս և լրացեալ մարդ . զի մարդն է բաղադրեալ 'ի մարմնոյ և 'ի բանական հոգւոյ ։ Այսպէս խօսի Անտոյին ։

'Ի վերայ հատուցման' առ որ պարտաւորի մարդասպանն' պարտ է յուշ առնել, թէ կրկին չարիս մեծամեծս առնէ ընկերին ։ ա̃ . Ծանր անիրաւութի̃ն' զոր գործէ' է զրկելն զնա 'ի

կենաց ։ Է. Վնասքն՝ զոր հատուցանէ ազգականաց նորա ։ Ըստ բանի անիրաւութեան առ վախճանեալն՝ այդմ մարթ է ունել զներումն յազգականաց նորա՝ ինքնին խնդրելով առ'ի նոցանէ զներումն. միանգամայն և խոստովանահարք սովոր են պարտաւոր առնել զնա՝ տալ մատուցանել զբազում պատարագս, և բաշխել զողորմութիւնս աղքատաց վասն հոգւոյ նորա ։ Իսկ ըստ բանի վնասուց եղելոց առ ազգականս նորա, պարտաւորի սպանողն վճարել նախ զծախսն՝ որ լինին 'ի դարման սպանելոյն. ապա հատուցանել և զվնասն եթէ դադարեալ շահուն, և եթէ ծագեալ վնասուն. զորս 'ի պատճառս ըսպանութեան ետ կարևոր ժառանգաց նորա. որ են հայր, և մայր, կին, և որդիք նորա. հայեցեալ 'ի հասակն, յառողջութիւն, և 'ի պաշտօն սպանելոյն ։ Որ թէպէտև մինչև մեռեալ՝ ներեալ և թողեալ իցէ սպանողին զամենայն. զայդ պա՛րտ է իմանալ զանիրաւութիւն եղելոյ առ ինքն, և ո՛չ զպարտաւորութիւն՝ զոր ունի հատուցանել կարևոր ժառանգացն. որք որպէս իրաւունս ունէին 'ի վերայ սպանելոյն 'ի սակս պարտուպատշաճ պահպանութեան իւրեանց, սոյնպէս ունին և առ սպանողն. ապա ո՛չ կարէ ըսպանեալն իւրով ներողութեամբն կամ տալով թողութի՝ զրկել զժառանգս իւր 'ի բնիկ իրաւանց աստի ։

Այլ վասն խեղութեան ընկերին, կամ իւրոյ իսկ անձին՝ ասելի է, թէ նոյնպէս և այս է մեղք մահուչափ, մինչև չընդունիլ զթեթևութիւն նիւթոյ. և անդամահատին լինել անկանոն, եթէ խեղութիւն իցէ 'ի գլխաւոր ինչ անդամ, որ և ունիցի զիւր պաշտօն առանձին ։ Այլ ևս

որ կրճատէ զընկերն՝ պարտաւոր տանել զանձն հատուցման՝ ըստ որում ասացաւ զսպանութէ։

Իսկ վն գանհարութէ, վիրաւորութէ, և բանտարկութէ՝ ասելի է, թէ մարթ է սոցա ընդունիլ զթեթևութի նիւթոյ, եթէ ըստ յանցանաց և եթէ ըստ հատուցման, 'ի լինել բանտարկութէն կարի թեթև կամ սուղ. միայն թէ գանհարեալն կամ բանտարկեալն չիցէ յայն վիճակ, մինչև 'ի ծանր յանցանս դրել գանհարութէ նորա կամ բանտարկութէն բա-նիւ անչէնն, թէպէտև միւսոյն կարի թեթև իցէ։

---

### Յաղագս Մեղաց ընդդէմ փոխարինական արդարութե՝ ըստ բարի համբաւոյ։

Արդ՝ եկեսցուք առ մեղս, որք բառնան առ 'ի մէնջ զբարին, որ երկրորդ է 'ի կարգի. այս՝ զբարի համբաւ, և զպատիւ. սկիզբն առնելով 'ի թշնամանաց և 'ի բամբասանաց։

Թշնամանքն է՝ յորժամ ոք նախատէ զընկերն 'ի ներկայութե նորա, կոչելով զնա գող, ստերդումն, ևն. և սա դիմամարտի ոչ միայն բարի համբաւոյ ընկերին, այլ և պատւոյ և յարգութե՝ զոր պարտիմք նմա. ուստի չէ բաւական յետս նահանջել զայդպիսի անիրաւութի ըստ օրինակին, զորմէ 'ի մօտոյ ունիմք ասել. այլ և պարտիմք փոխարինել պատւոյ նորա՝ առնելով զգործ ինչ խոնարհութե և յարգութե հրապարակաւ։

Երրակի լինի յանցանել յայսմ մասին. այս՝

ձայնիւ, գրով, և արտաքին գործողութ՟բ ։
Ձայնիւ՝ ը՟ որում ասացաւ, նախատելով զըն-կերն դէմ յանդիման ։ Գրով՝ գրելով զբանս վատահամբաւութե՟, և կախելով 'ի հրապարակի ։ Գործով՝ յորժամ հանէ ոք ապտակս ընկերին, կամ գաւազանաւ հարկանէ ։ Թշնամանքն ունի զերիս սորին տեսակս. ը՟՝ ա՟. Յորժամ բարբառով արտաքերի յանցանքն, որով անպատիւ լինի տիտխոսն. որ՟՝ երբ ասեմք զոմանէ թէ գող է, եւ՟ ։ բ. Յորժամ յերեսս հարկանեմք նմա զպատիժն՝ զոր երբեմն ընկալաւ. որ՟՝ ասելով թէ եղաւ 'ի ցռկանաւն. և սա կոչի նախատինք ։ գ. Յորժամ յերեսս հարկանեմք, թէ եղեր դու ողորմելի մուրացիկ, մինչև ես ինքնին նպաստ մատուցի քեզ ողորմութեամբ. և սա կոչի անարգանք ։

Բամբասանքն է՝ յորժամ ոք 'ի բացակայութե՟ ընկերին բառնայ զբարի համբաւ նո՟. և եղանի, ա. Եթէ 'ի վերայ բարդեսցի նորա սուտ բարուրանք ։ բ. Եթէ յանցանք ինչ նորա բարդեսցի սուտ պարագայիւք ։ գ. Եթէ 'ի վեր հանցի գաղտնի յանցանք նո՟՝ թէև իցէ ճշմարիտ ։ դ. Յորժամ ասիցի, թէ զայն ինչ գործ բարի գործեաց դա չար վախճանաւ ։ Եւ ահա այսպիսի օրինակաւ ուղղակի բարձեալ լինի բարի համբաւ ընկերին ։

Իսկ անուղղակի՝ ա. Յորժամ ոք զբարի գործ ինչ ընկերին ուրաստ լինի ասելով՝ թէ չէ՟ նորա արարեալ ։ բ. Յորժամ առ չարութե՟ սըրտին լռէ կայ, ուր յայն պարագայ պարտ էր յայտնի առնել ։ գ. Յորժամ նուաղեցուցանէ, երբ 'ի պաշտամանէ իւրմէ, պարտական էր ասել այնպէս՝ որպէս և է ։ դ. Յորժամ 'ի լսելն բամ-

բասանս զընկերէն՝ համեսցի ը՟ այն ։ Է․ Յոր-ժամ՝ն պաշտամանէ կարօղ գոլով և պարտական կշտամբել և արգելուլ զբամբասանս՝ չառնէ զայդ ։

Լսելն կամաւ և անպատճառ զբամբասանս (կա՟մ զտրտունջս,) և 'ի կարելն դիւրաւ՝ չար-գելուլ՝ է մեղք մահուչափ ։ Հասարակ է 'ի մէջ վարդապետաց․ և քաղի 'ի գրոց առակաց․ Գլ․ Է․ հճ․ 24․ ուր յայտնապէս պատուիրի․ * 'Ի բաց արա 'ի քէն զբերան կամակոր․ և զշրթունս անիրաւս մերժեա 'ի քէն ‖ ։ Քանզի այդ չար՝ ասէ Ոբն հերոն"․ Եղբ․ ԺԲ․ առ նեղանս․ * Յայն սակս է հանդիսացեալ, մ՟ն այն զօրա-ցեալ է առ բազումս, մ՟ն զի գրեթէ ամենե-քին ունկն մատուցանեն․ եթէ պակասեսցի լսօղ, պակասի և քրթմնջօղ ‖ ։ Եթէ չիցէ մարթ արգելուլ զբամբասօղն՝ ուղղակի կշտամբութ՟․ կամ թէ անձն, որ լսէ զբամբասանս չիցէ յար-մար 'ի կշտամբել․ և կամ թէ չգուցէ ինչ յոյս պտղոյ, մանաւանդ թէ կայցէ երկիւղ և ծան-րագոյն չարի, իբրև զի 'ի կշտամբութե՟ ան-տի մարթի գրգռիլ առ առաւել հաստատել զբամբասանս, յայնժամ պա՛րտ է ասեն վար-դապետք հասարակօրէն՝ կշտամբել զնա անուղ-ղակի․ որ՟՝ կա՛մ մեկնելով անտի․ կամ յեղափո-խելով զբանն․ կամ լռելով, և կամ ցուցանե-լով զ․քստմնութի՟ իմն 'ի դէմս․ քանզի գրեալ է․ առակ․ Գլ․ ԻԵ․ հճ․ 23․ * Հողմն հիւսիսոյ զամպս յարուցանէ․ երեսք լկրբք զլեզուս գրգռեն․ (Ըստ լատ․ և երեսք տխուրք զլեզու բամբասօղ ‖ ։) Յաւելու Ըսգոն կարդ․ * Որպէս տխուր երե-սաց՝ փուշ է, որով խոցոտի լեզու բամբասողի ‖ ։

Հասարակաբար խօսելով՝ 'ի յայտ բերել

զբնական պակասութեան ուրուք՝ չէ՛ մեղք մահուչափ. Դր՝ ասել թէ այս ոք անհարազատ ծնունդ է. կամ նուազեալ 'ի ձիրս. կամ պակասաւոր յաչս, եւ այլն: Ս̃ն զի այսոքիկ չե՛ն պակասութիւնք մահուչափ մեղադրելիք, որպէս եւ ասելն ընդհանրապէս՝ թէ այն ոք է հպարտ, բարկասիրտ, ագահ, եւ այլն. զի ունկնդիրք մեկնաբանեն, թէ այդ եղանակ խօսից բերի առ բնական յօժարութիւն եւ առ ակամայ պակասութիւն. յորմէ ոչինչ ծանր վնաս ծագէ համբաւոյ նորա: Սբն Անտոնինոս. Մս. Թ. հատ. 8. գլ. Բ:

Լայնման ընդ հասարակաց:

Մահուչափ մեղանչէ, եւ բամբասէ նա՝ որ ասիցէ զումեքէ որոշեալ անձնէ. թէ այնչափ ինչ գիտեմ զնմանէ՝ մինչեւ ամաչել ինձ գըլխովլին: Որոյ պատճառն է. զի որ լսէ զայդ բան՝ իսկ եւ իսկ 'ի վերայ ածէ, թէ տխմարն ունիցի զծանրագոյն յանցանս, որ առնէ զնա վատահամբաւ: Բայց ասելն թէ յայս ինչ քաղաքի գտանին բազում չարագործք եւ ապիրատք՝ չէ՛ մեղք մահուչափ: Իսկ որ ասիցէ, թէ միանձն ոք յայս նիշ մենաստանի յանցուցեալ իցէ իւիք յանցանօք, չկարէ լինել անբասիր 'ի ծանր մեղաց. զի թէպէտեւ կրօնաւորական միաբանութիւն ինչ ո՛չ լինի վատահամբաւ՝ վ̃ն կորստեան միոյն, որպէս ոչինչ արատաւորեցաւ առաքելական դասն վ̃ն մատնութեան յուդայի, այլ յայսմ ա̃մի վերայ արատաւոր լինի առաջի պարզամտաց եւ անկատարից: Սբն Օգոստ. 'ի Թուղթն. 137. առ ուխտ եկեղեցւոյն իպպոնայ. Լայնման եւ այլ: Բայց առ համառօտիւ առաջի դնելոյ ըզդոյնպիսի դիպուածս. եւ առ 'ի կարօղ լինել խոստովանահօր զանազանել թէ բամբասանքն

Երբ իցէ մեղք մահուչափ, և երբ ներելի, լաւ լիցի առաջի աչաց ունել զընդհանուր կանոնն յառաջ բերեալ 'ի Սպորերայ ։ * Ցորչափ երևելի օրինակաւ եղծանի բարեհամբաւութիւն ուրուք, եթէ մահուչափ իցէ պատմեալ պակասութիւն, և եթէ ներելի, և կամ բնական և եթ, միշտ լինի մահուչափ մեղանչել ։ Իսկ ցորչափ թեթևապէս և եթ վնասի բարեհամբաւութիւն, լինի մեղանչել ներելի. և յորժամ ինչ ոչ վնասի զինչ և ասիցի, ոչ լինի մեղք յայսմ կարգի ‖ ։

Իսկ պատմել զյանցանս ինչ, որ վճռով դատաւորին 'ի յայտ եկեալ իցէ, է օրինաւոր առանց անիրաւելոյ ։ Այսպէս վարդապետք առհասարակ ։ Պատճառն է. վասն զի դատաւորն որպէս ունի իրաւունս զրկելոյ զյանցաւորն 'ի բարւոյ բաղդին, սոյնպէս ունի իրաւունս զըրկելոյ և 'ի բարւոյ համբաւոյն, յորժամ հրապարակաւ զնա դատապարտէ. մինչ զի որ հրապարակէ զայդպիսի յանցանս հռչակեալս՝ ոչ մեղանչէ ընդդէմ արդարութեան. մանաւանդ՝ եթէ չխօսեսցի 'ի չարակամութենէ, և ոչ ընդդէմ սիրոյ մեղանչէ. որպէս վարկանին բազումք ընդդէմ սոտոսի, Նաւարրոսի և այլոց ։

Եթէ յանցանքն իցէ ծանուցեալ՝ մինչև բարոյապէս անհնարին համարել թէ չյայտնեսցի այլոց, պատմելն զայն՝ ոչ է մեղք՝ գէթ մահուչափ. այս է հասարակ կարծիք վարդապետաց ։ Իսկ առ 'ի ասել, թէ այս ինչ է յայտնի և ծանուցեալ՝ ասեն բազումք՝ թէ հարկաւոր է, զի գիտասցեն զայն անձինք տասամբ չափ. քանզի այդ թիւ կազմէ զժողովուրդ, զամբոխ, և զծուխ. Գիրք Ե. ԺԺ. [illegible]

լոց։ Այլ սակայն ոչինչ հայեցեալ ըստ թիւդ՝ ապահովագոյն կանոն է համարիլն թէ ծանուցեալ իցէ բազմաց. և թէ բարոյապէս խօսելով մարթ իցէ յայտնի լինել այլոց։ Ըստ այդորիկ եթէ միաբանութի կամ հասարակութի ինչ իցէ բաղկացեալ յանձանց ութից, շատ է թէ գիտեն զայն յոլովակի չորք կամ հինգ 'ի նոցանէ. եթէ իցէ բաղկացեալ 'ի քսանից՝ բաւական է ութն. իսկ եթէ 'ի հարիւրոց՝ շատ է հնգետասանն կամ քսանն։ 'Ի քաղաքի միում եթէ իցեն անձինք հինգ հազար, առ 'ի կոչիլ գործոյն այնմ հրապարակական՝ շատ է թէ գիտասցեն զայն անձինք երեսուն կամ քառասուն։

Մահուչափ մեղանչէ հանդերձ պարտաւորութբ հատուցանելոյ՝ որ միանգամ առանց արդարացի պատճառի վատահամբաւ առնէ զոք յանցանօք իւիք՝ որով երբեմն թէպէտ և էր վատահամբաւեալ, բայց ապա յուղղութի է եկեալ. և յանցանք նորա 'ի մոռացօնս անկեալ։ Այս կարծիք գրեթէ հասարակ է Սանքէզի, Մոլինեայ, Լուգոնի, և Լայմանայ ընդդէմ Լեսսիոսի։ Նոյն պատճառն է. զի նա 'ի ձեռն ուղղութե իւրոյ, և 'ի ձեռն մոռացութե յանցանաց իւրոց՝ դարձեալ է յառաջին վիճակ բարեհամբաւութե իւրոյ։

Եթէ ոք առ 'ի զիջուցանել զբորբոք կրից իւրոց, կամ առ ընդունել զքաջալերութի, կամ առ 'ի խորհրդակցիլ առանց դիտման բամբասանաց պատմեսցէ բարեկամին զանիրաւութիւն, զոր ընկալաւ յայլմէ՝ ոչ մեղանչէ մահուչափ։ Որոյ պատճառն է. զի մարդկային վիճակն ոչ տանի, զի յետ կրելոյ զանիրաւութի ինչ՝ չունիցի վշտանալ. և չիցէ կարօտ մեղմե-

լոյ զցաւս իւր, և խնդրելոյ զխորհուրդ։ Յայս սակս 'ի մահուչափ մեղաց անբասիր գտանին ծառայք, որք այդու մտօք պատմեն զանիրաւութիւնս զընկալեալս 'ի տեարց իւրեանց. որպէս և կանայք յարանց իւրեանց, ևն։

Որ պատմէ զյանցանս ինչ յայլմէ լուեալս՝ ոչ մեղանչէ գէթ մահուչափ մեղօք, եթէ ինքն ոչ հաստատեսցէ, և ոչ դիտեսցէ վնասել ումեք. կամ եթէ զուգընթաց լիցին այնպիսի պարագայք՝ որոց վասն ոչ է հաւատալի լսելեաց։ Համբաւել զմեռեալս, և 'ի յայտ ածել զգաղտնածածուկ մեղս նոցա ծանուցանս՝ է մեղք մահուչափ. զի որպէս կենդանիք՝ նոյնպէս և մեռեալք ունին իրաւունս բարեհամբաւութեան իւրեանց։

Որ թշնամանօք, կամ բամբասանօք վատահամբաւ առնէ զընկերն, պարտաւորի շինել զանուն նորին. միայն այսու զանազանութեամբ. զի եթէ սուտ իցէ զոր խօսեցաւ զնմանէ՝ պարտի յայտնապէս յետս կոչել երդմամբ իսկ։ Իսկ եթէ ճշմարիտ իցէ զոր ասացն՝ ոչ կարէ յետս նահանջել, այլ պարտի ասել. զոր ասացի ընդ պետրոսէ՝ յառաջ եկն առաւել 'ի կրիցս, և 'ի թեթեւադրութենէ դիւրին. ուր պետրոս է բարի քրիստոնեայ, այր առաքինի, և ազնուաբարոյ, ևն։ Ուստի մի լիցի ձեզ հաւատալ այնմ, զոր յանիրաւի խօսեալ է իմ զնմանէ։ Իսկ և ո՛ր վատահամբաւ առնէ զընկերն՝ պարտական լինի ամենայն վնասուց՝ որք հասին նմա 'ի թշնամանաց և 'ի բամբասանաց անտի։ Որպէս այսօրինակ եթէ պետրոսն չկարաց զռամբ ածել զիշխանութիւն՝ որում ակն ունէր, կամ զրկեցաւ 'ի թոշակաւորութենէն, զոր ժառանգէր 'ի պաշ-

Ճառս թշնամանաց և բամբասանաց տխտխոսի, պարտաւորի տխտխօսն հատուցման այս ո̃մ վը-նասուց ըստ յարգի նոցա՝ զոր ունին կամ յերեսս, և կամ ՚ի յետոյս:

Որ փաստահամբաւեաց զընկերն թշնամանօք կամ բամբասանօք, եթէ ՚ի վերայ եդեալ յանցանքն էր սուտ՝ մեղանչէ նախ՝ ծանր մեղօք վնասակար ստութեան: Երկրորդ՝ ընդդէմ արդարութեան, նսեմացուցանելով զհամբաւ ընկերին. և այս ճշմարտեալ գտանի նաև ՚ի վերայ նոցա, որ փաստահամբաւեաց զընկերն ՚ի վեր հանելով զստոյգ յանցանս նորա, բայց զգաղտնի: Երրորդ՝ ընդդէմ սիրոյ՝ վասն գայթակղութեան տուելոյ այնոցիկ՝ որք ունկնդիր եղեն բամբասողին. զի և նոքա նոյնպէս մեղան ընդդէմ արդարութեան՝ ունկն մատուցանելով բամբասողին. ապա եթէ նաև հաստատեցին, կամ գովեցին, կամ հարցփորձ արարին մտ ճշմարիտ կամ սուտ յանցանաց եդելոց ՚ի վերայ պետրոսին, պարտաւորին և ինքեանք հատուցումն առնել համբաւոյն և այլոց վնասուց նորա, յորժամ գլխաւոր բամբասողն ոչ հատուսցէ: Իսկ եթէ մերձակայք լսիցեն զբամբասանս լոկ հաճութբ, կամ չխափանիցեն զբամբասողն փոխելով զզրոյցս. կամ ցուցանելով զդժկամակութիւն ընդ լսելն. կամ մեկնելով ՚ի տեղւոջէն, մեղք նոցա համարին ընդդէմ սիրոյ և եթ. միայն թէ չիցեն պարտաւոր ՚ի պաշտամանէ իւրեանց. զորօրինակ՝ մեծաւորն, որ պարտական է խափանել զայնպիսի բանս. ապա թէ ոչ՝ յայնպիսում դիպուածի մեղանչէր ընդդէմ արդարութեան:

Եթէ թշնամանք, և եթէ բամբասանք ՚ի սեռէ իւրեանց են մեղք մահուչափ. զի են

ընդդէմ փոխարինական արդարութեան. որ է այնպիսի առաքինութիւն, որ պարտաւոր առնէ զմեզ ընդ [illegible]. այլ վասն թեթեւութեան նիւթոյն կարեն լինել մեղք ներելի. որ դիւրին եւս մարթի դիպիլ 'ի բամբասանս՝ քան 'ի թշնամանս. քանզի թշնամանքն լինելով յերեսս ընկերին՝ դուն ուրեք ընդունի զթեթեւութիւն նիւթոյ: Այլ աստանօր պարտ է յուշ ածել, թէ թշնամանք ինչ թէեւ թեթեւագոյն՝ ձգեալ առ մեծաւորն, կամ առ ծընօղս բանիւ անչէն՝ է մեղք մահուչափ. որ ո՛չն լինէր այսպէս՝ եթէ լինէր ձգեալ առ այլ ոք օտար: Այսպիսում դիպուածի վատահամբաւօղն մեղանչէ նաեւ ընդդէմ յարգութեան կամ բարեպաշտութեան ըստ հանգամանաց անձին:

Խոստովանահայրն որ գտանէ զապաշխարօղն մխեալ եւ պատատեալ 'ի կնճիռն ընչից այլոց, պարտի պարտաւորել զնա 'ի հատուցանել. զի չունի ինչ իշխանութիւն յայսմ մասին, ուր բնական օրէնքն աղաղակէ. * Մի՛ պահեր առ քեզ զօտարինս ||:

Պատճառք որք անբասիր առնեն 'ի հատուցանելոյ զհամբաւն՝ են այլ եւ այլ՝ նշանակեալք 'ի վարդապետաց. եւ գլխաւորքն այս են: Ա. Ինքնակամ ներումն՝ զոր շնորհէ զրպարտեալն այնպիսի վատահամբաւութեան՝ որ ո՛չն ծաւալիցի յայլս. քանզի իւրաքանչիւրոք տէր է համբաւոյ իւրոյ. վասն որոյ եւ կարէ ներել հատուցման համբաւոյն: Բ. Եթէ վնաս ինչ չիցէ ծագեալ 'ի բամբասանաց անտի. զորօրինակ՝ եթէ չեղեն հաւատալի բանք բամբասողին, իբր սովորեալ գոլով նորա 'ի բամբասել եւ 'ի ստել. կամ զի այլք գիտակ էին յանցանաց նորա, ևն.

գուցէ և ես վատթարագունից։ Գ. Լինի իրաւացի հատուցումն՝ երբ նա ինքն վատահամբաւեալ իցէ զբամբասիչն իւր։ Դ. Եթէ բանն ասացեալ ընդդէմ բարի համբաւոյն՝ արդեն 'ի մոռացօնս իցէ, ըստ որում դատեալ լինի խոհեմութե̃։ Ե. Եթէ համբաւն բարձեալ այլով ճանապարհաւ կարկատեալ իցէ. զորօրինակ՝ 'ի ձեռն վկայութե̃ց անձանց արժանահաւատից։ Զ. Եթէ գաղտնի յանցանքն յունկն ումանց և եթ յայտնեալ, այլով ճանապարհաւ հանդիսացեալ իցէ։ Է. Եթէ ոք բարեմտութե̃ կարծելով, թէ ճշմարիտ իցէ յանցանքն այլոյ, պատմեալ իցէ զայն, և հրատարակեալ, և վատահամբաւեալ զընկերն. և չիցէ կարող հատուցանել առանց իւրոյ անձինն վատանունութե̃, կամ մեծի վնասու ընչից։ Ը. Եթէ հատուցումն համբաւոյ չկարիցէ լինել առանց վըտանգի սեփհական կենաց. վս̃ զի ընդհանրապէս ոչ ոք պարտաւորի փոխան բարեաց ստորին կարգի՝ հատուցանել զբարիս վերնագոյն կարգի. որպէս է անշուշտ կեանքն։ Թ. Եթէ չիցէ մարթ հատուցանել համբաւոյ այլում՝ եթէ ոչ հանդերձ վնասու համբաւոյ իւրոյ, որոյ յարգ կարի մեծագոյն իցէ. զորօրինակ՝ առաջնորդն ոչ պարտաւորի հատուցանել համբաւոյ ուրումն յետնագունի. և ոչ անձն մեծազգի՝ ումեմն ռամկի, այլ շատ է գովել զնա յայնմ մասին առաքինութե̃՝ յորում նա եղև վատահամբաւ. կամ այլով ևս լաւագոյն եղանակաւ. որոյ պատճառն է. քանզի տրուպ և ռամիկ ոք ոչ կարէ իրաւամբ պահանջել, զի առաջնորդ ոք, կամ երևելի անձն կարի կարևոր հասարակապետութե̃ կորուսանիցէ ըզ-

պատկառելի համբաւ իւր, առ՚ի կանգնել զա-
նուն և զհամբաւ անարգի միոջ։ Ժ. Եթէ հա-
տուցումն համբաւոյն յանհնարութենէ փոխեալ
իցէ. վն զի առ անկարելին ոչ ոք պարտաւորի։

Ընդդէմ կրկին մոլութեանց են և կրկին նա-
խադասութիւնք դատապարտեալ յԻննովկեն-
տիոսէ ժա. այսինքն՝ իգ. և իդ. Առաջինն
այն է. * Ոչինչ այլ, բայց ներելի և եթէ՝
սուտ յանցանօք աւերել զանուն աւագի ուրուք
բամբասողի իւրոյ՝ զինքեան փաստակար ‖։ Իսկ
երկրորդն այն. * Հաւանական է, թէ ոչ մե-
ղանչէ մահուչափ, որ արկանէ զսուտ յանցանս
՚ի վերայ այլոց, առ՚ի պահել զիրաւունս և
զպատիւ անձին իւրոյ. և եթէ չիցէ այս հա-
ւանական, դոյն ուրեք գտցի յանծաքանութեն
հաւանական կարծիք ‖։

Պատճառ դատապարտութեն այս ինչ է. վն
զի ստելն ՚ի նիւթ ծանր՝ է մեղք մահուչափ.
իսկ դնել ՚ի վերայ բամբասողին կամ անիրաւ
վկային զյանցանս ինչ սուտս՝ է ստել ՚ի նիւթ
ծանր, ապա է մեղք մահուչափ։ Մեծագոյնս
է ստոյգ. վն զի որպէս ստութիւն ՚ի նիւթ թե-
թև՝ է յանցանք թեթև, ՚ի սակս թեթևութեն
պատճառեալ փաստուն. սոյնպէս ստութիւն ՚ի
նիւթ ծանր՝ լինի ծանր յանցանք վն ծանրութեն
փաստուն՝ որ առթեցաւ ընկերին։ Նմին իրի
որպէս չէ երբէք օրէն ստել ես և ՚ի զուգնա-
քեայս. և ոչ իսկ ՚ի պաշտպանել զսեփական
կեանս, ըստ ուսուցանելոյ Իննովկենտիոսի Գ.
՚ի Գլ. Ներբաթոյն. ՅՂ. Հաշխեց. յասելն. * Իսկ ոչ
վն պահելոյ զկեանս անգամ օրէն է ստել ‖.
քանի՞ ևս չէ՛ օրէն յոր և իցէ դիպուած ստել
ծանրապէս. ուստի ոչ լինի լոկ ներելի առ՚ի

պահել զանձին պատիւ 'ի վերայ դնել բամբասողին յանցանս սուտս ։

Այս միւս ևս այլ նախադասութիւն է. դատապարտեալ յԻննովկենտիոսէ ԺԱ. 2. Մարտի. 1679. 'ի կարգի զրպարտողական բամբասանաց. այն է՝ թէ. * Օրէնն է պատուաւոր առն սպանանել զսուտն՝ որ հնարի զրպարտել զինքըն, եթէ չիցէ հնար այլազգաբար զերծանիլ 'ի վատահամբաւութենէ անտի ‖ ։

Զարամաղթութիւն կամ անէծքն, որ երբեմն է 'ի կարգի նախաթուեալ մոլութեանց, դիմամարտ փոխարինական արդարութեան 'ի կարգի բարեաց համբաւոյ՝ հաստատեալ է յայն, յորժամ բանիւ ցանկամք կամ մաղթեմք չարիս վասն ընկերին ։ Սա է կրկին՝ տեսական և նիւթական ։ Տեսական անէծքն է՝ յորժամ խորհրդածեալ կամօք, և մտադրութեամբ, և ըղձմամբ վնասու ընկերին՝ անիծաբանեմք. որ է միշտ մեղք մահուչափ ընդդէմ փոխարինական արդարութեան՝ եթէ ոչ թեթևութիւն նիւթոյ անբասիր կացուսցէ. և բազմապատկի մեղքն ըստ թուոյ անձանցն՝ զորս անիծանեմք ։ Սա ևս մեղք գործի ընդդէմ սիրոյ՝ վասն գայթակղութեան մերձակայից. և այս ևս նոյնպէս բազմապատկի ըստ թուոյ գայթակղելոց ։ Իսկ նիւթականն է՝ յորժամ ոք առանց ինչ չար դիտաւորութեան, կամ ըղձից՝ անէծս արձակէ ընկերին. և սա է մեղք ներելի, թէ և երբէք անէծքն իցէ 'ի նիւթ ծանր. միայն թէ չունիցի ոք կամս՝ զի պատահեսցին այն չարիք. և անէծքն չձգիցին առ մեծաւոր կամ առ ծնօղս. զորս անիծանօղն թէ և անիծցէ լոկ 'ի բարկութենէ և առանց ինչ չար կամաց, բայց ուշ 'ի վերայ

ունելով, նիւթականն այն անէծք բանի– անչին, լինի մեզ մահուչափ ընդդէմ բարեպաշտութեան և պատկառանաց: Լինի և մեզ մահուչափ ընդդէմ սիրոյ, եթէ զուցէ գայթակղութիւն մերձակայից, և այն բազմապատկեալ ըստ թուոյ գայթակղելոյն:

Յանդուգն դատողութիւն, որ է յետինն 'ի նախայիշատակեալ մոլութեանց՝ որք բառնան առ 'ի մէնջ զսէրն քաջ համբաւոյ, հաստատեալ է 'ի հաստատուն իմն հակամիտութեան մտաց մերոց. որով համարիմք ստուգիւ ունել ընկերին ծանր յանցանս ինչ առանց ինչ հիման, կամ թեթև հիմամբ: Եւ զի իրաւունս ունի ընկերն, զի մեք ունիցիմք զնմանէ բարի կարծիս՝ և ոչ չար, ցորչափ յանցանքն չիցէ հրատարակեալ, կամ հիմնեալ 'ի ծանր և 'ի բանաւոր պատճառս, սմին իրի ձախողակի դատելով մեր ըզնմանէ առ թեթև և անհիմն կարծեաց զըրկեմք զնա յիրաւանց իւրոց, զոր ունի առ բարի համբաւ. ուստի մահուչափ մեղանչեմք՝ եթէ դատողութիւնդ այդ իցէ 'ի նիւթ ծանր: Այլ զի ծանունս անիրաւիմք ընդդէմ ընկերին. ապա եթէ իցէ 'ի նիւթ թեթև՝ մեղանչեմք ներելի մեղօք:

Արդ՝ երրեակ պայմանք խնդրին առ 'ի լինել յանդուգն դատողութեան մեղք մահուչափ: Նախ՝ եթէ դատեսցուք հաւաստեաւ, և հաստատութեամբ դիցուք 'ի մտի, թէ չար է արարն ընկերին: Երկրորդ՝ զի իցէ 'ի նիւթ ծանր: Երրորդ՝ եթէ արասցուք զայդ՝ առանց ինչ բանաւոր հիման: Այլ որոյ՝ որ ոք կասկածի և եթ զընկերէն զչար ինչ, թէ և իցէ 'ի նիւթ ծանր՝ ոչ մեղանչէ մահուչափ. միայն թէ զայն կաս-

կած իւր մի՛ հաղորդեսցէ այլում. կամ մի՛ անկ-
ցի 'ի վերայ երեւելի անձին, եւ 'ի նիւթ ծանր.
վ՟ո որոյ եթէ ոք խիթասցի զսրբակրօն եւ ըզ-
բարեհռչակ քահանայէ ունել զծանր ինչ յան-
ցանս, ծանունս մեղանչէ վ՟ո ծանր անարգա-
նաց զոր առնէ նմա 'ի սին սուտ կասկածա-
նաց յայնպիսի նիւթ 'ի վերայ անձին այնպի-
սոյ: Նմին իրի Աղէքսանդր Է. դատապարտեաց
զնախադասութի՟ն ԽԷ. * Ժողովրդականն կա-
րօղ է կասկածիլ զմուրացիկ կրօնաւորաց, թէ
'ի գնելն զկարի թեթեւ եւ զանհամեմատ ա-
պաշխարանս 'ի վերայ խոստովանորդւոց, զայդ
առնեն առ շահասիրութե՟ կամ առ ստանալոյ
ինչ նպաստ 'ի ժամանակաւոր պէտս իւրեանց ‖:
Ուր յետին անիրաւութի՟ է խիթալ զմուրացիկ
կրօնաւորաց. թէ նոքա 'ի շնորհս ողորմութե՟
զոր ընդունին 'ի հաւատացելոց, կամիցին պա-
կասիլ յայսպիսի իրս ծանունս, եւ դնել զան-
բաւական ապաշխարանս: Որպէս եւ որ դատի-
ցէ զընկերն լոկ 'ի նիւթ թեթեւ՝ մեղանչէ լոկ
ներելի մեղօք, զի վերագոյնդ ասացելոցս՝ վ՟ո
թեթեւութե՟ անիրաւութեա՟ն եղելոյ ընկերին:
Իսկ որ դատիցէ զընկերն 'ի նիւթ ծանր
հանդերձ հաստատուն հիմամբ, թէպէտեւ դա-
տողութի՟ նորա իցէ սուտ՝ ո՛չ մեղանչէ մահու-
չափ. զորօրինակ՝ եթէ տեսեալ տիտոսի ըզ-
ցոփակեաց պատանի զոք մտանել 'ի տուն պոռն-
կի, դատիցէ զնա՝ թէ գնայ 'ի մեղանչել. թէ-
պէտեւ չիցէ այնպէս, դատողութի՟ նորա չէ՛
յանդուգն, եւ ո՛չ մեղանչէ մահուչափ:
Արժան է 'ի միտ առնուլ եւ ես, զի նա՝ որ
դատէ յանդուգն դատողութբ՟, եթէ զդատաս-
տան իւր հաղորդեսցէ այլում, յայնժամ լինի

բամբասանք. և պարտաւորի հատուցանել համ-բաւոյ նր̄՝ ը̄ նախագրելոցս. զայն զայս ասելի է և չկասկածանաց եղելոց 'ի նիւթ ծանր, եթէ այլոյ հաղորդեսցի: Իսկ յոջն հաղորդել՝ պարտաւորի և եթ զայնպիսի դատաստան 'ի բաց մերժել յանձնէ. և դառնալ ունել զըն-կերն 'ի բարի համարի՝ որպէս յառաջն. ապա թէ ոչ՝ կայ մնայ 'ի մահուչափ մեղս:

---

### Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ փոխարինական արդա-րութեան 'ի նիւթ ժամանակաւոր բարեաց, այսինքն՝ ընչից:

Ժամ է արդ ճառել զմեղաց՝ որք բառնան 'ի մերձաւորէն զբարիս եր̄դ կարգի. այն են ժամանակաւոր գոյք, այսինքն՝ ինչք: Յայսմ մասին ճանաչին կրկին մոլութիւք ընդ յանձնա-ռութե̄. որ այն իսկ են գողութի̄, և յափշտա-կութի̄: Իսկ ընդ զանցառութե̄, ունիմք քննել զա̄մ դիպուածս՝ յորս պարտաւորիմք 'ի հա-տուցումն:

Եւ արդ՝ գողութիւն է՝ յորժամ ոք գաղտ բառնայ զինչս ընկերին ընդդէմ կամաց նորա: Իսկ յափշտակութիւն է՝ յորժամ ոք յանիրաւի և բռնի բառնայ զինչս 'ի ներկայութե̄ տն̄. վ̄ որոյ և տեսակաւ տարբերի 'ի գողութե̄. վ̄ զի սովիմբ լինի անիրաւիլ ոչ միայն ընդ-դէմ ընչից տն̄ որպէս 'ի գողութե̄, այլև ընդ-դէմ անձին՝ բուռն առնելով նմա 'ի կորզել զինչս նորա:

Գողութե̄ և յափշտակութե̄ բազում են ըս-

տորին տեսակք յայտնելիք 'ի խոստովանութեան ։ 'Ի կարգի գողութեան յանցաւոր է նախ՝ որ բառնայ զինչս օտարին ։ Երկ՟դ՝ որ ոչ գիտութեամբ գնէ զգողօնին ։ Եր՟դ՝ որ առ իւր պահէ զինչս ուրուք գտեալս ըստ դիպուածոյ, զոր չէ օրէն նմա պահել. այլ՝ կամ դարձուցանել առ տէր իւր, և կամ տալ յողորմութիւն. Թէպէտև են ոմանք՝ որք ասեն թէ բուն գտօղն կարէ պահել օրինաւորապէս ։ Չր՟դ՝ որ դաւէ կամ նենգէ 'ի գնելն կամ 'ի վաճառելն ։ Հինգեր՟դ՝ որ վաճառէ զվատթար և զփուտ վաճառս (իբրև զլաւ ։) Վեցեր՟դ՝ որ 'ի կիր արկանէ զկշիռս կամ զչափս նենգաւորս 'ի վաճառելն, և 'ի գնելն ։ Եօթներ՟դ՝ որ պահանջէ իւր 'ի վարձս առաւել քան զարժանն ։ Ութեր՟դ՝ ծառայն որ ոչ պահէ զինչս տեառն որպէս պարտն է ։ Իններ՟դ՝ որ կեղծէ զանձն չքաւոր լինել, և ողորմութիւն առնու անկարօտ գոլով ։ Տասներ՟դ՝ նոքա՝ որք տուրս ընդունին 'ի վարձս պաշտաման իրիք, և պակասին առնել զպաշտօնն ։

Ստորին ազգք յափշտակութեան են, Նախ՝ որ ոչ վճարէ գործավարաց զվարձս պարտաւորեալս ։ Երկ՟դ՝ որք տան դրամս 'ի վաշխու ։ Եր՟դ՝ դատաւորք՝ որք կաշառօք ընծայից կամ դրամոց տան զվճիռ ։ Չր՟դ՝ որք խարդախեն ընդդէմ պարտատեարց ժխտելով զպարտս իւրեանց ։ Հինգեր՟դ՝ որք ոչ հատուցանեն ըստ ժամանակին զվաճառս յապառիկ առեալս ։ Վեցեր՟դ՝ նոքա որք թաքուցանեն զպարէնս յանձկութեան ժամանակի՝ առ 'ի վաճառել ծանրագնոյ ։

Միօրինակ պարտաւոր գտանին 'ի հատուցումն՝ եթէ գողն, և եթէ յափշտակօղն. այլ

յափշտակօղն պարտական է առնել և զգործ ինչ խոնարհական առ յափշտակեալն վ̅ս անիրաւելոյ ընդդէմ անձին նորա ։

Եթէ գողութ̅ին, և եթէ յափշտակութ̅ին 'ի սեռի իւրեանց են մեղք մահուչափ. բայց մարթին լինել ներելի վ̅ս թեթևութ̅ե նիւթոյն, զոր պարտ է կշռել ըստ վիճակի զրկելոյն. վ̅ս զի գողանալ յաղքատէ ումեմնէ ինչ մի թեթև՝ մարթի լինել մեղք ծանր՝ ը̅ս վնասուն եղելոյ նմա. որպէս ընդ հակառակն գողանալ 'ի մեծատանէ ինչ մի ծանր, մարթի լինել միայն մեղք ներելի ։ Ընդհանրապէս գողանալ դահեկանս երիս կամ չորս յումմէ և իցէ, լինի մեղք մահուչափ ։ Բայց գողութ̅ին զուակաց կամ ընտանեաց, զառաւելն պահանջէ առ'ի լինել մեղք մահուչափ, հայեցեալ 'ի հարստութ̅ի տանուտ̅ն. 'ի սէրն որ առ որդիս և առ ընտանիս. և 'ի նիւթն գողացեալ. քանզի յորժամ բանն իցէ զուտելեաց և զըմպելեաց, առաւել դիւրաւ լինի ընդարձակել. այլ ո՛չ նոյնպէս 'ի դրամս և 'ի զգեստս, ևն ։ 'Ի վախճանի պարտ է հայիլ և 'ի վախճանն յոր վ̅ս գողութ̅ին գործեցաւ 'ի նոցանէ. վ̅ս զի եթէ իցէ վ̅ս համեստ և բանաւոր վախճանի, դիւրագոյն ևս լինի կարծել, թէ հայրն կամ տանուտ̅րն ո՛չ բանաւորապէս դիմադարձ գտանի. այլ ո՛չ այնպէս՝ եթէ իցէ վ̅ս անհամեստ և չար վախճանի ։

'Ի յետին հարկաւորութ̅ե օրէն է գողանալ, և յայնժամ ո՛չ լինի գողութ̅ի. քանզի յայնպիսումն հարկաւորութ̅ե ա̅մ ինչ հասարակաց է ։ Այլ չէ օրէն գործել զյափշտակութ̅ի, և բռնի բառնալ զինչս՝ որ կարևոր իցէ այլում. վ̅ս զի ան-

մարթ է բռնութիւն առնել ումեք անձին, բայց միայն 'ի ձեռն օրինական ատենի։

Պարտական է ամ՟ ոք 'ի խոստովանութեան յայտնել զորոշ գումար գողութեան. յոր սակս չէ բաւական ասելն, գողացայ ինչ մի ծանր. վ՟ զի այդ բազմօք կարէ այլայլել զդատումն խոստովանահօր, թէ 'ի դնել զապաշխարանս, և թէ 'ի տալ կամ 'ի ժխտել զարձակումն. վ՟ զի ոչ կարէ արձակել զնա՝ որոյ զմեծ գումար գողացեալ իցէ. և կարօղ գոլով վճարել՝ ոչ վճարէ. և ոչ իսկ գէթ սկիզբն առնէ վճարելոյ։ Օրօրինակ՝ որ գողացաւ դահեկանս 700. չէ պարտ արձակել զնա, եթէ կարօղ գոլով հատուցանել՝ նախ ոչ հատուցանէ, կամ զբոլորն՝ և կամ զմեծ մասն։ Այլ ոչ այսպէս՝ որոյ գողացեալ իցէ զդահեկան մի, կամ ինչ մի աւելի. զի զսա մարթ է արձակել նախ քան զհատուցանելն. միայն թէ խոստասցի անյապաղ հատուցանել. ապա եթէ և յայլում նուագի իցէ խոստացեալ հատուցանել, և կարելով հատուցանել՝ չիցէ հատուցեալ, անարժան է արձակման։

Նաև դարձեալ՝ որ գողացաւն զմեծ քանակ՝ պարտական է ասել. որդեօք զայն ամ՟ 'ի միում և եթ նուագի միով ներգործութե՟ իցէ՞ արարեալ, թէ բազում անգամ. վ՟ զի գողանալով յամ՟ նուագի զմեծ քանակութիւն՝ յիւրաքանչիւր նուագի լինի գործեալ զմահուչափ մեղս. իսկ որ գողացեալ իցէ բազում անգամ զ.քանակ փոքր, պարտ է հարցանել. որդեօք 'ի սկզբան անդ գողանալոյ իւրոյ զփոքր քանակութիւն, ունէ՞ր կամս հետզհետէ անընդհատ հանապազորդելոյ 'ի նոյն։ Վ՟ զի յայդ դիպուած առաջին

գողութիւնք գործեաց զմահուչափ մեղս. ոչ բանի՝ նիւթոյն՝ որ ենթադրի լինել փոքր, այլ բանի՝ դիտաւորութեանն՝ զոր ունէր շարունակելոյ զգողութիւն: Իսկ որ սկիզբն արար գողութեան փոքր քանակութեամբ առանց դիտելոյ հանապազորդել 'ի նոյն. և սակայն յառաջ խաղաց, յայնժամ մեղանչէ մահուչափ մեղօք՝ երբ փոքր քանակութիւնք ժամանեն 'ի մեծ քանակ. ապա յայնմ հետէ զհետ լինելով փոքր փոքր անգամ գողութեան՝ յամենայն նուագի գործէ զմահուչափ մեղս. ոչ վասն բանի սակաւութեան նիւթոյն զոր գողանայ, այլ վասն բանի մեծագոյն քանակութեան՝ զոր գումարէ յընչից օտարին. որ թէպէտ իցէ յիւրաքանչիւր նուագի փոքր քանակութիւնք, բայց հանապազ աճէ ևս քան զևս 'ի մեծ և յերևելի չափս ընկերին:

Որ միանգամ իւրով չար օրինակաւ պատճառ եղև գողութեան այլոց՝ մեղանչէ միայն ընդդէմ սիրոյ՝ մեղօք գայթակղութեան. և ոչ պարտաւորի 'ի հատուցումն: Այլ որ ընդ իմիք պատճառ եղև գողանալոյ այլոց՝ մեղանչէ ընդդէմ արդարութեան, և պարտաւորի վճարել ամբողջ. Իսկ նոքա որք միաբան համախոհութեամբ չոգան 'ի գողանալ՝ ամենեքին և իւրաքանչիւրոք 'ի նոցանէ պարտաւորին 'ի վճարել ամբողջ. այլ ոչ այսպէս, յորժամ ոք գնացեալ իցէ ինքնին և առանց սադրելոյ այլոց. զի սա պարտաւորի հատուցանել միայն՝ զոր գողացաւն: Այսպէս նա՝ որ մասնակից լինի գողօնին, եթէ չիցէ եղեալ կցորդ գողութեան՝ պարտաւորի հատուցանել զայն միայն՝ որում մասնակից գտաւ: Իսկ եթէ իցէ կցորդ՝ պարտաւորի վճարել ըստ բոլորին: Ապա եթէ 'ի մասնակիցն լինել գողօ-

նին անգէտ էր լինել գողօնի. և ծախեալ իցէ բարեմտութեամբ, պարտաւորի հատուցանել զայն միայն՝ զոր անխայեաց յընչից իւրոց: Օրինակի աղագաւ. Տիտիոս հրաւիրեցաւ 'ի մեծածախս սեղան յարդարեալ բոլորովին գողօնի ընչիւք. եթէ գործակից իցէ տիտիոս 'ի գողութեան՝ պարտաւորի հատուցանել դրամով չափ ըստ բոլորին՝ որ ծախեցաւ 'ի հանդերձանս սեղանոյն. ապա եթէ չիցէ լեալ գործակից, բայց գիտաց զի այն հանդերձանք են գողօնի ընչիւք, յայնժամ պարտաւորի հատուցանել միայն զգինն ըստ չափուն՝ զոր ինքն եկեր: Ապա եթէ առանց գիտելոյ ինչ մի՝ եկեր բարեմտութեամբ. յետ գիտելոյն՝ թէ այն ամ էր գողօնի ընչիւք՝ պարտաւորի հատուցանել զայն՝ որով հարստացաւն. վասն որոյ եդեալ թէ կերեալ իցէ տիտիոս 'ի սեղանի անդ ըստ գնոյ հնգից դահեկանաց. այլ 'ի տան իւրում յայն օր 'ի պէտս ուտելեաց ունէր ծախել ժ չափու միոյ դահեկանի, պարտական է վճարել միայն զայն դահեկան. վասն զի այնու հարստացաւ՝ որով անխայեաց ընչից իւրոց:

Յայս նիւթ են կրկին նախադասութիւնք դատապարտեալ յԻննովկենտիոսէ ժա. այսինքն՝ նախադ". լզ. և լէ: Առաջինն այն. թէ * Թոյլ տուեալ է գողանալ ոչ միայն 'ի վերջին, այլ և 'ի ծանր հարկաւորութեան ‖: Իսկ երկրորդն, թէ * Ծառայք և աղախնայք տանն կարող են գաղտ 'ի տերանց իւրեանց բառնալ ինչ ինչ՝ առ 'ի լրումն փոխարինաց ծառայութեան իւրեանց, զոր համարին առաւելուլ քան զընկալեալ վարձն տարեկան ‖:

Դատապարտի առաջին նախադասութիւն.

վ՟ն զի տեսական գողութ՟ին, որ է ճարչումն օտա-
րէն իրաց ընդդէմ կամաց տ՟ն, 'ի ներքուստ 'ի բնու-
թ՟է իւրմէ է չար. որոյ վ՟ն ոչ երբէք մարթի
օրինաւոր լինել որ և է պատճառանօք. բայց
'ի վերջին հարկաւորութ՟ե՝ ոչ ևս գոյ տեսա-
կան գողութ՟ի՝ այլ նիւթական: Ս՟ն Թովմաս.
Բ. Բ. խն. կզ. յօդ. 7: Քանզի 'ի վերջին հար-
կաւորութ՟ե ա՟մ ինչ հասարակաց է. վասն որոյ ոչ
ճշմարտի յայնժամ, թէ բառնայ զինչս այլոց,
այլ մանաւանդ զիւրն: Յոյր սակս ոչ լինի գո-
ղութ՟ի. և ոչ տէրն կարէ բանաւորապէս դիմակաց
գտանիլ. քանզի յայդ դիպուած ոչ բառնին 'ի
նմանէ ինչք սեպհական: Բայց չէ՛ք այդմ տե-
ղի յայլ կարօտութ՟իս՝ եթէ ծանունս, և եթէ
կարի ծանրագոյնս. զի յայնժամ թէպէտև որ
ունի՛ պարտաւորի՛ առնել զողորմութ՟ի, ըստ
որում ասացաւ 'ի վեր անդր, ևս և յո՛չն առե-
ընդդոց իւրումն վիճակի և հանգամանաց, բայց
ոչ վասն այսորիկ՝ այն որ գտանի 'ի նոյնպիսի
ծանր կարօտութ՟ե կարօղ է բառնալ զինչս հա-
կառակ կամաց տ՟ն. քանզի յայդ դիպուած
ինչք չեն հասարակաց. վ՟յ գողունի գործի:

Դատապարտեցաւ և երկ՟դ նախադասութ՟ին.
քանզի չէ՛ արժան երբէք զրկել զտէրն յընչից
իւրոց՝ առանձնական դատաստանաւ ծառային,
որ համարի զվարձս իւր սակաւ լինել առ ար-
դեամբք ծառայութ՟են: Ս՟ն զի ծառայն կամ
սակ արկեալ է ը՟ տ՟ն՝ կամ ոչ. եթէ սակ ար-
կեալ է՝ անչէն մեղ դնէ. եթէ նուազ դատի ըզ-
վարձս քան զծառայութ՟ի իւր: Իսկ եթէ չիցէ
սակ արկեալ, կարող է թախանձել զտէրն ա-
ճեցուցանել զթոշակ իւր. և յոչ յաջողելն՝ 'ի
բաց գնալ առ 'ի նմանէ. այլ ոչ երբէք օրէն է

նմա իւրով սեպհական իշխանութ͞ե տնտեսել զգաղտնի փոխարինութ͞ի ։ Բայց սակայն եթէ անվճար մնացել, և անմարթ իցէ այլով իւիք քաղել զարդիւնս իւր. որ է դիպուած զանազանեալ յոյժ 'ի դատապարտեալ նախադասութ͞էն, յայնժամ կարող է 'ի կիր առնուլ ըզգաղտնի փոխարինութ͞ին. միայն թէ գտանիցին այս պայմանք ։ ա. Ոչ մի լիցի վտանգ կրկին վճար ընդունելոյ 'ի պարտապանէն ։ բ. Ոչ պարտքն իցէ յստակ, մինչ զի չկարիցէ ծագել ինչ տարակոյս զայնմանէ ։ գ. Ոչ չկայցէ ինչ վտանգ, մի արդեօք գաղտնի փոխարինութ͞ին՝ համարեալ լիցի այլում իբր գողութ͞ի ։ դ. Եթէ 'ի ձեռն դատաւորի անմարթ իցէ ծառային դիւրաւ 'ի ձեռս բերել զիրաւունս իւր ։ Այլ գիտել պարտ է. զի 'ի գործադրութ͞ե ոչ երբէք կարեն ճշմարտիլ ա͞մ պայմանքդ միանգամայն. յոր սակս 'ի գործադրութ͞ե գրեթէ չէ հնար երբէք օրինաւոր լինել գաղտնի հնարից փոխանցելոյ յինքն զիրաւունս իւր ։

Բաց 'ի նախագրեալ երկոցունց նախադասութ͞եց՝ են և այլ երրեակ նախադասութ͞իք. յ՝ ը. թ. և ժ. դատապարտեալք յԱղէքս". է. յորս մեկնաբանեին ինչ ինչ ներգործութ͞իք ը͞դէմ փոխարինական արդարութ͞ե՝ գողութ͞ի կոչելիք ։ Առաջինն այն է, թէ * Քահանայն կարող է կրկին թոշակ առնուլ օրինաւորապէս վ͞ն մի և նոյն պատարագի. մերձեցուցանելով խնդրողին զևս մասնաւորագոյն մասն պտղոյն՝ զպատշաճեալն նմին իսկ ժամարարի. և այն յետ վճռոյ իսկ ուրբանոսի ը ։ Երկրորդն՝ այն է, թէ * Յետ վճռոյ ուրբանոսի ը. կարող է քահա-

նայն, որում յանձնեալ են պատարագիք՝ վճարել զպարտս իւր 'ի ձեռն այլոյ՝ տալով նմա զփոքրագոյն Թօշակ, և ինքեան պահելով զայլ մասն Թօշակին ‖ ։ Երրորդն՝ այն է, Թէ * Ո՛չ է ընդդէմ արդարութեան առնուլ պատարագիս վասն բազում պատարագաց, և զմի և եթ պատարագ մատուցանել ։ Այլ ոչ իսկ է ընդդէմ հաւատարմութեան, Թէ և խոստացայց երդմամբ հանդերձ տուողին զպատարագիս, Թէ ոչ մատուցանեմ վասն այլոյ երբէք ‖ ։

Առաջինն դատապարտեցաւ. վասն զի հաւաստի պարտուց՝ զոր պարտի ոք արդարութեամբ՝ անմարթ է վճար առնել անստոյգ և երկբայական հատուցմամբ. վասն զի չիք հաւասարութիւն 'ի մէջ ներգործական և ստոյգ իրաւանց, և 'ի մէջ կրաւորական և անստոյգ իրաւանց 'ի նիւթ արդարութեան ։ Նմին իրի եթէ քահանայ ոք ընդունիցի զկրկին Թօշակս վասն երկուց պատարագաց, ոչ կարէ միով և եթ պատարագաւ վըճար առնել երկոցունց միանգամայն. մերձեցուցանելով վասն միոյն զմիջին պտուղն, և վասն երկրորդին զմասնաւորագոյն պտուղն. քանզի երկրորդիւդ այդուիկ ոչ լինի վճարել, եթէ ոչ՝ անստոյգ և երկբայական վճարմամբ՝ առ ստոյգ պարտաւորութիւն դաշնաւորեալ. ուստի երկրորդ Թօշակն գողութիւն համարեալ է ։ Պապ Ուրբանոս Ը. 'ի սահմանադրութեան անդ իւրում. յղ. պատարագելոյ. յօդ. Յետ այսորիկ, բացածանոյց, Թէ որ ընկալաւ զբազում Թօշակս, Թէպէտև անյարմարս վասն բազում պատարագաց, մի լիցի կարող միով և եթ պատարագաւ հատուցանել. այլ պարտական լիցի մատուցանել զպատարագս ըստ Թուոյ Թօշակացն

առելոց. ապա թէ ոչ՝ չառնէ վճար պարտաւո-րութեան իւրում, և միայ պարտապան հատուց-ման: Ի դէպ այսմ առ չորրորդ տարակոյսն առաջարկեալ 'ի սահմանադրութեան անդ, ուր խնդրի. * Որդեօք քահանայք՝ որք պարտա-ւորին պատարագս մատուցանել բանիւ թոշա-կաւորութեան, մատեան, հասութից, ևն, կա-րող իցեն առնուլ և զ'ի ձեռանէ ողորմութի վն ուխտական պատարագաց կամ վն ննջեցե-լոց. և միով և եթ պատարագաւ վճարումն առ-նել կրկին պարտաւորութեանց ||. տուաւ պա-տասխանի. * Ոչ է մարթ միով պատարագաւ վճարումն առնել երկաքանչիւր պարտաւորու-թեանց ||, ևն:

Երկրորդ նախադասութիւն դատապարտե-ցաւ 'ի ձեռն յայտնի բացորոշութեան ընդ հա-կառակն եղելոյ յուրբանոսէ Ը. 'ի նմին սահ-մանադրութեան. յօդ. 5. անդ այսպէս. * Նմանա-պէս զնմ դատապարտելի շահասիրութի տա-րագրել կամեցեալ յեկեղեցւոյ՝ արգելու քա-հանային, որոյ յանձն առեալ իցէ մատուցա-նել զպատարագ որոշեալ ողորմութեամբ իւիք. զի մի յանձնեսցէ զայն պատարագ այլում, զմասն այնր ողորմութեան անձին իւրում պահելով ||. Նա որոյ պարտ է գիտել. զի արդի քահանայա-պետն Բենեդիկտոս ԺԴ. 'ի սահմանադրութեան անդ, որ սկսանի. Որանէ ծոյր խնամոյ, հանդի-սացեալ 'ի 30. յունիսի. 1741. կշտամբէ զաշ-խարհականս՝ որք տուրևառս իմն վաճառաց առ-նեն 'ի վերայ պատարագաց. իբր զի ջանան գտանել պատարագուցս առ'ի տալ մատուցա-նել պատարագս. և ապա փոքրագոյն թոշա-կաւ քան զոր յայն սակս ընկալան՝ տալ պատա-

րագել, խորհելով զմտան ինչ 'ի Թոշակաց անտի վասն ինքեանց. մինչև նզովս իսկ տուեալ վճռոյ 'ի վերայ ածէ, պահելով զարձակութիւն Նորին՝ սրբութեան իւրում։ Որպէս և քահանայից որք ձեռն արկանեն յայնպիսի տուրևառս՝ դնէ զկախումն յաթոռոյ՝ նոյնպէս ինքեան պահեալ։ Իսկ ևս յայտ առնէ, թէ նախասացեալ քդ. գործեն զմեղս գողութեան, և պարտաւորին 'ի հատուցանել։

Իսկ յառաջ բերի անկարութիւն հատուցանելոյ, թէպէտև խոստովանահայրն պարտի հաւատալ խոստովանորդւոյն 'ի կողմն նորա և հակառակ նմա. բայց գիտակ լիցի և այնմ, զի բազում անգամ յառաջ բերին սուտ պատճառանք, 'ի պատճառել զպատճառս մեղաց. ուստի և քաջ միտ դիցէ. թէ իւ, և որպէս հայթայթեն զպէտս իւրեանց։

Դատապարտեցաւ և երդ. նախադասութիւնն. զի որովհետև ուրբանոս Ը. 'ի նախագրեալ սահմանադրութեան յայտնի արար. թէ որ ընդունի զբազում թոշակս վասն բազում պատարագաց, և մատուցանէ զմի միայն՝ մեղանչէ մեծապէս, և պարտաւոր հատուցանել. որպէս 'ի յօդ. Յետ այսորիկ, 'ի նմին սահմանադրութեան. զհետ գայ հարկաւ թէ մեղանչէ ընդդէմ արդարութեան. վասն որոյ և ոչ լինի ասել, թէ ընդունիլ զբազում թոշակս վասն բազում պատարագաց, և մատուցանել զմի և եթ պատարագ՝ չիցէ ընդդէմ արդարութեան, որպէս ասի 'ի դատապարտեալ նախադասութեանն։

Ստութիւն երկրորդի մասին ևս նախադասութեան յայտնի է. քանզի խոստումն եղեալ կամակար երդմամբ, և յանձն առեալ վասն օրհնաւոր ինչ

իրաց՝ պարտաւորէ 'ի խղճէ մտաց, ոչ այնչափ քանի հաւատարմութե վն խոստմանն, որչափ քանի երդմանն: Ա՟ այսորիկ խոստումն հանդերձ երդմամբ տուեալ այնմ՝ որ զողորմութիւն ետ չմատուցանել զպատարագն վն այլոյ՝ այլ յաւէտ վն նորա, պարտաւոր առնէ զքահանայն ընդ մահուչափ մեղօք, և է պատժով երդմնազանցութե. զի մատուսցէ զպատարագն վասն նորա միայն՝ յորս սակս տուեալ եղև ողորմութիւնն: Վասն սոցին այսչափ ինչ ասել հերիքասցի:

---

### Յաղագս այլոց մեղաց ընդդէմ փոխարինական արդարութեան՝ 'ի նիւթի պարտաւորութեան հատուցման:

Ընդդէմ փոխարինական արդարութե՝ լինի մեղանչել և զանցառութբ. զորօրինակ՝ յորժամ պարտական է ոք վճարել և ոչ վճարէ:

Յերից գլխոց կմ յարմատոյ յառաջագայի պարտաւորութի հատուցման: ա. Յիրէ առեցելոյ: բ. Յանիրաւ առմանէ, կմ 'ի վնասարարութե: գ. 'Ի դաշնադրութե: Յիրէ առեցելոյ՝ պարտաւորեալ է ստացողն բարեմտութբ. որ՝ յորժամ ընկալեալ իցէ իբրև 'ի պարգև. կմ գնեալ իցէ զինչս գողունիս. երբ 'ի վերայ հասանէ թէ գողունի իցէ այն՝ պարտաւորի հատուցանել տն հանդերձ այնու՝ որով հարստացաւ. որ՝ զոր ոչն ծախեաց յիւրմէ, որպէս ունէր ծախել. զորօրինակ՝ տուաւ ինձ 'ի պարգև երիվար, կմ թէ գնեցի զայն. ապա 'ի գի-

տեղ իմում թէ այն էր գողունի՝ պարտական գտանիմ հատուցանել զերիվարն. և զայն հանդերձ յաւելուածով՝ որով հարստացայ 'ի ձեռն երիվարին: Վ̃ն որոյ եթէ նովաւ փոխադրեցի զարմտիս, զոր ունէի փոխադրել 'ի ձեռն սայլից և այլոց ծախուց, լինիմ պարտական վճարել զայն միայն՝ զոր յիմոց անտի ունէի ծախել վ̃ն փոխադրութե̃ն: Այլ ոչ այսպէս՝ եթէ հատի ես ճանապարհ այնու երիվարաւ. զոր ոչ հատանէի, կ̃մ հետիոտս ընթանայի, եթէ չէր այն երիվար յիմում ձեռին. զի յայդ դիպուած՝ չլինելով իմ հարստացեալ չէի, որպէս 'ի փոխադրութե̃ն արմտեաց՝ ոչ լինիմ պարտական հատուցման: Ապա եթէ ոչ ևս կայ երիվարն, յայնժամ պարտաւոր լինիմ հատուցանել զայն՝ զոր շահեցայ այնու երիվարաւ, 'ի բաց առեալ զծախսն պահեստի նորա:

Այլ աստանօր ծագէ տարակոյս, արդեօք յորժամ հասու լինիմ թէ գողունի երիվարն իցէ պետրոսին, ո՞ւմ պարտ է ինձ հատուցանել. պետրոսի՞՝ եթէ վաճառողի զերիվարն, առ 'ի կորզել զգին նորա, զոր ետու 'ի քսակէս. և այն զի գիտեմ հաւաստեաւ, թէ վաճառողն ոչ դարձուցէ զերիվարն առ պետրոսն, բայց զիմ դրամսն հատուցէ ինձ:

Առ այս պատասխանելի է թէ կարող եմ զերիվարն դարձուցանել առ վաճառողն՝ առ 'ի ձեռս բերել զդրամ̃ս իմ. թէպէտև հաւաստի իցեմ թէ նա վաճառեսցէ այլում: Վ̃ն զի զոր օրինակ չի՛ք իմ ինչ մեղուցեալ 'ի գնել իմում զայն՝ նոյնպէս և կարող եմ փախչել 'ի վ̃նասուէ իմմէ՝ դարձուցանելով առ վաճառողն զերիվարն և կորզելով զգինն: Հաստատի. վ̃ն զի

պայման բարեմտութեան ստացողին պարտի լինել յաւագոյն՝ քան զստացողին չարամտութեան. ուստի եթէ չարամիտն հանդերձ իւրով իսկ վնասու և տուգանօք պա՛րտի հատուցանել ըզգողունին, ապա բարեմտին չէ՛ պարտ հատուցանել զայն իւրով վնասու և տուգանօք. ապա թէ ոչ՝ 'ի զուգակշիռ և 'ի զուգահաւասար վիճակի լինէր բարեմիտն ընդ չարամտին: Որոյ վասն ասէ սրբն Թովմաս. Բ. Բ. խն. ԿԲ. յօդ. 6. թէ փոխառուն՝ որ պարտի հատուցանել ըզփոխն, եթէ վասն այդորիկ ունի հասանել նմա վնաս ինչ, կարէ յապաղել զվճարումն. քանզի ինքն պարտական է հատուցանել զփոխն, այլ ո՛չ հանդերձ վնասու իւրով. զի ոչինչ մեղաւ փոխառութեան: Տես զհայրն Կամպիոն. Տռ. Բ. Գլ. Է. յօդ. 9:

Այլ սակայն կան երևելի աստուածաբանք՝ որք պնդեն, թէ ըստ նախագրեալ դիպուածոյ պարտ է առն հատուցանել զերիվարն. [illegible]: Տես զշարունակիչն Տուռնէլլի. և զայլս առ 'ի նմանէ նշանակեալս. յղ. [illegible]. Տ. [illegible]. յօդ. Զ. [illegible]. Գ: Ապա եթէ 'ի պարգևի մասին առեալ իցէ իմ զերիվարն 'ի գողոյն, 'ի դիտել իմում թէ իցէ գողունի՝ պարտաւորիմ հատուցանել առն, այլ ո՛չ պարգևատուին. վասն զի իրն յաւէտ առն հատուցանելի է՝ երբ մարթ իցէ ինձ առնել զայն առանց իմոյ մեծի վնասու:

Այլ աստանօր միւսանգամ տարակոյս ծագի: Եթէ ստացեալ է իմ բարեմտութեամբ զժառանգութիւն ինչ թողեալ ինձ 'ի բազում ամաց հետէ. և ապա 'ի յայտ գայցէ, թէ որ եթող ինձ զայն ժառանգութիւն՝ չարամտութեամբ էր ստա-

ցեալ նորա զայն. արդեօք պարտակա՞ն իցեմ յետս դարձուցանել զայն. կամ իբր չարամիտ, կամ իբր բարեմիտ: Ի դէպ դայ զանազանել. եթէ ես իցեմ ընդհանրական ժառանգ ներկայացուցիչ անձին՝ որ անիրաւութ՟բ ունէր ստացեալ զժառանգութի՟ն զոր ինձ եթող, յայնժամ պարտաւորիմ ը՟մ վնասուն և շահուն. իբրև չարամտութ՟բ ստացող. և չարժէ ինչ՝ թէ բարեմտութ՟բ ստացեալ իցէ իմ զայն ընդ բաղում ամս. զի ուր յաջորդ գտայ անձին չարամտութ՟բ ստացողի, և երևեցուցից եղէ նորա, յաջորդ լինիմ և նորին մոլութե՟ և չարամտութե՟: Իսկ եթէ չեմ ես ընդհանրական յաջորդ. և ոչ իսկ ներկայացուցիչ անձին՝ որ եթող զժառանգութի՟ն, այլ մասնաւոր ևեթ յաջորդ եմ 'ի միում մասին՝ որ թողաւ ինձ 'ի ժառանգութի՟, յայնժամ նպաստաւոր լինի ինձ բարեմտութի՟ն. և գտանիմ պարտաւոր հատուցանել զինչ թողեալ իցն. ո՟չ և զայն միայն որով հարստացայ: Տե՛ս զՓագնիանոս. 'ի 4ր. ծանր. յղ. հատուց. հեղուզէկ. հձ. 98. և 128:

Յանիրաւ առմանէ, կամ 'ի փոփոխութէ՝ պարտական գտանի չարամիտ ստացողն: Ա՟՝ Այն՝ որ գնէ կա՟ ընդունի զինչս այլոց. զոր գիտէ կա՟ խիթայ թէ իցէ գողունի, պարտական է հատուցանել զիրն՝ թէ կայցէ. իսկ եթէ չկայցէ՝ զգին նորին հանդերձ ը՟մ բնական և խառն պտղովք, 'ի բաց հանելով զկարևոր ծախս զհետ եկեալս ը՟մ դոցա. թէպէտև չիցէ հարստացեալ իւիք: Մանաւանդ թէ պարտաւորի հատուցանել ոչ միայն զպտուղս ընկալեալս, այլև զորս չընկալաւ. զորս հաւանական դատմամբ ունէր շահել տ՟րն՝ եթէ չէին գողացեալ 'ի

նմանէ ։ Նաև ես պարտաւորի հատուցանել զա՟մ վնասս դադարեալ շահուն, և զվնասն ծագեալ՝ զոր կրեաց տ՟րն ։ Այն իրի եթէ ոք չարամտութ՟բ գողացաւ, կ՟մ ընկալաւ 'ի պարգև զգողոնի մատակ ձի՝ պարտական է հատուցանել տ՟ն. ապա եթէ երիվարն չկայցէ՝ զգին նորա. և զա՟մ զշահն որ եղև 'ի ծննդոց անտի երիվարին. և զա՟մ դրամս քաղեալս 'ի վարձուց բեռնակրութե՟ նորա, 'ի բաց հանեալ միայն զկարևոր ծախս եղեալս 'ի սնունդ և 'ի պահեստ նորա, զորս ունէր առնել բնիկ տ՟րն ։ Նաև ես պարտական է կարկատել զվնասս՝ զորս կրեաց տ՟րն. ուստի եթէ հարկ եղև ն՟մ ծախել ինչ յիւրոցն 'ի պարէնս բեռնակիր գրաստու՝ պարտաւոր է չարամիտ ստացօղն հատուցանել զայն վնաս ։ Այնպէս եթէ տ՟րն ստիպեալ՝ գնեալ իցէ զայլ երիվար ծանրագնի քան զառաջինն. չարամտութ՟բ ժառանգօղն պարտաւորի վճարել զաւելեալ գինն՝ զոր հարկ եղև ն՟մ առնել 'ի գնել զենկդն. և թէև երիվարն չունէր բերել զայնչափ արդասիս 'ի ձեռին տ՟ն՝ զորչափ եբեր 'ի ձեռին չարամիտ ժառանգին, այսու ա՟միւ պարտաւորի վճարել զլիովին զդրամն. վ՟ն զի իրն մ՟շտ պտղաբերէ տ՟ն իւրում. և բարեբաղդութե՟ տ՟ն գրելի է՝ եթէ երիվարն շահեկանագոյն գտաւ 'ի ձեռս չարամտին, քան 'ի ձեռս բնիկ տ՟ն ։ Նաև դարձեալ՝ չարամտութ՟բ ժառանգօղն պարտաւորի իւրով ծախիւք առաքել զերիվարն առ տ՟ր իւր՝ ուր և գտանիցի նա. Թէպէտև գողութիւն լեալ իցէ 'ի սահմանս բնակութե՟ չարամիտ ժառանգօղին ։ Օրինակի աղագաւ՝ եդեալ թէ երիվարն Տիտիոսի գողացեալ իցէ 'ի կարին,

և ինքն գնացեալ իցէ յեդեսիա. չարամտութ՟ ստացողն պարտական է զերկվարն առաքել յեդեսիա. այլ ո՛չ այնպէս՝ բարեմտութ՟ ժառանգողն. քանզի սա մինչ վերահաս լինի թէ երկվարն իցէ գողունի՝ պարտաւորի միայն ազդ առնել տն՟՝ առաքել զոք և առնուլ զերկվարն:

Իսկ արդասիք իրաց ստացելոյ բարեմտութ՟ կմ՟ չարամտութ՟՝ են երրեակ. բնական. ճարտարմտական. և խառն: Բնական են (օրինակի վն՟), խոտք, պտուղք, դալարիք, զորս առանց մշակութե՟ կմ՟ ծախուց երկիրն ինքնին բերէ. 'ի սոյն կարգի է և ծնունդ մատակ ձիոյ: Ճարտարմտականք են՝ որք յառաջ գան 'ի սոսկ հանճարոյ մարդկան. ոպ՟ եթէ ոք գողունի դրամովք խաղացէ և յաղթեսցէ. այս օգտաշահութի՟ համարի պարզ ճարտարմտութի՟: Խառն՝ այն է, որ լինի 'ի ձեռն մշակութե՟. ոպ՟ ցորենոյ, գինւոյ, ձիթոյ, ևն: 'Ի սմին կարգի համարի և այն՝ եթէ 'ի ձեռն գողունի երկվարին շահ ինչ լինիցի. զորօրինակ՝ եթէ ես վարելով զգրաստն 'ի բեռնակրութի՟ շահէի ինչ մի՝ հանդերձ իմովս աշխատանօք: Արդ՝ ստացողն եթէ բարեմտութ՟ և եթէ չարամտութ՟՝ ոչ պարտաւորի հատուցանել զարդասիս՝ զորս սոսկապէս հանճարով իւրով ստացեալ իցէ: Ժառանգողն չարամտութ՟ պարտաւորի հատուցանել զպտուղս բնականս եթէ կայցէ. իսկ թէ չկայցէ՝ զգին նր՟. նոյն և զպտուղս խառն, 'ի բաց հանելով զկարևոր ծախս եղեալս վն՟ նր՟, իսկ թէ չկայցէ՝ զգին նր՟: Այլ ստացողն բարեմտութ՟՝ պարտաւորի հատուցանել զբնական պտուղս՝ եթէ կայցէ. իսկ եթէ չկայցէ, զայն՝ որով հարստացաւն: Զնոյն պարտ

է ասել և զխառն պտղոց, 'ի բաց բարձեալ զծախսն: Ապա եթէ առանց շահու ինչ իւրոյ ծախեալ իցէ, չունի պարտաւորութի՛ վճարելոյ և ոչինչ:

Յանիրաւ առմանէ, կամ 'ի վնասատուութենէ՝ պարտաւորի վճարել նա՝ որ եղև պատճառ վնասու ընկերին. թէպէտ և ինքն չիցէ ինչ օգտեալ անտի. զորօրինակ՝ այն՝ որոյ սպանեալ իցէ զանասուն ուրուք, կամ հրձիգ արարեալ զարմտիս այլոց. զայն պարտ է իմանալ և զնմանէ՝ որ ո՛չ անձամբ լեալ իցէ պատճառ այդր վնասու, այլ 'ի ձեռն այլոյ. և այս մարթի լինել իննեակ օրինակաւ՝ բովանդակեալ յայս ոտանաւոր:

Պատուէր, խրատ, հաւանութի՛,
ընդ ծածկայն՝ պաշտպանութի՛.
Մասնակցութի՛ և լռութիւն,
անդիմադարձ՝ չյայտնութիւն:

Պատուէր. յո՛ հրաման տայ վնասել, զորօրինակ՝ անդոյ ընկերին: Խրատ. որ խորհուրդ կամ խրատ տայ, կամ թելադիր լինի առնել զայն վնաս: Հաւանութիւն. որ կամակից լինի ը՟ վնասն՝ զի լինիցի. կամ ուր պարտական է արգելուլ՝ և ո՛չ արգելու: Ծածկայն. որ գովելով սադրէ զայլս՝ առնել զնոյնպիսի վնաս: Պաշտպանութիւն. որ առ ապաւինել զվնասապարտս ընդունի զնա 'ի տուն իւր: Մասնակցութիւն. որ ուսուցանէ զեղանակ վնասելոյ այլոց. կամ՝ իւիք ձեռնտու լինի վնասուն. ո՛չ և այն՝ որ թէև ոչ լինիցի ձեռնտու, սակայն մասնակից լինի գողունի իւրաց. և յայս դիպուած պարտի վճարել զայն բաժին՝ որում բաժանորդ գտաւ: Լռութիւն. որ ո՛չն բողոքէ 'ի տեսանել անդ զընկերն վնասեալ: Անդիմադարձ. որ ո՛չն պաշտպանէ զընկե-

լոյն , և ոչ խափանէ զվնասն ։ Չյայտնութիւն ․ որ ոչն զեկուցանէ զվնասապարտն ։

Երեքին վերջինքդ պարտաւոր առնեն հատուցանել՝ երբ 'ի պաշտամանէ իւրեանց պարտական իցեն բողոքել, պաշտպանել, և հրատարակել ․ յորոց սակի են պահապանք անդաստանաց , այգեաց , ևն ։ Վերակացուք գլխոց դրամոց հասարակաց , ևն ։ Սոքա ամենքին պարտաւորին 'ի հատուցումն տուեալ վնասուն՝ նշանով չափ ( ամբողջ ։ )

Նշանով չափ ասելն՝ նշանակէ թէ պարտաւոր գտանին առ բովանդակ պատճառեալ վնասն ․ այլ այսու օրինօք ․ զի 'ի վճարել գլխաւորին՝ որ եղև առաջնորդ վնասուն , այլք ոչ պարտաւորին ։ Իսկ 'ի չհատուցանել գլխաւորին՝ այլք առ հասարակ մի ըստ միոջէ պարտաւորին հատուցանել կշռով չափ ։ Բայց 'ի հատուցանել անդ ըստ պարտաւորութեան՝ իւրաքանչիւրոք 'ի նոցանէ ունի իրաւունս քաղելոյ զբաժինն յայլոց անտի , որք գործակից եղեն վնասուն , առ'ի հատուցանել զառանձին բաժինն՝ որ անկ էր նոցա ։

Այս ամենայն մեղանք ըստ զանցառութեան , զորս ցայվայր մեկնեցաք՝ դիմամարտք փոխարինական արդարութեան , ընդունին զթեթևութիւն նիւթոյ ․ յոյր սակս եթէ բարեմտութեամբ և եթէ չարամտութեամբ ստացօղն , որպէս և վնասարարն 'ի նիւթփոքր վնասու՝ մեղանչեն միայն ներելի մեղօք ։ Իսկ թէ պարտաւո՞ր իցէ արդեօք հատուցանել՝ յառաջիկայդ տեսցես ։

Յայս նիւթ դատապարտեալ նախադասութիւնք յԻննովկենտիոսէ ժա ․ են՝ լը ․ և լթ ։ յորոց առաջինն ունի այսպէս ․ * Ոչ պարտա-

ւորի որք ընդ պատժով մահուչափ մեղաց՝ հատուցանել զբարձեալսն փոքր փոքր գողութեան, թէպէտեւ գումարն ողջոյն իցէ մեծ ||: Եւ երկրորդն այսպէս. * Որ շարժէ կամ դրդէ զոք 'ի վնասել այլում երրորդի, ո՛չ պարտաւորի 'ի հատուցումն վնասուն եղելոյ ||:

Պատճառ դատապարտութեան առաջին նախադասութեան է. զի յամենայն նուազի՝ յորում արգելեալ լինի ինչ պատուիրանաւ իւիք ընդ ծանր յանցանօք, թէպէտեւ 'ի պատճառս թեթեւութեան նիւթոյն [illegible], մեղանչէ միայն ներելի մեղօք. եւ սակայն ծանուանս մեղանչէ, յորժամ բազմապատկելով զթեթեւ նիւթն լինի ժամանել մինչեւ 'ի նիւթ ծանր՝ որ է արգելեալ ընդ ծանր մեղօք: Ան որոյ որ փոքր փոքր գողութեամբ եհաս 'ի ծանուանս վնասել ընկերին, որ արգելեալն է ընդ ծանր յանցանօք, ծանուանս մեղանչէ. եւ ընդ ծանր մեղօք պարտաւորի հատուցանել զամենայն ինչս գողացեալս ողջոյն: Իսկ պատճառն 'ի յառաջագունէն՝ այն է. վասն զի այնչափ գործէ ընդդէմ վախճանի օրինաց այն՝ որ 'ի գործ արկանէ միահաղոյն զնշանաւոր ինչ նիւթ արգելեալ, որչափ նա՝ որ կատարէ զնոյն առ փոքր փոքր, եւ բազմապատիկ ներգործութեամբ: Յայս սակս իրաւամբք դատապարտեցաւ յԱղէքսանդրէ Է. Նախադասութիւն իթ. այն՝ թէ * Յաւուր ծոմապահոց որ ոք բազում անգամ սակաւիկ ինչ ուտէ, թէպէտեւ 'ի վախճանի մեծաքանակ ինչ լինիցի կերածն, ո՛չ լուծանէ զծոմապահս ||: Իսկ առ հասարակ ասեն վարդապետք, թէ ծանուանս մեղանչէ այն՝ որ յաւուրս տօնից առնէ զգործ ծառայական բազում անգամ առ սուղ ժամանակ, եթէ 'ի

կատարածի աւուրն հասանէ 'ի ժամանակ երևելի. որպէս և որ 'ի բաց թողու զմասն մասն 'ի կանոնական ժամերգութ̃ այնր աւուր, որոց 'ի մի հաւաքեալ՝ ժամանեն յերևելի մասն։

Պարտ է յայսմ վայրի 'ի միտ առնուլ, թէ նաև առաջին դոյզն գողութ̃ին մարթի լինել մեղք մահուչափ, որպէս և այլ հետևորդքն. և այս ստէպ պատահէ. զորօրինակ՝ եթէ ոք դիցէ 'ի մտի հանապազորդել անընդհատ 'ի գողութ̃ի մինչև ցժամանել 'ի նիւթ ծանր, յայդ դիպուած մահուչափ մեղանչէ յառ̃ նուագէ, յորում գողանայ, ոչ վ̃ն թեթևութ̃ նիւթոյն զոր գողանայ, այլ վ̃ն չար դիտաւորութ̃են գողանալոյ։ Զնոյն պարտ է ասել և զնմանէ՝ որ զառաջինն գողացեալ զնիւթ ծանր՝ ապա զհետ լինի գողանալ 'ի նիւթս թեթևս. և այն առանց դիտաւորութ̃ հանապազորդելոյ 'ի նոյն. քանզի միշտ մահուչափ մեղանչէ բանիւ ծանր նիւթոյն, զոր ունի յընչից օտարին. որ և հանապազ աճէ ևս քան զևս փոքր փոքր նիւթովք՝ զորս գողանայ հետզհետէ։

Պատճառ դատապարտութ̃ երկրորդ նախադասութ̃են է. քանզի որ պատճառ լինի վնասու ընկերին՝ 'ի բնական իրաւանց պարտաւորի առ հատուցումն. իսկ արդ՝ որ սադրէ և դրդէ զոք վնասել ընկերին՝ անշուշտ է բարոյական պատճառ վնասու նորա. ապա պարտաւորի 'ի հատուցումն։ Ա̃ն զի որպէս յանցաւոր է նա՝ որ բնականապէս վնասէ ընկերին, նոյնպէս և նա՝ որ բարոյապէս վնասէ. ի̃՝ խրատելով և թելադրելով լինի պատճառ, զի վընաս հասցէ ընկերին։

Յառաջիկայս նիւթ հատուցման հային դա-

տապարտեալքն յՄ.շէք". Է. նախադասութ՟իք Ե. ԼԴ. ԽԴ: Յորոց առաջինն է այս. * Յետս հատուցումն 'ի վերայ եդեալ Թոշակաւորաց չասողաց զժամերգութ՟ի՝ 'ի Պիոսէ Ե, ոչ է պարտաւորիչ 'ի խիղճ մտաց յառաջ քան զյայտարար վճիռ դատաւորի. մ՟ն զի է պատիժ ||: Եւ երկրորդն այս. * Յետս հատուցումն պըտղոց մ՟ն զանցառութ՟ե ժամասացութ՟ե՝ մարթի լրանալ 'ի ձեռն որ և է ողորմութ՟եց , զորս կանխաւ արարեալ իցէ Թոշակաւորն 'ի պտղոց Թոշակի իւրոյ ||: Եւ երրորդն՝ այն. * Տարեկան տուրքն թողեալ մ՟ն հոգւոյ՝ ոչ տևէ աւելի քան զամս տասն ||:

Դատապարտեցաւ առաջին նախադասութ՟իւն. մ՟ն զի ճշմարիտ է, թէ 'ի պատիժն եդեալ յօրինաց՝ ոչ ոք անկանի , բայց եթէ զկնի վճռոյ դատաւորին , որ յայտնի առնիցէ զանկումն 'ի պատիժն , կամ գոնէ զանկումն 'ի յանցանս՝ որ ունի ՟Ը իւր կից զպատիժն : Այլ զայդ պարտ է իմանալ յայն ՟ոմ նուագս՝ յորս օրէնսդիրն չիցէ յայտ արարեալ զկամս իւր , թէ լիցի անկումն ընդ պատժով , և թէ առ այս պարտաւոր լիցի յանցաւորն , նախ քան զ՟ոմ վճիռ դատաւորին. որպէս և է 'ի մերս դիպուած : Ո՟ն զի եթէ 'ի ժողովն լատերանեան. նիստ. 5. և եթէ 'ի կոնդակն ՟ոբյն Պիոսի Ե. 'ի վերայ ժամերգութ՟ե ՟ոծային պաշտաման՝ մեկն ծանուցաւ , թէ որ ոչ կատարէ զժամերգութ՟ի՝ անիրաւութ՟ե քաղէ զարդիւնս թոշակաւութ՟ե. որ այն իսկ է ասել՝ թէ յառաջ քան զ՟ոմ վճիռ դատաւորին՝ պարտաւորին յետս հատուցանել 'ի խղճէ մտաց :

Դատապարտեցաւ և երկրորդ նախադասու-

թեան. զի ողորմութեան զոր արար վիճակաւորն յառաջ քան զանկումն իւր 'ի պատիժ հատուցման պտղոյ, վասն զանց առնելոյ նորա զժամերգութեան՝ եղև պարզ յառատաձեռնութենէ իւրմէ, և 'ի շարժառթէ սիրոյ ընկերին. կամ յայտնապէս՝ և կամ լռելեայն. նորին աղագաւ չկարէր այնու վճար առնել պարտեացն արդարութեան 'ի վերայ հասելոց՝ յետ տալոյ արդէն զայն ողորմութիւն, և անցանելոյ նոցա 'ի տէրութիւն աղքատաց. և զայդ պարտաւորութիւն չկարէր յուշ ածել թոշակաւորն 'ի պահու անդ՝ յորում զողորմութիւն ետ:

Իսկ պատճառ դատապարտութեան երկրորդ նախադասութեան՝ այն է. զի հիմն նորա, որ այն իսկ էր, թէ հոգւք քաւարանի չունին կալ մնալ անդանօր առաւել քան զամս տասն յաղագս զինչ և իցէ թուոյ յանցանաց առ 'ի մաքրութիւն և քաւութիւն նոցա, է ամենևին անընդունելի, յանդուգն, և հակառակ մտաց և դաման եկեղեցւոյ, որ ընդունի զմշտնջենաւոր տարեդարձս վասն առանձինն հոգւոց ննջեցելոց. ուստի նմին անընդունելի լինի նաև ասելն, թէ յանձնարարութիւնք թողեալք վասն տարեկանաց որ և է հոգւոյ՝ ոչ պարտաւորիցեն, եթէ ոչ՝ մինչև ցամս տասն: Ապա ընդդէմ փոխարինական արդարութեան գործէ նա՝ որոյ յեցեալ 'ի սուտ յայդ կարծիս՝ ոչ առնիցէ վճար յանձնարարութեանց կտակի յետ տասն ամաց. և մնայ պարտական հատուցման:

Դաշնադրութիւն. որ է երրորդ սկիզբն և արմատ պարտաւորութեան հատուցման, է սակարկութիւն ինչ եղեալ 'ի մէջ երկուց կամ բազմաց, որ պարտաւոր առնէ զդաշնակիցս աստի և անտի: Այլ

քանզի բազում են ազգք դաշնակցութեանց՝ ամ-
փոփեսցուք մեք զբան մեր առ այն և եթ տե-
սակս՝ որք զօրհանապազ ընդդառաջ ելանեն։

---

Յաղագս դաշնակցութեանց՝ զորս հարկաւոր է գիտել ամենայն խոստովանահարց. և թէ զիա՞րդ լինի մեղանչել 'ի նոսա։

Դաշնադրութիւնք կարևորք 'ի գիտել ամ՟ խոստովանահարց են՝ Հասոյթ. Համայափոխութիւն. Ընկերութիւն. Փոխ. Անօթատուութիւն. Խաղ. Վաճառել. և Գնել։

Հասոյթն անուն՝ (որ է ըստ լատինացւոց չէնսուս) այսինքն՝ հաշիւ, պէսպէս առեալ լինի. նախ՝ իբրև համարագրութիւն և կշռադատութիւն ընչից քաղաքացւոց. որպէս զի ըստ չափու կարողութեան նոցա դիցին տուրք կամ հարկք։ Ըստ որոյ ուր ասի 'ի մեզ. ճառ. իգ. * Արժան է հարկս տալ կայսեր՝ թէ ոչ, 'ի լատինն դնի չէնսուս։ Երկրորդ՝ նոյն իսկ գոյք՝ կամ ինչք. ըստ որոյ նուագէ լատին քերթողն, չէնսուս բէրէ ողղուտի ծառայ, չէնսուս՝ ողորմ բարեկամաց։ Այլ յառաջինկայս 'ի կիր արկանի իբրև Հաս կամ հասոյթ, որ և հաշուեմուտ։ Այս՝ Հասոյթն է իրաւունք ինչ, զոր գնէ ոք դրամովք՝ առ'ի պահանջել'ի վեց ամսոյ 'ի վեց ամիս. կամ ամ յամէ զեկամուտ ինչ հաստատեալ'ի վերայ կալուածոց օտարին, որ իցէ անշարժ, շահեկան կամ պտղաբեր։ Այս տարեկան եկամուտ կարէ լինել կամ'ի դրամս, կամ յարդիւնս՝ որք քաղին յարգասեաց կալուածոց.

զորօրինակ՝ իւղ, գինի, ցորեան, եւն։ Առաջինն կոչի հաս դրամոց. երկրորդն կոչի հաս արդեանց. ապա և կալուածն պարտի լինել բաւական առ՚ի վճարել կամ դրամով, կամ արդեամբք զսահմանեալ և զգնեալ պտուղս։ Որ գնէ զհասն՝ կոչի հասընկալ կամ հասառու։ Իսկ որ վաճառէ զհասն, և պարտաւորէ զանձն ՚ի վճարել զտարեկան պտուղս, կոչի հասատու կամ արդիւնատու։ Եւ որպէս զի հասն լինիցի օրինաւոր՝ պարտի ունել զպայմանս նշանակեալս ՚ի կոնդակի սրբոյն Պիոսի Ե. որոյ սկիզբն է. Որովհետև բեռն, հրատարակեալ յամին 1569. և են։ Ա. Զի հասն հաստատեալ իցէ յանշարժ իր. զորօրինակ՝ ՚ի վերայ տան, ՚ի վերայ այգւոյ, եւն։ Բ. Զի կալուածն լինիցի պտղաբեր. որ կարող իցէ վճարել զհասոյթն գնեալ՝ ամ ըստ ամէ։ Գ. Զի կալուածն իցէ նշանակեալ որոշակի. մինչ զի ՚ի պակասիլ այսր՝ պակասեսցի և հասն կամ ըստ բոլորին՝ և կամ ըստ մասին։ Դ. Զի ՚ի սակարկութեան անդ հասին՝ ներգործութեամբ վճարեսցի առաջի քարտուղարի և վկայից դրամն, որով հասն գնեալ լինի. Քանզի սակս անմարթ է գնել զհասն պարտիւքն՝ զոր ունի գնողն ՚ի վերայ վաճառողին։ Ե. Զի մի լինիցի պահանջել զեկամուտն կանխիկ դաշամբ. այլ միայն ՚ի լրանալ ժամանակին. ուստի որ գնէ զհասն, եթէ ՚ի սակարկութեան անդ առցէ տուրս մի վեցից ամսոց առաջնոց, կամ մի առաջին տարւոյն, առնէ զվաշխառութիւն հանդերձ պարտաւորութեամբ հատուցման։ Զ. Զի վաճառող հասին անպարտ գտցի ՚ի պատահարաց. այսինքն՝ եթէ կործանեսցի տունն. եթէ անդաստանն հեղեղեսցի յանձրևաց, կամ աւե-

րեսցի 'ի գետոյ, զ: Քանզի յայդպիսի դիպուածս հաստատուն ազատ լինի 'ի վճարելոյ ըզհասն կամ իր̃ մասին, և կէս իր̃ բոլորին: է. Մի՛ ինչ դաշն կռեսցի, ուստի հաստատուն պարտաւորեսցի չվաճառել ըստ հաճոյս զկալուածն՝ տուեալ 'ի պէտս հասից. միայն սոյն է՝ թէ պարտական լինի ազդ առնել հասառուին. զի թէ կամք իցեն նմա գնել՝ նախադաս լիցի նա 'ի մէջ ամ̃ գնողաց: ը. Օր եթէ ըստ դիպուածի հաստատուն յապաղեսցէ 'ի վճարել ըզպտուղս հասին՝ մի՛ դիցի հարկ 'ի վերայ նորա պարտաւորիչ առ դադարեալ շահ և առ ծագեալ վնաս հասընկալին: թ. Օր անվճար պտուղք մի՛ համարեսցին 'ի նոր գլուխ դրամոց, և յաճումն հասից: ժ. Օր հասառուն մի՛ պարտաւորեսցի վճարել զծանրութիւնս կամ ըզվնասս կալուածոյն իր̃ հասին անկելոյ: ժա. Օր հաստատուն մի՛ պարտաւորեսցի անդրէն յինքն գնել զհասն. այլ եթէ կամք իցեն նմա գնել, մի՛ կարասցէ հասառուն մերժել զնա. միայն պարտի հաստատուն երկու ամսօք յառաջ ազդառնել հասառուին յատենի. և երբ ո՛չ դարձուսցէ զհասն յետ երկուց ամսոց՝ կարէ հասառուն 'ի նեղ արկանել զնա 'ի միջոցի տարւոյ միոյ: ժբ. Օր յետ միանգամ հաստատելոյ հասին՝ մի՛ այլ ևս աճեսցի կամ նուազեսցի գին նորա, մ̃ն հանդամանաց ժամանակին և անձին: Ահաւասիկ պայմանք կոնդակին. յորոց 'ի պակասիլն՝ հասն լինի ոչինչ և անիրաւ. և հասառուն պարտաւորի 'ի հատուցումն:

Աստանօր ծագի տարակոյս. արդեօք 'ի կալ մնալ Պիոսեան կոնդակին, համարիցի՞ն օրինաւոր լինել հասոյթք կենսատևականք. (այսինքն՝

տարեկան եկամուտք 'ի վայելել առ իւրով կեն-
դանութը̄ .) այսինքն է՝ յորժամ տայ ոք Տի-
տիոսի դահեկանս 1000 . որպէս զի առցէ 'ի
նմանէ զայսչափ ինչ, ցորչափ գնողն հասին կեն-
դանի իցէ ։ Այս դաշնադրութի ընդունելի է
առ բազում հեղինակս իբրու սակարկութի ը̄
բախտի . ը̄ որ թուի հաճիլ և սբն Թովմաս
'ի պէտա . հէ̄ . գւ . է̄ ։ Իսկ առ ոմանս ո՛չ է ընդ-
ունելի իբր հակառակ կոնդակին սբյն պիոսի,
յորում յայտնապէս բացածանուցանի թէ հասք
պարտին լինել 'ի վերայ անշարժ՝ կամ իբր ան-
շարժ և հաստատուն իրի . և այլ հասք ո՛ր և է
այլով օրինակաւ եղեալք՝ ասին լինել ոչինչ և
վաշխառական ։ Այն իրի առ 'ի լինել կենսատև
հասին օրինաւոր՝ պէտք են ունել զպայմանս
զայսոսիկ ։ ա̄ . Զի հաստատեսցի 'ի վերայ հա-
ւաստի և պտղաբեր կալուածոյ . և ո՛չ լոկ 'ի
վերայ ճարտարմտութե̄ և պաշտաման անձին,
ըստ պիոսեան սահմանադրութե̄ ։ Նաև այս պայ-
ման ո՛չ պարտի կարծիլ օտար 'ի հաստատուէ
կի̄ 'ի հասառուէ, այլ մանաւանդ շահաւոր ։
Ան զի 'ի հաստատել անդ զհասն 'ի հնարա-
գիտութի̄ անձին և ելծ՝ ը̄ մեռանիլ նորա կո-
րուսանէր հասառուն զգլուխ՝ միանգամայն և
զպտուղ հասին ։ բ̄ . Զի լինիցի գին հասին
արդար, յուշ ածելով զհասակ, զառողջութի̄,
և զկնդակազմութի̄ գնողին ։ գ̄ . Զի դրամն՝
որով գնի՝ կացցէ մնացէ յօգուտ և ը̄ տրութե̄
հասատուին, մինչև անմարթ է բնաւ յետս պա-
հանջել առանց ազատ հաճութե̄ նորա . ապա
թէ ոչ՝ կենսապահ հասն դառնայ 'ի փոխատու-
ութի̄ . ուստի և լինի անիրաւ և վաշխական ։
Պ̄նիլ պայմանացդ՝ օրինաւոր լինի հասն կեն-

սատև. զոր՝ տամ՝ տխտխոսի դահեկանս 1000. որպէս զի նա առ կենդանութե՟ իւրով վճարեսցէ ինձ տասն առ հարիւր ամ՝ ըստ ամէ։ Այլ այս հասոյթ կենսատեւակ չէ ընդունելի արդի քահանայապետի (բենեդիկտոսի ժդ.) 'ի թեմական ժողովի իւրում. գր. է. գլ. ժէ. ըէ. 4։ Եւ առանձինն 'ի տեղիսն՝ յորս պահի սահմանադրութի՟ նոյն պիոսի Ե. և ընդհանրապէս յորդոր լինի եպիսկոպոսաց չընդունել զայն 'ի թեմս (կա՟մ 'ի ժողովս) իւրեանց։ Այլ քանզի հասդ այդ կենսատեւակ՝ չև է մերժեալ յեկեղեցւոյ, տեսանի 'ի կիր արկեալ։

Պտուղք այլոց հասից Միաբանութե՟ցն յերկրի նորութե՟ պապին, 'ի բենեդիկտոսէ ժդ. չափաւորեցան և վերածեալ եղեն 'ի չորս առ հարիւր, 'ի սահմանադրութե՟՝ որոյ սկիզբն է Նղ—։

Լոմայափոխութի՟ն՝ է փոխանակութի՟ ինչ դրամոյ ը՟ դրամոյ, հանդերձ շահու սեղանաւորին, կա՟մ լոմայափոխին։ Որ առնու զդրամս 'ի լոմայափոխէ՝ պարտաւորելով զանձն 'ի վճարել զշահն, կոչի լոմայառու. իսկ որ տայ ընդդրամ այնպիսի հանդերձ շահու, կոչի լոմայափոխ։

Բաժանեալ են ազգք լոմայափոխութե՟։ ա. Հատավաճառութի՟. (որ է դրամափոխութի՟ մանր, կա՟մ ձեռնական։) բ. Գրափոխութի՟, կա՟մ գրաւոր դրամափոխութի՟։ գ. Դրամափոխութի՟ իրական։ դ. Դրամափոխութի՟ չոր, կա՟մ կեղծեալ։

Օրինաւոր է հատավաճառութի՟ն. այս է՝ յորժամ ոք ունի առ ձեռնպատրաստ զերկրի դրամս պղնձի կամ արծաթի. և կամի փոխա-

նակել Ռ ոսկւոյ. կամ ունի դրամ օտար՝ որ չանցանէ 'ի տեղւոջն ուր կայ, և կամի փոխել զայն 'ի դրամ տեղւոյն:

Օրինաւոր է լումայափոխութիւն՝ որ 'ի ձեռն գրոյ. զորօրինակ՝ յորժամ տայ ոք լումայափոխի որ 'ի զմիւռնիա դահեկանս 500. պարտաւորելով զանձն նորա՝ վճարել զայն ինքեան յեգիպտոս. որ 'ի մէջ բերէ զարդար տիտղոս պահանջել զշահ ինչ վ՟ն լումայափոխութե՟ն. վ՟ն զի եթէ ոք ինքնին կամէր անցուցանել զայն դրամ յեգիպտոս՝ ունէր առնել ծախս, և դը-նել ևս զդրամն 'ի վտանգ: Արդ՝ կոչի սա լումայափոխութի՟ն 'ի ձեռն գրոյ կամ յետկարի. քանզի լումայափոխն գրէ առ գործակից իւր որ յեգիպտոս, հատուցանել անտանօր կամ խնդրողին, և կամ գործակցի նորա որ անդ՝ այնչափ ինչ:

Օրինաւոր է և լումայափոխութիւն իրական. այն է՝ յորժամ են իմ անդ յեգիպտոս դահեկանք 1000. և կամիմ փոխել զայն Ռ դահեկանի զմիւռնիոյ. և զի դրամք բացակայք նուազ արժեն քան զներկայ դրամս տեղւոյն. յայդ սակս լումայափոխն իրաւացի տիտղոսիւ պահանջէ յինէն շահս վ՟ն այդր լումայափոխութե՟ն:

Իսկ լումայափոխութիւն չոր կամ կեղծ՝ է ապօրինաւոր, դատապարտեալ 'ի կոնդակի ս՟րբոյն Պիոսի Ե. որոյ սկիզբն է. Ին այն բրօ նօսդրօ, ուր ասի. * Իւ արդ՝ զառաջինն դատապարտեմք զայն լումայափոխութիւնս՝ որք չոր անուանին, և այնպէս կեղծին. որպէս թէ դաշնակիցք՝ առ այն ինչ տօնավաճառս կամ յայլ տեղիս լումայափոխութի՟ն առնել կեղծաւորին. և փոխառուքն զլումայս՝ թէպէտև գիրս իւր իւ-

բանկանս աւանդեն յղելն յայն տեղիս, այլ ոչ առաքին իրօք. և կամ այնպէս առաքին, զի յանցանել ժամանակի՝ ուստի յառաջ խաղացին՝ ունայն արձակին. կամ առանց տալոյ այսպիսի ինչ գիր՝ հուսկ յետոյ դրամն հանդերձ շահիւք պահանջի անդ, ուր դաշնադրութիւն եղև. քանզի 'ի մէջ տուողաց և առողաց՝ 'ի սկզբանէ անտի այս պայմանադրութիւն եղեալ էր. կամ ստուգիւ՝ այնպիսի դիտաւորութիւն կայր. և ոչ ոք է՝ որ 'ի տօնավաճառս, կամ 'ի նշանակեալ տեղիս՝ ընդունելով զայն թուղթս՝ վճարեսցէ զդրամ||. Խա։

Կամ եղև ինձ 'ի մէջ ածել զբանս կոնդակին, ուր յայտնապէս նկարագրի և դատապարտի լումայափոխութիւն չար. և սակայն այն իսկ է՝ որ գլխաւորին կատարի 'ի մէջ նոցա, որք ոչ լումայափոխք են, և ոչ լումայառուք. զորօրինակ՝ տիտիոս ունելով պէտս դրամոյ. և չունելով կալուածս առ 'ի հաստատել զհաստոյթ, կամ չգտանելով հաւատութիւ զայն դրամ, աղաչէ ըզպետրոս տալ նմա դահեկանս հարիւր հանդերձ շահու լումայափոխութե. հինգ առ հարիւր. 'ի մուրհակի անդ յանձնիման առնէ տիտիոս ունել իւր հարիւր դահեկանս յեգիպտոս. ուրանոր վճարեսցէ զայն պետրոսի 'ի լրանալ միոյ տարւոյ. և սակայն տիտիոս չունի ինչ դրամս յեգիպտոս. և ոչ իսկ լինի հաւատացանել պետրոսի անտանոր. այլ յաւէտ ասա՝ ուրանօր սակարկեալ եղև լումայափոխութիւն հանդերձ շահու ընդ պատրուակաւ լումայափոխութե։ Նաւ ահա այդ դաշնադրութիւ է վաշխառական, անիրաւ, և դատապարտեալ. որպէս տեսաւ 'ի նախագրեալ կոնդակի, յորում այլ պայմանք

յառաջ բերին առ 'ի լինել իրական լումայափոխութեն օրինաւոր . այսինքն՝ զի 'ի դաշնագրութեանդ՝ լումայափոխին մի՛ կռեսցէ դաշն ը̃ լումայառուին առնուլ 'ի նմանէ զծագեալ վնասն կմ̃ զդադարեալ շահն , երբ չունիցի հատուցանել 'ի սահմանեալ ժամանակին . և թէ վն̃ յապաղմանն , զոր կրէ 'ի լումայառուէն վն̃ ոչ վճարելոյ զլումայն 'ի սահմանեալ ժամանակի , մի՛ իշխեսցէ լումայափոխին պահանջել յաւելտ քան զարժէք լումայափոխութե ։ Հուսկ յետոյ 'ի պայմանի ժամադրութե յետս դարձուցանելոյ կմ̃ հատուցանելոյ զլումայն՝ լինիցի նկատել զհեռաւորութի և զմերձաւորութի տեղւոյն , ուր արժան իցէ վճարել զդրամն ։

Աստանօր կամէ ինձ յուշ առնել ինչ ինչ 'ի վերայ լումայափոխութեց , որք 'ի կիր արկանին զօր ամ̃ . այս է՝ յորժամ ոք առնու զգումար ինչ դրամոյ 'ի սեղանաւորէ քաջ դիտելով լումայափոխին , թէ լումայառուն չունի յածել զդրամն 'ի տօնավաճառս . այլ յաւէտ 'ի կիր առնուլ զայն յայլ պէտս իւր՝ վճարելով այսչափ ինչ առ հարիւր . և սակայն լումայառուն ըստանձնէ զծանրութին շրջեցուցանելոյ զդրամն 'ի տօնավաճառս , առնելով հրապարակաւ և զյետկար այդպիսի դաշնագրութե ։ Արդ՝ թէպէտև բազում վարդապետք պաշտպանեն զայդ դաշնագրութի , և ստէպ 'ի գործ դնի անխիղճ, սակայն տէրն մեր Բենեդիկտոս ժդ̃ . 'ի գործս իւր . յղ . Բէմ . ծող . Գր . Է̃ . Գլ . ԽԵ̃ . հմ . 8 . և որ զկնի , նոյնպէս և 'ի հմ . 10 . համարի զայդ դաշնագրութի լինել վաշխառական . և յորդոր լինի եպիսկոպոսաց չհաւանիլ ը̃ այն ։

Դաշնագրութի ընկերութե կամ ընկերակ-

ցութիւն այն է՝ յորժամ երկու կամ բազում անձինք միաբանեալ ընդ միմեանս՝ դնեն, ոք՝ մին դրամս կամ անասունս, և միւսն զգործս աշխատասիրութեան իւրոյ. զի որ ինչ շահ կամ օգուտ քաղիցի անտի՝ լիցի հասարակաց, ՚ի բաց հանեալ զոմն զծախս հանդիպեալս: Առ օրինաւոր լինելոյ դաշնադրութեանդ՝ հարկ է ուշ ունել պայմանաց սահմանելոց ՚ի Բ. սեստոսէ է. ՚ի սահմանադրութեան Ռճըրդէ: Որք են, ա. Ոչ ՚ի մէջ ընկերաց ոչինչ դաշն դնիցի պարտաւորութեան յետս հատուցանելոյ զգլուխ դրամոյ ընչից տն, կամ ըստ մասին՝ և կամ ըստ բոլորին, եթէ դիպուածով իւիք կորիցէ կամ վատթարասցի գլուխն այն ըստ մասին կամ ըստ բոլորին առանց ինչ յանցանաց ընկերակցին: բ. Ոչ մի՛ կռեսցի դաշն վճարելոյ ամ յամէ, կամ ամսոյ յամիս զքաղեալ շահն այնմ, որ եդ զգլուխ դրամոյ. այլ շահ այնպիսի ունի վճարել ՚ի լրանալ ընկերութեան, ՚ի բաց հանելով և զծախս հանդիպեալս: գ. Ոչ ընկերք միաբան ՚ի մէջ ածցեն և դիցեն ՚ի գործ թէ՛ ըզդրամս կամ զանասունս, և եթէ զճարտարութիւն կամ զաշխատութիւնս անձին: դ. Ոչ ՚ի լրանալ ընկերութեան եթէ կացեալ մնացեալ իցէ գլուխն, եթէ դրամ, և եթէ անասուն՝ դարձուսցի առ տէր իւր: ե. Ոչ ՚ի մէջ ընկերաց՝ հասարակաց լինիցին ծախք, պտուղք, շահք, և վնասք: զ. Ոչ ՚ի լրանալ ընկերութեան՝ բաժանեսցի ՚ի մէջ նոցա թէ՛ շահն, և թէ վնասն ըստ համեմատութեան՝ զոր եդին ընկերք ՚ի ընկերութեան իբրև գլուխ կամ իբրև աշխատանք: Սմին իրի որ եդն զդրամ և զճարտարութիւն իւր միանգամայն՝ պարտի առնուլ զկրկին բաժինս

շահուց առ նովաւ՝ որ եդ զաշխատասիրութի̃ իւր , կամ զգլուխն և եթ . ապա եթէ մին յընկերաց եդեալ իցէ միայն զճարտարութի̃ իւր . և միւսն զգլուխ և եթ դրամոյ , մինչ զի ճարտարութի̃ ընկերին հաւասարեսցի ընդ գլխոյ դրամոյն , յայնժամ պարտ է բաժանել զամբողջ շահն յերկուս հաւասար բաժինս . 'ի բաց բարձեալ նախ զգլուխ դրամոյն , զոր պարտ է հատուցանել տ̃ն՝ որում անկ է : Իսկ եթէ 'ի լրանալ ընկերութե̃ և յետ 'ի բաց հանելոյ զգլուխն՝ չմնասցէ ինչ շահ 'ի միջի , յայդ դիպուած ընկերն փոքր՝ չունի ինչ բնաւ պահանջել վ̃ն իրոյ ճարտարութե̃ կամ աշխատանաց եդելոց և կորուսելոց : Նաև մի՛ ոք անիրաւ համարեսցի ըզպայմանդ զայդ . քանզի եթէ դիպուածով կորիցէ գլուխ դրամոյն ըստ բոլորին կամ ըստ մասին , և ո՛չ իսկ մեծ ընկերն կարող է պահանջել ինչ 'ի փոքր ընկերէն , երբ կորուստն եղև առանց յանցանաց ինչ նորա :

ԴՁԼ աստանօր 'ի մէջ առեալ լինի տարակոյս . արդեօք օրինաւո՞ր իցէ դաշնադրութի̃ն ընկերական՝ որ կոչի եռադաշն . զորօրինակ՝ տիտիոս տայ հարիւր ոչխարս պօղոսի փոքր ընկերի իւրում . յորոց ('ի բաց բարձմամբ ծախուց) ամ յամէ մարթին քաղել պտուղք մի մի դահեկան առ իւրաքանչիւր ոչխար . ապա տիտիոս սակ արկանէ ՟Է փոքր ընկերին տալ նմա յամին դահեկանս երեսուն և եթ փոխանակ յիսուն դահեկանին՝ որում ակն ունէր 'ի պտղոց հարիւր ոչխարաց . իսկ զայլ յիսունն շնորհել փոքր ընկերակցին՝ այսու և եթ դաշամբ . զի գլուխ հարիւր ոչխարաց ողջիկ կացցէ մնասցէ 'ի շնորհս տիտոսի : Յետ այսորիկ

վաճառէ ։ Եւ զանստոյգ պտուղն փոխանակ հաւաստի պտղոյ. իբր զի ուր կարէին 100. ոչխարք 'ի շնորհս տոտխոսի մեծ ընկերին պտղաբերել յամին դահեկանս 50. նա զտարեկան 20. դահեկանն շնորհէ փոքու ընկերին. առնելոյ միայն զհաւաստի դահեկանս 30. յորոց հանեալ զքսան դահեկանս առ ապահովութի գլխոյն՝ նման տոտխոսի յամին 10. դահեկանք հաւաստիք՝ համդերձ ողջիկ գլխով ։ Արդ՝ խնդրի, թէ այդ դաշնադրութի եռադաշն՝ միացեալ, այն՝ բովանդակեալ նախ՝ յընկերութէ. երկրորդ՝ յապահովութէ գլխոյ. երրդ՝ 'ի վաճառմանէ անստոյգ շահու փոխանակ ստուգի թէև փոքրագունի ( որք ըստ ինքեան ուրոյն ուրոյն են արդար և օրինաւոր. ) մի թէ օրինաւո՞ր իցէ ։

Այս ընկերութի եռադաշն յօրջորջեալ՝ հանդիսացաւ 'ի ձեռն երկպառակութե կարծեաց 'ի մէջ դոմինիկոսի Սոտոսի, և մարտինոսի Նաւարրոսի ։ Նաւարրոս առնէր, թէ օրինաւոր իցէ այդ դաշն, և զերծ յամ վաշխից ։ Ընդ հակառակն Սոտոս պնդէր, թէ ապօրինաւոր է և վաշխառական ։ Խնդիրն հանաւ յատեան Սիքստոսի Ե. որ յետ քաջ խուզարկելոյ ըզվէճն, արտայայտեաց վաշխառական գոլ զայն դաշնակցութի. և արգել զայն սահմանադրութք իւրով կը. Դետեստ. որ 'ի լոյս ընծայեցաւ յամին 1586 ։ Բայց տակաւին ոչ դադարեաց վէճն. զի եղին անուանի ածաբանք 'ի հաստատել՝ թէ այդ դաշն ոչ է վաշխառական, այլ օրինաւոր. որպ Կովարր. Լեսսիոս. Ֆրանկեսկոս. Գորկիա. կարդինալ լուգոնեան. սալմատիկեանք. Բոնակինա. և Սանչի ։ Այլ ընդդէմ սոցա զինին գենետ. նատալիս աղէքսանդր. աւրեգլիոս

պեթրէ · դարբինել անդոյեն · շարունակիչն նա-խավերծանութեանց տուրնելի · և հուսկ յետոյ Ն · դանիել կոնկինա, և այլք ։

Պատասխանեմ, թէ երբեակ դաշնակցութեանդ այդ, ցորչափ կայ միայ կոնդակն Սիքստոսին · չէ օրինաւոր · վն զի անդ յայտնապէս արգելեալ լինի · թէ 'ի դաշնադրութեան ընկերութեան անմարթ է մեծագոյն ընկերին պարտաւորել զփոքր ընկերն յապահովութեան գլխոյ դրամոյ · ապա թէ ոչ՝ եղծանի իսկութիւն ընկերութեան, յորում պահանջի հաւասար զուգընթացութիւն վտանգի կորստեան գլխոյն՝ որ հայի առ ընկերն մեծ, ընդ վտանգի կորստեան աշխատանաց՝ որ հայի առ ընկերն փոքր, որ ոչն լինի 'ի մերս դիպուած · մանաւանդ թէ վն ապահովութեան գլխոյ և վն ստուգութեան զուգնաքեայ պտղոյ աւերի ընկերութիւն · յորում վըտանգ գլխոյ և վտանգ պտղոյ պարտին զուգահաւասար լինել 'ի մէջ երկաքանչիւր ընկերաց ։ Եւ այս յայտնի տեսանի 'ի բանից անտի կոնդակին, զոր աստանօր կարևոր վարկայ առաջի առնել 'ի լուսաւորութ խոստովանահարց · որովհետև ստէպ լինին այդպիսի ընկերութիք ։ * Պատապարտեմք և մերժեմք զնմ և զոր և է դաշնադրութիւս և պայմանադրութիւս և սակարկութիւս յետ այսորիկ լինելիս, որովք դնի ըղդուշութիւն անձանց տուողաց զինչս կամ զանասունս, և կմ զայլ որպիսի և իցէ իրս անուամբ ընկերութեան · որպէս զի եթէ դիպուածով իւիք պատահեսցէ ինչ տոյժ կմ վնաս, կմ կորուստ, բաժինն այն կամ գլուխն միշտ ողջ կայցէ մընասցէ, և ամբողջ յետս վճարեսցի յընդունող ընկերակցէն · կամ իւիք քանակաւ կամ գումա-

րիւ ամ ըստ ամէ կամ ամիս յամսոյ փոխարինեսցի՝ ցորչափ ընկերութ՟ին տեւէ ։ Իսկ սահմանեմք, թէ այսպիսի դաշինք, պայմանք և սակարկութ՟իք յայսմհետէ պարտին համարիլ վաշխառական և ապօրինաւոր ․ և թէ այսուհետև ոչ է օրէն այնոցիկ, որք զդրամս կամ զկենդանիս կամ զայլ իրս տայցեն յընկերու՟, զհաւաստի պտուղն՝ որպէս ասի՝ ընդունելոյ վն՟՝ դաշնաւորիլ ընդ միմեանս և միաբանիլ ․ և ոչ ևս՝ եթէ առ ստոյգ և եթէ առ անստոյգ շահն միաբանեսցին, ունին ընկերքն՝ որ զայնս ընդունին՝ պարտաւորել զանձինս որ և է դաշամբ կամ խոստմամբ, առ ՚ի վճարել զգլուխն ողջիկ և ամբողջ, եթէ պատահարաւ ինչ կորիցէ, կամ կորուսեալ իցէ ․ և ոչ ևս յայսմհետէ լինիցին ընկերութ՟իք ընդ այսպիսի դաշամբք և պայմանօք, որք զվաշխառական չարութ՟ հետս ունիցին, խստիւ խափանեմք և արգելումք ‖ ։ Իսկ դարձեալ համալսարանն սորբօնեան՝ կշտամբութ՟ արժանի դատեցաւ զայս նախադասութ՟ի ։ * Եթէ ՚ի դաշնադրութիւն ընկերութ՟ յարեսցի դաշնադրութ՟ի ապահովութ՟ գլխոյն, և վաճառման անստոյգ շահու փոխանակ ստուգի, զօրութ՟ երից այս դաշանց օրէն է պահանջել զստոյգ շահ հանդերձ ապահովութ՟ գլխոյն ‖ ․ և ՚ի վր՟ եած ․ * Այս նախադասութ՟ի սուտ է, և գայթակղական, և սադրիչ առ վաշխառութ՟իս ․ և զանազան խարդախութ՟եց ճանապարհ բանայ՝ ՚ի պատրուակել զնոսին, և յեղծանել զարդարութիւն և զօէր ․ և ՚ի սրբազան համալսարանես կանխաւ դատապարտեալ իսկ է ‖, Իա՟ ․ յամին 1664 ․ և տրն՟ մեր ( արդի քահանայապետ բենեդ ․ ժդ՟ ) ․

’ի Գլ. Ճ. Նախանշանակեալ թղթոյն համար 6. ասէ, թէ * Եկսունք ըստ կարի պարտական են արգելուլ և խորշեցուցանել զհպատակս իւրեանց ’ի կիր արկանելոյ զայն ||։

Փոխն է դաշնակցութի ձրի. որով զինչս կիրառութք ծախելիս տայ և անցուցանէ տէրն ’ի տէրութի օտարի, պարտաւորելով զնա՝ հատուցանել նմա ըստ տեսակին ’ի պայմանեալ ժամանակին։ Յոր սակս փոխատուութիւք դրամոյ ցորենոյ, գինւոյ, և ձիթոյ՝ տարբերին յանօթատուութէ, որով փոխատրի ինչ՝ որ ոչ ծախի կիրառութք, առ ’ի հատուցանել անդրէն ըստ թուոյն ’ի լրանալ կիրառութե՝ առանց փոխանցելոյ զտէրութին։ Վ այսորիկ փոխատուութի երիվարի, զգեստուց, և զինուց կոչի աւանդ կամ անօթատուութի, այլ ոչ փոխ։ Նմին իբր եթէ աւանդեցից տիտիոսի առ ’ի գնալ ’ի ճանապարհ դահեկանս 100. և հանդերձ, և զէնս, միանգամայն և զերիվար իմ. և զճանապարհայն յարձակեալ ելուզակաց՝ կողոպտիցեն, և բարձցեն ’ի նմանէ զդրամս ողջոյն. մերկացուսցեն զնա, և առցեն զզէնս, զհանդերձս, և զերիվարն. տիտիոս պարտաւոր է հատուցանել ինձ զդրամսն և եթ. այլ ոչ զերիվարն, զզէնս, և զզգեստս. զի սոքա կորնչին ինձ՝ իբրև բնիկ տն. քանզի ’ի յանօթատուութեան այդոցիկ՝ ոչ փոխանցի տէրութին. սակայն ’ի փոխատուութե դրամոց՝ որոց տէրութին փոխանցի ’ի փոխառուն՝ կորնչի տիտիոսի։

Այլ աստանօր ծագի տարակոյս. արդեօք ’ի փոխատուութե մարթ իցէ պահանջել ինչ ’ի սակս դադարեալ շահուն, կմ ծագեալ վնա-

ծուն. զորօրինակ՝ ես պէտս ունիմ 100, դա-
հեկանաց, զոր խնդրեմ 'ի պետրոսէ. որ ունի
և կամի տալ ինձ 'ի փոխ. այլ քանզի եղեալ
էր նորա 'ի մտի՝ տալ զայն լումայափոխի վեցիւ-
առ հարիւր՝ չկամի տալ ինձ, եթէ ոչ՝ պար-
տաւորելով զիս հատուցանել նմա դահեկանս
հարիւր և վեց 'ի լրանալ տարւոյն: Այնպէս
ունէր և զայլ հարիւր դահեկանս տալ ինձ 'ի
փոխ, բայց և սոքօք խորհեալ էր նորա գնել
զգինի 'ի պէտս ընտանեաց իւրոց յայսմ ամ-
սեան հոկտեմբերի. զորս եթէ 'ի փոխ տացէ
ինձ այժմ, հարկաւորի գնել 'ի յաջորդ ամիս
կարի թանկագին. յոյր սակս չկամի տալ ինձ
փոխ, եթէ ես չպարտաւորեմ զիս 'ի լրանալ
տարւոյն հատուցանել նմա զհարիւր դահե-
կանն. և զայն հանդերձ յաւելուածով՝ զոր
ունէր ինքն ծախել 'ի գնել զգինին յամսեանն
մարտի և ապրիլի:

Ասեմ. թէ օրինաւոր է դաշնադրութ̃իդ.
միայն թէ իցեն 'ի նմա երեքին պայմանքդ:
Նախ՝ զի փոխն՝ զոր տայ ինձ պետրոսն ստու-
գիւ իցէ նմա պատճառ դադարելոյ շահուն,
կմ̃ ծագելոյ վնասուն: Ամին իրի եթէ պետրոսն
ունիցի զայլ դրամ 'ի պէտս բանի լումայափո-
խութ̃է, կմ̃ գնելոյ զգինի. դրամ ասեմ ազատ,
և ոչ սահմանեալ առ այլ արդասիս՝ ոչ կարէ
պահանջել ինչ 'ի պատճառս փոխատուութ̃է
100, դահեկանաց, ոչ զշահն դադարեալ՝ և
ոչ զվնասն ծագեալ: Երկրորդ՝ զի պետրոսն
ծանուսցէ ինձ զդադարեալ շահն, կամ զծա-
գեալ վնասն, զոր առ յինէն պահանջէ վճարել
'ի լրանալ տարւոյն. վասն զի ես յայնժամ
թերևս այսու ծանրութ̃է չառնուի յանձն զփոխ-

առութ՟ի դրամոյդ. վասն որոյ եթէ պետրոսն տայ ինձ փոխ առանց ինչ ազդ առնելոյ. և 'ի լրանալ տարւոյն յիմ վերայ դնէ զիւր զդադարեալ շահ կի՟ զվնասն ծագեալ 'ի պատճառս փոխ տալոյն ինձ, չեմ ես պարտական վճարելոյ ո՛չ զմին, և ո՛չ զմիւսն: Երրորդ՝ զի փոխատուն չկարէ պահանջել 'ի փոխառուէն ո՛չ զշահն դադարեալ և ո՛չ զվնասն ծագեալ մինչև է լեալ նմա այդ վնաս և զրկումն: Սմին իրի եթէ 'ի տուչուէ անդ փոխոյն հարիւր դահեկանի, զոր խնդրէր փոխառուն, փոխատուն պահիցէ ինքեան հնգետասան դահեկանս 'ի պատճառս յիշատակեալդ շահուն յապագայս դադարելոյ կի՟ վնասուն ծագելոյ՝ ապաքէն փոխն լինի 85, և ոչ հարիւր. ուստի անմարթ է փոխատուին պահել զհնգետասան դահեկանն: Եւ եթէ դադարեալ շահն կի՟ կրեալ վնասն՝ իցէ ներկայ գլխովին և մօտալուտ, և ո՛չ իսկ յայնպիսում դիպուածի մարթ է փոխատուին խորել զմասն ինչ 'ի գումարէ անտի փոխատուուէ. այլ շատ է պարտաւորել զփոխառուն 'ի հատուցանել զփոխն 'ի լրումն պայմանեալ ժամանակին. և 'ի վճարել միանգամայն զշահն դադարեալ, կամ զծագեալ վնաս փոխատուին:

Այլ արժան է գիտել. զի թէ՛ վնասն ծագեալ, և թէ՛ շահն դադարեալ 'ի յոյժ՝ է նուաստագին՝ քան զայն՝ որ յերևմ. ուստի յայն սակս իսկ պարտ է նուազեցուցանել 'ի գումարէ անտի՝ զոր ունի հատուցանել փոխառուն վ՟ դադարեալ շահուն կամ ծագեալ վնասուն: Յուշ լիցի և ես. զի եթէ փոխառուն յապաղեսցէ վճարել զփոխն ըստ պայմանեալ ժամանակին,

և անտի հասցէ փոխատուին ծագումն վնասու և դադարումն շահու, պարտաւորի փոխառուն հատուցանել զվնասն. Թէ և փոխատուն 'ի սկզբան անդ սակարկութե՛ չիցէ ինչ ազդեալ նմա զայսմանէ. և չիցէ դաշամբ պարտաւորեալ զնա 'ի կարկատել զվնասն: Իսկ եթէ փոխատուն, որ ետ ինձ 'ի փոխ զհարիւր դահեկանս առ ամ մի, 'ի լրանալ ամին՝ խնդրիցէ զայն յինէն այլ իմ անբաւական գտեալ 'ի հատուցանել՝ աղաչեցից զնա սպասել ամ մի ևս. բայց նա ոչ առնուցու յանձն, եթէ չհատուցից նմ չորս կամ վեց առ հարիւր, 'ի բաց հանեալ և զճշմարիտ շահն դադարեալ, և զվնասն ծագեալ. յայն դիպուած փոխատուն լինի վաշխառու. քանզի՝ 'ի սակս յապաղման և եթ ժամանակի հատուցման՝ փոխատուն ոչ կարէ բռնադատել կամ պահանջել ինչ աւելի: Վ՟ զի փոխատուն կամ կարէ, և կամ կամի զիջանել ընդ յապաղումն ժամանակի հատուցման. ուստի և պարտի ձրի լինել զիջումն. և կամ չկարէ, կամ ոչ կամի. և յայն դիպուած պարտի 'ի կիր արկանել զօրինական միջոցս առ 'ի ձեռս բերել զառնլիս իւր: Յայս սակս Աղեքսանդր Է դատապարտեաց զնախադ". խէ. զայն՝ Թէ * օրէն է փոխատուի պահանջել ինչ մի աւելի քան զգլուխն, եթէ պարտաւորեսցէ զանձն 'ի չխնդրել յետս զգլուխն մինչև ցժամանակ մի որոշեալ||:

Եւ պատճառ դատապարտութեն է. վ՟ զի պարտաւորութի չպահանջելոյ զգլուխ դրամոց առ ժամանակ մի՝ է ներքին և էական փոխատուութե. նմին իրի զօրօրինակ վաշխն է ապօրինաւոր, և յինքն փակէ զանիրաւութի, սա-

պէս եւ ապօրինաւոր լինի և անիրաւ պահան-
ջելն ինչ մի վասն այնր պարտաւորութեան. զոր
յանձն առնու փոխատուն չպահանջել զգլուխ
դրամոյն ընդ այսքան ժամանակ:

Բայց սակայն օրինաւորապէս մարթ է փո-
խատուին պահանջել զրաւ, կամ երաշխաւորու-
թիւն 'ի փոխառուէն վասն ապահովութեան փոխոյն
իւրոյ, այսու տարբերութեամբ. զի թէ գրաւն
իցէ պտղաբեր՝ չունի փոխատուն պահանջել
զպտուղս. զորս թէ առնուցու, համարիլ պար-
տին յօդուտ փոխառուին 'ի գլուխ փոխոյն.
Գլ. Երբ ընդդէմ. յղ. գրաւի: Ապա եթէ դաշն
կայցէ 'ի միջի, զի 'ի չհատուցանելն փոխառուին
զփոխն 'ի պարտուպատշաճ ժամանակի, կարօղ
լիցի փոխատուն սեպհականել ինքեան զգրաւն
և վաճառել 'ի հաշիւ փոխոյն, ասելի է թէ
ապօրինաւոր է դաշնադրութիւնդ. քանզի 'ի վերայ
դնէ փոխառուին զպարտաւորութիւն ինչ՝ զոր
ոչ ունի. որպէս՝ շնորհել փոխատուին զգրաւն՝ զոր
ետ վասն ապահովութեան պարտեաց: Ուստի փո-
խատուն ունի միայն իրաւունս ընդդէմ փոխ-
առուին վասն պահանջելոյ զվճար փոխոյն. և
յոչ կարելն առնուլ՝ պարտի 'ի ձեռն դատա-
ւորի պարտաւորել զնա վաճառել զգրաւն, և
դնով նորա վճար առնել փոխատուին. ապա թէ
ոչ՝ դաշնադրութիւն լինի վաշխառական. որպէս է
տեսանել 'ի Գլ. Նշանակեալ յաղագս գրաւի:

'Ի վերայ դաշնադրութեան փոխոյ կայ կոնդակ
տեառն մերոյ բենեդիկտ. ժդ. թուեալ 'ի ա. հոկտ.
1746. որոյ սկիզբն է. Այն ինչ եհաս. ուր բա-
ցատրէ ինչ ինչ առ տոկոսիս վերաբերեալ:

Ընդ բազում ժամանակս մինչ յուզեցաւ առ
[illegible]. արդեօք ընդունարանք դրաւի աղ-

քատի (որք կոչին լերինք բարեպաշտութեան
կամ գթութեան)։ զառաջինն կառուցեալ 'ի Պե-
րուճիա՝ յամի 1450։ իցէ՞ն վաշխառականք այնու-
օրինօք, զի ընդունելով զգրաւ՝ տուեալ լինի
աղքատաց դրամ կամ ցորեան. զի հատուսցեն
զպարտսն 'ի ժամադրեալ պահու. և յոչն հա-
տուցանել՝ յայնժամ վաճառին գրաւքն, և
ընդունարանն ընդունի ինչ մի աւելի քան ըզ-
գլուխ փոխոյն. և մնացեալն պարտի վճարել
պարտապանին։ Ընդդէմ զինեցան այսպիսի
ընդունարանաց՝ Կայետանոս, և Սոտոս՝ իբրև
վաշխառականաց։ Բայց Լեւոն Ժ. 'ի ժողով.
Լատեր. Ե. 'ի նիստն Ե. հաւանութեամբ սրբոյ ժո-
ղովոյն յայտ արար, թէ օրինաւոր են այնպիսի
ընդունարանք. վասն զի որ ինչ պահանջի՝ ոչ
պահանջի բանիւ փոխոյն, այլ 'ի վարձ վերա-
կացուաց ընդունարանին։ Նաև զի վտանգաւոր
է բանս, սրբազան ժողովն սինհոդոսի գրե-
լով առ արքեպիսկոպոսն Նէապօլսոյ, հաստատեաց՝ զի
մի կարասցէ ընդունել ինչ աւելի քան զգլուխն,
մինչև իցէ հարցեալ զսուրբ աթոռն։

Այսպէս գրէ սրբազան ժողովն՝ ըստ որում
նշանակեալ կայ 'ի հաւաքման վճռոց. Գիրք ԺԵ.
* բարեպաշտական տեղիք և նուիրական տունք
(կամ տաճարք) որք ընդունին աւանդս, յոր-
ժամ փոխ տան կարօտելոց զինչս, յետ առնլոյ
զգրաւ՝ չկարեն առնուլ ինչ մի 'ի փոխառուաց.
եթէ ոչ տնօրինմամբ առաքելական դահին ||։
Որ պէտք են նշանակել և զայն. զի չէ՛ օրէն
եբրայեցւոց պահանջել տոկոսիս 'ի քրիստո-
նէից։ Ընդդէմ եբրայեցիքն արդարացուցա-
նեն զանձինս բանիւ գրոց. Բ. օրէն. ԻԳ. 19.
20. * Մի՛ տացես եղբօր քում արծաթ վաշ-

խիւ. և մի՛ զկերակուր շարխատիւ. և մի՛ ինչ տոկոսեօք, այլ օտարին‖ : (ըստ մեզ, զնմ ինչ փոխ տայցես օտարին :) Մ՝արթ էր նշանակել զնոսա 'ի բանից հարց, թէ չէ՛ թոյլ տուեալ եբրայեցւոց պահանջել զտոկոսիս, այլ ներեալ իբր փոքր չար. բայց քանզի նոքա յոչինչ գրեն զայնպիսի պատճառս, մեք միայն արգելուլ զնոսա վճռովք և հրովարտակօք :

Այլ աստանօր ծագի տարակոյս. արգեօք օրինաւո՞ր իցէ դաշն, որ կոչի 'ի Հայէլ. զորօրինակ՝ տամ ես տիտիոսի զ1000, դահեկանս 'ի վայելել. և նա տայ ինձ զայգի կամ զտուն մի, զի ես վայելեցից՝ մինչև հատուսցէ ինձ զ1000, դահեկանն իմ: Առ այս պարտ է ասել. եթէ տուեալն 'ի վայելել երկուստեք իցէ կալուած պտղաւէտ, և պտուղքն իցեն զուգակշիռ, լինի օրինաւոր. զորօրինակ՝ տամ տիտիոսի տուն մի 'ի վայելել. և նա տայ ինձ այգի մի 'ի վայելել. այլ ո՛չ այդպէս եթէ տամ նմա 1000. դահեկանս. և նա տայ ինձ զտուն կամ զայգի 'ի վայելել. զի որովհետև դրամն 'ի բնութէ իւրմէ ամուլ է և անբերրի, և միայն մարթի պտղաբեր լինել իմով ճարտարութեամբ. իսկ 'ի միւս կողմանէ եթէ տունն և եթէ այգին 'ի բնութէ իւրեանց են պտղաւէտք. յոյր սակս լինէր դաշնադրութիւն անիրաւ և վաշխառուական. զի է ըստ ինքեան փոխ ինչ պատրուակեալ, յորմէ չէ՛ մարթ թափել ինչ:

Պետրոս խնդրէ յինէն 1000. դահեկանս 'ի փոխ ցամ մի. և ինձ կամք են տալ նմա. այլ զի գիտեմ ես՝ թէ նա տարտամ է 'ի վճարել, դաշնադիր լինիմ ընդ նմա՝ թէ պարտի հատուցանել ինձ զդրամն 'ի կատարել տարւոյն.

զոր եթէ յապաղիցէ՝ պարտաւոր լիցի հատուցանել զտասն դահեկանս 'ի պատիժ. արդեօք օրինաւո՞ր իցէ այս դաշն: Ասեմ օրինաւոր է ըստ գլխոյն Օրէնք առ ձեռն. և ըստ մեկնութեան՝ անդ. յդ. պատճառ պահմամբ առաջիկայ պայմանացս. ա՛ զի դիտաւորութիւն փոխատուին իցէ ուղիղ՝ ցայնվայր 'ի վերայ դնելով փոխառուին զպատիժ տուգանաց, եթէ չվճարիցէ զփոխն 'ի սահմանեալ ժամանակին. ոչ զի 'ի ձեռս բերցէ զիւրն առաւել ապահովութիւն. և միանգամայն լիցի խթան յապաղկոտութեան նորա. բ՝ զի մի գիտասցէ փոխատուն հաւանականաբար, թէ փոխառուն ունի լինել 'ի վիճակի անկարութեան 'ի ժամանակի վճարելոյ զփոխն. վասն զի յայնժամ զտուգանսն դնէր վասն փոխոյն, որ է վաշխառական. գ՝ զի եթէ փոխառուն չվճարիցէ 'ի պայմանեալ ժամանակին, և այն անկարութիւն լեալ իցէ նմա առանց ինչ իւրոց յանցանաց, անմարթ է պահանջել տուգանս ոչ ըստ մասին և ոչ ըստ բոլորին. դ՝ զի երբ փոխառուն վճարէ դէթ զմի բաժինն պարտուց ըն սահմանեալ ժամանակին՝ անմարթ է պարտաւորել զնա վճարել զտուգանսն ողջոյն, այլ ըստ մասին մնացելոյ. որ և է դիպուածն 'ի նախայիշատակեալ գլ. Օրէնք առ ձեռն, հանդերձ մեկնութեամբ անդ:

Տիտոս՝ որոյ ընկալեալ էր առ յինէն դահեկանս 50, առանց տալոյ ինչ յետկար, դայ դարձեալ խնդրել դահեկանս 50. և ես զիջանիմ կամաց նորա, այլ այսու դաշամբ, զի տացէ ինձ մուրհակ հարիւր դահեկանի. արդ միթէ մարթ իցէ առնել զայդ առանց վաշխառութեան: Պատասխանեմ, այո՛. քանզի վաշխ յայնժամ

լինի՝ յորժամ 'ի վ՛ր դնի փոխառուին պարտք ինչ՝ զոր չունի յարդարութե՛. այլ քանզի տիտիոս ունէր պարտս յարդարութե՛ տալոյ ինձ յետկար. ապա մարթ է ինձ պարտաւորել զնա տալ ինձ զյետկար առանց անկանելոյ 'ի վաշխառութի՛ որով և պահեմ զօրէնս՝ ազատելոյ զանձն յանիրաւ խոշտանգանաց: Տեսցուք արդ՝ թէ զի՞նչ իցէ վաշխն, կամ տոկոսիք:

Վաշխն է շահ յառաջ եկեալ անընդմիջապէս 'ի փոխոյն. և այս քառակի. յայտնի, պատրուակեալ, իրական, և մտաւոր:

Յայտնի վաշխն է՝ յորժամ տայ ոք 'ի փոխ զդրամ, կամ զայլ ինչ՝ որ ծախի կիրառութբ՛. և ապա պահանջէ ինչ մի աւելի՝ քան զոր ետն 'ի փոխ. զորօրինակ՝ տամ տիտիոսի 'ի փոխ 100 դահեկանս. և յետ տարւոյ միոյ պահանջեմ 'ի նմանէ դահեկանս 110:

Պատրուակեալ վաշխն է՝ յորժամ ընդ այլով պատրուակաւ, և ոչ ը՛ անուամբ փոխատուութեան խնդրի աւելի ինչ. զորօրինակ՝ տիտիոս գայ 'ի կրպակ իմ գնել զասուի յապառիկ քան կանգնաւ չափ, արդ ուր արժէք կանգնոյ ասուոյն է հինգ դահեկան, ես պահանջեմ վեց վասն յապաղման 'ի վճարել. այս է աւադիկ վաշխ պատրուակեալ. գլ. Խորհուրդ հարցանէ վճ՛ փոխուէսաց: Նմին իրի Իննովկ. ժա՛. դատապարտեաց զկմ՛. նախադասութիւն զայն. * Քանզի առ ձեռն պատրաստ դրամն մեծագին է քան զերբեմն առնլին, և ոչ ոք է՝ որ ոչ մեծ համարեսցի զներկայ դրամն քան զապագայն. կարող է փոխատուն ինչ մի աւելի քան զգլուխն պահանջել 'ի փոխառուէն. և սովին տիտղոսիւ արդարանալ 'ի վաշխառութե՛ ||: Նմին իրի 'ոքն

Թովմաս. Է. Է. խն. հէ. յօդ. 2. առ. 7. ուսուցանէ, թէ թանկագին վաճառելն մի ապասելոյ դրամոյն է վաշխ. վասն զի որ միանգամ զվաճառ ինչ՝ որոյ գինն իցէ հարիւր, վաճառիցէ հարիւրտասն ապառիկ դրամոյ, զնոյն գործէ՝ ոք որ տայ ՚ի փոխ 100, զի առցէ 110: Նաեւ ոչ զօրէ ինչ ասելն, թէ ամ վաճառականք, որք միանգամ յապառիկ վաճառեն՝ առաւել թանկագին վաճառեն՝ քան զկանխիկն: Վասն զի առ այդ լինի պատասխանի, թէ կամ վաճառեն ՚ի սահմանի արդար գնոյ, թէպէտեւ ճիշդ գնոյ. եւ յայնժամ մարթին առնել առանց անիրաւութեան եւ կործանման ՚ի վաշխառութենէ. եւ կամ վաճառեն արտաքոյ սահմանի արդար գնոյ, եւ յայնժամ անկանին ՚ի վաշխառութի:

Իրական վաշխն է՝ յորժամ յայտնապէս դնի դաշն վճարելոյ ինչ մի առաւել քան զգումարն տուեալ ՚ի փոխ:

Մտաւոր վաշխն է՝ յորժամ ոչ դնի ինչ դաշն, բայց փոխատուն տայ զդրամն՝ յուսով առնլոյ ինչ ՚ի փոխառուէն. ապա թէ ոչ՝ չտայր նմա զդրամն ՚ի փոխ:

Խնդրի աստանօր, մի թէ վաշխառութի՞ւն իցէ, յորժամ փոխ տայ ոք յուսով ընդունելոյ զփոխարէն ինչ ՚ի փոխառուէն առ մարդասիրութէ, կամ երախտագիտութէ նորա: Պատասխանի, եթէ գլխաւորաբար դիտեսցի փոխարինութի փոխառուին՝ թէպէտեւ յառաջ եկեալ ՚ի մարդասիրութէ եւ ՚ի շնորհապարտութէ նր՝ լինի գործել զմտաւոր վաշխառութի. Գւ. Խորհուրդ եհարց շտոնեաց: Իսկ եթէ գլխաւորաբար դիտեսցի բարերարել փոխառուին, եւ երկրորդաբար լինիցի ակնունել ինչ ձրի ե-

բախտագիտութ՟ ’ի նմանէ , ոչ լինի մեղանչել ։
Բանզի ’ի զուգընթացութ՟ե կրկին համեստ
շարժառութից առ առնել զմի և զնոյն ներգոր-
ծութ՟ի , մին նախնական և միւսն երկրորդա-
կան . եթէ նախապէս երկրորդական վախճանն
դիտեսցի և ոչ նախնականն՝ լինի մեղք . այլ
ոչ այնպէս եթէ նախ նախնականն դիտեսցի ,
ապա երկրորդականն ։ Սորին սակս ևս քան
զևս չէ օրինաւոր պահանջել ինչ աւելի քան
զգլուխ դրամոյ իբրև պարտականութիւն ընդ-
տիտղոսիւ շնորհապարտութ՟ե և մարդասիրու-
թ՟ե ։ Իսկ ըստ այսմ Իննովկենտիոս Ժ՟Ա . դա-
տապարտեաց զնախադասութ՟ին խէ՟ . զայն՝ թէ
* Ոչ է վաշխառութ՟ի , երբ ինչ մի աւելի քան
զգլուխն պահանջի՝ ո՟պ պարտականութ՟ի յա-
ռաջ եկեալ ’ի բարեսիրութ՟է և ’ի շնորհապար-
տութ՟է , այլ միայն՝ եթէ պահանջեսցի որպէս
պարտականութիւն արդարութ՟ե ‖ ։ Սան զի
ցայնվայր է վաշխ , ցորչափ անմիջապէս ’ի փո-
խոյն յառաջ գայ շահ ինչ փոխատուին , և վնաս
ինչ փոխառուին . ո՟պ և լինի իսկ յայդ դիպ-
ուած ։ Իսկ ոչ զօրէ ինչ այն պատասխանի , թէ
պահանջի այդ ’ի մարդասիրութենէ , և ոչ յարդարու-
թենէ . զի ցորչափ ’ի փոխատուն ենթադրի իրա-
ւունք պահանջելոյ , իրաւունքն այն յոչ այլ ինչ
մարթի հիմնիլ՝ բայց յայն՝ որ անկ է նմա յար-
դարութենէ ։ Ապա եթէ փոխառուն առանց ինչ
նախընթաց դաշին ’ի վճարել անդ զփոխն կա-
մեսցի ցուցանել փոխատուին զերախտագիտու-
թ՟ի և զշնորհապարտութ՟ի ինչ , ոչինչ մեղանչէ
առ յընդունելն զայն . ապա թէ ոչ՝ լինէր ինքն
’ի յուսեգոյն վիճակի՝ քան զոչ տուօղս զփոխ ։
Ա՟յ այսորիկ ’ի վաշխ համարեալ է զինչ և իցէ

բեռն՝ զոր փոխատուն դնէ 'ի վ՜ր փոխառուին պատճառաւ փոխոյ. ուր փոխառուն չէր առ այն պարտական. ուստի եթէ ոք պարտաւորեսցէ զընկեր իւր գնալ 'ի կրպակ իւր վ՜ս գնելոյ զապրանս, խոստանալով յայնժամ վաճառել նմա դիւրագնի, մեղանչէ մեղօք վաշխառութե՜ : Սոյնպէս եւ յորժամ պարտաւորեսցէ զնա տալ ինքեան փոխ՝ երբ պէտս ունիցի :

Տէտիոս գնէ յապառիկս 'ի վաճառականէ զպաւրակ մի չուխայի կարի ծանրագին՝ բայց յարդար սահմանի. և ապա կարօտեալ դրամոյ՝ դառնայ առ վաճառականն և աղաչէ զնա յետս առնուլ զայն դիւրագնի. արդ՝ խնդրի թէ սակարկութիւդ այդ իցէ՞ արդեօք օրինաւոր : Պատասխանի, եթէ չգուցէ դաշն նախընթաց վ՜ն անդրէն վաճառելոյ, կամ դիւրագին գնելոյ զչուխայն, և առանց այնպիսի դիտաւորութե՜ վաճառեալ իցէ վաճառօղն, և գնօղն գնեալ բարեմտութ՜բ, թէ և յետոյ առ մերահաս ինչ հարկի վերստին վաճառեսցէ ըստ ասացելումդ՝ չէ՛ ապօրինաւոր, և ո՛չ վաշխառական : Այլ եթէ կայցէ դաշն, կա՜մ դիտաւորութի՜ 'ի վաճառականն՝ յայնժամ լինի վաշխառական, և սակարկութի՜ այդպիսի կոչի, Մօհատրա, զոր դատապարտեաց Ինովկենտիոս Ժա՜. 'ի նախադասութե՜ անդ. * Դաշնադրութիւն մօհադրա է օրինաւոր նաև 'ի կարգի նոյն անձին, և հանդերձ դաշամբ վերստին վաճառելոյ՝ որ կանխաւ լեալ իցէ դիտաւորութ՜բ շահօգտութե՜ ‖ : Պատճառ դատապարտութեան է, զի յայդմ դաշնադրութե՜ փակի պատրուակեալ վաշխ. վասն զի յայնժամ վաճառականն տայ

կեղծ գնողի զտասն զի առցէ 'ի նմանէ զերկոտասան կամ զերեքտասան ։

Ժամ է մատչիլ 'ի խաղն, որ է դաշնադրութի̄ յաճախեալ քան զայլս. այս է՝ յորժամ խաղարկուն 'ի վտանգի դնէ զիւր դրամս յուսով ստանալոյ այնու զդրամս այլոց ։ Ընդհանրապէս խօսելով՝ խաղն ըստ ինքեան չէ ապօրինաւոր, միայն եթէ լինիցի ըստ պարտուպատշաճ պայմանաց, որք են. ա̄՝ յորժամ 'ի խաղի անդ չգտցէ մերձաւոր վտանգ ինչ մահուչափ մեղաց. այս է՝ հայհոյութեան, երդման, նախատանաց, ևն. բ̄՝ յորժամ չպարտիցին 'ի նոյն դաւ, կ̃ նենգութի̄ ընդդէմ օրինաց խաղուց. գ̄՝ յորժամ չլինիցի ինչ հրապոյրք ձգօղք 'ի խաղալ 'ի ձեռն պատրանաց, բռնադատութե̄, և ծանր երկիւղի. դ̄՝ յորժամ չլինիցի խաղալ ընդ. անձին՝ որ չունի իշխանութի̄ խաղալոյ. իբր զի չկարէ օտարացուցանել, պարգեւել, կամ ծախել՝ զոր 'ի ձեռին ունի. ե̄՝ յորժամ խաղն չիցէ յայտնապէս արգելեալ 'ի քաղաքական կ̃ 'ի կանոնական օրինաց. զ̄՝ յորժամ 'ի խաղէ անտի ոչինչ ծանր գայթակղութի̄, կ̃ վնաս մեծ հասանիցէ ում և իցէ անձին, ևն ։

Խաղն լինի մահուչափ մեղք. ա̄՝ յայն՝ որ միանգամ սովոր իցէ յիշոցնատու լինել, երդնուլ, և ծանուցս անիրաւիլ ընդդէմ ընկերին. և այս վասն վտանգին՝ յոր արկանէ զանձն. բ̄՝ յորժամ 'ի խաղ անդր մտանեն նենգութի̄ք, և խաբէութի̄ք. զորօրինակ՝ առնել նշանս 'ի թուղթս, կամ թագուցանել զիւր թուղթս. կամ տեսանել զթուղթս խաղարկցին. և լինի մեղք մահուչափ՝ եթէ 'ի նիւթ ծանր յաղթես-

ցի ընկերն. մինչզի յաղթօղն պարտաւորի հա-
տուցանել յետս. Գ՝ յորժամ խաղարկու ոք
սպառնալեօք, խաբէութբ, և երկիւղիւ ձգէ
զոք 'ի խաղալ. և յայդ ևս դիպուած ծանուցանս
մեղանչէ, և պարտաւորի հատուցանել՝ եթէ
նիւթն իցէ ծանր. Դ՝ յորժամ խաղայցէ ոք ընդ
որդիս տանուտն, ընդ որբս և ը կրօնաւորս,
որոց ոչ անմարթ է խաղալ և շահիլ 'ի խաղս՝
սոյնպէս և անպարտական են 'ի հատուցանել՝
եթէ կորուսանեն: Նմին իրի որ ոք 'ի նիւթ
ծանր բուռն առնէ քաղել ինչ 'ի նոյանէ իբրև
'ի յաղթելոյ 'ի խաղի անդ՝ մեղանչէ մահուչափ
մեղօք, և պարտաւորի 'ի հատուցումն: Արտա-
քոյ նման դիպուածոյս որդիք տանուտեարց՝
երբ խաղան դրամովք՝ որք կոչին բանակաց
կամ իբր բանակաց. (ըստ ստացելոց այլուստ
իւիք օրինակաւ) և կմ երբ խաղան դրամովք՝
որք շնորհին նց 'ի հօրէն 'ի պէտս զբօսանաց.
ոչ և կրօնաւորք՝ որք խաղան 'ի թոյլտուութէ
մեծաւորաց. այլ սոքա չպարտին թոյլ տալ ե-
թէ ոչ՝ սակաւիկ և եթ դրամովք խաղալ. Ե՝
խաղն թղթոց ընդհանրապէս արգելեալ է 'ի
քաղաքական օրինաց. ոչ յայտ է յօրէնս 1. և
3. յօր. յաղագս Հէգարհօսաց. և ոչ աստիճանա-
ւոր կղերիկոսաց յայտնապէս արգելեալ է 'ի
Գլ. Կղէր. Ե. յաղագս Վարուց և հանեստութէ կղերաց.
և 'ի Գլ. 'ի ԴՁ սէրբէչէաց. յաղագս ստատէլաղանցու-
թէց ստամնորդաց:

Այդ է. թէ քաղաքական օրէնք վս խա-
ղուց թղթոց իսպառ և առհասարակ խափա-
նեալ են 'ի հակառակ սովորութէ. այլ ոչ նոյն-
պէս զխաղուց այնպիսի թղթոց. որք որոշակի

դատարպատեալ են. յորոց սակի են խաղն կոչեցեալ պասէթա, և փարաօն, եւն. զորս պապն առանձինն որոշակի արգել ամենեցուն: Այլև երբ որ խաղայ զայդոսիկ՝ մահու չափ մեղանչէ. բայց ոչ պարտաւորի հատուցանել զոր ստացաւն յաղթութբ, մինչև ստիպեալ վճռով դատաւորի: Իսկ որ խաղայ ապառիկ և կորուսանէ՝ ոչ պարտաւորի հատուցանել 'ի խղճէ, միայն թէ չերդնուցու 'ի հատուցանել. զի յայդ դիպուած պարտաւորի բանիւ երդման. թէպէտև զկնի վճարելոյն կարէ յետս պահանջել զոր վճարեացն՝ եթէ միանգամայն չիցէ երդուեալ չխնդրել վերստին: Նաև վն կղերիկոսաց ոք աստիճանաւորաց առանձինն արգելեալ է ընդ ծանր պատժովք առհասարակ խաղն թղթոց, ըստ վերոյյիշատակեալ կանոնաց զոր նորոգեաց վերստին ժողովն տրիդ". 'Ի Նիստ. 22. յղ. Վերանոր. գլ. Ա. և 'Ի Նիստ. 24. գլ. ԺԲ. և 'ի վախճանի ժող. հռովմ. Տախագէր. 16. գլ. Դ: Այլև երբ մեծամեծ վարդապետք յայն կարծիս են, թէ ոք աստիճանաւոր կղերիկոսք որք խաղան զթուղթ ոչ վասն զուարճութե և եթ և դուն ուրեմն, այլ ստէպ ստէպ յաճախութբ և վն շահելոյ, ծանունս մեղանչեն: Տես զԲոնակլին. յաղագս խաղ. Ա. համար. 21. Նռեմ, Թայն Բէ ղէղծցէն: Այլ 'ի մերումս թեմի արգելեալ է խաղն թղթոց ոք աստիճանաւորաց 'ի հրապարակական տեղւոջ ընդ պատժով կախման նոյին իսկ գործոյ. Է՝ յորժամ 'ի խաղէ անտի զհետ տայ գայթակղութե ընկերին ըստ որում յոլովակի սովոր է լինել 'ի խաղուց եկեղեցականաց, և յեղելոցն 'ի հրապարակական տեղիս

կ՟ ՚ի ո՛ր տեղիս, ևս առաւել յորժամ ՚ի խաղէ անտի վնաս մեծ ծագի ընտանեաց կ՟ այլոց, լինի մեղք մահուչափ :

Ս՟ այսորիկ օրէնք հռովմայեցւոց աքսորանօք, և այլովք խստագոյն պատժովք պատժէին՝ որք զթուղթս խաղային : Կայսրն յուստիանոս օրէնք . ա . հրով . յղ . ալէատորեաց՝ կարգեաց, զի յաղթեալն ՚ի խաղս թղթոց մի՛ պարտաւորեսցի հատուցանել . և թէ երբէք հատուցեալ իցէ, եթէ ինքն, և եթէ ժառանգք նորա զկնի երեսնամեայ ժամանակաց անգամ՝ կարող լիցին յետս պահանջել ՚ի յաղթողէ անտի : Առաւել ողջամիտ կարծիք ա՟ծաբանից այն է . թէ կրօնաւորք ծանունս մեղանչեն՝ որք խաղայցեն թուղթս ո՛ր և է օրինակաւ . իսկ ո՛ր աստիճանաւորաց առանձինն արգելեալ լինին . ՚ի Գլ . Կղեմենտեանս, յաղագս կենաց և համեստութե կղերիկոսաց : և ՚ի Գլ . ՚ի ԴՋ սերբելեաց, յաղագս աւելազանցութեանց երիցանց : և ՚ի կանոնն . ԽԷ . և ԽԳ . համ ԼԷ . ՚ի ԴՋ հասարակ ատենի լատերանեաց, ընդ պատժով բանադրանաց արգելեալ լինի կղերիկոսաց խաղն թղթոց : Նաև ժողովն եղիբերդեան ՚ի կանոնն ՀԹ . վճիռ եդ մեկնել ՚ի հաղորդութէ զամենեսին զնոսա՝ որ խաղան զթուղթ : Համարեցաւ Աղասպինա թէ քրիստոնէից ո՛չ առ այլ ինչ արգելեալ եղև խաղն թղթոց խստագոյն պատժովք՝ բայց զի յայնժամ չև էր տակաւին անհետ եղեալ սնոտիապաշտութի՛ն հեթանոսական . իբր զի ՚ի թուղթս անդ կային պատկերք չ՟ծոց . և ՚ի նոյին իսկ անուանեալ լինէին . բայց՝ եթէ ճշմարիտ լինէր այդ՝ պատժեալ լինէին հաւատացեալք այնպիսի իրօք՝ որք անկ էին հեթանոսաց : Ապա ճշմարիտ

ևս է. որպէս իմաստութք յուշ առնէ Բենեդիկտոս ԺԴ. թէ արգելաւ խաղք մանաւորապէս եկեղեցականաց վասն պատճառաց, զորս դատապարտեցին նաև ( հեթանոս մատենագիրք ) Կոռնելիոս տակիտոս 'ի գիրս յաղագս վարուց գերմանացւոց. գլ. ԻԴ. և Ամիանոս մարկեղլինոս. գիրք. ԺԴ. գլ. ԺԵ. և գիրք. ԻԸ. գլ. ԻԶ. իբր զի մարդիկ 'ի պատճառս խաղուց բերեալ լինէին 'ի նենգութիս, 'ի ստութիս, յերդմնազանցութիս, 'ի գողութիս, և յայլ անհեթեթ ապիրատութիս. Ժող. ԲԵՆ. գլ. Ժ. ԲԻ. 1:

Իսկ Ժողովն տրիդենտեան 'ի Նիստ. 24. գլ. ԺԲ. ոչ միայն յայս ինչ կամ յայն ինչ խաղէ, այլ առհասարակ յամ ապօրինաւոր խաղուց պատուիրէ եկեղեցականաց հրաժարիլ. ապաստան առնելով 'ի դատաստան եպիսկոպոսաց սահմանել, թէ զո՞ր խաղ պարտ իցէ համարել ապօրինաւոր: Աստանօր տարակոյս ընդ մէջ մտանէ, արդեօք պա՞րտ իցէ 'ի համար արկանել ապօրինաւոր խաղուց և զսատրինջ:

Զայս խաղ դատապարտեաց նոյն Պետրոս դամիանեան 'ի գործս Է. գլ. Է. հատ. 3. ծանր կշտամբանս ածելով 'ի վերայ եպիսին փլորենտիոյ. զոր եգիտ 'ի խաղս սատրընջոյ իբրև 'ի պատճառս անցուցանելոյ զժամանակ: Եւ կարդինալ Բարոնիոս յամին 1061. պաշտպանէ զԴամիանեանն և զվճիռ նորա: * Թերևս ասէ եպերեսցէ զնա իմաստակ ոք, որպէս թէ 'ի կարգս նարտից վերածէ զսատրինջ, զոր խաղայ ոք ոչ ըստ բաղդի ձգելով՝ ոսկր 'ի նարտս, այլ զօրութի մտաց ծախելով: Թող այդպէս լիցի. բայց ամ քահանայք պարտին անշուշտ կապիլ 'ի բանս պօղոսի, որ ասէ. թէ ոչ օրէն

է առնել՝ զորս չեն յօգուտ. և թէ չէ օրէն գործել զայն ինչ՝ որ ո՛չն շինէ ‖:

Իսկ մեսիգեան ժողովն յամին 1585. հաստատեալ 'ի սիքստոսէ Ե. ներէ կղերիկոսաց խաղալ զսատրինջ. այլ 'ի ծածուկ վայրի և 'ի պէտս հաւմեստ զուարճութեան հանդերձ օրինադրութեամբ՝ չխաղալոյ երբէք շատ դրամովք: Այլ է ժխտելի Ց. ասից նորին Թովմայի. թէ խաղն մարթի վերածիլ յառաքինութիւն, բայց խնդրին բազում թէութիւնք. յորոց 'ի պակասիլն՝ խաղն դառնայ 'ի մոլութիւն՝ յաւէտ յեկեղեցականս, յորոց դուն ուրեք լինի 'ի կիր արկանել առանց գայթակղութեան: Այլ ո՛չ իսկ՝ որոց բովանդակ ուշն կապեալ իցէ ընդ խաղն, մարթի ազատ մնալ 'ի յանցուածոյ սովորութեան. որովհետև զսովորութի այդպիսի իբրև զյայտնի ապականարար՝ մերժեաց Իննովկենտիոս Գ. 'ի գլ. 'ի ՃՁ տիրէլեաց. ժա. յղ. առէլաղանցուցէց էրէցանց:

Պարտի խոստովանահայրն յանդիման առնել խաղասիրաց, թէ խաղն է հրապարականան յայտարարութիւն ագահութեան և ընչասիրութեան, որ առթէ զանհնարին չարիս. և թէ հանդերձ կորստեամբ ընչից և ժամանակի տայ կորուսանել և զբանականութիւն և զմիտս: Յուշ արասցէ և զառածն նշանակեալ 'ի գրաւինայ. յղ. օրէնաց և վճռ. գլ. ճդ. ըէ * Ս.գրնարտախաղից վատահամբաւ ձանաչի յօրինաց ‖:

Այլ վս բաստի՝ որ է պէ՛ս արժան է գիտել. զի այդ պարտի լինիլ յիրս հաւասարս. այս է՝ զի ստուգութիւն իցէ անծանօթ այսմ և այնմ կողման: Այլ առ վաւերութիւն այսպիսի դաշնադրութեան՝ խնդրին այս պայմանք. Ա. զի իրն՝

զորմէ է բան՝ երկուստեք առեալ լիցի նովին մտօք. Է՝ զի երկոցունց եւս անյայտ իցէ ստուգութ՟ին. ապա թէ ոչ՝ չլինէր եթէ 'ի յոյսն, և եթէ 'ի վտանգն հաւասարութ՟ին այն, որ խնդրի յարդար բաստն. որովհետև բաստն է դաշնադրութիւն ինչ ծանրաբեռն. որով լինի գնել զյոյսն շահելոյ վտանգաւ կորստեան։ Սորին վ՟ս եթէ ոք հաւաստի իցէ 'ի վ՟ր իրաց ինչ՝ կամ դիպուածոյ իրիք՝ պարտաւորի հատուցանել զոր ստացաւն, թէ և կանխաւ ասացեալ իցէ ցընկերն՝ թէ ես հաւաստի եմ, և նա տակաւին իշխեալ իցէ մտանել 'ի բաստ։ Պատճառն է, զի սա չկամի պարգև տալ, այլ միայն խոստաբանել բաստիւ. յոյր սակս դաշն այնպիսի է անվաւեր. ո՟պ անվաւեր է գնել գոհար սուտ փոխան պատուականի. թէպէտև ստութ՟ին ազդեալ իցէ գնողին, և նա տակաւին չիցէ հաւատացեալ։ Պուկոս, Անդոյէն, և այլք։

Մնայ մեզ արդ ճառել զվաճառելոյ և զգնելոյ։ Արդ՝ որպէս գնելն է սակարկութ՟ի ինչ, յորում 'ի ձեռն որոշեալ դրամոյ ստացեալ լինի տ՟րութ՟ի իրի ինչ. նոյնպէս և վաճառելն է սակարկութ՟ի ինչ, յորում 'ի ձեռն որոշ դրամոյ տէրութ՟ի որ և իցէ իրի փոխանցի առ այլ անձն։ Երեք ինչ խնդրին առ վաւերութ՟ի այսր դաշնադրութե՟։ Հաճուի՟ վաճառողին և գնողին։ Իրն՝ որ գնի կ՟մ վաճառի։ Եւ որոշեալ գին դրամոյ՝ զոր ընդունի վաճառողն, և վճարէ գնողն։

Այլ աստանօր ծագէ տարակոյս միթէ առ վաւեր սակարկութ՟ի հարկաւոր իցէ՞ ներգործութ՟ե վճարել զդրամն 'ի կողմանէ գնողին.

և ներգործութիւն աւանդել զգին 'ի կողմանէ վաճառողին, թէ շատ իցէ արդեօք երկոցունց փոխադարձ հաւանութիւն:

Պատասխանեմ թէ, շատ է փոխադարձ հաւանութիւն. միայն թէ որոշեսցի դրամն՝ գին վաճառին. և այն որոշումն հաճելի իցէ երկոցունց կողմանց. ևս և չիցէ գիտեալ 'ի դաշնակցաց՝ հաստատել զգինն մուրհակաւ կամ գրով. քանզի յայդ դիպուած սակարկութիւն ոչ լինի կատարեալ՝ եթէ ոչ յօրինեսցի գիրն: Աւստի եթէ տիտիոս գնեսցէ երիվար մի 'ի պետրոսէ երեսուն դահեկանի. և թողուցու զայն առ պետրոսի. եթէ կորիցէ երիվարն առանց ինչ յանցանաց պետրոսին՝ երիվարն կորընչի տիտիոսի. և տիտիոս պարտաւորի վճարել պետրոսի զերեսուն դահեկանն. կամ եթէ արդէն վճարեալ իցէ՝ ոչ կարէ պահանջել յետս:

Բազում պայմանք խնդրին. որպէս զի դաշնադրութիւնդ այդ արդար լինիցի. և նախ զառաջինն խնդրի հաւասարութիւն վաճառին ընդ գնոյն, որով գնի ինչ և վաճառի: Երկքին են ազգ գնոյն. մին է գինն օրինական՝ որ հիմնի յանբաժանելի ինչ սահմանեալ յիշխանէն, զոր չկարեն երբէք փոփոխել դաշնադիրք, և ոչ իւիք դոյզն մասամբ. ապա թէ ոչ՝ լինի միշտ մեղանչել. և եթէ փոփոխութիւն իցէ 'ի նիւթ ծանր՝ լինի մեղք մահուչափ. որպէս է գին նկանակի հացագործաց, ևն: Իսկ այլ է գինն հասարակական, որ կարգեալ լինի 'ի հասարակ վարկմանէ արանց հմտագունից, որ ոչ հիմնի յանբաժանելին. այլ աճէ և նուազի ըստ հանգամանաց տեղւոյ և ժամանակի. ըստ առատութե

և նուաղութեան վաճառուց. և ըստ բազմութեան և սակաւութեան գնողաց: Այս գին հասարակական քանզի որոշի ըստ կարծեաց յոլովից առանց հմտագունից. յորոց ոմանք աւելի և ոմանք նուազ յարգեն զմի և զնոյն վաճառ, նմին իրի բաժանի 'ի գին վերին, միջին՝ և ստորին: Եւ այս երրեակ գինք կացուցանեն զհասարակ չափ արդար գնոց վաճառուց. նորին մն վաճառողն ոչ անիրաւի, եթէ զնոյն վաճառ վաճառէ երբեմն ստորին, երբեմն վերին, և երբեմն միջին գնով. Մնայ միայն դժուարութիւն՝ յորոշել անդ թէ որո՞վ չափով պարտի առաւելուլ վերին կամ բարձր գինն քան զմիջինն և քան զստորինն: Ըստ կայսերական իրաւանց բարձր գինն կարէ առաւելուլ քան զմիջինն հնգիւ կամ վեցիւ չափ առ հարիւրն. ըստ որում ազդ առնէ հայրն Կամպիոն. Գլ. Է. յաղագս ընկերութե. հՏ. 8: Վասն որոյ եթէ միջին գին իրիք վաճառոյ իցէ տասն դահեկան, այն՝ որ վաճառէ զայդ մետասան դահեկանի, կամ որ գնէ զայն ինն դահեկանի՝ գործէ զանիրաւութիւն. քանզի ըստ համեմատութեան հարիւր դահեկանաց վաճառէր զվաճառն՝ հարիւր տասին. և գնողն գնէր իննսուն դահեկանի, որ լինէր արտաքոյ չափոյ արդար գնոյ հասարակաց. ո՞չ 'ի վերայ ածէ անտանոր յիշատակեալդ հայր Կամպիոն:

Եւ երկրորդ՝ որպէս զի դաշնադրութիւն իցէ արդար՝ պիտի չլինել դաւ կամ նենգ, ոչ 'ի վաճառողն և ոչ 'ի գնողն. 'ի կողմանէ վաճառողին լինի նենգութիւն. ա. եթէ վաճառիցէ զիրսն ծանրագին՝ քան զոր արժէ ասփ և այծՏ հայելով 'ի տեղին, 'ի ժամանակն, 'ի բազմութիւն գնողաց յառատութիւն և 'ի նուազութիւն վա-

ճառաց. Է. եթէ վաճառիցէ ինչ մի փոխանակ այլոյ, զոր չկամի գնողն. Ը. եթէ վաճառեսցէ զապականեալ ինչ իբրև լաւ. և 'ի գործ արկանիցէ չափ կամ կշիռ սուտ: Իսկ 'ի կողմանէ գնողին լինի նենգութիւն. Թ. եթէ յանդիման կացուսցէ զայլ գնօղս յայն սակս, զի տայցեն գին կարի նուազագոյն քան զոր տայ ճշմարիտ գնօղն՝ առ 'ի ձգել զվաճառօղն 'ի վաճառել զիրսն գնոյն այնուիկ որում ինքն ցանկայ. այն իսկ է նուազ և քան զարդար գինն ստորին. Ժ. եթէ 'ի գին վաճառացն գիտութիւն տայ վաճառականին դրամն յուխս, սուտս և պակասաւորս, ևն. ԺԱ՝ եթէ գնօղն քաջ ճանաչելով զյարգ իրացն՝ որում անծանօթ գտցի վաճառօղն՝ գնէ կարի անարգ գնով. զորօրինակ՝ գնէ զպատկեր ինչ՝ գործ հռչակաւոր հեղինակի, որոյ արժէք իցէ 100. դահեկան. զոր ոչ գիտելով վաճառօղն վաճառէ 10. դահեկանի և եթ: Նոյնպէս եթէ գնէ ոք 'ի շինականէ զակն պատուական ընդ քանի մի դենարի. իբր զի շինականն համարէր զայն ապակի լինել, ևն:

Աստանօր յառնեն տարակոյսք ինչ՝ որ հային յառաջիկայս նիւթ:

Տարակոյս Թ. Խնդրի՝ արդեօք կարօ՞ղ իցէ վաճառականն աճեցուցանել զգին վաճառին, իբր զի պէտս ունի այնմ գնօղն:

Պատասխանի ոչ: Ապաքէն զգին վաճառին կարօղ է աճեցուցանել վաճառականն, եթէ վնաս իցէ նմա վաճառել զայն ինչ վաճառ *** և այժմ. զոր եթէ պահէր՝ յայլում պահու վաճառէր ծանրագին. այլ ոչ՝ վասն զի *** և այժմ օգուտ է գնողին գնել զայն. վասն զի յառաջնումն դիպուածի վաճառէ նա 'ի վնաս իւր.

իսկ յերկրորդումն՝ զի օգուտն է գնողին, ոչ կարէ վաճառողն վաճառել՝ զոր չէ իւր։

Տարակոյս Է. Արդեօք մարթ իցէ վաճառել ինչ յաւէտ ծանրագնի, զի վաճառէ յապառիկ։

Պատասխանի. յորժամ վ̅ն այդր ոչ լինիցի վաճառողին ծագումն վնասու, կ̅մ դադարումն շահու, միայն վասն ապառիկ վաճառմանն՝ ոչ կարէ վաճառել առաւել ծանրագին. զի նոյն պատճառ ընդ առաջ եկանէ՝ որ ինչ 'ի վեր անդր. վ̅ն զի վաճառել յապառիկ՝ է 'ի նպաստ գնողին. ուստի չէ մարթ վաճառողին աճեցուցանել զգին իրացն, և այնպէս պարտաւոր առնել զգնողն 'ի վճարել՝ զոր չէ վաճառողին։ Միայն թէ որ վաճառէ յապառիկ՝ կարող է վաճառել բարձր գնով. և երբ վաճառէ կանխիկ դրամով՝ վաճառել միջին կամ ստորին գնով. վ̅ն զի ցորչափ իրն վաճառի ընդ սահմանաւ արդար գնոյ՝ ոչինչ անիրաւութ̅ի գործի։ Նա-ևս քանզի վաճառականն ունի առնել ծախս ծանունս առ պահպանութ̅ի վաճառին իւրոյ. և վասն այսր բանի իրաւամբք կարող է վաճառել յապառիկն ճշտագոյն գնով, ուր 'ի կանխիկն ունէր վաճառել միջին կամ ստորին գնով. վ̅ն զի յայս դիպուած գոյ վնաս ինչ ծագեալ, կամ շահ դադարեալ այնմ՝ որ զդրամս իւր գնէ 'ի տուրևառս։

Յայսմ վայրի 'ի դէպ համարիմ յառաջ բերել զհամառօտն հրահանգն ս̅ն մերոյ բենեդիկտոսի յաղագս ապառիկ վաճառին՝ զոր արարեալ է մինչ էրն քարտուղար սրբազան ժողովոյն սինհոդոսի, նշանակեալ 'ի պատճէնս առաջեալդ ժողովոյ 'ի 23. փետր". 1726։

Հրահանգ սակարկութեան ապառնի վաճառի ։

Զկրկին կանոնս հանրականս ՚ի դէպ է գիտել ՚ի սակարկութե ապառնի վաճառի ։

Առաջինն է, զի մի վաճառեսցի ժամանակն. եթէ զի որ վաճառէն՝ մի իշխեսցէ պահանջել ինչ մի աւելի քան զարդար գինն՝ վասն ժամանակին, զոր ներէ առ ՚ի հատուցանել ։

Երկրորդն է՝ զի վաճառօղն մի ապահով առնիցէ զանձն կամ միշտ, կմ եթէ ՚ի բազումս վ՟ շահու իւրոյ. եւ մի ընդ հակառակն զգնօղն դիցէ յանշուշտ վիճակի կորուսման ։

Եւ քանզի այս կանոնք յոլովակի կախին ընդ դիտաւորութե վաճառօղին, սմին իրի խոհական խոստովանահայրն յայսպիսում դիպուածի պարտի քաջ խուզարկել զներքին դիտաւորութի նորա. եթէ զի (օրինակի աղագաւ՝) որ վաճառէ յապառնի զցորեան իւր յամսեանն դեկտեմբերի՝ առ ՚ի զգինն ընդունել յամսեանն օգոստոսի. կամ գիտէր վաճառել զայն ՚ի յիշատակեալ ամիսն դեկտեմբերի, եւ կամ ունէր ՚ի մտի փոխադրել զվաճառն յայլ ժամանակ. յորում թերեւս հաւանականագոյնս կարծէր թէ արժեսցէ թանկագին եւս՝ ո՛չ յամսեանն մայիսի ։ Արդ՝ եթէ գիտէր վաճառել զայն յամսեանն դեկտեմբերի՝ չէ՛ հնար առանց յայտնի արատոյ վաշխառութե պահանջել զգին մեծագոյն քան զարդար գինն՝ որ արժէ ՚ի յիշատակեալ ամիսն. ապա թէ ոչ՝ լինէր վաճառել զժամանակն ։ Իսկ եթէ գիտէր զվաճառն փոխադրել յայլ ժամանակ. յայս դիպուած կամ դնէ զայն գին

որ անցանէ 'ի նոյն աւուրս՝ յորս վաճառէ, և
կէ՛ շատանայ՝ զի որոշումն զնոյն կախեալ կայ-
ցէ զապագայ ժամանակէ ։

Եթէ դիցէ ցորենոյ խուրում զգին բարձր՝
այդ սակարկութի՛ւ է օրինաւոր. միայն թէ մի
զանցանիցէ զճիշդ գնոյն. իբր զի յիւրմէ կող-
մանէ ունի խորհիլ զվտանգս, զաշխատանս, և
զծախս՝ որք հասարակօրէն զուգընթաց լինին
'ի պահպանութի՛ւ ցորենոյն մինչև ցժամանակն՝
յորում 'ի մտի եդեալ էր վաճառել ։ Ապա ե-
թէ թողուցու զորոշումն իւր 'ի կախ մնալ զա-
պագայ ինչ ժամանակէ. կամ կամի զի ժամա-
նակդ այդ իցէ ժամանակ վճարման, կամ այլ
ժամանակ որոշեալ. (թէպէտև յայնմ ժամա-
նակի սովոր իցէ արժել թանկագին ևս քան
'ի նախընթաց ժամանակս) և կամ ընդէ՝ զի
կախեալ կայցէ զանորոշ ժամանակէ ինչ ապա-
գայէ ։

Եթէ կամեսցի, զի գինն կախեալ կայցէ
զորոշեալ ժամանակէ ապագայէ. օր՝ եթէ ա-
սիցէ, թէ այժմ վաճառեմ քեզ զցորեանս իմ,
զի դու վճարեսցես ինձ գնոյն՝ զոր արժէ յամ-
սեանն մայիսի կամ յունիսի. օրինաւոր է պայ-
մանադրութի՛ւդ. միայն թէ կրկին ինչ զուգըն-
թաց լիցին ։ Առաջինն՝ զի մի կռեսցի դաշինս
զբարձր գնոյ՝ որ արժիցէ 'ի ժամանակի հա-
տուցանելոյ. այլ՝ առ առաւելն զմիջին գնոյ ։

Երկրորդ՝ զի 'ի գնոյն 'ի բաց հանցեն ըղ-
ծախսն՝ զորս պէտք են առնել. և զայն ևս՝
որ մարթի պակասիլ 'ի պահպանութե՛ նորա՝
մինչև ցայն ժամանակ ըստ դատելոյ փորձա-
ռանց ։

Իսկ եթէ խնդրեսցէ, զի գինն կախեալ

կացցէ զանորոշ ինչ ժամանակէ ապագայէ. Դր ասելով՝ կամիմ զի դու վճարեսցես ինձ զգին ցորենոյն գնոյն՝ որ արժիցէ յորում և իցէ ժամանակի մինչև ցվճարումն գնոյն. իմա՛ յայնժամ՝ յորժամ վաճառէ յաւէտ Թանկագին , այդ դաշնադրութիւն է վաշխառական. քանզի ինքն իբր 'ի բազումս զիւր շահ ապահով առնէ. իսկ ընդ հակառակն զգնողն դնէ 'ի վիճակ անշուշտ կորուսման :

Կանոնքս ճշմարտին մանաւանդ 'ի վերայ ապառիկ վաճառման , կամ տնտեսական փոխարինութե. Դր յայնժամ՝ յորժամ ո՛չ դիտէ վաճառականն որոշել զգին իրացն վաճառելեաց , այլ միայն վարել զայն 'ի պէտս իւր. ուստի թէ և մարթ իցէ երբեմն ծագիլ վնասու , այլ ո՛չ երբէք մարթի յայդմանէ զհետ գալ դադարումն շահու. որպէս թերևս լինիցի խորհիլ 'ի վաճառման կմ 'ի տուրևառիկ փոխարինութե. վասն այսորիկ կարող է վաճառական ոք. որ անընդհատ զդրամս իւր արկեալ իցէ 'ի վաճառ , զապրանս իւր վաճառել առաւել Թանկագին յապառիկն՝ քան 'ի կանխիկն առ ձեռն դրամով. վասն զի յապառիկ վաճառելն՝ զրկի 'ի շահէն՝ զոր 'ի տուրևառս կարող էր շահել: Ու զայս պարտ է իմանալ առաջիկայ ամփոփմամբք :

Ա՝ զի կորուստ շահուն ստուգիւ՝ իցէ յայն սակս՝ զի չընդունի ներգործութե զդրամս զգին վաճառին :

Բ՝ զի 'ի փոփոխել անդ զգինն՝ ունիցի 'ի մտի զվտանգն , զաշխատանս , և զծախսն՝ զորս ունէր առնել առ պահպանութի վաճառին. և վասն այսորիկ իսկ չէ արժան փոփոխել 'ի վեր

քան զբարձր գինն՝ որ է 'ի գործածութեան ։

Դ̅՝ զի մի վաճառեսցէ ապառիկ յայն սակս՝ զի ոչ կարէ կանխիկ վաճառել զորդիս առ ձեռն դրամով ։

Ե̅՝ զի ազդ արասցէ գնողին. թէ առաջի Ա̅յ ճշմարտիւ վասն անագանելոյ վճարմանն՝ ինքն յետնեալ գտանի 'ի շահելոյ զայնչափ՝ որչափ ինչ վաճառէ յապառիկ. թէպէտեւ առաւել թանկագին քան զոր արժէ արդար գինն. ոմ̅ն զի եթէ այսու պայմանաւ չունիցի գնողն կամս գնելոյ՝ կացցէ մնասցէ նա յազատութեան իւրում ։

Տարակոյս Գ̅. խնդրի արդեօք վաճառականն, որ վաճառէ զապրանս ինչ փոխանակ այլոյ. թէպէտեւ արդար գնոց. մեղանչիցէ՞, եւ պարտաւո՞ր իցէ 'ի հատուցանել. օրինակ իմն ։ Տիտոս խնդրէ գնել զերիս կանգունս հոլանդեան չուխայի. իսկ վաճառականն տայ նմա Ը̅ այնր զազնուագոյն չուխայ վէնէտկեան. բայց ըստ արդար գնոյ վէնէտիկեան չուխայի ։

Պատասխանեմ. եթէ տիտոս ՛տմիւ խնդրէր զչուխայ հոլանդեան, մեղանչել մեղանչէ վաճառականն տալով նմա զչուխայ վէնէտիկեան. քանզի առ վաւերութի̅ դաշնադրութե̅ պահանջի միաբան հաւանութի̅ գնողին եւ վաճառողին. եւ ահա պակասի այդ յառաջարկեալդ դիպուած. ապա ոչինչ է դաշնադրութիւնդ ։ Այնօրինակ 'ի վաճառել ուրուք զջրախառն գինի փոխան ընդ անապակ գինւոյ, թէպէտ ըստ գնոյ ջրախառնի ։ Պիտի զանազանել. եթէ գնողն գնիցէ զայդ գինի առ 'ի պահել՝ ոչինչ է դաշնադրութիւնդ. զի չիք բնաւին յայդմ հաճութի̅ գնողին. զի ոչ ոք համարի թէ նա կամիցի գնել զգինին առ 'ի քացախացուցանել ։

Իսկ եթէ գնեսցէ 'ի պէտս ըմպելոյ, և ըստ արդար գնոյ ջրախառն գինւոյ առանց և ոչ միոյ իրիք վնասու ընկերին՝ արդար է դաշնադրութիւն և օրինաւոր :

Տարակոյս Դ. Եթէ գիտասցէ վաճառականն թէ ընդ հուպ ունի յաճախել առատութիւն այս ինչ ապրանաց, յորմէ ոչ սակաւ նուազեսցի գինն նր. կարո՞ղ իցէ արդեօք վաճառել զիւրն ըստ այնմ գնոյ՝ որ զարդիս անցանէ :

Պատասխանի, այո՛ միայն թէ մի՛ նենգութ. և պատրանօք գուն գործեսցէ ձգել յինքն զգնօղսն 'ի գնել զիւրսն : Պատճառ առաջին մասին է. զի որ վաճառէ զապրանս իւր ըստ գնոյ որ ընթանայ, ոչինչ անիրաւի. թէպէտև իրազեկ իցէ ապագայ նուաստութեան գնոյ : Պատճառ երկրորդին է. վասն զի խարդախանքն ոչ երբէք պարտի լինել ումեք շահաբեր, նմին իրի վաճառականն՝ որ խաբէութ. ձգէ յինքն զգնօղն, զի գնեսցէ զապրանս իւր ըստ հասարակ գնոյ, գիտելով չափ թէ 'ի մօտոյ ունի գինն նուազիլ՝ վարի պատրանօք. ուստի և գործէ զանիրաւութիւն : Այլ ոչ այնպէս, եթէ առանց ինչ նենգելոյ աղաչեսցէ զնա գնել զապրանս իւր ըստ հասարակ գնոյ. մանաւանդ թէ և ստորին գնով. քանզի վարէ իրաւամբ իւրով. ուստի և չառնէ ինչ ումեք անիրաւութիւն :

Տարակոյս Ե. արդեօք պարտակա՞ն իցէ վաճառականն ծանուցանել գնօղին զարատ և զթերութիւն վաճառին՝ զոր վաճառէ :

Պատասխանի. յորժամ թերութիւն կամ արատ ապրանաց իցէ յայտնի, չէ պարտական իրազեկ առնել. միայն պարտաւորի զգինն նուազել՝ քան զոր արժէր անարատն և անթերին :

Բայց աստանօր 'ի դէպ է յուշ առնել. զի եթէ կայցէ ինչ նենգութիւն 'ի կողմանէ վաճառողին. զորօրինակ՝ թէպէտև արատն կամ թերութիւն ապրանաց յայտնի իցէ. և սակայն գնօղն չկարիցէ ճանաչել հեշտեաւ. զի կամ է անվարժ և կամ անընդունակ: Սոյնպէս յորժամ գնօղն բողոք բառնայ, թէ կամիմ զընտիր և զանարատ ապրանս. և կամ հարցանէ, թէ արդեօք ապրանքն ազնիւ իցեն և անարատ. և նա պատասխանիցէ, այո՝ ազնիւ են և անարատ. և կամ առանց իրիք հարցուածոյ վաճառականն տայ զայն ապրանս, զոր պահեալ ունի խառն ընդ ընտիր ապրանս: Յայս ո̃մ դիպուածս քանզի դոյ նենգ 'ի վաճառօղն՝ անիրաւ և անվաւեր է դաշնադրութիւն. և պարտաւորի հատուցանել գնողին զվնասն տուեալ. մինչ զի եթէ կայցէ ապրանքն՝ կարէ գնօղն յետս դարձուցանել առ վաճառօղն. և զգին վաճառին յետս կորզել:

Խօսեցեալ մեր ըստ բաւականին զփոխարինական արդարութենէ առ ծանօթանալոյ մեղաց հակադրելոց, բուռն հարցուք յառաջիկայս խօսիլ և:

---

## Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ տրամաբաշխական արդարութեան:

Արդարութիւն տրամաբաշխական միօրինակ պարտաւորէ զգլխաւորս, եթէ՛ զեկեղեցականս և եթէ զաշխարհիկս 'ի բաշխել զթոշակս, և զպաշտօնատարութիւնս ըստ արդեանց և ըստ

յարմարութիւն անձանց. և առ 'ի խնամ տանել ոչ անձին՝ այլ պաշտամանն, ոչ թոշակառուին՝ այլ թոշակին. վասն որոյ յանցաւոր գտանին առաջի այ մեծաւորքն այն վս իմ անկարգութեց, գայթակղութեց, և անիրաւութեց որք յառաջ գան 'ի հայթայթանաց պաշտօնակալութեց և թոշակաց անհմուտ և անբաւական անձանց. մանաւանդ 'ի բան թոշակի և հոգաբարձութե հոգւոց՝ պարտական է առաջնորդն 'ի մէջ արժանաւորաց ընտրել զյաւէտ արժանաւորն. որպէս քաղի 'ի ժողովյն տրիդենտինոյ 'ի Նիստ ԻԴ. գլ. Ա. յղ. վերանոր: և գլ. ԺԸ:

Իսկ երբ առաջնորդն որ 'ի մատակարարութե թոշակաց հանդերձ հոգաբարձութբ հոգւոց յետադաս առնէ զառաւել արժանին քան զնուազ արժանաւորն, ոչ միայն մեղանչէ՝ այլ և պարտաւորի հատուցումն առնել եթէ վնասու հոգաբարձութե, և եթէ արժանաւորին՝ որ յետադաս գտաւ քան զնուազ արժանաւորն, յետ յառաջ ընծայեցուցանելոյ զանձն. զի որովհետև յայն դիպուած ունի սա իրաւունս առ իրն՝ լինի գործել ոչ միայն ընդդէմ տրամաբաշխական, այլ և ընդդէմ փոխարինական արդարութե. յորմէ ծագի պարտաւորութի հատուցման:

Ապա եթէ բաշխեսցի վիճակ հոգաբարձութե առանց ինչ զուգընթացութե այլ և այլ անձանց. որպէս մարթի լինել 'ի դիպուածս ինչ, յայնժամ պարտաւորի առաջնորդն սոսկապէս տալ զայն յաւէտ արժանաւորին. որպէս յայտ է 'ի նախադրեալ ժողովյն. գլ. ԺԸ. այլ ոչ պարտաւորի 'ի հատուցումն. զի յայս դիպուած առաւել արժանաւորն չունի ինչ իրաւունս առ հոգաբարձութի հոգւոց՝ եթէ յետադաս գտցի

քան զնուազ արժանաւորն . զի թէպէտև վնա-սի տրամաբաշխական արդարութիւն , այլ չգոր-ծի ինչ ընդդէմ փոխարինական արդարութեան . ուստի և չանկանի ընդ պարտաւորութեամբ հա-տուցման . որպէս յուշ առնէ հայրն վիվա 'ի խմ . Նախադասութեան որ դատապարտեցաւ յԻննովկենտիոսէ . ժա . այն՝ թէ * Յասել տրիդենտեան ժողովոյ , թէ օտարին մեղաց կցորդ լինելով մեղանչեն՝ ոյք յառաջադէմ առ-նեն յեկեղեցւոջ զայնոսիկ և եթ , զորս ինքեանք դատին լինել առաւել արժանաւորս և յաւէտ օգտակարս եկեղեցւոյ : Ժողովն կամ ըստ ա-ռաջին տեսութեան երևի բառիւդ առաւել արժա-նաւորք ոչ այլ ինչ կամիլ նշանակել , բայց զար-ժանաւորութիւն ընտրելեաց՝ առեալ զբաղդա-տական բառն ոչ դրական , կամ ըստ երկրորդ տեսութեան՝ իբր պիտակ առմամբ դնէ առաւել արժանաւորս առ 'ի դուրս հանելոյ զանարժանս , և ոչ եթէ զարժանաւորս . և կամ հուսկ յետոյ խօսի ըստ երրորդ տեսութեան , յորժամ լինի զուգընթացութիւն այլ և այլ անձանց ‖ : Իսկ կա-րի յիրաւունս է դատապարտութիւն . զի որով-հետև ժողովն 'ի նշանակեալ տեղւոջ՝ այնչափ ազդու և բացայայտ բանիւք յուշ առնէ՝ թէ պարտ է յառաջ կոչել 'ի խնամարկութիւն հոգւոց զառաւել արժանաւորս , և պարտ է ընտրել զառաւել յարմարաւորս , ընդդէմ բանից և մտաց ժողովոյն լինի մեկնել զժողովական կար-գաւորութիւն , և ամփոփել միայն 'ի դիպուածն զուգընթացութեան . ուր նաև առանց այդր 'ի մատակարարութեան վիճակի հոգաբարձութեան հոգւոց՝ պարտ է նախամեծար առնել զառա-ւել արժանաւորն քան զնուազն . որպէս է տե-

սանել 'ի Նախայիշատակեալ գլ. ծ̄է. * Եպիսկոպոսն յարժանաւորաց ընտրեսցէ զարժանաւորագոյնն ‖ :

Տարակոյս ա̄. արդեօք և յայլ տուչութիւնս թոշակաւորութե̄, յորս չեն հոգաբարձութի̄ք հոգւոց. պարտաւորի՞ առաջնորդն տալ առաւել արժանաւորին՝ զկնի դասելով զնուազ արժանին. որովհետև թէ ժողովն և թէ դատապարտեալ Նախադասութի̄ն խօսին զթոշակաւութե̄ հոգաբարձութե̄ հոգւոց :

Պատասխանի. եթէ բանն իցէ զթոշակաց առանց հոգաբարձուե̄ հոգւոց. բայց ունիցին ինչ ինչ սպասաւորութի̄ եկեղեցւոյ. որպիսի են կանոնիկոսութի̄ք մայր եկեղեցեաց, և համնծողով ընկերութե̄ց, կա̄ տասնապետութի̄ք, եւ̄. զսոսա ևս պարտ է հորհել առաւել արժանաւորաց. ը̄ որում է տեսանել 'ի գլ. մեծ. տեղ. որպէս չէ եկեղեցական Բոլորեւ և այլն. անդ. * Ո՛չ 'ի մարմնաւոր յօժարութե̄, այլ արդարայի ընտրողութե̄ պարտական են զթոշակն եկեղեցական յանձն առնել յառաւել յարմարաւոր անձն ‖ : Որպէս և ըստ Թովմաս ուսուցանէ. բ̄. բ̄. խն. կ̄գ. յօդ. բ̄. առ. 3 :

Տարակոյս բ̄. արդեօք առաջնորդն 'ի տուչութե̄ թոշակաւորութե̄ց՝ գոնէ առանց հոգաբարձութեան հոգւոց, կարիցէ՞ նախադասել զնուազ արժանի ազգականն քան զառաւել արժանաւորն՝ որ չիցէ իւր ազգակից :

Պատասխանի. յորժամ ազգականն իցէ միօրինակ արժանաւոր որպէս զմիւսն, յայնժամ կարէ յառաջ կոչել զազգականն. միայն թէ չզուցէ ինչ գայթակղութի. այսպէս ըստ Թովմաս 'ի նոյն. յօդ. բ̄. առ. 1 :

Տարակոյս Գ. արդեօք տրամաբանական արդարութիւն ունիցի՞ իւր դիմամարտ մոլութիւս ըստ առաւելականութեան, և ըստ նուազութեան. և ո՞ր այն իցեն։

Պատասխանի. մոլութիւն դիմամարտ տրամաբանական արդարութեան ըստ առաւելականութեան՝ անանուն է. և այն իսկ է՝ յորժամ առաջնորդն 'ի բաշխել զթոշակս և զպաշտօնս եկեղեցականս. կամ իշխանն 'ի մատակարարել զարժանապատուութիւնս, և զաշխարհական գործակալութիւնս՝ պահանջեսցեն զկատարելութիւն, զյարմարութիւն, զհմտութիւն և զբաւականութիւն իբր անգիւտ, կամ կարի սակաւագիւտ. զորոց է տեսանել զնախադ". ԺԷ. և ԺԸ. դատաստ". յաղէքս". Ը։ Իսկ մոլութիւն ըստ նուազութեան, դիմամարտ տրամաբանական արդարութեան՝ կոչի ակնառութիւն կամ աչառանք. և է՝ յորժամ առաջնորդն կամ աշխարհային իշխանն 'ի բաշխել զթոշակս, զպաշտօնս, և զարժանապատուութիւնս՝ ոչ հային յարդիւնաւորութիւնս անձանց և յօգուտ տէրութեան. այլ շարժին սոսկապէս կամ 'ի բարեկամութենէ, կամ յազգականութենէ, և կամ 'ի յանձնարարութեանց. զորս յայնժամ և եթ օրէն է ընդունիլ՝ յորժամ վկայեն արդիւնք անձինն յանձնարարելոյ։

'Ի վախճանի, արդեօք մեղք դիմամարտք տրամաբանական արդարութեան ընդունիցի՞ն զթեթևութիւն նիւթոյ։

Պատասխանի. թէ այդ ուր ուրեմն մարթի գիւտիլ. քանզի յընտրութեան անընդունակ անձին կամ նուազ ընդունակին նախամեծար առնելով զնա քան զառաւել ընդունակն, միշտ զհետ գան ծանր ծանր վնասք հասարակաց։ Ո.ԱԼ ե-

թէ յընտրութէ այսի փոքր և եթ վնաս ծագեսցի տէրութեան, կամ հոգւոյ՝ յայնժամ են վարդապետք, որք վարկանին ընդունիլ զթեթեւութիւն նիւթոյ։

---

## ՅԱՂԱԳՍ ՄԵՂԱՑ, ՈՐ ԸՆԴԴԷՄ ՎՐԷԺԽՆԴԻՐ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ։

Վրէժխնդիր արդարութիւն է, որ պարտի պատուհասել զյանցաւորս ըստ յանցանաց՝ ըստ պայմանի կանոնական և քաղաքական օրինաց պահելով զկարգ դատաստանական։ Նախ զառաջինն պարտ է յուշ ածել. թէ դատաւորն՝ որ չէ իշխան վեհագոյն՝ ոչ կարէ ներել զպարտուպատշաճ պատիժն զսահմանեալն յօրինաց վասն յանցաւորաց, երբ յանցանքն օրինօք ցուցեալ իցէ. թէպէտ և կարէ փոքր մի մեղմել. և այս՝ թէև հաճեալ իցէ կողմն վնասեալ. այլ է թէ գերզգօնութիւն ոչ թողացուցէ. զի 'ի մասնաւոր դիպուածս ինչ վասն հասարակաց բարւոյ ընդհանրութեան՝ շնորհեսցի այդ պատիժ. կամ թէ բանն իցէ զմասնաւոր ինչ անիրաւութիւն՝ որ ներեալ իցէ 'ի վնասեցելոյն։ ՎԷՆ ԲՈՒԶՄԱ. Է. Է. խն. յօդ. 25։ Իսկ եթէ իշխանն իցէ վեհագոյն, կարէ ներել զպարտուպատշաճ պատիժն կամ ըստ բոլորին և կամ ըստ մասին. միայն թէ ոչ բերցի այդ 'ի վնաս ընդհանրութեան կամ հասարակութեան, ուր ապիրատք կարեն համարձակութիւն առնուլ չարագործութեան. թող զի պարտի լինել և բանաւոր պատճառ զայս առնելոյ. ապա թէ ոչ՝ մեղանչէր և ինքն մահու-

չափ մեղօք ։ տե՛ս վկայեալս․ 'ի Ժողովն․ 'ի Բանն Գոտափառոր ։

Երկրորդ՝ պարտ է 'ի միտ առնուլ, թէ առանձնական ոք թէև մխասեալ՝ չկարէ խնդրել կմ հնարել զպատիժ յանցաւորին՝ ըստ որում պատիժ նորա․ ապա թէ ոչ՝ լինէր ատելութի տեսական․ այլ իբր յօգուտ հրուե և յօրինակ բարի այլոց՝ պատժեսցի յանցանքն ։ Իսկ սակայն կարի դժուարին է թէ լոկ 'ի նախանձուէ արդարութե, և ոչ յառանձինն ատելութէ ջան դիցէ մխասեալն և տենչասցի պատժոյ մխասցլին․ ապա 'ի գործադրութեան հարկ է փոյթ յանձին ունել, զի մխասեալքն ներեսցեն զյանցանս մխասապարտից իւրեանց ։ Նմին իրի յորժամ մխասեալն ըստ բաւականին ընդունի 'ի մխասողէն զհատուցումն վն մխասուն զոր կրեաց, և յետ պահու յորդորեալ լինի աղաչանօք 'ի հաշտութի գալ, ոչ կարէ երբէք ժխտել զայդ առանց մահուչափ մեղաց․ որպէս ուսուցանէ կարդինալ ալբիզ․ յղ․ անհաստատութե, Նայլն․ Ձս․ Ա․ Գլ․ Է ։ Իսկ չէ իսկ ընդունակ արձակման՝ եթէ յետ ընդունելոյ զբաւական հատուցումն փոխան մխասուցն, և յետ խնդրելոյ մխասապարտին բազում անգամ զհաշտութի՝ տակաւին ոխքն զլասցի ։ Իսկ առաւել՝ եթէ ծագեսցի յայդմանէ գայթակղութի․ որպէս միշտ լինել սովոր է․ Լա ։

Մոլութին ըստ աստուածաբանութե դիմամարտ վրէժխնդիր արդարութե այն է՝ յորժամ դատաւորն պատժէ զյանցաւորն աւելի քան զարժանն ։ Իսկ ըստ նուազութե այն է՝ յորժամ կամ ըստ բոլորին, և կամ ըստ մասին առանց ինչ պատճառի ներէ յանցաւորին զպատիժն նմին

պատշաճեալ ըստ չարագործութեան նորա. վասն այսորիկ յոլովակի լինի մեզ մահուչափ յանցանելն զվրէժխնդիր արդարութիւն եթէ ըստ առաւելազանցութեան, և եթէ ըստ նուազութեան մասին. և դուն ուրեք լինի թեթևուն նիւթոյ: Մանաւանդ թէ պարտաւոր գտանի հատուցանել զփոխարէնն բռնաբարութեան այսր առաքինութեան ըստ առաւելազանցութեան 'ի պատճառս վնասու եղելոյ յանցաւորին: Իսկ ըստ նուազութեան՝ պարտաւոր լինի հատուցանել տէրութեան՝ յորժամ վնաս կրեսցէ սա. երբ ապիրատք վստահութիւն զգեցեալք այսր՝ գործիցեն զչարիս. տեսանելով թէ չիք պատիժ յանցաւորաց ըստ արժանւոյն. որպէս և յորժամ վնաս հասցէ այսր զրկելոյն՝ չընդունելով զհատուցումն 'ի վնասապարտէն:

---

## Յաղագս մեղաց, որք դիմամարտեն օրինական արդարութեան:

Օրինական արդարութիւն պարտաւորէ զդատաւորս յառաջ խաղալ եթէ 'ի քաղաքականս, և եթէ 'ի քրէական դատս պահելով զկարգ իրաւանց: Սորին սակս Կայետանոս յուշ առնէ 'ի նախագրեալ տեղին. թէ դատաւորն մեղանչէ ընդդէմ օրինական արդարութեան՝ ա. եթէ հատցէ վճիռ անիրաւ ըստ բոլորին կամ ըստ մասին. բ՝ եթէ և 'ի վճռելն իրաւամբք չպահիցէ զօրինաւոր կարգ դատաստանի. զօրօրինակ՝ եթէ ոչ յառաջ խաղայ ատենական քննութեամբք և ցուցակութեամբք. գ՝ եթէ յանիրաւի յինքն

յափշտակէ զդատաստան. զորօրինակ՝ յորժամ աշխարհիկ դատաւորն դատիցէ զդատս եկեղեցականս. Դ՝ եթէ զանց արասցէ զպատժով խուէք՝ որ հաստատեալ իցէ յօրինաց հանդերձ վնասու հասարակաց, կամ զրկելոյ մասինն. Ե՝ եթէ ժխտեսցէ, կամ յապաղեսցէ զդատն առանց օրինաւոր պատճառի. զորօրինակ՝ յերկարաձգելով կոչել 'ի դատ. կմ տալով ծախս ծախել երկոցունց կողմանց արտաքոյ իրաւանց. Զ՝ եթէ յառաջ վարէ զդատն առանց բաւական հմտութեան իրաց ատենի, մինչև դնել զանձն 'ի վտանգ չառնելոյ զարդարութիւն խնդրելեաց. և կամ եթէ ոչ միտ դնէ դատին, ոչ պարտն է. Է՝ եթէ առնուցու կաշառս կամ պարգևս աստի և անտի. Բաց յուտելեաց և ըմպելեաց ինքնակամ ընծայելոց, որ 'ի սակաւ աւուրս մարթեն ծախել. ըստ որում արգելեալ է, և սահմանեալ 'ի Գլ. Կարգեցաւ Հռոմ Վերադրութեց. 'ի Զ. * Իսկ եթէ առցէ ինչ ընդդէմ առաջիկայ սահմանադրութեանս, պարտաւորի ողջին յետս դարձուցանել. մինչ զի ոչինչ նպաստաւոր լիցի ինքեան և կամաւոր տուչութիւն առ 'ի նոյանէ՝ որոց պարտի յետս դարձուցանել ‖. Ը որում 'ի վր բերի 'ի նախանշանակեալ գլուխն 'ի դերև հանելով զնմ գործս և զնմ վճիռս. Թ՝ եթէ 'ի դատելն, թէպէտև իրաւամբք՝ առնիցէ զայդ առ ատելութէ, և կամ կրիւք ընդդէմ միոյ 'ի կողմանցն: Յայս ամ դիպուածս մեղանչէ դատաւորն մահուչափ մեղօք. և պարտաւորի 'ի հատուցանել կողմանն վնասելոյ, բաց 'ի վերջին դիպուածոյն. միայն թէ դատեալ իցէ արդարութ, թէև ատելութ և մախանօք հանդերձ. քանզի յայդմ մեղանչէ ընդդէմ սիրոյ՝

քանիւ առելութե՛ և նախանձու․ այլ ո՛չ ընդդէմ օրինական արդարութե՛․ զի արդարութեամբ դատեցաւ ։

Յայսմ վայրի 'ի դէպ է յուշ առնել ինչ ինչ 'ի կարգի ընծայից, զորս լինիցի տալ առ ընդունելոյ զշնորհս կամ զիրաւունս 'ի դատաւորաց հռովմէական ատենի ։ Իբր զի՝ եթէ պարգևատուն՝ և եթէ պարգևառուն․ եթէ որ խոստանայ՝ և եթէ որ յանձն առնու զխոստումն, միօրինակ անկանին 'ի նզովս վերապահեալս Պապին հանդերձ պարտաւորութե՛ յետս դարձուցանելոյ զնմ, զոր ընկալեալ իցեն 'ի պարգևի մասին․ որպէս քաղի 'ի բաղում կոնդակաց, և առանձինն վոնիփակիոսի Ը․ և գրիգորի ԺԴ․ որոյ սկիզբն է 'ի Նզբն խոհ․ զորս հրատարակեաց կղեմէս Ը․ ընդդէմ այնոցիկ՝ որք ընծայեն պարգևս, կամ խոստանան ինչ առ 'ի գտանել շնորհս․ կամ ընդունիլ զիրաւունս յատեանս նաև արտաքոյ հռովմայ, և 'ի դատաւորաց նո՛ց եթէ յեկեղեցականաց և եթէ աշխարհականաց՝ որ 'ի սահմանս տէրութե՛ սրբոյ գահին ։ Նոյն սահմանադրութի որ սկսանի յաղագս եղելոյ՝ մեղմեցաւ յետոյ յԱղէքս․ Է, այլով կոնդակաւ․ որոյ սկիզբն է 'ի Դէջ ծանրագոյնից․ ուր բացածանուցանէ թէ 'ի նախայիշատակեալ պատիժս անկանին նոքա միայն՝ որք ընծայեն, կամ խոստանան պարգևս դատաւորաց յեկեղեցւոյ կողմանց՝ առ 'ի ընդունիլ զշնորհս կամ զիրաւունս, յորժամ պարգևեալ կամ խոստացեալ ինչքն իցեն յընչից հասարակաց․ այլ ո՛չ յորժամ իցեն սեփական ինչք խոստացողաց, ըստ այնմ՝ որ իմացեալ լինի յաղագս պարգևողին, կամ խոս-

տացողին առ 'ի գտանել զշնորհս կամ զիրաւունս 'ի դատաւորաց ատենին հռովմայ ։

'Ի սոյն պէտս Աղէքս" է․ դատապարտեաց զնախադասութիւն իզ․ զայն թէ՝ * Յորժամ վիճօղքն ունին յիւրեանց կողմն փաստս միօրինակ հաւանականս, կարօղ է դատաւորն առնուլ ինչս՝ վասն տալոյ զվճիռ 'ի նպաստ միոյ կողման քան թէ միւսոյն ‖ ։ Պատճառ դատապարտութեան է․ զի թէ վճիռն տալի 'ի դատաւորէ յայդ դիպուած իցէ արդար, կողմն այն ունի իրաւունս առ այն վճիռ․ ուստի առ այդ չկարէ դատաւորն առնուլ դրամս․ վասն զի ինքն արդէն թոշակաւորեալ է 'ի տէրութենէ առ 'ի առնել զարդարութիւն, և տալ զարդար վճիռս․ ուստի և պարտի տալ ձրի․ ապա թէ ոչ՝ պարտաւորի հատուցանել զնոյն զոր միանգամ ընկալեալ իցէ ։ Այլ դժուարութիւնն յայսմ է, թէ զիարդ ունիցի դատաւորն կարգաւորել զանձն՝ յորժամ երկոքին կողմանքն ըստ ինքեան ունիցին միօրինակ պատճառս հաւանականս ։ Յայդ դիպուած դատաւորն չկարէ 'ի շնորհս միոյն քան միւսոյն տալ զվճիռն․ այլ պարտի գուն գործել․ զի սոսիք միաբանեսցին և իրաւախոհ լինիցին ընդ միմեանս ։ Իսկ եթէ չհաճեսցին միաբանիլ, յայնժամ պարտի դատաւորն վճռել 'ի նպաստ այնր կողման՝ զոր համարիցի ունել առաւել հիմնական հաւանականութիւն պատճառի․ վասն զի միշտ պարտաւորի դատաստան առնել 'ի նպաստ այնր կողման՝ որ ունի ըստ ինքեան, կամ կարծի ունիլ ըստ ինքեան պատճառս առաւել հաւանականս․ որպէս է տեսանել 'ի դատապարտեալ

նախադասութե̃ Իննովկենտիոսի ԺԱ̃. Թիւ Է̃:

* Հաւանականաբար, որպէս ինձ թուի, կարող է դատաւորն դատել նաև ըստ նուազ հաւանական կարծեաց ||: Պատճառ դատապարտութեան է, զի դատաւորն եկեղեցական և քաղաքական, մանաւանդ թէ՝ և բնական իրաւամբք՝ պարտական է դատել ը̃ առաւել հաւանական կարծեաց. ապա ո՛չ կարէ վճիռ հատանել ըստ նուազ հաւանականին:

Ի հրահանգ նորավարժ խոստովանահարց կարևոր համարիմ յայսմ վայրի յանդիման կացուցանել, թէ ո՛ր իցէ նախադասութի ապահով՝ և ապահովագոյն. և ո՛ր հաւանական՝ և հաւանականագոյն: Արդ՝ կրկին տարակոյսք դնին առաջի:

Տարակոյս Ա̃՝ արդեօք 'ի զուգընթանալ նախադասութե̃ ինչ ապահովի կմ̃ ապահովագունի՝ ընդ նախադասութե̃ հաւանականագունի, որո՞վ զհետ երթալ պարտ իցէ, առաջնո՞յն թէ երկրորդին:

Տարակոյս Բ̃. եթէ զուգընթաց լիցի կարծիք ինչ առաւել հաւանական ընդ նուազ հաւանականի, մա՞րթ է արդեօք հետևիլ նուազ հաւանականին, և թողուլ զառաջինն:

Իսկ արդ՝ ասեմ Ա̃. թէ ապահով առաջարկութին կամ կարծիքն այն է՝ որ ստուգապէս փրկէ զմեզ 'ի վտանգէ մեղաց: Իսկ ապահովագոյնն այն է՝ որ ստուգագոյն ևս ազատէ զմեզ 'ի վտանգէ աստի: Օրինակ իմ̃. ապահով կարծիք է, թէ որ մեղաւ մահուչափ մեղօք՝ ո՛չ պարտաւորի իսկ և իսկ խոստովանիլ, թէ և ունիցի ժամ բարեպատեհ: Իսկ ապահովագոյնն այն է որ ուսուցանէ, թէ պարտի խոստովա-

նիլ յառաջնում առթի՝ որ ընդ առաջ ելանէ ։ Այլ պարտ է յոյժ ածել, թէ ո՛չ ամ ապահով կամ ապահովագոյն կարծիք է միշտ հաւանական կամ հաւանականագոյն. զորօրինակ ապահով՝ մանաւանդ թէ ապահովագոյն կարծիք է՝ որ ասէ, թէ պարտիմք խոստովանել և ըզպարագայս որք ծանրացուցանեն զմեղս ՚ի նմին տեսակի. և սակայն այս կարծիք չէ հաւանականագոյն. վասն զի ժողովն տրիդենտեան լոկ զայն յայտ արար, թէ պարտիմք խոստովանիլ զպարագայս որք փոփոխեն զտեսակս մեղաց. ՚ի Նիւս ժդ. յղ. ապաշխ". գլ. ե. և է. զորմէ տես զփագնանոս. ՚ի գլ. ամենայն այր կամ կին. յղ. Բող. կմ. 29 ։ Այնպէս ապահով և ապահովագոյն իսկ կարծիք է՝ որ ուսուցանէ, թէ ՚ի պէտս ցաւոյ հարկաւոր եղելոյ առ խոստովանութն, պահանջի յառաջ գալ նմին ՚ի սկզբնաւորական ինչ սիրոյն այ. և սակայն այդ կարծիք չէ հաւանականագոյն. քանզի Աղէքսանդր է. ՚ի կոնդակի իւրում մն սոցին իրաց ենթադրէ, թէ լոկ զզջումն բեկման յղացեալ յերկիւղէ գեհենոյն իցէ առաւել հասարակ կարծիք առ դպրոցեան վարդապետս. որք բաւական համարին զայդ առ խոստովանութի ։

Ասեմ է. թէ հաւանական կարծիքն կամ դրութիւն է հաւանութի ինչ մտաց, որ վասն ծանր ծանր պատճառաց, և մն հեղինակութե բազում վարդապետաց դատի զիմն լինել օրինաւոր կամ ապօրինաւոր. բայց հանդերձ կասկածանօք ինչ ՚ի վերայ ճշմարտութե ՚ի հակառակն կոյս ։ Հաւանականագոյն կարծիք այն է, որ ունի պատճառս՝ որք երևին առաւել զօրաւոր. և ունի զնս բազմագոյն վարդապետս,

և այն մեծահարկիս՝ քան զնուազ հաւանականին. և սակայն կրէ հանապազ զերկիւղ ինչ ճշմարտութե՟ 'ի հակառակն կոյս, թէպէտ և փոքր քան զնուազ հաւանականն, այլ ոչ իսպառ անկասկած: Իսկ հաւանականութիւն՝ է որ ներքին է. և է որ արտաքին: Ներքին հաւանականութիւն է՝ որ առեալ լինի 'ի պատճառաց, որք համոզեն՝ թէ իցէ օրինաւոր կամ ապօրինաւոր՝ զոր ունի ոք առնել կամ 'ի բաց թողուլ: Արտաքին հաւանականութիւն առեալ լինի 'ի թուոյ և 'ի հեղինակութե՟ վարդապետաց, որք ուսուցանեն կամ դատապարտեն զայն:

Ասեմ Գ. կարծիքն՝ հաւանական կամ հաւանականագոյն՝ լինի կրկնակի. մի՝ տեսականաբար հաւանական, և միւս ևս գործնականաբար հաւանական: Կարծիքն տեսականաբար հաւանական այն է՝ որ մտածեալ ըստ իւրում առարկայի, և 'ի վերացեալն, հրաժարեցուցեալ 'ի պարագայից գտելոց 'ի գործադրութե՟՝ համարեալ լինի օրինաւոր և առանց մեղաց: Իսկ կարծիք գործնականաբար հաւանական այն է՝ որ մտածի ոչ միայն ը՟ առարկայի իւրոյ 'ի վերացեալն, թէ իցէ՞ արդեօք օրինաւոր կամ ապօրինաւոր. կամ մի՞թէ իցէ առնել թէ ոչ. այլ մտածի ըստ գործադիր կարգի, և ըստ պատահական պարագայից. որ արտաքոյ են առարկայի առաջիկայ գործողութե՟, առանց որոց ոչ մարթ և ոչ սովոր բարոյապէս 'ի գործ դնիլ. զորօրինակ՝ տեսական հայեցուածով է կարծիք հաւանական, թէ զոկեայն կարող է առ լոկոյ նախանձու արդարութե՟ պնդել առաջի դատաւորին՝ զի պատուհասեսցի վնասապարտն. այլ այս կարծիք ոչ է գործնականա-

որպէս հաւանական սակս վտանգին, յոր բազում անգամ լինի անկանել. եթէ ոչ ըղձեսցեն մարթի շարժել յայդ ստիպողութ. մտադրեալ 'ի քինախնդրութէ. և ոչ լոկ առ նախանձու արդարութե։ Իսկ եւս 'ի տեսականն շատ է չհաւանել վատթար շարժմանց ցանկութե՝ առանց պարտաւորելոյ զմեզ դրականապէս զդէմ ունել կամ նուաճել զայն. բայց այս կարծիք չէ հաւանական 'ի գործնականն 'ի սակս վտանգին՝ յոր գնէ ոք զանձն՝ յորժամ կրաւորաբար մերձ յայնպիսի շարժմունս, չընդդիմանալով և չսանձելով ըստ կարի։ Ենթադրեալ զվարդապետութիս զայսոսիկ,

Պատասխանեմ առ առաջին տարակոյսն. յորժամ զուգընթանայ կարծիք ինչ ապահով կամ ապահովագոյն ընդ հաւանական կամ առաւել հաւանական կարծեաց՝ չեմք պարտաւոր հետևիլ առաջնոյն՝ և թողուլ զերկրորդն. այլ կարեմք օրինաւորապէս զհետ գնալ երկրորդին. միայն թէ իցէ իսկապէս հաւանական կամ եւս հաւանական, և չիցէ բանն զվաւերութէ խորհրդոց։ Պատճառ առաջին մասին նախադասութենս յայտ է. որովհետև մարթիմք օրինաւորապէս չխոստովանիլ զպարագայս սոսկապէս ծանրացուցիչս՝ ըստ յայտնելոյ տրիդենտեան ժողովոյն առանց ինչ պարտաւորելոյ զմեզ հետևիլ ներհակականին այդմ, այսինքն՝ ապահով կամ ապահովագոյն կարծեաց, որ ուսուցանէ պարտական զմեզ գոլ 'ի խոստովանել զայնս։ Այնպէս մարթիմք առանց ինչ յանցանաց առ վաւեր խոստովանութի ունել միայն զզղջումն գերբնական ջէրհի–ղէ ֆեհէնոյն, ըստ բացատրութէ Աղէքսան". է. առանց պար-

տաւոր լինելոյ՝ ունել միշտ զներգործութիւն կատարեալ զզգման, ըստ որում պահանջէ կարծիքն ապահովագոյն։ Այնպէս և մարթ է մեզ առանց ինչ յանցանաց չառնել զխոստովանութիւն յաւիտ պատրաստական, թէև ունիցիմք ըզխիղճ մահուչափ մեղաց. այլ ձգել զխոստովանութիւն յայլ նուագ. թէպէտ և հակառակն իցէ ապահովագոյն. իսկ երկրորդ այդ կարծիք՝ լոկ ստուգապէս հաւանական։ Իսկ պատճառ երկրորդ մասին պատասխանւոյ մերոյ՝ քաղի 'ի դատապարտութենէ Ա. Նախադասութենէ յԻննովկենտիոսէ ԺԱ. * Ո՛չ է ապօրինաւոր 'ի մատակարարութեան խորհրդոց զհետ երթալ հաւանական կարծեաց վասն վաւերութեան խորհրդոյն, թողեալ զապահովագոյնն, եթէ ոչ արգելցեն օրէնք, կամ համախմբութիւն, կամ վտանգ անկանելոյ 'ի ծանր տուգանս։ Եւ ըստ այսմ՝ հաւանական սոսկ կարծեօք չէ պարտ վարել 'ի մատակարարութեան մկրտութեան, և կարգի քահանայութեան կամ եպիսկոպոսութեան ‖։ Նմին իրի յորժամ լինի բան զվաւերութենէ խորհրդոց, և զնիւթոյ, և զձեւոյ նոցա՝ չէ և չէ երբէք օրինաւոր զհետ լինել իրիք կարծեաց թէպէտ և իսկապէս հաւանականի՝ թողեալ զապահովագոյնն սակս վտանգին՝ յորում դնի խորհուրդն. և վասն անպատուութեանն՝ որ առնի նմին դնելով զնոյն 'ի վտանգ ոչընչութեան։

Պատասխանեմ առ երկրորդն այն տարակոյս, թէ 'ի զուգընթանալ երկուց կարծեաց, յորոց մին՝ իցէ հաւանական, և միւսն՝ նուազ հաւանական, որո՞ւմ արդեօք պարտ իցէ զհետ գնալ։ Արդ՝ քանզի խնդիրդ է բազմակնճիռն, որ աստի և անտի ունի պատճառս ծանունս,

և մեծամեծ վարդապետս՝ որք պաշտպան կան միումն և միւսումն. և զի ցարդ ես չէ՛ սահմանեալ ինչ յեկեղեցւոյ, չէ՛ 'ի դէպ և ինձ զիմ կարծիս ասել. այլ միայն դնել առաջի աչաց Նորակիրթ խոստովանահարց,

Ճ, զոր 'ի յԱղեքսանդրէ Է. դատապարտեալ նախադասութիւնն իէ. *Եթէ գիրք ինչ իցէ ուրուք 'ի նորագունից և յարդեաց, պարտ է զնա կարծիս համարել հաւանական, միայն թէ չիցէ հերքեալ յառաքելական աթոռոյ իբրև անհաւանական ||: Յորմէ ուսիս իմաստասիրել, թէ չէ բաւական՝ առ 'ի համարել զկարծիք ինչ իսկապէս հաւանական, լինել այնր ուսուցեալ 'ի միոյ վարդապետէ. և ստոյգ լինելն՝ թէ չէ՛ դատապարտեալ յեկեղեցւոյ. այլ խնդրի համահաւանութիւն մեծամեծ վարդապետաց. և կշռութիւն ծանր ծանր պատճառաց՝ որք մարթասցին հաւանական զնա կացուցանել:

Է. Յորժամ ճառեմք զվաւերութէ խորհրդոց՝ չէ հնար հետևել հաւանական կմ հաւանականագոյն կարծեաց, այլ պարտ է զհետ գնալ ապահովագունին, ըստ ասացելոցս ընդդէմ Ճ. Նախադասութէ դատապարտելոյ յԻննովկ". ԺԱ:

Զ. Ոչէ օրէն դատաւորի 'ի դատել իւրում գնալ զհետ նուազ հաւանական կարծեաց. այլ առաւել պարտի զհետ երթալ ևս հաւանականին. որպէս յայտ է 'ի Բ. նախադասութէ դատապարտելոյ յԻննովկենտիոսէ ԺԱ. * Հաւանական համարիմ, թէ դատաւորն կարէ դատաստան առնել նաև ըստ նուազ հաւանական կարծեաց ||: 'Ի դատապարտումն նախադասութեանս հետևի, թէ խոստովանահայրն՝ որ է դա-

տաւոր 'ի ներքին ատենի, ոչ կարէ արձակել զապաշխարօղն՝ զոր հաւանականաբար համարի տրամադրեալ, այլ հաւանականագոյնս համարի ոչ տրամադրեալ։

Զ. Ո՞ւ 'ի հետեւիլ կարծեաց իւիք՝ չէ՞ բաւական թէ իցէ ըստ իմիք եւ եթ հաւանական. եթէ՞ արտաքին հաւանականութ՟ք, զորօրինակ՝ վկայութ՟ք վարդապետի ուրուք. եւ եթէ՞ ներքին հաւանականութ՟ք, զորօրինակ՝ թեթեւ պատճառաւ իւիք՝ որ զայն պաշտպանէ. այլ պահանջի լինել ստուգիւ հաւանական. զորօրինակ յորժամ կայցէ վկայութ՟ի բազմութ՟ե մեծամեծ վարդապետաց. եւ պատճառն ոչ եթէ արձակաբար եւ եթ, այլ բաղդատութ՟ք ընդ պատճառի հակառակ կարծեաց հաստատի իցէ ծանր գոլ եւ հիմնական։ Յայս սակս Իննովկեն″ ԺԱ. դատապարտեաց զնախադասութիւնն Գ։ * Ընդհանրապէս յորժամ գործեմք ինչ ամրացեալ հաւանականութ՟ք՝ եթէ ներքնով եւ եթէ արտաքնով, թէ եւ թեթեւ իցէ այն, միայն թէ չիցէ արտաքոյ սահմանաց հաւանականութ՟ե, միշտ խոհեմաբար գործեմք ‖։ Այս պատճառ դատապարտեալն է. զի յորժամ կարծիք ինչ առ հաւանականութ՟ի իւր ունի հիմն թեթեւ՝ չկարէ երբէք առնուլ՝ թէ իցէ 'ի մէջ սահմանաց հաւանականութ՟ե. վասն զի այն կարծիք են միայն 'ի մէջ սահմանաց հաւանականութ՟ե՝ որք ըստ ինքեան ունին զհիմն ծանր։

Է. Ոչ արդարանայ անհաւատն 'ի չհաւատալն՝ յորժամ վասն անհաւատութ՟ե իւրոյ ունիցի զկարծիս նուազ հաւանականս 'ի վերայ ճշմարտութ՟ե հաւատոյ իւրոյ առ հաւատովք

մերովք ։ Վասն այսորիկ Իննովկ". ժա. դա-
տապարտեաց զԻԴ. նախադասութիւն. * Բնքա-
սիր լինի յանհաւատութէ անհաւատն չհաւա-
տալովն՝ երբ ունի զկարծիս ինչ հաւանական,
թէպէտ և նուազ ։ Որոյ պատճառն է. քան-
զի առ 'ի կարօղ լինել ումեք փրկիլ 'ի միում
կրօնի՝ չէ բաւական թէ այն երևեսցի հաւա-
նական կամ հաւանականագոյն քան զայլ կրօնս
հակառակս 'ի բան ճշմարտութե նոյին, այլ
պարտի ունել զբացայայտ հաւատալիութիւն
զնմանէ. որ չէք, և չկարէ իսկ լինել երբէք
յոր և իցէ աղանդ՝ բայց միայն 'ի քրիստոնէա-
կան հաւատս ։ Այնն իրի և ոչ մի յաղանդից
մարթի ունել զճշմարիտ հաւանականութի 'ի
բան ճշմարտութե հաւատալի գոլոյ իւրոյ ։

Է. Հաւանութիւն ճշմարիտ հաւատոյ ոչ կա-
րէ կալ յակաստանի 'ի ձեռն լոկ հաւանական
ծանօթութե ածոյին յայտնութե. այլ պարտի
լինել այդ բարոյապէս հաւաստի, և բացայայտ
բացայայտութե հաւատալիութե. վս որոյ Իննովկ".
ժա. դատապարտեաց զնախադասութիւն իա.
* Հաւանութի հաւատոյ՝ գերբնական և օգտա-
կար առ փրկութի՝ կարէ կալ ընդ լոկ հաւա-
նական ծանօթութե յայտնութե. մինա և ընդ
կասկածանաց՝ որով ոք խիթայ, թէ գուցէ չէ՛
ած խօսեալ զայդ ։ Պատճառն է. զի յայտնու-
թի հաւատալիութե՝ զոր ունի հաւատն քրիս-
տոնէական 'ի վերայ խորհրդոց հաւատոյ, զորս
առաջի դնէ մեզ 'ի հաւատալ, բերէ ընդ իւր
զբարոյական բացայայտութի յայտնուե յայտ-
նելոյ յոյ զնոցին խորհրդոց. վասն որոյ և պա-
հանջէ զատոյգ և զաննախալ հաւանութի յիշա-

տակեալ յայտնութեանդ. և ո՛չ կարէ կալ ընդ երկիւղի կասկածանաց, թէ արդեօք յայտնեալ իցէ ո՛յ զայդ՝ թէ ո՛չ:

Է. Միշտ է օրինաւոր (՚ի բաց առեալ զվաւերութիւն խորհրդոյ) զհետ երթալ և՛ս հաւանականագոյն կարծեաց ՚ի մէջ հաւանականաց, առանց պարտաւոր լինելոյ հետևիլ ապահովագունին. յաղագս որոյ Աղէքսանդր Է. դատապարտեաց զԳ. նախադասութիւն. * Ո՛չ է օրէն զհետ երթալ նաև ամենահաւանական իսկ կարծեաց ՚ի մէջ հաւանականաց ||: Այլ զայս պարտ է իմանալ նաև ՚ի զուգընթացութեան ապահովի կից ապահովագոյն կարծեաց. որպէս ուսուցանէ հայրն վիվա ՚ի խօսելն զնոյն նախադասութենէ. և յայտ անտի է՝ զոր ՚ի վեր անդր ասացաք, թէ չեմք պարտական իսկ և իսկ ընդ մեղանչելն, և Է ունելն զաւիթ խոստովանելոյ՝ խոստովանիլ. այլ կարող եմք թողուլ այլում պահու. թէպէտ և ներհական կարծիքն իցէ ապահով, իսկ չպարտաւորիլն իցէ միայն հաւանականագոյն: Այլ վասն վաւերութեան խորհրդոց չէ պարտ ասեմ այդպէս իմանալ. զի ՚ի նոսին պարտիմք միշտ զհետ գնալ ապահովագունին, և՛ս և ՚ի զուգընթացութեան հաւանականագոյն կարծեաց. որ կայ և մնայ միշտ ՚ի մէջ սահմանաց հաւանականութեան:

՚Ի վերայ այսր ամի ՚ի զուգընթացութեան ապահով կից ապահովագոյն կարծեաց մարթիմք զհետ երթալ բարոյապէս ստոյգ դատեցելոյ՝ և՛ս և յաղագս վաւերութեան խորհրդոց. զօրօրինակ՝ թէ շատ է գերընական զղջումն բեկման առ խորհուրդ ապաշխարութեան, և չէ հարկաւոր խորտակմանն. ո՛չ և այն՝ թէ չեմք պար-

տակաւն խոստովանիլ զպարագայս սոսկալէս ծանրացուցիչս մեղաց 'ի նմին տեսակի. որպէս քաղի 'ի բանից տրիդ" ժողովոյ: Այլ եթէ՝ խոստովանահայրն՝ որոյ առեալ է հրաման խոստովանութեան յամ դ, 'ի կատարել տարւոյն վաւերաբար արձակէ, երբ կայ սխալումն հասարակաց, և տիտղոս պատրուակեալ. Նաև օրինաւորապէս գլխովին՝ եթէ անմեղադրելի անմտադրութեամբ չյիշեսցէ՝ թէ լցեալ է ժամանակն իշխանութեան իւրոյ. որպ է տեսանել 'ի յայտարարութեան ժողովոյն սինհոդոսաց. ԻԷ. Հարց. 1614. Հա. ԻԴ. Դրուբէց. ԷՉ. 385:

---

## Յաղագս մեղաց որ ընդդէմ կրօնի:

Յայսմ վայր խօսեցեալ զարդարութէ, և ըզ-մեղաց զհամամարտ նմին եղելոց, ճառեսցուք և զկրօնէ. որ նոյնօրինակ 'ի բնութէ իւրմէ պարտաւոր առնէ զմեզ ընդ ծանր մեղօք: Տե՛ս զկամպիւն. Հա. Ա. Գլ. ԼԲ. ՀՏ. 6:

Այլ արդ, կրօնն է առաքինութիւն ինչ, որ պատուէ և պաշտէ զա՛ծ: Այլ են նր ներգործութիւնք բազումք՝ առ որս պարտաւոր առնէ զմեզ: Նախկինն է աղօթքն. մինչ զի ամենայն քրիստոնեայք պարտական են երբեք երբեք աղօթել առ ա՛ծ. և մանաւանդ ասել զտէրունական աղօթս, զոր ուսոյց մեզ քս փրկիչն մեր. * Յորժամ կայցէք յաղօթս, ասասջիք. Հայր մեր՝ որ. եղիցի անուն քո ‖, ԼԱ՛. Ղուկ. ԺԱ. 2: Ապա պարտական է ամ քրիստոնեայ ոչ անգիտանալ զայդ աղօթս. և որ ադխասցի՝ պարտաւորի

ընդ պատժով մեղաց փութալ ուսանիլ զայն, և ասել գոնէ 'ի գլխաւոր տօնս տարւոյն ։

Իսկ եկեղեցականք թոշակաւորք, թէ և չիցեն ձեռնադրեալ 'ի սրբ. աստիճան՝ պարտաւորին ասել զմծային ժամերգութիւն. և եթէ հասութաւորք իցեն՝ ասել զժամերգութիւնն որ նծածնի ։ Իսկ եթէ իցեն 'ի սրբ. աստիճան, թէպէտ և չունիցին զթոշակ կամ զհասոյթ, պարտական են կատարել զժամերգութին կանոնական. սորին վասն եթէ ոչ ասասցեն, կմ առանց մտադրութե և եռանդեան ասասցեն, և կմ եթէ թողուցուն զերևելի ինչ մասն ժամերգութեանդ, մահուչափ մեղանչեն ։ Նա ևս եթէ ունիցին զթոշակ կմ զհասոյթ, պարտաւոր են հատուցանել զպտուղս աւուրն՝ յորում չասացին զժամերգութի. սակայն այսու կանոնաւ. զի եթէ զանց արասցեն ասել զամբողջ ժամերգութիւնն՝ պարտաւորին հատուցանել զպտուղ թոշակին կմ հասութին այնր աւուր ։ Ապա եթէ ասացեալ իցէ նոցա զառաւօտեանն և զօրհնութին, և թողեալ զմնացեալ ժամս, պարտաւորին հատուցանել զկէսն պտղոց այնր աւուր ։ Որպէս և եթէ թողեալ իցէ նոցա զառաւօտեանն և զօրհնութին, և կատարեալ զմնացեալ ժամերգութիս, պարտաւորին հատուցանել զկէս պտղոյ աւուրն ։ Ապա եթէ թողեալ իցեն զմի մասն և եթ. զորօրինակ՝ կմ զառաւօտեանն, կմ զառաջինն, կմ զերրորդն, և կամ զերեկոյին ժմ, պարտաւորին հատուցանել զվեցերորդ մասն պտղոյ թոշակի կամ հասութի աւուրն ։ Այսպէս բացածանոյց սբն Պիոս Ե ։ Այս պարտաւորութիւն կատարելոյ

զժամերգութիւն ստանձնեալ լինի յորէ անտի ստանալոյ ուրուք զթոշակաւորութի՟ , կ՟մ զհասոյթ , որպէս և յորէ անտի ընդունելոյ ուրուք զն՟ք աստիճան ։ Նմին իրի միօրինակ մեղանչէ թոշակաւորն, հասութաւորն , և ձեռնադրեալն 'ի ն՟ք աստիճան՝ եթէ յորէ յայնմանէ զանց արասցէ կատարել զժամերգութի՟ն ։ Իսկ յաղագս յետս հատուցանելոյ զպտուղս յայտ արար ն՟րն Պիոս Ե․ թէ զկնի վեցամսեայ ժամանակի ժառանգելոյ իւրոյ զթոշակաւորութի՟ն , և ո՛չ կանխագոյն պարտաւոր լիցի 'ի հատուցանել ։

'Ի վերայ այսր նիւթոյ կան բազում նախադասութիւք դատապարտեալք ։ Առաջինն Աղէքսանդրէ Է․ թիւ Ի․ * Հատուցումն յոր պարտաւորեաց պիոս Ե․ զթոշակաւորս՝ որք չասեն զժամերգութի՟ , ո՛չ պարտաւորի ը՟ խղճիւ մտաց յառաջ քան զվճիռ դատաւորի․ վ՟ն զի է՛ պատժական ‖ ։ և Ի՟Ա․ * Որ ունի զթոշակ ինչ եկեղեցական , եթէ պարապեալ է ուսման գրոց , ընդ. զիւր պարտականութի՟ 'ի ձեռն այլոյ տալով ասել զժամերգութի՟ ‖ ։ և Լ՟Գ․ * Յետս հատուցումն պտղոց 'ի սակս զանցառութե՟ ժամասացութեան՝ մարթի խորամանկարկաւ լինել 'ի ձեռն ո՛րպիսի և է ողորմութե՟ց , զորս թոշակաւորն կանխաւ արարեալ իցէ 'ի պտղոց թոշակի իւրոյ ‖ ։ և Լ՟Դ․ * Որ յաւուր ծաղկազարդի ասէ զժամերգութի՟ զատկական , ընդ. ըզպատուիրանն ‖ ։ և Լ՟Ե․ * Մի՛ով ժամերգութ՟բ կարող է ոք լնուլ զկրկին պատուիրան՝ վ՟ն առաջիկայ և վասն վաղուեան աւուրն ‖ ։ և Ինովկ՝․ Ժ՟Ա․ թիւ Ծ՟Դ․ * Որ ո՛չն է կարող ասել զառաւօտեան ժամն և զօրհնութի՟ն , այլ կարէ

տեւել զայլ ժամս , չպարտաւորի և ոչ առ մին . վասն զի մեծագոյն մասն յինքն ձգէ զփոքրագոյնն ‖ ։

Պատճառ դատապարտութե՟ առաջին նախադասութե՟ է . զի թէպէտ և վարդապետք ասեն , թէ ոչ լինի ընդ պատժով անկանիլ յառաջքան զվճիռ դատաւորին . այլ այդ չունի տեղի 'ի մերս դիպուած . ուր հաւաստի է ըստ լատերանեան ժողովոյ , և ըստ կոնդակի նըյն Պիոսի Ե . թէ թոշակաւորն զկնի զանց առնելոյն զժամերգութե՟՝ յանիրաւի պահէ զպտուղս . ապա յառաջքան զոմ վճիռ պարտական է հատուցանել ։

Պատճառ դատապարտութե՟ երկրորդին է . վասն զի բեռն կատարելոյ զկանոնական ժամերգութիւն է անձնական . որպէս և ծոմապահելն , տեսանելն զպատարագ , կատարել զապաշխարանս խոստովանութե՟ , ևն . նմին իրի ժող . տրիդ . 'ի Նիստ 24 . գլ . ժէ . ասէ . * Ամենեքին անձամբ , և ոչ ընդ ձեռն այլոց պարտին կատարել զիւծային պաշտամունս ‖ . ապա անմարթ է լինել 'ի ձեռն այլոյ ։

Պատճառ դատապարտութե՟ երրորդին է . զի ողորմութիւնն՝ զոր արար վիճակաւորն 'ի պտղոյ թոշակին իւրոյ յառաջքան զզանցառութի ժամերգութե՟ , տուեալ աղքատօրէն , ողորմութե՟ կամ նեղգործութե՟ . վասն այսորիկ չկարէ լինել զայն պարտս՝ որ ծագեցան զկնի տալոյն զողորմութի , զարդէն իսկ անցեալն 'ի տէրութիւն այլոց . այսինքն՝ աղքատաց ։

Պատճառ դատապարտութե՟ չորրորդին է , զի որպէս ըստ վաղեմի սահմանադրութեան , նոյնպէս և ըստ օրինադրութե՟ քահանայապե-

տաց բաց 'ի զատկէ և պենտէկոստէն չէ՛ շնոր-հեալ ասել ումեք զառաւօտեան ժամն երիւք և եթ սաղմոսիւք և երիւք ընթերցուածովք. վասն որոյ 'ի Գլ. Յաւուր յետնագրութե. գլխ. Ե. Գրիգոր Գ. այսպէս կարգաւորէ. * Որք միանգամ 'ի հանապազորդեան աւուրս՝ զերիս և եթ սաղմոսս, և զերիս ընթերցուածս ասել յօժարին, յայտ է թէ ոչ 'ի կանոնէ մերց հարց, այլ 'ի յուլութէ և 'ի պղերգութէ զայդ առնեն. իսկ հռովմայեցիք սկսան այլով օրինակաւ առնել: Այլ մեր հետազօտեալ զկարգն հռովմէական, և զհին սովորութն եկեղեցւոյ մերոյ՝ զհետ երթալով նախնի հարց՝ սահմանեցաք լինել ըստ նախակարգելոյդ ||. իմա՛ ըստ որում նաև յարդիս եկեղեցին 'ի կիր առնու զժամերգութիւն սեպհական աւուր ծաղկազարդի, և սեպհական աւուր զատկի և պենտէկոստէի: Այլ քանզի պատուիրան է այս, և է 'ի նիւթ ծանր, ապա չէ՛ մարթ փոփոխել առանց ծանր մեղաց. որպէս յայտ է և 'ի դատապարտեալ նախադասութէն:

Պատճառ դատապարտութե հինգերորդին է. վասն զի պարտաւորութիւն ասելոյ զժամերգութիւն է բեռն ինչ կից ընդ իւրաքանչիւր աւուր. ուստի պա՛րտ է ասել զառաւօտեան և զօրհնութիւն սեպհական աւուր աւուր. և թէպէտ մարթ է ասել յերեկոյի զառաւօտեանն և զօրհնութիւն յաջորդ աւուրն, այլ այդ ոչ զօրէ վ՟ա առաջիկայ աւուր, միանգամայն և վասն վաղուի. զի որպէս զանազան աւուրք են այսօրն և վաղիւ, սոյնպէս խնդրին և կրկին առաւօտեան ժամք. մին վ՟ն սերկեան աւուր, և միւս՝ վասն վաղուին:

Պատճառ դատապարտութե՛ վեցերորդ Նախադասութե՛ յՆնոյն. ժա. Ըխ. ծգ. Է, զի թէպէտև ամծային ժամերգութի՛ն է Նիւթ միոյ միայնոյ պատուիրանի վասն միոյ Նեթ աւուր, այլ սակայն որովհետև ունի բազում մասունս բաժանելիս, որք կացուցանեն զմի ինչ ամբողջ, ապա որ կարող է լինել զմի մասն միայն՝ պարտի զայն լինել. որպէս Նա՝ որ ունիցի պարտս 100 դահեկանաց, և կարիցէ հատուցանել զտասն միայն, պարտական է վճարել զայն տասն միայն. վասն զի *Որ անկարանայ վճարել զբոլորն՝ զոր պարտի, պարտական է վճարել զբոլորն՝ զոր կարէ եթէ բաժանելի իցէ այդ||:

Կարմրադիր ազդարարութի՛ն 'ի վերայ պահպանութե՛ ծխի 'ի մատուցանել անդ զպատարագ՝ պատուիրէ, զի մի պատարագեսցէ քահանայն՝ եթէ չիցէ ասացեալ գոնէ զառաւօտեանն և զօրհնութի՛ն: Զանազան են կարծիք 'ի վ̃ր պահպանութե՛ ազդարարութե՛ս: Ոմն անտոնինոս, Նաւառղէս, աղեքսանդր. և կղերիկատոս. ամենահանդերձութե՛ 50. յղ. ՄԷ պատարագի, 'ի մէջ ... րոլ 255 հեղինակս ասեն, թէ որ ոչն պահէ՝ մահուչափ մեղանչէ: Իսկ այլք ասեն. ոչ մահուչափ և ոչ Ներելի մեղանչէ, եթէ գուցէ օրինաւոր պատճառ. իսկ յոչն լինել պատճառի՝ կարի դժուարին է ասել թէ չլինիցի մեղք Ներելի: Նդոյէն փոքր մի խիստ գտանի քան զարժանն 'ի խօսիլն զայսմ պարտաւորութե՛. ուր և թուի կշտամբել իբրև զհիմնականութի՛ զխիստութի՛ն ընդունելոյ զօժիտ միանձնուհեաց. որպէս յուշ առնէ ծանօթարարն եղբայր փիլիպպոս կարբոնեան՝ մինոր խստակրօն:

Երկրորդ Ներգործութե՛ առաքինութե՛ կրօ-

նի՝ է զոհ ՚ոյ պատարագին։ Բայց՝ ամենայն քրիստոնեայք պարտական են յանդիման լինել այսմ ՚ի հրամայեալ աւուրս տօնից՝ մտադրութ. և եռանդեամբ. ապա թէ ոչ՝ ծանունս մեղանչեն. այլ է՝ թէ թողցեն զգոյզն ինչ մասն, կամ փոքր մի ցնդեալ կացցեն կամաւորապէս։ Յաղագս պատուիրանի լսելոյ զպատարագ՝ դատապարտեալ է յիննովկենտիոսէ ժա. նախադ". ծգ. *Նոր զպատուիրանն եկեղեցւոյ վասն տեսութե՛ պատարագի, նա՝ որ տեսանէ զերկուս մասունս նորա, տի՛նա և զչորս միանգամայն՝ յայլ և այլ պատարագողաց||։ Խզ։

Պատճառ դատապարտութե՛ս է. քանզի պարտաւորէ եկեղեցին յաւուրս տօնից տեսանել զպատարագ այնպէս՝ զի որ լսէ զպատարագն, կարօղ իցէ ուշ դնել ամենայն և իւրաքանչիւր մասին. ապա եթէ լուիցէ ոք ՚ի նմին պահու զայլ և այլ մասունս պատարագի ՚ի զանազան պատարագողաց՝ չէ հնար ունել նմա զպարտուպաւշաճ մտադրութի և ջերմեռանդութի առ իւրաքանչիւր մասն պատարագի. ուստի և ոչ լնու զպարտս եդեալս յեկեղեցւոյ։

Իսկ ՚ի մասուցանել զսբ պատարագ՝ պարտաւորին ամենայն քահանայք. որք վասն այնորիկ ձեռնադրեցան և ընկալան զկարգ քահանայութե. վասն որոյ եթէ քահանայ ոք առանց օրինաւոր արգելանաց չմատուցէ զպատարագ գոնեա յաւուրս հանդիսաւոր տօնից՝ ծանունս մեղանչէ. որպէս ուսուցանէ ՚սբն Թովմ. մս. 3. խն. ձբ. յօդ. 20։

Բենեդիկտոս ԺԴ. յերրորդ գիրս խոր. յղ. ՚ի պատարագի. գլ. ա. հմ. 10. ասէ թէ անմարթ է պաշտպանել զկարծիս այնոցիկ՝ որք ասեն նե.

բելլ և եթ մեղօք մեղանչել քահանային, որ չունելով զհոգաբարձութիւն հոգւոց, և ոչ այլուստ գոլով պարտաւորեալ մատուցանել զպատարագ, բնաւ իսկ պատարագէ ոչ ՚ի մէջ տարւոյն։

Այդպիսի կարծիք հրամանաւ նորին Պիոսի Ե. բարձաւ ՚ի մատենէ կարդինալ կայետանոսի։ Զի մարթ և արձակութիւն տալ այնմ, որ ասիցէ՝ թէ օրէն է չպատարագել նաև միանգամ ՚ի տարւոջ։ Եւ ոչ արդարացուցանէ զոք լինելն յայն միտս, վասն ունելոյ զսովորութիւն մեղանչելոյ. զի որպէս ուսուցանէ Ագորիոս Ճ. Գիր. Ծ. Գլ. ԻԴ. Խ. Ժ. *Սովորութեան կամաւոր է մեղքն, պարտական է խորշել ՚ի նմանէ ║։ Ասել արժան է ընդ կարդինալ լուկոնի. յղ. Խրհ. հաղորդ. չափ. Է. թէ փորձէ զմի մահուչափ մեղս՝ որ ոչն պատարագէ ՚ի տարւոջ. վասն զի նշան է զեղծ կենաց, միանգամայն և գայթակղութիւն։ Ի վախճանի ՚ի սակս պէսպէս պարագայից կարելեաց պարտաւորի քահանայն ընդ ծանր մեղօք մատուցանել պատարագս ՚ի մէջ տարւոյն. թէև պատարագեալ իցէ յաւուրս կիւրակէից և տօնից. զօրօրինակ՝ եթէ պէտք լինիցի պատարագել առ ՚ի տանել Թոշակ հիւանդաց։

Միաբան կարծիք մատենագրաց այս է, թէ պարտ է պատարագին տևել գոնէ զերրորդ մասն միոյ ժամու և ոչ անցանել քան զկէս ժամ։ Իսկ պատարագն որ վան ննջեցելոց զերրորդ մասն միոյ ժամու. մինչ զի չէ պարտ ունկն մատուցանել բանից ոմանց՝ որք պաշտպանեն զթիւր սովորութիւն մատուցանելոյ զպատարագն խուճապ լեզուաւ ՚ի համառօտ փութալով։ Այնպիսիքն ՚ի մէջ բերեն զհրէայս, որոց պատուէր

եղաւ փութանակի ուտել զդառն զատկական. բայց փութալն նոցա էր հարկաւոր 'ի յայտ առնել զանցս նոցա։ Սուտ է թէ ո՛րն Թովմաս կանոնաւորիացին շուտափոյթ պատարագէր. որպէս քաղի 'ի գրոց պետրոսի հրուգերիոսի, որոյ գրեալ է զվարս նորա։ Խոստովանահայրն պարտական է յուշ առնել այդպիսի քահանայից թէ բազումք մեռանին յանկարծամահ, զի վաղվաղկոտ են 'ի մատուցանել անդ զպատարագ։

Երրորդ ներգործութի՛ կրօնի՝ է պահպանութի՛ տօնից, որ հաստատեալն է 'ի հրաժարելն 'ի ծառայական գործոց առ 'ի պարապիլ յաղօթս և յմ̃ծային ժամերգութի՛ս և 'ի քարոզս։ Նա է պատուիրան բացասական, որ արգելու զծառայական գործս առ 'ի միտ դնել աղօթից։ Միայն թէ ընդունի զթեթևութի՛ նիւթոյ, երբ կայցէ պատճառ ինչ իրաւացի։ Բաց 'ի բացասական պատուիրանէ, է և ստորասական պատուիրան տեսանելոյ զպատարագ։ Վասն որոյ որ յաւուրս տօնից ո՛չ լուիցէ զպատարագ, և ո՛չ հրաժարեսցի 'ի ծառայական գործոց, գործէ զկրկին մահուչափ մեղս. զմի՝ ընդդէմ բացասական պատուիրանի գործելով զգործ ծառայական. և երկրորդ՝ ընդդէմ ստորասական պատուիրանին ո՛չ տեսանելով զպատարագ։ 'Ի վերայ պատուիրանի պահպանութե̃ տօնից՝ Ինոկկ". ժ̃ա. դատապարտեաց զնախադասութի̃ն ծ̃բ. * Պատուիրանն պահելոյ զտօնս ո՛չ պարտաւորէ ընդ մահուչափ մեղօք, եթէ չկայցէ գայթակղութիւն, և արհամարհութի̃". և այլն։

'Ի թիւ ծառայական գործոց պա՛րտ է գրել

և զձկնորսութին՝ ցորչափ լինիցի վասն շահու-
յոյր սակս չէ օրէն յաւուրս տօնից առնել
զձկնորսութի. սուարէզ. յղ. կրօնէ. հատ. ՟Գ.
գիրք ՟Ը. գլ. ՟ԺԶ. թիւ. 1: Իսկ Աղեքսանդր ՟Է.
՚ի նամակի իւրում առ արքեպսն տրեվերայ
շնորհեաց աղքատաց կարող լինել որսալ յա-
ւուրս տօնից՝ բաց ՚ի կարի հանդիսաւորաց,
առ պահպանութի աղքատ ընտանեաց իւրեանց
յորժամ ձկունք յայն աւուրս առ ծովեզերբն
կայտառեսցին. այլ ՚ի լրանալ ձկնորսութեն ՚ի
դրամոց անտի հանցեն մասն եկեղեցւոյ և աղ-
քատաց: Զայսօրինակ շնորհ արար աղքատաց
և Սիքստոս ՟Ե. ըստ աղերսագրի Բերային
և կրօնաւորաց մենաստանի դղեկին նոյն փե-
լիքսի կուխտոլեան ՚ի կարգէ նոյն բենեդիկտո-
սի: Աղորէպանք ոչ կարեն հանապազորդել յա-
ղալ զալիւր. միայն թէ չգուցէ հարկ, կամ սո-
վորութի: Բոնակինա ասէ, թէ մահուչափ մե-
ղանչէ՝ որ ոք պարապիցի ծառայական գործոց
ժամ մի ողջոյն: Անհաւանելի է կարծիք նոցա՝
որք առ ՚ի լինել մեղք մահուչափ պահանջեն
զմիջոց երիր մասին աւուր. զի չիք պատճառ-
ամոքիչ, որպէս գրէ սուարէզ:

Ըստ վաղեմի սովորութե եկեղեցւոյ՝ պար-
տաւորութի էր առնելոյ զտօնս սկիզբն առնէր
՚ի նախընթաց երեկոյէ մինչև ՚ի յաջորդ երե-
կոյ. որպէս յայտ է. ՚ի գլ. Ալենայն. տիտղ. յղ.
տօնից: Հասարակ սովորութին ընկալեալ առ
եւրոպացիս սկսանի ՚ի կէս գիշերոյ ՚ի կէս գի-
շեր. որպէս քաջ նշանակեաց յիշատակեալն
սուարէզ:

Ծանիր. զի քրիստոնեայ՝ որ ծառայեցուցէ
զանհաւատն յաւուրս տօնից, ոչ մեղանչէ. որոյ

պատճառն է՝ վն զի ծառայական գործք վասն անհաւատին, որ չէ անկեալ ընդ հպատակութ եկեղեցական օրինաց՝ չմարթի ասել՝ թէ արգելեալ իցեն: Տիանա. Հ. Է. ճառ ծԶ. ղե. 7. Յանուարիոս, Լեանդրոս, և այլք: Իսկ Լայիմին. Գր. Ա. ճառ. Դ. Գլ. Է. ասէ. 'ի դէպ է նաև իշխական յիմարաց հրամայել զգործ ծառայական. յորմէ իմաստասիրի թէ ուրեմն և անհաւատից, զի երկոցունց նոյն է բան 'ի կարգի առ օրէնս եկեղեցւոյ: Ապա եթէ ընդ մէջ մնացէ գայթակղութի՝ չլինի ասել ազատ գոլ 'ի մահուչափ մեղաց:

Չորրորդ ներգործութի կրօնի՝ է ուխտն որ է ազատ խոստումն եղեալ այ վասն լաւագոյն բարւոյ. Առ վաւերութիւն ուխտին պահանջին երրակի ներգործութիք: Առաջինն է մտաց. զի ծանիցէ և 'ի միտ առցէ զոր կամի խոստանալ այ: Երկրորդն՝ կամաց, զի կամեսցի խոստանալ և պարտաւորել զանձն այ: Երրորդն՝ ներգործական խոստումն եղեալ այ՝ վասն առնելոյ ինչ մի:

Ասի՝ խոստումն եղեալ այ. քանզի խոստումն՝ որ լինի մարդոյ՝ ոչ է ուխտ: Իսկ եթէ բաց 'ի խոստմանէ եղելոյ առ մարդ՝ յաւելցի և ուխտ, զորօրինակ՝ եթէ ոք խոստանայ խոստովանահօր իւրում առնել սկիհ մի արծաթի, և միանգամայն ուխտէ այ առնել զայն սկիհ՝ և չառնէ, յայնժամ մեղանչէ կրկին մեղօք. մի՝ ընդդէմ արդարութե՝ թերի գտեալ 'ի 'ի խոստմանէն, զոր արար քահանային, և նա ընկալաւ. և երկրորդ՝ ընդդէմ կրօնի. զի պակասեցաւ 'ի խոստմանէն որ առ ած:

Ասի խոստումն եղեալ այ վասն բարւոյ լաւա-

գունի։ Ուստի որ խոստանայ ինչ անտարբեր ինչ. կամ թէ բարի իսկ, բայց ոչ բարեգոյն 'ի սեռէ իւրմէ՝ չառնէ ինչ ուխտ, և ոչ իսկ պարտաւորի։ * Զի անհաճոյ է ինչ անհաւատարիմ և յիմարական խոստումն||. (ըստ մեզ) * Զի ոչ են կամք 'ի ձեռս անզգամաց. դու զոր ուխտես՝ հատո՛||. Ժող. Գլ. Ե. ՀՏ. 3. Իսկ ըստ այսմ եթէ ոք ուխտս դիցէ չաշտանակել 'ի ձի. վասն զի յողովակի անկեալ իցէ 'ի ձիոյ, չէ վաւեր ուխտ նորա. զի չէ՛ վասն լաւագոյն բարւոյ, և ոչ եղեալ 'ի պէտս մեծագոյն կատարելութեան. Իսկ որ ուխտիցէ ամուսնանալ, չէ՛ ինչ վաւեր ուխտ այդպիսի. քանզի չէ վասն լաւագոյն բարւոյ. զի վիճակ ամուրեաց լաւագոյն է քան զվիճակ արամբեաց. միայն յայնժամ համարի վաւեր՝ յորժամ ուխտեալ իցէ առ 'ի կարօղ լինել չանկանիլ 'ի զգայական մեղս. ըստ առաքելոյն բանի. * Լաւ է ամուսնանալ՝ քան զջեռնուլ||։ Իսկ եւս մարթ է առնել զուխտ ինչ 'ի վերայ այնր բանի՝ առ որ պարտաւորիմք ընդ ածային և եկեղեցական պատուիրանաւ. զորօրինակ՝ վասն պահելոյ զողջախոհութիւն, և ծոմապահելոյ յաւուրս քառասնորդաց. և որ զանցանիցէ զայսու՝ գործէ մեղս կրկին. մի՝ ընդդէմ ածային կամ եկեղեցական պատուիրանին, որ պարտաւորէր զնա առնել զայն գործ. և միւս եւս ընդդէմ ուխտին, որով լինի սեղանակապուտ։

Ուխտն բաժանի 'ի հանդիսական և 'ի պարզ։ Առաջինն կոչի հանդիսական, զի յեկեղեցւոյ եղև ընկալեալ. այլ ոչ նոյնպէս և երկրորդն։ Վասն այսորիկ որ առասն կոխէ զառաջինն եթէ 'ի նիւթ ողջախոհութեան, և եթէ աղքատութեան, և կամ հնազանդութեան, պարտաւորի ուրոյն

նշանակել 'ի խոստովանութեան զհանդիսականութիւն ուխտին. քանզի յայն դիպուած ոչ միայն թշնամանադիր լինի նոյ որում խոստացաւն, այլ և եկեղեցւոյ՝ որ հրապարակաւ ընկալաւ զխոստումն նորա: Այս ուխտ հանդիսական՝ առնի յուխտադրութեան կրօնաւորին, կամ յընդունելութեան նոր աստիճանաց: Նոյնպէս և որ քակէ զպարզ ուխտն՝ պարտաւորի ուրոյն նշանակել 'ի խոստովանութեան, յինչ նիւթ իցէ արդեօք ուխտ իւր, 'ի ծածկապահել, յայց ելանել եկեղեցւոյ, կամ զաղօթս ինչ ասել. քանզի զոր օրինակ՝ այս առաքինութիւնք տեսակաւ տարբեր են յինքեանս, նոյնպէս տարբեր լինին և բանաբարութիւնք նոցա:

Յաւէտ լիցի, զի ուխտն երբեմն կից է ընդ երդման. որ և կոչի ուխտ երդուեալ. և զի սա ունի զկրկին կապանս՝ զուխտի և զերդման, առաւել դժուարաւ պարտ է տնօրինել կամ փոփոխել: Եւ յորժամ պապն տայ զիշխանութիւն փոխելոյ զուխտ ինչ տնօրինմամբ, պարտիմք իմանալ թէ նիւթն փոփոխեալ 'ի յուխտի՝ կարէ լինել փոքր մի նուազ քան զայն՝ որ լինէր 'ի պարզ փոփոխումն, որ պարտի լինել 'ի Լաւագոյն անդր, կամ 'ի հաւասար: Տես զնամակս տն մերոյ բենեդիկտոսի ԺԴ. գրեալ առ խոստովանահարս՝ որ սկսանի, 'ի ՔՉ աշխարհաց:

Բայց է ուխտն վերապահեալ, և այլ՝ ոչ վերապահեալ. Ուխտք պահեալ պապին՝ են մշտնջենաւոր ողջախոհութեան. հաստատեալ կրօնաւորութեան. ուխտագնացութեան առ սեամս սրբ առաքելոցն պետրոսի, և պօղոսի. ուխտագնացութեան առ սրբն յակոբ կոմպոստեղայ, կամ առ սրբ գերեզման տն՝ որ յերուսաղէմ: Իսկ որք կա-

րող է տնօրինել զայսոսիկ՝ բայց միայն պապն. և որ տնօրինեսցէ առանց մասնաւոր արտօնութեան՝ անկանի 'ի բանադրանս պահելոյ պապին. որպէս է տեսանել 'ի կոնդակն վաւերանդի. Ըէպլէտու ժէրուսաղէմայն. յշ. ապր. և Բող.

'Ի վերայ յիշատակեալ հնգեցունց ուխտից՝ Տրն մեր Բենեդիկտոս ԺԴ. յաւել զայլ երկուս պահելոյ ինքեան 'ի կոնդակ իւր յոբելեական. որոյ սկիզբն է Օրհնեալ է Տծ. զորս չկամի լինել տնօրինելի յայլոց, և ոչ 'ի ժամանակի յոբելինին անգամ. ևս ուխտն՝ որ 'ի չորրն Երրորդէն. զորօրինակ՝ Ուխտեմ ես օծանել զայս ոք օրիորդ. զոր եթէ ընդունիցի աղջիկն՝ չէ մարթ տնօրինել առանց հաճութեան նորա: Որպէս և ուխտն 'ի Հնգ Երրորդէն. որպիսի են ուխտք յարատևութեան՝ զորս առնեն 'ի միաբանութիւն ինչ. յորս ոչ լինին երբէք ուխտք հանդիսականք: Նոյնպիսի է և ուխտն՝ զոր առնեն հարք միսիօնի, ևս առաքելութեան, կալ մնալ ցմահ 'ի միաբանութեան անդ: Ուխտն երկրորդ կոչի 'ի պատէժ Մեղաց, կամ Նախապահեստ 'ի մեղաց. զորօրինակ՝ Ուխտեմ ես, զի թէ այլ ևս անկայց յայս ինչ մեղս՝ պահեցից հացիւ և ջրով. և այս ևս է անտնօրինելի. եթէ ոչ՝ զի պատիժն փոփոխելի՝ իցէ համանման ընդ պատժոյն՝ զոր խոստացաւ ոք 'ի յուխտն:

Մարթ է բառնալ զուխտն երիւք: Տնօրինմամբ, փոփոխմամբ, և ցրմամբ: Տնօրինել կամ փոփոխել զուխտս՝ թէև ոչ պահելոյ պապին՝ անկ է եպիսկոպոսին. և ոչ ոք այլ կարող է առնել առանց մասնաւոր արտօնութեան:

Տնօրինումն՝ բառնայ գլխովին զոմն պարտա-

ւորութիւն ուխտին. բայց տուեալն առանց օրինաւոր պատճառի՝ է ոչինչ:

Որ փոփոխէ՝ ոչ բառնայ զպարտաւորութիւն ուխտին, այլ փոխանակէ զայլ նիւթ ընդ նորա. ուստի որ առնէ զհակառակն փոխեալ նիւթոյն՝ մեղանչէ ընդդէմ ուխտին:

Որ ցրէ կամ նանրացուցանէ զուխտն՝ բառնայ զնոյն պարտաւորութիւն ուխտին. և զայս նա միայն կարէ առնել՝ որ ունի զիշխանութիւն տնտեսական. զորօրինակ՝ հայրն կարող է ցրել զուխտ որդւոց. այրն կնոջ իւրոյ. մեծաւորն զկրօնաւորաց իւրոց. և այն՝ յայն եւեթ գործս՝ որք սահմանեն տնտեսական իշխանութեան նոցա: Ուստի ոչ կարէ հայրն նանրացուցանել զուխտն՝ զոր առնէ որդին կամ առ կրօնաւորութիւն, և կամ առ ողջախոհութիւն. և ոչ այրն զուխտ կնոջն՝ որ չիցէ 'ի վնաս ամուսնական կարգի, կամ դաստիարակութեան և բարեկարգութեան ընտանեաց. և ոչ իսկ մեծաւորք զուխտս կրօնաւորաց իւրեանց՝ որ վ̃ս անցանելոյ յայլ կրօն խստագոյն. Գր. օրէն է. յգ. կանոնաց:

Սոքա ամենեքին մեղանչեն՝ եթէ առանց օրինաւոր պատճառի նանրացուցանեն զուխտ ինչ. միայն թէ վաւեր լինի ցրումն այն, եւս և վերապահեցելոյն պայմին. զորօրինակ՝ կինն եթէ ուխտեսցէ գնալ յերուսաղէմ յայցելութիւն սր̃ գերեզմանին, կամ պահել զմշտնջենաւոր ժուժկալութիւն, կարող է այրն նանրացուցանել զայն, թէ և իցէ պայմին վերապահեալ. այլ ըստ երկրորդիս կարէ ցրել միայն՝ բաց ամուսնական պարտուցն հատուցման:

Ուխտն 'ի բնութեան իւրում պարտաւորէ ընդ-

մահուչափ մեղօք. և սակայն մարթի երբեմն ընդունիլ զթեթևութիւն նիւթոյ։ Աստի եթէ ոք ուխտեսցէ զօր ամենայն ասել զ՚Ողջ լեր թագուհի, և առ մի նուազ թողուցու, մեղանչէ միայն ներելի մեղօք։

Մեղքն դիմամարտ ուխտին լինչ և իցէ տեսակի կամ ՚ի նիւթ՝ է սրբապղծութիւն. զի է ընդդէմ կրօնի, որում բուռն առնէ։ ՚Ի վերայ ուխտի կրկին են նախադասութիւնք, գ. և կէ. զորս դատապարտեաց իննովկենտիոս ժա. ընդդէմ մոլինոսի. թիւն գ. էր այս * Ուխտք եղեալք վն առնելոյ զինն՝ արգելք են կատարելութե ||: և կէ. էր այն։ * Առաջնորդաց հնազանդելի է ըստ արտաքնոյն. և ընդարձակութի ուխտի հնազանդութե կրօնաւորաց յարտաքինն և եթ ձգի։ Իսկ ըստ ներքնոյն այլազգ է բանն, յոր ած միայն, և խնամակալն ( հոգւոյ ) մտանեն ||: Պատճառ դատապարտութե առաջին նախադասութե է. վասն զի հոգին՚որ խորհրդակից լինի մեզ յուխտել, ըստ այնմ. սղ. հէ. * Ուխտս դիք, և կատարեցէք տն այ մերոյ ||: Եւ յայտ է թէ անհնար է հոգւոյն որ յորդոր մեզ լինել ՚ի խափանարարս կատարելութե մերոյ։ Եւ սբն թովմաս. բ. բ. խն. ձը. յօդ. 6. գրէ. * Ուխտիւ անդրդուելի հաստատի կամքն ՚ի բարին. իսկ առնել զինն կամօք հաստատեցելովք ՚ի բարին՝ հայի առ կատարելուն առաքինու ||: Պատճառ դատապարտութե երկրորդ նախադասութեանն է, քանզի առաքեալն գրէ առ եբրայեցիս. գ. * Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նաքա տքնին վասն ոգւոց ձերոց. որպէս թէ հա-

մարս տալոց իցեն ընդ ձեր‖։ Յորմէ ունիմք իմաստասիրել, թէ պարտ է հպատակ կալ առաջնորդաց՝ նա և 'ի ներքուստ. և թէ ուխտն հնազանդութեան պարտաւոր առնէ և առ 'ի ներքս. որովհետև ունին նոքա համարս տալ վասն հոգւոց՝ որք հաւատացանն 'ի խնամս իրեանց։ Ամին իրի չէ բաւական հպատակութ̅ի արտաքին առ առաջնորդս, այլ պիտի և ներքինն։ Ասուի գրէ ս̅բն Թովմաս. Բ̅. Բ̅. խն. ճչդ̅. յօդ. 8. * Ուխտն հնազանդութ̅ե է գլխաւորն 'ի մէջ երից ուխտից կրօնի. վասն զի ուխտիւ հնազանդութ̅ե ինչ մի մեծագոյն նուիրէ մարդո̅յ, այս է զսեպհական կամս գլխովին‖։

Հինգերորդ ներգործութ̅ի կրօնի՝ է երդումն, որ է կոչել զա̅ծ 'ի վկայ առ 'ի հաստատել զճշմարտութ̅ի ստորասութ̅ե ինչ՝ կամ խոստման։

Քառեակ են ազգ երդման։ Ստորասական. Խոստաբանական. Սպառնական. և Նզովական (կամ անիծակուռ)։ Ստորասականն կամ հաստատողականն է՝ յորժամ ոք ստորասէ, կամ ժխտէ զգործ ինչ անցեալ կամ ներկայ. զորօրինակ, ա̅ծ վկայ՝ զի պատարագեցի ես այսօր. ծոմապահեցի երէկ։ Խոստաբանականն է յորժամ խոստանայ ոք առնել, տալ, կամ ասել ինչ. զորօրինակ՝ երդնում յա̅ծ տալ քեզ փոխ դահեկանս 50. կամ թէ գնացից յայսմ եօթնեկի յայն ինչ տեղի. և այլն։ Սպառնականն է, յորժամ սպառնայ ոք տալ պատիժս ինչ այլում երդմամբ չափ, եթէ նա չարասցէ զայս ինչ. զորօրինակ՝ երդնում յա̅ծ սպանանել զքեզ՝ եթէ առ վաղիւն ոչ աշխատեսցիս 'ի գործ։ Նզովական կամ անիծակուռն է՝ յորժամ ոք վասն անձին խնդրէ յաստուծոյ չար ինչ, եթէ

'ի սուտ ելցէ բան իւր՝ զոր խոստանայ կամ հաստատէ. զորօրինակ՝ թէ զիս շանթահար արասցէ՝ եթէ չիցէ ճշմարիտ տալն իմ պետրոսի դահեկանս 30. կամ սատանայ բարձցէ զիս 'ի միջոյ՝ եթէ առ վաղիւ՝ չգնացից յայն տեղի, որպէս երդնում գնալ:

Երեք պայմանք խնդրին վասն երդման առ 'ի լինել օրինաւոր. ճշմարտութիւն, արդարութիւն, և դատաստանաւ (իրաւունք). ըստ անսուտ բանի երեմեայ. Գլ. Դ. հտ. 2: *Եւ երդնուցու թէ կենդանի է տէր, ճշմարտութեամբ, և իրաւամբք, և արդարութեամբ‖:

Ճշմարտութիւն հաստատեալ է յայն, զի իցէ ճշմարիտ կամ համարիցի ճշմարիտ՝ զոր հաստատէ ոք 'ի ստորասական երդման. կամ ունիցի դիտաւորութիւն առնելոյ զոր խոստանայ 'ի խոստաբանական երդման: Դատաստանն կամ իրաւունքն հաստատեալ է յայն, զի մի երդնուցու առանց հարկի: Արդարութիւն հաստատեալ է յայն, զի մի երդնուցու ոք առնել ինչ մեղանչական:

Յաղագս ստորասական երդման յուշ լիցի. զի եթէ ոք երդնու յայն ինչ՝ զոր համարի ստոյգ. թէպէտ և ըստ իրին իցէ սուտ՝ ոչ լինի ստերդումն. զորօրինակ՝ ես հաւաստի համարիմ թէ պետրոս 'ի տան իցէ. և երդնում թէ 'ի տան է. թէ և նա չիցէ իրօք 'ի տան. այս երդումն տեսականապէս ճշմարիտ է, և միայն նիւթապէս սուտ: Այլ ընդ հակառակն եթէ ես հաւաստի համարիմ թէ պետրոսն իցէ 'ի տան, և երդնում թէ չէ 'ի տան. թէպէտ և արդեամբք չիցէ 'ի տան, առնեմ զստերդմութիւն. և երդումն լինի սուտ տեսականապէս, և

ճշմարիտ նիւթապէս ։ Այս երդումն չընդունի զթեթեւութիւն նիւթոյ. նմին իրի եթէ երդուայց թէ տուեալ է իմ յողորմութիւն զփող մի, և չիցէ իմ տուեալ, մեղանչեմ մահուչափ մեղօք. թէպէտ և նիւթ երդմանն իցէ դուզնաքեայ ինչ ։

Յայս տեղի ակնարկէ Նախադասութիւն իէ. զոր դատապարտեաց Իննովկ. ժա. * Վկայ կոչել զած 'ի թեթև ինչ ստութի, չէ այնպիսի անպատուութի, որ վասն կամիցի կմ կարիցէ դատապարտել զմարդ ‖ ։ Պատճառ դատապարտութեն է. վասն զի թէ և նիւթն երդման թեթև իցէ, այլ սակայն չարութի երդմնահարութեան առեալ լինի յայնմանէ, զի ած որ է ճշմարտութի անխաբ՝ բերի 'ի վկայ սուտ բանի իրիք. յոյր սակս իրն եթէ ծանր իցէ և եթէ թեթև՝ հանապազ ծանր անիրաւութի է առ ած. մանաւանդ թէ քանի թեթևագոյն իցէ նիւթն յոր ոք երդնու՝ այնչափ մեծագոյն է անիրաւութին եղեալ ընդդէմ այ ։

Երդումն խոստաբանական ունի զկրկին ճըշմարտութիս. մի՝ զներկայի, և միւս ևս զապառնւոյ. զորօրինակ՝ ես խոստանամ տալ պետրոսի զփող մի. ուր եթէ չիցեն ինձ կամք տալ զփողն՝ մահուչափ մեղանչեմ. զի երդումն պակասի 'ի ճշմարտութենէն՝ որ զներկայէ ։ Իսկ եթէ ունէի կամս տալոյ, և չետու՝ մեղայ ներելի մեղօք. վասն զի պակասի 'ի ճշմարտութենէն՝ որ զապառնւոյ՝ 'ի նիւթ թեթև, թէպէտ բազմաց կարծիք են ծանունս մեղանչել. տես 'ի մատթէեի ռեգուլ. խոստովանահայրց. էջ. 239. հմ. 3 ։ Ապա եթէ նիւթն իցէ ծանր, յոյժ տալ զփողն՝ գործէ զմահուչափ մեղս. վասն զի երդումն պակա֊

ոչ 'ի ճշմարտութե՛ ոչ պարտաւորութեան՝ 'ի նիւթ ծանր : Տե՛ս զկամպիոն . 'ի քննութեան խոստովանահարց հռովմայ . հտ . գ . գլ . լէ . հն . դ :

Յերդումն սպառնական, եթէ ոք երդնուցու ոգւով կատարելոյ զսպառնացեալ չարն, և այն սպառնալիքն իցեն ծանր՝ գործէ զերկու մեղս մահուչափս . մի՝ ընդդէմ արդարութե՛ երդման, կոչելով զԱծ վկայ չարակամութե՛ իւրոյ . զորօրինակ առ սպանանել զոք . Իռ . և միւս ես՝ ընդդէմ փոխարինական արդարութե՛, ունելով կամս սպանանելոյ զընկերն . որ թէ իցէ իւր ազգակից՝ մեղանչէր նաև ընդդէմ գթութե՛ : Ապա եթէ չունիցի կամս սպանանելոյ, այլ միայն երդնուցու վն՛ ահ արկանելոյ, ծանունս մեղանչէ ընդդէմ ճշմարտութե՛ երդման իբր երդմնահար :

'Ի բան անիծակուռ երդման, եթէ երդուօղն ունիցի կամս առնելոյ զոր երդնու, և այն ինչ չիցէ մեղանչական, օրինաւոր է երդումն . միայն թէ գտանիցի օրինաւոր պատճառ հաստատելոյ զխոստումն այնպիսի երդմամբ . ապա եթէ չունիցի կամս առնելոյ մեղանչէ ընդդէմ ճըշմարտութեան երդման : Այնօրինակ մեղանչէ՝ եթէ ունիցի կամս առնելոյ ինչ մի մեղանչական . զի առնէ ընդդէմ արդարութե՛ երդման : Աստանօր մարթ է տարակուսիլ . արդեօք օրինաւո՞ր իցէ երդնուլն առանց ունելոյ միտս երդնլոյ . զորօրինակ՝ առ 'ի զերծանիլ 'ի թախանձանաց ուրուք, որ խնդրէ զդրամ 'ի փոխ, տխախոս երդնու առանց դիտելոյ երդնուլ, թէ 'ի յաջորդ ամիս տաց քեզ 'ի փոխ զդրամն զոր խնդրես :

Պատասխանի . չէ՛ օրինաւոր, մանաւանդ թէ

ստերդմութին է. մտ զի պղծեաւ 'ի բան ճշմարտութեն: Նմին իրի Սննոզկ. ժա. դատապարտեաց զնախադասութին իմ. * Պատճառաւ օրէն է երդնուլ՝ առանց դիտելոյ երդնուլ, եթէ թեթև իցէ իրն, և եթէ ծանր ‖: Պատճառ դատապարտութե է. զի որ երդնու առանց դիտելոյ երդնուլ, կամ ճշմարիտ երդնու, և կամ սուտ. կամ 'ի նիւթ ծանր, և կամ 'ի թեթև. այլ յոմի սուտ. վասն զի որ ասէն, խոստանամ, տամ, եւ՝ առանց ունելոյ զդիտումն խոստանալոյ կամ տալոյ, սուտ. և զի ստութին ոչ երբէք է օրինաւոր. որպէս քաջի 'ի գլխոյն 'ի վերայ ստոր. յղ. վաշխի. ապա զհետ գայ թէ չէ երբէք օրէն երդնուլ առանց դիտելոյ երդնուլ:

Մեծագոյն տարակոյս ծագէ աստանօր, թէ արդեօք տիտխոս լինիցի պարտաւոր 'ի տալ զդրամն՝ զոր երդմամբ խոստացաւ առանց դիտելոյ երդնուլ:

Պատասխանի՝ այս. ոչ զօրութե երդմանն. որ նանիր էր և անվաւեր, թէ նա և սեղանակապուտ. այլ զօրութե խոստմանն՝ որ ընդունելի եղև խնդրողին զդրամն. և վասն գայթակղութեն, որ ունի լինել՝ եթէ չկատարեսցէ զխոստումն: Նա և որ համարին պարտաւորիլ նաև զօրութե երդմանն. քանզի ազատութե և սրտի միօք կոչել զած 'ի վկայ. միանգամայն և ասել 'ի ներքս յինքեան, չունիմ միտս երդնլոյ, երևի լինել մնոտի բոլոք ընդդէմ դրական գործոյ. որովհետև երդումն ոչ այլ ինչ է՝ քան ազատ և լրջամիտ կոչումն այծոյն վկայութեան: Տես զմատթէոսկ. շղթ. խոսք. էջ. 240. հմ. 13:

Մարթ է տարակուսիլ և աս. արդեօք իցէ

օրինաւոր գէթ 'ի դիպուածս ինչ երդնուլ ամփոփմամբ մտաց . զորօրինակ՝ պետրոս խնդրէ յինէն 500 դահեկանս 'ի փոխ . և զի չկամիմ տալ նմա զդրամն՝ ասեմ թէ չունիմ . բայց նա 'ի կարծիս լինելով, թէ ունիմ այո՝ բայց չկամիմ տալ . վերստին թախանձ արկանէ . և ես երդնում յամ՝ թէ չունիմ, դիտելով 'ի խորհուրդս սրտի իմոյ՝ թէ չունիմ առ 'ի փոխ տալ քեզ:

Պատասխանի . չէ՛ օրինաւոր, մանաւանդ թէ ստերդմնութիւն է այդպիսի երդումն . ո՛չ յայտ է 'ի իզ նախադասութէ՝ զոր դատապարտեաց Իննովկ". ժա . *Եթէ ոք առանձինն . կամ առաջի այլոց, եթէ հարցաքննեալ յայլմէ, և եթէ ինքնակամ . եթէ սակս զուարճութե, և եթէ այլով իւիք պատճառաւ՝ երդնուցու, թէ չէ՛ք իմ արարեալ զայդ, զոր ստուգիւ արարեալ իցէ, իմանալով 'ի միտս իւր զայլ ինչ իրաց՝ զոր չիցէ իւր արարեալ, կամ զայլմէ եղանակէ՝ քան զոր ինքն արար, և կամ զայլմէ իմեմնէ ճշմարիտ յաւելուածոյ, իրօք ո՛չ ստէ . և ոչ է ստերդումն || : Պատճառ դատապարտութե է . վասն զի առ 'ի չդժուարելոյ երդման 'ի բանի ճշմարտութե՝ այն ինչ յորոյ վերայ երդումն լինի, պարտի լինիլ 'ի միտս երդուողին այնպէս՝ որպէս նշանակեն բանքն բարբառեալք առ նա, որում տուեալ լինի երդումն : Իսկ 'ի մերս դիպուած բանքն բարբառեալք առ նա՝ որում տուեալ լինի երդումն, ցուցանեն յայտնապէս չունիլ զ500 դահեկան առ 'ի փոխ տալ . որ զլխովին է սուտ, և հակառակ այնմ՝ զոր 'ի միտս ունի երդուողն . ապա է ստերդմնութի և ծանր մեղք:

Երկրորդ պայման երդման առ 'ի լինել օրինաւոր՝ է դատաստան կամ իրաւունք. որ պահանջէ զի մի՛ լիցի երդնուլ երբէք առանց հարկի, թէ և ճշմարտութեամբ. ապա թէ ոչ լինի մեղք ներելի, միայն թէ երդումն մի՛ պախարակեսցի 'ի ճշմարտութենէ կամ յարդարութենէ: Բայց և այն է ճշմարիտ, զի որ երդնու յոյժ 'ի բանս իւր, եթէ՛ ստոյգ իցէ երդումնն և եթէ սուտ՝ մահուչափ մեղանչէ յոյժ նուազս երդնլոյ իւրոյ. վասն զի մինչ երդնու ստութեամբ՝ յայտ է թէ մեղանչէ մահուչափ. ապա եթէ երդնուցու ճշմարտութեամբ՝ քանզի դնէ զինքն 'ի վտանգ ստերդմնութեան՝ նոյնպէս ծանր մեղանչէ. որպէս և մարթ է ծանուանս մեղանչել բանիւ դայթակղութեան՝ զոր տայ ընկերին ստէպ երդմամբն յոչինչ պէտս: Պարտաւոր գտանիմք երբեմն ը ծանր մեղօք երդնուլ զճշմարիտն. որպէս 'ի դէպ գայ՝ յորժամ մեծաւորն կամ դատաւորն օրինօք պարտաւորէ զմեզ յերդնուլ. կամ յորժամ երդումն մեր կարևոր իցէ առ 'ի ազատել զկեանս անմեղի ուրուք, կամ խափանել զմեծ ինչ չար. ևն:

Երրորդ պայմանն է՝ արդարութիւն երդման. այն է չերդնուլ առնել ինչ չար: Այս պայման պահանջի միայն յերդումն խոստաբանական կամ սպառնական. և ոչ 'ի հաստատողականն: Այսմին իրի եթէ ոք երդնուցու՝ թէ պոռնկեալ իցէ, և ճշմարիտ իցէ բանն, ոչ մեղանչէ ընդդէմ արդարութեան երդման. և սակայն մեղանչէ՝ եթէ երդնուցու կամիլ պոռնկիլ: Որոյ պատճառն է. զի յառաջին երդման ոչ կոչի Աստուած 'ի վկայութիւն թիւր յօժարութեան, այլ ճշմարտութեան իրացն եղելոց. թէ և նիւթապէս իցէ չար.

այլ յերկրորդումն լինի անիրաւիլ առ ած, կոչելով զնա 'ի վկայութիւն չար յօժարութեան՝ զոր ունի ոք առ 'ի մեղանչել:

Երդումն խոստաբանական միշտ է պահելի գործովք, միայն թէ չիցէ ըստ անիրաւութեան. որ լինի յորժամ ոք երդնուցու առնել գործ մեղանչական. յոր սակս ո՛չ պարտաւորէ երբէք. ըստ այնմ 'ի ծէ. կանոնն իրաւանց, 'ի 6. * Ո՛չ է պարտաւորիչ երդումն եղեալ ընդդէմ բարի վարուց ||: Այնպէս դարձեալ. ըստ անիրաւութեան լինի՝ յորժամ երդնում չառնել զբարի ինչ. զորօրինակ՝ երդնում չլինել կրօնաւոր. չխոստովանիլ՝ բայց եթէ յամին միանգամ. եւն:

Երդումն առ անտարբեր ինչ պարտաւորէ 'ի կատարումն. քանզի միշտ է պահելի ցորչափ մարթ է առնել առանց մեղաց: Եւ այս իսկ է խտիր ընդ ուխտն եւ ընդ երդումն. իբր զի առաջինն ո՛չ պարտաւորէ՝ երբ խոստացեալն ուխտիւ իցէ անտարբեր ինչ. քանզի ուխտն պարտի լինել վս լաւագոյն բարւոյ: Իսկ երդումն միշտ պարտաւորէ ցորչափ մարթի կատարել առանց մեղաց, թէպէտ եւ իցէ անտարբեր ինչ: Սորին վս որ երդնու չխաղալ, չաշտանակել յերիվար, եւն. պարտաւոր գտանի պահել զերդումն, թո՛ղ զի թէ եւ երդումն իցէ մեղք 'ի կողմանէ պահանջողին, տակաւին երդուօղն պարտաւորի կատարել զայն. զորօրինակ՝ տիտիոս երդնու վճարել պօղոսի զվաշխ. յորմէ վասն կարեւոր պիտոյից ընկալեալ իցէ փոխ զդրամ հանդերձ շահու. ուր թէպէտ եւ պօղոս մեղանչէ պահանջելով զվաշխ, բայց տիտիոս ո՛չ ինչ մեղանչէ յերդնուլն վճարել զայն. եւ պարտական իսկ է վճարելոյ: Այնպէս եւ որ

երդուաւ պոռնկին վճարել զկապէնս, պարտաւորի առ երդումն. զի թէպէտ և մեղք է պոռնկելն, այլ չէ՛ մեղք վճարել զվարձն ։

Յերդմունս անդ բազում են մոլար խիղճք մտաց, որք դնեն 'ի մտի չլինել ծանր յանցանք՝ եթէ ոք երդնու սուտ դոյզն ստախօսութ՟բ, որ չիցէ 'ի վնաս ընկերին. կամ երբ երդնու առանց դիտելոյ երդնուլ. որ է մոլորութ՟ դատապարտեալ յԻննովկ. ժ՟թ ։ Ընդ հակառակն բազումք համարին թէ երդնուլն ճշմարտութ՟բ անգամ՝ իցէ մեղք մահուչափ ։ Եւ այլք թէ է՛ ճշմարիտ երդումն ասելն, խղճի մտօք ասեմ, խղճիւ սրտի ասեմ ։ Լեսսիոս. Գիր՟ք. Է. Գլ. ԽԷ. տարակոյս. Թ. ՀՏ. Գ ։

Են ոմանք, որք յամենայն 'ի բանս իւրեանց 'ի մէջ արկանեն զձայնս, գիտէ տ՟ր, կամ տ՟վ ասեմ. յիմ վերայ, կմ՟ յիմ հոգի ։ Այս ձայնք ըստ հնչմանն թէպէտ և երդումն իմն 'ի մէջ ածեն, այլ քանզի մարդիկ աշխարհիս շաղեն զբանս իւրեանց ստէպ այսպիսի ձայնիւք, սորին վ՟ո գիտնականք դատեն՝ թէ այդ է խառնել որպէս զսնոտի ինչ միջարկութիւն 'ի խօսս. ուստի իբր 'ի բազումս համարին ը՟ ծանր մեղս զասելն, առաջի ա՟յ ասեմ. ա՟ծ գիտէ զի ճշմարիտ է. գիտէ տ՟ր զխիղճ մտաց իմոց. ունի ա՟ծ դատել զիս. ստուգութ՟բ ճշմարտիւ ասեմ 'ի հաւատս իմ. այս է աւետարան. այս է հաւատք ։ Այս ամ՟ ձևք բանից ո՛չ պարունակեն զբան երդման ։ Այլ պարունակէ միայն զերդումն՝ այս ասացուած բանի, վասն հոգւոյս, ըստ հաւանականագոյն կարծեաց ա՟ծաբանից ։ Իսկ միւսն այն ասացուած 'ի վերայ հոգւոյս՝ է երդումն նզովական. որով 'ի վերայ անձին

իւրոյ զանէծս իմ խնդրէ յԱյ՝ եթէ իրն չիցէ այնպէս։ Եւ այս երդումն անիծականս ըստ բերելոյ ծանր կամ թեթեւ նիւթոյն՝ լինի մեղք մահուչափ կամ ներելի։ Իսկ ասել, իբրեւ քրիստոնեայ խօսիմ, կամ իբրեւ քահանայ, հաւանական է՝ թէ իցէ երդմնական. բայց յուշ լիցի խոստովանահօրն՝ զգուշացուցանել անդադար զապաշխարօղս չվարել այսու ձեւով՝ առանց պարտուպատշաճ ձեւոյ երդման։ Իսկ այն տարազք բանից, Ճշմարիտ է բանս՝ որպէս Այծ է ճշմարիտ. անմեղ եմ՝ որպէս եւ Տը կոյսն, ակնարկեն միայն զնմանութիւն ինչ. եւ ոչ զ՚ի վկայութի՛ կոչումն. ուստի եւ չէ՛ մարթ ստոյգ երդումն գրել զնոսին։

Ասելն պարզապէս՝ երդնում, առանց ինչ յիշատակելոյ՝ ոչ զԱծ, ոչ զՏր, եւ ոչ զսրբազան ինչ ՚ի վկայութի՛ կոչելով, անշուշտ երդումն է ճշմարիտ։ Այլ ընդ հակառակն՝ ասելն, կարեի, կամ կարեմ երդնուլ՝ չեն նշանակք երդմնականք։

Որ երդնու ՚ի սուտ ինչ թեեւ թեթեւ եւ փոքրիկ, կամ խոստանայ ինչ երդմամբ, թէպէտ եւ չնչին ամենեւին, ծանր մեղանչէ՝ երբ չունիցի կամս կատարելոյ. իսկ յոչն կատարել՝ մեղանչէ ծանր կամ թեթեւ ըստ չափու նիւթոյն։

Մարք, որք յԱծ առիթս ասեն զաւակաց, պատժեսցէ զիս Այծ՝ թէ չարբուցից քեզ դան. այս անուն Տր վկայ լիցի, զի սպանից զքեզ. թող մեռայց՝ թէ չպատժեցից զքեզ. եւ այլ բանք այսպիսիք, թէպէտ եւ փակեն զճշմարիտ երդումն նզովական. որով կոչի Այծ վրէժխնդիր ՚ի վերայ մեր՝ եթէ ոչ արդիւնացուսցուք զբա-

պառնական պատիժս. այլ սակայն կարօղ են և չպատժել, զօրութ̄ իմանալով զայս պայման, ԵԹԷ ՉԽՆԴՐԻՑԵՆ ԶԹՈՂՈՒԹԻ̄։

Երդումն բարձեալ լինի այնու օրինակաւ՝ որով բառնի և ուխտն. այսինքն նանրացուցանելով, փոփոխելով, և տնօրինելով։ Յոր սակս որ ունի զտնտեսական իշխանութի̄՝ կարէ նանրացուցանել զերդումն՝ զոր արար հպատակն յայն նիւթ՝ որ անկ է այնմ իշխանութե̄։ Եպիսկոպոսն կարող է փոփոխել և տնօրինել զերդմունս. միայն թէ չիցեն պահեալ պապին. ըստ որում ասացաւ զուխտէ։ Իսկ թէ ո՞ր երդումն պահեալ են պապին՝ տես զլռնակինայ. յղ. ԵՐԴՄԱՆ. գլ. ծէ. կծ. 9։ Ի սմին սակի է երդումն արարեալ յաշակերտաց դպրատանց ինչ հռովմայ վասն գնալոյ 'ի քաղաքս հերեսիովտայց առնել զքարոզութի̄, կամ վարել ըզպաշտօն ժողովրդապետական։ Նոյնպիսի է և երդումն՝ զոր առնեն եպիսկոպոսունք յառաջ քան զձեռնադրիլ իւրեանց 'ի կատարել զբազումս ինչ, կամ պահել։ Այսպիսի է երդումն, զոր առնեն թագաւորք և թագուհիք նախ քան զօծանիլ իւրեանց։

Այլ ստանօր ծագի տարակոյս. արդեօք երդմունք որք լինին 'ի նիւթս պահեալս պապին, պահիցի՞ն նմա նաև ըստ տնօրէնման, կամ ըստ փոփոխման. զորօրինակ՝ ես երդնում լինել կրօնաւոր, կամ պահել զմշտնջենաւոր ողջախոհութի̄, և կամ յայց ելանել սեմոց ո̃ք առքելոցն պետրոսի և պօղոսի. ևլն։

Պատասխանի. եթէ այդպիսի երդմունք լեալ իցեն ա̃յ, կամ 'ի պատիւ ա̃յ, յայնժամ նման պահեալ պապին. զոր եթէ ոք բանաքա-

ըիյէ՝ գործէ զկրկին մեղս. այսինքն՝ ընդդէմ երդման, որով և համարի երդմնազանց, և ընդդէմ ուխտին. քանզի երդմունք այդպիսիք զօրութեամբ փակեն միշտ զուխտն, ուստի և լինի սեղանակապուտ. այլ ո՛չ այնպէս, եթէ առ մարդ ոք իցէ երդուեալ. զորօրինակ՝ երդնում հօր իմում լինել կրօնաւոր. երդնում օրիորդի միում պահել զմշտնջենաւոր զողջախոհութի՛ւն. յայս դիպուած որ բռնադատէ զերդուեալն՝ լինի միայն երդմնազանց. այլ ո՛չ սեղանակապուտ. տես զհայրն լակրոս. Գիրք. Գ. Տրակտ. Ա. Հտ. 555:

Աստանօր օրինակի վասն 'ի մէջ առցուք զմին, իմա՛ 'ի կարգէ պաշտօնէից, խորհրդականաց, և բանագրաց սրբազննութե՛ հռովմայոյք եթէ քակեսցեն զերդուեալ 'ի ծածուկ ունելոյ զգաղտնիս՝ անկանին 'ի նզովս պահեալս պապին, մինչև անմարթ է նոցա արձակիլ և յապաշխարողապետէն. իսկ որք քակեն ըզգաղտնիս 'ի խնդիրս հաւատոյ յատենի եպիսկոպոսաց, կամ ատորին քննչաց, թէպէտ անկանին 'ի նզովս, որպէս քաղի 'ի Գլ. Է. Սահմանեալ. ԺԸ. Հերետիկոսաց. այլ սակայն մարթին արձակիլ յիւմ խոստովանահարց. քանզի այդ ազգ նզովից ո՛չ է վերապահեալ:

Որ ոք հարցաքննեալ 'ի սրբազննութե՛ ըստ օրինի իրաւաբանութեա՛ց զկնի երդմանն տուելոյ յաղագս ասելի ճշմարտութե, կամ լռէ, կամ ստէ՝ մահուչափ մեղանչէ. և այսպիսի երդուեալ պահի սրբազննութե՛: Նմին իրի որ երդնու ստութի՛ առաջի եպիսկոպոսի 'ի նիւթ հաւատոյ, ո՛չ կարէ արձակիլ՝ եթէ ո՛չ 'ի նմանէ. և որ երդնու առաջի սրբազննչի 'ի նմանէ միայն մարթի արձակիլ. թէ չիցէ առացեալ զճշմա-

րիտն ։ Պատճառն է . վասն զի յայնմ դատաւո-
րէ պարտի արձակիլ՝ զորոյ զատեանն առ ոտն
եհար ։

* Երդումն առնելոյ զչար կամ լռելոյ զճշ-
մարտութիւն՝ ոչ պարտաւորէ ։ Եթէ ոք երդնու-
ցու յապօրինաւոր ինչ . զոր վարկանէր լինել
օրինաւոր, չէ՛ պարտաւոր պահել ։ Երդումն ե-
ղեալ 'ի վնաս անձին իւրոյ՝ ցորչափ չիցէ ընդ-
դէմ օրինացն այ՝ պարտի պահել ։ Որ երդնու
առ երկիւղի առանց կատարեալ մտադրութեան,
ոչ մեղանչէ մահուչափ . բայց թէ գտցի կատա-
րեալ մտադրութիւն՝ յայնժամ մեղանչէ մահու-
չափ . վն զի երդումն սուտ յինչ և իցէ պատ-
ճառէ եղեալ՝ ևս և 'ի պահպանութի կենաց՝ է
ապօրինաւոր ։ Որ երդնու սուտ, և որ հրապու-
րէ 'ի ստերդմնութիւն՝ է միօրինակ վտանուն ։

Խնդրի, արդեօք օրինաւո՞ր իցէ երդնուլն
իրական և արտաքին ամփոփմամբ մտաց . դր է
ասել բանս՝ որք ըստ ինքեան զմի ունին նշանա-
կութիւն . այլ վասն իւիք իւիք պարագայից և
յաւելուածոց նշանակեն զայլ ինչ ։

Պատասխանի . այո՛ . զորօրինակ՝ դատաւորն
վճռէ թէ պետրոսն իցէ անմեղ . և սակայն ա-
ռանձինն գիտութբ՝ գիտէ զնա յանցաւոր լի-
նել ։ Ապա երբ դատաւորն վճռեաց զանմեղու-
թի պետրոսի՝ կամէր ասել . ըստ դատաստանի
իրաւաբանական օրինաց անկ է ինքեան հրա-
տարակել զնա անմեղ ։ Որպէս և քս տէրն մեր
յասելն յովհ . է . * Ես ոչ երթամ 'ի տօնն
յայն ||. ճշմարիտ խօսեցաւ . թէպէտ և գնաց .
քանզի հանգամանք բանից տն մերոյ զայն ակ-
նարկէին, թէ ինքն չունէր անդ յայտնապէս
ցուցանել սքանչելեօք զածութի իւր, ոչ նոքա

աղէրսէին : Տես զգուարտոս 'ի մեկնութե դա-
տապարտեալ նախադասութեց 'ի բանն Երրորդի.
ուր ձառի յաղագս երակին, ևս և մտաւորա-
կան ամփոփման մտաց : Իսկ այս շատ լիցի յա-
ղագս երդման :

---

Յաղագս այլոց մեղաց, որք ընդդիմամարտեն կրօնի ըստ առաւելազանցութեան, և ըստ նուազութեան :

Ըստ առաւելազանցութեան գլխաւորաբար հակառակի կրօնի սնոտիապաշտութիւն : Այն է՝ պաշտօն Այ պիտակ, անարժան, և դատապարտեալ. և կամ սեպհական պաշտօն Այ՝ տուեալ արարածոյ : Ըստ առաջնոյն ծանր յանցանք են՝ եթէ ոք զարդիս կամիցի պաշտել զԱծ զոհիւք մովսիսական հին օրինաց : Ըստ երկրորդին սնոտիապաշտութիւն լինի, եթէ ոք պագանիցէ երկիր պատկերաց կամ արձանաց նց՝ Ածային երկրպագութեամբ. վասն զի Ածային երկրպագութիւն ճշդիւ և յատուկ նշանակութեամբ առեալ՝ Այ միայն է անկ. և ոչ այլում. ուստի ժողովն Տրիդ". 'ի նիստ. 25. յաղագս կարդալոյ յօգնութե, և մեծարելոյ նշխարաց նց, և նոյն պատկերաց : քաջ բացատրէ զյարգութիւն և զպատիւն՝ զոր պարտին հաւատացեալք տալ նց նշխարաց և նց պատկերաց. ոչ 'ի կիր արկանելով երբէք, ըղ-բառդ երկրպագութե. որպէս զի մի համարեսցին գռեհիկք թէ պաշտեմք զնոսա, զպատկերս նց, կամ զնշխարս՝ այնու ճշմարիտ և ճիշդ պաշտամամբ կամ երկրպագութեամբ՝ որ միոյ միայնոյ Այ է անկ. այլ միայն 'ի կիր առնու զձայնսդ յարգութե, և պատիւ. ևն : Այսպէս է, և որ եր-

կիրպագանէ կամ կարգայ յօղնուն զսատանայ ընդունիլ առ 'ի նմանէ ինչ մի՝ կամ նպաստ ինչ ։

Դիւականչութին կրկնակի լինի, բացայայտ և լռելեայն ։ Առաջինն յայտնի է. յորժամ ոք կարդայ զսատանայ կամ երկիրպագանէ նմա առ 'ի ընդունիլ ինչ 'ի նմանէ ։ Երկրորդն է, յորժամ վարէ ոք զմիջոց ինչ՝ որ ո՛չ 'ի բնէ, ո՛չ յածային սահմանադրութէ, և ո՛չ 'ի կարգադրութէ եկեղեցւոյ կարէ ծառայել առ այն վախճան՝ յոր վարի. ուստի յայդպիսի իրս ընդմտանէ դիւականչութի լռելեայն. զորօրինակ եթէ ոք զփորձ առնուցու բաժակի լիոյ ջրով՝ առ 'ի գիտել զիրս գաղտնիս. որովհետև ջուրն չունի ինչ զօրութի 'ի բնութէ իւրմէ ։ Նոյնպէս և որ վարիցէ զսբ խորհուրդս, կամ զխորհրդական իրս առ 'ի ձգել զսէր կնոջ. կամ մեքենայել ումեք զմահ. որովհետև ո՛չ սբ խորհուրդք սահմանեցան առ յայս վասն այդպիսի ներգործութեանց, և ո՛չ խորհրդական իրք կարգեցան յեկեղեցւոյ առ 'ի ընդունիլ նոքօք զանարժան և զմեղանչական ինչ իրս ։

Այլ քանզի ստորին տեսակք սնապաշտութե անթիւք են, շատ լիցի մեզ աստանօր յիշատակել զերկրորդ դիպուածն վերապահեալ 'ի թեմի աստ. ուր համառօտիւ իմն 'ի թիւ արկանիմն գլխաւոր սնապաշտութիք այսինքն ։ Նախտ. հմայք. կախարդութի. դեղատուութի. դիւապաշտութի. դիւականչութի. կամակար կրթութի սնապաշտութեանց, և չարաչար կիրառութի սրբազան իրաց ։ Բացատրութի այսր ամենայնի գտանի 'ի մերս ժողով կաստեղեան. էչէ. 70. օրինակ ղայս ։

* Բախտ իմն զայն, յորժամ ինչ մի անստոյգ 'ի կէր արկանի առ 'ի գիտել զգաղտնի ինչ. այսինքն՝ եթէ ոք 'ի ձգելոյ զվէճ գիտել կամիցի. թէ ո՛ ունի լինել քահանայապետ: Հմայք (որ և գուշակութի) է փոյթ հետաքննելոյ զիրս թաքունս սատարութբ դիւին: Կախարդութի (որ և դիւթութի) է կոչումն դիւաց 'ի ներգործել ինչ սքանչելի: Դեղատուութի է կիրառութի գործակցութե դիւի (որ 'ի մեզ նոյնանայ ընդ յաջորդին): Չարարուեստութի է կիրառութի այնպիսի գործակցութե առ առնել չար ումեք: Սնապաշտութիւնն է անվայելուչ պաշտօն ընծայեալ արարածոց: Նա անկանելոյ ընդ պատժապարտութբ այսպիսի անցից՝ պահանջի դիւակոչութի յայտնի կամ լռիկ, եթէ հանդերձ չարաչար կիրառութբ սրբազան իրաց, և եթէ առանց այնորիկ: Իսկ սրբազան իրս իմա եթէ զխորհուրդս, և եթէ զխորհրդականս. որպիսի է օրհնեալ ջուրն, մոմն զատկական, գառն այ 'ի մոմոյ, եւն ||:

Նայս մեկնութե ամ խոստովանահարք պարտին ուշի ուշով միտ դնել. որպէս զի զգոյշ լինիցին չարձակել 'ի դիպուածոց աստի՝ երբ չիցեն կարող: Եւ եթէ ընդառաջ ելցէ նոցա դիպուած դժուարին կամ երկբայական՝ պարտին հարցանել զկարծիս եպիսկոպոսաց իւրեանց. որոց անկ է լուծանել զտարակոյս՝ որք լինին 'ի դիպուածս պահեալս նոցա: Եւ ես մեռելահմայութին է՝ յորժամ կեղծ ցուցակութբ մեռելոյ պատմին մարդկան գաղտնիք: Սհկութին է 'ի ձեռն որոյ դեն կանխէ պատմել զիրս ծածուկս վասն կենդանեաց. 'ի նոյն հայի և պատգամախօսութին. որ՝ պատասխա-

նին՝ զոր տայ դեւն 'ի տեղիս տեղիս 'ի ձեռն մոլեգնելոյ : Գետնակոչութ՟, կ՟մ երկրահմայութիւն է, որով դեւն յայտնէ զգաղտնիս 'ի նշանաց երկրային մարմնոց :

Ա՟եւելահմայութիւն նշանաց յառաջ գայ 'ի դիւաց, որք յերազի ուսուցանեն մարդկան · որպէս լինի վհկաց, որք իրօք ոչ յածին տեղւոջէ 'ի տեղի · այլ 'ի ձեռն զօրեղ երեւակայման առելոյ յերազի՝ կալով մնալով ուր ենն, երազեն զոր ինչ յանդիման լինի նոցա · և ապա սկսանին պատմել զայն : Են մատեանք ոչ սակաւ որք խօսին զայսմանէ : Յայս ազգ վերածի արուեստն համարողական, որ կոչի ֆալ[illegible] սողոմոնեան · որով վարէ ոք զթիւս ինչ, որք 'ի բնութ՟է խուրեանց չունին զայն զօրութ՟, որով ոք կարծէ ստանալ զգիտութ՟ի : Ընդ հմայութ՟ե գրի և աւելորդապաշտութ՟ին · այն է՝ յորժամ առ 'ի ձեռս բերել ինչ մի 'ի կիր առնուն զայնպիսի իրս՝ որ ոչ 'ի բնութ՟է, և ոչ յայ՟ ունի զզօրութ՟ի յառաջ ածելոյ զայն ինչ իրս : Ի սոյն հայի և ասելն զայսչափ աղօթս, և ոչ աւելի : Ի կիր արկանել զայսչափ մոմս յայս ինչ տեսակէ : Ի սմին սակի են և աղթարական պատկերք : Զարութ՟ի աւելորդապաշտութեան յայսմ է ըստ բանին օգոստինոսի, զի ունի դաշնաւորութ՟ի ընդ դիւին :

Խնդրի · արդեօք մ՟ղք իցէ հաւատալ երազոց :

Պատասխանի · է մեղք մահուչափ միայն թէ չիցեն երազք յառաջադայեալք յայ՟ : Իսկ թէ ա՟ծ կարող է առաքել երազս, և թէ արդեամբք ցուցեալ է նր՟ զայն բարեաց և չարաց, դիւնոց և ողխտաց, հաւատացելոց և անհաւա-

տից, ուրանալն զայդ՝ է ուրանալ զՔս գիրս. որ լի են այսպիսեօք: Իսկ երեւումն այ՝ երբեմն լինի անձամբ, որպէս սողոմոնի. Է. Թագ. Գ. 5. և երբեմն 'ի ձեռն հրեշտակի. որպէս նոյն յովսեփայ. Մատ. Ա: Արդ՝ առ 'ի ճանաչել՝ յԱյ իցեն արդեօք, եթէ ոչ, խոստովանահարք պարտին յուշի ունել զբանս նոյն գրիգորի մեծի 'ի տրամախօսութե. Գր. Դ. Գլ. ԽԸ. * Արք սրբք ընդ պատրանս. և ընդ յայտնութիւս, ընդ ձայնս տեսլեանց և ընդ պատկերս՝ ներքին իմն ճաշակաւ ընտրութի առնեն, առ 'ի գիտելոյ՝ զինչ ինչ 'ի հոգւոյ բարութէ ընդունին, և զինչ յոգւոյն խաբէութէ կրեն ‖:

Նաեւ որպիսութիւն առարկայից ցուցելոց բազմօք օգտէ 'ի գիտել, թէ այնպիսի երազք առ յԱյ միայն մարթին յառաջագայել. զորօրինակ են յորդորք առ ուղղութի վարուց, եւ այլն. և պարզաբար՝ ածեղէն տեսիլք չեն ոչ բնական և մնոտի երազք կից ընդ խօլական ցնորից և խառնաձայն բանից: Պարտի խոստովանահայրն կարի զգուշաւորութե գնալ յայսմ մասին. որովհետև երեմ. ԻԹ. 8. գրեալ կայ. * Մի անսայք երազոց ձերոց՝ զոր դուք տեսանէք:

Մոգութիւն է արուեստ սուտ, զոր դևն ուսուցանէ առնել զգործս սքանչելիս գործակցութե դիւին: Մոգն եթէ հաւատացեալ ոք իցէ, է միշտ խիթալի՝ գոլ հերետիկոս, կամ ուրացող հաւատոյ:

Գեղատութիւն է արուեստ ինչ վնասելոյ այլոց յանիրաւի դաշնաւորութե ընդ դիւին. զորօրինակ՝ մտ գրգռելոյ 'ի սէր, 'ի բարեկամութի, և 'ի խօթութի եւ այլն. զի թէպէտ և դևն

ոչ խելք մարթի հարկ 'ի վերայ դնել կամաց , բայց կարէ հրապուրել և այլայլել զերևակայութիւն ։ 'Ի սոյն վերածի և դիւթութիւն ։ Ոչ օրէն երբէք լուծանել զխնաս կախարդանաց այլով կախարդութեամբ . և է մեզ մահուչափ խնդրելն 'ի կախարդէ դեղատուէ 'ի կիր առնուլ զայլ դեղատուութիւն առ 'ի բառնալ զառաջինն ։ Պատճառն է . վասն զի դեղատուութիւն ( որպէս և նմ կախարդութիւն ) է 'ի ներքուստ չար . և ոչ զօրէ ասելն , թէ առանց այնր դեղոյ մանուկն մեռանի . վասն զի լաւագոյն է մեռանիլ մանկան՝ քան գործել չար առաջի նոյ ։

Զիա՞րդ պարտ իցէ վարել խոստովանահօր երբ բախտարկու ոք , կամ մոգ , կամ հմայող և այլն . գայ առ նա ընդունել զարձակումն ։ Պարտի ուշ ունել , թէ ցո՞ր վայր տարածի իշխանութիւն իւր 'ի վերապահեալ դիպուածս 'ի թեմի անդ ։ Իսկ ես պարտի հարցաքննել զխոստովանորդն նախ՝ արդեօք յայդմ չարարուեստ սովորութեան խոստովանեա՞լ իցէ այլ անգամ ըղձանր զայն յանցանս զի ոչ ասէ այր ոմն ընտիր , զայդ սովոր են դեղատուք խոստանալ դիւին , այս է՝ սակս մերձենալ առ նը խորհուրդս սեղանակապտութեան ։ Երկրորդ՝ պարտ է հարցանել . մերժեա՞լ իցէ արդեօք զքրիստոնէական հաւատս . կամ ուրացեա՞լ իցէ զմասն ինչ հաւատոյ ։ Երրորդ՝ երկրպագեա՞լ իցէ դիւին ։ Չորրորդ՝ 'ի կիր արկեա՞լ իցէ զսրբազան ինչ ։ Հինգերորդ՝ ունիցի՞ առ իւր զգրեանս , կամ զայլ գործիս դիւականս չարարուեստ գործոյն ։ Վեցերորդ՝ ուսուցեա՞լ իցէ և այլոց զայն արհեստ վնասակար . և ըստ վերջնոյս ըստ այսմիկ

պա՛րտի պարտաւորել զնա ուղղել զայնպիսիսն. և զամենայն հնարս հնարել զի ՚ի բաց կացցեն իսպառ: Իսկ զապաշխարողն, որ վարեալ իցէ զարգ ինչ մնապաշտութե, չկարէ արձակել հասարակ խոստովանահայր ոք, եթէ ՚ի դաշնադրութե ընդ դիւին գտցի և մոլորութի ինչ ընդդէմ հաւատոյ: Եւ ոչ իսկ մա՛րթի արձակել եթէ յերկբայս ինչ իցէ. քանզի յայնժամ և խոստովանահայրն յերկբայս է զիրաւասութէ իւրմէ. իսկ երկբայութք չէ օրէն գործել ինչ զվաւերութք խորհրդոյ:

Կանայք առաւելապէս հետամուտ են գիտել զապագայս և զանցեալս. և վասն այսորիկ իսկ յաճախեն երթալ հարցանել զվհուկս և զաղթարս. վասն որոյ պարտի խոստովանահայրն հարցանել զնոսա, արդեօք հաստատութք և լրջմտութք հաւատոյ ընծայեա՞լ իցեն չարարուեստիցն այնոցիկ: Որ եթէ ասասցեն՝ այո՛, մեղուցեալ են մահուչափ: Իսկ եթէ ասասցեն, ոչ կատակս հարցաք զնոսա, պարտ է ասել, թէ չէ՞ն ազատ գեթ ՚ի ներելի մեղաց, եթէ ՚ի սակս դայթակղութեն, և եթէ վասն առիթ լինելոյ կախարդաց խօսել զսուտ:

Եթէ ասիցէ ապաշխարողն, թէ բազումք են՝ որ վարին մնապաշտութք, պարտի ասել խոստովանահայրն, թէ ո՛չ բարի է չքմեղութիդ վասն լինելոյ աշխարհի ստութք լի. այլ յայսմ մասին միայն հաստատուն հրաժեշտ և եթ և յառաջադրութի կարող է անբասիր առնել ՚ի յանցանաց:

Բաց նուաղութե զխմամարտի կրօնի անկրօնութեն. որ ընդ իւրև ունի զբազում զստորին ազգս այլոց մեղաց:

Առաջինն է փորձել զԱծ. այն է՝ բանիւ կամ գործով կոչել զԱծ առ առնել ինչ՝ զոր կամ չէ պարտ՝ և կամ չէ մարթ առնել. զորօրինակ՝ փորձել է զԱծ՝ յորժամ ոք խնդրիցէ զսքանչելիս առանց ինչ հարկի. կամ կամիցի առողջանալ 'ի հիւանդութէ իմքէ առանց 'ի գործ արկանելոյ զկարևոր դեղս և զդարմանս. և կոչելոյ զբժիշկս՝ որք կարգեալ են առ նոյնպիսի հիւանդութի. և կամ որ կարօղ է խոյս տալ յելուզակաց 'ի վերայ յարձակելոց՝ և ո՛չ փախչի, այլ սպասէ առ յԱյ նշանաց՝ պահել զնա սքանչելեօք 'ի վտանգէ, յորժամ ինքն կարէ և պարտի փախչիլ: Փորձել զԱծ՝ է միշտ մեղք մահուչափ. և ոչ ընդունի իսպառ զթեթևութի նիւթոյ յաղագս անպատուութեն՝ զոր առնէ Այ:

Վասն այսորիկ սբ. հարք ընդդէմ դառնային ռամկական անուանեալ մաքրութեց. զորօրինակ է մերձենալ յերկաթ հրաշէկ, անցանել ընդ հրացեալ կայծակունս ևն, իբրև 'ի նշանակ ցուցանելոյ զանմեղութի ուրուք: Արդ՝ ո՛չ յայլ սակս հերքէին զփորձ զայդպիսի, բայց զի էր փորձել զԱծ առ առնել զսքանչելիս. որպէս բացածանուցանէ Տէրն Թովմաս. Բ. Բ. խն. ղէ. յօդ. 8: Այս մաքրութիք գլխովին արգելեալ են յեկեղեցւոյ. տես. Վճռական. յղ. ռամկական մաքրութե: Այլ ողորմութբ Այ և ո՛չ հետք անգամ այսպիսի իրաց մնացին յաշխարհս ուղղափառաց:

Երկրորդ յանցանք դիմամարտ կրօնի ըստ նուազութե է սեղանակապտութին. այս է՝ բռնաբարութի ինչ սրբազան իրի ըստ որում սրբազան: Նոյն իրի եթէ քահանայ ոք արասցէ գողութի ինչ (ո՛չ սրբազան իրաց), ո՛չ առնէ զսեղանա-

կապտութիւն. վասն զի ոչ բռնաբարէ զանձն իւր 'ի բան սրբապղծութեան իւրոյ : Այլ ոչ այսպէս կանոնաւոր կրօնաւորն. զի որովհետեւ ունի զուխտ աղքատութեան, եթէ գողասցի, կամ լինիցի ստացող իրիք տիրաբար, գողութիւն նր համարեալ լինի 'ի սեղանակապտութիւն. վասն զի բռնաբարէ զինքն 'ի սրբազան նուէր :

Երեք ազգ են սեղանակապտութեան. այսինքն յորժամ բռնաբարի կամ անձն ոք, կամ տեղի ոք, եւ կամ իր սրբազան : Առաջինն լինի, եթէ ոք գան հարկանիցէ զկղերիկոս ոք. եթէ դատաւոր աշխարհիկ դատեսցէ յատենի զեկեղեցական ոք. եթէ ունօղն զկարգ ոք՝ մեղիցէ անհամեստ մեղօք. կին որ անկցի ընդ նուիրական անձին կապելոյ ուխտիւ ողջախոհութեան : Երկրորդն լինի՝ յորժամ թշնամանեսցի ոք տեղին. զորօրինակ՝ եթէ ոք բռնութեամբ կորզիցէ յեկեղեցւոյ զ'ի նա ապաստանեալն. եւ յայս դիպուած անկանի նաեւ 'ի նզովս պահեալս պապին 'ի կոնդակն Գրիգորի ԺԳ. Որոշեալ այլուստ. հաստատեալ եւ ընդարձակեալ 'ի Բենեդ. ԺԴ. եւ 'ի Կղեմայ ԺԲ. բայց զայդ պարտ է իմանալ՝ յորժամ բռնական կորզումն իցէ հրապարակական իշխանութեամբ. քանզի եթէ լինիցի անձնական իշխանութեամբ՝ անկանի միայն 'ի նզովս պահեալս եպիսկոպոսին. կանոն. Սահմանեալ. ԾԷ. իւն. Է : Այնպէս բռնաբարի ոք տեղին բռնական հեղմամբ արեան մարդոյ, կամ կամաւոր գիջութեամբ, որպէս եւ գողութեամբ ոք սպասուց : Երրորդն լինի թշնամանելով զս̃ր իրս. զորօրինակ՝ յորժամ բռնաբարին ոք խորհուրդք 'ի նոցանէ՝ որք 'ի մեղս ընդունին զայն՝ կամ մատակարարեն. յորժամ բռնաբարին խորհրդա-

կամ իբր կիրառութ՟ն յիրս ապօրինաւորս և 'ի սնապաշտութ՟ս. յորժամ բանաքարին ո՟ք պատկերք կմ՟ նշխարք ո՟եց՝ արհամարհելով զնոսա. և յորժամ բանաքարին ինչք եկեղեցւոյ՝ յափշտակելով զնոսա ։

Սեղանակապտութ՟ին միշտ է մեղք մահուչափ՝ յորժամ լինի որոշ յայլոց մեղաց. որպէս ասէ ո՟բն Թովմաս խն. ղը. յօդ. 3. առ երկրորդն և առ երրորդն. այլ յորժամ կայցէ այնպիսի պարագայ, որ փոխիցէ զտեսակն մեղաց՝ վերածելով զայն 'ի սեղանակապտութ՟, յայնժամ եթէ մեղքն ընդունիցի զփոքրկութ՟ի նիւթոյ՝ մարթի ընդունել զայն և սեղանակապտութիւնն. զորօրինակ՝ որովհետև ողջախոհութ՟ն ոչ ընդունի զփոքրկութ՟ի նիւթոյ, և ոչ իսկ սեղանակապտութ՟ն ընդունի զայն 'ի նիւթ ողջախոհութ՟ե. այլ ընդ հակառակն՝ քանզի գողութիւնն ընդունի զփոքրկութ՟ի նիւթոյ, նոյնպէս ապա և սեղանակապտութ՟ն 'ի նիւթ գողութեան ընդունի զփոքրկութ՟ի նիւթոյ ։ Սորին վ՟ն որ գողանայ զիրս եկեղեցւոյ 'ի նիւթ թեթև՝ գործէ մեղս սեղանակապտութ՟ե միայն ներելիս. սապէս և կրօնաւորն՝ որ լինիցի տէր ստացուածոյ 'ի նիւթ թեթև, մեղանչէ թեթևապէս յանցանօք սեղանակապտութ՟ե ընդդէմ ուխտի աղքատութ՟ե ։

Երրորդ՝ մեղքն ըստ նուաղութբ՟ե դիմամարտ կրօնի՝ է հայհոյութ՟ին որ է թշնամանք բանից ընդդէմ ա՟յ կամ ո՟եց ։ Եւ այս կամ է հերետիկոսական, և կամ պարզ, այսինքն ոչ հերետիկոսական ։

Հերետիկոսական հայհոյութիւն է այն՝ որ պարունակէ զմոլորութ՟ի ընդդէմ հաւատոյ.

ժխտելով Աստուծոյ զստորոգելիս ինչ նորա, կամ ըզ-կատարելութիւնս. որպէս և ընծայելով Աստուծոյ զպակա-սութիւն կամ զանկատարութիւն: Զայսմանէ ա-սացեալ է մեր ՚ի Ճառսն զմեղաց՝ որ ընդդէմ հաւատոյ:

Հայհոյութիւն պարզ է այն, որ ոչ պարունա-կէ զմոլորութիւն դիմամարտ հաւատոյ, այլ է դիմամարտ կրօնի. և այն՝ եթէ ընդդէմ Աստուծոյ լինիցի, և եթէ Սրբոց՝ է համաստեսակ ըստ Սրբոյն Թովմայի. Բն. ԾԳ. յօդ. 1. առ 3: Եւ ոչ իսկ խնդրի առ մեզս հայհոյութեան՝ զի իցէ ՚ի նմա տեսական դիտումն նախատելոյ Աստուծոյ. որպէս յուշ առնէ անտանօր Սրբն Թովմաս. առ. Ե. այլ շատ է, թէ ոք ՚ի բարբառելն զհայհոյութիւն՝ յուշի ունիցի թէ այն բանք են նախատինք Աստուծոյ, կամ Սրբոց: Իսկ որ ունի զտեսական դիտաւորութիւն նախա-տելոյ Աստուծոյ՝ կրկին մեղս գործէ. նախ՝ ատելութեան ընդդէմ Աստուծոյ. որ է մեղք ծանր յոյժ ընդդէմ սիրոյն Աստուծոյ. երկրորդ՝ հայհոյութեան ընդդէմ կրօ-նի: Եթէ ոք միով հայհոյութեամբ հայհոյիցէ ըզ-բազմութիւն Սրբոց՝ պարտի բացատրել զայդ. զի են բազմաթիւ մեղք մահուչափք: Հայհոյութիւն է միշտ մեղք մահուչափ. և ոչ ընդունի զթե-թևութիւն նիւթոյ՝ եթէ ոչ իցէ յեղակարծ թա-փով, կամ անմտադրութեամբ: Հայհոյութիւն ևս և պարզ ՚ի թեմի աստ մերում վերապահեալ է, ըստ որում է ՚ի չար ունակութենէ. և այսպիսի հա-մարի՝ յորժամ ոք ընդ ամ մի հայհոյեալ իցէ բազում անգամ յիմ եօթնեկի. որպէս յայտնա-բանեցաւ ՚ի կաստեղեան ժողովի մերում Եր". 70: Ասեն վարդապետք, թէ չէ յատկապէս հայհոյութիւն բարբառելն ՚ի բարկութեան, կամ ՚ի կազս ընդ ումեք զայն ձայնս ռամկաց, նոր-

դին այ, վերջ այ են, եթէ սրտմտութիւնն չիցէ ձգեալ ընդդէմ այ, այլ՝ ընդդէմ մարդոյ ։ Կայետան. արմիղղա. և սանկեզ ասեն լինել մեղք ներելի. այլ բանիւ դայթակղութե և վտանգի հայհոյելոյ տեսականապէս՝ մարթի լինել մահուչափ ։

Չորրորդ մեղքն դիմամարտ կրօնի՝ է երդմնազանցութի կամ սուերդմնութիւն. այլ զայսմանէ ճառեցաւ ՚ի խօսելն յաղագս երդման ։ Հինգերորդ մեղքն ընդդէմ կրօնի՝ է սիմոնականութին. որ է կամակար կմ խորհրդածեալ կամք վաճառելոյ կմ գնելոյ ժամանակաւորօք զիրս հոգևորս, կամ որ կից են ընդ նոսա. և կմ ընդ հակառակն (հոգևորօք՝ զժամանակաւորս)։ Հոգևոր իրք, կմ յարակիցք իւր, զորս չէ մարթ վաճառել կամ գնել՝ են երեք. ա. խորհուրդք եկեղեցւոյ, և մատակարարութիւնք նոցա. բ. ներգործութիւնք՝ որք յառաջգան ՚ի շնորհաց խորհրդոց. որպիսի են քարոզել, օրհնել զեկեղեցիս, զխորանս, զկուսանս. արձակել ՚ի բանադրանաց. տնօրինել յանկանոնութէ, յուխտից, յերդմանց, և յարգելչաց պսակին. գ. այն ինչ իրք՝ որք յարակից են ՚ի հարկէ ընդ հոգևորականս. ո՛պ են թոշակք, եկեղեցական ժառանգութիւնք, ևն ։

Քառեակ են ազգ սիմոնականութե. ա. մտաւոր. բ. Դաշնաւոր. գ. Իրական. դ. Յանձնարարական ։

Մտաւորն է՝ յորժամ տայ կամ մատուցանէ ոք զժամանակաւոր ինչ առ ՚ի ստանալ զհոգևորն, և կամ ընդ հակառակն, առանց ինչ յայտնի կամ լռելեայն դաշին, այլ դիտաւորութբ միայն. զորօրինակ՝ կղերիկոս ոք՝ որ

տայ ընծայս, կամ զի ծառայէ եպիսկոպոսի խնդրեմ գիտմամբ ընդունելոյ 'ի նմանէ զթոշակ ինչ, կամ զձեռնադրութիւն քահանայութեան, գործէ զսիմոնականութիւն մտաւորական՝ յորժամ փոխան ընծայից կամ ծառայութեան իցէ թոշակաւորութիւն կամ ձեռնադրութիւն։ Նոյնպէս և եպիսկոպոսն՝ որ շնորհէ զթոշակ կամ ձեռն դնէ 'ի վերայ որդւոյ առատաձեռն մեծատան ուրուք փոխանակ ունելով գլխաւոր զակնկալելի կաշառս՝ առնէ զմտաւոր սիմոնականութիւն։

Դաշնաւոր սիմոնականութիւն է, յորժամ 'ի մէջ անկանի փոխադարձ դաշնակցութիւն յայտնի յերկոցունց կողմանց՝ վասն վաճառելոյ կամ գնելոյ զիրս հոգևորս 'ի ձեռն գնոյ. թէպէտ և իրօք ոչ 'ի գործ դնիցի բանն երկուստեք. կամ 'ի միոյ կողմանէ միայն տուեալ լինի գինն՝ ակնկալութեամբ ընդունելոյ 'ի միւսմէն զթոշակ, կամ ընդհակառակն։

Իրականն է՝ երբ զուգընթանան երեքին այսոքիկ. ա՝ յայտնի դաշնաւորութեան տալոյ գնոյ զհոգևոր ինչ. բ՝ յորժամ վճարի գինն կամ մասն մի գնոյն. գ՝ յորժամ փոխարէն տուեալ լինի արդեամբք հոգևորական շնորհն։

Յանձնարարականն է՝ յորժամ թողու ոք այլում զթոշակ ինչ այսու դաշամբ. զի յետ այսչափ ինչ ժամանակաց՝ դարձուսցէ զայն յետս, եթէ առանց հասութի, և եթէ հանդերձ հասութիւ առանց պապական իշխանութեան։

Սիմոնականութիւն ոմն է յայտնի, և ոմն վերաբերեալ։ Յայտնին է՝ յորժամ կայ յայտնի դաշն տալոյ զժամանակաւորն առ 'ի ստանալ զհոգևորն, կամ անդրադարձեալ։ Վերաբ-

կեալն է՝ յորժամ ասասցէ ոք. եթէ շնորհեսցես ինձ զթոշակ՝ շնորհապարտ գտայց քեզ. կամ 'ի սակս շնորհապարտութեան տաց քեզ հարիւր մի:

Երեք ազգ են գնոց, զորս մարթ է տալ կամ ընդունել վասն վաճառման եկեղեցական իրաց. այսինքն՝ են Ձեռաձիր, Լեզուաձիր, և Պաշտօնաձիր: Ձեռաձիր են դրամք. շնորհումն պարտուց. պարտաւորութիւն տալոյ 'ի փոխ զդրամ, ևն. լեզուաձիր է պարտաւորել զթոշակաւորն յառաջ կամ զկնի տուչութեան թոշակին՝ միջնորդ լինել վասն ընդունելոյ զշնորհս ինչ առաջի իշխանին, պապին, եպիսկոպոսին. կամ գովել զինքն, և մեծացուցանել զվարդապետութիւն իւր, զհմտութիւն ևն: Պաշտօնաձիրն է՝ յորժամ կղերիկոս ոք ձրի ծառայէ եպիսկոպոսին՝ առաւելապէս, զի օգտեսցի 'ի նմանէ, կամ ձեռնադրեսցի: Նմանապէս եթէ եպիսկոպոսն մատուսցէ զթոշակաւորութիւն, կամ ձեռնադրեսցէ զՄեմպրոնիոս՝ առաւելապէս վասն այնր, զի ձրի ծառայեաց նմա առ ժամանակ մի:

'Ի մտաւոր սիմոնականութեան թէպէտ և մեղանչել մեղանչէ ոք ծանունս մեղօք սեղանակապտութեան ընդդէմ առաքինութեան կրօնի, այլ ոչ անկանի ընդ բանադրանօք, կամ ընդ այլով եկեղեցական պատժով. որպէս ասացաւ 'ի վեր անդր 'ի վերայ պարզապէս ներքին հերետիկոսութեան:

'Ի դաշնաւոր, և յիրական, և 'ի յանձնարարական սիմոնականութեան ոչ միայն լինի մեղանչել մեղօք սեղանակապտութեան ընդդէմ կրօնի, (ուր չիք և թեթևութիւն նիւթոյ,) այլև առաւելապէս ընդդէմ տրամաբաշխական արդա-

բութեան, բաշխելով զոր ինչ ոչ եթէ արժանաւորագունի, այլ գնոյ. որպէս և ընդդէմ փոխարինական արդարութեան. վասն զի վաճառութիւն սրբազան իրք, որոց անմարթ է վաճառել երբեք. ուստի ծագի պարտաւորութիւն հատուցման: Նաև զայս պարտ է իմանալ 'ի վաճառման խորհրդոց, խորհրդականաց, եկեղեցական հանդիսից, Թոշակաց, եկամտից, ժառանգաւորութեանց, եւլն: Նաև ևս յորժամ սիմոնականութիւն լինիցի 'ի ձեռնադրութիւս, 'ի Թոշակաւորութիւս, կամ յընդունելութիւս 'ի կրօն, անկանի 'ի նզովս պահեալս պապին՝ եթէ տուօղն և եթէ առօղն: Իսկ 'ի սիմոնականութեան ձեռնադրութեան երկոքեանն իսկ անկանին նովին ինքն գործով ընդ կախմամբ, որ պահեալ է պապին: Նաև 'ի սիմոնականութեան Թոշակաց, տուչութիւն նոցա է ոչինչ, և 'ի դերև ելեալ նովին ինքն գործով. և Թոշակառուն պարտաւորի 'ի խղճէ 'ի բաց Թողուլ զԹոշակն՝ յառաջ քան զվճիռ դատաւորին. որպէս և զոմն զպտուղս քաղեալս յորէ անտի ժառանգութեան. և ոչինչ զօրէ եռամեայ ժառանգակալութիւն, կամ զինչ և իցէ այլ առիթ՝ առ 'ի պահել զնոսա ինքեան:

'Ի կարգի սիմոնականութեան Աղէքսանդր Է. դատապարտեաց զնախադաս". իբ. * Ոչ է ընդդէմ արդարութեան չտալն ձրի զեկեղեցական Թոշակս. վասն զի տուօղն 'ի տալ անդ իւրում դրամով զեկեղեցական Թոշակս՝ ոչ պահանջէ զդրամն զայն վասն տուչութեան Թոշակին, այլ իբրև 'ի տեղի ժամանակաւոր օգտին, զոր չէր պարտական տալ քեզ": Որպէս և զերկուս այլ դատապարտեաց Իննով". ժա. այսինքն՝ զխե, և զխզ. յորոց առաջինն է այս.

* Տալ զժամանակաւորն 'ի տեղի հոգեւորի ոչ է սիմոնականութեան, յորժամ ժամանակաւորն ոչ տուեալ լինի իբրեւ գին, այլ միայն իբրեւ շարժառիթ շնորհելոյ կամ կատարելոյ զհոգեւորն. եւ կամ յորժամ ժամանակաւորն իցէ լոկ ձրիական հատուցումն փոխանակ հոգեւորին, եւ կամ ընդհակառակն ‖: Այլ երկրորդն է այն. * Այլ այն ունի զտեղի, թէ եւ ժամանակաւորն իցէ գլխաւոր շարժառիթ տալոյ ըզհոգեւորն, մանաւանդ՝ թէ իցէ նաեւ վախճան հոգեւորական իրին. այնպէս՝ զի մարմնաւորն այն մեծարգի համարիցի քան զհոգեւոր իրն ‖: Պատճառ դատապարտութեան իբր երրորդ նախադասութեան է. զի ոչ ոք կարէ ընդունել կամ պահանջել զդրամ առ 'ի տալ այլում՝ զոր չէ իւր. բայց արդ ժամանակաւոր օգուտն թոշակի ոչ է պաշտպանին կամ տուչին. ուր նա չունի զայլ իրաւունս, բայց միայն անցուցանել զթոշակն առ ոք. կամ անուանել զթոշակաւորն. ապա ոչ կարէ առնուլ ինչ վասն ժամանակաւոր շահու՝ զոր ունի յինքեան թոշակն: Այլ թէպէտ պաշտպանն ոչ պարտաւորի տիտղոսի տալ, կամ զտիտղոս անուանել առ այն թոշակ. բայց պարտաւորի անուանել զոք կամ տալ ումեք զայն. ուստի չկարէ ընդունել զդրամ առ 'ի տալ տիտղոսի. ապա թէ ոչ՝ գովլին վաճառէր զշնորհն: Պատճառ դատապարտութեան իե. նախադասութեան է. վասն զի ամենայն դաշն եղեալ 'ի վերայ հոգեւորական իրաց, կամ յարակցելոց ընդ հոգեւորաց՝ է սիմոնականութեան. Գլ. Մայդ ղեղ. յղ. սիմոնաքականութե: Այլն իրի եթէ տուեալ լիցի ժամանակաւորն իբր գին հոգեւորին, եւ եթէ իբր շարժառիթ մատուցանելոյ զհոգեւորն՝

միշտ է սիմոնականութիւն. վ̄ զի միշտ տուեալ լինի վասն դաշինն եղելոյ: Յաղագս երկրորդ-մասին նախադասութեան. յայտ իսկ է. զի փոխարինութիւն պարտ է լինել համեմատ ընդ փոխարինեալ իրի. իսկ արդ՝ 'ի մէջ հոգևորին և ժամանակաւորին անմարթ է լինել համեմատութիւն, ապա չկարէ լինել փոխարինութիւն ևս և ձրի՝ ընդ հոգևորն և ընդ ժամանակաւորն:

Իսկ յաղագս երկ. նախադասութեան դատապարտելոյ՝ պարտ է զանազանել զներքին և զկախմանական շարժառիթն ներգործութեան յարտաքին և 'ի միջի շարժառիթէ նր. որպ և զգլխաւոր շարժառիթն՝ և զնուազ գլխաւորն 'ի տալոյ զհոգևորս: Արդ՝ եթէ գլխաւոր շարժառիթն տալոյ զհոգևորն իցէ իրն ժամանակաւոր, լինի միշտ սիմոնականութիւն. և յայնժամ ժամանակաւորն լինի փոխձան, որ վասն տուեալ լինի իրն հոգևոր. մինչ զի առաւել արդոյ համարեալ լինի ժամանակաւորն՝ քան զհոգևոր, ըստ որում ասի և 'ի դատապարտեալ նախադասութեան անդ. այլ ոչ այդպէս է՝ եթէ իցէ լոկ շարժառիթ արտաքին և միջի:

Յուշ լիցի, զի սիմոնականութիւն ընդմիտանէ և յընտրութիւս անգամ կրօնաւորական առաջնորդութեան, տալով դրամս վ̄ ընդհանրական մեծաւորութեան, գաւառապետութեան, վերակացութեան ևն. վասն զի այդ պաշտօնատարք ևս ունին զհոգաբարձութիւն հոգւոց. Գլ. Արու-հետև յամ. յղ. ընդր. և մեկնաբան. առ եկեղեցեացն. մինչ զի՝ 'ի լինել վաճառման և գնման հոգևոր ինչ իրաց, առնի սիմոնականութիւն. դիմանայ. պիեռերին. պինկնատել են:

Հրամանատարութիւնք, տեսչութիւնք են, ասպե-

տացն մալթայի՝ համարին առ կանոնագէտս
իբր Թօշակք. ուստի եթէ առ ստանալ զնոսին
լինիցին աղերսանք, դաշինք, կաշառք, կամ
ընծայք՝ սիմոնականութ̃ի գործի. բայց հասա-
րակօրէն ծածաբանք ուրանան զայդ. զի ասեն
չիք ինչ 'ի նմա յարակցեալ գործ հոգևորա-
կան: Բայց յայսր ամի վր̃ անմարթ է ժխտել,
թէ չիցէ անզանօր ծանր անտեղութիւն. զոր
պնդեաց բառնալ 'ի միջոյ կղեմէս ժդ̃. 'ի կան-
դակի անդ՝ զոր ուղղեաց առ մեծ իշխանն մալ-
թայի. յորում յայտնաբանէ լինել ոչինչ և ան-
վաւեր զայն հրամանատարութ̃իս, զնախագա-
հութ̃իս են, տուեալս աղերսանօք, կաշառօք
են: Տես 'ի Թեմական ժողովն բենեդ". ժդ̃.
գր. ծէ̃. գլ. ե̃. յօդ. 15. ըստ նոր տպագրութ̃:

---

Յաղագս մեղաց, որք դիմամարտին գթութե̃ առ
ազգականս. (նմա առաւել առ ծնօղս):

Գթութ̃ին՝ (որ և բարեպաշտութ̃ի ասի)
պարտաւոր առնէ զմեզ պատուել զծնօղս և
զազգականս մեր, և օգնել նոցա 'ի մարմնաւոր
կարիս նոցա: Սորին վր̃ 'ի մէջ բերէ զկրկին
ներգործութ̃իս այսինքն՝ պատուել, և դարմա-
նել զարենակիցս: Ուստի որ գործէ զմեղս
ընդդէմ հինգերորդ և վեցերորդ պատուիրա-
նին ընդ ազգականս իւր՝ մեղանչէ ոչ միայն
ընդդէմ առաքինութ̃եց հակադրելոց մեղացդ
այդոցիկ, այլ և ընդդէմ գթութե̃՝ անարգե-
լով զազգականս իւր այդպիսի օրինակաւ: Նոյն-
պէս և որ ոչ նպաստէ 'ի կարօտութե̃ նոցա

գործովք մարմնաւոր ողորմութեան, մեղանչէ ոչ միայն ընդդէմ սիրոյ, այլ և ընդդէմ գթութեան. և պարտաւորի 'ի խոստովանութեան յայտնել զտորին տեսակս մեղաց. ուստի որ ոք անտես առնէ զգեցուցանել զմերկութիւն նոցա, և կերակրել զանսուաղութիւն նոցա, և ձեռն տալ բանտարգելութեան նոցա, մեղանչէ ընդդէմ սիրոյ, միանգամայն և ընդդէմ գթութեան:

Երկու են մոլութիւնք դիմամարտք այսմ առաքինութեան. առաջինն՝ որ դիմամարտի ըստ առաւելազանցութեան՝ կոչի անկարգ սէր առ ազգականս. զորօրինակ՝ յորժամ պատանի ոք կոչեցեալ առ յԱյ լինել կրօնաւոր, ապախտ արասցէ զԱծային ազդեցութիւն 'ի սէր ազգականաց, չկարելով թողուլ զնոսա: Իսկ երկրորդ մոլութիւն ըստ նուազութեան դիմամարտ գթութեան՝ կոչի անգթութիւն կամ ամբարշտութիւն. և այս լինի՝ յորժամ ոք անարգու գտանի նոցա անպատկառութեամբ. մինչ զի՝ ուր անպատկառութիւն եղեալ առ օտարական ոք՝ իցէ մեղք ներելի և եթ, 'ի լինելն ընդդէմ հօր և մօր՝ լինի մեղք մահուչափ: Վասն այսորիկ որ անիծանէ զհայր կամ զմայր 'ի բացակայութեան իսկ նոցա և առանց դիտելոյ, մահուչափ մեղանչէ յաղագս ծանր անպատկառութեան՝ որ ցուցեալ լինի յանիծանել զաւակի զհայր կամ զմայր իւր: Նոյնպէս և որ անտես առնէ օգնել նոցա 'ի կարիս, մահուչափ մեղանչէ: Միայն թէ այս նպաստ 'ի դիպուածս ինչ մարթի ընդունել զթեթևութիւն նիւթոյ:

'Ի վերայ առաքինութեանս գտանին կրկին նախադասութիւնք. ԺԴ. և ԺԵ. զոր դատապարտեաց Իննովկ. ԺԱ: Առաջինն է այս. * Օրէն

է բացարձակ բաղձանօք ցանկալ մահու հօրն . ոչ ըստ որում չար է ծնողին , այլ ըստ որում բարի է ցանկացողին . եթէ զի ունի հասանել ինքեան ժառանգութիւն պարարուն ∥ ։ Եւ երկրորդն այն . * Օրէն է որդւոյ ուրախ լինել ընդ հայրասպանութիւն գործեալ յիւրմէ յարբեցութեան , 'ի սակս անչափ մեծութեան՝ որ անկանի ինքեան 'ի ժառանգութենէ ∥ ։ Պատճառ դատապարտութեան երկոցունց իսկ մարթի վերածիլ 'ի մի . եթէ զի կարգ սիրոյ պահանջէ , զի կեանք մերձաւորին նախամեծար լիցի քան զիւր շահ մեր ժամանակաւոր . մանաւանդ թէ պահանջէ՝ զի առ 'ի պահպանել զկեանս նորա՝ նպաստամատոյց լինիցիմք նմա եւս եւ 'ի կարեւորաց վիճակին մերոյ . վասն որոյ ընդդէմ կարգի սիրոյ է ցանկալ մահու ընկերին . կամ խնդալ ընդ մահ նորա վասն ժամանակաւոր ինչ շահու՝ որ մարթի մեզ հասանել ։

---

### Յաղագս մեղաց , որք ընդդիմամարտին յարգութեան և հնազանդութեան մեծաւորաց ։

Գթութեան զհետ գայ յարգութիւն , և հնազանդութիւն ։ Ընդ՝ յարգութիւն է առաքինութիւն ինչ՝ որ պարտաւորէ զմեզ շուք դնել մեծաւորաց մերոց , և այլոց կարգելոց յարժանապատուութիւն ինչ , եթէ եկեղեցական և եթէ աշխարհական . որում ըստ նուաղութեան ընդդէմ կալանէ մոլութիւն կոչեցեալ Անպատուութիւն ։ Յանցանքն համարի ծանր կամ թեթեւ ըստ անարգանացն՝ որով անպատուեմք զնոսա ։ Եւր պատա

է գիտել, զի դոյզն ինչ անպատուութեան եղեալ ընդդէմ մեծաւորին մարթի լինել մեղք մահուչափ՝ քանիւ անձինն թշնամանելոյ, որ չէր այնպէս ծանր, եթէ լինէր առ այլ ոք։ Այս առաքինութիւն պարտաւորէ ընդ մահուչափ մեղօք. բայց է զի ընդունի զթեթեւութիւն նիւթոյ. թէպէտեւ հազիւ երբէք։

Հնազանդութիւն պարտաւորէ զմեզ 'ի կատարել զհրամանս նոցա՝ որք ունին զտիրական իշխանութիւն ինչ 'ի վերայ մեր։ Այս առաքինութիւն ունի ինքեան գիմամարտ ըստ նուազութեան զմոլութիւն՝ որ կոչի Անհնազանդութիւն. սա չընդունի զթեթեւութիւն նիւթոյ՝ եթէ ոք արհամարհանօք անցանիցէ նաեւ զփոքու իւիք հրամանաւ մեծաւորին։ Այլ եթէ հրամանն իցէ 'ի նիւթ թեթեւ, և զանցումն առանց արհամարհութեան՝ յայնժամ մեղանչէ ներելի և եթ մեղօք անհնազանդութեան։

Յաղագս այսր Աղեքսանդր Է. դատապարտեաց զնախադասութիւն ԽԲ. * Ժողովուրդն ոչ մեղանչէ, թէպէտեւ ամենեւին անպատճառ չընկալցի զառ յիշխանէ հրատարակեալ օրինադրութիւն ‖։ Վասն զի այդ դրութիւն է ընդդէմ վճռոյ թղթն Պօղոսի առ Հռովմ. Գլ. ԺԳ. * Որ հակառակ կայ իշխանութեան, Այ հրամանին հակառակ կայ. վասն որոյ հարկ է հնազանդ լինել՝ ոչ միայն վասն բարկութեան. այլեւ վասն մտացն խղճի ‖։ Ուրանօր ակն յայտնի տեսանի, թէ չէ հնար հպատակաց առանց բանաւոր պատճառի չընդունել զհրատարակեալ հրամանս ընիկ մեծաւորին։ Այնպէս ընդդէմ առաքինութեանս հնազանդութեան Իննովկենտիոս ԺԱ. դատապարտեաց զնախադասութիւն մեկ-

նոսի. ԿԵ. * Առաջնորդաց հնազանդել պարտ է յիրս արտաքինս. և ընդարձակութեան ուխտի հնազանդութեան կրօնաւորաց՝ լոկ յարտաքինս ձգի. իսկ ըստ ներքնոյն այլազգ է բանն, յոր Աստուած միայն, և խնամակալն (հոգւոց) մտանեն||: Որ է հակառակ վճռութեան՝ զոր ուսուցանէ մեզ Պօղոս առ Եբր. ԺԳ. * Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց. որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր||: Ուր բառիւքդ՝ վասն ոգւոց ձերոց իմացեալ լինի ներքին ատեանն. որովհետև եպիսկոպոսն է Աստուածադիր ղեկավար հոգւոց հպատակաց իւրոց, որում պարտական են հնազանդիլ ոչ լոկ յարտաքին ատենի՝ այլև ՚ի ներքնումն: Զոր նոյնօրինակ պարտ է ասել և վասն կրօնաւորաց՝ հայելով առ մեծաւորս իւրեանց:

՚Ի վախճանի պէտք են յուշ ածել ՚ի կարգի յարգութեան և հնազանդութեան, թէ որ միանգամ ձեռնադրի յերիցութիւն՝ խոստանայ զերկոսինն իսկ. զի յասել անդ եպիսկոպոսին. խոստանա՞ս ինչ և յաջորդաց իմոց զհնազանդութիւն և զյարգութիւն. պատասխանէ ձեռնադրեալն, խոստանամ: Ապա որոյ եթէ գործեսցէ հակառակ յարգութեան և հպատակութեան առաջնորդին՝ ծանուցանէ մեղանչել, եթէ ոչ թեթևութիւն նիւթոյ արասցէ զնա անբասիր. այս բան է՝ որում ոչ ձեռնադրեալք ուշ դնեն, և ոչ առաւել խոստովանահարք. որով և գրաւին ընդ ծանր յանցաւորութեամբ: Աստանօր ՚ի միտ առ. զի պատուէր Սիքստոսի Ե. յամին 1590. առ կրօնաւորս վասն չխօսելոյ ընդ հաւատաւորս՝ պարտաւորէ ընդ մահուչափ մեղօք. որպէս և կուսանք մահուչափ մեղան-

չէին. բայց կրօնաւորք անկանէին և ընդ ծանր պատժովք, որպէս է տեսանել 'ի կոնդակն սըրբազան ժողովոյն յաղագս եպիսկոպոսաց և կրօնաւորաց:

Օրհնեալ Սիքստոսի Ե. հաստատեաց Պօղոս Ե. որպէս և Ուրբանոս Ը. և այլք 'ի քահանայապետաց: Կանոնաւոր կրօնաւորք հնարեցան այլ և այլ բաղբաղայս առ ազատ լինել 'ի մահուչափ մեղաց: Այլ ամենայն հնարք նոցա հերքեցան 'ի ժողովոյ սիւնհոդոսաց 'ի 11. Մայիսի. 1669. հաստատութեամբ կղեմայ Թ. քանզի այսպէս յայտ արար ժողովն. *Որ և է կրօնաւորք առանց օրինաւոր հրամանի մատուցեալք 'ի խոստովանութիւն, և այն ըստ կարի խիստ սուղ ժամանակ, ընդ միանձնուհիս և ընդ այլ անձինս եղեալս 'ի փակարանի, մահուչափ մեղանչեն. և զայսպիսիս ընդ բանադրանօք, և ընդ զրկանօք ներգործական և կրաւորական քուէարկութեան, և ընդ այլ ևս պատժովք սահմանելովք ընդդէմ կրօնաւորաց՝ առանց հրամանի մատուցելոց 'ի վանս կուսանաց, կարող լիցի սանձել եպս տեղւոյն՝ իբրև 'ի հրամանէ առաքելական աթոռոյն||: Իսկ 'ի 26. Նոյեմբ. 1670. ետ պատգամ. թէ որ և է պատճառ համեստ և բանաւոր ոչ անպարտ կացուցանէ 'ի մահուչափ մեղաց զկանոնիկոս կրօնաւորս, որք գնան 'ի կուսանաց վանս առանց հրամանի եպսին. և 'ի 21. Մայիսի. 1679. ասէ, թէ ընդ նոյնին պատժովք անկցին նաև այն կրօնաւորք. որք յետ քարոզելոյ առ միանձնուհիս, խօսեսցին ընդ նոցա զայլոց որպիսի և իցէ իրաց՝ առանց մասնաւոր հրամանի եպսին||:

## Յաղագս Մեղաց, որ ընդդէմ չափաւորութեան, և ընդդէմ պատուիրանի պահոց։

Զգաստութիւն է առաքինութիւն ինչ, որով 'ի չափու ունիմք և սանձեմք զախորժակն գինարբութեան, մինչև չբերել ինչ փաս կիրառութեան բանի։ Սա ունի զիւր դիմամարտ մոլութիւնս ըստ առաւելադանցութեան և ըստ նուազութեան անանուն։ Ըստ առաւելադանցութեան՝ է արբեցութիւն. որ ըստ Սբյն Թովմայի՝ է անկարգ գինարբութիւն, որ զրկէ 'ի կիրառութենէ բանին։ Նմին իրի եթէ ոք նախատես իցէ, թէ ըմպելով որչափ և է սակաւ, ունի անկանիլ յարբեցութիւն և չզգուշանայ, մեղանչէ մահուչափ մեղօք։ Իսկ եթէ ոչ իսպառ արբենայցէ, այլ փոքր մի ինչ պղտորեսցի բանն՝ գործէ զներելի մեղս։

Հասարակօրէն որ արբենայ յառաջնում նուագի, ոչ մեղանչէ մահուչափ՝ իբրև անգէտ և անփորձ զօրու արբեցութեան. զսոյն զայս մարթ է ասել և զնմանէ՝ որ հրաւիրէ զայլս յըմպել, և նոյն անցք անցանեն ընդ նոսա. այլ սակայն եթէ նա՝ որ յառաջնում նուագի ըմպէ զգինի, և եթէ նա՝ որ հրաւիրէ զայլս 'ի յըմպել երբ նախատես իցէ արբեցութեան յանձին կամ յայլս, ծանունս մեղանչէ. և այնչափ լինին թիւք մեղաց, որչափ անձինս ոք հրաւիրեաց յըմպել։

Իսկ յանցանք գործեալք յարբեցութեան, կամ կանխաւ գուշակելի էին՝ և կամ ոչ. զորօրինակ՝ եթէ ոք նախատես իցէ, թէ յարբեցութեան

խըրում ունի հայհոյել, սպանանել, պոռնկել ևն. ոչ միայն մեղանչէ ընդդէմ զգաստութեան արբեցութեամբ, այլ և ընդդէմ առաքինութեանն՝ որում հակառակ գտանի գործեալ մեղքն. վասն այսորիկ 'ի դիպուածն առաջին՝ գործէ ընդդէմ կրօնի՝ հայհոյութեամբ. յերկրորդին՝ ընդդէմ արդարութեան՝ սպանութեամբ: Իսկ յերրորդումն՝ ընդդէմ ողջախոհութեան՝ պոռնկութեամբ: Ապա եթէ չէր երբէք նախատես՝ թէ յարբեցութենէ ունին յառաջ գալ այն մեղանչական գործք, յայնժամ եթէ այդ գործք էին 'ի բաղձանս սովոր իցեն յառաջագայիւ յարբեցութենէ, ընդնոյն թովմայի ասելի է՝ թէ որ կամ ըղձանացն՝ կամ բանդագուշայն և ըզգործն, որ իբր 'ի բաղջումս յառաջ գայ յայնպիսի պատճառէ: Իսկ եթէ սովոր իցեն զհետ գալ էին 'ի սահմանս և բաղդահանս, ոչ համարեսցին 'ի մեղս այնմ, որ արբենայ:

'Ի վերայ այդր մոլորութեան խննովկ. ժամ. դատապարտեաց զնախադասութիւնն ը. զայն թէ՝ *Ուտել և ըմպել ցյագ առ լոկոյ հեշտութեան ոչ է մեղք, միայն թէ չիցէ վնասակար առողջութեան. վասն զի օրինաւորապէս կարող է ախորժակն բնական վարել զներգործութիւնս իւր || ևն:

'Ի դատապարտութենէ աստի զհետ գայ, թէ նաև ըմպելն առանց վտանգի արբեցութեան և առանց վնասու առողջութեան, յորժամ իցէ արբումն ոչ 'ի պէտս՝ այլ լոկ վասն ախորժանաց, զոր բնապէս զգայ ոք յըմպել խըրում, դէթ լինի ներելի մեղք: Եւ պատճառ դատապարտութեան քաղի 'ի սուտ փաստէ յառաջ բերելոյ 'ի նմին նախադասութեան. քանզի և ոչ զմի 'ի

բնական գործոց մարթ է գործել միայն և սկզբնաբար վասն հեշտութեան՝ որ անտի յառաջ գայ. ապաթէ ոչ՝ լինի գէթ ներելի մեղք. այլ՝ պարտ է գործել ըստ թելադրութեան բանին, և վասն վախճանի՝ յոր սակս կարգեցաւ 'ի բնութենէ. Եւս առաւել յորժամ գործ այդպիսի լինիցի ցոփ. զի յայնժամ զուգընթանայ և վտանգն արբեցութեան և վնասու կենաց. և լինի պարզապէս վասն հեշտութեան և եթ ըմպելոյ:

Իսկ պահեցողութիւն թէպէտև չիցէ 'ի կարգի չորեքտասան առաքինութեանց, այլ սակայն ընթացակից է ընդ զգաստութեան. և է առաքինութիւն ինչ՝ որ չափաւորէ զընական գործողութիւն ուտելոյ. որպէս զի եղիցի այն առ և այժմ ըստ թելադրութեան ուղիղ բանի: Գլխաւոր ներգործութիւն այսր առաքինութեան՝ է պահքն և ծոմապահութիւն հիմնեալ յերկու ինչ իրս. այսինքն 'ի հրաժարելն 'ի մսեղինաց և 'ի կաթնեղինաց, և 'ի միաճաշակն լինել 'ի նմին աւուր: Առ այսպիսի պահս սոյիմբք հանգամանօք պարտաւորեալ են ամենայն հաւատացեալք 'ի հրամանէ եկեղեցւոյ 'ի քառասնորդական պահս, 'ի քառեակ եղանակս տարւոյ. և յոմ հսկմունս հրամայեալս: Միայն այնոքիկ՝ որոց չև է լցեալ զամս հասակի քսան և մի, թէպէտև պարտական են պահել զպահս հրաժարմամբ 'ի մսոյ՝ յետ լրման եօթնամեայ հասակի, այլ ոչ են պարտաւոր ծոմապահութեան. որպէս և ոչ հասեալքն 'ի ծերութիւն. որ ըստ կարծեաց բազմաց սկսանի՝ 'ի լրման վաթսուն ամաց. իսկ այլք պահանջեն զառաւել հասակ: Այլ յայդմ մասին պարտի ամենայն ոք կանոնաւորել զանձն ըստ վիճակի առողջութեան և զօրու-

թե̄ իւրոյ. միայն թէ պարտին ժուժկալել 'ի մնոյ՝ եթէ այլով իւիք պատճառաւ չիցեն տնօրինեալք:

Իսկ որ միանգամ առ տկարութե̄ չկարեն ծոմապահել յաւուրս քառասնորդական պահոց, որ է հանդիսական պահք եկեղեցւոյ, պարտի ընդունիլ յեպս̃է զտնօրինումն հանդերձ նախընթաց վկայութե̄ բժշկին, որ հարկաւոր դատիցի զայնպիսի տնօրինումն: Ոյր վան ծանիր, զի քահանայապետն բենեդ". ժդ. 'ի սահմանադրութե̄ անդ իւրում Ո՛չ երկբայիմք. 1741. 'ի 30. մայիսի. յայտ առնէ, թէ այնպիսիքն պարտական են ծոմապահել՝ երբ ներգործութք չեն հիւանդք. Եւ առաւել չկարեն ուտել միանգամայն զկերակուր զատկական խառն ընդ քառասնորդականին: Որպէս և կանխաւ պարտ է ունել նոցա զվկայութի̄ 'ի բնիկ եպս̃է իւրեանց, կամ 'ի ծխատէր երիցուէ և 'ի բժշկէ: Այս և կոնդակ, որոյ սկիզբն է Ի գերագոյն. տուեալ 1741. յօգոստ". 22. ուր բացատրի թէ, զպարտաւորութի̄ն ծոմապահելոյ և չուտելոյ անխառն զզատկականն խառն ը̄ քառասնորդականին, պարտ է իմանալ ոչ միայն երբ տնօրինի ամբողջ միաբանութի̄ ինչ, կա̃մ քաղաք 'ի քառասնորդական պահս օրինաւոր իշխանութե̄ ուտելոյ զձուս, և զկաթնեղէնս, և զմիս անգամ, այլ և յորժամ տնօրինի մասնաւոր անձն ոք 'ի բնիկ խոստովանահօրէ, կամ 'ի ծխատէր երիցուէ վկայութե̄ բժշկին: 'Ի վախճանի 'ի յետին սահմանադրութե̄ իւրում. որոյ սկիզբն է Լ. պատէհն անձնայօժարբ. տուեալ 1745. յունիսի. 10. Մեկնաբանեաց զառաջիկայ տարակոյս, զոր

առաջի արարին նմա ոմանք յեպիսկոպոսաց սպանիոյ։

ա̅. Ասէ Նոքա՝ որք իշխանութիւն տնօրինեցան ունել զմիս, կամ զկաթնեղէնս յաւուրս քառասնորդականս, պարտաւորին ծոմապահել ընդ ծանր մեղօք. և չունել զզատկական կերակուր խառն ընդ քառասնորդականին։

բ̅. Ասէ այսպիսիքս ոչ կարեն յընթրիս առնուլ զզատկական կերակուրս. այլ պարտաւորին ամենայն իրօք առնուլ զպահոց կերակուր. և այն ըստ քանակին՝ որով վարին այլ պահեցողք։

գ̅. Ասէ որոյ հրաման տուեալ է ունել զմիս՝ ոչ կարէ ունել և զձկնեղէն խառն. իսկ որ տնօրինեալ է առ 'ի ունել զձու և զկաթնեղէն միայն, կարէ ունել նաև զձկնեղէն միանգամայն։

դ̅. Ասէ ամենեքին սոքա զայսօրինակ տնօրինեալք՝ պարտական են պահել զժամ ճաշոյ, որպէս պահենն ոչ տնօրինեալք։

ե̅. Ասէ պատուիրանն չուտելոյ միս խառն ընդ ձկան՝ պարտաւորէ զնոսա նաև յաւուրս կիւրակէից քառասնորդաց։

զ̅. Ասէ զբովանդակ նախադրեալսդ չէ՛ պարտ իմանալ զնոցանէ՝ որք վայելեն զարտօնութիւն խաչակրաց. զի նոքա կարեն վարել արտօնութեամբք իւրեանց՝ ըստ սահմանին որով շնորհեցաւ նոցա, և ոչ այլազգ։

է̅. Ասէ նախադրեալքդ ամենայն՝ պարտաւորեն զօրինաւորապէս տնօրինեալս ոչ միայն 'ի ժամանակս քառասնորդական պահոց, այլ և 'ի հսկմունս, և 'ի պահս չորից եղանակաց։

Բայց ուրեմն ժամապահութիւն փակէ յինքեան զկրկին պատուիրանս. մին ստորասական, և միւսն բացասական: Ստորասականն հիմնի՝ 'ի Ճաշակելն յաւուրն միանգամ: Իսկ բացասականն 'ի ժուժկալութեան 'ի մսոյ և 'ի կաթնեղինաց: Երկրորդս այս պարտաւորէ մշտ ամշտ. Նմին իրի որ յաւուրս ժամապահութեան ուտէ զմիս բազում անգամ, բազմացուցանէ զյանցանս. այլ ոչ որ լուծանէ զծոմն բազում անգամ պահոց կերակրովք. զի որովհետև ստորասական է պատուիրանդ, ոչ պարտաւորէ մշտ ամշտ. և յետ միանգամ լուծանելոյն՝ ոչ պարտաւորէ այլ վասն այնր աւուր: Սակս որոյ պարտին խոստովանահարք ուսուցանել ապաշխարողաց զօրինակ բացատրութեան. իբր զի՝ որք ամբաստան լինին զանձանց վասն պակասելոյ 'ի ժամապահութեան, յորակութեան՞ արդեօք պակասեալ իցեն՝ եթէ 'ի քանակութեան. քանզի 'ի նախնեացն այնչափ մեղս գործեցին՝ որչափ անգամ 'ի միում աւուր կերան զարգելեալ կերակուրս. այլ ոչ այսպէս որք 'ի քանակութեան պակասեցան. քանզի յայնժամ զմի միայն մեղս գործէ նա՝ որ յաւուր ժամապահոց բազում անգամ ուտէ մեծաւ չափով զկերակուր քառասնորդական:

Մեծաւ չափով ասեմ. վասն զի պատուիրան ժամապահութեան ընդունի զփոքրկութիւն նիւթոյ 'ի քանակութեան. ապա որ ուտէ արտաքոյ Ճաշու կամ ընթրեաց իբր տրամս ութ կամ փոքր մի աւելի՝ ոչ լուծանէ զծոմն. միայն թէ կերիցէ զկերակուր պահոց: Իսկ թէ արդեօք մարթ իցէ լինել փոքրկութիւն նիւթոյ նաև յորակութեան կերակրոց՝ առանց խանգարելոյ

զծոմապահս 'ի բանի հրաժարելոյ 'ի մսեղենաց, տամք պատասխանի, թէ այո. և այս ը̄ կարծեաց գիտնականաց համարի լինել երբ ութերորդ մասն ունկեայ մսոյ կամ փոքր մի աւելի:

Իսկ դոյզն ճաշիկն երեկոյեան՝ որ 'ի սովորութէ մուծեալ եղև յեկեղեցին, ըստ հասարակ կարծեաց վդ̃պտաց պարտի լինել ոչ աւելի քան զչորիր մասն հասարակ ընթրեաց. Նմին իրի ոմանք յեօթն, և ոմանք յութ ունկիս տարածանեն:

Յաղագս պատուիրանի ծոմապահութե Աղեքսանդր Է. զբազում նախադասութիս դատապարտեաց. և նախ ըստ բացասական պատուիրանին զնախադասութին լԷ. զայն՝ թէ *Ո՛չ է յայտնի, թէ սովորութին ուտելոյ զկիթս և զկաթնեղէնս 'ի մեծ պահս իցէ պարտաւորիչ||:

Պատճառ դատապարտուե է. վասն զի անդստին 'ի ժամանակաց սբ̃յն գրիգորի պապին սովորութի էր 'ի մէջ եկեղեցւոյ 'ի քառասնորդական պահս հրաժարել ոչ միայն 'ի մսեղինաց, այլև 'ի կաթնեղինաց. վասն որոյ սբ̃ն այսպէս առնէ պատասխանի հարցմանցն օգոստինոսի եպսին անգղիոյ 4լ. Հասւոկ յեպոյ. ղան. ք. *Արժան է, զի որպէս յաւուրս յայսոսիկ հրաժարեմք 'ի մսոյ կենդանեաց, նոյնպէս հրաժարեսցուք և յամենայնէ՝ որ ձգէ յինքն զսերմնական զօրութի մսոյ. իմա՛ 'ի կաթանէ, 'ի պանրոյ, և 'ի ձուոյ||:

Ընդ հանրապէս թոյլ տուեալ է ուտել զձուկըն 'ի ժամանակի ծոմապահութե. վասն զի մի նոյն նուաղ ունի ոգի և ոյժ. և յարմար

իսկ է 'ի ճնշել զզգայական ցանկութիւնս, որ այնինքն է սեփական վախճան ամուսնութեան ։ Որևելեսյք ոմանք ասէին, թէ յաւուրս ծոմապահութեան օրէն է ուտել զմիս թռչնոց · այլ զարդիս խափանեալ է ամենայն վէճ այդպիսի ։

Իսկ այլ նախադասութիւնք դատապարտեալք հային առ ստորասական պատուիրանն · այն իսկ են · իզ · իթ · Լ · և լա · Որդ՝ իզ · այսպէս ունի · * Լուծիչն եկեղեցական պահոց՝ առ որ պարտաւորի ոք, ոչ մեղանչէ մահուչափ եթէ ոչ առ արհամարհութեան կամ անհնազանդութեան զայդ առնիցէ, իբր զի չկամի ներքոյ արկանել զանձն պատուիրանի ։ Պատճառ դատապարտութեան է · վասն զի (ընդհանրապէս խօսելով) կանոնական օրէնք՝ որ կարգեալ է 'ի փրկութիւն հոգւոյ, միշտ պարտաւորէ ընդ մահուչափ մեղօք, յորժամ պարունակէ զնիւթ ծանր յօգուտ հոգւոյ · թէպէտև ոչ 'ի մէջ բերցէ բանս պարունակիչս տեսական պատուիրանի, կամ ոչ դնիցէ զհոգևորական պատիժս ծանունս · իսկարդ այսպիսի է մերս դիպուած 'ի պատուիրանի եկեղեցական ծոմապահութեան · ապա ուրեմն որ ոք ստունգանող գտանիցի՝ թէպէտև առանց արհամարհանաց, և առանց տեսական անհնազանդութեան՝ գործէ զմահուչափ մեղս ։ Եւ ոչ իսկ պակասին կանոնք, յորս կան բանք յայտարարք տեսական պատուիրանի եկեղեցւոյ 'ի վերայ ծամապահութեան ։ Տես 'ի գլ · Ձէ · օրէն · յղ · Արբեագործ · ղան · 3 · գլ · պարտ է · անդ · գլ · Որաաանորդ · անդ · ղան · Է · Իսկ իթ · նախադասութիւն ունի այսպէս · * Յաւուր ծոմոյ որ ոք ստէպ ուտէ սակաւիկ ինչ, թէև

'ի վախճանի կերեւալն գտցի մեծաքանակ, ո՛չ լուծանել զծոմ‖: Պատճառ դատապարտութե՟ է՝ զի երբ արգելեալ լինի ինչ ընդ ծանր պատուիրանաւ, եթէ բանիւ փոքրկութե՟ նիւթոյն լինի ներելի և եթ մեղանչել ընդդէմ այնր պատուիրանի, յորժամ յաճախեն նիւթք գուդնաքեայք մինչև ցժամանել յարգելեալ նիւթ ծանր, լինի ծանունս մեղանչել. քանզի յայնժամ գործի հակառակ մտաց օրէնսդրին, որ արգել ընդ ծանր պատուիրանաւ զնիւթ ծանր. և չէ փոյթ թէ բոլորն միանգամայն լինիցի կամ առ փոքր փոքր: Յաղագս որոյ որ յաւուրս ծոմապահութե՟ ուտելով ընդ ժամս ժամս սակաւիկ ինչ՝ ժամանէ 'ի քանակութի՟ մեծ, մեղանչէ մահուչափ:

Դարձեալ ծանունս մեղանչէ և նա՝ որ յաւուրս ծոմապահութե՟ առնուցու յառաջնում նուագի նիւթ սակաւ, բայց դնելով 'ի մտի առ փոքր փոքր ժամանել մինչև ցնիւթ ծանր: 'Ի վերայ այսր բանի պարտին խոստովանահարք խուզարկել զապաշխարօղս. քանզի յայն դիպուած իւրաքանչիւր սակաւակերութի՟ք համարին 'ի մահուչափ մեղս սակս չար դիտաւորութե՟ն՝ զոր ոք ունէր աճեցուցանել մինչև ցնիւթ ծանր:

Խոկնախադասութի՟ն Է, ունի այսպէս. *Մ. մ վաստակաւորք՝ որք 'ի հասարակապետութեան աշխատին ըստ մարմնոյ, ազատ են 'ի պարտաւորութէ ծոմոյ. և չեն պարտական զննել առ 'ի ստուգել՝ թէ արդեօք աշխատուն իւրեանց իցէ՞ տանելի հանդերձ ծոմով‖: Պատճառ դատապարտութե՟ է՝ զի թէպէտ 'ի հասարակապետութե՟ են ինչ ինչ սպասահարկութի՟ք և

արուեստք տարժանաւորք, որ չեն տանելի ի ծոմապահութե. զորօրինակ՝ յորս պարապին երկրագործ, պարտիզպանք, դարբինք որմնադիրք եւն. բայց են եւ այլ բազում արուեստք՝ որք տանելիք են ի ծոմապահութե. որպէս յորս դեգերին վարսավիրայք, դերձակք, դրավաճառք, պատկերահանք եւն. վայ հաստատել արձակաբար, թէ ամենայն արուեստք ազատ են ՚ի ծոմապահութէ, եւ թէ չէ ոք պարտական հաւաստի առնել զիրսն, թէ արդեօք գործ կամ արուեստ իւր իցէ՞ տանելի ընդ ծոմապահութե կամ ո՛չ, է բանալ ընդարձակ ճանապարհ առ ՚ի չծոմապահել եւ ո՛չ ումեք. վասն զի այր իւրաքանչիւր կարէ կարծել, թէ գործ իւր կամ արուեստ անտանելի է ի ծոմապահութե, եւ չէ՛ պարտական ստուգել զճշմարտութիւն եւն:

Հուսկ յետոյ նախադասութիւն. ԼԹ. ունի այսպէս. *Ազատ միան ՚ի պարտաւորութէ ծոմոյ բացարձակապէս ամենեքին նոքա որք հեծեալ ուղեւորին, զիա՛րդ եւ ճանապարհ հատանիցեն. թէ եւ ճանապարհորդութիւն չիցէ հարկաւոր, եւ թէեւ ՚ի մի օր վճարեսցեն զճանապարհն||: Յայս բան երբեակ դրութիւնք բովանդակին. Ա՝ թէ ամենեքին նոքա որք գնան երիվարաւ կամ կառօք՝ ազատ են ՚ի ծոմապահութէ. Բ՝ թէ ուղեւորութիւն անբաժանի առնէ ՚ի ծոմապահութենէ, թէեւ չիցէ կարեւոր. Գ՝ թէպէտեւ իցէ միօրեայ ճանապարհ՝ եւ ՚ի ձի աշտանակելով: Պատճառ դատապարտութե է. վասն զի առ անպարտ լինել ՚ի ծոմապահութէ պիտի աշխատութեն անբերելի գոլ ընդ ծոմապահութեն. իսկ արդ՝ պարզապէս խօսելով՝ չէ՛ անբերելի ՚ի գնալն երիվարաւ կամ կառօք

զմիօրեայ ճանապարհ․ ապա չկարէ երբեք ան-պարտ առնել 'ի ծոմապահութէ ։

Այն և ուսուցիչք բարոյականի ․ յորոց սակի է Պոփանա, որք արգելուն զկիրառութի չիքօ-լաթի յաւուր ծոմապահութե․ վասն զի, ասեն, չիքօլաթն է սննդարար, և յագեցուցիչ ։ Բայց նա ինքն Պոփանա և կալտէրն հաւանական հա-մարին զհակառակ կարծիսն ։

Այն և որ սա 'ի խրատ այսպէս խօսին ։ Զկիրառութի չիքօլաթի ոչ արդարացուցանէ ոչ պարապումն յուսմունս, և ոչ նուաղումն ստամոքսի․ ապա թէ ոչ՝ զինչ գործէին յառաջ քան զ160․ ամ՝ մինչև էր չիքօլաթն 'ի միջի ։ Համեղաճաշակ է չիքօլաթն, միանգամայն և սննդարար որպէս ասացաւ ։

Նախկին քրիստոնեայք չըմպէին ինչ զօրն ողջոյն․ բայց ապա շնորհեցաւ 'ի ժամու՝ որ-պէս և վասն ծարաւոյ․ ուստի եղև իմաստա-սիրել, թէ հեղանիւթք ոչ լուծանեն զծոմ․ այլ զայս պարտ է իմանալ զընական հեղանիւ-թից, և ոչ զարուեստականաց․ քանզի և զգօ-ացուն իսկ հաւու պարարակի մարթ է յեղուլ 'ի հեղուկ․ ապա պարտ է իմանալ զհասարակ հեղանիւթից կարգելոց 'ի բնէ յորբումն և 'ի զովացումն ծարաւոյ, և ոչ եթէ զթանձրա-նիւթ իրաց կամիւ լուծելոց առ առաւել համե-ղութի ։ Եւ այն զի պարտաւորութի ծոմապա-հութե կարգեալ է 'ի մեռուցումն և 'ի ճնշումն ինչ ։ Նախնիք յայն աւուրս և ոչ իսկ 'ի բա-ղանիս մտանէին․ և հրաժեշտ տային յամենայն հեշտալեաց ։ Այլազգիք և պարսիկք զամիս մի ողջոյն ծոմապահեն խստիւ․ մինչ զի ոչ ջուր ըմպեն և ոչ ծխախոտ ծգեն մինչև 'ի մուտս

արեւու: Այնպէս սնջուր պահէն և օրինապահքն 'ի հրէայս:

Բանուլ զչիքօլաթ ըստ չափու ունկլոյ միոյ և կիսոյ լուծանէ զծոմն. որովհետեւ ամենեքին հաստատեն, թէ նոյնչափ հաստատուն կերակուր լուծանէ զծոմն. ապա զիա՞րդ ո՛չ լուծանիցէ թանձրացեալ հեղուկն առ առաւելուլ զհամեղութիւն. վասն զի լուծանելն յայն թանձրութիւն՝ չկորուսանէ ինչ 'ի նմանէ. և եթէ այսպէս և եթէ այնպէս՝ բոլորն ճաշակեալ լինի:

'Ի ծոմապահութեան գոյ թեթեւութիւն նիւթոյ. և թէպէտ 'ի նիւթ չիքօլաթի անմիաբան են ուսուցիչք բարոյականի 'ի վերայ քանակի, այլ սակայն բազումք վարկանին թէ երկու ունկիք չիքօլաթի մարթին գրիլ 'ի թեթեւութիւն նիւթոյ. որպէս է տեսանել առ տուրիան 'ի համառօտութիւն թժ''. Հ. 1. Գլ. ՃԺԷ. պար. 27. ՀՏ. 2. առ Մորտենսոնի ՄԵ յոհնեթեան. Բարոյակ. և առայլս: Բայց ոչ ոք ժխտէ՝ թէ մի ունկին չհամարիցի նիւթ սակաւ, որոյ ումպն ո՛չ լուծանէ զծոմ: Զայսպիսի թեթեւութիւն նիւթոյ ընդունի և կարդինալ բրանկակի. 'ի հրահանգս. Երես. 20. Բայց այս անհաճոյ եղև որկորամոլաց: Այն իրի յորժամ չիքօլաթն չլինէր մեծ սկահակաւ՝ սովոր էին ասել ընդ կատակս, չիքօլաթ կարդինալ բրանկակեայ: Հաւասիկ՝ զոր մարթ է ասել վասն չիքօլաթի, եթէ լուծանիցէ՞ արդեօք զծոմն: Պահողագոյնն 'ի կարծիս այն է՝ չառնուլ 'ի կեր. և արդարև որ միանգամ զայն 'ի կեր առնու առ 'ի չզգալ զնեղութիւն ծոմապահութեան, լուծանելով լուծանէ զծոմն:

Յուշ լիցի և վասն պարու ( որ և կաքաւ ) , զի այսպէս ստորագրի այն 'ի Նըց : * Պարն է շրջանակ , որոյ կեդրոնն է սատանայ . ապա ինքն կայ 'ի մէջի անդ նորա , և 'ի շրջապատն՝ հրեշտակք նորուն ||. միայն թէ չէ՛ մարթ զայդ սահման մերձեցուցանել յամենայն տեսակս կաքաւուց . ապա թէ ոչ՝ մեծ չար գործեալ էին և Նըք 'ի պարել իւրեանց : Ապաուրեմն 'ի դէպ գայ մեղսաշաղախ պարուց , զոր առ ժամանակօք Նըյն կարոլոսի 'ի գաւառի իւրում 'ի կիր առնուին . սորին վասն ամենայն իրաւամբք տաղտկալի զայն համարեցաւ Նըն : Առ կաքաւ ազնուական և համեստ չէ՛ 'ի դէպ յարմարել զայդ սահման . իբր զի 'ի գործ դնի իբր սովորութի ինչ քաղաքավարական , որպէս յայտ է ամենեցուն . ուստի և ոչինչ մեղս բերէ ընդ իւր :

Բայց սակայն պարտ է խոստովանահօրն խուզարկու լինել զգուշութբ , մինչ ապաշխարօղն ամբաստան լիցի զանձնէ վասն պարելոյն . զորօրինակ՝ արդեօք հրապարակակա՞ն կաքաւք լեալ իցեն 'ի հանդիսաւոր տօնս . քանզի արգելեալ է 'ի բենեդիկտոսէ ԺԴ. հապ. 1 . սահմ. Կ. որոյ սկիզբն է՝ Ապաքէն ոչինչ. յօդ. 4 : Արդեօք կաքաւեա՞լ իցեն զկնի կէս գիշերոյ 'ի վերջին աւուր բարեկենդանի . քանզի կաքաւն յետ մտից քառասնորդական պահոց արգելեալ է 'ի նմին բարեյիշատակ քահանայապետէ ընդ ամենայն տեղիս եկեղեցական իշխանութե սահման". ԺԵ. որ սկսանի . 'Ի մէջ այլ իրաց : Այլ իցէ՞ թէ պահէին ամենեքին , և ընդ ամենայն տեղիս : Մարթ է առնել և այլ ինչ ինչ քննութիւ , զոր նախանձայուզութին և փորձառութին թելա-

դրէ։ Զիրաւի անմարթ է ժխտել՝ թէ կաքաւն ինքնին մտածեալ՝ չէ ինչ ապօրինաւոր. բայց յապականեալ դարուս յայսմիկ ուր ուրեմն արժան է ներել։ Իսկ կարի իսկ քաջ զի ո՛ ոք կարէ ուրանալ՝ թէ չիցէ 'ի նմա գէթ առիթ մեղանչելոյ։ Փորձառութիւն, որ քաջ ուսուցիչ է ամենայն իրաց՝ յայտ առնէ զճշմարտութիւն ասացելոյս։

Ասուի թէ այս իցէ հիմն հաստատուն, յոյր սակս ուսուցիչք բարոյականի ջգնին ցուցանել թէ այսչափ և այսքան վտանգաւոր է կաքաւն։ Իսկ առաւել ակնդէն՝ թէ չէ հնար կղերիկոսաց կաքաւել առանց մեղաց. որպէս սահմանեաց բենեդ. ժդ. յեկեղեցական սահմանադրութիւն իւր հզ. յօդ. 7։ Իսկ ո՞չ է տեսանել, թէ նոյնպէս պարտ է իմանալ և զխաղս պարուց արանց և կանանց՝ ընդ նախագրելոյ։ Ըստ մեծագոյն հաստատութիւն մեծապատիւ հայրն մանսի յայտ առնէ՝ թէ զդոյնպիսի կաքաւս չէ օրէն թողացուցանել յակումբս եկեղեցականս, կանոնիկոսականս, և ժողովրդապետականս. թէպէտև իցէ պարն 'ի մէջ ազգականաց անդամոր բնակելոյ։ Այս վճիռ սորբազան ժողովոյ՝ յառաջ բերեալ 'ի սահման. եկեղ. հզ. յօդ. 8։ Զասացելոյս առ հասարակ ունի դատաստան առնել խոհական և երկիւղած խոստովանահայրն։

## Յաղագս մեղաց, որ ընդդէմ ողջախոհութեան :

Սեփհական է ողջախոհութեան 'ի չափու ունել զներգործութիւս հեշտ ցանկութեան ըստ ուղիղ բանի, սակս որոյ ոչ արգելու՝ այլ բարեկարգէ վարիլ ըստ բանին : Աստանօր ընդդէյն թուլմայի արժան է զանազանել զողջախոհութիւն յամօթխածութենէ : Ընդդէմ ամօթխածութեան են գործք անլրացեալք. զորօրինակ՝ շօշափմունք. համբոյրք. յայրատ հայեցուածք. կամաւոր շարժմունք զգայականութեան : Իսկ ընդդէմ ողջախոհութեան են գործք լրացեալ. որ են եօթնազգի. այս :

Պարզ պոռնկութիւն : Շնութիւն : Կուսապղծութիւն : Ազգապղծութիւն՝ կամ մծղնէութիւն. Առեւանգութիւն, կին հափափումն. Սրբապղծութիւն, կամ սեղանակապտութիւն : Եւ մեղք ընդդէմ բնութեան. յետինս այս ունի ընդ իւրեւ զերիս տորլին տեսակս. այսինքն՝ պարզ գիջութիւն. արուագիտութիւն, կամ սոդոմականութիւն, և անասնագիտութիւն : Այլք յաւելուն և զդիւագիտութիւն. այսինքն՝ միաւորութիւն ընդ քաջի. այն է՝ միաւորիլ ընդ դիւի կերպարանելոյ յայր կամ 'ի կին. ուր այլք վերածեն զայդ յանասնագիտութիւն :

Ողջախոհութեան հակառակ յառնեն կրկին մոլութիւք. մի՝ ըստ նուազութեան : և միւս ևս՝ ըստ առաւելազանցութեան : Առաջինն կոչի անզգայութիւն. այն իսկ է՝ յորժամ ոք առ խորշելոյ 'ի բնէ յերեսաց ամուսնական մերձաւորութեան ժխտեսցէ

զպարտս կնոջ՝ զոր նա օրինաւորապէս պահան-
ջէ ։ Իսկ առաւելագոյնն է բղջախոհութիւն.
որ է անկարգ ցանկութիւն հեշտախտութեան. և
բովանդակէ յինքն զնախայիշատակեալ զեօթա-
նեսին մոլութիւնս լռացեալս, որք և զանլրա-
ցեալ գործս զհակառակս ամօթխածութեան ։

Որդ՝ առաջինն՝ որ է պարզ պոռնկութիւն է
վաւաշ գործ լռացեալ ընդ մէջ ազատ առն, և ա-
զատ կնոջ. այսինքն՝ որ ոչն է ամուսնացեալ.
ոչ աղջիկն. ոչ ազգական. և ոչ կապեալ ուխ-
տիւ ։ Այս՝ է մեղք միշտ մահուչափ. վասն զի
՚ի ներքուստ է չար. և արգելեալ յօրինաց
բնութեան. ըստ որում հակառակ գտանի երկրոր-
դական վախճանի ծննդեան, որ է սնուցանել
զմանկունս ։ Վասն այսորիկ Իննովկ. ժա.
դատապարտեաց զնախադասութին. խը. * Այն-
չափ յայտնի երևի՝ թէ պոռնկութին ըստ ին-
քեան ոչինչ չարութի փակէ յինքեան, և միայն
վասն այն է չար՝ վասն զի է արգելեալ, մինչ
զի զհակառակն ասել՝ ամենայնիւ անմիաբան
երևի ընդ բանի ‖ ։ Նաև որ մեղաւ պարզ պոռն-
կութբ՝ չէ բաւական նմա ասել. թէ գոր-
ծեցի զծանր մեղս ընդդէմ ողջախոհութեան՝
առանց յայտնելոյ զմիաւորութին. որովհետև
ներհակ դրութին դատապարտեալ է յԱղեք-
սանդրէ Է. նախադասութի խե ։ * Շաղեալն
ընդ ազատ կնոջ՝ լնու զպատուիրան խոստովա-
նութե՝ ասելով. գործեցի ընդ ազատ կնոջ
ծանր մեղս ընդդէմ ողջախոհութե. առանց
բացատրելոյ զշաղումն ‖ ։ Պատճառ դատապար-
տութե է. վասն զի պարտական եմք խոստո-
վանել զմեղս ըստ ստորին տեսակի իւրում. որդ՝
լռացեալ գործ զուգաւորութե է տեսակաւ

տարբեր յանլրացեալ գործոյ. որպէս յայտ առնէ սրբն Թովմաս. Ե. Ե. խն. ՀԵ. յօդ. 7։ Ապա որ անկեալ իցէ ընդ կնոջ՝ չէ՛ բաւական խոստովանիլ, թէ արարեալ իցէ զծանր մեղս ընդդէմ ողջախոհութեան՝ առանց յայտնի առնելոյ զզուգաւորութիւն։

Շնութիւն է մերձաւորութիւն լրացեալ ընդ անձին ամուսնացելոյ, կամ յանձնէ լծակցելոյ. վասն որոյ լինի և ընդդէմ ողջախոհութեան, և ընդդէմ արդարութեան. քանզի ըստ առաջնոյն՝ [illegible] իրաւունք առն. իսկ ըստ երկրորդին [illegible] իրաւունք կնոջ. ապա եթէ երկոքին իսկ ամուսնացեալք իցեն՝ կրկին լինի շնութիւն. վասն զի նովին իսկ գործով լինի անիրաւել առ կրկին անձինս, միոյն՝ առ կին արարողին, և միւսոյն առ այրն կրողին։ Ուստի չէ՛ բաւական ասելն 'ի խոստովանութեան, գործեցի զշնութիւն առանց յայտնելոյ և զկրկնակ շնութիւն։ Նաև ո՛չ իսկ առ 'ի ազատ կացուցանել զշնացեալ այրն կամ զշնացեալ կինն 'ի մեղաց շնութեան՝ բաւական գտանի հաւանութիւն հարազատ առնն. որովհետև Իննովկ". ԺԱ. դատապարտեաց զնախադասութիւն Ծ. * Ընկումն ընդ արամբի կնոջ՝ հաւանութեամբ առն նորա, ո՛չ է շնութիւն. ուստի և բաւական է ասել 'ի խոստովանութեան, շնացայ ||։ Պատճառ դատապարտութեան է. վասն զի այրն չունի 'ի վերայ կնոջ իւրոյ զայն իրաւունս, զոր ունի 'ի վերայ ընչից տան իւրոյ. մինչև կարող լինել 'ի կիր առնուլ ինքն՝ և տալ զայն 'ի կիրառութիւն այլում. այլ այնպիսի ունի իրաւունս 'ի վերայ կնոջ իւրոյ՝ որպիսի ունի 'ի վերայ անդամոց մարմնոյ իւրոյ. իբր զի կարող է զսոսա 'ի գործ արկանել, այլ ո՛չ մատ-

նել այլոց առ 'ի հատանել. զոր օրինակ և կրօնաւորն ունի զկիրառութիւն բարեաց մենաստանին, այլ ոչ կարէ մատակարարել 'ի կիրառութիւն այլոց: Ուստի որպէս չկարէ ոք հրաման տալ այլում հատանել զբազուկ իւր, զոր ինքն կարող է վարել ինքնիշխանութեամբ 'ի պէտս իւր. Այնօրինակ չէ հնար առն հրաման տալ կամ հաւան գտանիլ ամուսնոյն զուգիլ ընդ այլում. զի թէպէտև ինքն ունի զկիրառութիւն նորա, այլ առանց կարող լինելոյ փոխանցել զայն յայլ. յոր սակս եղիցի միշտ շնութիւն: Եւ որ անկցի ընդ օրինորդի խօսեցելոյ՝ մեղանչէ այնպիսի մեղօք՝ որ վերածի 'ի շնութիւն սակս անիրաւութեան զոր առնէ փեսային: Եւ այս մեղք որիշ է տեսակաւ 'ի մերձաւորութենէ ընդ հարսնացելոյն: Անմարթ է և ամուսնացելոց առնել զմերձաւորութիւն վասն լոկ և գլխաւոր փոխձանի հեշտութեան. որպէսև Ինոկենտ. Ժա. դատապարտեաց զնախադասութիւն. իթ. *Մերձաւորութիւն ամուսնոյ ընդ ամուսնոյ յաղագս հեշտութեան և եթ՝ ազատ է յամենայն յանցաւորութենէ, և 'ի ներելի իսկ պակասութենէ‖: Ուստի լինի մեղք ներելի գալն 'ի մերձաւորութիւն ամուսնական վասն մարմնական հեշտութեան և եթ. և պատճառն է. զի յոչինչ բնական գործս մարթ է մեզ ուշ ունել սկզբնաբար և սոսկապէս վասն հեշտութեան ըստ ինքեան. այլ պարտիմք դիտել 'ի վախճանն՝ յոր կարգեալ է 'ի բնութենէ. Տես զԹովմաս ա. բ. խբ. յօդ. գ. 'ի հարց. վասն որոյ նա ինքն որէն 'ի հրման. խն. դ. գլ. ծէ. ասէ վասն առաջիկայ իրացս: *Երկու եղանակաւ միայն ամուսինք առանց ամենայն մեղաց գան առ միմեանս. այս-

ինքն 'ի պատճառս որդեծնութեան, և հաստա-
տանելոյ զպարտս. ապա թէ ոչ՝ մեղք լինի անդ՝
գէթ ներելի ||:

Ըստ վաղնջուց ինչ օրինաց՝ կարող էր այրն սպանանել զկինն ըմբռնեալ 'ի շնութեան: Նմանապէս և հայրն ունէր զիշխանութիւն, սպանանելոյ զդուստրն իւր ըմբռնեալ 'ի շնութեան, ցորչափ էր ընդ իշխանութեամբ իւրով. միայն թէ սպանցէ ընդ նմա և զշնացողն. բայց այդպիսի օրէնք խափանեցան 'ի կանոնական իրաւանց: Նոր. Օրէնս. է. դատապարտեաց զնախադ. ժթ. * Ոչ մեղանչէ այրն, որ ինքնագլխաբար սպանանէ զկին իւր ըմբռնեալ 'ի շնութեան ||:

Նորոգամտութեամբ առ մարդկային տկարութիւն, և առ յեղակարծ բարկութիւն ընդ այնպիսի անբերելի նախատինս. Օրէնս. դ. սահմանեաց 'ի Գլ. Լուք. ԵՐԷ. յղ. ՂՃա. Բանապր. զի ոչ անկցի ընդ նզովիւք՝ որ պապին վերապահեալ, * այն՝ որ ձեռն ամբարձցէ 'ի կղերիկոս դտեալ 'ի գործս անարժանութեան՝ ընդ իւրում կնոջ, կամ մօր, կամ քեռ, կամ դստեր ||:

Հարձն թողացուցեալ երբեմն 'ի քաղաքական օրինաց՝ էր ճշմարիտ ամուսին, բայց առեալ առանց վարձանաց, և առանց մեծահանդէս հարսանեաց. որպէս քաղի 'ի ՃԻԴ. յղ. Բանի. Նշանակ. ՀԷ. յղ. Օծութց. վասն որոյ հարձն զանազանէր յօրինաւոր կնոջէն արժանապատուութեամբ միայն զի թէպէտև հարձն էր ճշմարիտ ամուսին, այլ ոչ մտանէր յազգատոհմ առն. ոչ և ոչ լինէր բաժանորդ իրաւանց, արտունութեան, և պատուոյ նորա: Այլին մտօք ոչ նահապետք հին օրինաց, որոց թոյլ տուեալ էր բազմակնութեան, բաց 'ի կանանց ունէին և զհարճս,

իբրու կանայս յայլում կարգի․ իբր զի առնուլն զնոսա ՚ի պէտս որդեծնութեան․ և ոչ ՚ի պէտս տնտեսութեան տանն և ընչից։ Ուստի․ Ծննդ․ ՚ի Գլ․ ԻԵ․ քետուրա կոչի անխտիր հարճ և կին աբրահամու։ Իսկ ագար ՚ի Գլ․ ԺԶ․ նոյնպէս կոչի հարճ, միանգամայն և կին։

Կուսապղծութիւն՝ է ապականութիւն կոյս օրիորդի․ և է մեղք ծանր ընդդէմ ողջախոհութեան և արդարութեան։ Ընդդէմ արդարութեան զի լինի անիրաւութիւն առ ծնօղս, կամ առ խնամակալս նորա․ նմին իրի թէև աղջիկն հաւան գտցի, տակաւին լինի կուսապղծութիւն․ և մեղք ընդդէմ ողջախոհութեան և արդարութեան․ տի՛նա՝ թէև ծնօղք կամ խնամակալք անգամ հաւան լեալ իցեն, տակաւին լինի կուսապղծութիւն մեղք ընդդէմ արդարութեան․ վասն զի ծնօղք կամ խնամակալք չունին իշխանութիւն՝ տալոյ հաւանութիւն այդմ բանի։ Այն զի ոմանք ՚ի վարդապետաց հաստատեն, թէ թէպէտ և իցէ օրիորդ ոք ինքնագլուխ՝ որ չիցէ ընդ խնամօք ծնողաց, կամ հոգաբարձուաց․ և ինքնակամ տեղի տայցէ այդմ ապականութեան՝ լինի այն մեղք ընդդէմ արդարութեան․ վասն զի կոյսն չէ տէր կուսութեան իւրում․ որպէս չէ տէր կենաց անձին իւրոյ․ ապա զօրօրինակ մեղանչէր ընդդէմ արդարութեան՝ եթէ բառնայր զկեանս իւր, նոյնպէս մեղանչէ ընդդէմ արդարութեան և ընդդէմ ողջախոհութեան հաճելով ընդ ապականութիւն իւր։ Զնոյն մեղս, կամ լաւ ևս աւել զկրկին մեղս գործէ՝ որ բռնաբարէ զկոյսն․ թէպէտև նա համախոհ գտցի․ և չիցէ իսկ ընդ ձեռամբ ծնողաց կամ խնամակալաց․ այսինքն՝ ընդդէմ արդարութեան և

ընդդէմ ողջախոհութեան՝ վասն վերոյիշատակեալ պատճառաց ։ Հաւաստի է և այն , զի կուսապղծութիւն է ոչ միայն գործեալն յառաջնում նուազի ննջելոյ ուրուք ընդ կուսի , որ իցէ ընդ խնամօք ծնողաց կամ հոգաբարձուաց , այլ և յամենայն նուազի յորում ոք անկանի ընդ կնոջ կոյս կարծեցելոյ , և համարելոյ ընդ խնամօք ծնողաց կամ խնամատարաց ։ ՚Ի թեմի աստ մերում կուսապղծութիւն է դիպուած վերապահեալ , որպէս է տեսանել ՚ի Թիւ . 8 ։

Որ մոլորեցուցանէ զկոյսն և տառապեցուցանէ՝ պարտական է առնուլ զնա իւր կնութեան , և հատուցումն առնել հօր նորա . ըստ այնմ . ելից . ԻԲ . 16 . *Իսկ եթէ ոք խաբեսցէ զկոյս զոչ խօսեցեալ և ննջեսցէ ընդ նմա , վարձանօք վարձեսցէ զնա իւր կնութեան ։ Իսկ եթէ ոչ առնուցու յանձն հայր նորա տալ զնա նմա կնութեան՝ տուժեսցէ արծաթ հօր նորա որպէս իցեն վարձանք կուսից ‖ ։ Որպէս և ՚ի գիրս երկրորդ օրինաց , ԻԲ . 29 . ՚ի վերայ բերէ . *Տացէ հօր աղջկանն յիսուն սիկղ արծաթոյ ‖ ։ տես ՚ի բովանդակութեան նոյն գիտնեսիոսի կարթուսեան ։

Ազգապղծութիւն է խառնակութիւն լրացեալ ընդ ազգականս , կամ ընդ խնամիս ։

Ազգականութիւնն կամ է բնական , կամ հոգևոր , և կամ օրինական ։ Բնական կամ մարմնական ազգականութիւն ծնանի յիջանելոյ ՚ի միոյ արմատոյ սերնդեան ուղիղ կամ կողմնական գծիւ ։ Ուղիղ գծի են հայր , մայր , հաւ , հանի և այլն ։ ՚Ի կողմնական գծի են եղբայր , քոյր , ուստերք , և դստերք ։ Հոգևոր ազգականութիւն յառաջ գայ ՚ի գոլոյ կնքահայր , կամ կնքամայր ՚ի մկրտութեան , կամ ՚ի դրոշմի , որ-

պէս և 'ի մկրտելոյ, կամ 'ի դրոշմելոյ: Օրինական ազգականութիւն յառաջ գայ յորդեգրելոյ զորս՝ կամ զեգ: Արդ՝ որ ննջիցէ ընդ անձին շաղկապելոյ ընդ ինքեան բնական, կամ հոգևոր, և կամ օրինական ազգականութեան յաստիճանս քակտիչս պսակի՝ գործէ զմեղս ազգապղծութեան:

Խնդրի թէ արդեօք լեա՞լ իցէ հոգևոր ազգականութիւն յայս դիպուած. եթէ զի պետրոս և աննա ամուսինք ընտրեցին վասն որդւոց իւրեանց 'ի կնքահայր և 'ի կնքամայր զսիմոն և զսուսա: Իսկ սիմոնն աղաչէ զպետրոս ընտրել զշուշանն 'ի կնքամայր: Այլ պետրոս պատասխանէ, զայդ չկարեմ առնել առանց անիրաւելոյ: Այս առ 'ի բառնալ զխիղճն պետրոս թողու 'ի կամս ծխատիրին գլխովին. միանգամայն յայտ առնելով նմա թէ ինքն ոչ իւիք մարթի ընտրել զշուշանն. բայց քահանայն խորհուրդ տայ նմա ընտրել զերկոսին իսկ, և խոստանայ նմա թէ շուշանն ոչ կալցի զերեխայն. յայնժամ պետրոսն ընտրէ և զշուշանն. այլ նա արտաքոյ մտաց պետրոսի և խոստման քահանային եղելոյ առ պետրոսն՝ 'ի ժամու անդ մկրտութեան բարձեալ ունի զերեխայն: Արդ՝ խնդրի ասեմ, թէ լեա՞լ իցէ սմա հոգևոր ազգականութիւն: Պատասխանի. սրբազան ժողովն սեւնհոգոսաց յագուլինեանն. 1631. 'ի մարտի 10. վճռեաց թէ նաև ընդ շուշանին եղև հոգևոր ազգականութիւն. վասն զի ընտրեցաւ:

Խնամութիւն է ազգակցութիւն ինչ անձնական յառաջ եկեալ 'ի մարմնական զուգաւորութենէ, որ իցէ կամ օրինաւոր և կամ ապօրինաւոր: Օրինաւորն [illegible] մինչև չորրորդ աստի.

ճան ։ Իսկ ապօրինաւորն մինչեւ ցերկրորդ աստիճան ։ Վասն որոյ որ միանգամ մտանէ առ անձն մերձաւոր իւր ըստ խնամութեան օրինաւորի կամ ապօրինաւորի յաստիճանս չորրորդի պսակին՝ միօրինակ գործէ մեզ ազգապղծութիւն ։ Այս մեղք լինի ընդդէմ ողջախոհութեան եւ ընդդէմ գթութեան միանգամայն. որ ուսուցանէ պատուել զմերձաւորս մեր ՚ի ձեռն խնամութեան, կամ արենակցութեան, կամ ազգակցութեան. արդ չէ հնար առնել նոցա զայլ մեծագոյն անպատուութիւն՝ քան մերձենալ առ նոսա արտաքոյ օրինաւոր պսակի ։ Ազգապղծութիւն ՚ի թեմի աստ մերում վերապահեալ է. որպէս նշանակի ՚ի Բխ. 7 ։

Առեւանգութիւն, կամ հափշտակումն է յափշտակել զկին ոք ընդդէմ կամաց նորա, եւ ծնողացն կամ հոգաբարձուաց, որոց ընդ ձեռամբ պահեալ կայ, առ ՚ի շաղել ընդ նմա ։ Այս մեղք է ընդդէմ ողջախոհութեան եւ արդարութեան՝ վասն անիրաւութեանն եղելոյ առ կինն յափշտակեալ ։

Բայց ՚ի կրկին յանցանացս՝ յափշտակողն անկանի նաեւ ընդ նզովիւք նոյն իսկ գործովն ։ ժողովն տրիդ. ՚ի նիստ. ԻԴ. գլ. Դ. յղ. բարեկարգութեան պսակի ։ ՚Ի նոյն նզովս անկանի եւ նա՝ որ լինի ձեռնտու, խրատտու, կամ մասնաւոր առեւանգութեան ։ Իսկ որ արար զհափշտակումն ՚ի [illegible], թէեւ ոչ կատարեցէ զայն, տակաւին անկանի ընդ նզովիւք. որպէս բացածանոյց սրբազան ժողովն սիւնհոդոսաց ։ Իսկ եթէ ոք յափշտակիցէ զկոյս ոք, կամ զկին ամուսնացեալ, կամ զհաւատաւոր եւ այլն, բաց ՚ի մեղաց՝ որ ընդդէմ ողջախոհութեան եւ

արդարութեան սակս առևանգութեան, մեղանչէ և ևս մեղօք կուսապղծութեան կամ շնութեան, և կամ որբապղծութեան ընդ հանգամանաց յափշտակեալ կնոջ։

Որբապղծութիւն կամ սեղանակապտութիւն է նենգել ընդ անձին՝ որ ուխտեալ իցէ զուխտ ողջախոհութեան՝ եթէ հանդիսական, և եթէ պարզ. զոր 'ի խոստովանութեան պարտ է բացատրել. զնոյն պարտ է ասել՝ եթէ և ինքն գործողն անգամ իցէ ուխտեալ։ Այս մեղք է ընդդէմ ողջախոհութեան և ընդդէմ կրօնի բանիւ ուխտին։ Սեղանակապտութիւն է նաև մերձենալ 'ի կին 'ի նր. տեղիս. Թէպէտև ոք մերձեսցի առ կին իւր՝ բայց առանց հարկի։

Մեղքն ընդդէմ բնութեան՝ որպէս ունի ընդ իւրև զերիս ստորին տեսակս. այսինքն զպարզ գիջութիւն, զարուագիտութիւն, և զանասնագիտութիւն. յոր վերածի և շաղումն ընդ գիւի երևելոյ 'ի կերպարանս առն կամ կնոջ. յոր սակս Աղեքսանդր է. դատապարտեաց զնախադ". իմ. * Գիջութիւն, արուագիտութիւն, և անասնագիտութիւն են մեղք 'ի նմին ստորին տեսակի. վասն որոյ բաւական է ասելն 'ի խոստովանութեան, թէ պղծութի գործեցի‖։ Իսկ պատճառ դատապարտութեան է. վասն զի երեքին յիշատակեալ մեղքդ ունին զզանազան տգեղութիւս ընդդէմ ուղիղ բանի. իբր զի 'ի պարզ գիջութեան պակասի զուգաւորութիւն. որ վասն կարգեալ է սերմն 'ի բնութեան. յարուագիտութեան պակասի կարևոր սեռ զուգաւորութեան, որ պարտի լինել ընդ արու և ընդ էգ. և յանասնագիտութեան պակասի կարևոր տեսակ։ Վասն զի զուգաւորութիւն պարտի լինել ընդ

արու և ընդ էգ 'ի նմին տեսակի. վասն որոյ են մեղք զանազանեալք 'ի ստորին տեսակի. Տե՛ս Թովմ. Ե. Ե. խն. ձծդ. պր. ծԵ. առ. 4:

Կարգ գիջութիւն կամ պղծութիւն է մեղք ծանր յոյժ, կարի յանձախեալ, և յոյժ դժուարին առ 'ի բառնալ յունակացեալ անձնէ. և ոչ իսկ մարթի լինել յաղթելի տգիտութիւն զչարութենէ նորա. քանզի բանն ինքնին յուշ առնէ՝ թէ է գործ անարժան և գարշ. իբր զի է վատնումն այնր բանի, որ կարգեալ է առ ծնունդ մարդոյ. որպէս նշանակէ հայրն Վիվա 'ի խմ. Նախադասութ, զոր դատապարտեաց Իննովկ. ժա. զայն թէ *Գիջութիւն ոչ է արգելեալ յիրաւանց բնութե. մինչ զի եթէ չէր յԱյ արգելեալ զայն, բնմ այն էր՝ զի բարի լինէր, և երբեմն պարտաւորիչ գլխովին ը մահուչափ մեղօք ||: Պատճառ դատապարտութե քաղի 'ի նըյն Թովմայէ խն. ծե. յզ. չորր. յօդ. 1. ուր գեղեցիկ ասէ թէ ամենայն գործք անկարգ ասին՝ յորժամ չեն համեմատ պարտուպատշաճ վախճանի. որպէս ուտելն լինի անկարգ՝ եթէ չիցէ օգտակար առողջութե մարմնոյ՝ առ որ կարգեալ է իբրև առ իւր վախճան. և զի ծննդական մասունք կարգեալ են առ ծնունդ. վասն որոյ ամենայն կիրառութի նոցին լինի անկարգ, յորժամ 'ի բաց տանին զվախճան ծննդագործութե. ուստի զհետ գայ թէ գիճութիւն արգելեալ է յիրաւանց բնութե:

Սոդոմականութիւն կամ արուագիտութիւն յատկապէս է խառնակութիւն արուի ընդ արուի: Յատկապէս ասեմ. զի անյատուկ կամ անկատար սոդոմականութի է զուգաւորութիւն արուի ընդ էգի 'ի տարապայման անօթ. կին կնոջ ը կնոջ

եթէ 'ի բնական և եթէ յանբնական անօթ ։ Պարտի ապաշխարողն մեկն ասել, թէ ինքն եղև արարող, կամ կրող ։ Որպէս և յորժամ պղծութիւն լինիցի յայս ինչ կամ յայն ինչ մասին արուի . ուր թէպէտև չիցէ կատարեալ սոդոմականութիւն, բայց սակայն է մեղք տեսակաւ տարբեր 'ի պարզ գիճութենէ՝ զոր գործէ ոք ինքնին ։ Ապա եթէ սոդոմականութիւն գործեսցի 'ի մէջ երկուց արենակցաց, լինի մեղք ազգապղծութեան . այսինքն՝ ընդդէմ ողջախոհութեան, և ընդդէմ գթութեան ։ Իսկ եթէ այրն գործեսցէ զսոդոմականութիւն ընդ կնոջ իւրում, մեղանչէ մեղօք շնութեան . քանզի զեղծանի նովաւ ընդդէմ հաւատարմութեան և վախճանի ամուսնութեան . և չէ բաւական ասել 'ի խոստովանութեան՝ թէ ամուսնացեալ իցէ, և արարեալ իցէ զսոդոմական շաղումն . այլ պարտի յայտնաբանել՝ թէ էր իւր ամուսին, զի յոչ պարզել անդ թէ իցէ իւր ամուսին՝ տայ իմանալ և եթ, թէ անիրաւեալ իցէ առ կին իւր . և պակասեալ 'ի հաւատարմութենէ՝ որ առ նա . իսկ այդ է գլխաւորին տարբեր 'ի մերս դիպուածոյ ։ Վասն որոյ մեղք այսպիսի՝ լինի ընդդէմ ողջախոհութեան և ընդդէմ արդարութեան վասն անիրաւութեան՝ զոր անիրաւէ առ կին իւր զեղծանելով նովաւ ։ 'Ի թեմի աստ մերում սոդոմականութիւն է վերապահեալ 'ի թիւ 7 . ուր ամփոփի և անկատար սոդոմականութիւն . և միօրինակ փակին արարողն և կրողն ։

'Ի վախճանի անասնագիտութիւն * Է մարմնաւոր շաղաշարութիւն ընդ այլում՝ որ է յօտար տեսակէ . զորօրինակ ընդ անասնոյ, կամ ընդ դիւի ‖ ։ Որդ՝ պարտ է մեկն ասել՝ 'ի խոստո-

վանութ՟ն , թէ շաղումն լեալ իցէ ընդ արու կամ ընդ էգ անասնոյ , յանօթ բնական կամ անբնական . քանզի յայսմ մասին են այլ և այլ անկարգութիք , զորս պէտք են ծանուցանել : Իսկ 'ի մերձաւորութ՟ն ընդ դիւի բաց 'ի մեղաց որ ընդդէմ ողջախոհութ՟ն՝ կայ և մեղք սնոտիապաշտութ՟ն . ուստի լինի անկանիլ 'ի յետին կասկածանս հերետիկոսութ՟ն . Երբ չէ մարթ լինել առաւելագոյն հաղորդակցութ՟ն ընդ նմա՝ քան այսպիսի մերձաւորութ՟ք : Ուր 'ի միտ առ , զի թէ դեւն կերպարանեալ յայր կամ 'ի կին՝ իցէ 'ի կերպարանս ամուսնացելոյ կամ հաւատաւորի , կամ կուսի , ա՟պ նմին և խառնակութ՟ին այն բերէ յինքեան զչարութ՟ի շնութ՟ն , կի՟ն սրբապղծութ՟ն , կամ կուսապղծութ՟ն : Արդ՝ 'ի թեմի աստ մերում քանզի միօրինակ վերապահեալ է եթէ անասնագիտութ՟ին՝ և եթէ սնոտիապաշտութ՟ին , վասն որոյ չկարէ քահանայն արձակել առանց մասնաւոր իշխանութ՟ն եպիսկոպոսի :

Արդ՝ տեսցուք և զմեղս դիմամարտս ամօթխածութեան , որ են անլրացեալ գործք ընդդէմ ողջախոհութեան : Յայսմ մասին Աղեքսանդր է . դատապարտեաց զնախադասութ՟ին խ . զայն թէ * Հաւանական է կարծիքն՝ որ ասէ , թէ ներելի միայն է համբոյրն տուեալ վասն մարմնաւոր և զգայական հեշտութ՟ն՝ որ 'ի համբուրից անտի ծագի . միայն թէ չկայցէ վտանգ աւելի հաւանութ՟ն և գիջութ՟ն : և այլն :

Առ 'ի քաջ իմանալ զդատապարտութ՟ի նախադասութ՟ես , և 'ի պէտս այլոց դիպուածոց՝ որք մարթին դիպիլ 'ի նմանաւոր նիւթս , ար-

ժան է զանազանել 'ի մէջ մարմնաւոր և զգայ-
ական հեշտութե, և 'ի մէջ հեշտութե՝ որ
է լոկ զգայական, այլ ոչ մարմնաւոր ։ Ամենայն
մարմնական հեշտութի՝ է միանգամայն և զգայ-
ական . այլ ոչ ամենայն զգալի հեշտութի՝ է
և մարմնական ։ Մարմնաւոր հեշտութիւն ծա-
գի 'ի շարժութէ ոգեաց որք գրգռեն զներքին և
զմասունս սերնդեան առ ծննդագործութիւն ։ Ամին իրի
կարի տարբեր է 'ի սոսկ զգալի հեշտութէ .
որ լինի առանց ինչ շարժութե նոյն ոգեաց .
և առանց իրիք հաճութե յառաջ եկելոյ՝ 'ի սեռ-
նաւորեալ գրգռմանէ սերման . զորօրինակ՝ զգալի
հեշտութին 'ի ճաշակելն զհամադամ կերա-
կուրս, 'ի հոտոտելն զբուրումն անուշից, 'ի
լսելն զքնարս և զքաղցրանուագ երգս, 'ի շօ-
շափելն զփափուկս, 'ի տեսանելն զզուարճա-
լիս, և առաւելապէս 'ի քորելն զմասն ինչ
մարմնոյ մերոյ 'ի սաստիկ մարմաջս ։ Այս ա-
մենայն զգալի հեշտութիք են . և ամենք կարի
զգայականք, այլ ոչ մարմնականք ։ Բանք նա-
խադասութե հային առ մարմնաւոր և զգայա-
կան հեշտութի, յաղագս որոյ դատապարտեալ
իսկ է ։ Քանզի այն համբոյրք որք լինին մարմ-
նաւոր և զգայական հեշտութբ՝ նովին իսկ
հեշտութբ՝ կարգին առ զուգաւորութիւն . որ որպէս
է յայնժամ մեղք մահուչափ, նոյնպէս է և
համբոյրն տուեալ կամ ընկալեալ մարմնաւոր
և զգայական հեշտութբ . Թէպէտև չգուցէ
առ եւեթ այլ ինչ վտանգ հաւանութե անա-
ռակութե, կամ գիջութե ։ Այլ ևս կղեմէս
Ը . և պօղոս Ե . առ սանգեզն 'ի բովանդ . գր . Ե .
գլ . Ղ . կն . 12 . կարգեցին, զի լիցի զեկու-
ցումն առ առեալն սրբազննութե զնմանէ, որ առ-

դնէ թէ չիցէ մահուչափ մեղք համբոյրն տուեալ վասն հեշտախտութե. ապա յայս եղանակ համբուրից կան մահուչափ մեղք. ուստի տրն Թովմաս Բ. Բ. խն. ճծդ. յօդ. 4. 'ի Տարթի. գրէ այսպէս. *Համբոյրք են մեղք մահուչափ՝ թէ որում են անառակք||: Իսկ արդ՝ համբոյրք տուեալք սակս մարմնական և զգայական հեշտութեան են անառակք, ապա են մեղք մահուչափ:

Զնոյն պարտ է ասել վասն շօշափմանց, դրկախառնութեց, յայրատ հայեցուածոց, և տափական բանից. Իբր զի այս ամենայն եթէ լիցին զգայական և անառակ հեշտութե կամ նովին մտօք եղեալք, լինին մեղք մահուչափ. քանզի 'ի նիւթ ափրոդիտական չիք թեթևութն նիւթոյ. քանզի ուր է մարմնական կամ զգայական հեշտութն՝ անդ է սկզբնաւորեալ գիջումն: Իսկ արդ կամաւոր գիջութիւն սկզբնաւորեալ է մեղք մահուչափ, ապա և այն: Վասն այսորիկ իսկ զզգալի հեշտութիւն, թէև ազատ 'ի զգայական և 'ի մարմնական հեշտութե ըստ որում արդ մեկնեցաւ, չէ մարթ գլխաւորաբար խնդրել յինչ և իցէ բնական գործս գէթ առանց ներելի մեղաց. որպէս քաղի 'ի դատապարտեալ նախադասութէ ը. Իննովկ. ժա. զորմէ ասացաւ 'ի ճառն զգաստութե:

'Ի զգայական շարժմանց մասին կայ իբրև կանոն զդատապարտութն նախադասութեց. ժէ. և խէ. զոր արար Իննովկ. ժա. ընդեմ մոլինոսի. յորոց ժէ, էր այս. *Ոչինչ աւելի փոյթ ունել պարտ է զփորձութեց, և չէ պարտ այլ ինչ դիմակալութի առնել ընդդէմ

նոցա, բայց միայն բացասաբար, առանց ձիգն
ինչ առնելոյ. և եթէ բնութիւն շարժի, թո-
ղուլ պարտ է՞ զի շարժեսցի, վասն զի է բնու-
թիւն ||. և իսկ այն էր. * Յորժամ այսպիսի
բնութիւք ընդ առաջ ելանեն, պարտ է թո-
ղուլ, զի սատանայն գործեսցէ, ոչինչ ձիգն
'ի մէջ առնլով, և ոչ մի ինչ ջան յանձնէ. այլ
պարտի մնալ մարդն յոչնչի իւրում. և թէև
զհետ գայցեն գիջութիւք, և գործք անառակք
ձեռօք իւրովք, և ես չարագոյնք, ոչ է պիտոյ
անհանգիստ առնել զանձն. այլ 'ի դուրս ձգե-
լի են խղճահարութիւք, տարակուսանք, և եր-
կիւղք և այլն ||: Պատճառ դատապարտութե
է. զի ըստ նըյն Թովմայի. ա. բ. խն. իէ. յօդ.
գ. այլ է ուղղակի կամաւորն, և այլ անուղղա-
կի: Ուղղակին է՝ յորժամ ես ինձէն կամիմ
զվատթար զայն շարժումն, ջանամ, և գըր-
գռեմ. իսկ անուղղակին է՝ յորժամ կարեմ և
պարտիմ սանձել կամ ձնշել զայն, և ոչ ձնշեմ,
վասն որոյ 'ի զգալ իմում զշարժումն վատթար,
եթէ ընդդիմութիւն ինչ ոչ ցուցանեմ, այլ լոկ
կրաւորաբար զիս ունիմ, ուր կարէի ընդդէմ
կալ և ձնշել, յայնժամ այդ շարժումն կամ
փորձութիւն լինի ինձ անուղղակի կամաւոր. նմին
իրի և մեղանչական: Ըստ նըն Թովմասի. խն.
հէ. յօդ. 6. ուսուցանէ. * Ոչէ պակասի բանն
'ի մասին բարեկարգութե կրից յորժամ ոչ
ձնշէ զանարժան շարժումն կրից ||: Իսկ յոր-
ժամ չիցէ հնար Փիլիպպէս ընկձել զայնպիսի
շարժմունս, գէթ պարտիմք ներքին ներգոր-
ծութիւք կամաց ներհականօք դարձիլ 'ի նոցա-
նէ և 'ի բաց հերքել զնոսա:

### Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ խոնարհութեան ։

Խոնարհութիւն է վերջինն 'ի չորեքտասան առաքինութեանց, որք պարտաւորեն զմեզ ընդ մահուչափ մեղօք ։

Այս առաքինութիւն սանձէ զհոգին մարդոյ՝ զի հպատակ կացցէ ա͞յ և օրինաց նորա, և առանձին մեծաւորի իւրում, և մի՛ զհետ լիցի պատուոյ և արժանապատուութեանց առ 'ի գեր 'ի վերոյ գտանել քան զայլս ։ Մոլութիւն դիմամարտ առաքինութեանս ըստ աստուածաբանութեան՝ է հպարտութիւն. որ է անկարգ բաղձանք գերազանցութեան անձին. մինչև չկամիլ մարդոյ հպատակ կալ ա͞յ, և մեծաւորի իւրում ։ Նմին իրի որ միանգամ արհամարհանօք չկամիցին ներքոյ արկանել զանձն ա͞յ և օրինաց նորա կամ մեծաւորի իւրում, մեղանչէ մեղօք հպարտութեան և ամբարտաւանութեան. սա է այսմ օրինակի չընդունի զթեթևութիւն նիւթոյ, այլ միշտ լինի մեղք մահուչափ ։

Նոյն անցք անցանեն և ընդ նա՝ որ պարզաբար զհետ պնդի պատուոյ և արժանապատուութեան, գիտելով զանընդունակութիւն իւր 'ի կիրառութիւն նորա՝ բայց եթէ մեծագոյն վնասու ընկերին ։ Իսկ եթէ ոք ունիցի զմեծագոյն վարկումն զանձնէ քան զոր վայել է, և մեծացուսցէ զանձն առանց արհամարհելոյ զա͞ծ և զօրէնս նորա, կամ զսեփական մեծաւոր իւր, կամ զընկերն, գործէ միայն ներելի մեղս ։

Յաղագս առաքինութեանց, որք 'ի բնութէ իւրեանց պարտաւոր առնեն միայն առ ներելի մեղս. և թէ զիա՞րդ լինիցի ծանունս մեղանչել ընդդէմ նոցա.

հգ. Ապաքէն յայտնաբանեցան չորեքտասան առաքինութիւնք, որք պարտաւոր առնեն 'ի բնութէ իւրեանց ընդ մահուչափ մեղօք. որպէս և մոլութիւնք գլխաւորք նոցա, որք 'ի բնութէ իւրեանց են մեղք մահուչափ. և ցուցաւ թէ երբ կարեն կամ ոչ կարեն ընդունել զթեթևութիւն նիւթոյ առ 'ի լինել մեղք ներելի. Ի նմին առաջի եդան և դատապարտեալ նախադասութիւնք՝ որք հային առ այն մոլութիւն: Արդ կամիմ, զի մեկնաբանեսցես ինձ զայն առաքինութիւն, որք 'ի բնութէ իւրեանց պարտաւորեն առ ներելի մեղս միայն, և զմոլութիւն գլխաւորս նոցա, որք 'ի բնութէ իւրեանց իցեն մեղք ներելի. առ 'ի կարօղ լինել որոշել ընդ եոր և ընդ եոր, ըստ ակնարկելոյ ծխաբանին:

դ. Մեկնաբանել զամենայն առաքինութիւնս որք 'ի բնութէ իւրեանց պարտաւոր առնեն միայն առ մեղս ներելիս, և զմոլութիւնս հակառակս նոցա, երկարապատում ինչ է. արդ որովհետև ս՟րն Թովմաս. Է. Է. նշանակէ և բացատրէ զերեսուն և վեց առաքինութիւնս, յորոց չորեքտասանքն պարտաւորեն առ մեղս մահուչափս. և արդէն իսկ մեկնեցան 'ի վեր անդր՝ եթէ կարևոր գիտելիք ամենայն խոստո-

վանահարց. այլ 'ի ծագելոց անտի քան և երկուց՝ որք պարտաւորեն միայն առ մեզ ներելիս, մեք 'ի մէջ առցուք զչորեսին միայն՝ որք ծառայեն տեղւ կիրառութե. և սոքա են, Հեզութի. Համեստութի. Ճշմարտութի և Փութաջանութի:

Հեզութին բերէ տիրապէս սանձել զկիրս բարկութե. և ունի իւր զխմամարտ ըստ հակառակութե զմոլութին անմնուն. որ հաստատեալն է յապշութե մտաց՝ առ 'ի չցանկուլ 'ը սրտմտութե ընդդէմ մոլութեանց և մոլեաց, որք պարտականն են մեծաւորք և խոստովանահարք, որք թոյլ տան նոցա յանձախել, և ոչ յանդիմանեն. յոյր սակս կոչին նոքա * Իբրև շունք համրացեալք, որք ոչ կարիցեն հաչել||: Եսայ ծզ.

Մոլութին ըստ առանձնականութե զխմամարտ հեզութե կոչի բարկութի. լինի սա մեզ մահուչափ՝ յորժամ դէմ առնիցեմք դիմադրութե: Իսկ եթէ ձգեսցի առ արդար վրեժխնդրութի, բայց յանցանէ չափու, լինի մեզ ներելի զոր օրինակ են գործք կարճմտութե, որք առեղ գործին յընդառաջ ելանել առ թիւ:

Համեստութին է առաքինութի, որ բարեկարգէ զամենայն շարժմունս մարմնոյ մերոյ. և գլխաւորաբար հայի յերկու իւնչ, այսինքն՝ 'ի հանգամանս կենակցութեան, և 'ի ձևս զգեստուց:

'Ի կարգի կենակցութե իւր 'ի բազումս մահուչափ մեղանչեն եկեղեցականք սակս գայթակղութե՝ զոր տան անհամեստ և ընդարձակ քաղաքավարութե իւրեանց, որ թերևս յաշխարհիկս համարեսցի մեզ ներելի:

Գլխաւորաբար հաստատեալ է այդ 'ի բանս

անփոյթելոյ, յարտաքին գործս, և 'ի կենցաղավարութիւս ընդ կանայս՝ որ չիցեն ազգական յառաջին և յերկրորդ աստիճանի, թէպէտև առանց ինչ չար վախճանի. որովհետև յայդպիսում դիպուածի բազում այն է՝ զի վտանգ կայ մեղաց յերկուց կողմանց. և դրեթէ միշտ գտանի անդ գայթակղութի փոքրկանց, այսինքն երկիւղածաց. որոց տեսեալ զանփոյթելուչ գնացս որ յեկեղեցականս՝ վաղվաղակի գայթակղին, ևն: Այժմ ո՛չ կամին միտ դնել ապաշխարօղք, ևս առաւել խոստովանահարք. ուստի երկոքին իսկ գտանին առաջի Այ պարտականք ծանր ծանր յանցանաց՝ եթէ ըն զանցառութէ և եթէ ըստ յանձնառութէ:

'Ի բան տարազու զգեստուց՝ առաւելապէս մեղանչեն կանայք, որ և մարթի լինել մահուչափ կամ ներելի: Ներելի է եղանակ զարդուց նոցա՝ յորժամ իցէ լոկ սակս ունայնութէ կմ սակս ունայն հաճութէ, առանց այլ ինչ համդամանաց, որք ձգիցեն 'ի ծանր յանցանս. լինի մեղք մահուչափ, նախ՝ յորժամ պճնեն զանձինս վն վախճանի մահուչափ մեղաց. զորօրինակ՝ մահուչափ մեղք գործի՝ յորժամ զարդարի կինն այսու մտօք, զի որք 'ի նա հայիցին՝ գրգռեսցին 'ի տռփանս: Եւ սակայն օրինաւոր է զարդարիլ կնոջ ամուսնացելոյ 'ի հաճոյս առն իւրում. որպէս զի մի ցանկասցի նա կնոջ օտարի, այլ շատասցի սիրով ամուսնոյն: Այլ սակայն ասէ սրբն թովմաս. Բ. Բ. խնդ. ճկէ. յօդ. 2: Կանայք որք չիցեն ամուսնացեալք, և չունիցին կամս ամուսնանալոյ, եթէ 'ի զարդարել իւրեանց դիտեն յանկուցանել զսէր արանց, մահուչափ մեղանչեն: Երկ-

րորդ՝ յորժամ կինն առ 'ի զարդարել զանձն՝ զանցանէ կամ այլոց պատճառ լինի զանցանելոյ զպատուիրանաւ իւիք ա՟յ կամ եկեղեցւոյ, զորօրինակ՝ ոյք վասն զարդուց իւրեանց թողուն կամ տան այլոց թողուլ 'ի բաց յաւուրս տօնից տեսանել զպատարագ, գործեն կամ ծառայեցուցանեն զայլս յաւուրս տօնից, բռնադատեն զարս առնել ծախս տարապայմանս, մինչև յետանիլ նոցա 'ի վճարելոյ զվարձս մշակաց, և 'ի կատարելոյ զայլ պարտս պաշտաման. ուստի և անկանիլ ընդ ծանր պարտեօք իբր անվճարելեօք:

Երրորդ՝ յորժամ զարդքն ըստ էութեան իցեն պչրանք ձգիչք 'ի ցանկութիւն. որ և այնպիսի լինի, յորժամ ըստ կարծեաց խոհեմ և երկիւղած անձանց իբր այնպիսի դատեալ լինի. զորօրինակ՝ շրջել լանջաբերկ, մերկաբազուկ, թիկնաբաց, որպէս և թափանցիկ զգեստուք. կամ կարի կարճագունիւք, մինչև երևել մեծի մասին սրունից. որ է արդարև գործ պժգալի: Այս դիպուած է, որ 'ի վերջին աւուրս վերապահեցաւ յետոյ մերմէ. այսինքն *Կանայք՝ որք գնան ընդ հրապարակս, կամ կան յեկեղեցիս, և կամ 'ի խանութս բաց լանջիւք, բազկօք, իրանօք. և յետ ազդարարութե՟՝ զոր պարտին առնել նոցա խոստովանահարք, ո՛չ ուղղեն զանձինս, և այլն ‖. որպէս և ընդ պատժով բանադրանաց հանեալ վճռոյ: Իննովկ. ժա՟. արգելեալ էր ինքեան պահելով. որ և հաստատեցաւ սոյն 'ի Կղեմայ ժա՟:

Չորրորդ՝ եթէ զարդարանքն իցեն արտաքոյ քան զոր 'ի կիր առնուն այլ կանայք համավիճակք իւր:

Հինգերորդ՝ եթէ հաւանականաբար կամ խոհեմաբար համարեսցի, կամ պարտական իցէ համարել, թէ այնպիսի զարդուք տայ զուխթ ձգելոյ զայլս 'ի պագշոտ սէր իւր. կամ առնէ այնու վախճանաւ՝ զի տեսցի և սիրեսցի անհամեստ օրինակաւ։ Եւ քանզի կարի դժուարին է, թէ կանայք 'ի ձեռն զարդուց իւրեանց անմասն լիցին յամանց ոմանց 'ի յիշատակեալ անկարգութեց, սորին վասն և կարի դժուարին է՝ թէ աւելորդ և անսովոր զարդք այդպիսեաց չիցեն մեղք մահուչափ։ Իսկ յաղագս չարաչար սովորութե զգենլոյ կանանց առնացի, և արանց կանացի, ապաքէն յայտնի է արգելումն առ յոյ. Բ. օր. ԻԲ. 5։ *Մի՛ եղիցի հանդերձ առնացի զկանամբք. և մի՛ զգեցցի այր զզգեստ կանացի. զի պիղծ է տն այ քում ամենայն՝ որ առնէ զայն||։

Ուր յաղագս սնգուրի հաստատէ սբն թովմաս, թէ ծանունս մեղանչեն կանայք՝ եթէ նկարեն զդէմս իւրեանց վասն պագշոտութե, կամ վասն արհամարհելոյ զած։ Եւ զանազանէ, զի կամ 'ի կեր առնուն զսնգոյրն առ 'ի գեղեցիկս երևիլ երբ չեն այնպէս, և կամ առ 'ի ծածկել զպակասութի ինչ իւրեանց. և ըստ յետնոյս այսմ դատի չգործել նոցա գէթ ըղմահուչափ մեղս։ Իսկ սբն պօղոս ա. կորն. գլ. ժա. պատուիրէ կանանց 'ի ժամ աղօթից սքօղել. այն է՝ շուք դնել գլխոյն՝ վասն հրեշտակաց. իմա՛ 'ի նշանակ համեստութե և ամօթխածութե. և առաւելապէս 'ի ժամ կատարման սբ խորհրդոյ. միանգամայն վասն յարգութե՝ զոր պարտին ունել առ սբ հրեշտակս, որք հանապազ կան յեկեղեցիս, և յանդիման լինին սբ

սեղանոյն։ Նստիս. կուռնելիս ալափ. և կալմէթ։ Յայսմ մասին պարտ է զննել զմանաւոր ժողովս թեւից։

Ճշմարտախօսութիւն է առաքինութիւն ինչ՝ որ պարտաւորէ զմեզ խօսել և տալ զարտաքին նշանս միաբան ը ներքին մտաց մերոց. վասն այսորիկ յորժամ հարցանիցէ ոք ցիս. արդեօք տեսեա՞լ իցէ քո զպետրոս, եթէ ստուգիւ տեսեալ է իմ, պարտիմ ասել. այո՛ տեսի. և ոչ մարթիմ ժխտել այսու մօք՝ որպէս թէ չտեսի զնա 'ի նկար իւր. կամ ասել՝ չտեսի, իմանալով ընդ միտս, թէ չտեսի առ 'ի ասել քեզ. ուր ըստ առաջնումն լինէր համաձայնութիւն. և ըստ երկրորդին՝ ամփոփումն մտաց։ Այն օրինակ եթէ 'ի լոյս տունջեան փակեմ զպատուհան սենեկիս. ոչ զի համարեսցին այլք թէ ես ննջեմ, երբ արդեամբք ոչ ննջեմ, գործեմ ընդդէմ ճշմարտութեան արտաքին նշանաւ. այլ է՝ թէ ես այլով իւիք դիպուածով ունիցիմ զպատուհան սենեկիս փակեալ, և այլք կարծեսցեն թէ ննջեալ իցէ իմ։

Մոլութիւնք ըստ նմանութեան ընդդէմ ճշմարտութեան՝ են 'ի կարգի ստութեան, և արտաքին նշանացն կեղծեաց, և կեղծաւորութեան։ Երեք ազգ են ստութեան. այսինքն ընդ կատակս, հաճոյակատար, և վնասակար։ Ստումն ընդ կատակս այն է՝ յորժամ ոք ը խաղս խօսի զստու։ Ստումն հաճոյակատար կամ մարդահաճոյ այն է՝ յորժամ ոք 'ի նպաստ ուրուք ստէ։ Իսկ ստումն վնասակար այն է՝ յորժամ ոք հանդերձ վնասու ընկերին ստէ։ Առաջինն և երկրորդն ներելի գոլին, եթէ չունիցին կից զերդումն. քանզի յայնժամ լինէր մեղք մահուչափ քանիւ ստերդ-

նութն։ Իսկ երրորդն լինի մեղք մահուչափ՝ եթէ փոքրկութն նիւթոյ չառնիցէ անբասիր․ զորօրինակ՝ եթէ ասացից ստութեամբ, թէ պետրոս է գող, կամ շնացող էռ, լինի մեղք մահուչափ․ այլ թէ ասացից, է այր շատակեր, անհամբեր են, լինի ներելի ևեթ՝ եթէ չիցէ ճշմարիտ զոր ասեմն։ Սուտն թէ և իցէ ընդ կատակս, կամ հաճոյակատար, թող թէ վնասակար, 'ի բնէ չար է․ նմին իրի ոչ երբեք մարթի լինել օրինաւոր՝ սակս որ և իցէ օգտակար, համեստ, կամ զուարճալի վախճանի․ որովհետև դատապարտեցան յՍննովկ․ ժՑ․ երեքին այս նախադասութք․ իզ․ իէ․ իը․ յորոց առաջինն է․ * Եթէ ոք կամ առանձինն կմ առաջի այլոց, եթէ հարցեալ և եթէ ինքնակամ․ եթէ 'ի սակս զուարճութեան, և եթէ այլով իւիք պատճառաւ երդնուցու, թէ չէք իմ գործեալ զայս ինչ, զոր արդարև գործեաց, իմանալով ընդ մտս իւր զայլ ինչ մի՝ զոր չէ գործեալ, կամ զեղանակ օտար յայնմանէ՝ որով գործեացն, և կամ զոր ինչ և է այլ յաւելուած ճշմարիտ՝ իրօք ոչ ստէ․ և ոչ է ստերգութն ||։ Երկրորդն է․ * Իրաւացի պատճառ երկայրաբանութէցս է, յորժամ հարկաւոր իցէ վարել զնոսին, կամ օգտակար 'ի պահել զկեանս մարմնոյ և զպատիւ, և զինչս իւր, որպէս և 'ի պէտս ինչ ներգործութե առաքինութեց, մինչ զի ծածկելն զճշմարտութն յայնմ պահու՝ համարեալ լիցի լաւ ինչ լինել և գործ ճարտարութե ||։ Եւ երրորդն է․ * Որ միանգամ 'ի ձեռն յանձնարարութե, կմ կաշառաց ելեալ իցէ 'ի պաշտօն դատաւորական կմ հրապարակական, կարող է ամփոփմամբ մտաց

առնել զերդումն զայն՝ որ սովոր է պահանջել յայսպիսեաց արքունի հրամանաւ, ոչինչ հայելով՝ ՚ի դիտաւորութիւն պահանջողին. վասն զի ոչ պարտաւորի խոստովան լինել զգաղտնի յանցուածս իւր ||: Պատճառ դատապարտութեդ-առեալ լինի ՚ի նորին Թովմայէ. Է. Է. խն. ճԵ. դր. Գ. * Զի որովհետև բառքն են բնապէս նշանակ իմացմանց, օտար է ՚ի բնութենէ՝ և անտեղի, զի ոք ձայնիւ նշանակիցէ զայն ինչ՝ զոր ոչն ունի ՚ի միտս ||:

Ապա ուրեմն ցորչափ խօսք մեր կամ ասութի չիցէ համաձայն ը այնմ զոր ՚ի միտս ունիմք, սուտ է միշտ. և ինչ ոչ զորէ՝ թէ բառքն զորս բարբառիմք՝ իցեն ըստ այն իմաստից՝ զոր ունիմք ՚ի միտս. այլ պարտին լինել ըստ արտաքին իմացման նր, որում առնեմք զխոստումն, կամ զստորասութի, և կամ զերդումն. որպէս յուշ առնէ նորին Թովմաս անդանօր ՚ի խն. ճը. յօդ. 7. առ. Գ. * Երդումն է պահելի ըստ իմացուածոյ նր, որում տուեալ լինի երդումն ||. և այլն:

Յուշ լիցի, զի չէ օրինաւոր խօսիլ զսուտ՝ թէ և կամիցի ոք դիտել նովին զհոգևորական փրկութի մարդկան. որպէս ասէ նորին օգոստինոս ՚ի Գիրս ընդդէմ ստութե. Գլ. ԺԸ: Այլ եթէ խոստովանահայր ոք հարցցի կամ բռնաբարեսցի սպառնալեօք՝ ասել զմեղս ինչ լուեալս ՚ի խոստովանութե, նա ՚ի ժխտելն՝ թէ չէք իմ լուեալ՝ ոչ խօսի զսուտ. քանզի չէ լուեալ նա իբրև զմարդ, այլ իբրև պաշտօնեայ յիի քի, որպէս ՚ի վեր անդր ասացաւ ՚ի Ճառելն զկնքոյ խորհրդոյն:

Կեղծումն է ստութի եղեալ նշանաւ ինչ

և արտաքին գործով. որ և մարթի լինել ընդ կատակս, հաճոյակատար, և չնասակար: Վերջինս այս լինի մեղք մահուչափ՝ եթէ թեթևութիւն նիւթոյ ոչ կացուսցէ զնա անբասիր:

Կեղծաւորութիւն է ստութիւն, որով ոք կերպարանի, կամ ձևանայ զլաւուն և զբարութիւն՝ զոր ոչն ունի, առ 'ի ստանալ զյարգ, կամ 'ի ձեռս բերել զայլ ինչ: Որ իբր 'ի բազում է մեղք ներելի, եթէ ծանրութիւն նիւթոյ, կամ չար վախճանն մահուչափ արգելեալ՝ չառնիցէ լինել մահուչափ:

Յորչափ դիտեալ վախճանն սրբութե կեղծաւորելոյ չիցէ դիմամարտ ածսիրութե կամ եղբայրսիրութեան՝ է մեղք ներելի՝ ասէ սբն Թովմաս: Իսկ թէ ոք կեղծաւորեսցի զբարութիւն առ 'ի սերմանել զսուտ վարդապետութիւն, կմ առ 'ի ստանալ զարժանապատուութիւն ինչ եկեղեցական՝ որում անարժան գտանի, կամ զայլ ինչ ժամանակաւոր բարիս՝ յոր դնէ ըզվախճան իւր, մեղանչէ մահուչափ մեղօք:

'Ի վախճանի փութաջանութիւն է առաքինութիւն ինչ, որ տայ մեզ սիրել զուսումն, և չափաւորել զանչափ բաղձանս գիտելոյ: Այսու առաքինութե կրթիմք գիտել զայն ինչ, յոր իւրաքանչիւրոք պարտաւորի ըստ պաշտաման, և ըստ պաշտամանն զոր վարէ: Պարտական են ամ քրիստոնեայք գիտել զերկոտասան մասունս հանգանակին առաքելոյ առ 'ի հաւատալ 'ի դէպ ժամանակի. որպէս և զտասնաբանեայ օրէնս, զաւետարանական հրամանս, և զեկեղեցւոյ պատուիրանս առ 'ի գործ դնել զայսոսիկ՝ երբ պարտաւորեն զմեզ. մինչ զի թէ ոք ոչ գիտասցէ՝ մեղանչէ նախ՝ ընդդէմ բայսասա-

կան պատուիրանին , որ պարտաւոր առնէ զմեզ չանցխտանալ զնոսին . և պարտաւորէ մեղշ ա- մեղշ : Երկրորդ՝ մեղանչէ ընդդէմ ստորասական կամ դրական պատուիրանին՝ որ պարտաւոր առնէ զմեզ ուսանել՝ քանիցս անգամ ընդառաջ ելանեն մեզ առիթք : Նմին իրի զայնքան մեղս գործէ տգէտն՝ որչափ առիթս ունի ուսանելոյ՝ և ոչ ուսանի : Երրորդ՝ մեղանչէ յամ նուագս՝ յորս պարտական ոք գտցի հաւատալոյ 'ի նախայիշատակեալ մասունս հաւատոյ , և ոչ հաւատասցէ՝ վասն այնորիկ զի անգէտ է . և 'ի գործ դնելոյ զնախասացեալ պատուիրանս , այլ վասն այն ոչ դնէ 'ի գործ , վասն զի ոչ գիտէ :

Մոլութիւն դիմամարտեալ փութաջանութե [illegible] է ընդվայրաքննութիւնն ( որ և հետաքրքրութի ) . որ իբր 'ի բաղում է մեղք ներելի . միայն թէ զոր կամիմքն գիտել՝ չիցէ արգելեալ ի ծանր մեղօք յածային կմ յեկեղեցական օրինաց , ևն : Այսպիսի ինչ է՝ եթէ ոք ընդվայրաքննութբ ընթեռնուցու զգիրս հերեսիովտայց յորս իցեն հերետիկոսութիք , կամ Ճառեն զկրօնից . վասն զի մահուչափ մեղանչէ և անկանի 'ի բանադրանս վերապահեալս պապին յառաջնում անդ կանոնի կոնդակին ընթրեաց .

## Յաղագս ԹԷ արդեօք մեղք ներելիք մա՞րթին մահուչափ լինել։

հդ. Արժի և զայն գիտել, թէ արդեօք մեղք՝ որ 'ի բնութէ իւրեանց իցեն ներելիք, մա՞րթին դառնալ լինել մահուչափ. և Ե՞րբ։

դ. Նախ զառաջինն պարտ է յուշ ածել, թէ երեք ազգ են ներելի մեղաց։ Ա՝ որ յառարկայէ և 'ի բնութէ իւրմէ է ներելի, նման իրի ոչ դիմամարտի սիրոյ. և ոչ այն առաքինութեց՝ որ կարևոր են առ պահպանութիւն սիրոյ առ Աստուած և առ ընկերն. մինչ զի թէ և լինիցին կատարեալ աչալրջութբ՝ չլինին երբէք մեղք մահուչափ. որպիսի է սուտն խօսեալ ընդ կատակս, կամ սուտն հաճոյակատար առանց երդման, անհամբերութիւն. և շատկերութիւն, ևն։ Բւ է՝ որ բանիւ թեթևութէ նիւթոյ է մեղք ներելի. զորօրինակ՝ գողութիւն դանկի միոյ. քանզի թէպէտ և գողութիւն 'ի բնութէ իւրմէ է մեղք մահուչափ, սակայն 'ի սակս թեթևութէ նիւթոյն լինի ներելի և եթ։ Զայս մարթ է ասել 'ի սակի այն ամ մոլութեց՝ որք թէ և իցեն ընդդէմ այն առաքինութեց՝ որք 'ի բնութէ իւրեանց պարտաւորեն առ մահուչափ մեղս, և սակայն ընդունին զթեթևութիւն նիւթոյ. զորոց եղեն բանք 'ի վեր անդր։ 'Ի վախճանի է և մեղք ներելի առ անկատար խորհրդածութէ, և անլրացեալ մտադրութէ չարութեն առարկայի, կամ գոյութէ օրինաց կամ պատուիրանաց։ Այսպէս մեկնաբանեալ,

Ասեմ. մեղքն՝ որ 'ի բնութէ իւրմէ, կամ վասն թեթևութէ նիւթոյն է ներելի՝ մարթի

դառնալ լինել մահուչափ ։ Նախ՝ 'ի սակս յարակից վախճանի, որ իցէ մահուչափ չար. զի՝ որ գողանայ զդրամ մի վ̃ն չար գործոյ չնուե̃, մեղանչէ մահուչափ. Թէպէտ և ըստ որում լոկ դոյզն գողութի̃՝ է ներելի և եթ. որպէս և որ խօսի զսուտ ընդ կատակս՝ առ 'ի ձգել զկին ոք 'ի չար անդր՝ առնէ մահուչափ մեղս. Թէպէտ և սուտն որ ընդ կատակս 'ի բնութե̃ իւրմէ իցէ ներելի և եթ ։

Երկրորդ՝ բանիւ մոլար խղճի մտաց. զօրօրինակ՝ յորժամ ես համարիմ թէ ասելն զսուտ ինչ հաճոյակատար՝ իցէ մեղք մահուչափ, եթէ ասացից՝ մեղանչեմ մահուչափ. կամ երբ համարիմ, թէ յա̃ծային ժամերգութե̃ թողուլն 'ի բաց զփոքրիկ սաղմոս ինչ՝ իցէ մեղք մահուչափ, 'ի զանց առնել իմում՝ մեղանչեմ մահուչափ ։ Այնպէս հաւատաւորն որ կարծէր՝ թէ հաղորդիլ 'ի ներելի մեղս իցէ սեղանակապտութի̃, արդարև եթէ հաղորդեսցի՝ մեղանչէ մեղօք սեղանակապտութե̃ ։

Երրորդ՝ 'ի սակս սաստիկ վառման անկարգ յօժարութե̃ առ առնել ինչ մի՝ որ 'ի բնէ իցէ միայն մեղք ներելի. յորժամ ոք 'ի մտի եդեալ իցէ իրօք ընտրել մահուչափ մեղանչել՝ քան 'ի բաց կալ յայնմանէ, թէպէտ և իցէ նիւթ ներելի և եթ մեղաց. զօրօրինակ՝ այն կին, որ կարի իմն վառեալ իցէ 'ի պաճուճանս զարդուց իւրոց, մինչև հաստատել 'ի մտի մանաւանդ թողուլ զպատարագն յաւուրս տօնից՝ քան 'ի բաց թողուլ զզարդն, մահուչափ մեղանչէ 'ի զարդարել անդ իւրում. թէպէտ և գործ նորա էր միայն մեղք ներելի ։ Այնպէս որ խաղայ յաւուրս տօնից, այնպիսի ոգւով մինչև դիւրա-

պատրաստ գտանիլ թողուլ զպատարագն՝ քան
յետս կալ 'ի խաղալոյ աստի՝ որ յայժմուս ըստ
ինքեան չիցէ մեղք մահուչափ. թէպէտ և զկնի
տեսցէ զպատարագ՝ տակաւին մեղաւ մահուչափ
մեղօք ։

Չորրորդ՝ բանիւ տեսական արհամարհութ̃.
զորօրինակ՝ որ ոչն կամի պահել զայս ինչ օրէնս
ն̃յ, կամ զհրամանս ինչ վերնադունին, թէ֊
պէտ և սոքա 'ի բնութ̃ իւրեանց ոչ պարտաւո֊
րեսցեն առ մահուչափ մեղս. բայց նա մահու֊
չափ մեղանչէ՝ եթէ կից իցէ արհամարհութ̃ի
ստունգանութ̃ օրինաց կամ պատուիրանաց ։

Հինգերորդ՝ բանիւ հոգևոր կամ մարմնա֊
ւոր երևելի վնասու ընկերին. զորօրինակ՝ որ
գողանայ զփող մի յաղքատէ՝ որ չունէր այլ
առ 'ի կեալ յայնմ աւուր՝ մեղանչէ մահուչափ ։
Այնպէս որ միով և եթ ցոփաբանութ̃բ կամ
գայթակղական բանիւ առանց չար ինչ վախ֊
ճանի՝ առիթ գտցի հոգևորական կործանման
այլում՝ ծանունս մեղանչէ մեղօք գայթակղու֊
թեան. թէպէտ և բանն այն ըստ ինքեան լոկ
ներելի իցէ ։

Վեցերորդ՝ բանիւ վտանգի մահուչափ մե֊
ղանչելոյ՝ յոր դնէ ոք զանձն իւր՝ լինի մեղք
մահուչափ. զորօրինակ՝ եթէ ոք հակամիտեալ
առ զգայական մեղս՝ հետաքննին մտադրութ̃բ
հայիցի 'ի կին, կի՛ համարձակ կենցաղավարի֊
ցի ընդ կնոջ՝ մահուչափ մեղանչէ ։

Ի. հաւասիկ այն ո̃մ՝ զոր պարտի գիտել խոս֊
տովանահայր ոք առ 'ի քաջ ճանաչել զհանգա֊
մանս մեղաց, և ընտրութ̃ի առնել 'ե ՎՁ Եորոյ
և Եորոյ ըստ բանի ծիսարանին ։

## Յաղագս դիպուածոց և բանադրանաց վերապահելոց առ մի անձն առաջնորդական :

Հց. Յառաջ խաղացուք 'ի բանս ըստ առաջադրութեան ծիսարանին, որ ասէ. * Գիտասցէ զդիպուածս և զբանադրանս վերապահեալս առաքելական գահին, և իւրումն եպիսկոպոսի, և զկարգաւորութիս սեպհականս իւրաքանչիւր եկեղեցեաց. և զգուշուբ պահեսցէ զնոսին ‖ : Որդ՝ մեկնեա՛ ինձ. ո՛ր իցեն արդեօք դիպուածք, կամ նզովք պահեալք ծայրագոյն քահանայապետի. և ո՛յք եպիսկոպոսի :

պ. Արժան է նախ զանազանել 'ի մէջ վերապահեալ դիպուածոց, և 'ի մէջ վերապահեալ բանադրանաց. քանզի յառաջնումն պհետ գայ վերապահիլ մեղաց անմիջապէս, իսկ յերկրորդումն միջնորդաբար և ելթ. յայն սակս արձակեալն 'ի վերապահեալ բանադրանաց 'ի ձեռն այնր՝ որ ունի զիշխանութի, մարթի արձակիլ 'ի մեղաց 'ի ձեռն ո՛ր և է խոստովանահօր : Այնպիսի են իբր 'ի բազումս վերապահեալ դիպուածք պապին. որք պահեալ են բանիւ բանադրանաց. որոց 'ի բառնիլն՝ մեղքն արձակիլ մարթին յամ խոստովանահարց : Այլն իբր եթէ ոք հերետիկոս լեալ, կամ ընթերցեալ զմատեան հերետիկոսական, յորում իցեն հերետիկոսութիք, յետոյ ինքնին յանդիման լինիցի յատեան սրբազննութե, և երդմամբ հրաժարեսցի՝ արձակի 'ի բանադրանաց յոր անկեալն է. և կարող է այնուհետև արձակիլ 'ի մեղաց 'ի ձեռն ո՛ր և է խոստովանահօր :

Իսկ սակայն գտանին կրկին դիպուածք պա-

հեալ պապին առանց բանադրանաց․ որոց նախ-
կինն է՝ ընդունիլ զպարգեւս 'ի միանձանց և 'ի
միանձնուհեաց ընդդէմ արգելմանն, զոր արար
կղեմէս Ը․ յայտ արարեալ 'ի սահմանադրու-
թեն․ կրօնաւորականն ժողովք։ Զոր բացատրեաց
և չափաւորեաց ուրբանոս Ը․ այլով կոնդա-
կաւ, որ սկսանի․ Նորոգ 'ի ժողովոյ․ ուր 'ի յօդ․
14․ կղեմեանն կոնդակի յայտնաբանի, թէ որ
էառն զպարգեւս 'ի կրօնաւորաց, ոչ կարէ ար-
ձակիլ՝ եթէ ոչ նախ դարձուսցէ յետս ըստ բո-
լորին 'ի վանս կամ 'ի մենաստանն՝ ուր էր պար-
գեւատուն․ և ոչ իսկ կարէ ընդունել, կամ բա-
ւական համարել զշնորհումն 'ի կրօնէ, կամ 'ի
պարգեւատուէն ըստ համեմատուէ։ Այլ յետ
դարձուցանելոյ զպարգեւն՝ կարէ արձակիլ յիւ-
րաքանչիւր խոստովանահօրէ․ միայն թէ չափ
պարգեւին մի անցցէ քան զյիսուն դահեկանն․
քանզի յայնժամ պահի պապին․ որպէս քաղի 'ի
կոնդակաց Իննովկ․ ԺԲ․ և բենեդ․ ԺԴ․ 'ի
վերայ իշխանութե մեծի ապաշխարողահօր, ո-
րոց սկիզբն է․ Հովիւ քաջ։ Երկրորդ՝ դիպուածն
վերապահեալ պապին առանց բանադրանաց՝
այն է, թէ կին ոք զպարտութիւն ամբաստան
լիցի, կամ զեկուսցէ զաշխարհիկ կամ զկրօնա-
ւոր զանմեղ խոստովանահօրէ իբրև հրապու-
րեալ 'ի նմանէ 'ի մեղս․ որպէս և նա՝ որ զայդ
խորհուրդ տուեալ իցէ նմա կամ օժանդակեալ,
այսպիսիքս ոչ կարեն արձակիլ՝ բայց միայն 'ի
պապէն 'ի բաց առեալ ի կէտ մահուն․ որպէս յայտ
առնէ բենեդ․ ԺԴ․ 'ի սահման․ Խորհուրդ աղաչէ".
յօդ․ Ս․ ժանկլէ։

Յաղագս կախմանց և արգելմանց վերապա-
հելոց պապին՝ պարտ է 'ի միտ առնուլ նախ՝

թէ 'ի վերապահելոց ասածի այլ է բացայայտն, և այլ զօրութենականն։ Բացայայտն է՝ յորժամ ասի, ընդ պատժով կախման կամ արգելման նողին խոչ գործով մեզ պահելոյ։ Եւ կամ, յորմէ ոչ ոք կարօղ իցէ արձակել՝ բայց միայն պապն հռովմայ։ Իսկ զօրութենականն է՝ յորժամ կախումն կամ արգելումն դնի 'ի մշտնջենաւորս, կամ առանց յուսոյ ընդունելոյ զտնօրինումն։ Երկրորդ՝ մինչև ոք փոխարինեսցէ կամ հատուսցէ զվնասեցելոյ մասին։ Երրորդ՝ ըստ բարեհաճութեան պապին, կմ այլոյ առաջնորդի։ Չորրորդ՝ յորժամ կախումն կամ արգելումն դնի ցամ մի, կամ ցերկեամ մի, կամ ընդ սահմանեալ ժամանակաւ։ Հինգերորդ՝ յորժամ կախումն դնի 'ի պատիժ յանցանաց գործեցելոց. կմ արգելու զկիրառութիւն աստիճանաց կարգի 'ի ժամս անտի ընդունելոյ զնոսա։ Յամ 'ի նախայիշատակեալ դիպուածս արձակումն կամ տնօրինումն կախման կամ արգելման զօրութենաբար վերապահին պապին։

Յուշ լիցի և ևս, զի 'ի վերապահեալ կախմանց և արգելմանց, են՝ որ անկանին ը̅ արձակմամբ, և են՝ որ ընդ տնօրինմամբ. այս է՝ ոմանք արձակին միայն, և ոմանք ոչ արձակին՝ այլ տնօրինին։ Որք ենն ըստ պայմանի բանադրանաց, արձակին միայն. իսկ որք ենն ըստ պայմանի պատժոյ՝ ոչ արձակին՝ այլ տնօրինին։ Եւ ըստ այսմ 'ի ժամանակս յոբելինի թէպէտ և շնորհի իշխանութիւն արձակելոյ յոր և իցէ դիպուածոց կմ 'ի բանադրանաց պահելոց պապին, սակայն պարտ է միշտ իմանալ զկախմանց կամ զարգելմանց վերապահելոց ըստ պայմանի բանադրանաց. այլ ոչ՝ ըստ պայմանի պատժոյ, որ ոչ

արձակին՝ այլ տնօրինելն ։ Եւ քանզի 'ի ժամանակս յօբելինի ոչ երբեք տուեալ լինի իշխանութիւն տնօրինելոյ յանկանոնականութիւն, կամ յայլ պատժական յանցանաց. սոյնպէս ոչ երբեք լինի իմաստասիրել՝ թէ շնորհեսցի իշխանութիւն տնօրինելոյ 'ի կախմանէ կամ յարգելանաց՝ որք անկանին ընդ տնօրինմամբ, և ոչ ընդ արձակմամբ ։ Այսպիսի են այն կախմունք կամ արգելմունք, որք են մշտատև առանց տնօրինման. կամ կախմունք և արգելմունք եդեալք ըստ բարեհաճութեան կամաց պապին, կամ այլոյ առաջնորդի. որք ոչ արձակին՝ եթէ ոչ նախ ընկալցին զհաճութիւն կամաց. բայց տնօրինին 'ի նմանէ՝ որ ունի զիշխանութիւն ։ Սոյնպէս են՝ և որ եդանն յամ մ կամ ցերկուս. զի նախ քան զլրանալ սահմանեալ ժամանակին ոչ կարեն արձակիլ. բայց կարեն տնօրինիլ յունողէ զիշխանութիւն ։ 'Ի վախճանի այն կախմունք, որք 'ի սկզբանէ անտի զրկեն զոք 'ի կիրառութենէ աստիճանաց առելոց, ոչ արձակին՝ այլ տնօրինին. և ընդհանրապէս խօսելով, ամ կախմունք կամ արգելմունք՝ զօրութենաբար պահեալք պապին՝ ոչ արձակին, այլ տնօրինին. միայն 'ի բաց առեալ զկախմունս կամ զարգելմունս եդեալս մինչև 'ի փոխարինումն կամ 'ի հատուցումն վնասուն եդելոյ ումեք, կամ մինչև ցհրաժարումն 'ի վիճակէ մեղաց. զի որովհետև դնին, որպէս զի զգաստասցի կամ ուղղեսցի ոք, ապա են ըստ պայմանի բանադրանաց. ուստի պարտին արձակիլ և ոչ տնօրինիլ. և սակայն մինչև փոխարինեալ իցեն կամ հատուցեալ վնասելոյ մասին, չկարեն արձակիլ, բայց միայն 'ի պապէն՝ որում լուելեայն վերապահին ։ Սոյդ է

և այն, թէ չկնի վճարման կամ հատուցման վնասեալ մասին, կամ 'ի բաց վտարելոյ զվիճակ մեղաց՝ դադարին ինքնին առանց ինչ արձակման. որպէս կամք են ասել վարդապետաց ոմանց. բայց այլք լաւ ևս ասեն ընդ Սուարեզի, թէ յայդ գրպուած պահանջի և արձակումն: Սուարեզ. հատուած ԻԷ. համար 2:

'Ի նիւթ կախման պարտ է յուշ ածել և պահել զկանոնս զայսոսիկ. զի որ պարզապէս կախեալ է 'ի պաշտամանէ, չէ պարտ համարել զնա կախեալ և 'ի թոշակէն. և ոչ ընդ հակառակն. ըստ Գլ. Ծ. յՂ. Տետր. հան. և Գլ. ԾԴ. յՂ. Հարցոց և պարգևաց. զի են այլ և այլ պատիժք. յաղագս որոյ մարթ է օրինօք առնուլ զպտուղս թոշակին:

Որ կախեալ իցէ պարզապէս 'ի կարգէն՝ չէ կախեալ յիրաւասութենէ, որպէս և ոչ ընդ հակառակն. վասն զի կարգն որիշ ինչ է յիրաւասութենէ, և չէ հարկաւ կապեալ ընդ նմա: Յայսմանէ է, զի որ պարզապէս կախեալ է 'ի կարգէ՝ կարէ 'ի գործ արկանել զնմ պաշտօնս իրաւասութեան՝ որք ոչ վերածին առ կարգն. Որ՝ կախեալ եպիսկոպոսն կարէ հաղորդել զիշխանութիւն արձակելոյ այլում. թէպէտ և ինքն ոչ կարիցէ արձակել: Այնպէս և որ պարզապէս կախեալ է յիրաւասութենէ, չէ կախեալ յայլոց պաշտամանց կարգին, յորս ոչ պահանջի իրաւասութիւն. նմին իրի մարթի մատուցանել ըզպատարագ, այլ ոչ արձակել:

Որ կախեալն է 'ի վերնագոյն կարգէ՝ չէ կախեալ 'ի ստորին աստիճանէ. զորօրինակ՝ որ առանձինն կախեալ է 'ի քահանայագործութենէ՝ չէ կախեալ 'ի սարկաւագութենէ, և յայլոց ստո-

րին աստիճանաց. վասն զի որ արգելու զմեծագոյնն՝ ոչ համարի թէ արգելուցու և զփոքրագոյնն. այլ է հակառակն արգելեալն 'ի փոքրագոյն կարգէ՝ արգելեալ է և 'ի մեծագունէն. զի որում փոքրագոյնն չէ օրէն՝ չէ օրէն նմա և մեծագոյնն:

Գործք կախման են. զի կախեալն ծածկապէս անգամ 'ի կարգէ կամ յիրաւասութէ, եթէ 'ի կիր առնուցու զպաշտօն կարգին կամ իրաւասութե՝ մեղանչէ մահուչափ. վասն զի բռնաբարէ զարգելն եկեղեցւոյ յերս ծանունս. և այն՝ թէ և 'ի գործ դիցէ յորում և իցէ տեղւոջ. վասն զի բանադրանքն միանգամ յանձն ձգեալ՝ զհետ երթայ բանադրեցելոյն ուր և իցէ, ևս և արտաքոյ թեմի իւրոյ:

Իսկ գործողութիւնք կարգին, որք անկախ են զիրաւասութէ՝ վաւեր են. քանզի եկեղեցին ոչ կարէ բառնալ զիշխանութիւն կարգին, այլ միայն կարէ արգելուլ զկիրառութիւն նորա: Իսկ գործողութիւնք իրաւասութե անվաւեր են, եթէ արգելումն իցէ հրատարակեալ յանուանէ. վասն զի զուրկ միայ 'ի ներգործական իրաւասութէ. բայց վաւեր է՝ թէ չիցէ հրատարակեալ, ըստ սահմանադրութե Մարտինոսի է. Առ խորշելոյ:

Կախեալն լինի անկանոնական՝ եթէ վարեսցէ զպաշտամունս կարգին սեպհականս, որք անկ են ժառանգաւորաց. գլ. ա. յղ. կնք. և դատ. 'ի Զ. բռս ընդհան. ծող. լուսգրն: Այլ ընդհակառակն է, եթէ 'ի կիր առնուցու զայնոսիկ զոր կարող են առնել և աշխարհիկք. Փ՝ ընթեռնուլ զընթերցուածս առանց բազկուրարի:

Կախեալն 'ի թոշակառութենէ թէպէտ և

գաղտնի՝ զրկեալ է յիւմ արդեանց Թոշակին. յորում կարգի պարտին հաշուիլ նաև հանապազորդեայ բաշխոյք. բայց սակայն պարտական է առնել զժամերգութիւն, և բառնալ զամենայն բեռն. և չէ ազատ 'ի պարտուց 'ի սակս զրկելոյ իւրոյ 'ի պտղոց Թոշակին. քանզի կախումն է պատժական, միշտ կալով մնալով պարտաւորութեան. և բանադրանքն ոչ բառնայ զծանրութիւն 'ի տուգանս եկեղեցւոյ և հիմնադրաց:

Արգելմունք ունին զէան բանադրանաց. վասն որոյ արձակին և ոչ տնօրինին. և մանաւանդ վերապահեալքն պապին, յորոց անմարթ է արձակել կարգաւորեալ խոստովանահօր՝ բայց միայն 'ի ժամանակս յոբելինի:

'Ի դէպ է ձառել աստանօր և զանկանոնականութենէ՝ որք նոյն օրինակ պապին պահին ըստ տնօրէնման. և գիտելն զայդոսիկ կարի կարևոր է խոստովանահարց, որք լսեն զխոստովանութիւն եկեղեցականաց:

Անկանոնականութիւն է պատիժ կանոնական, այս է՝ եղեալ 'ի նր կանոնաց. որ արգելու ըղկիրառութեան աստիճանաց կարգին՝ զորս ոք ունի. և միանգամայն արգելու՝ զի մի կարողասցի ձեռնադրիլ: Եւ այս յառաջ գայ կամ 'ի պակասութենէ, և կամ 'ի յանցանաց:

Անկանոնականութիւն որ 'ի պակասութենէ՝ ծագի յութ գլխոց: Նախ՝ 'ի պակասութենէ բանի. որպիսի են այսահարք. այսինքն՝ դիւահարք, կամ լլկեալք յայսոյն պղծոյ. յիմարք կամ խելագարք՝ որք առ վայր մի զգաստանան: Նմանապէս և վերնոտք կամ լուսնոտք: Յորս յաւելեալ լինին տխմարք, և մտաղատունկք, կամ այն ինչ եկեալք 'ի հաւատս. այսինքն՝ նո-

քա՝ որք դարձեալ 'ի հրէութենէ, 'ի կռապաշտութենէ, և յայլադաւանութենէ յորբունս հասակի՝ մկրտեալ են փոքր մի յառաջ։

Երկրորդ՝ 'ի պակասութենէ Մարմնոյ· այսինքն՝ որ անընդհատ դողդողջայ· կամ կոյր է կամ կուրացու միով ականբ· (ոչ աջակալն, որ՝ ակն կոչի 'ի կանոնի)· կամ որոյ պակաս իցէ բոյթ մատն· կամ է ուրուկ· կամ կամաւոր ներքինացեալ· կամ ունի զայնպիսի տգեղութիւն անձին, որ անվայելչ գործէ զկիրառութիւն կարգին։

Երրորդ՝ 'ի պակասութենէ Համբաւոյ· որոյ կրկին են տեսակք· մին՝ է Վատահամբաւութիւն իրաւանց· այն է՝ յորժամ գործեալ իցէ ուրուք զայնպիսի յանցանս՝ որ բերէ յինքեան զվատահամբաւութիւն· և յատենի դատապարտեալ իցէ իրաւամբք վասն նոցին իրաց։ Իսկ միւսն է Վատահամբաւութիւն գործոց· յորժամ ոք վարէ ըզգայթակղական կեանս, մինչ զի 'ի լաւ արանց համարեալ է ապիրատ ոք և չարախօսեալ։

Չորրորդ՝ 'ի պակասութենէ Հեզութեան· այսինքն՝ նա՝ որ ուսեալ կամ անուսեալ 'ի սակս իւրոյին պաշտաման կամ գործոյն, գործակից լեալ իցէ մարդասպանութեան, կամ խեղութեան ուրուք, թէ և արդարութեամբ· զորօրինակ՝ դատաւորք· դպիրք քրէական յանցանաց· խնդրակք· կալանաւորակապք· դատախազք 'ի դատս գլխապարտութեան· զինուորք, որք մղեն զպատերազմ թէ և օրինաւոր։

Հինգերորդ՝ 'ի պակասութենէ Ազատութեան· որպիսի են գերիք· որք ցորչափ 'ի գերութեան են, ոչ կարեն ձեռնադրիլ։

Վեցերորդ՝ 'ի պակասութենէ Խորհրդոյ· իմա՛ զկրկին պսակեալս, որոց հետ զհետէ առեալ

իցէ զբազում կանայս ։ Երկկնութիւն կամ բազմակնութիւն երեք են ազգք ․ մին՝ է երկկնութիւն ճշմարիտ ․ որով լինի յարջորդաբար առնուլ ըզբազում կանայս ։ Միւսն՝ է մեկնական ․ այն է՝ յորժամ ոք առնէ զկին այրի, կամ զկին պղծեալ յայլմէ, կամ որ ննջէ ընդ ամուսնին իւր, գիտելով չափ՝ թէ նա ննջեալ իցէ ընդ այլում ։ Եւ երրորդն է՝ նմանական ․ այս է՝ յորժամ ոք յետ ընդունելոյ զսբ աստիճանս, կամ յետ առնելոյ զհանդիսական ուխտ ողջախոհութեան՝ ածցէ զկին, և գիտացէ զնա ։

Եօթներորդ՝ ՚ի պակասութենէ ծննդեան ․ այսինքն՝ ապօրինաւորք, կամ աղջկորդիք ․ ոչ և ծնեալք ՚ի նոցանէ՝ որոց չէր մարթ յայնժամ պսակիլ ․ Եւ և ծնեալքն յազատաց՝ այլ առանց վիճակի ամուսնութեան ։

Ութերորդ ՚ի պակասութենէ հասակին ․ որ չունիցի զօրինաւոր հասակ ընդունելոյ զփոքր կամ զսբ աստիճանս ըստ կարգադրութեան սրբազան կանոնաց և սահմանադրութեան Պիոսի Է․ և տրէնտ․ ժող․ ՚ի նիստ․ 23․ գլ․ ԺԲ․ և ԺԴ ։

Այսպէս անկանոնականութիւն ՚ի յանցանաց են ութ դիպուածք, որք առնեն զոք անկանոնական ։

Նախ՝ հերետիկոսք, ուրացօղք զհաւատս, հերձուածօղք, կուսակիցք և պաշտպանք նոցին ։

Երկրորդ՝ որ գիտութեամբ կրկին մկրտի ․ կամ որ գիտութեամբ զմկրտեալն կրկին մկրտէ ։

Երրորդ՝ որ գիտելով չափ թէ բանադրեալ է կամ կախեալ կամ արգելեալ, ընդունի զաստիճանս կարգի ։

Չորրորդ՝ որ գողաբար առանց վաւերական

գրոյ , առանց քննութեան , և առանց փորձ հաւանութեան ձեռնադրել սպրդեալ 'ի թիւս ձեռնադրելեաց :

Հինգերորդ՝ կղերիկոսն , որ զչև ընկալեալ զաստիճանս 'ի կիր առնու :

Վեցերորդ՝ կղերիկոսք , որք զընկալեալ աստիճանս 'ի կիր առնուն՝ մինչդեռ բանադրեալ են , կամ կախեալ , կամ արգելեալ . և կամ 'ի գործ արկանեն 'ի տեղիս արգելեալս :

Եօթներորդ՝ որ առնէ զկամաւոր , այսինքն՝ զանիրաւ մարդասպանութիւն . կմ պատճառ լինի վիժելոյ հոգևորեալ սաղմին . և նոքա ամենեքին՝ որ միանգամ լինին հրամանատու , կամ ձեռնտու , և օժանդակ առ երկաքանչիւրսն :

Ութերորդ՝ ամենեքին նոքա՝ որք միանգամ խեղացուցանեն զայլս , կամ զանձինս՝ հատանելով զմի յանդամոց , որ ունիցի զիւր պաշտօն առանձին 'ի մարդկային մարմնի . կամ նոքա՝ որք հրամայեն , կամ նպաստեն , կամ խրատեն առնել զխեղութիւն :

'Ի վերոյ նախասացեալ անկանոնականութեանց՝ պարտ է գիտել նախ , թէ անկանոնականութիւնք ոչ արձակին , այլ տնօրինին . ուստի և ոչ իսկ 'ի ժամանակի յոբելինի մարթին տնօրինիլ ('ի խոստովանահօրէ ) , թէպէտ և 'ի յոբելեանս շնորհեալ է արձակելոյ յոր և իցէ դիպուածոց վերապահելոց պարագին : Այլ իբր եթէ խոստովանահայր ոք 'ի ժամանակս յոբելինի տնօրինեսցէ , կմ արձակիցէ 'ի նախաճառեալ անկանոնականութեանց , ևս և յայնցանէ՝ որք յառաջ գան 'ի յանցանաց , ոչ միայն տնօրինումն կմ արձակումն նանիր է՝ այլ և ինքն իսկ խոստովանահայրն անկանի ընդ բանադրանօք , որ

պահեալ է պապին . 'ի կան . ծէ . ընդդէմ նոցա՝ որք յափշտակեն զիրաւասութիս պապականս ։ Երկրորդ՝ թէ պապն կարէ տնօրինել զամ և զիւրաքանչիւր անկանոնականութիս եղեալս եթէ 'ի պաշտամունս . և եթէ 'ի յանցանաց . թէ զյայտնիս և թէ զգաղտնիս ։ Երրորդ՝ թէ եպիսկոպոսունք կարող են տնօրինել զամ անկանոնականութիս , որք յառաջ գան 'ի յանցանաց . միայն թէ իցեն գաղտնիք , 'ի բաց առեալ ըզ-ծագեալն 'ի կամաւոր մարդասպանութէ ։ Իսկ այս շատ լիցի յաղագս բանադրանաց և դիպուածոց վերապահելոց պապին ։

Յուշ լիցի , զի եթէ տէր թօշակին սպանցէ զտեսուչն , որդիք նորա և սերունդք նր մինչև ցչորս ազգս լինին անկանոնական . ըստ 4 գլ. Յոհաննու յաղագս ։ Իսկ սակայն պարտ է իմանալ զորդիս զկնի սպանութե ծնեալս ։ Որդ մեկնաբանութի ընկալեալ եղև նաև 'ի ժողովյն սինհոդոսաց ։ Իսկ և սպանօղն , որպէս և այլքն կորուսանեն զիրաւունս հայրենաժառանգս ։

Եթէ հայր ոք անկցի 'ի հերետիկոսութի , որդին ևս լինի անկանոնական . ըստ 4 գլ. Որ մանգամ . և 4 գլ. Սահմանեաց յաղագս հերէտ″ . 'ի Զ ։ Իսկ եթէ հայրն դարձցի անդրէն 'ի հերետիկոսութենէն , անկանոնականութին բարձեալ լինի յորդւոյն և եթ . որպէս երևի 'ի պարզաբանութէ սրբազան ժողովյն ։

Մեծ ապաշխարողահայրն 'ի գաղտնի դիպուածս , և յատենի խղճի մտաց միայն տնօրինէ յանկանոնականութէ ձգելոյ ոը և իցէ յանցանօք կիր պակասութ առ 'ի կարօղ լինելոյ ձեռնադրիլ , կամ 'ի կիր առնուլ զաստիճանս կարգին , և ունել զթօշակս . միայն թէ չիցէ մար-

դատաստանութ՟ի կամաւոր, կամ այլ ինչ ծանր օրինազանցութ՟ի. 'ի կոնդակն. Յուլեա ժող կոնդակագիրս. հատ. Ա. հմ. 95. յօդ. ԺԵ:

---

## Յաղագս դիպուածոց և բանադրանաց, որք պահին եպիսկոպոսին:

Ապաքէն ասաց ծխարանն, * գիտասցէ ընդիպուածս և զբանադրանս վերապահեալս առաքելական գահին, և իւրային եպիսկոպոսի‖, նա: Արդ՝ երեք ազգք են դիպուածոց և բանադրանաց, որք պահին եպիսկոպոսին: Այն՝ որ պահեալ են 'ի գիրս իրաւանց: Այն՝ որ 'ի սահմանադրութ՟իս մասնաւոր կամ թեմական, կամ գաւառական ժողովոց: Այլ են դարձեալ դիպուածք և բանադրանք ինչ՝ զորս արտաքոյ ժողովոյ եպիսկոպոսն պահէ ինքեան. որպէս տեսանի 'ի կղեմեան ա̅. Յաղագս արտաքնաբնեց: Ապա յուշ լիցի, զի բանադրանք վերապահեալք եպիսկոպոսին ըստ հասարակ իրաւանց՝ միշտ կան և մնան, մինչև անմարթ է բառնալ կամ յետս նահանջել ումեք բաց 'ի պապէն: Իսկ պահեալքն 'ի վճիռս թեմական սինոդոսաց, կամ գաւառական ժողովոց՝ ոչ կարեն նանրանալ՝ եթէ ոչ 'ի նոր սինոդոսաց կամ 'ի գաւառական ժողովոց. մինչ զի և 'ի մեռանիլ իսկ եպիսկոպոսին, կամ 'ի հրաժարիլ նորա յեպիսկոպոսութ՟է, որպէս առաջինն՝ նոյնպէս և յետինն 'ի վերապահմանց ունին զնոյն զօրութիւն իւրեանց: Իսկ դիպուածք կամ բանադրանք պահեալք յեպիսկոպոսէն արտաքոյ թեմական ժողովոյն,

'ի մեռանիլ եպիսկոպոսին կամ 'ի հրաժարիլ 'ի Թեմէ իւրմէ՝ ինքնին դադարին առանց յետս կոչելոյ։

'Ի սոյն միտս է բարբառն ընդ այլոց. և 'ի նոյն կարծիս յարի հեղինակ մատենիս տէրձակոս։ Այլ սակայն ասէ բենեդիկ". ԺԴ. 'ի Բնէֆ. ծող. Գր. ԺԳ. Գլ. Է. Եր. 218. լաւ ևս է կարծիք նոցա՝ որք ասեն, թէ յետ լսելի լինելոյ խորհրդակցութե միաբան իւր ժողովոյն, և հրատարակելոյ օրինաց՝ ունի զնոյն մշտնջենաւոր վաւերականութի, զոր ամենեքին ընծայեն ժողովական սահմանադրութեց. վասն զի զօրութին և ազդուութին պարտի առեալ լինել յիշխանութե և յիրաւասութե եպիսկոպոսին. որ մի և նոյն ճանաչի եթէ 'ի ժողովի, և թէ արտաքոյ ժողովոյն 'ի գործ եդեալ։

Եւ սակայն արժան է գիտել. զի որպէս դիպուածք վերապահեալք պապին գրեթէ պահեալ են ողջոյն ընդ բանադրանօք՝ և բանիւ բանադրանաց՝ ըստ վերագոյնդ ասացելոց, սոյնպէս և յարձակիլն բանադրանաց առ 'ի նմանէ որ ունի զիշխանութի՝ մարթի արձակիլ և դիպուածն՝ յինչ և իցէ խոստովանահօրէ։ Այլ ոչ այսպիսի են դիպուածք պահեալք եպիսկոպոսին. որք իբր 'ի բազում չեն ընդ բանադրանօք. յոյր սակս կան միայն վերապահեալ ինքեան. և ոչ կարեն արձակել՝ եթէ ոչ 'ի նմանէ՝ որ ունի զպարտուպատշաճ զիշխանութիւն։

Ապա սկիզբն արարեալ 'ի դիպուածոց վերապահելոց եպիսկոպոսին յիշատակեմք հանդերձ բանադրանօք, են ինունքս այս։

Ա. Որ հարկանէ թեթև իմն զկղերիկոս ոք,

թեպէտ և 'ի հրապարակի, մանաւանդ թէ և ծանր իսկ. եթէ հարկանօղն իցէ արտունացեալ յերաւունս, որպիսի են կանայք, և պատանիք. որոց արգելեալ է յանդիման լինել պապին՝ կարեն արձակիլ յեպիսկոպոսէ. Գլ. Ի՛նհա. Գլ. Որ ինչ ղայոցանէ. Գլ. Թէպէտ և. յղ. վճռ. նշղն:

Բ. Որ զփախուցեալն թափէ յեկեղեցւոյ առանձնական իշխանութե կամ հարկանէ, թշնամանէ, և կամ բռնայ զհանդերձս փախուցելոյն՝ նոյնօրինակ առանձնական իշխանութե, անկանի ընդ նզովիւք՝ որ պահեալ կայ եպիսկոպոսին. կան. ատհծ. 17. խն. Դ. և Բաղադր. որբէաղան ծաղողոյն Մ.ղաթութէ, առ հաւէկկէոսի բաղ. ձախ. հծ. 14:

Գ. Որ հաղորդակցի ընդ բանադրեալս յեպիսկոպոսէ 'ի նոյն 'ի մեղս՝ որոց վասն բանադրեցանն, այն է՝ որ ասի մասնակից 'ի յանցանս յանցաւորութե, անկանի 'ի նզովս պահեալս եպիսկոպոսին. Գլ. Մ.իր ինչ. Գլ. Ի.րէ հարձի. յղ. վճռ. նշղն:

Դ. Որ բանադրեալ է յեպիսկոպոսէ առանձինն վճռով. որ կոչի նշղն 'ի մարդոյ, չկարէ արձակիլ՝ եթէ ո՛չ յեպիսկոպոսէ անտի՝ որ նզովեաց. Լևոն Ժ. 'ի կոնդակն. Մ՝ինչդեռ 'ի Դեշ. յօդ. 7: Կղեմէս Ը. 'ի կոնդ. Որ ինչ մանգամ. յօդ. 9: Կղեմէս Ժ. 'Ի գերագոյնս. յօդ. 7:

Ե. Որ ջանայ տալ վիժել զհոգևորեալ սաղմն. ընդ լինել գործոյն արդեամբք՝ անկանի 'ի բանադրանս պահեալս եպիսկոպոսին: Կոնդակ գրիգ. ԺԴ. որ սկսանի. Մ.րու առաջելական:

Զ. Պարոնայք և այլ ևս իշխանք՝ որք արգելուն զաշխարհիկ հպատակս իւրեանց չմտանել 'ի կղերիկոսութի առանց հրամանի նոցա. և

այն աշխարհիկք, որք խնդրեն և առնուն զհրամանն այնպիսի, անկանին 'ի բանադրանս պահեալս եպիսկոպոսին. 'ի ժող. հռոմ. փետր. 28. գլ. գ̅:

Է̅. Բժիշկք՝ որք գնան յայցելութիւն հիւանդաց յետ երրորդ նուագի առանց ունելոյ գրով վկայութիւն 'ի խոստովանահօրէ, թէ խոստովանեալ իցեն. կամ առանց ընդունելոյ 'ի նմանէ հրաման յապաղելոյ զխոստովանութիւն, անկանին 'ի նզովս պահեալս եպիսկոպոսին. ժող. հռոմս. փետ. 32. գլ. ա. և 'ի յաւելուածն. յօդ. 28. կն. 4:

Ը̅. Ամենեքին նոքա, որոց անկեալ իցէ 'ի նզովս պահեալս պապին. եթէ յանցանքն գաղտնի իցեն՝ մարթին արձակիլ յեպիսկոպոսէ. տրիդ. 'ի նիստ. 24. յղ. վերանորոգ. գլ. Արժան էջէ. միայն թէ այն նզովք չիցեն պահեալ 'ի կոնդակն ընթրեաց. կամ պահեալ 'ի պապէն յետ տրիդենտեան ժողովոյն, զի որում յայտնաբանեաց սրբազան ժողովն սիւնհոդոսաց:

Թ̅. Նոքա ամենեքին՝ որք անկեալ իցեն 'ի նզովս կամ 'ի դիպուածս պահեալս պապին. թէպէտ և պարունակեալ իցեն 'ի կոնդակն ընթրեաց, կամ պահեալք զկնի ժողովոյն, եթէ բանաւոր արգելս ունիցին յանդիման լինելոյ պապին առ 'ի ընդունիլ զարձակումն. և կամ թէ այնպէս պաշարեալ կան 'ի կարիս խոստովանութեան՝ մինչև չունել ժամանակ դիմելոյ և ոչ իսկ գրով առ սրբազան ապաշխարողարանն՝ մարթին արձակիլ յեպիսկոպոսէ. և այս կամ պայմանաւ անդրէն դիմելոյ, իմա զայնցանէ որ ունին զարգելումն առժամանակեայ և եթ, և կամ արձակելով առանց ինչ պարտա-

ւորելոյ յանդիման լինել. իմա զայնոսիկ, որք
ունիցին զմշտնջենաւոր զարգելումն. որպէս է
տեսանել 'ի Գլ. Մ.յն ճանաչէ. Գլ. Կանայ. Գլ.
Թուէպէտո. Գլ. Մ.յնուհէտև. յղ. ձճա. Նչռ. ոմ
և վարդապետք միաբան ուսուցանեն ընդ լու-
գոսի. յղ. առաջ. ձխճ. Է. հատուած. Ծ. յօդ. 2.
հՏ. 218:

---

## Լորհրդական դիպուածք վերապահեալք եպիսկոպոսին 'ի Բեմին Նարնիոյ:

'Ի Թեմական ժողովն, որ եղև յամին 1726. 'ի համար վերապահման եդան դիպուածքդ՝ որ զկնի:

Ա. Սովորական եղեալն, իմա ունակացեալն հայհոյութի ընդդէմ այ, և սբյ կուսին, և սբց: Իւ համարի սովորական լեալ ումեք յորժամ ապաշխարողն է ամ մի ողջոյն հայհոյեալ իցէ բազում անգամ յեօթնեկի:

Բ. Վիժակընկեցութիք, հմայք, կախարդութիք, դիւթութիք, դեղատուութիք, դիւապաշտութիք, կմ դիւակոչութիք. և պարզաբար սնապաշտութիք 'ի գործ եդեալք հանդերձ չարաչար կիրառութ նբ խորհրդոց, և խորհրդական իրաց: Ուր պարտ է 'ի միտ առնուլ. զի եթէ ապաշխարողն ունիցի նաև զմոլորութի մտաց և զչարահաւատութի՝ չմարթի արձակիլ յապաշխարահօրէ անգամ. զի յայնժամ ենթակայն գտանի տեսական հերետիկոս:

Գ. Կամաւոր մարդասպանութի, եթէ յանձին՝ որ սպանանէ, և եթէ 'ի նմա՝ որ հրա-

մայէ, կամ լինի խրատտու, և ձեռնտու. Թէպէտ և մարդասպանութիւն ոչ եկեսցէ զհետ:

Դ. Գուն գործելն 'ի վիժել զսաղմն, եթէ յանձին իւրում, և եթէ յայլում. և այն նաև յառաջ քան զհոգևորիլն, թէ և վիժումն ոչ եկեսցէ զհետ:

Ե. Ընկողմնեցուցանել անպատսպար ընդ ինքեան յանկողնի իւրում զմանուկ տղայ, որոյ չև իցէ լցեալ զամն. և ևս թէպէտ և գտցի պատսպարեալ՝ հեղձուցանելն զմանկունս իւրեանց իւիք ստգտանելի անհոգութբ:

Զ. Անասնագիտութի, կամ սոդոմականութի, ևս և ընդ կնոջ. կամ կնոջ ընդ կնոջ. եթէ գործօղ իցէ ոք՝ և եթէ կրօղ. միայն զի իցէ լրացեալ ըստ օրինակի մերձաւորելոյ առմիմեանս:

Է. Ազգապղծութի յառաջին և յերկրորդ աստիճանի արենակցութե. և յառաջին աստիճանի խնամութե, կամ հոգևոր ազգակցութե. և այդ վերապահումն հայի եթէ առ կին՝ և եթէ առ այր:

Ը. Կուսապղծութի բռնի կամ խաբկանօք. ևս և հանդերձ խոստմամբ պսակի. և այս ևս եթէ 'ի կողմանէ աղջկանն՝ որ բռնաբարեցաւ, և եթէ առն՝ որ բռնաբարեաց զնա:

Թ. Խօսակցութիւք ընդ հաւատաւորս, կամ ընդ այլ օրինորդս, որք կան 'ի դաստիարակութե մենաստանաց. և այս նաև 'ի ձեռն գրոյ, կմ արտաքին յայրատ նշանօք առանց խօսից. ուր միօրինակ պատժապարտ գտանի խօսօղն և խօսակիցն:

Ժ. Մարմնական զուգութի, կմ անհամեստ շօշափմունք և համբոյրք խոստովանահօր ընդ

ապաշխարողս, կ՟մ ծխատէրն ընդ ծուխս իւր․ եթէ 'ի կողմանէ խոստովանահօր, և եթէ 'ի կողմանէ կնոջ՝ որ հաճի․ ապա եթէ մեղապարտ խոստովանահայրն արձակեսցէ զնա, դիպուածն մնայ պահեալ պապին։

ծա․ Սուտ վկայութի՟ յատենի 'ի վնաս այլոց․ կամ յառաջ բերում՟ սուտ գրուածոց յատեան նոյնօրինակ 'ի վնաս այլոց։

ծբ․ Ունել զհանդիսական գրուածս, թուղթս, կամ զաղերսագիրս կոյրս՝ անանուն, կ՟մ կեղծեալ անուամբ․ շարադրել զդոյնպիսի աղերսագիրս․ ո՛չ և թելադիր լինել, կամ պահել առ իւր՝ թէ և ինքն չիցէ հեղինակ․ ձեռն դնել այնպիսի աղերսագրի, կ՟մ հրատարակել զայնպիսի գրուածս հանդերձ վնասու կ՟մ զրկանօք ընկերին։

'Ի մէջ երկոտասան դիպուածոցդ միայն յարդիւնս եկեալ վիժում՟՝ ունի ընդ իւր կից զնզովս․ իսկ այլք չունին։

Կայ և դիպուած ինչ, զոր արտաքոյ թեմական ժողովոյ 'ի վերջոյ եպիսկոպոսն մեր պահեաց ինքեան․ այսինքն՝ թէ կանայք որք շրջին 'ի հրապարակս, կամ գնան յեկեղեցիս մերկ լանջօք, մերկ բազկօք, մերկ թիկամբք․ և ոյք նովին օրինակաւ կան 'ի հրապարակական կրպակս՝ յետ ազդարարութե՟ խոստովանահօր, կամ ծխատէր քահանայի։

Ուլ յաղագս դիպուածոց վերապահելոց եպիսկոպոսի՝ եթէ 'ի գիրս իրաւանց, եթէ 'ի ժողովի, և եթէ արտաքոյ՝ պարտ է 'ի միտ առնուլ։

ա․ Թէ ոչ ումեք մարթ է արձակել առանց

մասնաւոր իշխանութե՟ եպիսկոպոսին՝ թէ և իցէ արտաքնացեալ կրօնաւոր . ապա թէ ոչ՝ նուէրն իւր գործով անկանի 'ի նզովս պահեալս պապին . և արձակումն գլխովին է ունայն . որպէս քաղի 'ի կոնդակէ Կղեմայ Ը . յամին 1602 . ըստ վերադրնդ յիշատակելոյ . ուրանօր տեսանի խափանեալ որ և իցէ առաքելական արտօնութի, տուեալ կամ տանալի յաշխարհական կամ 'ի կրօնաւոր քահանայից . որպէս յայտնաբանեաց ուրբանոս Ը . և սրբազան ժողովն . և զայս պարտ է իմանալ ոչ միայն զդիպուածոց, զոր ինքեան պահէ եպիսկոպոսն, այլ և զնոցանէ՝ որք պահեալ են նմա յիրաւունս, կամ 'ի թեմական և կամ 'ի գաւառական ժողովս . որպ՟ յուշ առնէ կարդինալ Պետրոս հայր . Է . առաքինուն . ժԲ . հմ . 7 . մինչև ցհամար 17 . ուխտապահ Զ . զոր և հաստատեաց Աղեքսանդր Է . դատապարտելով զնախադասութիւն . ԺԶ . * Ո՛ւրացիկ կրօնաւորք կարեն արձակել 'ի դիպուածոց պահելոց եպսի՝ առանց առնլոյ զհրաման յեպիսկոպոսէ անտի ‖ :

Է . Խոստովանահարք, որք արտաքնացեալ իցեն յառաքելական աթոռոյ վասն արձակելոյ 'ի դիպուածոց պահելոց պապին, ոչ կարեն արձակել 'ի վերապահելոց եպիսկոպոսին, եթէ չիցէ այդ բացայայտակի նշանակեալ յարտօնութե՟ անդ . ըստ որում յայտ առնէ Կղեմէս Ժ . 'ի սահմանք" . գերագոյն" . յդ . 7 :

Զ . Եթէ ապաշխարող ոք երթիցէ յօտար թեմ՝ առ ընդունել զարձակումն 'ի մեղաց ինչ վերապահելոց իւրումն եպիսկոպոսի, իբր զի չկարէր արձակել յիւրում թեմի, այն արձա-

կումն լինի նանիր, և ինքն ծանուցես մեղանչէ, որպ̃ յայտնաբանեաց 'ի նախաձառեալ սահմանադրութեն Կղեմէս Գ. 'ի նոյն յօդ:

Ե. 'Ի կէտ կամ 'ի վտանգ մահու դադարի ամենայն վերապահութի. և իւրաքանչիւր քահանայ կարօղ է արձակել յամ վերապահելոց պապին, և եպիսկոպոսին՝ առանց ինչ պարտաւոր առնելոյ զապաշխարօղն յանդիման լինելոյ պապին, կամ եպիսկոպոսին յառողջանալ իւրում: Ասացաւ 'ի վերապահեալ դիպուածոց. այլ ոչ եթէ 'ի վերապահեալ բանադրանաց. յորոց թէպէտ և կարէ որ և իցէ քահանայ արձակել 'ի կէտ կամ 'ի վտանգ մահու, բայց պարտի յառաջ քան զարձակումն պարտաւորել զապաշխարօղն գէթ երդմամբ. զի եթէ առողջասցի՝ յանդիման լիցի պապին կամ եպիսկոպոսին, որոց անկ իցեն վերապահեալ բանադրանք. մինչ զի յառողջանալ իւրում եթէ չլինիցի յանդիման՝ անկանի վերստին 'ի նոյն 'ի բանադրանս, յորմէ արձակեալն էր 'ի կէտ կամ 'ի վտանգի մահուն. որպէս ուսնիս տեսանել 'ի Գլ. Օայնուհէհ որբ. Լձա. Նշմ. ԽԷ: Իսկ եթէ խոստովանահայրն զանց արասցէ պահանջել զերդումն՝ մեղանչէ մահուչափ: Որովհետև ծանրապէս պարտաւորեալ է առ այդ 'ի Ո՛բ կանոնաց. Գլ. Այառահեաւ. Գլ. Այն Ճանաչի. Գլ. Որ ինչ շրջայանէ. Լձա. Նշմ: Այսչափ ինչ վս դիպուածոց և բանադրանաց վերապահելոց հերիքասցի:

### Յաղագս խոստովանահօր՝ երբ կոչի 'ի լսել զխոստովանութիւն :

հդ. Եւ արդ՝ զհետ երթալով կարգի ծիսարանին, որ ասէ : * Հուսկ յետոյ զամենայն վարդապետութի խորհրդոյս ուղիղ ճանաչել փոյթ կալցի, և զայլ ինչ իրս կարևորս առ ուղիղ մատակարարութի նոցին. և այնպէս յառաջ խաղասցէ 'ի պաշտամանս յայսմիկ, որպէս զինի նշանակի ‖. պարտ է գիտել. զի վարդապետութին կարևոր առ 'ի գիտել զայսու խորհրդով՝ գտանի 'ի տրիդենտեան ժողովն. 'ի նիստ. 14. ուր վարդապետական գլխովք. յորս յարին և հնգետասան կանոնք, զորս իւրաքանչիւր խոստովանահայրք պարտին ընթեռնուլ և ուսանել : Իսկ և յաղագս մատակարարութե՝ մարթ է ընթեռնուլ զհռովմէական հրահանգն. գլ. ա. յղ. խորհրդոյ : Այլ մեք զհետ երթիցուք կարգի ծիսարանին՝ որ ունի այսպէս. * Քահանայն կոչեցեալ 'ի լսել զխոստովանութիւն, զիւրապատրաստ և յօժարափոյթ զինքն ընծայեցուսցէ. և մինչև մատուցեալ 'ի լսել, եթէ ժամանակն ներեսցէ, ջերմ աղօթիւք խնդրեսցէ զածային օգնականութի՝ առ ուղղութե և սրբութե կատարել զայս պաշտօն ‖ : 'Ի վերայ բանիս այսորիկ խնդրի, արդեօք ած խոստովանահայր յորժամ կոչի լսել զխոստովանութի, ընդ մեղօք պարտաւորի գնալ : Եւ ես՝ նախ քան զնստիլն 'ի խոստովանութի, պարտական իցէ դիմել առ ած ըստ նախագրեալ բանի ծիսարանին :

դ. Կարծիք մեծամեծ վարդապետաց այն է,

թէ երբ ապաշխարողն պարտական է խոստովանիլ, և թախանձ արկանէ խոստովանահօր, եթէ չիցէ սա ժողովրդապետ՝ մեղանչէ ընդդէմ սիրոյ ընկերին՝ թէ չլուիցէ զխոստովանութիւն նորա, երբ կարող է լսել առանց ինչ իւրոյ ծանր տառապանաց. իսկ եթէ իցէ ժողովրդապետ՝ մեղանչէ մահուչափ ընդդէմ արդարութեան: Տես զկամպիոն. Տո. Ա. Գլ. Է. ՀՏ. 10:

Ուլ վասն բանի ազօթից յառաջ քան զխոստովանութիւն՝ շատ է զմիտս 'ի վեր ամբառնալ առ Ած, և խնդրել զլոյս առ բարւոք պաշտել զպաշտօն իւր, և առ 'ի չքեռնաւորել զխիղճ մտաց իւրոց կամ ապաշխարողին: Ընթերցիր զաղդարար խրատ ՚նոյն կարոլոսի. յօդ. 10. ուրանօր տեսցես թէ քանի պէտս ունի խոստովանահայրն յանձն առնել զանձն ոչ՝ յառաջ քան զնստիլ իւր 'ի խոստովանութիւն, ուսուցանելով միանգամայն զհամառօտ և զջերմեռանդն ազօթս ինչ առ այդ:

հց. Սահմանէ և ևս ծիսարանն: * Յեկեղեցւոջ, և ո՛չ եթէ յառանձին տունս լուիցէ զխոստովանութիւն, եթէ ոչ առ բանաւոր պատճառի՝ որ ընդ առաջ եկանիցէ. բայց և զայդ ջանասցի առնել 'ի վայելուչ և յերևելի վայրի ||: Որդ՝ երբ արդեօք մարթ իցէ խոստովանահօր մատակարարել զայդ խորհուրդ 'ի տունս առանձնականս, և զիա՛րդ ունիցի վարիլ յայնժամ:

դ. 'Ի շրջաբերական նամակի սրբազան ժողովոյն, որ առ եպիսկոպոսունս և առ կանոնականս: 'ի 6. յունվարի. 1687. արգելեալ լինի խոստովանահարց՝ եթէ երիցանց և եթէ

կրօնաւորաց չլսել զխոստովանութիւնս 'ի տունս առանձնականս. բայց միայն 'ի գիտուածի հիւանդութեան, երբ անկարօղ են ապաշխարօղք գնալ յեկեղեցիս. և յայնժամ պարտին առնել զայն՝ ամենայն զգուշութբ հանդերձ: Եթէ հիւանդն իցէ կին, 'ի խոստովանեցուցանել անդ զնա՝ չէ՛ պարտ ունել զդուռն սենեկին փակեալ. այլ այնպէս՝ զի խոստովանահայրն լինիցի տեսանելի, բայց բանք նորա մի՛ լիցին լսելի: Պարտի և ես յիմ նուազի գրով տալ վկայութի՝ թէ խոստովանեցոյց զհիւանդ կին կամ զայր. ապա թէ ոչ՝ նոյնին իսկ գործով անկանի 'ի կախումն 'ի լսելոյ զխոստովանութի՝ պահեալ եպիսկոպոսին. ժողով. հռովմ. 'ի յաւելուածն. յօդ. 28. հն. 5: Սան այսօրին 'ի հրամանագիրս, որք 'ի Թեմի աստ շնորհին խոստովանահարց՝ ընթերցեալ լինի բանս այս. * Յորժամ լսես զխոստովանութիւնս հիւանդաց, 'ի նմին իսկ աւուր պարտիս ստուգութբ տեղեկացուցանել ժողովրդապետի նոցա ձեռագրով քով, ըստ կարգաւորութեան ժողովոյն հռովմայ, և մերս ժողովոյ, ընդ պատժով կախման 'ի լսելոյ զխոստովանութի՝ յոր լինի անկանիլ նովին իսկ գործով. ևն:

հջ. Յաւելու ծիսարանն. * Անիցի յեկեղեցւոջ զխոստովանարան, յորում նստեալ լուիցէ զնը խոստովանութիւնս. և այն խոստովանարան իցէ զետեղեալ 'ի բաց և յերևելի և յանկաւոր վայրի. վանդակ ունելով ծակոտկէն ընդ ապաշխարօղն և ընդ քահանայն ‖: 'Ի վերայ այսր կամ է ինձ գիտել, թէ կայցէ՞ ինչ մասնաւոր կարգաւորութի սրբազան ժողովոյն:

գ. Կայ՛ գտանի և միւս շրջաբերական գիր

ժողովոյն սրբաքննութեան տուեալ 'ի 14. դեկտ. 1694. յորում պատուիրի եպիսկոպոսաց՝ ընդ ծանր պատժով արգելուլ խոստովանահարց չլսել զխոստովանութիւն կանանց՝ բայց միայն 'ի խոստովանարանի. և մի 'ի դիմաց կուսէ նորին, այլ 'ի կողմանց անտի ուր իցեն ծակոտկէն վանդակք. միանգամայն և խոստովանարանն իցէ՝ 'ի հրապարակական տեղւոջ տեսանելի ամենեցուն: Նմին իրի 'ի հրամանագիրս խոստովանահարց 'ի Թեմի աստ՝ գրեալ կայ. *Զխոստովանութիւն կանանց մի՛ իշխեսցէ լսել արտաքոյ վանդակի, կամ անդ յառաջ քան զծագել արեւու, և կամ զկնի մտանելոյ արեգական ||: Եւ զայս պարտին պահել ամենայն խոստովանահարք այսր Թեմի, նաև 'ի վերայ պատանեկաց՝ որոց չև իցէ լցեալ զամ 18. որպէս հաստատէ մասնաւորապէս ոք ժողովն՝ 'ի Բ ֆոռլգիեան ժող. պաբդինադիսջեանց: Կայ և վճիռ մի ոք ժողովոյն 'ի պադուայեան. 21. յունվ. 1620: զի ասէ: *Չէ պարտ լսել առանց հարկի զկանանց խոստովանութիւնս 'ի տարաժամիլ աւուրն, և յառաջ քան զարշալոյս ||:

հզ. Ըստ ծիսարանն. *'Ի կիր արկցէ զվերմուշտակ, և զուրար մանուշակագոյն, որպէս և ժամանակն բերցէ, կամ սովորութիւն գունոց ||: Յորոյ վերայ թուի ինձ, թէ 'ի Թեմի աստ իցեն ինչ ինչ բանք յայտարարականք:

ղ. 'Ի ժողովն կաստեղեան, որ հաստատեալն է 'ի յաջորդ եպիսկոպոսաց առ հասարակ. գլխ. 33. հՏ. 8. զայսօրինակ կարգեալ կայ. *Վերմուշտակօք, և մանուշակագոյն ուրարաւ զգեստաւորեալ լուիցեն քահանայք զխոստովանութիւնս յեկեղեցւոջ: Իսկ կրօնաւորք փի-

րնաւ իւրեանց՝ զոր 'ի կէր առնուն 'ի դասի 'ի պաշտել զամենայն ժամերգութիւն||: Քանզի և յիրաւի անվայել իմն է տեսանել զոք, զի մատակարարէ զայդ խորհուրդ առանց օրինաւոր զգեստուց. և երբեմն կրճատ զգեստուք անգամ:

կց. Յաւելու ծխարանն. *Ապաշխարողին՝ եթէ պէտս ունիցի, լիցի ազդարարութի, զի վայելչական խոնարհութբ սրտի, և զգեստովն մաքրիցէ, և ծնրադրութբ՝ խաչակնքեսցէ զինքն||. և պարզաբար կամի. զի ազդեսցի նմա գալ առ խոստովանութի ներքին և արտաքին խոնարհութբ: Ի վերայ ներքին խոնարհութե ապաքէն եղեն բանք 'ի վեր անդր. որպէս և 'ի ստորև ասասցուք զներքին տրամադրութե՝ զոր պարտի ունել: Այլ 'ի կարգի խոնարհութե զգեստուցն՝ զիարդ ունիցի արդեօք խոստովանահայրն ուշ ունել 'ի վերայ ապաշխարողաց:

դ. Առ այդ հարցուածոյ կարծեմ այլ պատասխանի գեղեցիկ՝ քան զոր տայ Տէր կարոլոս. 'ի յօդ. 12. ուր խրատելով զխոստովանահայրս՝ ասէ: *Ո՛ր ոք 'ի խոստովանահարց լուիցէ զխոստովանութի կանանց՝ որ գան 'ի խոստովանութի սնոտի պաճուճանօք, սնգուրեալ, գեղազարդեալ, ոսկեճամուկ զգեստուք, ասղնեգործ նկարուք և այլ ևս տարապայման զարդուք. այլ զի ունիցին հանդերձս պարկեշտս, և պարզս. և զգլուխս իւրեանց վայելուչ սքօղեալ. կամ ո՛չ յայտ թափանցիկ քօղով, կամ պաստառօք յասուոյ, կամ փակեղամբ 'ի համեստ գունոյ. որպէս և վայել է յարգութե նբ խորհրդոյն. և ճանաչողութեն, և զզջման,

որովք ունին գնալ և յանդիման լինել ատենի և դատաստանի ՏՆ. և իբրև յանցաւոր խնդրել զողորմութի, և զթողութի, ևն ||։ Որ են բանք բաւականք 'ի վառել զնախանձայուզութի խոստովանահարց, չներել երբէք կանանց մտանել 'ի խոստովանութի ունայնասէր և անվայել զարդուք. որպէս և կարի յաճախեալ տեսանի հանդերձ զայթակղութեբ, առ պակասութե նախանձաւոր ոգւոյ խոստովանահարց, որք դատանին * Իբր չունք համրացեալք՝ որք ոչ կարիցեն հաչել ||. և 'ի բաց մերժել զայնպիսի ապաշխարողս՝ որք չունին զարտաքին ինչ նշանակ ապաշխարութե։

---

### Յաղագս զննութեան՝ զոր պարտի խոստովանահայրն առնել առ ապաշխարողն՝ նախքան զսկսանել զխոստովանութի։

հը. Յառաջ խաղայ ծիսարանն՝ ասելով. * Խոստովանահայրն՝ եթէ չէ՛ այլուստ գիտակ, հարցցէ զվիճակ նորա, եթէ ե՞րբ իցէ խոստովանեալ. և թէ կատարեա՞լ իցէ զապաշխարանս. և թէ օրինօք և անթերի խոստովանեա՞լ իցէ. և միթէ քաջ քննեա՞լ իցէ՝ որպէս պարտն է զխիղճ մտաց իւրոց, ևն ||։ Իւ զի այս այսպէս, ապա մեկն ասա ինձ զայդմ ամենայնէ. այսինքն զորո՛ց իրաց ունի հարցաքննել խոստովանահայրն զապաշխարողն յառաջ քան զսկսանել նորա զխոստովանութի իւր։

դ. Ընդ իրս հրամայէ ծիսարանն առնել խոստովանահօր ընդ ապաշխարողն նախ քան զխոստովանութիւն։

Նախ՝ զի հարցանիցէ զվիճակ նորին. (եթէ չիցէ այդ արդէն ծանուցեալ խոստովանահօր). Ի՞ արդեօք եկեղեցակա՞ն իցէ, թէ աշխարհական. հա՞յր իցէ, թէ որդի տանուտեառն. ապա՞տ իցէ, թէ ամուսնացեալ. և այս վասն այսորիկ՝ զի կարօղ լիցի հարցաքննել զնա 'ի վ՟ր պարտաւորութեանց ընդ վիճակին ն՟ր, եթէ ապաշխարողն պակասեալ իցէ յայսոսիկ, կամ ո՛չ ամբաստանեսցէ զանձն 'ի վերայ այսոցիկ: Երկրորդ՝ պարտի հարցանել, քանի՞ ժամանակք են յորմէ հետէ չիցէ խոստովանեալ, առ 'ի գիտել զտեղեկ անհոգութ՟ն նորա 'ի մեղս. և առ 'ի հասու լինել արդեօք լցեա՞լ իցէ զպատուիրան եկեղեցւոյ վասն խոստովանելոյ գոնէ յամին միանգամ. որպէս և 'ի ներհական դիպուածի, առ 'ի տեսանել թէ անկեա՞լ իցէ արդեօք 'ի պահեալ բանադրանս ինչ, ըստ որում 'ի բազում թեմս սովոր է 'ի վերայ դնել նոցա՝ որք ոչ խոստովանին 'ի ժամանակս սահմանեալս յեկեղեցւոյ: Երրորդ՝ պարտի հարցանել. արդեօք վճարեա՞լ իցէ զապաշխարանս եդեալս յետ վերջին խոստովանութ՟ե. քանզի որ կարօղ էր կատարել զապաշխարանս, և մեղադրելի յանցանօք չիցէ վճարեալ, եթէ սովորական՝ իցէ նմա թողուլ զապաշխարանս՝ անմարթ է ընդունիլ զյանցանսն 'ի խորհուրդ ապաշխարութ՟ե՝ մինչև է կատարեալ զառաջինն. մանաւանդ երբ դիւրաւ և 'ի սուղ ժամանակի կարէ կատարել: Չորրորդ՝ պարտ է հարցանել. արդեօք զայլ խոստովանութ՟իս արարեա՞լ իցէ կատարեալ ըստ տեսական և նիւթական ամբողջութեան. ապա թէ ոչ՝ չէ պարտ ը՟ունել զնա 'ի խորհուրդ, այլ յորդոր

լինել նմա առնել զընդհանրական խոստովանութիւն, յոր պարտաւորեալ իսկ է յայնմ վիճակի։ Հինգերորդ 'ի վախճանի պարտ է հարցանել, արդեօք արարեա՞լ իցէ զքննութիւն խղճի մտաց. ապա թէ ոչ՝ պարտ է 'ի բաց արձակել զնա՝ զի չէ՛ տրամադրեալ, մանաւանդ թէ 'ի վտանգի կայ 'ի բաց ձգելոյ զմեղս ինչ. և զայս պարտ է իմանալ՝ երբ խոստովանահայրն չունիցի զառիթ ստիպողական անձամբ քննելոյ զապաշխարողն՝ որպէս հանդիպի յանձինս անուսս, խղճահարս, չինականս, և 'ի մանկունս։

կդ. Ի՞լ անդրէն յուշ առնէ ծխարանն։ Եւ եթէ ապաշխարողն կապեալ իցէ բանադրանօք իւիք կամ վերապահեալ դիպուածով, յորմէ ինքն չկարէ արձակել, ոչ տացէ զարձակումն, մինչև է առեալ զիշխանութիւն 'ի մեծաւորէ Ն։ Վասն որոյ ասա ինձ. արդեօք խոստովանահայրն, որ չունիցի զիշխանութիւն արձակելոյ 'ի դիպուածոց ինչ և 'ի բանադրանաց, և յայլմէ կողմանէ մարթ իցէ լինել գայթակղութիւն, եթէ ապաշխարողն 'ի բաց արձակեսցի առանց արձակման. յայդ դիպուած մա՞րթ իցէ արձակել զնա անուղղակի 'ի վերապահեալ դիպուածոց և 'ի բանադրանաց, և ուղղակի 'ի դիպուածոց՝ որ չիցեն վերապահեալ։

դ. Զայս խնդիր մանրամասն քննեալ երևելի վարդապետք պաշտպանեն և ուսուցանեն այսպէս. եթէ հաւաստի իցէ լինել գայթակղութեան, կամ վատահամբաւութեան ապաշխարողին յոյժ արձակիլ նորա, կարող է՝ մանաւանդ թէ պարտական է խոստովանահայրն արձակել զնա անուղղակի 'ի վերապահեալ դիպուածոց՝ պարտաւորելով զնա 'ի դէպ պահու յանդիման

լինել նմա՝ որ ունիցի զիշխանութիւն արձակելոյ ուղղակի ՚ի վերապահելոյ. զորօրինակ՝ ՚ի բազմախառն աւուր գայ մայրն ՚ի խոստովանութի, բերելով և զաղջիկն ը̄ իւր ՚ի խոստովանիլ և ՚ի հաղորդիլ. և ահա աղջիկն անկեալ ՚ի դիպուած վերապահեալ հանդերձ բանադրանօք, վասն զուն գործելոյ վիժել զհոգևորեալ սաղմն, զոր և իրօք է վիժեալ: Արդ՝ ասեն. Թէպէտև խոստովանահայրն չունիցի զիշխանութիւն արձակելոյ յասացեալդ դիպուածոյ, բայց կարէ և պարտի արձակել զնա ուղղակի ՚ի մեղաց՝ որ չիցեն պահեալ. և անուղղակի ՚ի մեղաց վիժմանն վերապահելոյ, միայն թէ պարտս ՚ի վերայ դնելով նմա՝ յիւրում ժամանակի յանդիման լինել այնմ, որ կարող իցէ արձակել զնա ուղղակի. և նոյնպէս տալ նմա հաղորդիլ, առ ՚ի չտալ զգայթակղութիւն, կամ առ ՚ի չերևելոյ զվատահամբաւութիւն անձին նորա: Իսկ այլք ՚ի վարդապետաց յուշ ածելով զբանս կոնդակին կղեմայ ը̄. յորում արգելեալ լինի արձակել զվերապահեալ մեղս ը̄ նզովիւք փոււէյաւ կծառոյ՝ իբրև պահեալ պապին հանդերձ նանրութը արձակմանն, յոչ եփփ. առըէ նաև հարկաւորաբէ կամ արգելման, բայց միայն ՚ի կէփ նահատան ասեն. անմարթ է ջատագովել զարձակումն անուղղակի. իբր հնարեալ ՚ի ցրումն վերապահեալ դիպուածոց՝ արձակելով սատուգիւ ՚ի մեղաց՝ յորոց չկարէ արձակել խոստովանահայրն, որով լինի ասեն սահիլ ՚ի վերապահեալ բանադրանս. և խորհուրդն գըլխովին նանրանայ: Տե՛ս զկարդինալ պռանդ, տե լաւրեա. ՚ի ձառ. յղ. աղղ. ՚ի կէծ. ծի. յօդ. 12. հՏ. 402:

Զայս վճիռ տեսեալ է իմ ընկալեալ 'ի սըր-բազան ապաշխարողարանէ, որ երբեմն յայս կարծիս գտաւ մտեալ, թէ խոստովանահայրն որ արձակիցէ անուղղակի 'ի վերապահեալ դիպուածոց առ 'ի խորշել 'ի գայթակղութենէ, կամ յաղագս այլոյ վախճանի կամ դժուարութեան, կամ կարե-ւորութեան, անկանի 'ի բանադրանս եղեալս 'ի կղեմեան կոնդակի, այս եթէ մատուցանիցէ և զպատարագ՝ անկանի յանկանոնականութիւն։ Այլ ասեմ, թէ յորժամ 'ի չհաղորդիլ ապաշ-խարողին՝ հաւաստեաւ կայցէ գայթակղութիւն և վտանգ վատահամբաւութեան, պարտի խոս-տովանահայրն ջանալ՝ զի նա արասցէ զկատար-եալ ներգործութիւն զղջման. և այս պարտա-ւորել զնա դառնալ առ ինքն. կամ յանդիման լինել այնմ, որ ունիցի զիշխանութիւն արձակե-լոյ և հաղորդելոյ զնա. բայց առանց իրիք արձակման. որով խոստովանահայրն ազատ կա-ցուցանէ զանձն՝ միանգամայն և զապաշխա-րողն. իբր զի խոստովանահայրն ոչ դնէ զինքն 'ի վտանգ նանրացուցանելոյ զխորհուրդն, և անկանելոյ 'ի բանադրանս պահեալս պապին։ Իսկ ապաշխարողն կամ առնէ զներգործութիւն կատարեալ զղջման, կամ կարծէ առնել։ Եթէ արասցէ՝ կարէ հաղորդիլ. որովհետև գոյ տրա-մադրութիւն, այլ չիք աւատութիւն խոստովանա-հօր՝ որ արձակիցէ զնա. և միայն պարտաւոր գտանի անյապաղ խոստովանիլ նմա՝ որ ունիցի զիշխանութիւն արձակելոյ։ Իսկ եթէ չիցէ ա-րարեալ զկատարեալ զղջումն, այլ կարծիցէ՝ թէ արար, յայն դիպուած թէպէտև չընդու-նիցի զշնորհս խորհրդոյ 'ը հաղորդութեան՝ սա-կայն և ոչ իսկ սրբապղծութիւն առնէ։ Յայսր

ամենայնի վերայ՝ արկանեմ զիմ կարծիս ընդ կարծեօք հմտագունից, և բանիբուն գիտնաւորաց 'ի վերայ այսր նիւթոյ, որ որչափ յաճախեալ է՝ նոյնչափ և հակառակութիւն կրէ երկուստեք։

կդ. Յառաջէ և ես ծիսարանն ասելով. * Իսկ եթէ խոստովանահայրն ըստ որպիսութեան անձանց խելամուտ լիցի, թէ ապաշխարողն անգիտանայ զսկզբունս քրիստոնէական հաւատոյ, եթէ ներէ ժամանակն՝ հրահանգեսցէ զնա 'ի վերայ մասանց հաւատոյ, և այլոց իրաց կարևորաց 'ի գիտել 'ի պէտս փրկութեան, և ուղղեսցէ զգիտութիւն նորա. և խրատեսցէ՝ զի յայնմ հետէ և անդր ես լաւագոյն ուսցի‖։ Արդ՝ ասա ինձ. արդեօք որպէս ունիցի խոստովանահայրն վարիլ ընդ ապաշխարողս՝ որ ոչ գիտեն զսկզբունս հաւատոյ. և թէ պարտակա՞ն իցէ միշտ հարցաքննել զիրացս։

ղ. Պատասխանեմ հարկաւ պարտի հարցաքննել. գիտե՞ն արդեօք զխորհուրդս հաւատոյս մերոյ. իմա՛ զնոսա միայն՝ յորոց վերայ հաւանական և խոհեմ կարծիք լինի, թէ ոչ գիտիցեն. որպիսիք ոմանք են շինականք, մանկունք, և այնք 'ի յարբունս հասելոց՝ որք վարեն կեանս անհոգս ընդ փրկութիւն հոգւոյ իւրեանց։ Այլ այս հաւաստի է, թէ այսպիսի մեղադրելի տգիտութիւնք գտանին երբեմն և յանձինս բարեկիրթս, առաւել 'ի կանայս. սորին վասն լաւ է խոստովանահօր ընդհանրապէս հարցմամբ իւիք զչափ առնուլ այսպիսեաց, թէ գիտիցե՞ն արդեօք զորս պարտին գիտել։

Ուրանօր պիտի զանազանել զայն ինչ՝ զոր պարտի ոք գիտել առ 'ի հաւատալ, և զայն՝

զոր պարտ ի գիտել առ 'ի գործել ։ Իմ քրիստոնէից պարտ է հաւատալ և գիտել զհանգանակն առաքելոյ, սակայն այսու խորութ̃ե · զի յերկոտասան մասունս անդ՝ են որ հաւատալի են հարկաւորութ̃ միջնորդի, և են որ հարկաւորութ̃ պատուիրանի ։

Հարկաւորութ̃ միջնորդի՝ պարտ է գիտել և հաւատալ զմիութ̃ի Ա̃յ, զերրորդութ̃ անձանց, զմարդեղութ̃ին, զմահն և զյարութ̃ին Քի̃ փրկչին մերոյ · և զլինելն Ա̃յ պարգևատու բարեաց, և պատուհասող չարաց ։ Այն իրի որ ոչն գիտաց, ուստի և ոչ հաւատաց զայսոսիկ երիս խորհուրդս՝ թէպէտև առանց անձին յանցանաց, զամենայն խոստովանութիւն իւր իսպառ ընդունայն արար · և եթէ նախ ոչ ուսանիցի ըստ գոյացութ̃ն, չէ ընդունակ արձակման · և պարտական իսկ է առնել զընդհանրական խոստովանութ̃ի վասն այնր ժամանակի ողջոյն՝ յորում խոստովանեալ իցէ առանց գիտելոյ զնախագրեալ խորհուրդս · թէպէտև անմեղադրելի օրինակաւ ։ Այլ անհնարին երևի, թէ քրիստոնեայ ոք կեցեալ ընդ ուղղափառս ունիցի զայնպիսի տգիտութ̃ի անմեղադրելի · սակայն ենթադրեալ թէ գտցի, յետ խոստովանութ̃ե յառաջքան զարձակումն պարտի խոստովանահայրն հրահանգել զնա 'ի վերայ յիշատակեալ երից մասանց, ըստ ասելոյ ծիսարանին · * Եթէ ժամանակն ներեսցէ, խոստովանահայրն հրահանգեսցէ զնա համառօտիւ 'ի վերայ մասանց հաւատոյ ‖ ։ Ապա եթէ չգտցէ ժամանակ՝ պարտի առանց լսելոյ զխոստովանութ̃ն ամենայնիւ 'ի բաց յուղարկել զնա իբրև անընդունակ արձակման · իրաւբեկ լինե-

լով, զի թէ տգիտութիւն նորա իցէ մեղադրելի ամենայն խոստովանութիւնք նորա եղեալ են սեղանակապտութիւնք ։ Աստանօր ունի զտեղի դատապարտեալն Իննովկենտիոսի ժա. զնախադասութիւն կդ. զայն՝ թէ ։ * Արձակման ընդունակ է մարդ, թէև ունիցի զտգիտութիւն խորհրդոց հաւատոյ. և այն՝ թէև հանդերձ անհօգութեամբ, եւս և մեղադրելեաւ, անգիտանայցէ զխորհուրդ ամենասուրբ երրորդութեան, և զմարդեղութեան տեառն մերոյ յիսուսի քրիստոսի ‖ ։

Հարկաւորութեան պատուիրանին՝ պարտ է հաւատալ և գիտել զայլ ամենայն մասունս հանգանակին ։ Վասն որոյ որ ո՛չն գիտէ զհաւատամքն՝ պարտ է՛ ցնա հարցանել. արդեօք խրատեա՞լ իցէ 'ի խոստովանահօրէ՝ զի ուսցի. եթէ սոուգիւ չիցէ երբէք խրատեալ, մարթ է արձակել զնա յառաջնումն նուագի. միայն թէ գիտիցէ զերիս մասունս կարևորս հարկաւորութեան միջնորդի. և խոստասցի անյապաղ ուսանել զայլսն ։ Իսկ եթէ խրատեալ իցէ, յայնժամ թէպէտև գիտիցէ զհարկաւոր գիտելիս հարկաւորութեան միջնորդի, յանգիտանալն զայլս՝ պարտ է 'ի կախ թողուլ զարձակումն, մինչև ուսցի և զայլսն ։ Ապա եթէ նոյնն մեղադրելի տգիտութեամբ խոստովանեալ իցէ յանցեալ կեանս՝ հարկ է պարտաւորել զնա՝ առնել և զխոստովանութիւն ընդհանրական. այնու՝ զի խոստովանութիւնք նորա առաջինք լեալ են սեղանակապտութիւնք ։ Իսկ և պարտ է հարցանել, թէ որչափ ժամանակք են, յորմէ հետէ անգիտանայ զհաւատամքն. որ է յանցանք ինչ ընդդէմ բացասական պատուիրանին, որ պարտաւորէ միշտ առ միշտ. և թէև զմի ևեթ զայն գործեալ

իցէ մեզ՝ տակաւին պարտաւորի ասել զպարագայն ժամանակին՝ իբր կարի ծանրացուցիչ այդր մեղայ։ Պա՛րտ է հարցանել նաեւ զտորասական պատուիրանէ, որ պարտաւորէ առ ՚ի ուսանել. եւ տալ նմա ամբաստան լինել զանձնէ վասն իւրաքանչիւր նուագի՝ յորում ունէր ՚ի ձեռին զկարելի առիթս ուսանելոյ եւ ո՛չ ուսաւ։ Յուսկ յետոյ պարտ է տալ նմա ամբաստանել զանձնէ վասն բովանդակ այնր ժամանակի, յորում զանց արար առնել զներգործութիւն հաւատոյ, զորս պարտական էր առնել եւ ո՛չ արար ՚ի սակս տգիտութեան իւրոյ։

Իսկ զորս պարտական եմք գիտել առ ՚ի գործել՝ են պատուիրանք Այ եւ եկեղեցւոյ. եւ այն ամենայն որ ինչ միանգամ հայի առ սեփհական վիճակ եկեղեցական, կամ աշխարհական. ամուսնական, եւ աղատական, եւ այլն։ Վասն որոյ որ անգէտ գտանի ասացելոցս, եթէ յայլում նուագի ազդ եղեալ իցէ նմա ուսանել՝ պարտ է ժխտել զարձակումն, մինչեւ ուսանիցի. եւ ապա տալ նմա ամբաստան լինել (որպէս ՚ի վեր անդր) վասն լուծանելոյ եթէ զհաւատական՝ եւ եթէ զտորասական պատուիրանս։ Իսկ եթէ երբէք չիցէ խրատեալ, յայնժամ եթէ խոստանայ ուսանել վաղ ընդ փոյթ՝ մարթ է արձակել զնա յառաջնումն նուագի. միայն թէ եւ խոստովանահայրն քաջ միտ դիցէ բարւոք պաշտել զպաշտօն իւր։

### Յաղագս պարտաւորութեան օգնելոյ ապաշխարողին առ ամբողջ խոստովանութիւն ըստ թուոյ, ըստ տեսակի, և ըստ հանգամանաց մեղաց։

հդ. Ասէ ծիսարանն. *Արդ՝ ասասցէ ապաշխարողն զհանրական բան խոստովանութե, զխոստովանելին առաջի այ ԼԱ գրաբառ կամ աշխարհաբառ, և կամ զոնէ բարբառեսցի այսչափ ինչ։ Խոստովանիմ այ ամենակալի, և քեզ հայր. և սկսցի խոստովան լինել զմեղս իւր. որում օգնեսցէ՝ որչափ և պէտքն պահանջիցեն՝ խոստովանահայրն. այլ ոչ յանդիմանեսցէ զապաշխարողն, մինչև է կատարեալ զխոստովանութիւն. և ոչ ընդհատեսցէ, բայց յորժամ պիտոյ լինիցի առ ի լաւ ևս իմանալոյ զինչ, միանգամայն տացէ նմա վստահութիւն, և մարդասիրապէս յուշ արասցէ զամենայն. որպէս զի զմեղս իւր խոստովանեսցի օրինօք և անթերի, ՚ի բաց փարատելով յանձնէ զյիմարականն զայն ամօթ ոմանց զառ ՚ի դիւէն թելադրեալ, որով հարթուցեալ չհամարձակին խոստովանել զմեղս ||։

ղ. Պարտի խոստովանահայրն քաջ որոշել զայն բան ծիսարանին՝ որ ասէ. Ոչ խոստովանահայրն մի յանդիմանեսցէ՝ եթէ ոչ ՚ի վախճան խոստովանութե. յորում մասին բազմօք պակասեն, ոմանք ՚ի խոստովանահարց, որք ընդ լսելն յապաշխարողաց զմեղս ինչ ծանր, նոյնժամայն սկսանին խստիւ կշտամբել զնոսա. որով բազում անգամ առիթ տան լռելոյ զմեղս մեծամեծս. նմին իրի պարտի խոստովանահայրն սի-

րով ունելն զնել, և թողուլ ասել նմա առանց ընդհատելոյ. և միայն 'ի ստիպել հարկին հարցաքննել զպարագայից ինչ կ՟ զթուոյ մեղաց, որպէս և առ 'ի ձեռնտու լինել նմա խոստովանել զմեղս իւր ամբողջ. ապա 'ի վախճանի խոստովանութե՟ տալ նմա խրատս կարևորս ըստ ծանրութե՟ յանցանացն. վասն զի պարտի ինքն ըստ օրինակի սամարացւոյն արկանել 'ի վերայ վիրաց հոգւոյ ապաշխարողին զգինի և զձէթ, ո՟ յուշ առնել նմ՟ զանաչառ և զանկաշառ դատաստանն ա՟յ և զծանրութի՟ մեղաց. միանգամայն և զքաղցրութի՟ և զմարդասիրութի՟ն ա՟յ առ այնոսիկ՝ որք ճշմարիտ զղջմամբ և հաստատուն առաջադրութե՟ ուղղելոյ զանձինս մատչին 'ի խորհուրդ ապաշխարութե՟:

հդ. 'Ի վերայ բերէ ծխարանն: *Եթէ ապաշխարողն ոչ բացատրեաց զթիւ, և զտեսակս, և զպարագայս մեղաց՝ կարևորս յարտայայտել, քահանայն խոհեմութ՟ հարցցէ զնա ||: Եւ զի սոքա երեքինս կարի կարևոր են գիտելի լինել խոստովանահարց, ասա ինձ, ուստի՞ առեալ լինի տարբերութի՟ մեղաց. և ուստի՞ տեսակաւորի. և զո՞ր պարագայս պարտական իցեմք խոստովանիլ:

դ. Ենթադրեմ նախ՝ թէ պարտաւորիմք խոստովանիլ զամենայն մեղս մահուչափս ըստ թուոյն և ըստ տեսակին. որպէս սահմանեալ կայ 'ի տրիդ՟. ժող. 'ի նիստ. 14. գլ. 7: Ենթադրեմ երկրորդ՝ թէ միով և եթ ֆիզիքական ներգործութե՟՝ մարթին գործել մեղք բազում թուով. որպէս և բազում ներգործութեք ֆիզիքականօք մի միայն թուով մեղք. օրինակ իմն. եթէ ոք միով գնտակաւ հրացա-

նին սպանցէ զանձինս երիս, գործէ զերիս յանցանս մարդասպանութեան։ Իսկ թէ ոք միով իմեմն գործով գայթակղեցուսցէ կանայս բազումս, նոյնչափ թուով մեղս գործէ՝ որչափ թուով են կանայք գայթակղեալք։ Նմանօրինակ և մայր ոք՝ որ չարաչար անխնամէ զչորս զաւակս այնու սրտիւ զի հասցէ նոցա անէծքն, միով ներգործութեամբ գործէ զչորեսին մեղս։ Այլ ընդհակառակն, որ դնէ 'ի մտի սպանանել զթշնամին իւր. և վասն այսորիկ գնէ զսուր, գիշերայն ելանէ 'ի տանէ, գնայ 'ի խնդիր թշնամւոյն՝ և սպանանէ զնա. թէպէտև առնէ զբազմաթիւ գործս ֆիզիկականս, բայց մեղք սպանութեան է մի միայն, զի այս ամենայն կարգին առ միմիայն վախճան։

Զայս յուշ արարեալ՝

Ասեմ, թուական տարբերութիւն մեղաց առեալ լինի 'ի չորից գլխոց։ Նախ՝ 'ի ներգործութեանց լրացելոց 'ի սեռի իւրեանց. զորօրինակ՝ որ ոք հետ զհետէ երկիցս մերձաւորի ընդ կնոջ միում, գործէ զերկու թուով մեղս. այլ ոչ այնպէս այն՝ որ հետ զհետէ երկիցս համբոյր տայ կնոջ, կամ յոլով անգամ անպատկառ հայի 'ի նա. վասն զի դա գործէ զմի միայն մեղս, իբր զի են ներգործութիւնք անլրացեալք 'ի սեռի պագշոտութեան։ Խոստովանահայրն՝ որ կալով 'ի մահուչափ մեղս՝ արձակէ զանձինս տասն, գործէ զտասն մահուչափ մեղս. վասն զի իւրաքանչիւր արձակումն է ներգործութիւն լրացեալ, այլ ոչ այդպէս՝ այն քահանայ, որ կալով 'ի մահուչափ մեղս՝ հաղորդէ զանձինս տասն. զի սա գործէ զմի միայն մահուչափ մեղս. վասն զի հաղորդելն իւրա-

քանզիւր անձին է գործ անլուացեալ, որ լուանայ 'ի դադարիլ քահանային 'ի տալոյ զհաղորդութիւն։ Նմանապէս՝ որ 'ի մահուչափ մեղս մատուցանէ զպատարագ, միով ներգործութեամբ գործէ զերիս մեղս սեղանակապտութեան. ա՛ զի պատարագէ մահուչափ մեղօք, բ՛ զի հաղորդի 'ի մահուչափ մեղս. գ՛ զի մատակարարէ ինքեան զխորհուրդ 'ի մահուչափ մեղս։ Եւ զի երեքին ներգործութիւնք առանձին առանձին 'ի սեռի իւրեանց են լրացեալք, զհետ գայ՝ թէ երեք մեղք են թուով զանազանեալ։

Յուշ լիցի. զի են՝ որք ասեն հաւանական լինել, թէ խոստովանահայրն գոլով 'ի մահուչափ մեղս՝ զմի միայն մեղս մեղանչէ՝ եթէ արձակիցէ զանձինս բազումս. զի է պաշտումն հանապազորդեալ, ուստի և շատ է 'ի խոստովանիլ իւրում ասել. գոլով իմ 'ի մահուչափ մեղս լուայ զքանի մի խոստովանութիւնս անընդհատ։ Նոյնպէս կարդինալ Լուգեան. գլխ. ծը. յդ. ապաշխ։ Պոսար. ձառ. է. հուենդիփեստուել ճարոյ. ձառ. յդ. խնդ. ծը։ Սպոռեր. հտ. գ. հմր. 435։ և այլք։

Են այլք որք պաշտպանեն, թէ որ միանգամ 'ի մահուչափ մեղս մատակարարէ զխորհուրդ հաղորդութեան, ոչ մեղանչէ մահուչափ մեղօք. քանզի զխորհուրդն մերձեցուցանէ միայն, որպէս զի բերցէ զշնորհս։ Տիանայ թղ. խորհ. հատ. ժ. ձառ. է. թէս. է։ Այլ սակայն զհակառակ կարծիս պարտ է պինդ ունել. քանզի հիմնեալ կայ 'ի կանոնն վերջին. գլ. ծե. խռ. բ. * Զորքն 'ի մատակարարել անդ զբարին՝ անձամբ զանձինս վնասեն. և որով այլոց օգտեն՝ նովիմբ

անձանց զեան գործեն ||: Որն Թովմաս. 3. խնդ. կդ. յօդ. 6: ասէ. * Որ 'ի ծանր մեղս մատակարարէ զսբ հաղորդութիւն՝ մահուչափ մեղանչէ || Սոյնպէս սիլվիոս. հո. դ. խն. կդ. յօդ. 7: Կարդին. ղուկոն յշ. խհդ, առ հաստրաւ չկծ. 8. Թիւ. 155: Իսկ 'ի ստիպել հարկին եթէ մկրտեսցէ առանձինն՝ մեղանչէ միայն ներելի մեղօք. քանզի յայնժամ ոչ գործէ իբր պաշտօնեայ ('ի պաշտամանէ') այլ իբր ձեռնտու կարօտութեան: Նաև քանզի պաշտօն քահանային չէ միայն քահանայագործել զխորհուրդն՝ այլ և մատակարարել, ապա զհետ գայ, զի 'ի մահուչափ մեղս տալով զհաղորդութիւն՝ մահուչափ մեղանչէ:

Երկրորդ առեալ լինի 'ի նիւթական առարկայից. զորօրինակ (ըստ ասացելոցս) նա՝ որ միով գնտակաւ հրացանին սպանցէ զանձինս երիս՝ գործէ զերիս թուով մեղս. և որ միով խենեշ գործով գայթակղեցուսցէ զերիս կանայս՝ գործէ զերիս մեղս. և նա՝ որ միով անիծաբանութեբ մաղթէ ծանր չարիս երից զաւակաց իւրոց՝ գործէ զերիս մեղս:

Երրորդ՝ առեալ լինի 'ի բարոյական ընդհատութենէ մեղանչական ներգործութեան. այսինքն՝ յորժամ յետս նահանջի կամ տեսականապէս, այս է՝ յորժամ զղջասցի ոք 'ի գործոյ անտի. կամ մեկնողաբար՝ որպէս յորժամ ոք պարապի յայլ գործ գլխովին տարբեր. զորօրինակ՝ եթէ ոք զկնի հաւանութեան չար խորհրդոյ զղջանայ, և յետ սակաւու դառնայ 'ի հաւանիլ՝ գործէ զնոր մեղս. և կամ նա՝ որ հաւանեալ իցէ չար խորհրդոյ իմիք, և ապա ելեալ 'ի տանէն գնայ պարապիլ 'ի գործ իւր, եթէ 'ի

դարձին 'ի տուն տայ վերստին հաւանուն չար խորհրդոյ՝ գործէ զնոր մեղս. քանզի 'ի յիշատակեալ դիպուածդ կայ բարոյական ը̄հատութ̄ի մեղաց, կամ տեսական՝ կամ մեկնական։

Զորրորդ՝ առեալ լինի յերևելի ընդհատութ̄է ժամանակի. և այն առանց ինչ որոշակի յետս նահանջման մեղանչական գործոյն, թէև իցէ լոկ անլրացեալ ներգործու̄ք. զորօրինակ՝ նա՝ որ ընդ այգն հպեալ իցէ 'ի կին անհամեստ շօշափմամբ. կամ գողացեալ իցէ զմեծ գումար. եթէ զկնի միջօրէի վերստին շօշափեսցէ, կամ գողասցի զայլ մեծ գումար՝ գործէ զերկու թուով մեղս. որովհետև գոյ երեւելի ընդհատութ̄ի ժամանակի։

Իսկ 'ի կարգի թուոյ ներելի մեղաց՝ առ հանդարտութ̄ի սրտից ապաշխարողաց՝ խոստովանահայրն մարդասիրութ̄ք իմն պարտ է ազդառնել նոցա, թէ շատ է ամբաստան լինել զքանի մի ներելեաց՝ զորս յիշեն. և զայլոց ցաւիլ ճշմարիտ սրտիւ զղջմամբ՝ հանդերձ հաստատուն առաջադրութ̄ք ոչ ևս գործելոյ ի̄ն օգնականութ̄ք։ Իսկ զայս պարտ է իմանալ՝ յորժամ այն անձինք իցեն խղճահարք և անհանդարտք. իբր զի առ տկարութ̄ե յիշողութ̄ե իւրեանց չեն բաւական ամբաստան լինել զամենայն ներելի մեղս իւրեանց։ Բայց սակայն չէ՛ մարթ ժխտել, թէ լաւ ևս է յոյժ առ 'ի ուղղել զխիղճս մոլեկան ախտից, և աճել զաճումն առաքինութ̄ե՝ ամբաստանել զամենայն մեղս, որովք ոք դառնացոյց զ̄ած. և յայնժամ ևս ըստ ասացելոյս՝ պարտի ունել զզղջումն անանջատ 'ի հաստատուն առաջադրութ̄է ուղղութ̄ե։

Նոյնօրինակ՝ և տեսակարար տարբերութ̃ին մեղաց ծագէ 'ի չորից գլխոց. Առաջինն է՝ յորժամ մեղանչական ներգործութ̃իք իցեն ընդդէմ զանազան առաքինութ̃եց. զի յայնժամ և յիրերաց տեսակաւ տարբերին: որպէս պոռնկութ̃ին և հայհոյութ̃ին են տեսակաւ տարբերք յիրերաց. քանզի նախկինն է ընդդէմ ողջախոհութ̃ե, և երկրորդն ընդդէմ կրօնի: Հերետիկոսութ̃ին և յուսահատութ̃ին են մեղք տեսակաւ տարբերք 'ի միմեանց. քանզի առաջինն է ընդդէմ հաւատոյ, և երկրորդն ընդդէմ յուսոյ: Բամբասանք և ատելութ̃ի ընկերին են մեղք տարբերք տեսակաւ. վասն զի առաջինն է ընդդէմ արդարութ̃ե, և երկրորդն ընդդէմ սիրոյ:

Երկրորդն է՝ յորժամ ներգործութ̃իք մեղանչականք իցեն ընդդէմ մի և նոյն առաքինութ̃ե. բայց մին ըստ առաւելադանցութ̃ե, և միւսն ըստ պակասութ̃ե. զորօրինակ հերետիկոսութ̃ի և մեղադրելի անգիտութ̃ի 'ի վերայ խորհրդոց հաւատոյ՝ են կրկին մեղք տեսակաւ տարբերք 'ի միմեանց. թէպէտև իցեն ընդդէմ մի և նոյն առաքինութ̃ե հաւատոյ. վասն զի նախկինն է ըստ առաւելադանցութ̃ե. իսկ երկրորդն՝ ըստ պակասութ̃ե: Յուսահատութ̃ին և յանձնապաստանութ̃ին փրկեալ լինելոյ առանց արդեանց՝ են մեղք զանազանեալք տեսակաւ. թէպէտ և իցեն ընդդէմ միոյ առաքինութ̃ե յուսոյ. քանզի յուսահատութ̃ին դիմամարտի յուսոյ ըստ պակասութ̃ե. իսկ յանձնապաստանութ̃ին ըստ առաւելադանցութ̃ե: Ատելութ̃ի այ̃ և ծուլութ̃ին են մեղք տարբերք՝ 'ի միմեանց տեսակաւ. թէպէտև իցեն դիմամարտք միւ-

նոյն առաքինութեան սիրոյ, նախկինն ըստ առաւելագանցութեան, և երկրորդն ըստ պակասութեան: Այնպէս ագահութիւն՝ և շռայլութիւնն դիմամարտին առատաձեռնութեան. մին ըստ պակասութեան՝ և միւսն ըստ առաւելագանցութեան:

Երրորդն է՝ յորժամ մեղանչական ներգործութիւնք հակառակին մի և նոյն առաքինութեան ըստ առնելութեան, կամ ըստ զանցառութեան, զորօրինակ հերետիկոսութիւն և 'ի բաց թողուլ ընդ ժամանակին առնել զներգործութիւն հաւատոյ՝ են կրկին մեղք տարբերք 'ի միմեանց տեսակաւ, այլ դիմամարտք մի և նոյն առաքինութեան հաւատոյ. առաջինն ըստ առնելութեան և երկրորդն՝ ըստ զանցառութեան: Զնոյն իմա և զատելութիւն Աստուծոյ՝ և զծուլութիւն, զի տեսակաւ տարբեր են 'ի միմեանց. վասն զի թէպէտև երկոքին իսկ հակառակին աստուածսիրութեան, սակայն նախկինն ըստ առնելութեան և երկրորդն ըստ զանցառութեան, անփոյթ լինելով առնել զգործ ինչ բարի՝ որ հայէր 'ի պատիւ Աստուծոյ: Այնպէս որ յաւուրս տօնից առնէ զգործ ծառայական, և ոչ տեսանէ զպատարագ, գործէ զերկուս մեղս տեսակաւ տարբերս 'ի միմեանց ընդդէմ մի և նոյն առաքինութեան կրօնի. առաջինն ըստ առնելութեան և երկրորդն ըստ զանցառութեան:

Նախ քան զժամանել մեր 'ի գլուխ չորրորդ՝ պիտի յուշ առնել, թէ արտաքին ներգործութիւն զոյգ ընդ ներքնոյն է մի միայն մեղք: Ապաքէն եթէ արտաքին գործք մոռացեսցին ընդ ինքեան, և ոչ իբրև յառաջ եկեալք 'ի ներքուստ և 'ի յատուկ ներգործութենէ կամաց, բարոյապէս ոչ բարի են՝ և ոչ չար. այլ միայն բնականապէս բարի: Իսկ եթէ խորհեսցին

իբր յառաջ եկեալք 'ի ներքին ներգործութենէ կամաց, յայնժամ իսկապէս ասին լինել չար կամ բարի ։ Պատճառ վարդապետութեանս է. վասն զի արտաքին գործք զամենայն բան բարութեան կամ զմեղաց առնուն՝ 'ի ներքին և 'ի յատուկ ներգործութենէ կամաց ։ Արդ՝ ուր մի և եթ է չարութիւն կամ անկարութիւն կամաց ; անշուշտ մի միայն մեղք լինի՝ տեսականապէս խօսելով . Թէպէտ չէ մարթ ժխտել՝ թէ նիւթապէս բազում մեղք լինին, վասն լինելոյ բազում ներգործութեանց հակառակ աստուածային օրինաց ։ Եւ յայս միտ պարտ է իմանալ՝ ասեն վարդապետք զայն՝ զոր ասէ հասարակ մեկնիչն 'ի վերայ բանի առաքելոյն առ հռովմ. ա. * Լցեալն ամենայն ... սպանութեամբք ||. այսինքն թէ * Յոգնակի ասացաւ սպանութեամբք, վասն զի մարդասպանութիւն է, միանգամայն և ներգործութիւն կամաց ||: Այսպէս Եստիոս ։

Թերևս ասիցէ ոք. եթէ մի միայն յանցանք իցէ, ընդէ՞ր 'ի տասնաբանեայ օրէնս արգելեալ լինի զանազան պատուիրանաւ ։

Պատասխանի. յօրէնս՝ կամաց և գործոյ եգան այլ և այլ արգելմունք. քանզի բազում անգամ պատահի, զի ներգործութիւն ինչ կամաց զանազանի յառնելութենէ ։ Աստուած արգել սովիմբ զցանկութիւն ապօրինաւոր ինչ գործոյ, զի մի՛ լիցի կարծել թէ ցանկութիւն կամ վատթար խորհուրդն չհամարեսցին 'ի մեղս երբ գործով չկատարեսցին ։

Չորրորդն է՝ յորժամ մեղանչական ներգործութիւն դիմամարտ միենոյն առաքինութեան գործի լոկ խորհրդով, կամ բանիւ, և կամ գործով. որ վասն չէ բաւական ասելն 'ի խոստո-

վանութեան, մեղայ ծանր մեղօք ընդդէմ ողջախոհութ՟ե. այլ պարտ է նշանակել և զտեսակն 'ի մասնաւորի. արդեօք միա՞յն խորհրդով իցէ մեղուցեալ, եթէ բանիւ, և կամ գործով. որպէս եթէ ոք հայհոյեալ իցէ՝ հարկ է ասել որոշակի. արդեօք խորհրդո՞վ իցէ հայհոյեալ, թէ բերանով կամ գործով. որպէս մեկնաբանեցաք 'ի ճառն յաղագս մեղաց ընդդէմ հաւատոյ: Եւ որ անկեալ իցէ 'ի հերետիկոսութ՟ի, պարտի բացայայտել. արդեօք միայն խորհրդո՞վ իցէ անկեալ՝ թէ և արտաքին բանիւ, կամ այլ ինչ արտաքին նշանաւ. օրինակ իմն՝ առ ոտն կոխելով, կամ զս՟բ խաչն՝ կամ զս՟բ հաղորդութ՟ի Ք՟ի:

հց. Ընդէ՞ր արգելու մեզ ա՟ծ զցանկութ՟ի և զախտաւոր բերմունս սրտի և մտաց:

պ. Պատճառն է. զի նա՝ որ ինքն միայն ընդմտանէ 'ի խորս սրտին, և ճանաչէ որ ինչ 'ի ներքս 'ի մարդն, իւրով օրինօք կամի և զնորոգութ՟ի և զսրբութ՟ի ներքին մարդոյն, և խնդրէ զուղղութ՟ի նորա: Եւ ևս վասն զի կամի տեսանել զեղծումն և զբնաջինջն լինել մեղաց, որովհետև 'ի չար ցանկութեց յառաջ գան այլ ամենայն մեղք:

հց. Ցանկայի գիտել, թէ խորհուրդ մտաց՝ որ բազմի 'ի ներքս անդ, զիա՞րդ մարթի լինել մեղք, ուր երբեք թէ ոչ գործի 'ի նմա գործ ինչ ընդդէմ օրինացն ա՟յ:

պ. Ամ՟ չարութ՟ի և ծանրութ՟ի մեղաց կախի ոչ զարտաքին առնելուէ, որ լինի 'ի գործեն զնոսին, այլ գլխաւորաբար զչարութ՟է կամաց՝ որ կամի և ցանկայ զայն գործ անարժան՝ որ հակառակ կայ կամացն ա՟յ. և այս խոտորնակ

կամք է այն, որ սկզբնաբար առնէ զմեղս. և զմեղ ատելի առնէ նոյ. և զպայմանէ կախի արտաքին գործն չար, ըստ բանի նորին Օգոստինոսի. Գիրք. Ժ. ՅՂ. Հարցմն. Եւ ցանկ. Գլ. Գ. առ Հռ-նիֆոնկեոս Գլ. Է: Այլ նորին Գրիգոր ասէ, թէ առ 'ի լինել չար խորհրդոյն մեղք՝ զուգընթաց լինին երեքին այսոքիկ. նախ՝ թելադրութիւն. երկրորդ՝ հեշտ ցանկութիւն. երրորդ՝ հաւանութիւն: Յորչափ խորհուրդն է պարզ թելադրութիւն, որով սատանայ յանդիման առնէ մտաց զյոռի ինչ, ոչ միայն չէ մեղք, այլ՝ եթէ մերժեսցի և վանեսցի դիմակալութեամբ, նոյն իսկ թելադրութիւն դարձցի մեզ յարդիւնս և 'ի պսակ յաղթանակի:

Քառակի մարթի ոք մեղանչել խորհրդով. Նախ՝ յամեալ հեշտութեամբ. և ասի յամեալ ոչ յամելով ժամանակի. այլ յամելով բանի. մինչ զի շատ է և վայրկեան մի ևեթ մտադրութեամբ զկայ առնուլ, և հաւանիլ վատթար ինչ առարկայի: Երկրորդ՝ ըղձիւ: Երրորդ դիտմամբ: Չորրորդ՝ ընտրութեամբ միջոցաց ուղղելոց առ 'ի գործել զմեղս ինչ: Այլ այս չորեքկին ներգործութիւնք ներքինք՝ են զանազանեալ յիրերաց՝ 'ի ստորին տեսակի իւր [illegible]՝ 'ի նուազ [illegible]. ոչ ուսուցանէ նորին Թովմաս. մինչ զի խոստովանահայրն՝ որ անգէտ իցէ այսոցիկ, ուստի և ոչ հարցանիցէ զապաշխարողն՝ մեծապէս պակասի 'ի պաշտաման իւրում. զի պարտաւորեալ է 'ի սոյն:

Յամեալ (որ և դանդաղ) հեշտութիւնն է՝ յորժամ ոք կամաւ հաճի ընդ չար ինչ խորհուրդ՝ առանց կամելոյ, գալ 'ի գործադրութիւն. և այս մարթի հանդիպիլ ոչ միայն 'ի նիւթ-

բղջախոհութեան, այլ՝ և յայլ նիւթս. զօրօրինակ՝ եթէ հաճի ոք ընդ չարն հասեալ թշնամւոյ իւրում, և կամաւ կայ մնայ 'ի նմին հաճութեան, մեղանչէ յամեալ հեշտութեամբ ընդդէմ սիրոյ ընկերին: Իսկ 'ի յամեալ հեշտութենէ թէպէտ չէ հարկ ապաշխարողին յայտնել զառարկայն՝ որպէս ոմանք վարկանին, և սակայն կարեւոր է յայտնել զենթակայն. ազա՞տ իցէ արդեօք, եթէ ամուսնացեալ. եկեղեցակա՞ն՝ թէ աշխարհիկ եւն:

Հր. Որովհետև մեղք խորհրդոց ընդդէմ մաքրութեան առաւել դիւրագործ են և վտանգաւոր, ո՞ր իցեն դեղք դարմանոյ նորա:

Պտ. Նոյն այն են՝ որք 'ի գործ դնին ընդդէմ հրոյ. զի թէ անկցի հուր 'ի վերայ ձեռին՝ անյապաղ արագութեամբ 'ի բաց ձգի. և զօրօրինակ՝ առ 'ի շիջուցանել զհուր՝ ջուր 'ի վերայ արկանի, սոյնպէս պարտ է դիմել առ Աստուած՝ տալ մեզ շնորհս՝ շիջուցանելոյ զայս կրակ. միանգամայն և զառաջս առնուլ զնորա այլովք ևս մտածութեամբք:

Հր. Քանի՞ պայմանք պահանջին, զի յամեալ հեշտութիւն իցէ մեղք մահուչափ:

Պտ. Վարդապետք 'ի հասարակի նշանակեն զերիս: Ա՝ եթէ առարկայն առ որ ուղղի հեշտութիւն՝ իցէ մահուչափ մեղանչական: Բ՝ եթէ զգայցէ ոք ունիլ զայնպիսի հեշտութիւն: Գ՝ եթէ յետ կատարեալ ուշադրութեան ո՛չ 'ի բաց վանէ, կամ դէթ ո՛չ բուռն առնէ 'ի բաց վանել, այլ՝ հաւանի ընդ այն:

Ցանկութիւն է ներքին ներգործութիւն իմն, որ ձգտի առ արտաքին գործողութիւն. մինչ զի ուժով ներգործութեանն՝ միշտ կամիմք հասանել

այնմ՝ որում ցանկամք ։ Այսմ մարթ է լինել առանց գիտելոյ . զորօրինակ՝ Շինական ոք տեսեալ զկին ազնուատոհմ՝ ցանկայ լինել ընդ նմա . բայց առանց գիտման, գիտելով չափ թէ բարոյապէս անհնար է այդմ լինել ։ Այլ ոչ այնպէս 'ի տեսանելն զկին շինական, որում ոչ միայն կարող է ցանկալ՝ այլ ունիլ և զգիտումն ։ Ի ցանկութե մասին պարտ է տալ բացայայտել ապաշխարողին ոչ միայն զենթակայն՝ այլ և զառարկայն . այսինքն՝ զվիճակ անձինն՝ ընդ որում ցանկացեալ իցէ մեղանչել, և զթիւն նոյնպիսի ցանկութեանց ։

Ցանկալն իմիք, որ միայն նիւթապէս իցէ չար . որպէս շնութե, մարդասպանութե, որ ունիցի հանդիպիլ՝ 'ի քուն կամ յարբեցութե, ևն. է մեղք մահուչափ համատեսակ ընդ ցանկացեալ գործոյն . վասն զի այդպիսի կամաւոր և ազատ ցանկութի դիմէ և ձգի առ առարկայ՝ որ 'ի բնէ է պարզապէս չար և մեղանչական ։ Իսկ թէ չիցէ տեսականապէս մեղք՝ յայնմանէ է, զի չէ կամաւոր և ազատ . բայց այս պատճառ որ անբասիր առնէ 'ի գործն, չիք 'ի կամաւոր և յազատ ցանկութե անդ որ 'ի ներքուստ է չար . և ոչ իսկ մարթի առնուլ զհամեստութի 'ի փոխանակ իմիքէ բարւոյ ։ Ոչ չարժէ ինչ ասելն, թէ օրինաւոր իցէ բաղձալն և կամելն զպանութի յարբեցութե . ևն, վս բարւոյ իրիք փոխանի . որովհետև Իննովկ. ժա. դատապարտեաց զնախադասութին ժդ. զայն թէ * Օրէն է բացարձակ ցանկութի ցանկալ մահու հօր . ոչ եթէ ոպ չար ինչ հօրն, այլ ոպ բարի ցանկացողին, իբր զի ունի գալ ինքեան ժառանգութի գիրապարար ||։

Երրորդ մեղանչական ներգործութեան խորհրդոյ՝ է գիտաւորութիւն, որ տարբերի 'ի ցանկութենէ. քանզի ցանկութիւն ցանկայ իմիք, զորօրինակ՝ յարել 'ի կին օտար. իսկ գիտաւորութիւն կամի զնոյն երկրորդին. այսինքն՝ զհնարս ածել զհայելն այնր կնոջ. որպէս յայտնաբանէ տէրն Թովմաս: Այնպէս եւ 'ի գիտաւորութեան գողութեան ոչ միայն ցանկայ ընչից օտարին, այլ եւ միտ դնէ գալ 'ի ներգործութիւն գողութեան: Որպէս եւ յատելութեան ընկերին գիտաւորութիւն ոչ միայն լինի ցանկալ չարի նորա՝ այլ եւ կամիլ արդեամբք գալ 'ի ներգործութիւն վնասարար ընկերին:

Չորրորդ մեղանչական ներքին ներգործութիւն՝ է ընտրութիւն միջոցաց, յորժամ ոք ունի արդէն զգիտաւորութիւն 'ի գործ դնելոյ զարտաքին ներգործութիւն մեղաց. վասն որոյ պարտի նշանակել 'ի մատնաւորի, թէ զի՞ր միջոց ընտրեալ իցէ առ 'ի ժամանել 'ի գործ անդր. զորօրինակ՝ եթէ առաջեալ իցէ առնել զմեղսակ-ընկերութիւն, կամ զկախարդանս, կամ զգողութիւն առ 'ի ձեռս բերել զգիտումն իւր. քանզի յայնժամ ներգործութիւն ընտրութեան ունի յինքեան զչարութիւն միջոցաց՝ զոր ընտրեաց:

'Ի կարգի մեղաց՝ որ բանին, պարտի ապաշխարողն պարզաբանել զգիտաւորութիւն՝ զոր ունէր. զորօրինակ՝ եթէ այն՝ որ հայհոյեաց, ունէր միանգամայն եւ զգիտաւորութիւն ուրանանելոյ զԱստուած՝ մեղաւ կրկին մեղօք. մի՝ ընդդէմ կրօնի 'ի սակս հայհոյութեան բարբառելոյ. եւ միւս եւս ընդդէմ սիրոյն որ վասն ապիրատ գիտաւորութեան՝ զոր ունէր առ 'ի նախատել զԱստուած: Նմանապէս եւ նա, որ առ ատելութեան զոր ունի առ ընկերն, բամբասէ զնա՝ գործէ զկրկին

մեղս. մի՝ չարախօսութիւն՝ բանիւ բամբասանաց որ է ընդդէմ արդարութեան, և միւս ևս ատելութիւն՝ բանիւ ատելութեան. որ է պատճառ չարախօսութեան. և այս է ընդդէմ սիրոյ: Որպէս որ ցուցաբանէ առաջի կնոջ առ 'ի սադրել զնա 'ի մեղս, պարտի ամբաստան լինել ո՛չ միայն զմեղաց գայթակղութեան՝ զոր ետ նմա, որ է ընդդէմ սիրոյ, այլ և վասն հրապուրանաց առ մեղս անժուժութեան, որ է ընդդէմ ողջախոհութեան. և եթէ ապաշխարողն լռեսցէ զայդմանէ՝ խոստովանահայրն պարտաւորի քննել առ 'ի չյետնելոյ 'ի պաշտաման իւրում:

'Ի կարգի մեղաց գործոյ, պարտ է յուշ առնել. արդեօք գործն լրացեա՞լ իցէ՝ թէ անլրացեալ. զորօրինակ նա՝ որ մերձեցեալ իցէ 'ի կին օտար՝ կրկին օրինակաւ, այսինքն՝ եթէ բնաւորական, և եթէ անբնական զուգաւորութեամբ՝ գործէ զերկուս մեղս լրացեալս. մի՝ պոռնկութիւն, և երկրորդ՝ սոդոմականութիւն: Իսկ որ անհամեստ շօշափմամբ և եթ հպեալ իցէ բազում անգամ՝ գործէ զմի միայն մեղս, երբ լեալ իցեն հետ զհետէ յաջորդութեամբ, զի են գործք անլրացեալք. մինչ զի եթէ 'ի վախճանի զհետ եկեալ իցէ զուգաւորութիւն՝ շատ է միայն զայնմանէ ամբաստանել զանձն. այլ ո՛չ այսպէս է, եթէ չիցէ զհետ եկեալ զուգաւորութիւն:

Այլ բաց 'ի թուոյ և 'ի տեսակէ՝ պարտի ապաշխարողն խոստովանիլ նաև զպարագայս մեղաց զհանգամանս 'ի բացատրել՝ ըստ ծիսարանին:

Են պարագայք՝ որք փոփոխեն զտեսակս մեղաց. և են՝ որք ծանրացուցանեն զմեղս 'ի նմին տեսակի: Յայնժամ փոխեն զտեսակն՝ յորժամ

մեղանչական գործն իցէ ընդդէմ զանազան առաքինութեանց. զորօրինակ՝ Շնաւորութիւն ընդ ամուսնացելոյ՝ է մեղք ընդդէմ ողջախոհութեան. այլ քանզի կինն ամուսնացեալ է՝ միանգամայն է և մեղք ընդդէմ արդարութեան. քանզի զրկի յիրաւանց այրն նորա: Իսկ թէ իցէ ազգական՝ լինի նաև մեղք ազգապղծութեան ընդդէմ գթութեան: Մարթի լինել և մեղք սրբապղծութեան՝ ընդդէմ կրօնի բանիւ ուխտին՝ եթէ մեղուցեալն իցէ անձն սրբազան: Այնպէս գողութիւն եղեալ ՚ի մէջ եկեղեցւոյ. եթէ իցեն ինչք նորին եկեղեցւոյ, ոչ միայն է մեղք ընդդէմ արդարութեան ՚ի սակս գողութեան, այլ և ընդդէմ կրօնի՝ վասն բռնաբարելոյ զտեղին սրբ: Հայհոյութիւն հերետիկոսական՝ է ընդդէմ կրօնի՝ բանիւ հայհոյութեան. միանգամայն և ընդդէմ հաւատոյ ՚ի սակս մոլորութեան, զոր յինքեան փակէ ընդդէմ հաւատոյ. ապա եթէ հայհոյիչն ունիցի և դիտումն թշնամանելոյ զԱծ՝ լինի նաև մեղք ընդդէմ սիրոյն Այ: Աստի մի միայն հայհոյութիւն հակառակ գոլով երից առաքինութեանց՝ հարկաւ ունի զերիս չարութիւս այլատեսակս, և յայն սակս զերիս գործէ մեղս մահուչափս՝ որ այնպէսն հայհոյիցէ. և պարտական է պարզապէս նշանակել զամենայն: Որում սակաւք ՚ի խոստովանահարց միտ դնեն. որով և ծանրաբեռնեն զխիղճս մտաց՝ զիւրեանցն ասեմ, և զապաշխարողաց գլխովին:

Իսկ պարագայք՝ որք ոչ փոփոխեն, այլ ծանրացուցանեն զմեղս ՚ի նմին տեսակի. զորօրինակ՝ գողութիւն դահեկանի միոյ՝ և գողութիւն տասն դահեկանաց, պարտին բացատրիլ՝ երբ մարթին այլայլել զդատաստան խոստովանա-

հօր առ 'ի ժխտել կամ տալ զարձակումն. և առ 'ի դնել զծանր կամ զթեթև ապաշխարանս ։

Այնպէս պարտաւորիմք խոստովան լինել և զունակութիւն մեղաց. որովհետև Իննովկ. ժա. դատապարտեաց զնախադ". ծը. զայն՝ թէ * Ոչ պարտաւորիմք առաջի խոստովանահօր՝ որ հարցանէ, խոստովանել զսովորականն գոլ մեղաց ինչ ‖ ։ Պատճառ դատապարտութեան է. վասն զի խոստովանահայրն իբրև դատաւոր զապաշխարողն սովորեալ 'ի մեղս ինչ, ոչ պարտի արձակել զնա այնպէս փութով, այլ փորձել զնա ընդ ժամանակս ինչ ։ Նմանապէս՝ որ գողացեալ իցէ դահեկանս հազար, և կարող իցէ հատուցանել՝ չէ արժան արձակել զնա, մինչև նախ հատուսցէ զբոլորն, կամ ըստ մասին. այլ ոչ այսպէս՝ որոյ գողացեալ իցէ զհինգ դահեկանս. զի զսա կարէ արձակել յառաջնում նուագի խոստովանութեան՝ մինչ խոստանայ հատուցանել ։ Եւ որ զամ մի ողջոյն ունիցի ոխս ատելութեան ընդ թշնամին իւր, չէ արժան արձակել զնա վաղ ընդ փոյթ. այլ պարտ է փորձել, արդեօք ստուգիւ 'ի բաց դնիցէ զատելութիւն. թող զի պէտք են ապաշխարանս 'ի վերայ դնել նորա այլազգ՝ քան այնմ, որ միօրեայ և եթ ատելութիւն եցոյց առ թշնամին իւր ։

---

### Յաղագս պարտաւորութեան խոստովանահօր 'ի հարցափորձել զհիւանդս և զմանկունս ։

հդ. Դարձեալ գրէ Ծիսարանն. * Զգոյշ լիցի, զի մի հետաքրքիր կամ անպիտան հարցուածովք յամեցուսցէ զոք, մանաւանդ զմանկա-

գոյնս յարանց և 'ի կանանց. որպէս և զայլս հարցանելով անխոհեմութբ զիրաց՝ զորս անգիտանան. զի մի՛ գայթակղեսցին, և յայնմանէ ուսանիցին մեղանչել ‖: Որդ՝ մեկնեա՛ ինձ, որպէս պարտ իցէ իմանալ զխրատս զայսոսիկ:

ղ. Սատանոր ծխարանն ըղձմտութբ ազգ առնէ խոստովանահօր վարել զոմ զգուշութի 'ի հարցաքննել զպատանեակս և զմանկամարդս, առ 'ի գիտակ լինել պարագայից ինչ մեղաց՝ զորոց նոքա ամբաստանեն զանձինս 'ի կարգի վեցերորդ պատուիրանին. եթէ զի զայդ պարտին առնել խոհեմութբ, առ 'ի չտալ նոցա առիթ գայթակղութե. որպէս և երբեմն 'ի չուսուցանել նոցա՝ զոր ո՛չն գիտեն: Սմին իրի սրբն Կարօլոս 'ի խրատաքանութե իւրում առ խոստովանահարս. յօդ. 15. գրեաց այսպէս: * 'Ի մեղս մարմնականս (ասէ) հանդերձ խոհականութբ պարտի 'ի կիր արկանել զգուշութի բազում, ո՛չ խնդրելով ինչ այլ՝ յետ իմանալոյ զտեսակն մեղաց և զկարի ծանրացուցիչ պարագայս. առաւելապէս զգոյշ և արթուն լիցի 'ի վր եղանակին՝ որով ունի հարցաքննել զկանայս և զմանկունս, որպէս զի մի՛ ուսուսցէ նոցա զոր ո՛չն գիտեն. և ջան դիցէ 'ի կիր առնուլ այնպիսի բառս՝ որ ոչ ծանր թուեսցին յունկն ապաշխարողին են ‖: Պարտ է և ես յուշ ածել, թէ 'ի կարի համարձակ հարցուածս որ 'ի նիւթ զգայական, ո՛չ միայն գայթակղութի կայ առաջի՝ այլ և մարթ է երբեմն խարդաւանել 'ի յանցանս հրապուրանաց: Եւ քանզի առ ամօթոյ բազումք բազում անգամ լռեն զմեղս, վասն որոյ ընդ պատանիս և ընդ մանկամարդս 'ի դէպ է վարել զայս հարցուածս օգ-

տակարագոյն. արդեօք ունիցի՞ն ընկերս վատթարս, որք տայցեն ինքեանց զօրինակ չար՝ բանիւ կամ գործով. և թէ յառաջ ժամանակաւ լեալ իցէ նոցա ունել այնպիսի ընկերս, որք ուսուցեալ իցեն ինքեանց զչար ինչ. և թէ խոստովանեալ իցեն զայն երբեք: Յայսու օրինակաւ մարթ է քաղել 'ի բերանոյ նոցա ինչ ինչ ամօթալի մեղս՝ եթէ արարեալ իցեն. ուրովհետև հասարակօրէն չարութիւն 'ի չար ընկերաց ուսեալ լինի. իսկ 'ի ժամանել նոցա 'ի հասակ ընդունելոյ զառաջին հաղորդութիւն՝ բարւոք լինի ձգել զնոսա յընդհանրական խոստովանութիւն՝ առ 'ի փութով դարմանս տանել անցելոց խոստովանութեանց բազում անգամ չարաչար եղելոց: Այլ միշտ փոյթ կալցի տալ նոցա առնել զներգործութիւն զզջման յառաջ քան զտալ զարձակումն:

Հանրական քննութիւն մանկանց մարթի լինել ըստ այսց բանից. արդեօք խոստովանեալ իցեն երբեք, և երբ. յեկեղեցիս կացեալ իցեն համեստութեամբ. լեալ իցեն հնազանդ ծնողաց իւրեանց. խօսեալ իցեն բանս սուտս. ցասմնոտք իցեն. ընդ երեկոյս և ընդ առաւօտն աղօթս արարեալ իցեն, երթեալ իցեն 'ի քրիստոնէական վարդապետութիւն: Եթէ խոստովանահայրն 'ի մերոյ հասցէ համարձակութեան մանկանն՝ կարող է հարցանել զնա զանվայել ձեռնածութեանց, յաւէտ յանկողնի. բայց ամենայն զգուշութեամբ զի մի ուսուցէ՝ նմա զչարութիւն. ընդ այսպիսիս պարտ է վարիլ քաղցրութեամբ:

Պէտք են յիշեցուցանել նոցա ունիլ զմեծ սոսկումն և գարշումն 'ի մեղաց, որ զհոգին գարշատեսիլ առնէ ըստ նմանութեան սատանայի,

ամ շնորհն գեղազարդէ զհոգին իբրև զհրեշտակ ։ Պարտ է ստէպ յորդորել զնա յերկիւղն այ , որ անընդմիջելի կայ յամ տեղիս ։ Եթէ մանուկն խոստովանեսցի մեղս ներելիս , պարտի զգաստ լինել խոհեմ խոստովանահայրն՝ գուցէ ասէ իբրև սերտ 'ի բերան , որ է նշան՝ թէ յայլոց ուսեալ երկրորդէ ։

Իսկ եթէ խոստովանեսցի զպակասութիւնս իբր մեղս՝ որ չիցեն մեղք ըստ ինքեան , զօրօրինակ՝ թէ ընդ առաւօտն 'ի զարթնուլն 'ի քնոյ՝ չիցէ արարեալ զնշան խաչին , չիցէ լուացեալ զձեռս կամ զերեսս , չիցէ արարեալ զաղօթս , պարտ է հարցանել․ արդեօք յորժամ առնէր զգործ այդպիսի համարէ՞ր թէ այդու լինի արհամարհել զած , և ինքն արժանի լինի պատժոց առ յայ ։ Եթէ զայն պատասխանէ մանուկն՝ ունի զբաւական նիւթ խոստովանութե վասն մոլար խղճին՝ ընդդէմ որոյ գործեացն ։ Նոյն 'ի ծանր մեղանչել անդ մանկանց 'ի նիւթ թեթև՝ բանիւ մոլար խղճի առթելոյ նոցա յաղգականաց կամ յայլոց , յայնժամ պարտի խոստովանահայրն հարցանել․ արդեօք այնպիսի զանցառութիւ համարէի՞ն զանձինս արժանի դժոխոց լինել ։ Եւ սակայն ուր ուրեմն դատին այդպիսի մանկունք ծանունս մեղանչել ։ Այնպէս յորժամ մանկունք 'ի նիւթ ծանր մեղանչեն ներելի և եթ․ իբր զի չփոյթ և եթ ըմբռնեալ զչարն՝ ոչ կարեն հասու լինել ծանրութե չարութեն․ ուստի եթէ խոստովան լիցին իբրս ինչ՝ որ ըստ ինքեան են մահուչափ մեղք , զօրօրինակ՝ թէ հայհոյեցի , երդուայ , ևն․ պարտ է հարցանել զնոսա․ արդեօք ստուգիւ համարեա՞լ իցեն զանձինս այնու մեղօք

արժանի լինել դժոխոց, կամ թէ զգայցին երկիւղ յանձինս, թէ ունին պատժել յոյժ ծանունս :

՚Ի կարգի թուոց իբր ՚ի բազումս չիք հարկ հարցանել զմանկունս. քանզի ուր ուրեմն մեղանչեն մահուչափ մեղօք, և ուր ուրեմն օգտակար օրինակաւ մարթին յայտնել զթիւս մեղաց : Օգտակար հարցումն առ նոսա այս է. արդեօք յաճախեա՞լ իցեն յայս ինչ կամ յայն ինչ մեղս. և ընդ այնմ խոստովանահայրն կազմ կալցի զմիտս վարել մեծաւ զգուշութբ գէթ ՚ի լսելն զծանր ներելիս :

Առ ձգելոյ զմանկունս առ ճշմարիտ զղջումն՝ պարտ է հարցանել զնոսա. զի՞նչ ինչ պատիժ պատրաստեալ իցէ մեղաւորաց զկնի մահու. և տակաւ տակաւ հանդերձ քաղցրութբ տպաւորել ՚ի սիրտ նոցա զծանրութի մեղաց : Ապաշխարանս պարտ է ՚ի վր դնել նոցա թեթեւս. միանգամայն ջան դնել, զի կատարեսցեն վաղվաղակի, որպէս զի մի մոռասցին : Պէտք են և հրահանգել զնոսա՝ չելանել փութով յեկեղեցւոյ :

Յայսմ վայրի պարտի ամենայն խոստովանահայր քաջ ՚ի միտ առնուլ զսահմանադրութի բենեդիկտոսի ԺԴ. որ սկսանի. Ս—ր ղաւաջինն. և զմիւսն՝ որ սկսանի. Ի— ՚ի փանդէլ յարմարոց. յամին. 1446. յաղագս չհարցանելոյ զանհատական պարագայից մեղսակցին, այսինքն՝ զանուանէ, զընակութէ ևն. այս թէ ոչ՝ մահուչափ մեղանչէ ըստ պատուիրանին եղելոյ յիւր վր ՚ի յիշատակեալ սահմանադրութես : Բայց զայդ չէ պարտ իմանալ՝ յորժամ առ ամբողջութի խոստովանութե հարկաւորի հարց փորձ

առնել 'ի վերայ վիճակի մերձակցին. զորօրինակ՝ որդեօք ազգակից նորա՞ իցէ. և յինչ աստիճանի, ազա՞տ իցէ թէ ամուսնացեալ են. այլ պա՛րտ է իմանալ՝ յորժամ հարցանիցէ զմեղսակցէն, որպէս թէ առ 'ի ուղղել զնա, կամ վասն այլոյ իրիք բարի վախճանի, որ ո՛չ հայի յամբողջութիւն խորհրդոյն: Նա այս է՝ զոր դատապարտեաց պապն, ընդդէմ չարաչար սովորութեան 'ի ներքս մուծելոյ յայսմ մասին:

կգ. 'Ի վերայ ածէ ծիսարանն: * Որդ՝ յետ լսելոյ զխոստովանութիւն՝ կշռեալ զմեղացն գործելոյ առ 'ի նմանէ զմեծութիւն և զյոլովութիւն, ըստ ծանրութեան նոցին և ըստ վիճակի ապաշխարողին, հայրագութ սիրով 'ի վերայ բերցէ զճահաւոր յանդիմանութիւն և զխրատս, որպէս և զիարդ պէտքն պահանջիցեն. և գուն գործեսցէ ածել զնա զօրաւոր բանիւք առ ցաւ. և առ զղջումն, և յորդորեսցէ 'ի լաւ անդր փոխել զվարս և բարեկարգել. և դեղս ապաքինարարս մեղաց աւանդեսցէ են||. արդ՝ ասա՛ ինձ, ո՞րպէս պարտ է իմանալ զայդ բանս ծիսարանին:

ղ. Օ երիս դնէ պատուէրս 'ի վերայ խոստովանահարց առ 'ի առնել յետ լսելոյ զխոստովանութիւն: Նախ՝ խրատել և կշտամբել զապաշխարողն ըստ չափու ծանրութեան և թուոյ մեղաց, և ըստ հանգամանաց անձին. քանզի այլով օրինակաւ պիտի յանդիմանել և խրատել զապաշխարող որ կիրթ է և ազնուական, և այլով՝ զբիրտ և զգեղջուկ ոք. զի ընդ յետինս մարթ է երբեմն վարիլ բանիւք խստութեան (որովք սաստել սանձահարին), այլ ո՛չ ընդ առաջինսն (որք սովոր են խրտնուլ և անսաստ լինել). և սակայն զամենեսին սիրով յանդիմանել:

Քաղցրութիւն և մարդասիրութիւն Քրիստոսի փրկչին մերոյ յընդունելն զմեղաւորս՝ պարտի լինել մեզ օրինակ գերահրաշ. ուստի 'ի յանդիման լինել մեղաւորին, յետ հեզութեամբ լսելոյ զմեղս նորա՝ պարտ է ամենայն քաղցրութեամբ ասել առ նա բանիւ սրբոյն Պոնավենդուրայի ։ * Ի՞նչ թէ լինէր քեզ հայիլ յանձն քո. ի՞նչ թէ լինէր քեզ տեսանել զհոգի քո ‖ ։ Որանի՞ թէ ո՞վ մեղաւոր եղբայր կարօղ լինէիր նշմարել զողորմ ալէտս անձինդ. և տեսանել զհոգիդ չարաչար առ 'ի քէն խողխողեալ մեղօք քովք. * Որ երբեմն այնչափ էր գեղեցիկ՝ մինչև անցանել զանցանել զոմն երևելեաց վայելչութեամբ, և յաղթել ամենայն գեղոյ ‖. Եթէ զայս ոմ տեսանէիր ասեմ, աստէն և աստ մեռանէիր յերգիծանաց ցաւոյդ ։

Երկրորդ՝ շարժել զապաշխարողն առ ճշմարիտ զղջումն 'ի վերայ մեղաց հանդերձ հաստատուն առաջադրութեամբ ոչ ևս մեղանչելոյ. յառաջ բերելով զսեփական և զազդու շարժառիթս՝ որք մարթասցին շարժել զնա առնել զճշմարիտ զղջումն խորտակման, կամ գոնէ բեկման ։

Երրորդ՝ ջան դնել, զի հաստատեսցէ 'ի մտի ստուգիւ ուղղել զկեանս իւր, տալով նմա դեղս պատկանաւորս, զի մի՛ վերստին դարձցի յանկումն. զորօրինակ՝ խոստովանիլ ստէպ, և հաղորդիլ. առնել յամենայն աւուր փոքր ինչ մտածութիւն 'ի վերայ չորից վերջնոց. փախչիլ 'ի դատարկութենէ և յընկերութենէ անձանց՝ յորս նուաղ իցէ երկիւղ Աստուծոյ ։

## Յաղագս արդիւնութեան 'ի դնել զապաշխարանս :

հյ. Խօսելով ծիսարանին յաղագս վճարման ապաշխարողին՝ ասէ . * Յետ ածի 'ի վերայ դիցէ ապաշխարանս փրկաւորս և պատշաճաւորս՝ ըստ թելադրութեան հոգւոյ և խոհեմութեան՝ կշռելով զվիճակ , զհանգամանս արանց և կանանց , և հասակի միոյ միոյ , որպէս և զտրամադրութիւն նոցա . և զգոյշ լիցի չդնել վասն ծանր մեղաց թեթև ապաշխարանս . զի մի՛ արդեօք զիջանիցի մեղանաց , և հաղորդ գտցի մեղաց օտարին . առաջի աչաց ունելով և զայն , զի ապաշխարանքն ոչ է լոկ դեղ նորոյ կենաց և դարման տկարութեան , այլ և 'ի պատիժ մեղացն անցելոց || . արդ՝ մեկնեա՛ ինձ՝ թէ որո՛վ օրինակաւ պարտի վարիլ խոստովանահայրն 'ի դնել անդ զապաշխարանս :

դ. Պարտի (ըստ ծիսարանին) քաջ միտ դնել վիճակի , հանգամանաց , սեռի , հասակի , և տրամադրութեան ապաշխարողին : Նաև վասն մեղաց ծանունց չդնել զապաշխարանս մանունս . զի մի՛ գտցի առաջի Այն մեղապարտ վասն մեղաց անպատիժ մնացելոց : Նմին իրի ոքն կարողս պատուիրէ խոստովանահարց դնել զկանոնս աւանդեալս վասն ապաշխարութեան , և երբեք երբեք ազդ առնել ապաշխարողաց՝ թէ 'ի հնումն քանի՛ քանի ծանր ապաշխարանս դնէին վասն այդպիսի յանցանաց՝ զորոց ինքեանք ամբաստան լինին . ուստի քաջալերեսցէն ընդունել յօժարութեամբ զապաշխարանս եդեալս 'ի վերայ նոցա , որք չեն ըստ նախայիշատակեալ

կանոնաց՝ այլ կարի նուազք։ Իսկ ես՝ թէ ա-
պաշխարանքն զորս դնէ՝ չունին միայն լինել
բժշկականք, և դեղք նախապահեստք յապա-
գայ անկմանէ, այլ և վրէժխնդրականք. ա՛
վն հատուցանելոյ ոյ զպարտս պատժոց, որոց
եղեն պարտական մեղօք զոր գործեցին. զորս
թէպէտ և ած 'ի յաւիտենականէն փոխեաց 'ի
ժամանակաւորն 'ի ձեռն ոք խորհրդոյ ապաշ-
խարութե, սակայն և ինքեանք ունին վճարել
զայն, կամ ըստ բոլորին կամ ըստ մասին ար-
դիւնաւոր գործովք ապաշխարութեան յաստի
կեանս, և կամ 'ի հանդերձեալն 'ի քաւարանի։

ԿԴ. Ի վերայ ապաշխարանաց յուշ առնէ ծի-
սարանն և այլ քանի մի իրս. ա՛ ա.* վն որոյ
հոգասցի ըստ կարի դնել ապաշխարանս դէմ
ընդդէմ մեղանաց. զորօրինակ ագահաց՝ ողոր-
մութիս. մարմնասիրաց՝ պահս կամ այլ ճնշմունս
մարմնոյ. հպարտաց՝ զգործս խոնարհութե.
ծուլից՝ զփոյթ ջերմեռանդութե. իսկ ուր ու-
րեմն կամ անագան եկելոց 'ի խոստովանութի,
կամ դիւրագայթ եղելոց 'ի նոյն մեղս՝ կարի
օգտակար լինի խրատ տալ, զի ստէպ ստէպ՝
ոպ յամսեանն միանգամ, կամ 'ի սահմանեալ
աւուրս տօնից խոստովանեսցին. և եթէ օրէն
իցէ՝ հաղորդեսցին. Բ. Ո դրամով ապաշխա-
րանս՝ խոստովանահարք մի՛ յանկեսցեն յանձինս
իւրեանց. և ոչ իւիք խնդրեսցեն կամ առնու-
ցուն յապաշխարողաց ինչ մի իբրև 'ի վարձ պաշ-
տաման իւրեանց. Գ. Վասն գաղտնի մեղաց
որչափ և ծանր իցեն, յայտնի ապաշխարանս
մի՛ դիցեն ||։ Արդ՝ վասն այսր ամի կամ է ինձ
լսել զքո կարծիս։

Դ. Առ առաջին բանսդ պատասխանեմ բանիւ

Սբյն կարոլոսի յաղագարարուէ անդ իւրում առ-
խոստովանահարս․ յօդ․ 24․ ուր ասէ․ * Փոյթ-
կալցի, զի ապաշխարանքն համեմատ գտցին
մեղացն գործելոց․ զորօրինակ՝ վասն մարմնա-
կան մեղաց 'ի վերայ դնելով պահս, հսկմունս,
ուխտագնացութիս, քրձազգածուիս, և զայ-
ցին նմանիս՝ որք կարող են նուաճել զմար-
մինն․ վասն մեղաց ագահութե՝ բաց 'ի հա-
տուցանելոյ ում զինչ պարտիցի, դնելով ողոր-
մութիս ըստ տանելոյ վիճակի իւրաքանչիւրոց․
ընդդէմ հպարտութե և այլոց հոգևորական
մեղաց՝ 'ի դէպ է դնել զաղօթս․ որով խո-
նարհեալ առաջի Տն՝ ստասցի զարխուն առ 'ի
զդէմ ունել այնպիսի մեղաց։ Վասն պղերգու-
թե ուսանելոյ զքրիստոնէական գիտելիս՝ դի-
ցէ լսել զքարոզս․ և 'ի դէպ ժամու գնալ 'ի
լուր քրիստոնէական վարդապետութե։ Վասն
անջերմեռանդից և գաղջ եղելոց յիրս փրկուէ
հոգւոյ՝ դիցէ հանապազորդել յայցելութիս ե-
կեղեցեաց, աղօթից, և Տծային պաշտամանց։
Եւս 'ի վերայ հայհոյչաց տիրապէս դիցէ ա-
պաշխարանս ծանունս ըստ հանգամանաց մե-
ղաց՝ զհետ երթալով կարգաւորուէ սրբազան
կանոնաց, վճռոց քահանայապետաց, ժողովոյն
լատերանու, ևն։ Յայն թէ՝ պարտ է խոստո-
վանահօր վարել խոհականութբ՝ ակնարկելով
'ի վիճակ անձանց․ և չդնել աղքատաց ողոր-
մութի, և ոչ իսկ հասարակօրէն պահս՝ որոց
աշխատուբ անձին հայթհայթեն զկերակուրս
իւրեանց․ նոյնպէս զնոյն աշալրջուէ պահելով
և ընդ այլ ապաշխարօղս Վ․ ևն։ Ձայս վայր
բանք Սբյն կարոլոսի վասն սոցին իրաց։

Իսկ 'ի վր այլոց բանից ծխատրանին՝ ասեմ,

թէ խոստովանահայրն զգուշ լիցի չխնդրել երբեք յապաշխարողէն՝ զի 'ի վճար ապաշխարանաց՝ տացէ ինքեան պատարագս ։ Իսկ եթէ խնդրեսցէ՝ կամ ընկալցի ինչ 'ի վարձ, կամ 'ի գին մատակարարութե̅ խորհրդոյն՝ գործէ զսիմոնականութի̅ մեղս ։

Ասեմ 'ի վախճանի, թէ պարտ է քաջ միտ դնել, զի որդւոց տանուտերաց, որպէս և կանանց ամուսնացելոց՝ մի՛ լիցի դնել զծոմապահութ̅ս. և զայնպիսի ապաշխարանս՝ յորոց մարթ իցէ խիթալ, թէ գործեալ իցէ նորա յանցանս ծանունս. վասն զի և այդ ընդդէմ է ծխարանին ։

---

Յաղագս ԹԷ զո՛ր եղանակ պարտ է ունել ընդդէմ չորից վիճակաց ապաշխարողաց՝ որոց հեշտ է ստէպ անկանել 'ի մեղս ։

հյ. Մի և եթ միայ ինձ դժուարութի̅ 'ի վե̅ նախաճառեալ բանից ծխարանին. յաւել անդ նորա. * Դիւրագայթ եղելոց 'ի նոյն մեղս՝ կարի օգտակար լինի խրատ տալ, զի ստէպ ստէպ՝ ո՛չ միանգամ յամնեան, կա՛մ 'ի սահմանեալ աւուրս տօնից խոստովանեսցին Եւ ‖. ուր նոյն ինքն ծխարանն փոքր մի 'ի խոնարհ թուի ժխտել այդպիսեաց, կամ գո՛նէ յապաղել զարձակումն. յօդ. ‖ Ռաշ Յա դեջէ ։ Սո որոյ ասա՛ ինձ, զիա՞րդ պարտ իցէ զայսօսիկ իմանալ՝ որ բազում օգտէ 'ի գործադրութի̅ իւրացն ։

դ. Առ 'ի միաբանել զայդ բանս ծխարանին ընդ այլոց բանիցն՝ զոր ընդ հուպ ունիմք յա-

ռաջ բերել՝ պարտ է 'ի քառեակ միջակս զանազանել զապաշխարօղս . այսինքն 'ի վերանկեալս . յունակցեալս . յեղեալսն 'ի մերձաւոր առիթս . և 'ի նս՝ որ կան 'ի մերձաւոր վտանգի մեղանչելոյ :

Վերանկեալն կամ ստէպ անկեալն է այն՝ որ 'ի՛ ներէց , և 'ի սովորութ̅է վերստին անկանի 'ի նոյն մեղս . այսպիսիք են՝ որք թէպէտ և առնեն զոր կարենն , և դնեն 'ի գործ զմ̅մ դեղս սահմանեալս նոցա 'ի խոստովանահօրէ , փախչելով յառիթից և 'ի վտանգաց վերստին անկման , և սակայն առ վատթար ունակութեան ստացելոյ՝ տակաւին ստէպ անկանին հանդերձ անհնարին դժկամակամութ̅բ իւրեանց , և ցաւօք սրտի : Նու ահա այսպիսեաց՝ * կարի օգտակար լինի խրատ տալ , զի ստէպ ստէպ՝ ոմ̅ միանգամ յամսեան , կմ՛ 'ի սահմանեալ աւուրս խոստովանեսցին . և եթէ օրէն իցէ՝ հաղորդեսցին ‖ . քանզի 'ի ձեռն զօրութ̅ե խորհրդոյ ապաշխարութ̅ե , և 'ի ձեռն ազդու ներգործութ̅ե ո̅բ հաղորդութ̅ե ստանան զօյժ մեծ զդէմ ունելոյ յարձակմանց սատանայի . և յաղթելոյ չար ունակութ̅եց . վ̅ն որոյ կարդինալ տոլետ . 'ի համառօտութ̅ե անդ իւրում . գլխ . է . գւ . ծփ . կՏ . 11 . գրէ զայս ինչ յաղագս ստէպ սահելոց 'ի գիջութ̅ի . * գործունեայ դեղ է յաճախելն 'ի խոստովանութ̅ի առ ոտս մի և նոյն խոստովանահօր . մինչ զի՝ եթէ հնար է երկուս յեօթնեկի լինիցի . զի մեծ է յոյժ զօրութիւն խորհրդոյս . և որ անփոյթ առնէ զօվլիմբ , մի խոստասցի անձին իւրում զուղղութ̅ի . եթէ ոչ սքանչելեօք առ յ̅այ , և կամ առանձնաշնորհութ̅բ՝ որ դուն ուրեք պարգեւի ‖ :

Առ 'ի համարիլ վերանկեալ (ո՛չ պարզ, այլ սովորական) երեք ինչ իրք պահանջին. ա, ստէպ ստէպ անկմունք զկնի բազում անգամ խոստովանութեանց. բ, յաճախ անկմունք 'ի նոյն մեղս. գ. իսպառ պակասումն յուղղութէ՝ նա և 'ի սկզբնաւորելոյ: Ապա եթէ վերանկեալն ջան ինչ եդեալ իցէ առ ուղղելոյ զանձն, և նուազեցուցեալ զթիւն յանցանաց, ուսուցանեն հասարակօրէն ածաբանք, որոց 'ի վերջոյ ձայնակից լինի Ալփոնսոս դոմինիկեան մանրիկոս. թէ կայ բանաւոր հիմն տրամադրեալ գոլոյ այդպիսի ապաշխարողի. ուստի և արժանի գտանի արձակման: Գիտեմք, զի Մեսպիսիոս ժխտէ այդպիսեաց արձակումն. իբր զի՝ առէ յերես. 141. թէ * Այն վերաստահութիւնք 'ի մահուչափ մեղս՝ թէպէտ և սակաւադոյնք՝ քաջ յայտ առնեն, թէ մարդն այն չէ՛ է դարձեալ յառաջին առողջութի ||: Այլ այդ վարդապետութի ընդդէմ ելանէ սահմանադրութե քնի, և յուսոյ, և հռովմէական ծիսարանի:

Ունակացեալն է այն՝ որ անկանի վասն չարաչար ունակութեն յանձին ստացելոյ, որ և չտանի ինչ փոյթ յաղթահարել. ուստի մեղք նորա յառաջ գայ 'ի չարութէ և յունակութէ. վասն որոյ և չէ՛ արժանի արձակման՝ գոլով տիրապէս անընդունակ, մինչև ջանիցէ զոմ զոր կարէ. և զոր միանգամ ազդեալ է նմա 'ի խոստովանահօրէ առ յաղթահարելոյ և բառնալոյ զչար ունակութի:

Առ համարել ունակութի՝ չէ բաւական լինել միանգամ կամ երկիցս. այլ պիտի նախ՝ զի գտնէ հնգիցս անկեալ իցէ ոք 'ի մեղս. տես. Ճու. ը. ժը. Բեն տեղալ. 4լ. ա. յօդ. 36: Երկ-

րորդ՝ պահանջի, զի գործեալ իցէ զմեղս 'ի նմին տեսակի, 'ի բաց առեալ զնիւթն անմաքուր. յորում ամ̃ տեսակք մեղաց՝ լինին չար ունակութիւնք՝ երբ հանապազորդեն 'ի նոյն: Երրորդ՝ զի ընդ մի և ընդ միւս մեղսն իցեն միջոցք և տարբերութիւնք. վասն զի ներգործութիւնք ամենայն եղեալք 'ի միում նուագի՝ ոչ կայուցանեն զունակութիւն. զորօրինակ՝ եթէ ոք կատարեալ սրտմտութեամբ հայհոյիցէ տասն անգամ 'ի նմին ժամանակի և 'ի նոյն ներգործութեան, անմարթ է ասել զնմանէ թէ ունակացեալ է 'ի հայհոյութեան:

Յայս սակս Իննովկ". ժա. Է այլ նախադասութիւն դատապարտեաց զնախադ". ծէ. * Ո՛չ պարտաւորիմք խոստովանել խոստովանահօր՝ եթէ հարցանիցէ զսովորութիւն մեղաց իւրեք ‖. քանզի պարտական է խոստովանահայրն հարցանել զապաշխարողն. և սմա անկ է անկեղծութեամբ յայտ առնել զսովորութիւն իւր 'ի մեղս. որովհետև սովորեալն կամ ունակացեալն 'ի մեղս՝ անընդունակ է արձակման. ո՛չ է տեսանել 'ի դատապարտութեան նախադ". կ. 'ի նմին իսկ յԻննովկ. ժա: * Ապաշխարողի՝ որ ունիցի զսովորութիւն մեղանչելոյ ընդդէմ օրինացն այ̃, բնութեան, կամ եկեղեցւոյ՝ թէ և չերևեսցի յոյս ինչ ուղղութեան, չէ պարտ ժխտել կամ յապաղել զարձակումն. միայն թէ բերանով իւրով ասասցէ՝ թէ ցաւիմ, և առաջադրեմ զուղղութիւն կեա̃ ‖:

Ամենք ասէին զայդ Է պատրուակաւ՝ թէ պարտական է խոստովանահայրն հաւատալ ապաշխարողին. բայց այդ դատապարտութիւն ցուցանէ՝ թէ ո՛չ միշտ պարտի հաւատալ խոստո-

վանահայրն ։ Իւր չէ՛ բաւական ասելն՝ թէ ոչ է նշան անտրամադրեալ գոլոյ ապաշխարողին՝ պակասելն նր 'ի հաւատարմութէ առաջի այլոց խոստովանահարց ․ իբր զի մարթի լինել թէ 'ի ներքուստ 'ի նմին պահու ստուգիւ զղջացեալ իցէ ։ Ապաքէն ոչ ոք ժխտէ՝ թէ մարթի այդմ պատահիլ ․ բայց սակայն ներքին տրամադրութին պարտի յայտնի լինել խոստովանահօր , որ ունի վարել երբև բժիշկ և դատաւոր ․ Նմին իրի համարին յոլովք , զի թէ հաստատուն յոյս ունիցի խոստովանահայրն վասն ուղղութէ ունակացելոյն՝ կարող է անյապաղ արձակել զնա ։ Սակայն վկայէ կարդինալ ղուկոն ․ յղ ․ խորհ ․ տպտ ․ Հէճ ․ ծդ ․ հատուած ․ Յ ․ հՏ ․ 186 ․ թէ փորձն ցուցանէ , զի երբ տեսանեն ապաշխարողք ունակացեալք , զի յապաղի նոցա արձակումն՝ յղանան 'ի սրտի մծ ևս դարշումն 'ի մեղաց ։ Մինչ զի նրն Փրանչիսկոս սալեզեան 'ի թեմական սահմանադրութէ , և նրն Փրանչիսկոս քսաւերեան 'ի թուղթս իւր , և Պելարմինոս՝ են յայն կարծիս , թէ տարապայման դիւրութին 'ի շնորհել զարձակումն՝ բերէ եկեղեցւոյ վնաս անպատմելի ։

Ապաքէն խոստովանութիք ունակացելոց 'ի մեղս՝ ըստ մեծի մասին են սրբապիղծք ․ վն որոյ չէ պարտ արձակել զնս ․ եթէ ոչ 'ի դիպուածի մասնաւոր իմն ցաւոց , և ածային շարժման 'ի լսել անդ ազդու ինչ քարոզ ․ կամ 'ի տեսանել զյանկարծահաս մահ ընկերին իւ ․ միայն պարտաւորելով երկրորդել զայլ խոստովանութիւնս չարաչարս ։

Ունակութի մեղաց՝ կամ է ուղղակի , և կամ անուղղակի ։ Ուղղակին այն է՝ յորժամ ձանա-

չէ և 'ի միտ առնու ոք թէ ունի զսովորութիւն մեղանչելոյ, և կամի կալ մնալ 'ի նոյն։ Իսկ անուղղակին այն է, յորժամ ոք ոչ 'ի միտ առնու, ուր պարտի 'ի միտ առնուլ՝ թէ ունի զայն ինչ չար սովորութիւն, և ոչ ջանայ ըստ կարի 'ի բաց առնել զայն յիւրմէ։ Ուստի յառաջնումն նուագի 'ի դիպիլ ունակացելոյ ուրուք թէ ուղղակի իցէ և թէ անուղղակի, որ չիցէ երբէք խոստովանեալ՝ յորմէ հետէ ստացաւ զունակութիւն մեղաց, եթէ ցուցցէ զճշմարիտ ցաւ զղջման հանդերձ հաստատուն առաջադրութեամբ ուղղելոյ զանձն, և 'ի գործ դնելոյ զկարևոր միջոցս, որք ազդեալ լինին նմա առ 'ի բառնալ յանձնէ զայն չար ունակութիւն՝ մարթի արձակել. այլ ոչ յայլ նուագս՝ եթէ հանապազորդէ 'ի նոյն ուղղակի կամ անուղղակի։

Իսկ ինքն խոստովանահայրն զօրաւոր իմն եղանակաւ, միանգամայն և քաղցրութեամբ պարտի 'ի կախ թողուլ զարձակումն, աղաչելով 'ի մասնաւոր դէպս զտուիչն լուսոյ՝ տալ լոյս մտաց իւրոց և զօրութիւն բանից։

Եթէ պատահեսցին ոմանք 'ի վերանկելոց, որք ունիցին զվտանգ տալոյ զգայթակղութիւն, կամ վատահամբաւ լինելոյ 'ի չհաղորդիլ իւրեանց, ո՛չ լինի քահանայի որ հանդերձեալ իցէ առ ետեղ պատարագել. կամ կնոջ՝ որ ընդ ազգականիցս իւր գայ հաղորդիլ, յայնժամ պարտ է զննել, ա՞րդեօք յայլում նուագի չիցէ տուեալ նոցա արձակումն, կամ տուեալ իցեն նշ դեղք ընդդէմ սովորական մեղաց իւրեանց։ Ու եթէ ոչինչ յայդպիսեաց այդի անցեալ իցէ ընդ նոսա, և 'ի ձեռն խրատուց այնպէս յանձինս զգայցեն զվիճակ թշուառութեանց իւրեանց,

մինչև ծանիցի թէ շնորհք հարկանեն զսիրտ նոցա՝ մարթին արձակիլ: Բայց ոմանք 'ի նախանձայոյզ խոստովանահարց այլազգ վարին է՟ քահանայս:

'Ի խուռներնթաց ժամանակի լինի պատահիլ տխմար մանկանց և կանանց ունակացելոց, որք ունին զվերասահութիւն՝ երբեմն և 'ի նիւթ ծանր, որ յաչս նոցա թեթև ինչ է համարեալ. կամ 'ի նիւթ այնպիսի զոր չփոթ ճանաչման ըմբռնեն չար լինել, այլ անորոշ ը՟ ծանր կամ թեթև գոլոյ. զորօրինակ՝ ստերջմնութիւնք առանց վնասու ընկերին, բանք անպարկեշտք, դոյզն գողութիւնք, անէծք սակաւատեւք, ծանր բամբասանք յիրս ճշմարիտս՝ բայց գաղտնիս: Որդ՝ այսպիսեաց ասեն մծարանք՝ ոչ է լաւ զլանալ զարձակումն, այլ յանդիմանել զնոսա, և երեսս իմն ցուցանել չարձակելոյ զնոսա: Այլ եթէ ծանիցեն լինել ծանր մեղք, զորօրինակ՝ անհամեստութիւն, հաւանութիւն պագշոտ խորհրդոց, գայթակղական կատականք, հայհոյութիւն ընդդէմ սրբոց, անիրաւութիւնք, արմատացեալ ատելութիւնք, բամբասանք, և որ 'ի սոյին սակի, այսպիսեաց պարտ է ժխտել զարձակումն. քանզի ամենայն ոք՝ որչափ և տխմար իցէ՝ գիտէ լինել սոյա մեղք ծանր. մինչ զի և ժամանակ բազմութեան ամբոխին չպարտէ ստիպել զխոստովանահայրն առ 'ի արձակել զայդպիսիս՝ եթէ չգտցէն 'ի նոսա նշանք արտաքոյ կարգի: Պատճառն է յայտնի. վասն զի արձակել զանտրամադրեալն՝ է ներքսապէս չար:

Յապաղումն արձակման պարտի լինել մինչև ցաւուրս ութ, կամ տասն. (չէ՟ բանս զնմանէ՝ որ իցէ 'ի մերձաւոր առիթս.) քանզի յապա-

դուռն կարգեալ է միայն՝ առ 'ի պատրաստել զապաշխարողն 'ի զղջումն , յուշ առնելով նմա զմիջոցս զօրաւորս ։ Իսկ ասել նմա՝ դարձ առիս յետ ամսոյ միոյ , կամ երկուց , նոյն էր թէ ասէիր , մի դառնալ երբէք ։

Ոչ արժան խոստովանահօր արձակել զապաշխարողն , եթէ ոչ թողու 'ի բաց զմերձաւոր առիթն . զորմէ եթէ պնդեսցէ ապաշխարողն՝ թէ օգուտ է ինքեան , չէ ինչ փոյթ . այլ պատասխանի տուեալ ասասցէ նմա . Որդեակ զիա՞րդ մարթ իցէ ինձ արձակել զքեզ՝ երբ սիրելի և փափաքելի է քեզ մեղք քո , այն՝ որ բերէ զմահ հոգւոյ քոյ . աւա՜ղ որդեակ , զի կուրացուցանէ զքեզ շահասիրութիւն քո այդ ։

Այլ եթէ կայցէ դժուարութիւն հեռանալոյ յառթէն , զորօրինակ՝ եթէ որդի տանուտեառն մերձիցէ ընդ կնոջ եղելոյ 'ի տան հօր իւրոյ , կամ ընդ ազգականի իւրոյ . և չունիցի հնարս բաժանելոյ զնա յիւրմէ առանց մեծի վատահամբաւութեան , անկ է խոստովանահօր ջան դնել՝ զի զմերձաւոր առիթն արասցէ նմա հեռաւոր . վասն որոյ պարտի պատուէր դնել ապաշխարողին , մի գտանիլ երբէք միայն ընդ միայն առընթեր այնմ անձին . մանաւանդ թէ կամովին կեղծեսցէ զգժտութիւն ինչ ընդ նմա ։ Եւ ստէպ ստէպ յանձն արասցէ զանձն իւր Այ , մասնաւորաբար ընդ առաւօտս և ը̃ երեկոյս . և 'ի զգալ փորձութիւն ինչ անձին՝ դիմեսցէ առ ամենամաքր կոյսն , և պահեսցէ երբեմն զծոմ , և այլն ։

Յուշ լիցի խոստովանահօր դնել քաղցրութ̃բ ընդ վերանկեալս . զի և չէ՞ իսկ այդ գործ՝ դիմախօսեալ նաև 'ի Սրբյն կարոլոսէ պորոմէոսէ ,

այլ քաջ 'ի կեր արկեալ՝ և իբրու կանոն կարգեալ 'ի մեծամեծ նոցա առաջնոց և յետնոց. զորօրինակ՝ ('ի բաց թողեալ զՀնագոյնս յիշատակեալս 'ի պանծալի հօրէ փոնթանէ 'ի Ճկն. ՅԷ. Նախադաս". կուեմնեցեայ,) 'ի նոյն փրանկիսկոսէ քսաւերեան, 'ի նոյն փիլիպպոսէ ներեան, 'ի նոյն փրանկիսկոսէ սալեզեան, 'ի նոյն անդրէէ ավելլեան, և 'ի նոյն իգնատիոսէ:

Նոյնպէս և որ կայ 'ի մերձաւոր առիթս մեղանչելոյ՝ առնէ խոստովանութիւն սրբապիղծ:

Մերձաւոր առիթ անուանի այն վտանգ՝ որ յոլովակի ածէ 'ի մեղս: Արդ կրկին օրինակաւ մարթ է իմիք լինել մերձաւոր առիթ մեղաց. զի կամ է ըստ ինքեան սադրիչ 'ի մեղանչել, և կամ զի ապաշխարողն այնպէս սովորեալ է 'ի մեղանչել յայնմ առթի, մինչև խոստովանահայրն իրաւամբք ունի դատաստան առնել, թէ առ չար ունակութիւն՝ նաև առ յապայն չունի նա ժուժկալել՝ ցորչափ կայ մնայ 'ի նմին առթի: Յառաջին օրինակն հայի ունել 'ի տան իւրում, կամ 'ի տեղւոջ՝ ուր կամի և կարէ գտանել զանձն ընդ որում մեղանչէ. կամ այլով իւիք Ճանապարհաւ բնակակից լինել ընդ նմա և կենակից, յաճախել 'ի բանս, 'ի հայեցուածս, 'ի քաղաքավարութիւնս, և յայլ շարժմունս, և 'ի գործս տռփական սիրոյ: Յօրինակն երկրորդ հայի՝ եթէ վիրահատ ոք, օրինակ իմն 'ի դարման տանիլ կանանց՝ զգասցի զգրգիռ և ըզխորհուրդ չար: Զնոյն իմն և զխոստովանահօրէ, որ 'ի խոստովանութեան կրեսցէ ինչ անարժան, և հաճեսցի ընդ այն: Առիթք առաջին կարգի՝ կոչին բացարձակ, քանզի ըստ ինքեան են ամենեցուն պատճառ մեղաց: Ա-

ուխտք երկրորդի կարգի՝ ասին յարաբերականք, զի հայեցեալ առ ումանս և եթե են մերձաւոր պատճառ մեղաց :

Մերձաւոր առիթն մեղաց՝ եթէ բացարձակն և եթէ յարաբերականն՝ կամ է կամաւոր, և կամ ակամայ՝ որ և հարկաւոր : Կամաւորն է՝ յորժամ ընդ իշխանութեամբ ապաշխարողին է բառնալ զայն ՚ի միջոյ . որպէս տանուտէրն՝ որ մեղանչէ ընդ աղախնոյն . որովհետև ընդ իշխանութեամբ իւրով է հանել զնա ՚ի տանէն , ասի լինել ՚ի կամաւոր մերձաւոր առիթ մեղանչելոյ : Բայց այլազգ է բանն ՚ի վերայ որդւոյ՝ որ անկանի ընդ աղախնոյ տան զի սա ասի լինել ՚ի մերձաւոր առիթ ակամայ : Իսկ յարաբերական է եղեալն ՚ի խոստովանահայրն կամ ՚ի ժողովրդապետն , որք ՚ի լսել իւրեանց զխոստովանութիւն՝ մեղանչեն ըստ նախադրելոյդ , սակայն այսու տարբերութեամբ . զի ազատ խոստովանահօրն է առիթ կամաւոր . իսկ ժողովրդապետին՝ է ակամայ . քանզի սա որովհետև պարտական է լսել զխոստովանութիւն՝ ոչ կարէ չլսել առանց հրաժարելոյ ՚ի հոգաբարձութենէն . յորմէ և չկարէ իսկ հրաժարել , եթէ յանուն այնր եկեղեցւոյ է ձեռնադրեալ , և չունիցի զայլ ապրուստ :

Արդ՝ չկարէ երբէք արձակել այն՝ որ կայ և մնայ ՚ի կամաւոր , բացարձակ՝ կամ յարաբերական մերձաւոր առիթս մեղաց : Ապա եթէ առիթն իցէ ակամայ՝ պարտ է քննել . արդեօք իցէ ՚ի նմա ունակութիւն մեղաց . զի յայնժամ Բանի ունակութեան՝ պարտ է ՚ի կալս թողուլ զարձակումն , և փորձել ընդ նմա որպէս ընդ ունակացեալ . իսկ եթէ չիցէ , յայնժամ մարթ է

արձակել զնա միանգամ կամ երկիցս՝ մատուցանելով նմա դեղս պատշաճաւորս առ 'ի չանկանիլ վէրստին. յորս գլխաւոր դեղն է չգտանիլ երբէք մայն ընդ մայն՝ ընդ կնոջ, հանդերձ այլ ևս գործովք ապաշխարանաց, զորս եթէ 'ի գործ արկանիցէ, և առնիցէ զոր կարէն՝ լինի արձակել, թէպէտ և անկցի վէրստին. միայն թէ գտցի 'ի նմա երևելի նշան ինչ ուղղութե: Ապա եթէ չառնուցու 'ի կիր զյիշատակեալ միջոցս, յայնժամ քանզի առիթն՝ որ յառաջն էր նմա ակամայ՝ փոխի 'ի կամաւոր, ոչ լինի արձակել: Որ միանգամ կայ 'ի մերձաւոր առիթի մեղանչելոյ՝ մեղանչէ այնչափ՝ որչափ գնէ զանձն իւր յայն առիթ. թէպէտ և չգործեսցէ իրօք զմեղսն. զորօրինակ՝ որ յաճախէ զօր ամ 'ի տուն՝ յորում երկիցս կամ երիցս 'ի շաբաթու անկանի 'ի մեղս, թէ և երկիցս կամ երիցս չմեղիցէ, տակաւին պարտաւոր գտանի նոյն մեղաց ծանր– Հրանգին՝ յոր արկանէ զինքն մեղանչել յոմ աւուր: Իսկ այսմ քաջ միտ դնել պարտին խոստովանահարք, որպէս զի ապաշխարողք ամբաստան լիցին զներգործական մեղաց իւրեանց, և զմերձաւոր վտանգաց՝ յոր եդին զանձինս բազում անգամ. որ է մեղք համատեսակ: Այնպէս նա՝ որում խաղն մերձաւոր առիթ է հայհոյելոյ, 'ի խաղալ իւրում միշտ մեղանչէ, եթէ հայհոյիցէ՝ և եթէ չհայհոյիցէ, վասն վտանգին՝ յորում դնէ զինքն 'ի հայհոյել:

'Ի վերայ մերձաւոր առիթի մեղանչելոյ են չորեքին նախադասութիւնք դատապարտեալք. այսինքն՝ խա, յաղէքսանդրէ է. և կա, կբ, և կգ՝ Յինն՝ովկ". ժա: Առաջինն է, * Ոչ է

պարտ պարտաւորել զհարճաւորն 'ի բաց հանել զհարճն, եթէ սա օգտակար իցէ 'ի հաճել խոհարարութեամբ զկամս մարմնոյ նորա, երբ 'ի պակասել սորին դժուարին կեանս ունելոյ իցէ նա, և այլ խորտիկք յայլոյ եփեալք տաղտուկ բերիցեն նմա, և դժուարին իցէ գտանել զայլ աղախին ‖ ։ Երկրորդն է ․ * Կարէ երբեմն արձակել այն՝ որ դեգերի 'ի մերձաւոր առիթ մեղանչելոյ ․ զոր թէպէտ և կարէ՝ այլ չկամի թողուլ ․ մանաւանդ թէ ուղղակի և դիտմամբ խնդրէ, կամ մխէ զանձն իւր 'ի նոյն ‖ ։ Երրորդն է ․ * Մերձաւոր առիթ մեղանչելոյ ոչ է խուսելի, երբ ընդառաջ եկանէ օգտակար կամ համեստ պատճառ ինչ չխուսելոյ ‖ ։ Եւ չորրորդն է ․ * Օրէն է խնդրել ուղղակի ըզմերձաւոր առիթ մեղանչելոյ՝ վասն բարւոյ ինչ մեր՝ կամ ընկերին, ժամանակաւորի կամ հոգևորականի ‖ ։ Պատճառ դատապարտութեան նախադասութեանցս է, քանզի զմերձաւոր առիթն մեղանչելոյ գլխովին պարտ է բառնալ, միայն թէ չգուցէ 'ի նմա անկարութիւն բնական կամ բարոյական՝ որ զայն խափանիցէ ․ ապա թէ ոչ՝ մերձաւոր վտանգն մեղանչելոյ՝ որ բերէ ընդ իւր զայն առիթ, լինի կամաւոր և մեղանչական ։ Վասն որոյ չէ մարթ երբէք արձակել ապաշխարողին, որ գտանի 'ի մերձաւոր առթի, զոր կարէ՝ և չկամի բառնալ, մանաւանդ թէ խնդրէ ուղղակի ։ Եւ ոչ իսկ մարթ է պահել առ իւր զմերձաւոր առիթն մեղանչելոյ սակս որ և իցէ ժամանակաւոր կամ հոգևոր շահու անձին կամ ընկերին ․ զի * Զի՞նչ օգտիցի մարդ, թէ զաշխարհս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ ‖ ․ Մատ ․ ԺԶ ․ 26 ։ Եւ արդ՝ ե-

թէ շահիլ զաշխարհ ամ չէ բաւական պատճառ առ արդարացուցանել զմեր գործս, երբ իցէ 'ի նոյն կորուստ հոգւոց մերոց. ապա զիա՞րդ մարթ իցէ յաղագս որ և իցէ ժամանակաւոր կամ հոգևոր բարւոյ մերոյ կամ ընկերին՝ զհետ լինել օրինապէս կամ ուղղակի մերձաւոր առիթի մեղանչելոյ՝ որ հարկաւ ընդ իւր բերէ զծանր մեղս: Ապաքէն որ սիրէ զվտանգ՝ 'ի նմին կորիցէ. ըստ մեզ, որ սիրէ զչար՝ 'ի նմին սատակեսցի, ասէ հոգին սբ. սիրաք. Գ. 27: Իսկ առաքեալ. առ հռովմ. Գ. 8. * Մի՛ լինի ասել, արասցուք զչարն՝ զի եկեսցէ բարի ||:

Որդ՝ նա ասի լինել 'ի մերձաւոր վտանգի մեղանչելոյ, որ ըստ ներկայ վիճակի տրամադրութեան և զօրութեան իւրոյ՝ դատեալ լինի խոհեմ մտօք թէ արդարև անկցի՝ եթէ դիցէ զանձն 'ի մերձաւոր վտանգ մեղանչելոյ. որպիսի համարեալ լինի երիտասարդ ոք՝ որ առանց հարկի ընթեռնու զպիղծ գրեանս. կամ առանց հարկի մտանի խորհել զանարժան իրաց: Նմանապէս և նա՝ որ քաղաքավարի ընդ օրիորդս համարձակ առանց ինչ ստիպողական հարկի՝ մեղանչէ, թէպէտ և ներգործութեամբ ոչ մեղիցէ 'ի նմին տեսակի մեղաց. և այս՝ բանիւ վտանգին՝ յոր արկանէ զանձն առ 'ի զայն գործել. և ընդ այսպիսին պարտ է վարիլ՝ որպէս թէ իցէ իրօք 'ի մերձաւոր առիթի մեղանչելոյ, յուշ ածելով թէ առիթն է մեզ արտաքին ինչ, իսկ վտանգն ներքին. ուստի առաւելու զդիւրութիւն մեղանչելոյ:

### Յաղագս դիպուածոց՝ յորս խոստովանահայրն կամ ո՛չ կարէ, կամ ո՛չ պարտի արձակել, և կամ պարտի յապաղել զարձակումն :

կց. Արդ՝ ժամ է լսել զբան ծիսարանին յաղագս արձակման՝ զի ասէ. * Քաջ միտ դիցէ քահանայն, երբ և որո՞ց պէտք իցեն տալ կամ մերժել, կամ յապաղել զարձակումն. զի մի՛ արձակեսցէ զանարժանս այսպիսում շնորհի մեծի. որպիսի են՝ որք ո՛չն տան նշան ինչ զղջման. և ո՛չ կամին 'ի բաց դնել զատելութիս և զթշնամութիս, կամ հատուցանել զօտարին իրս՝ երբ կարեն, կամ 'ի բացէ առնել զմերձաւոր առիթ մեղանչելոյ, և կամ այլով օրինակաւ 'ի բաց թողուլ զմեղս, և փոխել զվարս 'ի լաւ անդր. և կամ ոյք ետուն հրապարակաւ զգայթակղութի, եթէ ո՛չ հրապարակաւ հատուցումն արասցեն և բարձցեն զգայթակղութի. որպէս և ըղձնոսա չարձակել՝ որոց մեղք պահեալ են առաջնորդայ ‖: Ուրեմն չէ՛ պարտ տալ ամենեցուն զարձակումն :

պ. Չէ՛ մարթ մերժել զարձակումն ապաշխարողին՝ որ իցէ քաջ տրամադրեալ. և ո՛չ իսկ ընդ պատրուակաւ՝ որպէս այն թէ կատարեսցէ նախ զմասն ինչ ապաշխարանաց եդելոց. որոյ հակառակն դատապարտեալ է յԱղէքսանդրէ Է. 'ի նախադ". ժզ. ժէ. և ժը : Ապա 'ի միտ առցէ խոստովանահայրն թէ, է՛ զի ո՛չ կարէ արձակել. և է՛ զի ո՛չ պարտի արձակել. և բազում այն է՝ զի պա՛րտի յապաղել զարձակումն :

Ո՛չ կարէ արձակել խոստովանահայրն յոր-

ժամ արգելուածն յառաջ գայ յանձնէ անտի
իւրմէ, իբր զի չունի իշխանութիւն արձակելոյ
'ի դիպուածոյ ինչ, Թէպ՚տ և ապաշխարօղն
իցէ տրամադրեալ. այսինքն՝

ա. Եթէ ապաշխարօղն անկեալ իցէ 'ի դիպ-
ուածս ինչ, կամ 'ի բանադրանս պահեալս պա-
պին կամ եպիսկոպոսին ։

բ. Եթէ պարտական գոլով զեկուցանել
զդիպուած ինչ վերաբերեալ առ ժողովն սրբ-
բաքննուե̄, չիցէ զեկուցեալ զայն 'ի սահման-
եալ ժամանակի ըստ վճռոյ սրբաքննութե̄,
կամ եպիսկոպոսի ։

գ. Եթէ պարտաւորեալ լինելով զօրութ̄
պապական կամ եպիսկոպոսական ազդարարութե̄
'ի վեր հանելոյ ինչ ինչ 'ի սահմանեալ ժամա-
նակի, չիցէ 'ի վեր հանեալ ։

դ. Եթէ ապաշխարօղն իցէ նզովեալ, և կմ̄
անկումն նորա 'ի նզովս՝ իցէ հրատարակեալ
մասնաւոր վճռով եկեղեցական դատաւորի ։

ե. Եթէ ոք անկեալ իցէ 'ի մարմնաւոր
մեղս ընդ խոստովանահօր, ոչ կարէ սա զնա
արձակել, և ոչ իսկ 'ի ժամանակս յոբելինի ։

զ. Եթէ խոստովանահայրն իցէ նզովեալ,
կախեալ, կամ անկանոնական՝ ոչ կարէ արձա-
կել. այն զի՝ եթէ հրատարակեալ իցէ այնպի-
սի գոլ՝ արձակումն նորա ոչ միայն է ապօրինա-
ւոր, այլ և անվաւեր.ապա եթէ չիցէ հրա-
տարակեալ՝ վաւեր է, բայց միշտ ապօրինաւոր.
վ̄ս որոյ 'ի լսել անդ զխոստովանութիւն՝ գործէ
զկրկին մահուչափ մեղս. մի՝ ընդդէմ ա̄ծային
իրաւանց գոլով 'ի մեղս, և միւս ևս՝ ընդդէմ
պատուիրանին եկեղեցւոյ՝ գոլով բանադրեալ,
կամ կախեալ, և կամ անկանոնական. և որ

մեծն է՝ բազմապատկին կրկին այն մեղք ըստ թուոյ միոյ միոյ 'ի խոստովանութեանց՝ զորս լսէ։ Այլ աստանօր պէտք են 'ի միտ առնուլ՝ զոր սահմանեաց ժողովն Տրիդ". 'Ի Նիստ. 14. գլ. Է. ակնարկելով առ նոսա՝ որք գտանին 'ի կէտ մահու։

Անմարթ է և ես խոստովանահօր արձակել՝ երբ արգելուածն ծագի 'ի կողմանէ ապաշխարողին՝ որ չիցէ տրամադրեալ առ ընդունիլ զարձակումն. արդ անտրամադրեալ համարի՝

Ա. Յորժամ չունի նշան ճշմարիտ զղջման և առաջադրութեան. յորժամ ըստ բաւականին չիցէ արարեալ զքննութիւն խղճի մտաց. յորժամ չիցէ վճարեալ զապաշխարանս յետին խոստովանութեան՝ երբ կարէր. և կամի իսկ ոչ՝ մինչ կարէ։ Արդ՝ յայնժամ չերևեցուցանէ զնշան ճշմարիտ ցաւոյ կամ զղջման՝ երբ մատչի առ ոտս խոստովանահօր ամբարտաւանութեամբ, և երբ արհամարհելով զպաշտօնեայն Քրիստոսի, և ցասնու խռովեալ ընդ հարցաքննութիւն խոստովանահօր. կամ 'ի խոստովանութեան անդ իբրու ջանայ զանձն անբասիր առնել, և յայլոց վերայ արկանել զմեղն. կամ չկամի իսկ 'ի կիր առնուլ զկարևոր դարմանս առ 'ի խորշիլ 'ի մեղաց. կամ ստէպ փոխէ զխոստովանահայրն, կամակար մտօք խնդրելով զառաւել տգէտն, և զտարադէպ ներողամիտն. և պարզաբար՝ յորժամ նուազի յորում խոստովանահայրն իմաստասիրէ, թէ խոստովանողքն կամէր թաքուցանել զծանր ինչ յանցանս, զոր նա ինքն 'ի յայտ եբեր իւրով ճարտարութեամբ։

Բ. Յորժամ յանիրաւի առ իւր պահէ զինչ այլոց, և չկամի յետս դարձուցանել երբ կարէ։

Զսոյն իմա՛ և զհատուցմանէ համբաւոյ, և զկատարմանէ կտակի, երբ կարէ՝ և չկամի 'ի գլուխ տանել:

Գ. Յորժամ զատելութիւն և զթշնամութիւն տածէ 'ի սրտի իւրում, և ո՛չ կամի հերքել կամ հաշտիլ ընդ թշնամւոյն:

Դ. Յորժամ գտանիցի 'ի մերձաւոր և 'ի կամաւոր առիթս մեղաց, զոր կարէ բառնալ, այլ ո՛չ կամի:

Ե. Յորժամ տայ այլում զմերձաւոր առիթ մահուչափ մեղանչելոյ, և չկամի 'ի բաց բառնալ զայն, կամ խափանել զչարն՝ որոյ ինքն իցէ պատճառ: Որպիսի են առաւելապէս նոքա՝ որք պահեն և ստածեն զսպաստանարանս, կամ զժողովս արգելեալ խաղուց. կամ ուր անպակաս լինին հայհոյանք, կամ ստերդմնութիւնք. և լինին արբեցութիւնք, զրոյցք, կամ արարք անհամեստք, և այլ այսպիսի յանցանք: Նա և ոյք շարագրեն, տպագրեն, կամ վաճառեն ըզգիրս, կամ զգրուածս, յորս կայցեն բանք ընդդէմ հաւատոյ կամ բարի վարուց: Զնոյն իմա՛ և զնկարչաց, և զանդրիագործաց, և զվաճառողաց, և զպահողաց զպատկերս անառակս, և զարձանս անպատկառս: Նաև ոյք վերծանեն 'ի թեատրոնի, կամ նուագեն զկատակերգութիւնս անարժանս: Նա կանայք որք շրջին մերկ լանջօք, և բազկօք, կամ պճնին զարդուք՝ որք ըստ ինքեան ձգեն 'ի պագշոտութիւն. մանաւանդ երբ ըստ բաւականին ազդեալ և խրատեալ իցեն յառաջնորդաց կամ 'ի խոստովանահարց վասն գայթակղութեան՝ զոր առթեն: Պարտ է ժխտել նոցա և զհաղորդութիւն երբ այդպիսի տարազու յանդիման լինին:

զ· Յորժամ զիա՛րդ և իցէ տգիտութե̄՝ ան-
գիտասցի զգլխաւոր խորհուրդս ՚նք հաւատոյ,
և մեղադրելի տգիտութե̄ ոչ գիտասցէ զտէրու-
նական աղօթս, և զտասնաբանեայ օրէնս, կամ
զպատուիրանս եկեղեցւոյ։

է· Յորժամ ոչ գիտիցէ զկարևոր գիտելիս
սեպհական վիճակի իւրոյ. յոյր սակս հանդերձ
մեծաւ թշնամանօք Այ̄՝ պակասի ՚ի սեփական
իւրում պաշտաման. որպիսի են ժողովրդա-
պետք խոստովանահարք, դատաւորք, բժիշկք,
և այլք. որք տգիտանան՝ զոր պարտական էին
գիտել առ բարւոք կիրառութի̄ պաշտամանց
իւրեանց։

ը· Յորժամ առնեն զապօրինաւոր, և զա-
նիրաւ, կամ զվաշխառուական դաշինս՝ և ոչ կա-
մին հրաժարիլ։

թ· Յորժամ ծնօղք ոչ ուսուցանեն զաւակաց
իւրեանց զքրիստոնէական վարդապետութի̄.
կամ ոչ առաքեն զնոսա յուսումն քրիստոնէա-
կան վարդապետութե̄, մանաւանդ յետ մա-
նաւոր ազդարարութե̄ ժողովրդապետին։ Զնոյն
իմն և վասն տեարց՝ որք ոչն հոգան, զի ծա-
ռայք և աղախնայք իւրեանց ուսցին զոր պար-
տին գիտել առ յաւիտենական փրկութի̄ իւր-
եանց։

ժ· Յորժամ ամուսնացեալք առանց օրինա-
ւոր պատճառի, և առանց հրամանի եկեղե-
ցական առաջնորդին մեկնեալ կան յիրերաց։

՚Ի վախճանի պարտի խոստովանահայրն յա-
պաղել զարձակումն այնպիսի ապաշխարողաց,
զորոց ըստ առաջիկայ վիճակին հասուն մտօք
գուշակէ, թէ փութով ունին դառնալ անդրէն
՚ի նոյն մեղս. կամ անփոյթ են առնել զպար-

տաւորութիս իւրեանց, զոր և խոստանան իսկ. զորօրինակ՝

ա. Ունակացելոյն ՚ի մահուչափ ինչ մեղս, մինչև տայցէ նշան երևելի ուղղութե, թէև խոստասցի նա առնել զամենայն ։

բ. Գտելոյն ՚ի մերձաւոր և յակամայ առիթ մահուչափ մեղաց, մինչև ՚ի գործ դիցէ զկարևոր դեղս եղեալս նմա ՚ի խոստովանահօրէ, և ցուցցէ ստոյգ նշան ուղղութե ։

գ. Այնմ՝ որ ոչն գիտիցէ զգլխաւոր խորհուրդս ՚սբ հաւատոյ, և զպատուիրանս ՚այ և եկեղեցւոյ, ոչ առ մեղադրելի տգիտութե, այլ վասն պակասութե դատողականութե, կամ վասն բնածութե. զոր և ՚ի ժամու անդ չէ մարթ հրահանգել գէթ ՚ի վերայ էական մասանց հաւատոյ, մինչև լիցի ընդունակ կարևոր կրթութե ։

դ. Հրապարակական մեղաւորաց, որք հրապարակաւ տուեալ իցեն զգայթակղութի, թէպէտև ուղղեալ իցեն, մինչև խրամակարկատ արասցեն զտուեալ գայթակղութիս ։

ե. Ունողաց, երբ բանիւ կամ գործով տան գայթակղութի ընտանեաց իւրեանց, մինչև ցուցանիցեն նշան փոփոխութե վարուց, և բարձման գայթակղութե ։ ՚Ի սոյին սակս են՝ և որք ննջեցուցանեն յանկողինս իւրեանց զուստերս և զդստերս, որոց լցեալ իցէ զամս եօթն ։ Զնոյն իմա և վասն հոգաբարձուաց, դաստիարակաց, հօրեղբարց, քեռեաց և այլն, որք տան զգայթակղութի սանուց իւրեանց ։

զ. Այնպիսի ապաշխարողաց, որք պարտական են զեկուցանել ատենի սրբաքննութե, կամ ծանուցանել զիրս ինչ զօրութբ պապական

կամ Եպիսկոպոսական հրամանագրի, զոր և կարէին կատարել ամենայն դիւրութ՟բ նախ քան զլրումն սահմանեալ ժամանակին, մինչև արդեամբք զեկուսցեն կամ ծանուսցեն՝ յորժամ խոստովանահայրն իրաւամբք խիթայ թէ զկնի արձակման՝ ոչ ունէին զեկուցանել կամ ծանուցանել։

Է. Ը՟յնմ՝ որոյ չիցէ տակաւին կատարեալ զ'ի վերայ եդեալ ապաշխարանս 'ի յետին խոստովանութե՟, զոր և կարէր դիւրաւ կատարել. արդ պա՛րտ է պատուիրել նմա կատարել զայն և ապա գալ մատչիլ առ նոր խոստովանութ՟ի։

Ը. Ը՟յնմ՝ որոյ չիցէ արարեալ զբաւական քննութ՟ի խղճի մտաց՝ զոր կարէր և պարտ էր առնել ինքնին։

Թ. Ը՟յնմ՝ որ գտանի 'ի դժուարին դիպուածըս ինչ, մինչև չկարել խոստովանահօր սահմանել ինչ առ ետեղ։

Ժ. Հուսկ յետոյ պարտ է յապաղել զարձակումն այնց ապաշխարողաց, որք անկեալ իցեն 'ի դիպուածս պահեալս պապին կամ եպիսկոպոսին, երբ հարկ համարեսցի խոստովանահայրն առնուլ զիշխանութ՟ի արձակելոյ 'ի վերապահելոց։

## Յաղագս եղանակի խոստովանութե. և արձակման հոգեւորաց :

հդ. Բանք ծիսարանին վա եղելոցն 'ի վտանգ մահու՝ այս են. *Ապա եթէ ոք 'ի վտանգ մահու գտեալ՝ խոստովանեսցի, պարտ է արձակել զնա յամենայն բանադրանաց և 'ի մեղաց. վասն զի յայնժամ դադարէ ամենայն վերապահութի. այլ կանխաւ՝ եթէ կարող ինչ է, հատուսցէ զոր պարտական իցէ ումեք. և եթէ լիցի նմա ազատիլ 'ի վտանգէն, և իւիք օրինակաւ մեծաւորին՝ յումմէ ունէր առնուլ զարձակումն՝ յանդիման լինել պարտաւորեսցի, իսկ և իսկ ընդ կարողն լինել՝ յանդիման լիցի նմա առնել զիւր պարտսն ‖ : Արդ՝ զիա՞րդ պարտ է 'ի գործ արկանել զայս վարդապետութի :

դ. Անկ է խոստովանահօր զառաջինն յուշ ածել յարձակել անդ զոք 'ի վտանգ կամ 'ի կէտ մահու, թէ պարտ է միշտ կանխել զարձակումն 'ի բանադրանաց՝ քան զարձակումն 'ի մեղաց. վա զի մարթի դիպիլ ապաշխարողին ունել զարգելումն ինչ բանադրանաց. որով անընդունակ գտցի արձակման 'ի մեղաց, եթէ նախ չարձակեսցի 'ի բանադրանաց. յոյր սակս հռովմէական ծիսարանն դնէ զառանձին ձև բանից, որով պարտ է արձակել՝ զորս գտանին 'ի կէտ կե՞ 'ի վտանգ մահու. այսպէս ունելով բանին : *Իսկ 'ի ստիպել ծանր ինչ հարկի 'ի վտանգ մահու՝ կարող է համառօտիւ ասել խոստովանահայրն. Ես արձակեմ զքեզ յա-

մենայն բանադրանաց և 'ի մեղաց՝ յանուն Հօր՝ և այլն:

Երկրորդ՝ պարտ է յուշ ածել, թէ 'ի կարգի վերապահեալ մեղաց՝ են որ հանդերձ բանադրանօք են. և են՝ որ առանց բանադրանաց: Արդ իբր հոգևորն՝ որ ունիցի մեղս պահեալս պապին կամ եպիսկոպոսին առանց բանադրանաց՝ կարէ և պարտի արձակել զնա առանց դնելոյ նմա բեռն յանդիման լինելոյ վերապահողին եթէ առողջասցի. վասն զի 'ի կէտ կամ 'ի վտանգ մահու դադարէ ամենայն վերապահութիւն. բայց եթէ հոգևորն ունիցի դիպուած պահեալ պապին կամ եպիսկոպոսին հանդերձ բանադրանօք, յայնժամ պարտական է խոստովանահայրն պահանջել 'ի հոգևորէն՝ որոյ չիցէ կորուսեալ զզգայութիւն, զերդումն յանդիման անելոյ զանձն վերապահողին եթէ առողջասցի: Իսկ թէ երբէք խոստովանահայրն առ իւրոյ տգիտութեան, կամ առ անհոգութեան արձակիցէ զնա 'ի բանադրանաց պահելոյ պապին կամ եպիսկոպոսին առանց կանխաւ պահանջելոյ զերդումն՝ մեղանչէ ծանունս: Բայց եթէ վերապահումն իցէ 'ի կոնդակէ ընթրեաց՝ անվաւեր իսկ լինի արձակումն՝ ը̄ մաթթևկեայ և այլոց. (որպէս նախաձայնեցաւ 'ի բանս յղ. կոնդակէ ընթրեաց.) ըստ որոյ արձակումն յայնժամ միայն վաւեր լինի, երբ հոգևորն բանիւ կամ նշանացի չիցէ կարող տալ զերդումն զայն:

Բայց սակայն հմտագոյն վարդապետք ասեն, թէ միշտ է վաւեր յիշատակեալդ արձակումն. քանզի պարտ է ասեն ենթադրել՝ թէ յայդպիսի դիպուած եկեղեցին լնու զթերին. կամ թէ պապն ոչ երբէք ունէր զայդ դիտաւորութիւն

'ի բանս կոնդակին. բայց և այն է ճշմարիտ, զի թէ երբէք առողջասցի հոգեվարն, որ առ իւրոյ անկարութ̃ե արձակեցաւ առանց այդր երդման, ընդ առողջանալն պարտական է խոստովանահայրն ազդ առնել նմա. զի իսկ և իսկ յանդիման լինի այնմ, որ ունի իշխանութ̃ի արձակելոյ 'ի բանադրանաց, յորոց արձակեցաւ 'ի կէտ մահուն առանց տալոյ զերդումն:

'Ի վախճանի պարտ է յուշ ածել, չարձակել 'ի [illegible] զապաշխարողն, որ պարտաւոր իցէ հատուցման ընչից, կամ համբաւոյ. և կամ փոխարինելոյ զինչ և իցէ վնասուց ընկերին՝ որոց ինքն եղև պատճառ՝ եթէ ոչ նախ հատուսցէ զպարտս իւր, կամ ըստ բոլորին և կամ ը̃ մասին՝ երբ կարող իցէ հատուցանել ըստ ազդ առնելոյ ծխարանին:

հղ. Ասէ ծխարանն և ես: * Ապա եթէ 'ի մէջ խոստովանութ̃ե, կամ յառաջ քան զսկիզբն առնել խոստովանութ̃ե, պակասեսցի ձայն և բարբառ հիւանդին, ակնարկութ̃բ և նշանօք ջանասցէ ըստ կարի ճանաչել զմեղս ապաշխարողին. զորս ծանուցեալ կամ սեռօրէն կամ տեսակօրէն, որպէս և եթէ ցուցեալ իցէ անձամբ կամ 'ի ձեռն այլոց զփափաք խոստովանելոյ, պարտ է արձակել‖: Արդ՝ զիա՞րդ օրէն է իմանալ զբանս զայսոսիկ:

ղ. Այս բանք թէպէտև ինքնին յայտնի են, բայց դժուարութ̃ի ինչ կրէ վերջին այն բանն. որպէս և երբէ և այն. որովհետև 'ի կղեմայ ը̃. դատապարտեալ է նախադասութիւն * 'Ի ձեռն պատգամաւորի‖. որ կարծի ճշմարտիլ 'ի դիպուածն բացատրեալ 'ի ծխարանի. վասն որոյ ասեմ պա՛րտ է քաջ միտ դնել առաջա-

դրութեան մտաց ծիսարանին յառաջարկեալ դիպուած, ոչ միայն՝ զի ծիսարանն հաստատեալ է 'ի պօղոսէ Ե. որ յետոյ է քան զկղեմէս Ը. ուստի լինէր խափանել յայնժամ զկղզիան կղեմայ. այլ՝ զի և ինքն իսկ կղեմէս (հարցաքանեալ 'ի վերայ դիպուածոյդ) յայտնի արար, թէ ոչ փակի այդ յիւրումն կարգաւորութեան՝ որ արգելու զխոստովանութիւն 'ի չեան պատգամաւորէ. ըստ որում վկայեցին մեծանուն հեղինակք, յորոց միջի են կարդինալ պելարմինոս, արհիեպիսկոպոսն արմակեայ. որպէս յառաջ բերեն կղերիկատոս. յղ. խն. տպղ. ԼԷ. յօր. երրորդ դեպուած. և հայրն լակրուա. գր. Է. յղ. պաշտ. խոստով. գլ. Ժ. խն. ԼԷ: Ընդիմ 'ի մէջ առնուլ վասն այսր վճռոյ և զբազում ժողովս, և զբն լևոն պապն 'ի թուղթն իւր ՃԺԹ՝ առ թէոդորոս եպիսկոպոս փուլեայ, ուր այսպէս գրէ: *Եթէ ոմանք այնպէս ծանրացեալ իցեն 'ի հիւանդութէ, զի զոր փոքր մի յառաջ խնդրէին՝ 'ի գալ անդ քահանային չկարիցեն նշանակել, պարտին օգտել նոցա վկայութիք հաւատացելոց և մերձակայից, որպէս զի արժանի լիցին միանգամայն և ապաշխարութե և շնորհի հաշտութե||: Այս և 'ի կանոնն. Ընդոյէն՝ որ 'ի պատճառս. ԽԴ. խն. Ղ. Յորս յաւելում և զբանս նոյն թղթոյն. 'ի պէտանուբէ. ԿԵ. յօր. յղ. վերջին օծման. ուր այսպէս գրէ: *Ապա եթէ հիւանդն՝ որ խնդրեայն զօծումն, կորուսեալ իցէ զզգայութի կամ զբարբառ՝ մինչև եկեալ էր քահանային առ նա, օծցէ զնա քահանայն, վասն զի յայտպիսում դիպուածի պարտի նաև միրտել, և 'ի մեղաց արձակել||:

Մեծ ևս դժուարութիւն է 'ի վերայ այնր հոգեւորի, որ ըմբռնեալ 'ի յանկարծադէպ պատահարէ՝ չէ կարող խնդրել զխոստովանահայր, կամ տալ զնշանս զղջման, ոչ 'ի բացակայութեան՝ և ոչ 'ի ներկայութեան քահանային. որին վասն տարակուսածագի, արդեօք մարթիցէ արձակել զնա՝ գէթ ըէ—ըէ՝ երբ այլով մասամբ՝ քրիստոնէաբար քաղաքավարեալ իցէ: Պատասխանեն այո՝ մեծամեծք 'ի վարդապետաց. զորս 'ի մէջ բերէ և զհետ երթայ նոցա կղեբրիկատոս 'ի նշանակեալ տեղին. յօդ. չորրորդ դէպ—ած. և զնոյն պաշտպանէ հայրն Լակրուա՝ անդամնօր 'ի խնդ. իգ. ուր հաստատէ է այլ հեղինակս, թէ այս կարծիք՝ եթէ առ արտաքս, և եթէ առ 'ի ներքս հաւանական է: 'Ի մէջ բերէ և զգրիգոր ԺԵ. թէ մինչդեռ արհիեպիսկոպոս էր նա 'ի պօղոնիա 'ի յիշատակագրի իւրում, որ վասն խոստովանահարց՝ հաստատեաց և կարգեաց 'ի կիր առնուլ զայս վճիռ հեղինակութ հռովմէական մաշտոցի հին մատենի, ուր դրոշմեալ կայ այսպէս: * Հիւանդն՝ որ կորոյս զբարբառ կամ զկիրառութ բանի, եթէ բարւոք քաղաքավարէր, թէև չիցէ խնդրեալ զխորհուրդս, պարտի ենթադրել զի զղջացեալ, և քահանայն արձակեսցէ զնա յամենայն բանադրանաց և 'ի մեղաց ‖:

Եւ սակայն այդմ վարդապետութեան գիտամարտիլ երեւի նախադասութիւն. ա. դատապարտեալն յիննոկ. ժա. * Չէ ապօրինաւոր 'ի մատակարարութեան խորհրդոյ՝ զհետ երթալ հաւանական կարծեաց յաղագս վաւերութեան խորհրդոյն՝ թողեալ զապահովագոյնն ‖. որ 'ի մերս դիպուած երեւէր ճշմարտիլ՝ զհետ եր-

թալով լոկ հաւանականին՝ թողեալ զապահովագոյնն ։ Պատասխանի ․ 'ի դիպուածի վերջին հարկաւորութեան՝ ոչ կարելով գտանել զնիւթ հաւատի , կարող է քահանայն զհետ երթալ հաւանական կարծեաց՝ արձակելով զհոգեվարն ընդ պայմանաւ ։ Զի որովհետեւ խորհուրդք հաստատեցան 'ի տեառնէ մերմէ յոյժ քան 'ի փրկութիւն հոգւոց , երբ զուգընթանայ վտանգ կորստեան հոգւոյ ընդ վտանգի նանրութեան խորհրդոյն , զառաջինն պարտ է նախադաս առնել քան զերկրորդն ․ մանաւանդ զի՝ երբ արձակումն տուեալ լինի ընդ պայմանաւ՝ յաղագս ներկայի, եթէ իցէ ընդունակ , և ոչ մի ինչ անիրաւութիւն լինի խորհրդոյն , և ոչ պատճառ տնի նանրութեան նորա , զի պահի այն բանիւ նորին իսկ թէութեան ։ Տե՛ս զհայրն կամբիոն ․ հտ ․ ա ․ գլ ․ ծդ ․ համ ․ 4 ։

Յայսր տեղի վերայ փոյթ կալցի խոստովանահայրն յուշ առնել ապաշխարողին զներգործութիւն հաւատոյ , յուսոյ , և սիրոյ և զղջման ․ զորս ամենայն քրիստոնեայք ընդ ծանր մեղօք պարտաւորին առնել 'ի կէտ կենաց 'ի վտանգ մահու ․ նոյնպէս և խոստովանահարք պարտական են յիշեցուցանել եթէ ներկայէ ժամանակն իւրաքանչիւր ումեք՝ որ իցէ մերձ 'ի մահ ։

հց ․ Ի՞նչ է 'ի վախճանի ծիսարանին՝ ասելով ․ * Յուշ լիցի քահանային և այս , չդնել հիւանդաց ծանր կամ տաժանելի ապաշխարանս ․ այլ ակնարկելով նոցա զայն ինչ , զոր եթէ առողջասցին՝ արասցեն 'ի դէպ ժամանակի , առ ժամս ըստ ծանրութեան ցաւոցն՝ աղօթս ինչ կամ թեթև ապաշխարանս 'ի վերայ եդեալ , և ընկալեալ զյանձնառութիւն , արձակեսցեն՝

որպէս արժան իցէ ։ Այլ զի այս բանք պարզ և մեկին են և չունին պէտս բացատրութե, վասն որոյ չառնեմք զայլ հարցուած մերումս նորընծայ խոստովանահօր ։

Այսչափ ինչ շատ լիցի ձեզ ով դեռակիրթ խոստովանահարք, զորս կոչեմ բանիւ առաքելոյն. * Եղբարք իմ սիրելիք և անձկալիք, ուրախութի իմ և պսակ ։ առ Փիլիպ. Գլ. Դ. 1. շատ լիցի ձեզ ասեմ 'ի պէտս դիւրին և գործնական հրահանգութե, զոր 'ի դէպ վարկայ ընծայել ձեզ՝ իբրև նորամուտ եղելոց յայսպիսի 'նբ միանգամայն և վտանգաւոր պաշտօն. * Իբրև տղայոց 'ի քս կաթն ջամբեցի ձեզ, և ոչ հաստատուն կերակուր. զի ոչ ևս կարէիք ։ Ա. Կոր. Գլ. Գ. 2 ։ Ընդունել զառաւել բարձրագոյն և վարդապետական ոճ ։ Այլ արդ՝ յորդոր ձեզ լինիմ և աղաչեմ ընթեռնուլ զաս մտադրութբ, 'ի միտ առնուլ անդուլութբ, և 'ի գործ արկանել հաւատարմութբ առ ապահովել զյաւիտենականն փրկութի անձանց ձերոց, և անձանց ապաշխարողաց ձերոց. որում անձկացեալ յամենայն սրտէ կնքեմ զբանս՝ բանիւ նորին իսկ առաքելոյն առ Ա. Տիմ. Գլ. Դ. 16 ։ * Զգոյշ լինիջիր անձին և վարդապետութեանդ՝ և 'ի դմին յամեսջիր ։ Զի թէ զայդ առնիցես, և՛ զանձն ապրեցուցես, և՛ զայնոսիկ՝ որք քեզն լսիցեն ։

Օրհնեալ է ած ։

# ՀՐԱՀԱՆԳ ՀԱՄԱՌՕՏ

## Առ խոստովանահայրս հաւատաւորաց, և անջանց հոգեւորաց:

Պաշտօն խոստովանահօր միանձնուհեաց, և այլոց անձանց՝ որք գնան ընդ ճանապարհ կատարելութեան, տերապէս խօսելով՝ վտանգաւոր է և դժուարին, մինչև պէտս ունել բազում խոհեմութեան, աչալրջութեան, և գիտնաւորութեան: Զի թէ առաջնորդութիւն հոգւոց ընդհանրապէս ասի արուեստ արուեստից, ևս առաւել իրաւացի է զնոյն ասել վասն այն հոգևոր վերակացուաց, որոց յանձին կալեալ է առաջնորդել՝ հոգւոց այնոցիկ՝ որ են իբր առաւել գեղեցիկ դրախտ եկեղեցւոյն այ: Յոր հայեցեալ սրյն յովհաննու ոսկեբերանի՝ գրէ օրինակ զայս. Գր. Գ. Գլ. ԺԷ. ՅՂ. ԽՀ. * Իսկ 'ի խնամս անդկուսանաց այնչափ առաւելեալ է երկիւղն, որչափ պատուականագոյն է աւանդն, և քան զայլսն առաւել արքայական հօտն, են: Յաղագս որոյ կարի իմն անքոյթ պահպանութեան և մեծապէս պաշտպանութեան պէտք են նմա. քանզի թշնամին սրբութեան միշտ և առաւել զսոցա հետս խուզէ և զարանի՝ պատրաստեալ 'ի կլանել, եթէ երբէք գայթակղեսցի ոք և անկցի. առ այս և բազումք 'ի մարդկանէ թակարթս լարեն նոցա, են ||: Ընդ թէպէտև վտանգաւոր և դժուարին իցէ պաշտօն առաջնորդելոյ հոգեսէր անձանց, բայց այլով մասամբ բազմարդիւն է առաջի այ. ծանրատաղտուկ է, բայց փրկաւէտ: Նա արժան իսկ է

մեծապէս սրտացաւութ՟ կարեկից լինել վտանգելոյ 'ի դիպահոջ անդ առանց հոգևոր վերակացուի ։ Գիտեմ զի տարժանելի է խոստովանահայր լինել միանձնուհեաց, և այլոց անձանց հոգեսիրաց, բայց 'ի բաւական գտանիլ մեր՝ հանդերձ իւիք տարժանմամբ մերով պարտիմք խնամ տանել յաւիտենից փրկութե՟ մերձաւորաց մերոց ։

Եւ չէ պարտ աչաբեկ լինել ուստեք․ վասն զի եղեն գիտնաւոր յոյժ անձինք, որք 'ի լոյս ընծայեցին զբազմապատիկ գործս վասն սոցին իրաց․ զորօրինակ են գործք սրբոյն Ֆրանչիսկոսի սալեզեան, խորհրդական ա՟ծաբանութիւն ըստ օգւոյ և ըստ մտաց սրբոյն բոնավէնտուրայի կարդինալի, հայր վարժապետին կաշիմիրայ տեմպեստեան մինոր վանականի, հրահանգ հօրն կաստելվետրայ գաբուչինի, գործք հօրն սկարամելլի յիսեան, գործք սրբոյն յովհաննու խաչեան, և սրբոյն Թերեզիայի, պիտաունուէ հօրն բինետտի յիսեան՝ մակագրեալ ան՟չն անմխիթար․ համառօտութի՟ քրիստոնէական կատարելութե՟՝ հօրն աքիլլայ յիսեան․ և այլք բազումք, զորս կարօղ է 'ի գործ արկանել նախանձաւոր ուղղիչն հոգւոյ ։

---

## Ընդհանուր կանոնք խոստովանեցուցանելոյ աշխատաւորս, և այլ անձինս՝ որք ծոյլ են 'ի հոգևոր կեանս ։

Ո՛չ փոքր սէր և խոհեմութի՟ և փորձ պահանջի 'ի խոստովանահայրս այսպիսի անձանց․ վասն

որոյ պիտոյ է նշանակել զքանի մի կանոնս 'ի հասարակի ։

Ժ. Ուսուցանեն իմաստուն և բարեպաշտ ուղղիչք, թէ խոստովանահայրն չպարտի երբեք վարիլ ընդ նոսա ընտանութե̃ և անխտիր օրինակաւ. և ոչ իսկ ընդ պատրուակաւ հոգեսիրութե̃. այլ պարտի մարզել զնոսա վարիլ ընդ իւր կարևոր վստահութե̃ սրտի, միանգամայն և ծայրագոյն յարգանօք և պատկառանօք ։ Ապա եթէ իցեն հոգիք թերամիտք, խղճահարք, և նեղեալք 'ի փորձութիւնս, պարտին 'ի կիր արկանել առ նոսա զքաղցրութի̃ ն̃ք, որ հարկաւոր է 'ի սրտապնդել զն̃ա, և 'ի ձգել յապաւինութի̃ առ ա̃ծ. բայց միանգամայն ըզգուշանալով 'ի վարելոյ զկարի մեղմ զրոյցս, և զկարի զիջման ձևս, թէև ըստ երևութին 'ի գովելի պատճառաց յառաջ եկեսցեն. որք սովոր են պատրել զոմանս՝ մանաւանդ 'ի սկզբան, կարծելով՝ թէ այնպիսի ձևք ընտանի համարձակութե̃ հարկաւոր իցեն առ այնպիսի անձինս ։ Բայց սակայն չմիաբանի այդ ը̃ կարծիս նոցա, որք ուսուցանեն, թէ ընդ այդպիսի անձինս թէպէտ և պարտ է վարիլ սիրով, այլ առանց տեղի տալոյ աւելորդ ներողութե̃ց, որք երբեմն յեղափոխեալ յախորժակս և 'ի կիրս անկարգութե̃՝ սովոր են առթել չարաչար կործանումն և՛ խոստովանահարց, և՛ խոստովանորդւոց ։

ԺԱ. Չպարտի բերիլ առ ոք առանձնական սիրով՝ առ 'ի խորշելոյ ոչ միայն 'ի վտանգէ անձինն և ենթակային, այլ և 'ի կարծելոյ զնախանձ և զտրտունջ այլոց ։ Սբ̃ն Ֆրանչիսկոս սալեզեան Գիր. Է. Գլխ. Դ. խրատ տայ խոստովանահարց՝ վարիլ ընդ խոստովանորդիս այն-

պիսի զատուցմամբ ներքին յօժարութե, որպէս եթէ ստոյգ գիտէին՝ թէ յաւուր միում ունին նոքա լինել խրեանց թշնամի. 'ի միտ առնուլ պիտի, թէ կանայք են յեղյեղուկ յոյժ և յողդողդք. ուստի առ 'ի չզղջանալ զկնի՝ պարտ է զհետ երթալ հռչակաւոր առածի նոյն օգոստինոսի՝ առ նոյն Թէովմոսի. դիրաս. կէ. * Ընդ այսպիսի կանանց (իմա՛ ջերմեռանդից) լիցի բան հակիրճ և ցուրտ. և ոչ վասն աւելի նորգոլոյ նոցա՝ նուազ զգուշութի խնդրի. վս զի որչափ սրբազոյն իցեն՝ այնչափ առաւել հրապուրիչ գտանին ||: Ամին երբ յորժամ հայրն հոգւոց յանձին զգայ զառաւելութի յօժարութե առ ոք 'ի սոյանէ, յայնժամ առաւել արթնութբ հսկեսցէ 'ի վր սրտի իւրոյ, և ոչ թողցէ զանձն ըմբռնիլ 'ի սէր նորա:

Գ. Չպարտի հայրն խոստովանութե յերկարել զխօսս 'ի խոստովանարանի զիրաց՝ որ ոչն հային 'ի փրկութի հոգւոյ. այլ մանաւանդ համառօտ լիցին բանքն յորդորականք. վասն զի շնորհք դիւրագոյնս զօդին ընդ համառօտաբանութե, որ լինիցի պարզութբ և խոնարհութբ: Վասն այսորիկ նոյն անտոնինոս Տ. Գ. Հ. ԺԳ. ԳԼ. ԺԲ. յանդիմանէ զայնպիսի խոստովանահարս, * որք զօրհանապազ ունկն մատուցանեն մանկամարդաց, և առնեն ընդ նոսա բանս քաղցրութե երկայնաձիգս. որով և ժամավաճառ լինին, և հասարակօրէն առիթ տան գայթակղութե յանձինս, և 'ի ժողովրդեան ||: Առաւել ցանկան նոքք, զի ծախեսցուք ժամանակ ինչ 'ի խոստովանարանի ընդ այնպիսի տառապեալ անձինս արանց և կանանց, որք լի են թշուառութբ և տառապանօք, և ոչ գտանեն

զոք՝ որ հրահանգեսցէ զնոսա, և մխիթար լի-
ցի, և ասասցէ նոցա զբան ինչ բարի։

Դ. Պարտի խոստովանահայրն լինել յոյժ աչալուրջ և ծանրախորհուրդ, և ոչ վաղվաղկոտ 'ի տալ ումեք հրաման մտանելոյ 'ի կրօնս. բայց յետ քաջ քննելոյ զկոչումն, փոյթ կալցի՝ զի ենթակայն տացէ զանձն 'ի փորել զջերմեռանդն կեանս ընդ ժամանակս ինչ՝ խնդրելով 'ի տնէ հանապազ զընտրութիւն վիճակի իւրոյ. և փորձելով զանձն յառանձնութիւն, և յայլ ինչ իրս պատշաճեալս կրօնաւորական վիճակի։ Յետ իմանալոյ զտէրական կոչումն մի՛ ևս լիցի ունկն մատուցանել բանից ազգականաց, որք առ մարդկային վախճանի խափանել կամին զկոչումն։ Մի՛ թոյլ տացի այսպիսումն ստէպ ելանել 'ի տանէ առ 'ի գնալ յեկեղեցի, եթէ հաճութեամբ չհաւանին ազգականք նորա, և մի՛ լիցի զիջանիլ կամաց նոցուն՝ կալոյ միշտ յեկեղեցւոջ։ Յետ այսպիսի կանոնաց կատարելութեան պարտի խոստովանահայրն ուղղել զնա առ տէր՝ յուշ ածելով զառաքելականն. Է. կորն. ծա. 2։ * Նախանձեցուցանեմ զձեզ 'ի նախանձն այ. զի խօսեցայ զձեզ առն միում՝ իբրև զկոյս մի սբ. յանդիման կացուցանել քի ‖։

Ե. Մեծ համբերութիւն սիրոյ պահանջի 'ի լսել զխոստովանութիւն սեւամաղձ կանանց, և որոց լի են արհաւիրօք և պէսպէս տպաւորութիւնք ըմբռնմանց կամ երևակայութիւնք. որոց երբեմն օրէնն է թողուլ՝ զի 'ի դուրս տայցեն՝ զոր ունին 'ի սրտի, քաջալերս տալով նոցա և վստահութիւն, զուարթամիտ միշտ առ նա երևելով, և խորհելով յոյժ՝ որ ինչ մարթի լինել նոցա առիթ իմն նախանձու, ոչ ցուցանելով աւելի

փոյթ վասն միոյն քան միւսոյն , երբ չկայցէ ինչ հարկ ։ Զպարտի և ես ցուցանել , թէ լաւ վարկուցն ունի զլաւութիւն նոցա , և ոչ գովել զնոսա առաջի այլոց՝ որք դիւրաւ բերին 'ի պատմել զայն նոցա ։ Նաւ պարզաբար՝ ակնկառոյց պարտին լինել իմաստուն ուղղիչք՝ տալ նոցա ընթանալ զճանապարհ հոգևոր՝ պարզութեան , խոնարհութեան , զուարթութեան , և ազատութեան ։

Է. Խոհեմութիւն թելադիր լինի բարեպաշտ ուղղչաց՝ փոյթ տանել 'ի վեր քան զամենայն , զի ջերմեռանդութիւն մի լիցի նողկալի՝ ոչ նոցին իսկ խոստովանորդեաց , և ոչ այլոց միանձնուհեաց , կամ ազգականաց նոցա . իբր զի իւրաքանչիւր ոք միտ դիցէ կողման իւրում , առանց ծախելոյ զժամ ժամանակն 'ի կրթութիւնս ջերմեռանդութեան . այլ պարտ է կանոնաւորել ըստ կարգաւորութեան նոյն Ֆրանչիսկոսի սալեզեան 'ի ներածութեան անդ իւրում առ ջերմեռանդն վարս ։ Մեծ ինչ բարի գործեն՝ որք միանգամ ճարտար և դիւրին օրինակաւ հրահանգեն զհոգեւորս , յուշ առնելով նոցա քանի մի համառօտ կրթութիւնս . զորօրինակ՝ մատուցանել զոհ յամենայն առաւօտու զաւուրն զգործս . առնել երբեմն երբեմն 'ի ժամ աշխատութեանց զներգործութիւն ինչ ջերմեռանդութեան՝ համբառնալով զմիտս առ Աստուած , զմտաւ ածել զՔրիստոսի չարչարանս , գէթ զխորհուրդս վարդարանի . առնել զկարճառօտ քննութիւն խղճի , կամ զներգործութիւն ինչ զղջման՝ նախ քան զմտանելն յանկողին . դարձուցանել զինքն գոնէ միանգամ յաւուրն 'ի կողմն եկեղեցւոյ՝ ուր կայցէ ամենասուրբ խորհուրդն՝ առ 'ի մատուցանել նմին զերկրպագութիւն հոգւոյ . կարդալ ստէպ զա-

Մեծօրհնեալ կուսին . առնել ինչ ինչ փոքրիկ մա-հացուցումն ։

---

## Սրբութիւն վասն յառաջադէմ կացուցանելոյ յառա-ջինութեան զանձինս քահանայից ։

Յուշ առնեն ոմանք, թէ Մեծապէս Աստուածահաճոյ գործ գործեն այնոքիկ՝ որոց նպատակ առաջի եդեալ է մշակել զպտղեցիկ տունկս զայգո-ւոյն, որք շնորհօք Տեառն, և 'ի պատիւ փառաց նորա, և 'ի պայծառութիւն եկեղեցւոյ իւրոյ կա-րող են առնել 'ի բարձրութիւն և 'ի զօրութիւն մայրեաց քրիստոնէական կատարելութեան ։ Վասն որոյ ոչ ոք 'ի հարց հոգւոց պարտի խնայել յաշխատութիւն ինչ առ 'ի վեր արկանել բազում պտղաբերութեամբ զխնամութիւն՝ զոր ետ նմա Յիսուս, գործակցութեամբ հանդերձ Տեառն, առ 'ի բաւականս առնել. զի այսպիսի տունկք պատուականք տա-ցեն զպտուղս չքնաղ և սուրբ առաքինութեանց ։ Չպարտի խոստովանահայրն անտես առնել սո-վորեցուցանել զխոստովանորդիս իւր 'ի մտա-ծական աղօթս, զոր մարթ է առնել և յաշխա-տիլ անդ և 'ի շրջագայիլ ։

'Ի սկզբան անդ յիրաւի ունի ընդ առաջ ե-լանել դժուարութիւն առ 'ի հաւանեցուցանել զոմանս առ առանձնանալ զկէս ժամ մի առնե-լոյ աղօթս մտաւորս, այլ յայսմ ամենայնի վերայ Ճարտարեսցէ հոգևոր հայրն, զի նոքա 'ի ձե-ռագործել անդ սովորութիւն կալցին տանել զմիտս առ Աստուած. իսկ ապա 'ի դժուարին վա-տակս և 'ի զբաղանս յաջողեսցի նոցա դիւրաւ

բերել յաղօթս, մինչև ցանկալ առանձնանալ՝ որչափ և կարեն: Ա՛ռ որոյ յորդոր լիցի նոցա, զի ստէպ ստէպ յաւուրն համբարձցեն զմիտս իւրեանց առ ած՝ աղօթս որսալով յամենայն իրաց, զորս տեսանեն, և յամենայն առթից՝ որք ընդ առաջ ելանեն: Նա զայս կարող են ի կիր արկանել նաև տառապեալ գիւղականք, և գեղջուկ կանայք. որպէս արդեամբք է տեսանել ի բազումս յոյժ. որք ի խոնջիլ և ի վաստակաբեկ լինել անդ մարմնով՝ ի միտ ածեն զհանգիստ երկնաւոր դրախտին, կամ զտարժանիլ փրկչին ի խաչաբարձումն իւրում. ոմն և ի տես բուրաստանաց և այգեստանեաց՝ խորհին զամենախնամ տեսչութին ա՛յ յամի:

Նոյնպիսի հսկողութի հանապազորդեան է հարկաւոր. վ՛ն զի կարօտիմք անդադար օգնականութե առ ի չանկանիլ՝ անյուսացեալք յանձինս մեր: Պարտ է փոյթ ունել վասն ներքին մահացուցման, և.ս և արտաքնոյն՝ ընտրողութե. և առ սակաւ սակաւ վարժիլ ի յաղթել կամաց մերոց, ընդդէմ կալ սեպհական յօժարութե յառաջնին իրս, և համբերել պակասութեց այլոց, և տեղի տալ դատաստանի ընկերաց, և ոչ տրտնջել զումեքէ. միով բանիւ՝ զինուորիլ միշտ ընդդէմ անձնասիրութե: Նա ի չգոյէ այսր կրթութեան յառաջ գայ, զի բազումք ի ջերմեռանդից գլխովին են դժկամակք, բարկասիրտք, ունայնասէրք, անհամբերք, անհանդարտք, և ունականան իսկ յայդպիսի պակասութիւնս:

Որք միանգամ կամին քրիստոնէաբար կեալ, պարտին ստէպ մատչիլ յաղբիւր անդր սրբութե առ տէրն մեր յ՛ս ք՛ս: Արդ յայսմ մասին

ստէպ հաղորդելոյ՝ պարտիմք զհետ երթալ խորհրդոյ առաջին վարդապետաց հոգեւոր կենաց. որք ոչն էին դիւրալուրք յոյժ՝ որոց կամիցին յաճախ հաղորդել, այլ միայն հրաման տային՝ կամ յութ աւուր միանգամ, կամ 'ի կիւրակէս. և երբեմն ևս 'ի մէջ եօթնեկին, եթէ տեսանէին զպտուղ և զփափաք 'ի հոգիս։ Պարտ է զմիջինն վարել կանոն, ոչ կարի ներողամիտ լինել, և ոչ կարի դիմակաց։

Իսկ վասն տալոյ զարձակումն այսպիսեաց ջերմեռանդն անձանց, եթէ միշտ զնոյն մեղս խոստովանին ներելիս՝ առանց բնաւին ուղղելոյ զանձինս, ուստի խոստովանահարք միան 'ի խորհուրդս տատանման, և խիթան ընդ ուղղութեան առաջադրութեան, 'ի դէպ է նոցա պահել զայս կանոն 'ի հանդարտութեան խղճի։ Զննեսցեն, արդեօք այդպիսի անձինք երբեմն մահացուցանեն զանձինս. և յաղթող գտանի՞ն յայն ախտս՝ յորս սովոր են անկանել. և իբրև հասու լինին և գտանեն թէ յաղթեն երբեմն նոքա կրից, յորս են վարակեալ, զորօրինակ ունայնասիրութեան, բարկութեան, ևն. և միանգամայն ստէպ խոստովանելով՝ ցանկան դեղ դարմանոյ գտանել առ ուղղութեան անձանց, յայնժամ պարտին 'ի միտ առնուլ, թէ յաճախ անկումն նոցա ոչ է նշան ոչինչ գոլոյ առաջադրութեան, այլ՝ նշանակ մարդկային տկարութեան։ Ս՞ զի այդ փոյթ 'ի խնդիր լինելոյ դեղոյ չանկանելոյ՝ յաճախութեան խորհրդոց, և յաղթել անձանց ստէպ, պարտի հաւանեցուցանել զհայրն հոգեւոր՝ թէ վաւեր է առաջադրութիւն, որով խոստովանին զնոյն յանցանս։ Սէն Բովս. Գ. Տ. Տ. ՃԷ. պր. ա. նապող. աղէքս. անձաբ. դեսաչ. և

Եարոյ. Գր. Է. ՅՂ. Խն. Ապաշխ. Գլ. Գ. Ծո. Ա.

Ապա եթէ չկայցէ և ոչ մի ինչ յայսցանէ, խոստովանահայրն յայտ արասցէ նոցա, թէ առաջադրութիւն իւրեանց է ոչինչ. յորդոր լիցի և շարժեսցէ զնոսա 'ի զղջումն մեղացն այնոցիկ, և անհոգութեան նոցա, խելամուտ առնելով նց զծանր կործանումն, յոր ներելի մեղքն ճանապարհ բանան՝ եղկացուցանելով զսէրն այ, և զրկելով զմեզ 'ի մեծագոյն լուսոյ նր.

---

### Առանձին կանոնք վասն հաւատաւորաց, և խղճահարաց։

Սոհեմ խոստովանահարք 'ի կիր արկանեն զմեծ զատուցումն ոգւոյ իւրեանց 'ի միանձնուհեաց՝ քան յայլոց անձանց, թէպէտ և ցուցանեն առ նոսա զմարդասիրութիւն մեծ, և զնոյն փոյթ 'ի մէջ առնուն անդադար յորդորանօք վառել զնոսա առ կրօնաւորական կանոնապահութիւն անվրէպ՝ ըստ ամենայն բանի, թէ և դուզնաքեայ ինչ երևեսցի։ Մանաւանդ թէ պարտս 'ի վերայ դնեն նոցա՝ սիրել յոյժ զառանձնութիւն, առաւելապէս եթէ տեսցեն զոք նուաղեալ 'ի ջերմեռանդն և 'ի բարեկրօն ընթացից. որպէս այն՝ որ նշանակեսցէ խոստովանահօր իւրում՝ թէ ունի 'ի ներքս կամ արտաքոյ վանաց յարաբերութիւն ինչ՝ թէպէտև ոչ յայտնապէս վատթար, բայց վտանգաւոր, ըստ որում նշան տան իրքն՝ զորս նա խնամով և արթուն քննութեամբ խոստովան լիցի. զորօրինակ եթէ ակնարկեսցէ զձև բանից այլոյ ան-

ձին՝ յոր հակամիտեալ իցէ սիրով, և զթուղթս, և զընծայս, և զզրոյցս ոչ մի̃ համեստս, յորոց թերևս առնու զայթակղութ̃ի կամ փորձութ̃ի հաւատաւորն ։ Յայնմ վայրի պարտի խոստովանահայրն նախանձաւոր լինել ա̃մ իրօք՝ դնել առաջի աչաց հաւատաւորին զգահավիժումն, յոր բերի, և զգայթակղութ̃ի այլոց կուսանաց ։ Եւ եթէ յետ խոստանալոյ երկիցս կամ երիցս՝ ՚ի բաց հատանել զայն տուրևառ, տակաւին ՚ի նոյն դեգերեսցի համարձակ, յապաղեսցէ նմին զարձակումն ։ Եւ մի̃ թուեսցի այս խստութ̃ի աւելորդ. զի թէև նա ոչ սնուցանիցէ յանձին խորհուրդս վատթարութ̃ե այնպիսի տուրևառիք, և ոչ անցանիցեն ընդ միտս նորա անմաքուր թելադրութիք, տակաւին եթէ վասն զայթակղութ̃ե՝ որ տուեալ լինի այլոց միանձնուհեաց, և եթէ վա̃ մեծի վտանգի մեղանչելոյ՝ յոր դնէ զանձն իւր, որպէս և վա̃ մեծ եւս առթի՝ որ ընծայի առնչակցաց՝ ՚ի մեղանչել, և ՚ի կրել զխորհուրդս վատթարս, և զսէր անմաքուր, պարտական է հաւատաւորն ՚ի բաց կտրել զայնպիսի տուրևառ. ապա թէ ոչ՝ կայ ՚ի վիճակի մահուչափ մեղաց, ուստի և անընդունակ է արձակման, եթէ ոչ տեսցի ՚ի նմա ուղղութ̃ի ։ Լ̃իգ. դիտ̃ո. Ճ. Է. ՃԷ. ԼԹ. ԽԾ. և ԽԷ ։

Պարտ է հարցաքննել զհաւատաւորս, զի բազումք ՚ի նոցանէ ոչ պարզաբանեն ինքնին զիրսն ։ Ընդ կրկնամեղս ՚ի նոցանէ, թէպէտ և յուսալի իցեն չլինել այնպիսի, պարտ է վարել ո̃պ ընդ այլ կրկնամեղս ։ Եւ ոչ իսկ պարտ գոլն հաւատաւորի հաղորդել ՚ի նոյն խորհրդոյ ընդ այլոյն՝ պարտի շարժել զխոստովանահայրն

'ի տալ փութով զարձակումն, այլ միայն ունի շարժել զնա նշան ինչ արտաքոյ կարգի. վասն զի չիք արդարացի պատճառ վատահամբաւութե՟ զոր նոքա առթեն անձանց իւրեանց, կարօղ գոլով զառաջս ունել իրացն այլովք բազմապատիկ օրինակօք։

Խնամարկութի՟ 'ի վերայ խղճահարաց թէպէտ և դժուարին է յոյժ, բայց խոստովանահայրն սիրով պարտի փոյթ ունել խնամարկել նոցա։ Որդ՝ խղճահարաց 'ի դէպ է յորդոր լինել դիմել առ ամենամ՟ք կոյսն, որ է միջոց քան զայլ ամենայն ինչ քաջ փորձիւ ստուգեալ իբրև ամենևին զօրաւոր առ 'ի ազատ լինել 'ի խղճահարութեանց, ասելով ցնոսա, զի ստէպ հայեսցին 'ի նա՝ 'ի պատկերի նորա, և բացցեն զտառապանս սրտից իւրեանց առաջի նորա, խորհեսցին զմեծութի՟ նորա, և խնդակից լիցին նմա։

Յերկբայութիւնս խղճահարի պարտ է միշտ մեկնել 'ի լաւ անդր, և ասել ցնոսա, թէ ունիս կալ մնալ անքոյթ. զի ցորչափ դու յերկբայս կաս, թէ այս ինչ մե՞ղք իցէ՝ եթէ ոչ, պարտ է քեզ հաւաստի լինել այնուհետև՝ թէ չկայ ինչ անդ մեղք։ Յաւելցէ բարեգորով խոստովանահայրն ապահովել զնա, թէ հաւատա ինձ. և հանդարտ լեր. զի ես իբրև քահանայ այ՟ վկայեմ քեզ։ Հարկաւոր է արգելուլ զնոսա՝ չառնել զքննութի՟ խղճի մտաց յայն նիւթս, յորոց վերայ խղճեն. այլ ինքն խոստովանահայրն 'ի խոստովանութե՟ անդ ունի հարցաքննել զարժանն։

Յայսմ վայրի ժամ է մեկն սահմանել, թէ զի՞նչ խղճահարութիւն իցէ. և առաջի առնել

զգեղս նորա, որպէս և զբուն աշխարհն։ Արդ՝ խղճահարութիւն՝ ոչ է արթուն զգուշաւորութիւն խղճի առ 'ի խորշելոյ 'ի մեղաց, այլ է անատի ըմբռնումն մտաց հիմնեալ 'ի թեթև առիթս, լի տագնապիւ երկիւղիւ, թէ մեղք իցէ այն ինչ՝ որ ոչն է մեղք։

Երկբայութիւն է կախումն ինչ մտաց զերկուքանչիւր ծայրիւք, յորս երևին պատճառք միօրինակ հաւանականք։ Իսկ խղճահարութիւն ոչ է այսպիսի, զի ոչ եթէ 'ի պատճառաց շարժի, այլ՝ յերևութից, 'ի ստուերաց, և 'ի վայրապար առթից. և ոչ եթէ 'ի կախ թողու զմիտս, այլ հակամիտէ 'ի հաւատալ՝ թէ մեղք իցէ, ուր չիցէ ինչ մեղ։ Նա ևս լնու զսիրտն ահիւ, արհաւրօք, անհանդարտութեամբք, և անձնատանջ վրդովմամբ, զոր ոչն առնէ երկբայութիւն բանաւոր։

Աղբիւր խղճահարութեան յոմանս է բուն իսկ բնութիւն իւրեանց։ Քանզի են անձինք ոմանք խոնաւ խառնուածով, ցուրտ և սևամաղձ, որք են որպէս զերկիր դիւրայարմար 'ի բուսուցանել զայսպիսի փուշս. վասն զի 'ի բնէ սևամաղձոտք՝ են նաև երկչոտ և փոքրոգի. ուստի և յոյժ ըմբռնմունս մեղաց՝ թէպէտ և անբաւականս, դիւրաւ զահի զերկիւղի հարկանին։ Ապա եթէ յանչափս տացէ ոք զանձն 'ի տխրութիւն, ոչ ևս այնուհետև ընդունակ լինի որոշել ուղղութեամբ ընդ բարի և ընդ չար, և ըմբռնէ որպէս ծանր ծանր յանցանս, ուր չիք և ստուեր մեղաց, և լինի դժուարաբուժելի։

Երկրորդ պատճառն է դևն, որում սեպհական է երկիւղալի ցուցանել լաւաց զողորմութիւն Այ, մինչև անձկացուցանել զխիղճ մտաց՝

ծանրատաղտուկ գործելով պաղօթս, զսուրբ խորհուրդս, և զծառայութիւն իմ. որպէս զի հոգին ձանձրութեամբ նեղասրտեալ՝ անկցի յանյուսութիւն, և եթէ մարթ ինչ իցէ՝ 'ի յուսահատութիւն: Խղճահարութիւնք դիւականք առթեն զանբերելի մթագնութիւն մտաց, և զնորատեսիլ անհանդարտութիւն. և նկրտին միշտ 'ի հովացուցանել զոգին. և ջանան ցուցանել հոգւոյն՝ թէ ինքն թողեալ լքեալ իցէ յերեսաց իմ: Իսկ այսոքիկ չեն միշտ նոյնօրինակ, այլ է զի աքացեն, է զի մեղմեն, է զի դադարեն, զի թողացուցանելոյն իմ երբեմն, և ըստ կարճելոյ այլ երբեմն զպարաւանդ չղթայից փորձողին: Այլ խղճահարութիւնք 'ի բնութենէ պատճառեալք՝ գրեթէ միշտ են միօրինակ: Երրորդ պատճառն է իմ, իմն պատճառ բացասական, ըստ որում ամփոփէ 'ի հոգւոյն զլոյս իւր, որով լինէր նմա ընտրել յայտնի տեսութեամբ զայն ինչ՝ որ ոչն է այնպէս: Սրբն Բոնավենտուրա սարսափեալ ընդ վայր 'ի խղճահարութեանց՝ երբեմն թողոյր անցանել աւուրս քանի մի առանց մերձենալոյ 'ի խորանն 'ի մատուցանել զսուրբ պատարագն. Ժամանակագր. հատր. գիրք. Գ: Սբ և սրբն Օգոստինոս 'ի սկզբան դարձի իւրոյ կրեաց զանձկութիւն ինչ սրտի 'ի կիրառութեան ուտելեաց և ըմպելեաց, վասն այնր բնաւորական պակասութեան՝ որ յառաջագոյն յուտելոյ և յըմպելոյ: Պատմի վասն սրբոյն Լուիտգարտի, թէ ստէպ կրկնէր զնոյն կանոնական ժամս, և որչափ մտադրութեամբ ջանայր առնել՝ չէր երբէք գոհ:

Յայսպիսիս՝ այլ և այլ փոխանակս դիտէ իմ:

Ա. Մաքրել զհոգին 'ի յանցանաց գործեցելոց:

Ե. Հաստատել զհոգին յարդարացի երկիւղի ստոյգ մեղաց: Զ. Խոնարհել զհոգին 'ի յետին նուաստ ճանաչումն զանձնէ: Է. Տալ կրթիլ 'ի հնազանդութիւն, յուրացութեան սեպհական կարծեաց, 'ի համբերութեան, և յայլ առաքինութիւնս:

Խոստովանահայրն պարտի յոյժ առնել ըզվնասս ժամանակաւորս և հոգևորս՝ զորս բերեն ընդ իւրեանս խղճահարութիւնք. և խելամուտ առնել զխղճահարն, թէ մեղանչէ նա ընդդէմ արդարութեան 'ի դատապարտ առնել զանձն յամենայնի: Այսպէս խօսին բովխոս, վաղենտէս, և այլք բազումք 'ի վարդապետաց.

---

Դեղք խղճահարութեան:

Առաջին դեղն է աղօթք: Երկրորդն՝ յանձն լինել 'ի ձեռս հոգևոր հօր ումեք, և կուրօրէն հնազանդիլ նմա, դնելով 'ի մտի՝ ոչ ով թէ նա ոք իցէ, այլ զի ունի զտեղի այ: Ան որոյ գիտել արժան է, զի ամենայն կոյսն՝ յոր ըստ նախագրելոցս պարտ է դիմել, երևեալ շինականի ումեք ծանուցնս տագնապելոյ 'ի խղճահարութեանց, մինչև կարծել թէ չիք այլ հնար ազատութեան, բայց զիւրովի երթալ, պատուիրեաց բանալ զսիրտ իւր քահանայի, և մտադիր հնազանդ լինել նմա. Վերբենեղ. Խ. Բարոյ. Ճ. Ե. Խ. Զ: Եւ ոչ իսկ 'ի յայտնել անդ խոստովանահօր զիրսն՝ պարտիմք վարել զխորին բացատրութեան սոփեստական, այլ զմարդկօրէն խելամտութեան. զայս արարեալ՝ չունիմք այլ ինչ

հոգալ։ Երրորդ դեղն է բարեխառնել խղճահարին զերկիւղ իւր՝ ընդարձակելով զսիրտ իւր յուսով, այս է հայելով առ Աստուած ՚ի վեր իբրև առ հայր բարեգութ և մարդասէր։

՚Ի սոսին մարթ է յաւելուլ և զառաջիկայ դեղս. ա. Փախչիլ ՚ի դատարկութենէ։ բ. Մի՛ վարիլ կիր խօսակցիլ ընդ խղճահարս։ գ. Չխօսել զիւրոց խղճահարութեանց երբեմն ընդ միում, և այլ երբեմն ընդ այլում։ դ. Ջանա չխօսել և ընդ անձին իւրում զիւրոյն խղճահարութեանց. այլ լաւ ևս է անփոյթ առնել զնոքօք, յոչինչ գրել, և արհամարհել զնոսին։ ե. Սովորութիւն առնել իւրեան՝ գործել զամենայն ինչ այնու օրինակաւ, որով գործեն երկիւղած անձինք վարեալք ըստ բարւոք խղճի՝ առանց խիթալոյ ՚ի մեղաց յայն իրս, զորս նոքա չզանգիտեն առնել. քանզի անբերելի հպարտութիւն է կարծել՝ թէ նոքա առ հասարակ չար գործեն։ զ. Սովորիլ զհետ երթալ բարեսէր և հեզիկ կարծեաց, երբ քաջ հաւանական տեսանին։ է. ՚Ի դէպ է քակել զպատճառս խղճահարութեանց. քր որ սովորեալն է յաճախել առ խղճահար անձինս, պարտի խորշիլ ՚ի նոցանէ. տգէտն հարցցէ և խնդրեսցէ զհրահանգ կարևոր. փոքրոգին քաջալերութիւն զգեցցի, սևամաղձոտն դեղ առցէ բժշկական. կամապաշտն խորտակեսցէ զդատումն իւր. ամբարտաւանն մի՛ ապաւինեսցի յանձնահաւան խոհեմութիւն իւր. գաղջն մտադիւցէ իւրում հոգևոր ջերմեռանդութեան, և կրթութեան առաքինութեանց, և յաճախութեան արդեանց. երկչոտն ՚ի միտ ածցէ զԱստուծոյ մարդասիրութիւն, ըստ ասելոյ հոգւոյն սրբոյ. Իմաստ. ա. * Խորհեցարուք զՏեառնէ բարութեամբ, և միամտութեամբ ||,

զմտաւ ածելով՝ թէ չէ՞ ինձ այնպէս խիստ, մինչև գրել 'ի մեզ զգործս բարեսիրաց: Որ ոք զառաւելն կամի տեղեկութիւն, զայնպիսին առաքեմ առ մատենագիրս. յորոց սակի է գերսոն քարտուղար. և 'ի մէջ արդեաց բոսսիոս 'ի բարոյականս իւր:

Որէ՞ն է գործել հանդերձ խղճահարութեամբ՝ առանց կարող լինելոյ 'ի բաց դնել զայն: Պատճառն է. վասն զի խղճահարն վարեալ դոյզն հիմամբ՝ ոչ կարէ բառնալ և ոչ 'ի բաց դնել զըստ բարոյականին գործնական ստուգութիւն 'ի գործել անդ իւրում. միայն թէ յիրաւի խղճահար գոլ դատեալ իցէ:

Ի. հասարակ կարծիք. որ և հաւաքի 'ի Գե. Բիննուրէ. Խտ. ՅՂ. ՀՃ. Բանադր. ուր յառաջարկել անդ, թէ արդեօք լծակից ոք ունելով խղճահարութիւն 'ի վերայ վաւերականութեան պսակին՝ պարտակա՞ն իցէ հրաժարել 'ի գործոյ ամուսնութեան, պատասխանէ քահանայապետն. * Խիղճ թեթև և դիւրահաւան կարծոտութեան 'ի բաց հերքեալ, կարող է ոչ միայն հատուցանել, այլ և պահանջել զամուսնական զպարտս ‖: Իսկ թէ ոք գործէ առանց 'ի բաց դնելոյ, այլ տակաւին ածելով 'ի նմա խղճահարական խղճի, եթէ ոչ դատի և համարի զայն լինել խղճահարութիւն, մեղանչէ և 'ի գործելն ըստ նմին, և 'ի գործելն ընդդէմ նորին. վասն զի յայնժամ խիղճն խղճահարական փոխի՝ 'ի խիղճ մտաց մոլար՝ յաղթելի:

Նա եթէ անգիտելի իցէ, թէ պարզ խղճահարութիւն է, այլ միայն հաւանական դատեսցի այնպիսի լինել, տակաւին հաւանելի է՝ թէ անհիմն իցէ, ուստի և օրինօք մարթ է գոր-

ծել առանց 'ի բաց դնելոյ զայն, այսպէս խօսին սանքէզ, դիանս, և այլք։ Խոստովանահայրն առ խղճահարն պարտի վարել զքանի մի կանոնս. յորոց սակի է և այն, զի խղճահարն մի՛ դիցէ 'ի մտի մահուչափ մեղք լինել, եթէ ո՛չ զայն՝ զոր ստուգիւ և աներկբայ համարի այնպիսի լինել։ Մանաւանդ թէ երբեմն օգտէ պատուիրել նմա, զի մի՛ զայլ ինչ առդնիցէ մահուչափ մեղք լինել, եթէ ո՛չ զայն՝ յորոյ վերայ կարօղ իցէ երդնուլ, թէ է այնպիսի։ Զնոյն պարտ է իմանալ և վասն հաւանութ̃ի տալոյ. իբր զի մի՛ հաւատասցէ՝ թէ ինքն հաւանութ̃ի տուեալ իցէ մահուչափ մեղաց, եթէ չիցէ ա̃միւ հաւաստի 'ի վերայ այնր, մինչև կարօղ լինել երդնուլ։

Մի՛ թողացուսցէ խոստովանահայրն՝ խղճահարին խոստովանել զխղճահարութիւնս իւր, այլ զի ամբաստան լիցի զայն և եթ մեղաց՝ զորս ստուգիւ մեղս գոլ ճանաչէ. որպէս և չպարտի թողուլ խոստովանել զանցեալ մեղս, եթէ ոչ զայնոսիկ՝ զորոց կարօղ իցէ երդնուլ, թէ չիցէ իւր խոստովանեալ զնոսին յայլ նուագս. այսպէս խօսին Սայ, և Սանքէզ։ Ծանուցանեն հռեգինալդոս, բրեսսեր, և բօվսիօս, թէ խղճահարն պարտաւորի երբեմն զգոյշ լինել 'ի կրկնելոյ զխոստովանութիւնս՝ առ 'ի չդնել զանձն 'ի վտանգ մտաթափութ̃ե առ անչափ բուռն ուշադրութ̃ե։

Մարթ է ունել զխղճահարութ̃ի վ̃ս անբաւականութ̃ե զղջմանն կամ ցաւոց. և յայնժամ պարտ է հանդարտել զխղճահարն՝ ասելով, թէ դու արարե՞ր որչափ և գիտէիր և կարօղ էիր յայնժամ՝ յորժամ խոստովանեցար.

եւ դարձեալ միթէ հաճեա՞լ էր քո ընդ մեղուցեալ գոլդ. արդ եթէ ասէ առ յետինդ, թէ ոչ, բաւական է այդ. որպէս և ասելն առ առաջինն՝ այո, հերիքասցի:

Բարեպաշտ անձինք փափաքօղ գտանին մասնաւոր ապաշխարանաց. արդ խոստովանահարք չպարտին լինել դիւրահաւան՝ մանաւանդ առ կանայս. այլ պարտին վարել զծայրագոյն ընտրողութի. և 'ի մասնաւորի մի տացեն հաւանութի 'ի կիր արկանելոյ կամ զխարազն, և կամ զշղթայիկս՝ յետ ճաշելոյ, այլ միայն ը առաւօտն. մի լիցի թոյլ տալ նոցա և ընկողմանիլ 'ի վերայ մերկ գետնոյ, և ոչ տքնիլ 'ի գիշերի:

Այլ պարտի խոստովանահայրն նախ քան զամենայն յուշ առնել խոստովանորդւոց զմահացուցումն արտաքին զգայութեց, ուսուցանելով նոցա 'ի մեռելութի կրթել զանձինս յեղանակն հայեցուածոյ. այսինքն չլինել ակնկառոյց երբեք կամաւորապէս յառարկայ վտանգաւոր, մանաւանդ թէ խնուլ զաչս վասն սիրոյն այ, այլ միայն հայել յառարկայս անվտանգս. մահացուցանել զաչս՝ ոչ կամելով տեսանել և զիրս գեղեցիկս և հետաքրքրականս, նա և զանտարբերս. և պարտ է օրինակ առաջի դնել նոցա զհամեստութի փրկչին մերոյ յսի քսի՝ միայնոյ իմաստնոյն և արթուն ական:

Նմանապէս յորդորեսցէ մահացուցանել զլսելիս, ոչ լինելով ունկնդիր ունայնաբանութեց, դատարկաբանութեց, կատակաց, խեղկատակութեց ծաղրաշարժից. որպէս և ոչ անձին գովութե, և շողոքորթութե այլոց:

'Ի ճաշակս ուսուսցէ մահացուցանել զանձն.

իբր զի երբ գտանի 'ի մեծահաց սեղանի, գի-
տասցէ ներքին ախորժակաւ սիրոյ արհամար-
հել զառաւել համեղաճաշակ կերակուրս, և
ծածկապէս ճարտարութք 'ի բաց թողուլ զբո-
լորն կմ զմասն ինչ յորոց ենն ըստ իւր քմաց:
Եւ ևս պարտի ուսուցանել. զի 'ի ճաշակել
անդ՝ գիտաւորութի իւր իցէ առնուլ զայն կե-
րակուր 'ի փառս սիրոյն ո՛յ՝ առ 'ի կարող լի-
նելոյ ծառայել նմա. միանգամայն և իբր սե-
ղանակից լինելով ո՛ն իւրում՝ ցորչափ էր նա
յաշխարհի աստ: Պարտ է և զայն յուշ առնել
նորակրթ անձին, թէ չէ՛ մեղք զգալն զա-
խորժ կերակրոց. վասն զի չէ մարթ՝ թէ լի-
նիցի չզգալ զայն՝ ըստ որակի որակի կերակ-
րոյն: Այլ այն է չար, և վնասակար կատա-
րելութե՛ ուտել միայն առ 'ի առնուլ զայն-
պիսի հեշտութի առանց իրիք համեստ վախ-
ճանի:

Ըստ հոտոտելեաց ուսուսցէ նմա մահացու-
ցանել զանձն՝ ոչ հոտոտելով զհոտաւէտ ծա-
ղիկս. և եթէ մատուցի նմա ծաղիկ ինչ, տա-
ցէ զայն այլում առանց հոտոտելոյ: Եւ առ-
առաւել մահանալ յանձին՝ յօժարամիտ տար-
ցի ժանդահոտութե ինչ ընդ առաջ եկելոյ:

Եթէ ձկնեղէն ինչ կերակուր փոքր մի հո-
տեալ իցէ, չէ՛ ինչ՝ եթէ կերիցէ գէթ զպա-
տառ մի. և ապա եթէ տեսցէ՝ թէ չտանի
ստամոքս իւր, յետ տեսանելոյ յայլոց՝ թէ ե-
կեր սակաւ ինչ, թողցէ զայն առանց զզուե-
լոյ կամ քրթմնջելոյ. և եթէ երբեք տրտն-
ջեաց, արասցէ 'ի ծածուկ ապաշխարութի ինչ:

Իսկ մահացուցումն շօշափելեաց, թո՛ղ զան-
պարկեշտ արարս՝ զորոց չէն աստ բանք մեր,

հաստատեալ է 'ի զգուշանալն նաև 'ի համբու-
րելս զողջս փոքրկունս, և զանձինս մ̃րս, ևս
և (ուր չիցեն ինչ պէտք) զձեռս քահանայից:
Եթէ խոստովանահայրն յուշ արասցէ քաղցր
և ազդու բանիւք զայսպիսի թեթև մահացուց-
մունս, տեսցէ՛ թէ որպէս 'ի խոստովանորդին
զօրասցի յոյժ յոյժ սէրն ա̃յ, այնչափ՝ մինչև
հարկեսցի ասել նա, թէ չեմ բաւական ժու-
ժել տանել մեծի ուժգնութե̃ սիրոյն ա̃յ:

---

## Յաղագս ցամաքութեան սրտի:

Ցամաքութի̃, որ և երաշտութի̃ կամ պակա-
սութի̃ ջերմեռանդութե̃՝ է մասնաւոր յուլութի̃
զգայութե̃, և որպէս թէ դիմամարտութի̃ ինչ
առ սովորական կրթութի̃ս հոգևորս. իսկ 'ի
նորակիրթս՝ որ են փափկիկ և լի կենդանի
կրիւք, է ցաւ անբերելի. վասն զի համարին
զանձինս լքեալ յերեսաց ա̃յ, և կարծեն ու-
նել մեղս ինչ գաղտնիս, որպէս թէ վասն այ-
նորիկ չիցեն ա̃յ հաճոյական կրթութի̃ք ի-
րեանց. և այսպէս խորհուրդ 'ի միտ դնեն թո-
ղուլ լքանել զամենայն ինչ, և տալ զանձինս
'ի դատարկութի̃: Այս խաբէութի̃ է դիւին,
որ չշնչէ յունկն սրտից նոցա այսու օրինակաւ,
և հաւանելի գործէ փոքր մի դառնութե̃, իբր
զի հանդերձեալ մխիթարութի̃ն իցէ առաւել
համեղ: Դեղն է ընդարձակել զոգին՝ սլաքա-
կան աղօթիւք, և ընթերցուածովք վարուց ս̃րց,
թէ իցեն անձինք բաւականք առ իմանալ:
Իսկ խոստովանահօր անկ է մխիթարել զայս-

ցխոխս, և յորդորել ազդու օրինակաւ՝ առ 'ի չդառնալ ընաւ յետս 'ի ծառայութենէ նոյ: Նաև ըստ բերելոյ ժամուն պարտի հաւատարմացուցանել նոցա, թէ այսպիսի տարժանելի մաքրութի՝ է մասնաւոր նպաստ ածոյին, առանց որոյ չէ մարթ անցանել 'ի տեսական կեանս: Յաւելցէ պատմել, թէ սրբուհին Թերեզիա ութուտասն ամ տանջեցաւ բազմազգի ոգետանջ ցամաքութեամբ. մինչև երբեմն այնպէս թուէր նմա, թէ կորուսեալ իցէ զյոյս և զհաւատս. և այնչափ էր չփոթն կամ ամօթն, և տառապանք հոգւոյն, զի յընթեռնուլն չիմանայր զմիտս աշխարհաբառ բանից անգամ: Զսրբուհին Մարիամ Մագդաղենի փացեան կոչեցեալ՝ զամս հինգ իբրև 'ի քրայս հալոցաց այնպէս մաքրեաց Տրն, մինչև կարծել՝ թէ 'ի դժոխս իցէ գլխովին: Սբն Ֆրանչիսկոս ասսիզացի նախահայր Ֆրանչիսկեանցս նախ քան զընդունելութի Տր վիրաց՝ զամս երկու այնպէս տառապեցաւ, մինչ զի ոչ խօսէր, և ոչ կարէր կենակից լինել ընդ ումեք:

Խոհական խոստովանահայրն զայսպիսի անձինս նեղեալս սովին անբերելի ցամաքութբ պարտի կապել կապանօք հնազանդութե՝ չթողուլ և ոչ զմի կէտ հոգևորական գործոց, թէև անմասն իցեն 'ի ջերմութէ սրտի:

Զգոյշ լիցի վերակացուն հոգւոց՝ չառնել ըստ օրինակի անզգաստից ոմանց անփորձ եղելոց, որք տեսանելով զանձն ուրուք այսպէս նեղեալ՝ թողացուցանեն նմա զբօսանս ինչ կամ ժամավաճառ սփոփանս. վասն զի ուր է ստոյգ ցամաքութի սրտի, դնէ զնա 'ի վտանգ անցանելոյ 'ի ցամաքութէ յընդարձակութի և 'ի

պղերգութիւն։ Օ՜ այս ինչ աներկբայ կալցի, զի յայնժամ է ճշմարիտ ցանկութիւն, յորժամ անձն աւելի օտարանայ յերկրաւոր ըղձից, և առաւել մահացուցանէ զզգայութիւս և զկիրս։ Միայն փոյթ 'ի մտի դիցէ ամենայն փութոյ պնդութեամբ յորդորել զնա 'ի մահացուցումն և յանձնուրացութիւն։ Մի՛ երկիցէ, թէ 'ի հիւանդութիւն անկանի. քանզի և այն յԱյ է. և եթէ երբեք լինիցի, ցանկալի են և սիրելի յոյժ ցաւքն։ Ամփոփանք՝ զոր կարէ թողացուցանել նմ, լիցի խոստակիցն լինել ընդ հոգևոր անձինս. ընթեռնուլ զգիրս նոցա, ծառայել հիւանդաց։

Ժամ է ասել և զհոգևոր ցանկութենէ. որ է առատութիւն մեծապայծառ լուսոյ, որ տայ ճանաչել զանձին թշուառութիւն, և զբոլորովին ոչնչութիւն իւր. մինչև այնուհետև չհամարել զանձն արժանի՝ ոչ Այ, և ոչ արարածոց, և կարծել թէ լքեալ թողեալ իցէ յԱյ։ Յայնժամ խոստովանահայրն պարտի լինել կարի զգուշաւոր և փոյթ 'ի տալ զսեպհական դեղս, և միշտ մխիթարել զայնպիսին, և յորդորել 'ի տանել զամենայն վասն սիրոյն Այ, և ասել ցնա. կանխեա՛ յաղօթս ոչ այլով մտօք, բայց միայն 'ի հաճել զԱծ, և 'ի կալ անդ ընդ Այ. զի նա կամի լինել ընդ քեզ, և տալ քեզ յայնմ ժամու և 'ի տեղւոջ տեսանել զինքն, որ զքեզդ տեսանէ յամենայն ժամ և յամենայն տեղւոջ։ Եթէ յայսմ քաջ խելամուտ արասցէ զնա, ոչ ևս գոյ տեղի տաղտկութեան յերեսաց ցանկութեանն՝ զոր կրէ. մանաւանդ թէ հոգին մեծապէս մխիթարի լոկով այսու ճանաչմամբ, թէ ես կամ յաղօթս առ 'ի հաճոյ և եթ լինել Այ միակ սիրելւոյ իմոյ՝ յաղօթս իմ։

Եթէ իմասցի խոստովանահայրն, թէ խոստովանորդին չէ վարժ և փորձ 'ի մտածական աղօթս, կամ 'ի մատուցանել զձայնաւոր աղօթս, սէրն ստիպէ ուսուցանել նմա զօրինակ և զձև դիւրին։ Պարտի յորդորել զնա, զի մատիցէ յաղօթս՝ յանձն եղեալ բոլորովին 'ի կամս այ. և մի՛ թողցէ զանձն իւր մխիլ 'ի խորին ինչ տենչմունս սրտի օտար 'ի խոնարհութէ, 'ի գրգանս իմն հոգւոյ, 'ի մեղմութիւն սրտի, և 'ի բղխումն արտասուաց. զի այս ամենայն յոլովակի են պատրանք։ Փափաք ցանկութե սրտի իւրոյ չպարտի լինել այլ ինչ, բայց միայն ստանալ զառաքինութիս, և զոր ած մեր գլխովին, առ ուսանել առնել զնր կամս՝ յաղթելով կրից, և լինել միշտ պատրաստական 'ի կրել զայն՝ զոր ած կամի։

Յայսմ վայրի 'ի դէպ էր ճառել և զընտրութէ հոգւոց. այլ զի է նիւթ դժուարապատում և երկար, շատ լիցի ասել ինչ սակաւուք։ Յուշ լիցի խոստովանահօր՝ նախ, չլինել դիւրահաւան ամենայն հոգւոյ. այլ քննել, յոյ իցէ արդեօք, եթէ յանբարի պատճառէ։ Ի-գի՝ իմա ինձ ասա զազդումն ինչ կամ զբերումն, զշարժումն և զյօժարուն հոգւոյ մերոյ առ իրս ինչ։ Որ դիւրաւ բերի 'ի ստել, ունի զհոգի խաբէութեն։

Պարտի յուշ առնել, թէ ածեղէն հոգին այն է՝ որ խօսի 'ի սիրտ, և յօժարեցուցանէ առ ճշմարիտն, և 'ի բաց քեցէ 'ի ստութէ՝ ներքին շարժուք. և այն յոլովակի 'ի ձեռն հրեշտակաց կարգելոց 'ի պահպանութե մեր։

Դիւական հոգի է այն, որ միշտ ձգէ զմեզ 'ի չար անդր կամ 'ի ստութի, և հեռացուցա-

նէ զմեզ 'ի լաւէ անտի, և է միշտ չար. և զայսպիսի վատթար շարժութիւնս զոր թուիցանէ 'ի մեզ դեւն 'ի ձեռն մարմնոյ, կամ աշխարհի:

Հոգի մարմնեղէն է յօժարութիւն առ հեշտալիս զգայութեանց:

Հոգի աշխարհային է ներքին հակամիտութիւն առ փառասիրութիւն ամբարհաւաճ, առ փառս և առ պատիւ, առ մեծութիւնս և այլն: Իսկ հոգի մարդկային է բերումն մարդկային բնութեան ապականելոյ սկզբնական մեղօք՝ առ այն ինչ իւրս, որք միաբան գտանին ընդ դիւրութիւնս մարմնոյ:

Զի ինչ դիւրին՝ ասէ սբն Բեռնարդոս, ընտրութիւն առնել, որդեօք ներքին շարժմունք սրտի ուստի յառաջ գայցեն, 'ի մարդկայնոյն բնութենէ, եթէ 'ի սատանայէ, եթէ 'ի մարմնոյ, և եթէ յաշխարհէ: Այլ յայսր ամենայնի վերայ՝ պարտ է 'ի միտ առնուլ, թէ որ ինչ միանգամ ունին զծագումն առ 'ի մէնջ, ինքնայօժար բուռն հարկանեմք զնոցին իրաց, և ինքնայօժար 'ի բաց լքանեմք. այլ ո՛չ այսպէս է յիրս թելադրեալս 'ի թշնամեաց մերոց, զի ուժգնութեամբ մեծաւ տպաւորին 'ի մեզ, և ո՛չ դիւրաւ խափանին յարձակմունք նոցա:

Առ ընտրողութիւն հոգւոյս խոստովանահայրն պարտի միտ դնել ուսման և ջանից աղօթից և մտածութեանց, առ Աստուած ապաւինել 'ի սրտէ, վերծանել զսուրբ գիրս, զսուրբ հարս, և զվարդապետս, և զաստուածաբանս: Զի արժան նմա ախորժանօք սիրոյ կապիլ ընդ խոստովանորդիս: Պարտ է նմա ունել զաստուածիմաստ միտս, և ո՛չ զոտիեստական:

ԱՅՆ ՉԱՐՈՂՍ ԱՂԲ ԱՌՆԷ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՅՐՆ՝ ՅԱՌԱՋ ՔԱՆ
ԶՄԱՏՉԵԼ 'Ի ԼՍԵԼ ԶԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՍ՝ ԱՍԵԼ
ԶԱՅՍ ՀԵԾՈՒԹԻՒ ՃԱՇԹԱՆԱՑ ՍԱՂՄՈՍԵՐԳՈՒԹԻՒ ։

Սիրտ ս͞բ հաստատեա՛ յիս ա͞ծ ։
Եւ զհոգի ուղիղ նորոգեա՛ 'ի փորի իմում ։
Մ՛ի ընկենուր զիս տէր յերեսաց քոց ։
Եւ զհոգի քո ս͞բ մի՛ հաներ յինէն ։
Տո՛ւր ինձ զցնծութ͞ի փրկութ͞ե քո ։
Եւ հոգւով պետութ͞ե քո հաստատեա՛ զիս ։
Ուսուցից անօրինաց զճանապարհս քո ։
Եւ ամբարիշտք առ քեզ դարձցին ։
Փրկեա՛ զիս յարենէ ա͞ծ ա͞ծ փրկութ͞ե իմոյ ։
Եւ ցնծասցէ լեզու իմ յարդարութ͞ե քում ։

Աղօթք ։

Տէր ա͞ծ ամենակալ՝ քաւեա՛ զիս զմեղաւորս, զի կարող եղէց ըստ արժանւոյն գոհանալ ըզ-քէն, որ զանարժանութ͞իս իմ ողորմութ͞բդ քով մեծաւ կարգեցեր 'ի սպաս քահանայական պաշտաման, և զիս զնուաստացեալս միջնորդ կարգեցեր՝ յաղօթս կալ և բարեխօսել առ ա͞ծ մեր յ͞ս ք͞ս որդիդ քո՝ վասն մեղաւորաց և դարձելոց յապաշխարութ͞ի ։ Եւ արդ տէ՛ր տէր, որ կամիս զամենեսին՝ զի կեցցեն, և 'ի գիտութ͞ի ճշմարտութ͞ե եկեսցեն, և ո՛չ կամիս զմահ մեղաւորաց, այլ զդառնալ ն͞ց և զկեալն, ընկա՛լ զպաղատանս իմ, զոր հեղում վասն ծառայից քոց և աղախնայց՝ եկելոց յապաշխարութիւն. տո՛ւր նոցա հոգի զղջութ͞ե, տո՛ւր նոցա՝ զի զգաստացեալք 'ի բաց քեցեսցին 'ի լարից սա-

տանայի, որովք կաշկանդեալ և պարաւանդեալ կան. որպէս զի ճշմարիտ ապաշխարութ̄բ առ քեզ դարձցին, շնորհօք և մարդասիրութ̄բ տ̄ն մերոյ յ̄ի ք̄ի, ընդ որում քեզ հօր ամենակալի, և կենդանարար ս̄բ հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւն և պատիւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

# ՑԱՆԿ

## ՎԵՐՆԱԳՐԱՑ ՄԱՏԵՆԻՍ


Յառաջաբան Թարգմանչին: գ
Նախադրութիւնք եանեց հեղինակին: է
Յաղագս պաշտօնէի խորհրդոց ապաշխարութեան: 1
Յաղագս ընդունակ ենթակայի խորհրդոց ապաշխարութեան: 11
Յաղագս պարտաւորութեան ընդունելոյ զխորհուրդ ապաշխարութեան. եւ յորժամ: 16
Յաղագս հեռաւոր նիւթոյ խորհրդոց ապաշխարութեան: 26
Յաղագս մերձաւոր նիւթոյ ապաշխարութեան. եւ նախ՝ յաղագս զղջման եւ յառաջադրութեան: 28
Յաղագս ամբողջութեան, եւ այլոց հանգամանաց խոստովանութեան: 34
Յաղագս ապաշխարանաց զոր դնէ խոստովանահայրն: 44
Յաղագս ձեւոյ խորհրդոց ապաշխարութեան: 49
Յաղագս իշխանութեան կամ իրաւասութեան խոստովանահօր: 53
Յաղագս բարեձեւութեան վարուց, եւ գիտութեան, եւ խոհեմութեան խոստովանահօր: 64
Յաղագս խորհրդական կնքոյ: 69
Պաշտօն խոստովանահօր ըստ որում դատաւոր, բժիշկ, եւ վարդապետ: 76
Ոչ զիա՞րդ ճանաչել զանազանութիւն մեղաց: 89
Արդեօք մահացու մեղքն կարէ՞ դառնալ լինել մեղք ներելի, եւ որպէ՞ս: 93

Յաղագս մեղաց՝ որ են ընդդէմ հաւատոյ ։ 104

Յաղագս մեղաց ընդդէմ յուսոյ ։ 142

Յաղագս մեղաց՝ դիմամարտ եղելոց առաքինութեան ։ 146

Յաղագս մեղաց ընդդէմ սիրոյ ընկերին, կամ եղբայրսիրութեան ։ 151

Յաղագս մեղաց ընդդէմ փոխարինական արդարութեան. և նախ՝ ըստ բարեաց մարմնոյ ։ 169

Յաղագս մեղաց ընդդէմ փոխարինական արդարութեան՝ ըստ բարի համբաւոյ ։ 182

Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ փոխարինական արդարութեան ՚ի նիւթ ժամանակաւոր բարեաց, այսինքն ընչից ։ 196

Յաղագս այլոց մեղաց ընդդէմ փոխարինական արդարութեան՝ ՚ի կարգի պարտաւորութեան հատուցման ։ 207

Յաղագս դաշնակցութեանց՝ զորս կարեւոր է գիտել ամենայն խոստովանահարց. և թէ զիա՞րդ լինի մեղանչել ՚ի նոսա ։ 219

Հրահանգ սակարկութեան ապառնիկ վաճառի ։ 255

Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ տրամաբաշխական արդարութեան ։ 260

Յաղագս մեղաց, որ ընդդէմ վրէժխնդիր արդարութեան ։ 265

Յաղագս մեղաց, որք դիմամարտեն օրինական արդարութեան ։ 267

Յաղագս մեղաց որ ընդդէմ կրօնի ։ 280

Յաղագս այլոց մեղաց, որք դիմամարտեն կրօնի ըստ առաւելազանցութեան, և ըստ նուազութեան ։ 309

Յաղագս մեղաց, որք դիմամարտեն գթութեան առ ազգականս. (իմա՛ առաւել առ ծնողս) ։ 326

Յաղագս մեղաց, որք դիմամարտեն յարգութեան և հնազանդութեան մեծաւորաց ։ 328

Յաղագս մեղաց, որ ընդդէմ զգաստութեան, և ընդդէմ պատուիրանին պահոց ։ 332

Յաղագս մեղաց որ ընդդէմ ողջախոհութէ ։ 346
Յաղագս մեղաց՝ որ ընդդէմ խոնարհութեան ։ 362
Յաղագս առաքինութեանց, որք 'ի բնութէ ի-րեանց պարտաւոր առնեն մայն առ ներելի մեղս. և թէ զիա՞րդ լինիցի ծանուցս մեղանչել ընդ-դէմ նոցա ։ 363
Յաղագս թէ արդեօք մեղք ներելիք մա՞րթին մա-հուչափ լինել ։ 373
Յաղագս դիպուածոց և բանադրանաց վերապա-հելոց առ ս͞բ աթոռն առաքելական ։ 376
Յաղագս դիպուածոց և բանադրանաց, որք պա-հին եպիսկոպոսին ։ 387
Արկոփաան դիպուածք վերապահեալք եպիսկոպո-սին 'ի թեմին նորին ։ 391
Յաղագս խոստովանահօր՝ եթէ կոչի 'ի լսել զխոս-տովանութիւն ։ 396
Յաղագս զննութէց՝ զոր պարտի խոստովանահայրն առնել առ ապաշխարօղն՝ նախ քան զսկսանել զխոստովանութի ։ 401
Յաղագս պարտաւորութեան օգնելոյ ապաշխա-րողին առ ամբողջ խոստովանութիւն ըստ թուոյ, ըստ տեսակի, և ըստ հանգամանաց մեղաց ։ 410
Յաղագս զգուշաւորութէ խոստովանահօր 'ի հար-ցափորձել զկանայս և զմանկունս ։ 426
Յաղագս արթնութէ 'ի դնել զապաշխարանս ։ 433
Յաղագս թէ զո՛ր եղանակ պարտ է ունել ընդդէմ չորից վիճակաց ապաշխարողաց՝ որոց հեշտ է ոտէպ անկանել 'ի մեղս ։ 436
Յաղագս դիպուածոց՝ յորս խոստովանահայրն կամ ո՛չ կարէ, կամ ո՛չ պարտի արձակել, և կամ պարտի յապաղել զարձակումն ։ 449
Յաղագս եղանակի խոստովանութէ. և արձակման հոգեւորաց ։ 456

# ՀՐԱՀԱՆԳ ՀԱՄԱՌՕՏ

Առ խոստովանահայրս հաւատաւորաց, և անձանց հոգեւորաց : 463
Ընդհանուր կանոնք խոստովանեցուցանելոյ զհաւատաւորս, և զայլ անձինս՝ որք կոյս են 'ի հոգևոր կեանս : 464
Արթութեք վասն յառաջադէմ կացուցանելոյ յառաքինութե զանձինս բարեպաշտից : 469
Առանձին կանոնք վասն հաւատաւորաց, և խըղճահարաց : 472
Դէպք խղճահարութեան : 477

# ՅՈՒՑԱԿ

## Գլխաւոր բանից մատենիս

### Ըստ կարգի այբուբենի ։


Ազգականութիւն, 352 ։
Ազգապղծութիւն ․ 352 ։
Աղօթք, և պարտաւորութիւն նորա ․ 280 ։
Ամօթ ․ 42 ։
Ամօթխածութիւն ․ 41 ․ 358 ։
Անասնապղծութիւն ․ 357 ։
Անաստուածութիւն ․ 105 ։
Անէծք զինչ, և քանի ․ 193 ։ անիծանել զծնօղս թէև ՚ի բացակայութեան, և առանց չար կամաց՝ է մեղք մահուչափ ․ 327 ։
Անկանոնութիւն ․ 382 ։
Ապաշխարանք ․ զիարդ լինիցի կատարել ՚ի մեզ ․ 46 ․ քանի տեսակք են, անդ ․ անմարթ է կատարել ՚ի ձեռն այլոց ․ 49 ․ զինչ կանոնք աւանդին առ ՚ի դնել զապաշխարանս ․ 433 ։
Ապաշխարութեան խորհրդոյ պաշտօնեայ է քահանայ ․ 53 ։
Ապաշխարօղք կարեն ընդունիլ զխորհուրդ յանարժան պաշտօնէէ ․ 15 ․ որք անգէտ են խորհրդոց հաւատոյ՝ անընդունակ են արձակման ․ 116, և զկնի ։
Ապառիկ վաճառումն ․ և պայմանք նորա ․ 255 ․ 197 ։
Առաքինութիւնք, որք պարտաւորեն ընդ ծանր մեղօք, թըւով չորեքտասան ․ 90 ․ և այլ ևս՝ որ պարտաւորեն միայն առ ներելի մեղս ․ 363 ։
Առևանգութիւն ․ 354 ։
Առիթ մերձաւոր ո՛ր իցէ և քանի 444 ։ որ դնէ զանձն ՚ի նմին, մեղանչէ ‖ այնչափ՝ որչափ ‖ ․ 446 ։ որ տայ այլում ․ կամ ՚ի խաղ ․ և այլն ․ 452 ։
Ատելութիւն Աստուծոյ ․ 150 ․ և ընկերին ․ 151 ։
Արգասիք ստացեալք, քանիք, զորս պարտ է հատուցանել ․ 212 ։
Արգելեալ գրեանք ․ 118 ․ և ձեռագիրք ․ 121 ։
Արձակումն ․ մարթ է տալ ընդ թէութեամբ, 50 ․ կեղծեօք ․ 52 ․ մարթ իցէ տալ գողացողին ․ 199 ․ 425 ․ անուղղակի երբ 403 ․ արդեօք արժա՞ն է տալ առ ՚ի խորշել ՚ի գայթակղութեանց ․ 405 ․ պարտ իցէ տալ որ ո՛չ գիտէ զխորհուրդ մի հաւատոյ 407 ․ կամ զհանգամանսն ․ անդ ։

Բամբասանք զինչ· 183· պարտաւորութն չլինելոյ զհամբաւն 189· անդ։
Բանադրանք տարբեր են 'ի վերապահեալ դիպուածոց· 376· դիպուածք պահեալ պապին առանց բանադրանաց· 377· բանադրեալ խորշելի· 4· բանադրեալն յանուանէ կարէ արձակիլ· 5։
Բանական հոգի· 176։
Բանաւորութն· 23· տես և ընտրութն· 142· 147։
Բժիշկք՝ որք արբուցանեն ինչ յղի կանանց· 179։
Բեկումն տես Ջղձումն։
Բղջախոհութն զինչ է· 347։
Գայթակղութն զինչ է· 156· և քանիպատիկ· 158· որ իցէ փոքրկանցն· 159· մերթ է լինել մեղք ներելի· 163։
Գինք· քանի տեսակք են· 251, բարձր գինն որչափ կարէ առաւելուլ քան զայլս· 253։ տարակոյսք, անդ։
Գիջութն· 177· 356։ դեղք նորա· 437։
Գողութն, և յափշտակութն զանազանեալ· 196· տեսակք նոցին· անդ։ գողացօղն որպէս պարտի խոստովանիլ· 199· մերթն արձակիլ, անդ· 451։ որ պատճառ եղև գողութեան չար օրինակաւ՝ ոչ պարտաւորի հատուցման· 200· գոյզն գողութն կարէ լինել մեղք մահուչափ· 216· կարէ լինել մեղք ներելի· 198։
Գրեանք· տես արգելեալ։
Դաշնադրութն· 218· որ իցէ վաշխառականն· 226։ ընկերութն և պայմանք նորա· անդ· և զկնի։ Եռադաշն ընկերուն օրինաւոր իցէ· 228· և զկնի։ Փոխատուութն, և տարակոյսք նորա։ 232· և զկնի։ Վաճառելոյ և գնելոյ, և պայմանաց նորա· 250· և զկնի։ 'Ի վայելս· 238։
Դատաւոր, երբ մեղանչէ ընդդէմ օրինական արդարութն· 267։ կարէ ընդունել զընծայս, անդ։ զիարդ ունիցի կարգաւորել զանձն· անդ։ կարէ անպատիժ թողուլ զյանցաւորն· անդ, պարգևատուն և պարգևառուն, և այլն, անկանին 'ի նզովս· 269։
Դիպուածք պահեալք· տես բանադրանք։
Դիտաւորութն, որպիսի պահանջի 'ի պաշտօնեայն· 3· և որ յապաշխարօղն· անդ· յետս նահանջեալ· 4· ունակական· 10։
Դիւրութն խոստովանահօր· 9։
Եկեղեցական թոշակաւորք, և պարտաւորութն նոցա վասն ասելոյ զժամերգութն· 281· և զկնի։
Եպիսկոպոսն յոր պապական բանադրանաց կարէ արձակել· և երբ· 387։
Երդումն զինչ է· քանի՛ ազգք են· և պայմանք նորա· 296·

և զկնի: այլևայլ տարակոյսք. 299. և զկնի: առնել զերդումն. 161:

Երկրպագութիւն զհաւատոյ. քանի՛. 112:

Զանցառութիւն. 207:

Զեկուցումն առնելի. 121. և զկնի: Ե՞րբ. անդ: միայն կնիք խոստովանութեան անբասիր առնէ. 128. խոստովանահարք՝ որք ոչ պարտաւորեն առ այս, յո՞ր պատիժս անկանին. անդ: 125. չառնէ անբասիր գաղտնիք բնական հանդերձ երդմամբ. 127:

Զղջումն քանի՞ է. 28: պարտի լինել զգալի. 29. սահման զղջման. անդ. Բնականն չէ բաւական առ խոստ՛. 31: Գերբնականն զի՞նչ է. 30. խորտակման կամ բեկման. 10. 11. որպէս ճանաչի ճշմարիտն 'ի ստոյ. 451: զղջումն ծառայական. 33:

Ընկերութիւն. տես Դաշնագրութիւն:

Ընտրութիւն առնել'ի մէջ չարի և բարւոյ. 23:

Թատրոն. 160:

Թեթևութիւն նիւթոյ ոչ ընդունին ամենայն առաքինութիւնք. 102:

Թշնամանք զի՞նչ է. 182. երբակի լինի յանցանել. անդ. պարտաւորի չլինել զհամբաւն. 188.

Թոշակք եկեղեցականք որպէս պարտին բաշխիլ. 260. և զկնի:

Թոշակաւորք պարտաւորին առնել զխոստովանութիւն հաւատոյ. 140: որք անիրաւութեամբ քաղեն զարդիւնս. 217: տես և Եկեղեցական:

Թուական տարբերութիւն. 412. և զկնի:

Ժամերգութեան պարտաւորութիւն. 20. 49. 151:

Ժառանգ. 210. տես և Ստացող:

Իշխանութիւն կարգաւորեալ, կամ յանձնեալ. 3. 54: կարգ չպատշաճի կանանց. 2:

Իրաւասութիւն կամ իրաւաբանութիւն խնդրի 'ի խոստովանահայրն. 3. 53:

Իրաւունք բնական, գրական. 97:

Լոմայափոխութիւն 223. տեսակք նորա. անդ. և զկնի:

Լոյս գերբնական. 30:

Լսել զպատարագ. 49:

Խաղ. պայմանք նորա. Ե՞րբ լինի մեղք ծանր. 244: որպիսի խաղք արգելեա՛լ են. անդ:

Խաղաղութիւն. տես Հաշտութիւն:

Խեղութիւն. 181. և զկնի:

Խնամութիւն զի՞նչ. 353:

Խոստովանահայր՝ որ գտանի 'ի մահուչափ մեղս մարթի լսել զխոստ՛. 9. ընտիր. 15. և զկնի. առատութիւն

խոստովանահօր. 39. ՚ի վտանգի մահու կարող է արձակել որ և իցէ քահանայ. 60: Թէուէք առ վաւերուն. անդ: և զկնի. օժիտք նորա. 64. և զկնի. ՚ի գիպուածս դժուարինս զի՞նչ. 68. կարէ՞ վարիլ գիտութեամբ ստացելով ՚ի խոստովանութեն. 74. որ խուզարկէ գիտել զընակութիւն մեղսակցին. 38. որ հրապուրէ. 125. զի՞նչ պարտ իցէ առնել յետ լսելոյ զխոստովանութիւն. 431: յորժամ ոչ ազդ արասցէ ապաշխարողին հատուցանել, պարտաւորի ինքն. 87: զոր ապաշխարանս պարտ է դնել. 134. և զկնի: չխնդրել ինչ յապաշխարողէն վասն իւր. 436: չկարէ հրաժարիլ ՚ի խոստովանեցուցանելոյ՝ երբ կարէ, 396: չէ մարթ ժխտել զարձակումն քաջ տրամադրելոյ. 449: ՚ի կէտ մահու որպէս պարտ իցէ վարիլ. 451:
Խոստովանութիւն զի՞նչ. 34: Երբ պարտաւորէ. 16. և զկնի: անվաւերն չվճարէ պատուիրանին. 25. յի՞նչ պատիժ անկանի որ ոչ լինի. 26: զքանի՞ թէութիւնս պարտի ունել. 35. և զկնի: պարտ է լինել ներկայ ձայնիւ և ոչ ՚ի ձեռն պատգամաւորի կամ թղթոյ. 41. և զկնի: Բազմամեայ. 21: ունակացեալն իբր ՚ի բազումս է որքապինդ, և որ կայ ՚ի մերձաւոր առիթս մեղաց. 444. և զկնի:
Խորհուրդ ապաշխարութեան է նշան զգալի. 29: Թէութիւնք ՚ի մատակարարողն. 2. և զկնի. և յընդունողն. 11. առ ի՞նչ սահմանեցաւ. և յումմէ՞. 1. ընդ խաղս, կամ ընդ կատակս եղեալ. 4:
Խորհրդական խոստովանութիւն, զի՞նչ. 34. Թէութիւնք նորա. 35:
Խրատ յանդիմանական. տես Յանդիմանութիւն եղբայրական:
Ծոմապահել. 22:
Ծուլութիւն զի՞նչ է. 150:
Կախումն և արգելումն պահեալ պապին. 377. և զկնի: եպիսկոպոսին. 387: ՚ի պաշտամանէ խոստովանահայրութեան. 39:
Կանայք. ՚ի զգեստս երբ մեղանչեն. 160. 365: որք զգենուն առնացի. 367: որք գնան մերկ լանջօք. 157. նորաձև զգեստուք. 160. և 366: լսել զխոստովանութիւն նոցա ՚ի խոստովանարանի. 398:
Կասկած զընկերէն. 194. և զկնի:
Կասկածաւոր կամ խիթալի զհերետիկոսութէ. 122:
Կարծիք ապահով և ապահովագոյն. 271: հաւանական, և հաւանականագոյն. 273: որո՞ւմ պարտ է զհետ երթալ. 274:
Կեղծաւորութիւն. 371:
Կեղծումն. 370:
Կէտ մահու տարբեր է ՚ի վտանգէ մահու. 60:

Կիրառութիւն բանի. 23 :
Կոնդակ 'ի վերայ աշխարհականաց, որ առնէն տուրեւս 'ի վերայ պատարագաց, և կախման քահանայից. 205. 'ի վերայ դաշնադրութեան փոխոյ. 232. 'ի վերայ ծոմապահելոյ. 335. 'ի պատասխանի տարակուսանաց. անդ: 'ի վերայ երկուց ուխտից. 292. վասն ոչ ուտելոյ խառն. 336 :
Կուսանք մինչ խօսին ընդ կրօնաւորս. 330. և զկնի :
Կուսապղծութիւն. 351 :
Կրօնաւոր կանոնաւոր առ 'ի լսել զխոստ'', պարտի լինել հաւանեալ. 23. ոչ կարեն խօսիլ ընդ միանձնուհիս. տես Կուսանք :
Համբաւ. չինելի. 188. և զկնի :
Համբոյր. երբ լինիցի մեղք. 359. և զկնի :
Համեստութիւն. և դիմամարտ մոլութիւն նորա. 364 :
Հայհոյութիւն զինչ է և քանի՞. 318. և զկնի : հերետիկոսականն մի՞թէ գործել սրտիւ, և. 115: ո՞րպէս պարտ է բացատրել 'ի խոստովանութեան. 423 :
Հաշտութիւն պարտի առնել անձն վիրաւորեալ. 266:
Հասոյթ . 219. և հանգամանք նորա. անդ. և զկնի: Հասոյթ կենսատեւական. 221 :
Հատուցումն, տրմաք նորա. 207. և զկնի: յիրէ առեցելոյ. անդ: յանիրաւ առմանէ. 213: 'ի դաշնադրութեանց. 218: որում եղեն պատճառ վնասու. անդ: համբաւոյ. տես Համբաւ: Անասուն. 164: մարդասպանն. 180 :
Հարցաքննութիւն մանկանց. 428 :
Հաւանութիւն եպիսկոպոսին վասն կրօնաւոր քահանայի առ 'ի լսել զխոստ''. 25 :
Հափափումն. տես Աւանդութիւն :
Հեզութիւն. և դիմամարտ մոլութիւն նորա. 364 :
Հեթանոսութիւն. 104 :
Հեշտութիւն մարմնական. 359. յիրս տափականս ոչ ընդունի զթեթեւութիւն նիւթոյ. անդ: զշարժումն մարմնական պարտ է ճնշել. 361 : անդ. յամեալ հեշտութիւն. 420 :
Հերետիկոսք քրիստոնեայ են. ուրացողք՝ ոչ. 104. չէ հերետիկոս որ 'ի մոլորութեան մնայ չունիցի յարակից զյամառութիւն կամաց. 108. ամենայն հաւատացեալք պարտաւորեալ են զեկուցանել. 121. Նպաստաւորք նորա անկանին Ը̅ բանադրանօք. 113. որ ընթեռնու զգրեանս նոցա, կամ որ պահէ. 118. և զկնի: հերետիկոսական հայհոյութիւն. 114. քանի՞. 115 :
Հերետիկոսութիւն զինչ է. 108. քանի՞ են տեսակք նորա 109. և զկնի :
Հոգաբարձ, պարտական է լսել զխոստովանութիւն. 396 :

Հոգեվարին պարտաւորութիւն. 461։
Հոգիք քաւարանի. 218։
Հրապոյր. տես խոստովանահայր։ Հրապուրել 'ի մեղս. 36։
Ճշմարտախօսութիւնք, և դիմադիր մոլութիւնք նորա. 368։
Մարդասպանն զքանի՞ չարիս գործէ. և պարտաւորութիւն նորա. 180. և զկնի։ Նոյնպէս և որ առնէ խեղութիւն՝ թէ անձին և թէ ընկերին. անդ։
Մարդասպանութիւն. քանի՞ են. 169. մարթի լինել առանց մեղաց. անդ։ օրինաւո՞ր իցէ յիմիք դիպուածի. 170 և զկնի։
Մեղսակից. 124. յայտնութիւն մեղսակցին. 38։
Մեղք, մոռացեալք կամ թողեալք. 28. առ 'ի լինել մահուչափ. 102. ընդդէմ բնութեան, և տեսակաց նորա. 355։ մտաւորական ընդդէմ ողջախոհութեան. 420։ մեղք փիլիսոփայական. 100։
Մենամարտութիւն. 172։
Մերձաւոր վտանգ մեղանչելոյ. 444. և զկնի։
Միանձնուհիք. տես կուսանք։
Միջին շաւիղ. 19։
Մկրտութիւնն քաւէ զմեղս և զպատիժն իսպառ, այլ ոչ խոստո". 45։
Մոլորութիւն 'ի նիւթ հաւատոյ զանազանի 'ի տգիտութենէ. 117։
Մոլութիւնք դիմամարտք առաքինութեանց. 90. զկնի։
Յամեալ հեշտութիւն. տես հեշտութիւն։
Յանդիմանութիւն եղբայրական յինչ հիմնի. 163. և զկնի։ պարտաւորին առնել ամենեքին. անդ. պայմանք նորա. անդ։
Յանդուգն դատողութիւն և պայմանք նորա. 194. և զկնի.
Յափշտակութիւն տարբերի 'ի գողութենէ. և տեսակք նորա. 196։
Յապաղել զարձակումն. 53. զվճարումն. 209։
Յարբունս հասանել. 45. 141։
Յուսահատութիւն. 142. և զկնի։
Նախանձն զինչ է. 153. և զկնի. տեսակ նորա. 156։
Ներգործական հաւատոյ, և այլն. երբ պարտաւորէ. 13։ և զկնի։ 461։
Նզովեալն ոչ արձակի՝ եթէ նախ ոչ արձակեսցի 'ի մեղաց. 13. Նովին իսկ գործով անկցի 'ի բանադրանս. 38։
Շնութիւն. 348. որ անկանի ընդ հարսնացուն՝ զինչ մեղս գործէ. անդ։
Շօշափմունք անհամեստք, և հայեցուածք կամ բանք տռփականք են մեղք մահուչափք. 360։

Ողորմութիւն. 165. պարտաւորութիւն առնելոյ. 166. յաւէտ եկեղեցականք քան աշխարհիկք. 168:
Ուխտն զինչ է. 290: պայմանք 'ի առ լինել վաւեր. անդ: քանի՞ տեսակք են. 291. և զկնի: պահեալք պայլին. 292: որում անկանի արձակել. անդ:
Ունակացեալն 'ի մեղս. 440:
Ուսումնասիրութիւն, զինչ առաքինութիւն իցէ. 371:
Ուրացութիւն հաւատոյ. 104. և տեսակք նորա, անդ:
Չարամաղթութիւն. տես Անէծք:
Չափահաս քրիստոնեայ. 16:
Պահեցողութիւն և ներգործութիւնք նորա. 334:
Պահք. 334. յինչ հիմնի, և զկնի. անդ. ո՞վ պարտական է պահել. և զկնի. զանազան սահմանադրութիւնք. անդ. ուտողն զմսեղէն ոչ կարէ վարել նովաւ և 'ի գիշերի. անդ. և ոչ խառն յաւուրս կիւրակէից, անդ. փակէ յինքեան զատորս". և զքացաս". պատուիրանս, անդ. մարթ է պակասել յորակութիւն կամ 'ի քանակ". անդ. արհեստաւորք և այլն պարտաւո՞ր իցեն ծոմապահել. 341. ընդունի՞ զփոքրկութիւն նիւթոյ. 343:
Պաշտօնեայն առ վաւեր մատակարարելոյ. 2. առ օրինօք արձակելոյ. 7. նզովեալ կամ կախեալ. 14:
Պատարագ. պարտաւորութիւն լսելոյ. 285: մատուցանելոյ քահանայից. անդ: վաճառաշահութիւն 'ի ձեռն նորա. 205:
Պատիժ մեղաց. 45. ըստ Հասապարտութեան. 48:
Պատուիրանք դրական աստուածային օրինաց են կրկին. 99. Պատուիրան խոստովանելոյ. 16. այլ և այլ տարակոյսք. անդ. և զկնի: սաորասական. 18:
Պարագայք մեղաց քանի՞ են. զորս պարտ է խոստովանիլ. 450:
Պարտաւորութիւն հատուցման || կշռով չափ || զինչ իցէ. 214: զեկուցման. 128: կիրառութիւն ներգործութեան հաւատոյ. 131. զկնի:
Պղծութիւն. տես Գիջութիւն:
Պոռնկութիւն զինչ է. 346: արգելեալ յօրինաց բնութեան. անդ և զկնի:
Պտուղ. տես Արգասիք:
Սեղանակապտութիւն. տես սրբապղծութիւն:
Սեղանաւոր. տես լումայափոխ:
Սէր այ. ներգործութիւնք նորա երբ պարտին 'ի կիր արկանիլ. 146. և զկնի:
Սիմոնականութիւն. 320. և 435:
Սնապաշտութիւն. 310:
Սոդոմականութիւն 356:

Սուրբ առնել զաւուրս տօնից. 288։
Ստացօղն. Երբ պարտաւորի հատուցանել. 210. ստա-ցեալ բարեմասնութք. 209։
Ստութն 368։
Սրբապղծութն. 25. 316. տեսակք նորա. անդ։ ընդունի զթեթեւութն նիւթոյ. 318։ 'ի կարգի ողջախոհութե որ-պիսի մեղք իցէ. անդ։
Սխալանք յաղթելի, կամ անյաղթելի. 102։
Սպանանել զկենն. 175. զուտ դատախազն, եւ այլն։ 174.
Սպանութն. տես մարդասպանութն։
Վաճառել ինչ. պարտաւորն յետս դարձուցանել. 252։ տարակոյսք 'ի վերայ վաճառման եւ գնման. 253. եւ զկնի։
Վաճառօղն պարտաւորի յայտնել զպակասութիւն ապրա-նաց. 259։
Վաշխ. 240։ քանի ազգք են. անդ։ տարակոյսք զնմանէ. անդ եւ զկնի։ մարթ է լինել անյաղթելի ագիտութն. 96. եւ զկնի։ 161. տալ դրամս 'ի վաշխու. 197։
Վատահամբաւութին. 36. 52. վատահամբաւ առնել զմեղ-աւկիցն. 37. զի մի վատահամբաւեսցի. 176. եւ զկնի. 185։
Վերանկեալ. 437. Դեղ առ 'ի չանկանել վերստին. անդ։
Վիժել. արժա՞ն իցէ 'ի դիպուածս ինչ. 176. եւ զկնի։ յո՞ր պատիժ անկանի որ ջան դնէ. 179. անկանի յանկանո-նականութն. անդ։
Վիճակաւորութն եկեղեցական՝ տալ է յաւէտ արժանա-ւորին 260. զանազան տարակոյսք. 263. վիճակաւորն պարտի առնել զժամերգութիւն. 20։
Վճարումն. տես Հատուցումն։
Վնասապարտութն. 45։
Վտանգ մահու. տես կէտ մահու։ վտանգ հոգւոյ. 52. խորհրդոյ. 51։
Տանելի նզովեալ, կամ կախեալ պաշտօնեայ. 14։
Տգիտութն, զինչ է. եւ քանի. 93. եւ զկնի։ որպիսի չար 'ի խոստովանահայրն. 2։ անյաղթելի տգիտութն մարթի գտանել 'ի քրիստոնեայն. 95. եւ զկնի։ Տգէտն զխորհրդոց չէ ընդունակ արձակման. 116։
Տրտունջ. 184։
Ցանկութն. զինչ է. եւ որպէս պարտի խոստովանել. 421. եւ զկնի. տարբերի 'ի դիտմանէ. անդ։
Փոխ. 232։ զանազան տարակոյսք. անդ։
Փոխարինութն եւ նորին պայմանք 203։
Փորձել զԱծ, զինչ իցէ. 316։
Քահանայ բանադրեալ խորշելի. 4. կախեալ, կամ անկանո-նական. անդ. տխմար. 15. քահանայ սեփական. 23.

թէութիւնք արձակելոյ 'ի կէտ մահու. 62. արգելեալ կամ մերժեալ թէև յանիրաւի. 24. կախեալն եթէ պատարագեսցէ, լինի անկանոնական. 381. ոչ կարէ կրկին թաշակ առնուլ վասն միոյ պատարագի. 203:

Քաւութն զինչ. 156:

Քրիստոնեայ զինչ պարտի գիտել հարկաւորութբ միջնորդի և պատուիրանի 96. և զկնի: 407. և զկնի: պարտաւորեալ է առ արտաքին ներգործութիւն հաւատոյ. 138. ևս և առ ներքինն. 130. և զկնի: պարտաւորութն 'ի կարգի յուսոյ և ներգործութեց նորա. 143. և զկնի. և սիրոյ. 147. յորբունս հասեալ պարտաւորի ընդունել զխորհուրդ ապաշխարութն. 16:

# ՎՐԻՊԱԿՔ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

| Երես. | Տող. | Սխալ. | Ուղիղ. |
|---|---|---|---|
| դ. | 25 | աշխահականաց | աշխարհականաց |
| է. | 10 | խուրենաց | խուրեանց |
| 99 | 8 | աղէքս. Ի. | աղէքս. Ը. |
| 226 | 32 | եպիսկոպասայ | եպիսկոպոսայ |
| 231 | 13 | վճառել | վճարել |
| 246 | 1 | դատարպատել | դատապարտել |
| | 32 | հրապարական | հրապարակական |
| 255 | 13 | խոստովահայրն | խոստովանահայրն |
| 288 | 28 | դատատարեաց | դատապարտեաց |
| 297 | 17 | դատատաստանն | դատաստանն |
| 339 | 29 | ծամապահութեան | ծոմապահութեան |
| 352 | 2 | պատաճառայ | պատճառաց |
| 354 | 7 | զմեձաւորս | զմերձաւորս |
| 356 | 7 | յաղթելի | անյաղթելի |
| 384 | 3 | յմրջորդաբար | յաջորդաբար |
| 440 | 14 | հաստուած | հատուած |

1845

*Tip. ed Edit. li Monaci Armeni di S. Lazzaro in Venezia.*